

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ

Ա. Մ. ՍՈՒՔԻԱՅԱՆ, Բ. Ա. ՍՈՒՔԻԱՅԱՆ, Մ. Ն. ՖԵԼԵՔՅԱՆ

ՆԱՅՈՑ
ԼԵԶՈՒ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ա. Մ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Ք. Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Մ. Հ. ՖԵԼԵԹՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

(Հնչյունաբանություն, քառագիտություն)

Վեցերորդ վերամշակված և
լրացված հրատարակություն

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2017

ՀՏԴ 811.19(075.8)
ԳՄԴ 81.22 Գ73
Ս 982

*ՀՀ ԿԳ նախարարության կողմից երաշխավորված է
որպես դասագիրք բուհերի բանասիրական և հումանիտար
բաժինների ուսանողների համար*

*Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի
գիտական խորհուրդը*

Խմբագիրներ՝

բանասիր. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ս. Ա. Գալստյան
բանասիր. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ռ. Կ. Սաքապետոյան

Գրախոս՝

բանասիր. գիտ. թեկն., դոցենտ Ա. Լ. Սարգսյան

Ա. Մ. Սուքիասյան, Ք. Ա. Սուքիասյան, Մ. Հ. Ֆելեքյան

Ս 982 Ժամանակակից հայոց լեզու (ինչյունաբանություն, բառագիտություն): Դասագիրք բանասիր. ֆակուլտետների ուսանողների համար (խմբ.՝ Ս. Ա. Գալստյան, Ռ. Կ. Սաքապետոյան): -Եր., ԵՊՀ հրատ., 2017, 462 էջ:

Դասագիրքը կազմված է «Ժամանակակից հայոց լեզու» բուհական դասընթացի նոր ծրագրին համապատասխան և ընդգրկում է ներածություն, ինչյունաբանություն, բառագիտություն բաժինները՝ իրենց ենթաբաժիններով: Ավանդական հայերենագիտության և արդի լեզվաբանության նվաճումների հիման վրա քննվում են ժամանակակից հայոց լեզվի արևելահայ տարբերակի համապատասխան իրողությունները:

ՀՏԴ 811.19(075.8)
ԳՄԴ 81.22 Գ73

ISBN 978-5-8084-2257-5

© ԵՊՀ հրատ., 2017
© Հեղ. խումբ, 2017

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Մեծավաստակ հայագետ, լեզվաբան պրոֆեսոր Աշոտ Սուքիասյանի «Ժամանակակից հայոց լեզու (Հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն) բուհական դասագիրքը ստեղծվել է անցյալ դարի 80-ական թվականների սկզբին և առաջին անգամ տպագրվել 1982-ին: Այնուհետև այն փաստորեն առանց փոփոխությունների վերահրատարակվել է ևս չորս անգամ (1987, 1999, 2004, 2008 թթ.): Դասագիրքը բռնել է ժամանակի քննությունը և արդեն չորրորդ տասնամյակն է՝ պատվով ծառայել և ծառայում է հայ բանասերների մի քանի սերունդների կրթությանը:

Սակայն անցած տասնամյակների ընթացքում զգալի տեղաշարժեր են կատարվել հայոց լեզվի թե՛ արտասանության, թե՛ քերականության և թե՛ հատկապես բառապաշարի մեջ: Ճշտվել են բազմաթիվ լեզվական հարցեր, շատ խնդիրներ ստացել են նորովի մեկնաբանում, հրատարակվել են հայերեն նոր հանրագիտարաններ և բանասիրական բառարաններ: Կարիք էր առաջացել այս ամենը ներառելու և ներկայացնելու հնչյունաբանության և բառագիտության բուհական հիմնական դասագրքում:

ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնը կազմել է դասագրքի այս նոր խմբագրությունը, որտեղ ըստ հնարավորին արտացոլված են վերջին տասնամյակներում մեր լեզվում կատարված վերոհիշյալ տեղաշարժերը: Սույն հրատարակության մեջ կրճատված են որոշ բաժիններ, էականորեն բեռնաթափված է բառապաշարի ցուցադրական նյութը, թարմացված է նորաբանությունները և նորակազմությունները, նորագույն փոխառությունները ընդգրկող բառային նյութը: Նորովի են շարադրված ուղղախոսությանը, բառակազմության ընդհանուր դրույթներին, բառարանագիտությանը նվիրված բաժինները:

Գասագրքի վեցերորդ հրատարակությունը վերանշակել են Ք. Ա. Սուքիասյանը («Ներածություն», «Հնչյունաբանություն», «Հնչյունափոխություն», «Գրաբանություն», «Ուղղագրություն», «Բառագիտություն», «Իմաստաբանություն», «Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը», «Դարձվածաբանություն») և Մ. Հ. Ֆելեքյանը («Ուղղախոսություն», «Գրաբանություն», «Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը», «Բառակազմություն (ընդհանուր հասկացություններ)», «Բառարանագիտություն»):

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայերենը աշխարհի հնագույն լեզուներից է: Նրանով է խոսում, գրում կամ այն իր մայրենի լեզուն է համարում Հայաստանի Հանրապետությունում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, մալիկին Խորհրդային Միության տարածքում բնակվող և աշխարհի համարյա բոլոր մայրցամաքներում սփռված մոտ 10 միլիոն հայություն:

Որպես հաղորդակցման կարևոր միջոց և մշակույթի ձև՝ հայոց լեզուն հայ ժողովրդի ամենահին և ամենամիջակա ժառանգությունն է, նրա կյանքի կենդանի հիշատակարանը: Նրանում արտացոլված է մեր ժողովրդի հազարամյա պատմությունը՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:

Իր դարավոր գոյության ընթացքում հայերենը թեև շփվել է տարբեր քաղաքակրթությունների, շատ ժողովուրդների, բազմաթիվ լեզուների հետ, բայց պահպանել է իր ինքնուրույնությունը, քերականական կառուցվածքի և բառապաշարի անկախությունն ու ինքնատիպությունը:

Հայերենով ստեղծվել է մեծ գրականություն: Գրաբարով են ավանդված հայ հին պատմագրությունը, գիտափիլիսոփայական, մաթեմատիկական, իրավագիտական, աստվածաբանական-դավանաբանական գրականությունը: Միջին գրական հայերենով են մեզ հասել միջնադարյան հայ քնարերգության գլուխգործոցները, բժշկագիտական, իրավագիտական մեծարժեք աշխատությունները: Գրական նոր հայերենով՝ արևելահայ և արևմտահայ գրական տարբերակներով, ստեղծվել է գեղարվեստական, հրապարակախոսական և գիտական բազմատիպ և բազմաբնույթ հարուստ գրականություն:

Հայերենը հայ ժողովրդի՝ իբրև պատմականորեն կազմավորված հանրության ազգային լեզուն է: Հայերենը՝ որպես ազգային լեզու, ամբողջ հայ ազգի ընդհանուր լեզուն է և ամփոփում է հայ ժողովրդի

լեզվական միջոցների ամբողջությունը՝ արդի լեզվի բոլոր դրսևորումները, ժամանակակից հայոց լեզվի երկու տարբերակները՝ արևելահայերենն ու արևմտահայերենը, հայերեն տասնյակ բարբառներն ու խոսվածքները: Ժամանակակից հայոց լեզուն իր հնչյունական, բառային և քերականական համակարգով գիտական ուսումնասիրության առարկա է: Հայերենի գիտական համակողմանի ուսումնասիրությունն ունի տեսական ու գործնական նշանակություն և նպաստում է նրա օրինաչափությունների բացահայտմանն ու անսպառ զանձերի յուրացմանը:

Հայ ազգային լեզվի բարձրագույն ձևը հայոց **գրական լեզուն է**: Հայոց գրական լեզուն կազմավորվել է համաժողովրդական լեզվի հիման վրա և ներկայացնում է նրա հետագա զարգացումը: Համաժողովրդական լեզվի պատմական զարգացման տարբեր փուլերում, ժողովրդի լեզվից ազգային լեզու դառնալու ընթացքում գրական լեզվի հասարակական գործառության փոփոխման և ընդլայնման, ինչպես և լեզվի ներքին զարգացման կապակցությամբ փոփոխվել է նաև *գրական լեզու* հասկացության բովանդակությունը:

Հայ ժողովրդի պատմական բախտի բերումով հայ գրական նոր լեզվի՝ աշխարհաբարի հիման վրա ինքնուրույնաբար ձևավորվել և զարգացել են գրական հայոց լեզվի երկու տարբերակներ՝ **արևելահայերենը** և **արևմտահայերենը**:

Հայ գրական լեզվի այդ երկու տարբերակները գրաբարի և հայերեն բարբառների մեխանիկական համադրությունը չեն, բայց և իրենց մշակման գործընթացում զգալիորեն հեռացել են նաև հիմքբարբառներից. մյուս կողմից, իրականում առաջանալով խոսակցական հիմքի վրա, հայոց գրական լեզուն մշակման ընթացքում ներառել է իր մեջ հին գրական լեզվի՝ գրաբարի տարրերը:

Արդի գրական լեզվի արևելահայ տարբերակը ՀՀ, ԼՂՀ, ինչպես նաև Ռուսաստանում և նախկին ԽՍՀՄ մյուս հանրապետություններում բնակվող հայախոս հայ բնակչության, նաև իրանահայության գրական լեզուն է:

Արդի հայերեն գրական լեզվի արևելահայ տարբերակը, որ պայմանականորեն ընդունված է կոչել **ժամանակակից հայոց լեզու**, իբրև

գրական լեզու, նորմավորված է և սպասարկում է այդ լեզվով խոսող հանրության՝ ժողովրդի հաղորդակցման, մշակութային և գիտական պահանջմունքները: Նորմավորումն արտահայտված է նրանով, որ գրական լեզվում կանոնակարգված են բառարանային կազմը՝ բառապաշարը, բառերի իմաստներն ու գործածությունը, արտասանությունը (ուղղախոսությունը) և ուղղագրությունը: Ընդունված կանոններից են ենթարկվում նաև բառակազմությունը, բառերի քերականական ձևերը՝ ձևաբանությունը, ինչպես նաև շարահյուսությունը:

Արդի գրական լեզուն ունի հայերեն մոտ 50 բարբառներ, որոնք, ըստ աշխարհագրական, ձևաբանական, հնչյունաբանական և այլ հատկանիշների, ստորաբաժանվում են առանձին խմբերի և ենթախմբերի:

Գրական լեզուն նույնպես ենթակա է փոփոխությունների, քեև այն, լինելով նորմավորված լեզու, ավելի կայուն է, բոլորի կողմից ընդունելի, ընտիր և օրինակելի: Գրական լեզվի օրինաչափությունները օրինականացվում և միօրինակացվում են քերականությամբ, բառարաններով, ինչով և նրանում կատարվող փոփոխությունները ավելի դանդաղ են կատարվում: Մյուս կողմից՝ բարբառները լեզվի զարգացման որոշ փուլերում ազդում են գրական լեզվի վրա: Բարբառախոսները, գործածելով գրական լեզուն իբրև ընդհանուր լեզու, նրա մեջ մտցնում են մայրենի բարբառի բառեր, դարձվածքներ, բառերի նոր իմաստներ, քերականական ձևեր, որոնք գրական լեզվի միջոցով ընդհանրանում են: Գրական լեզուն սովորաբար ազդվում է նաև հին գրական լեզվից, ինչպես և օտար լեզուներից¹:

Ժամանակակից հայոց գրական լեզուն ունի երկու ձև՝ գրավոր և բանավոր: Գրական լեզվի այդ երկու ձևերը բնորոշվում են ինչպես բառային կազմի և քերականական համակարգի, այնպես էլ հնչյունաբանական (արտասանության և գրության) առանձնահատկություններով: Գրական լեզվի գրավոր տարբերակը բանավորից տարբերվում է նախ՝ շարահյուսական կառուցվածքի բարդությամբ, ապա՝ գրավոր խոսքում համեմատաբար մեծ քանակությամբ վերացական

¹ Տե՛ս *Արևիյան Մ.*, Երկեր, հ. 2, Երևան, 1974, էջ 50-54:

բառերի, ինչպես նաև տերմինաբանական բառապաշարի առկայությամբ և գործածությամբ:

Հայոց լեզուն նաև Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական լեզուն է, և գրական լեզվի նրա գործառնություններին գումարվում են նաև պետական լեզվի իրավական բոլոր գործառնությունները:

Ժամանակակից հայերենը՝ իբրև գրական և պետական լեզու, իր գրավոր և բանավոր դրսևորումներով, պետական, վարչական, դատական մարմինների, զանազան գրագրությունների և գործավարության, ռադիոհեռուստատեսության, թատրոնի, տարրական, միջին, ավագ և բարձրագույն դպրոցի, գեղարվեստական գրականության, հրապարակախոսության, պարբերական մամուլի և, վերջապես, ընտանիքի լեզուն է:

Հայաստանի անկախացումից հետո մեծացել են նաև հայոց լեզվի հասարակական դերն ու կշիռը: Այն դարձել է նաև ազգային գաղափարների և գաղափարախոսության արտահայտման, պետական շինարարության, բազմաճյուղ արդյունաբերության, բարձր զարգացած գյուղատնտեսության լեզու, իսկ արդի գիտատեխնիկական հեղաշրջման դարում՝ ժամանակակից գիտության և տեխնիկայի լեզու: Հաղթահարելով իր ներքին որոշ թերությունները, կարգավորելով իր քերականական կառուցվածքը, հարստացնելով իր բառազանձը՝ հայոց լեզուն հիրավի ստանձնել է հայ ժողովրդի հաղորդակցման կարևորագույն միջոցի իր հիմնական դերը կյանքի բոլոր բնագավառներում:

Լեզվական տարրերի կատարելությամբ, կյանքի բոլոր բնագավառները ներթափանցելու և ներկայացնելու կարողությամբ, իր հասարակական և մշակութային դերով ժամանակակից հայոց լեզուն քայլում է աշխարհի խոշոր լեզուների հետ համընթաց:

Ժամանակակից հայերենի հիմնական միտումներն արդի փուլում ընթանում են նրա տարրերի կատարելագործման, ուղղագրության, ուղղախոսության, ձևաբանական որոշ իրակությունների (հոլովման, խոնարհման համակարգի որոշ զուգաձևությունների) միօրինակացման, միասնականացման և կարգավորման ուղղությամբ:

Լեզվի զարգացման արդի փուլում կարգավորվում է բառարանային կազմը, ավելի են ընդգծվում և հստակվում բառապաշարային շերտերը, ձևավորվում և կայունանում է տերմինաբանական բառապաշարը, գիտության և տեխնիկայի աննախընթաց զարգացման պայմաններում անընդհատ հարստանում է գիտության լեզուն, ստեղծվում կամ փոխառվում են գիտական նոր համակարգերի և ճյուղերի համար նորանոր տերմիններ ու բառեր: Դեկավարվելով լեզվի մաքրության վերաբերյալ գիտական դրույթներով՝ հետևողական պայքար է մղվում նաև հայոց լեզվի մաքրության, մայրենի լեզվի անաղարտության, խոսքի մշակույթի բարձրացման համար:

Ժամանակակից հայոց լեզվի կազմավորման պայմանական համառոտ ակնարկ: Իր կազմավորման շրջանից՝ հնագույն ժամանակներից, մինչև մեր օրերը հայերենն անցել է որակական զարգացման տարբեր փուլեր: Իր գրավոր պատմության ընթացքում անցնելով զարգացման հաջորդական այդ փուլերը՝ հայերենը երևան է եկել տարբեր դրսևորումներով՝ **գրաբար, միջին գրական հայերեն, բարբառներ, աշխարհաբար**՝ գրական լեզվի երկու տարբերակներով՝ **արևելահայերեն և արևմտահայերեն:** Որակական այդ փոփոխությունները տեղի են ունեցել հայ ժողովրդի պատմության ընթացքում, աստիճանաբար, լեզվական նոր որակի տարրերի աստիճանական կուտակման և հին որակի տարրերի աստիճանական մահացման շնորհիվ:

Համեմատական լեզվաբանությունը հաստատել է², որ հայերենը պատկանում է լեզուների այն մեծ ընտանիքին, որը գիտությանը հայտնի է հնդեվրոպական լեզվաընտանիք անունով: Հնդեվրոպական լեզվաընտանիքին են պատկանում Հնդկաստանի արևելյան մասից մինչև Եվրոպայի արևմտյան ծայրը տարածված բազմաթիվ լեզուներ: Այժմ հնդեվրոպական լեզուների տարածման սահմաններն ընդգրկում են արդեն բոլոր աշխարհամասերը:

Հնդեվրոպական նախալեզվով (կամ *հիմք լեզվով*) խոսող ցեղերը հնագույն ժամանակներում ունեցել են իրենց տարածման

² Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, մաս Ա, Երևան, 1940, էջ 7-9:

շրջանը՝ հայրենիքը, *հնդեվրոպական նախահայրենիքը*, որի ստույգ տեղը այժմ վերջնականապես դեռ որոշված չէ, սակայն գիտական վերջին տվյալներով հաստատվում է հնդեվրոպական նախահայրենիքի՝ Հայկական լեռնաշխարհում և Իրանական բարձրավանդակում լինելու վարկածը:

Հայերենը հնդեվրոպական լեզվաընտանիքում հանդես է գալիս առանձնաբար, իբրև ինքնուրույն ճյուղ և գրավում է միջին դիրք հունարենի, արիական (հնդիրանական) և սլավոնական լեզուների միջև: Որպես հնդեվրոպական լեզու՝ հայոց լեզվի քերականական կառուցվածքը, բառային հիմնական ֆոնդը, այսինքն՝ լեզվի հիմքը եղել և մնում է հնդեվրոպական: Այդ նշանակում է, որ հայերենի բառային կազմի (առավելապես բառապաշարի հիմնական կարևոր մասի) և հատկապես քերականական կառուցվածքի մեջ նախասկզբնականն ու հնագույնը այն է, ինչ ժառանգել է նա հնդեվրոպական նախալեզվից կամ հիմք լեզվից: Հայերենի հետագա վիճակները (որակական դրսևորումները) արդյունք են հիմնականում նրա ինքնուրույն, ներքին զարգացման և, մյուս կողմից, մշակութային-քաղաքական շփման, հայ ժողովրդի կազմավորման ընթացքում հայկական էթնիկական կազմի մեջ մտած մի շարք միավորների՝ ժողովուրդների ու ցեղերի (հայասցիներ, խեթեր, խուտիներ, ուրարտացիներ և այլք) լեզուների ձուլման (որոնց լեզվական իրողությունները հայերենում ենթաշերտ են կազմում), իսկ հետագայում նաև ցեղակից և ոչ ցեղակից լեզուներից կատարված փոխառությունների և այլ գործոնների:

Հայերենի պատմությունն անցել է զարգացման նախագրային (մինչև 5-րդ դարը) և գրային շրջանները: Վերջինս բաժանվում է երեք փուլի՝ հին (5–11-րդ դդ.), միջին (12–16-րդ դդ.) և նոր (17–21-րդ դդ.)³:

Հին շրջան (5–11-րդ դդ.): Հայոց լեզվի մասին որոշակի գաղափար ենք կազմում, և հայերենը գիտական հատուկ ուսումնասիրության նյութ է դառնում այն ժամանակաշրջանից, երբ գրի է առնվում:

Հայոց լեզվի հնագույն հուշարձանները հասնում են հայ գրերի գյուտին անմիջապես հաջորդող շրջանին, այսինքն՝ 5-րդ դարի

³ Տե՛ս *Ձսհուկյան Գ.*, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 192-193: *Նոյնի*, Հայոց լեզվի զարգացումն ու կառուցվածքը, Երևան, 1969, էջ 28-49:

ամենասկզբներին, երբ գրի է առնվում այդ ժամանակաշրջանի համաժողովրդական լեզուն՝ գրաբարը: Հայոց լեզվի զարգացման նախագրաբարյան փուլերը, նրա վիճակները մեզ քիչ են ծանոթ: Լեզվի որակական այդ դրսևորումների մասին գրավոր որևէ վկայության բացակայության պատճառով բնականաբար շատ քիչ բան գիտենք նախագրաբարյան հայերենի կամ նախահայերենի մասին: Բայց նրա նախնական, մոտավոր պատկերը հնարավոր է մասամբ վերականգնել միայն պատմահամեմատական ուսումնասիրության շնորհիվ⁴:

Մինչև մ. թ. 5-րդ դարը գրի առնված գրաբարին նախորդած լեզուն պայմանականորեն կարելի է կոչել **նախագրային հայերեն**, որը հայ ժողովրդի կազմավորման հետ, ցեղաէթնիկական լեզվից վերածվում է հայ միասնական ժողովրդի համաժողովրդական լեզվի: Գրաբարի համեմատությամբ նախագրային հայերենը աղքատիկ է, ավելի քիչ փոխառություններ կատարած, հիմնականում հնդեվրոպական լեզվից ժառանգած բառապաշարով⁵: Հետագայում նախագրաբարյան կամ նախագրային հայերենի բառային կազմը համալրվում է ի հաշիվ խեթական, խուռիտական, իրանյան (հին պարսկական) բառերի, որոնց լեզուները կրող ժողովուրդները կամ ցեղերը մասնակցել են հայ ժողովրդի կազմավորմանը: Այդ կարգի լեզվական տարրերի մուտքը հայերենում կարելի է համարել ինչպես ենթաշերտային երևույթ՝ հայերենի մեջ ձուլված իբրև խեթական, խուռիտական և իրանյան լեզվատարրեր, այնպես էլ այդ լեզուներից կատարված փոխառություններ:

Հայոց լեզվի պատմական զարգացման հին շրջանի գրական լեզուն գրաբարն է: 5-րդ դարում գրի առնված գրաբարը՝ որպես հայ ժողովրդի համաժողովրդական գրական լեզու, ունեցել է, անշուշտ, մի քանի հարյուր տարվա զարգացման նախորդող շրջան:

Գրաբարի խոսակցական լեզու լինելու վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ եղել են տարբեր կարծիքներ:

⁴ Նախագրային հայերենի մասին տես *Ջահուկյան Գ.*, Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան, Երևան, 1987:

⁵ Տես *Աճառյան Հ.*, նշվ. աշխատ., էջ 65-75:

Հիմնականում ընդունվում է, որ 5-րդ դարում գրի առնված լեզուն՝ գրաբարը, եղել է ժամանակի ժողովրդախոսակցական լեզուն: Ոմանք, սակայն, ավելացնում են, որ թեև 5-րդ դարից ավանդված հայերենը ժամանակի խոսակցական լեզուն էր, բայց այն Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի և ուրիշների կողմից հղկվել և գրական մշակման է ենթարկվել:

Որոշ մասնագետներ այն սխալ կարծիքն են հայտնել նաև, որ գրաբարը երբեք էլ համաժողովրդական խոսակցական լեզու չի եղել, այն արհեստական լեզու է, որ իբր հորինել են Մեսրոպ Մաշտոցն ու նրա աշակերտները, և որ այն գործածվել է պալատական մի նեղ շրջանում որպես պալատական, կաստայական լեզու:

Այդ վերջին վարկածը հեշտությամբ հերքվում է այն հանրահայտ իրողությամբ, որ պատմության ընթացքում, ինչպես անցյալում, այնպես էլ այժմ ստեղծվող ոչ մի արհեստական լեզու կյանք չի ունեցել: Ինչ վերաբերում է գրաբարին, ապա 5-րդ դարում ստեղծված հայոց գիրն ու գրականությունը միայն մեկ նպատակ են հետապնդել՝ հասկանալի լեզվով ծառայել ժողովրդին: Իսկ 5-րդ դարի տարբեր հեղինակների երկերում հանդիպող լեզվական որոշ զանազանությունները, ինչպես և բարբառային տարբերությունները գրաբարի կառուցվածքի տեսակետից էական ոչ մի նշանակություն չունեն և չեն փոխում գրաբարի ո՛չ բնույթը և ո՛չ էլ համակարգը:

Այսպիսով՝ ավանդված լեզվական հարուստ հուշարձանները վկայում են, որ հայերի հնագույն գրական լեզուն եղել է գրաբարը, որով, 5-րդ դարից սկսած, գրվել են ժամանակի սեփական և թարգմանական, գիտական, պատմական գրականության, կրոնաեկեղեցական, դպրոցական-ուսումնական երկերը, կատարվել են պաշտոնական գրագրությունները:

Հետևաբար պետք է ընդունել, որ 5-րդ դարում գրի առնված լեզուն, որ հետագայում գրաբար է կոչվում, մույն ժամանակի ժողովրդական-խոսակցական և գրական լեզուն էր, և գրական ու ժողովրդախոսակցական լեզուների այն որոշակի տարբերությունները, որ այժմ գոյություն ունեն, գրաբարում այն ժամանակ ուժեղ չէին արտահայտված:

Միջին շրջան (12–16-րդ դդ.): Հայոց լեզվի պատմական զարգացման որակական փոփոխման հաջորդ փուլը միջին հայերենի շրջանն է, որ ընդգրկում է 12–16-րդ դարերը: 7-րդ դարից հետո, գրաբար գրական և գրավոր լեզվին զուգահեռ, խոսակցական՝ բանավոր լեզվի զարգացման հետևանքով արդեն 11-րդ դարում գրաբարը դարարում է ժողովրդական լայն զանգվածներին հասկանալի լինելուց: Նրան գալիս է փոխարինելու նրա իսկ ընդերքում ծնունդ առած նոր լեզուն, որ ստացել է միջին հայերեն անունը:

Միջին հայերենը գտնվում է գրաբարի և աշխարհաբարի միջև՝ որպես այդ երկուսի միացնող օղակ: Այն ոչ միայն այդ ժամանակաշրջանի գրական լեզուն է, այլև ժողովրդի խոսակցական լեզուն: Իբրև գրական լեզու՝ միջին հայերենը նորմավորված չի եղել և հանդես է եկել գրական տարբերակներով:

Միջին հայերեն ասելով՝ սովորաբար հասկացվում է միջնադարյան հայ գրականության լեզուն, որով գրված են գեղարվեստական գրականության (Կոստանդին Երզնկացի, Հովհաննես Երզնկացի, Թլկուրանցի, Հովհաննես Իմաստասեր, Ֆրիկ, Քուչակ և ուրիշներ), բժշկության (Մխիթար Հեռացի, Ամիրդովլաթ Ամասիացի), իրավագիտության (Սմբատ Գունդստարի «Դատաստանագիրքը») և գիտության ու գրականության այլևայլ բնագավառներին վերաբերող բազմաթիվ գործեր:

Ոմանք միջին հայերեն տերմինը, ավելի նեղացնելով, անվանում են կիլիկյան հայերեն, որ, սակայն, չի համապատասխանում իր բովանդակությանը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միջին հայերենը միատարր և միասնական չի եղել: Այդ դարերում Հայաստանում և հայկական գաղթօջախներում գործում էին միջին հայերենի մի քանի տարբերակներ, որոնցից մեկն էլ կիլիկյան հայերենն է՝ Կիլիկիայի հայկական պետության պաշտոնական լեզուն: Կիլիկյան հայկական ինքնիշխանության վերացումը (15-րդ դ.), ըստ երևույթին, սկիզբ դարձավ միջին հայերենի անկման և աշխարհաբարի՝ հայերենի նոր

որակի սկզբնավորման⁶: Ինչպես որ միջին գրական հայերենը փոխարինել է ժողովրդին արդեն անհասկանալի գրաբարին, այնպես էլ միջին հայերենի ընդերքում սկզբնավորված և զարգացած աշխարհաբարը եկավ փոխարինելու միջին գրական հայերենին:

Հայերենի բարբառներ: Ժամանակակից հայ բարբառները, որոնց թիվը անցնում է 50-ից, իրենց հնչյունական, բառապաշարային և քերականական առանձնահատկություններով տարբերվում են հին և միջին գրական հայերենից, թեև նրանց լեզվական իրակությունների մեծ մասը հիմնականում բխում է գրաբարից: Ակնհայտ է նաև, որ բարբառների լեզվական որոշ երևույթներ և իրողություններ ավելի հին են գրաբարից:

Ճիշտ է այն դրույթը, ըստ որի՝ ժամանակակից հայ բարբառներն առաջացել են գրաբարից հետո իբրև հայերենի տարածքային ճյուղավորումներ: Բայց այդ բնավ էլ չի նշանակում, որ հայոց լեզվի զարգացման գրաբարյան շրջանում, 5-րդ դարում և նրանից առաջ ընդհանրապես ժխտվում է հայ բարբառների գոյության փաստը:

Լեզվական փաստերի բազմակողմանի ուսումնասիրությունը բերել է այն եզրակացության, որ 5-րդ դարում անառարկելիորեն եղել են բարբառային տարբերություններ, հետևապես՝ բարբառներ կամ ենթաբարբառներ⁷:

Հատկանշական է այն իրողությունը, որ հին շրջանի բարբառային բաժանումների սահմանները համընկնում են պատմական Հայաստանի վարչաֆեոդալական հին բաժանումների սահմաններին, այսինքն՝ բարբառային այդ տարբերությունները պայմանավորված են նաև Հայաստանի վարչական-քաղաքական պայմաններով:

Բարբառային այդ տարբերությունները, որոնք նկատվում են հայոց լեզվի զարգացման հին շրջանում, հետագայում խորանում են մի կողմից՝ այդ շրջանում նկատվող մի շարք լեզվական իրակություն-

⁶ Տե՛ս *Աճառչյալն* Հ., նույն տեղում, էջ 226-254: *Այրրնեսան Ա.*, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866, էջ 147, 165: *Ձահուկյան Գ.*, նշվ. աշխ., էջ 192-193:

⁷ Տե՛ս *Ձահուկյան Գ.*, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 166-179:

ների հետագա ծավալման ու տարածման, մյուս կողմից՝ լեզվական նոր երևույթների առաջացման ճանապարհով:

Բարբառների վրա գործած ազդեցության տեսակետից ժամանակի ընթացքում աստիճանաբար փոխվում և մեծանում է նաև արտաքին ազդեցության՝ օտար լեզուների դերը⁸: Հին շրջանում բարբառային տարբերությունների առաջացման գործընթացում ըստ երևույթին մեծ դեր են խաղացել նախագրային հայերենի լեզվական ենթաշերտերը (խուռիտական, խեթական, իրանապահլավական, կովկասյան և այլն), գրաբարյան շրջանում՝ հին պարսկական, ինչպես նաև ասորական, հունարևոյնական և ավելի ուշ՝ արաբական ազդեցությունները: Միջին և նոր շրջաններում արդեն տիրապետող է դառնում թուրքական և նոր պարսկական, հետագայում՝ որոշ չափով եվրոպական և ռուսական ազդեցությունը: Արտաքին լեզվական ազդեցությունների արդյունք պետք է համարել, օրինակ՝ **p** և **n** ձայնորդների շփոթումը, **Ֆ** և **դ** (արդի հնչումով) բաղաձայնների առաջացումը, քմային ձայնավորների և բաղաձայնների, ձայնավորների ներդաշնակության երևույթը, շարունակական ներկայի տարածումը, նախկին ցուցական հոդերի ստացական գործածությունը և այլն:

Մյուս կողմից, մի շարք նոր իրակություններ, իրենց հիմքն ունենալով հնում, զարգացման ներքին օրինաչափություններով հետագայում համընդհանուր բնույթ են ստանում կամ տարածվում են ավելի լայն չափերով: Օրինակ՝ **aw>o**, **kw>k** հնչյունափոխությունը, գործիականի **-ով** վերջավորությունը, **-եր**, **-ներ** հոգնակերտների միօրինակացումն ու տարածումը և այլն: **Կու** և **պիպի** բայական մասնիկները, տարածվելով հայոց լեզվի գրեթե բոլոր տարածքային տարբերակներում, ստանում են քերականական տարբեր արժեքներ: Արևմտյան բարբառներում **կու**-ն ստանում է ներկայի և անկատարի, արևելյան բարբառներում՝ սահմանական (հաստատական) ապառնիի և պայմանականի արտահայտման գործառնություն: **Պիպի** մասնիկը արևմտահայ բարբառներում ստանում է սահմանական ապառնիի արտահայտման, իսկ արևելահայերենում՝ միայն հարկադրականի արժեք:

⁸ Տե՛ս *Ձահուկյան Գ.*, նշվ. աշխատ., էջ 180-192:

Հին՝ գրաբարյան շրջանում գոյություն ունեցող կամ ձևավորվող բարբառային տարբերությունների հետագա խորացման համար կարևոր դեր են խաղում այդ շրջանի վերջերում որոշակիորեն արտահայտված երկու երևույթ՝ հայ ժողովրդի քաղաքական մասնատվածությունը և զանգվածային գաղթերը: Հատկապես Բագրատունիների անկումից հետո (11-րդ դար) հայ ժողովրդի զանգվածային գաղթերի հետևանքով մեծապես փոխվում է հայ բարբառների աշխարհագրական տեղաբաշխումը: Նախկին բարբառային կենտրոնների կողքին հանդես են գալիս նորերը, հատկապես Փոքր Ասիայի՝ Մեծ Հայքին սահմանակից շրջաններում:

Այսպիսով, ժամանակակից բարբառների հնչյունական և ձևաբանական խմբեր սկսում են գծագրվել գրաբարյան շրջանի վերջերից և միջին գրական հայերենի սկզբներից⁹:

Նոր շրջան (17–21-րդ դդ.): **Գրական նոր հայերենը** կամ **աշխարհաբարը** Հայաստանի և հայկական գաղթօջախների գրավոր և խոսակցական լեզուն էր, որին զուգահեռաբար այդ շրջանում գործում էին հայերեն տասնյակ բարբառները: Աշխարհաբարի երկու գրական տարբերակները՝ ժամանակակից գրական լեզվի երկու ճյուղերը՝ արևելահայերենը և արևմտահայերենը, կազմավորվել են երկու տարբեր բարբառների հիման վրա: Արևելահայ գրական լեզվի հիմքում ընկած է Արարատյան բարբառը, որ պատկանում է հայ բարբառների Ում ճյուղին, գրաբարին մոտ է հնչյունաբանությամբ և բառապաշարով: Արևմտահայ գրական լեզվի հիմքն է կազմում Կը ճյուղին պատկանող Պոլսի բարբառը: Այն միջին հայերենի անմիջական ժառանգորդն է, ավելի մոտ է գրաբարին բառապաշարով և ձևաբանությամբ, հեռու է գրաբարից հնչյունաբանությամբ (արտասանությամբ): Մինչև 20-րդ դարի՝ հայ ժողովրդի արևմտյան հատվածի ողբերգությունը՝ 1915 թ. ցեղասպանությունը, այն Արևմտյան Հայաստանի գրական լեզուն էր, այժմ Սփյուռքի հայության գրական լեզուն է, որով ստեղծված է գեղարվեստական և գիտական ճոխ գրականություն:

⁹ Նույն տեղում:

Նոր գրական հայերենի՝ աշխարհաբարի այս երկու ճյուղերը իրարից որոշ չափով տարբերվում են առավելապես հնչյունաբանությամբ (արտասանություն, ուղղախոսություն), ուղղագրությամբ (արևմտահայ տարբերակն օգտվում է գրաբարյան, արևելահայերեն տարբերակը՝ նոր, գրաբարի բարեփոխված ուղղագրությունից), մասամբ՝ ընդհանուր հայերեն բառապաշարի օգտագործման չափերով, հիմնականում՝ ձևաբանությամբ (հոլովման և խոնարհման համակարգերով):

Չնայած որոշ տարբերություններին՝ այդ լեզուները՝ իբրև միասնական հայ ազգության համաժողովրդական գրական լեզվի տարբերակներ, հավասարապես հասկանալի են հայ ժողովրդի երկու հատվածներին և հաջողությամբ կատարում են հաղորդակցման կարևոր միջոցի և մշակութային ձևի իրենց հիմնական գործառնությունները:

Աշխարհաբարի մասին առաջին վկայությունները կամ նմուշները սկսվում են 14-րդ դարից: Աշխարհաբարի հնագույն նմուշն է Բջնիի 1358 թ. վիմագիր արձանագրությունը:

17-րդ դարը համարվում է աշխարհաբարի կազմավորման շրջան, երբ արդեն այդ լեզվով ստեղծվում են տարբեր բնույթի և նշանակության գրավոր այնպիսի հուշարձաններ, ինչպես՝ Ջաբարիա Ազուլեցու «Ուղեգրությունը», «Արիեստ համարողութեան», «Արիեստ թուական է սայ», Ղ. Վանանդեցու «Գանձ չափոյ, կշռոյ, թուոյ և դրամից բոլոր աշխարհի» թվաբանական-վաճառականական ձեռնարկները, Կ. Ջուղայեցու թվաբանական-հաշվապահական խնդրագիրքը և այլն:

Նոր ուսումնասիրությունները հավաստում են, որ աշխարհաբարը իր կազմավորման առաջին փուլում միասնական է եղել և՛ արևելահայության, և՛ արևմտահայության համար: Անցնելով մեկդարյա ձևավորման շրջան, 18-րդ դարից սկսած, միասնական աշխարհաբարը Ուն և Կը ճյուղերի բարբառների ազդեցությամբ աստիճանաբար երկփեղկվում է արևելահայերենի և արևմտահայերենի¹⁰:

¹⁰ Տե՛ս *Ջահուկյան Գ.*, նշվ. աշխատ., էջ 49-68: *Բշխանյան Ռ.*, Նոր գրական հայերենը 17-18-րդ դդ., Երևան, 1979: *Սիսկ Գ.*, Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, Երևան, 1948: Նույնի, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 57-67:

18-րդ դարում լույս են տեսնում աշխարհաբարի առաջին քերականական աշխատություններն ու ուսումնասիրությունները՝ Շրոդերի «Գանձ Արամեան լեզուի» (Ամստերդամ, 1711 թ.), Մխիթար Աբբայի (Մեբաստացու) «Դուռն քերականութեան աշխարհաբառ լեզուին հայոց» (Վենետիկ, 1727 թ.), աշխարհաբարյան բառապաշարը պարունակող այնպիսի բառարաններ, ինչպես՝ Կ. Սարաֆյանի «Գիրք որ կոչի բանալի գիտութեան» (ռուս-հայերեն և հայ-ռուսերեն բառարաններ, 1786 թ.), Մխ. Աբբայի «Բառգիրք հայկազեան լեզուի» 2-րդ հատորը (1769 թ.), որտեղ զետեղված են աշխարհաբարից գրաբար և գրաբարից աշխարհաբար բառարաններ՝ յուրաքանչյուրը 30-35 հազար բառով և այլն:

19-րդ դարի սկզբից սկսվում է աշխարհաբարի տիրապետության շրջանը: Արդեն 19-րդ դարի առաջին երեսնամյակին արևելյան աշխարհաբարով լույս է տեսնում ավելի քան 40 անուն զանազան գրականություն: Նույն դարի առաջին քառորդում ստեղծվում են մշակութային երկու խոշոր օջախներ (Մոսկվայում՝ Լազարյան ճեմարանը, Թիֆլիսում՝ Ներսիսյան դպրոցը), որոնք մեծ դեր են խաղացել արևելահայ աշխարհաբարի մշակման և տարածման գործում:

Աշխարհաբարի մշակման և պրոպագանդման ուղղությամբ հսկայական է եղել մաս գրավոր խոսքի դերը: Այդ շրջանում տարբեր տարիներին լույս են տեսնում «Բազմավեպ», «Մեղու Հայաստանի», «Մասյաց աղավնի», «Արարատ» պարբերականները, որոնք ամբողջապես կամ մասամբ իրենց էջերը նվիրում են աշխարհաբարին, և վերջապես «Հյուսիսավայր» (1858-1864), որի դերը առանձնահատուկ է ոչ միայն արևելահայ աշխարհաբարի մշակման և տարածման, այլև գրաբարի դեմ մղված պայքարի բնագավառում գրական նոր լեզվի հաղթանակի գործում:

Հանուն աշխարհաբարի օրինականացման, գրաբարի դեմ մղված պայքարում ծավալված բանավեճում, որ հայտնի է **գրապայքար** անունով, աշխարհաբարի պաշտպանության նշանաբանով 19-րդ դարի 40-ական թվականներին իր գործունեությունը ծավալեց հայ մտավորականությունը:

Արևմտահայ իրականության մեջ գրապայքարը սկսվեց 19-րդ

դարի 40-ական թվականներին և ավարտվեց միայն դարավերջին: Արևմտահայ գրական լեզվի վերջնական հաղթանակի գործում կարևոր ծառայություններ են մատուցել Մխիթարյանները, Նահապետ Ռուսինյանը, Ստեփան Ոսկանը, Գր. Օտյանը և ուրիշներ:

Արևելահայ գրական լեզվի մշակման և տարածման ուղղությամբ հսկայական է հայ մեծ լուսավորիչ Խ. Աբովյանի դերը: Նա իր գրչով և հասարակական-մանկավարժական գործունեությամբ դարձավ աշխարհաբարի հաղթանակի համար մղվող պայքարի առաջամարտիկը: Աշխարհաբարի տարածման և տիրապետության համար նրա որդեգրած գործին իրենց նպաստը բերեցին աշխարհաբարով գրված կամ աշխարհաբարի պաշտպանությանը նվիրված այնպիսի աշխատություններ, ինչպես նշանավոր «Վերք Հայաստանի» վեպի առաջաբանը, «Աշխարհաբարի քերականությունը» և այլն:

Ժամանակակից հայոց լեզվի համակարգը: Արդի գրական լեզվի արևելահայ տարբերակի՝ ժամանակակից հայոց լեզվի հիմքում հիմնականում ընկած է Արարատյան բարբառը: Այդ նշանակում է՝ հնչյունաբանության, բառապաշարի, ձևաբանության ու շարահյուսության հիմնական իրակություններն իրենց էական կողմերով բարբառից փոխանցվել են ժամանակակից հայերենին: Մշակման և հետագա զարգացման ընթացքում, սակայն, գրական լեզուն որոշ չափով հեռացել է իր ծնող բարբառից՝ ներառելով իր մեջ հին գրական լեզվի՝ գրաբարի տարրերը:

Ժամանակակից հայերենի համակարգը բնորոշվում է հետևյալ առանձնահատկություններով¹¹.

ա) Հնչյունային (հնչույթային) համակարգն իր հիմնական գծերով, ինչպես նաև շեշտադրությունը գրաբարյան է, որ գրական լեզվին է փոխանցվել հիմնականում Արարատյան բարբառի միջոցով: Ի դեպ, շատ դեպքերում ժամանակակից հայերենի՝ արևելահայ լեզվի և

¹¹ Տե՛ս *Աճառյան Հ.*, Հայոց լեզվի պատմություն, մաս Բ, Երևան, 1951, էջ 475-476, 498: *Ասարրյան Մ.*, Արևելահայ գրական լեզվի և Արարատյան բարբառի ձայնավորական համակարգի փոխհարաբերությունները // Բանբեր Երևանի համալսարանի, 1978, №2(35), էջ 184-196: *Ջահուկյան Գ.*, Հայոց լեզվի զարգացումն ու կառուցվածքը, Երևան, 1969, էջ 28-82: *Սևակ Գ.*, Ժամանակակից հայոց լեզվի դարձնաբան, Երևան, 1955, էջ 67-70:

գրաբարի նյութական կողմի նույնությունը ոչ թե անմիջական է, այլ միջնորդավորված է բարբառով:

Հնչյունային (հնչույթային) համակարգը բնութագրվում է պայթականների եռաստիճանությամբ, շփականների երկաստիճանությամբ: Ի տարբերություն գրաբարի՝ նկատելի է ձայնավորների մենաբարբառության միտումը, գրաբարյան երկբարբառների և եռաբարբառների պարզեցումը, երկբարբառների վերածումը երկհնչյունների:

բ) Հնչյունափոխության հիմնական օրինաչափությունները նույնպես գրաբարյան՝ ժառանգորդական են, որն արտահայտվում է պատմական հնչյունափոխությամբ՝ գրաբարից փոխանցված բառերում և բառաձևերում (իբրև վերապրուկային ձևեր) և հատկապես դիրքային՝ շեշտից կախված հնչյունափոխությամբ՝ ինչպես գրաբարից փոխանցված բառերում և բառաձևերում, այնպես էլ նորակազմություններում՝ իբրև գործող հնչյունափոխական օրինաչափություններ կամ համաբանությամբ կատարվող երևույթներ (իրակություններ):

գ) Բառերի ուղղագրությունը և արտասանությունը հիմնականում գրաբարյան է: Լեզվի զարգացման արդի փուլի առանձնահատկությունների, ժամանակակից հայերենի հնչույթային համակարգի օրինաչափությունների հաշվառումով՝ գրաբարի ուղղագրությունը ենթարկվել է որոշ բարեփոխության:

դ) Բառային կազմի՝ բառապաշարի հիմնական մասը իր կարևոր իմաստներով, ինչպես և բառային հիմնական ֆոնդը գրաբարյան ժառանգություն է: Գրաբարից են ժառանգված նաև բառակազմության հիմնական միջոցներն ու եղանակները՝ համադրական և վերլուծական բարդությունները (հողակապով իսկական բարդությունների, հարադրությունների կազմությունը), ինչպես նաև ածանցումը, ածանցների գերակշիռ մասը: Բարբառային-ժողովրդական ծագում ունեն, սակայն, անհողակապ բարդությունները, կրկնավորները, հարադրավոր բայերի և դարձվածքների գերակշիռ մասը:

Հայերենի զարգացման արդի փուլում նկատելի է նախածանցների կիրառության որոշ աշխուժացում՝ հատկապես տերմինակազ-

մության մեջ, ինչպես նաև նորակազմությունների առատություն՝ մասնագիտական-տերմինաբանական բառապաշարում, ինչպես և զգալի թվով փոխառությունների՝ ռուսերենի, իսկ վերջին տասնամյակներում նաև անգլերենի միջոցով:

ե) Ժամանակակից հայերենի ձևաբանությունը, հոլովման և խոնարհման համակարգերը՝ իբրև գրաբարյան ձևերի հետագա զարգացման արդյունք, միաժամանակ, խարսխված լինելով Արարատյան բարբառի վրա, իր էությամբ ժողովրդական-բարբառային բնույթ ունի:

Տիպաբանական կառուցվածքի տեսակետից ժամանակակից հայոց լեզվում թեքականության որոշ դրսևորումներով հանդերձ, ի տարբերություն գրաբարի, ավելի շեշտված է կցականությունը:

Ժամանակակից հայ գրական լեզվի արևելահայ տարբերակն աչքի է ընկնում հոլովման համակարգի պարզեցմամբ և կրճատմամբ, առանձին հոլովների գործառությունների ընդարձակման շնորհիվ հինգ հոլովների առկայությամբ: Նկատվում է նաև հոլովների միօրինակացում՝ *Ի* հոլովման նախապատվության միտումով, ձևային և իմաստային հոլովումների տարբերակմամբ:

զ) Շարահյուսական համակարգը, ի հակադրություն գրաբարի, բնորոշվում է հատկապես որոշիչների և հատկացուցիչների առաջադաս գործածությամբ, որոշիչ-որոշյալների, հատկացուցիչ-հատկացյալների անհամաձայնությամբ, անջատական և միացական շաղկապների տարբերակված համակարգով, կապերի և կապական բառերի նոր նրբերանգների ձեռքբերմամբ, նախդիրների զգալի մասի իբրև ետադիրների կիրառմամբ, գոյականների խնդրառության որոշակի միտումով և այլն:

«Ժամանակակից հայոց լեզու» դասընթացի բաժինները

«Ժամանակակից հայոց լեզու» դասընթացը բաղկացած է հետևյալ բաժիններից՝ հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն և շարահյուսություն:

Հնչյունաբանությունը նկարագրում է ժամանակակից հայոց լեզվի հնչյունական կազմը, լեզվում կատարվող հնչյունական հիմնական գործընթացները: Հնչյունաբանության մեջ մտնում են՝ ***ուղղասխ-***

սուբյունը, որ ուսումնասիրում է ժամանակակից լեզվի արտասանական նորմերը, **ուղղագրությունը**, որ ծանոթացնում է հայերենի այբուբենին, հնչյունների և տառերի հարաբերակցությանը:

Բառագիտությունն ուսումնասիրում է բառը, լեզվի բառային համակարգը, բառային կազմը, բառապաշարային շերտերը, բառակազմությունը: Բառագիտության մեջ մտնում են՝

- **իմաստաբանությունը**, որն ուսումնասիրում է բառի իմաստները, իմաստի և ձևի հարաբերությամբ բառերի տեսակները,
- **սպուգաբանությունը**, որը ծանոթացնում է բառի ստուգաբանական վերլուծությանը,
- **բառակազմությունը**, որն ուսումնասիրում է բառերի ձևաբաշխի կազմը, բառերի կազմության հիմնական տիպերն ու տեսակները,
- **դարձվածաբանությունը**, որը նկարագրում է արդի լեզվի դարձվածքային համակարգը,
- **բառարանագրությունը**, որն ուսումնասիրում է հայերեն տարբեր տիպերի բառարանները:

Ձևաբանությունը բառերի քերականական կարգերի ու քերականական ձևերի ուսմունքն է. այն ուսումնասիրում է բառերի բառաքերականական կարգերը, լեզվում քերականական իմաստների արտահայտման միջոցները:

Շարահյուսությունը բառերի կապակցության և նախադասության ուսմունքն է: Այն ուսումնասիրում է շարահյուսական հիմնական միավորները՝ բառերի կապակցությունն ու նախադասությունը, շարահյուսական կապերի տեսակները, նախադասության տիպերն ու կառուցվածքը: Շարահյուսության հիման վրա էլ ստեղծվում է կետադրությունը՝ որպես կետադրական նշանների գործածության կանոնների ամբողջություն:

ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հնչյունաբանության¹² ուսումնասիրության առարկան հնչյուններն են՝ լեզվի նյութական նվազագույն միավորները: Հնչյունները նյութական նվազագույն միավորներ են, որովհետև դրանք հնարավոր չէ բաժանել ավելի փոքր, ինքնուրույն միավորների:

Հնչյունաբանությունը լեզվաբանության այն բաժինն է, որն ուսումնասիրում է լեզվի հնչյունական կազմը, հնչյունական համակարգը: Հնչյունաբանությունը զբաղվում է նաև խոսքային ավելի մեծ միավորների՝ վանկի, հնչաբառի, հնչաշարային, հնչանախադասության (հնչադասության), ինչպես նաև հնչյունական շղթայի վերհաստիքային միավորների՝ շեշտի և հնչերանգի ուսումնասիրությամբ:

Այսպիսով, հնչյունաբանությունը զբաղվում է լեզվի բոլոր հնչյունական միջոցների ուսումնասիրությամբ, նկարագրությամբ ու դասակարգմամբ ինչպես հնչյունների արտաբերման ու հնչման, այնպես էլ լեզվական գործառության ընթացքում նրանց կատարած դերի տեսակետից:

Ժամանակակից հայոց լեզվի հնչյունաբանությունը նկարագրում և դասակարգում է հայոց լեզվի արդի փուլի հնչյունական համակարգը, բացահայտում լեզվում կատարվող հնչյունական գործընթացները, հնչյունների զանազան կարգի փոփոխությունները, նրանց առաջացման պատճառներն ու օրինաչափությունները:

Լեզվի հնչյունների ուսումնասիրությունն ունի և՛ լեզվաբանական-տեսական, և՛ կիրառական-գործնական արժեք ու նշանակություն:

¹² Տե՛ս *Արեղյան Մ.*, Հայոց լեզվի տեսություն, հ. 2, Երևան, 1974, էջ 61-82: *Աղայան Էդ.*, Լեզվաբանության հիմունքներ, Երևան, 1987, էջ 196-288: *Ջահուկյան Գ.*, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 57-118: *Սևակ Գ.*, Ժամանակակից հայոց լեզվի դարձնաբանություն, Երևան, 1955, էջ 79-90: *Առաքելյան Վ.*, *Խաչատրյան Ա.*, *Էլոյան Ս.*, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Հնչյունաբանություն և բառագիտություն, Երևան, 1979, էջ 5-124:

Հնչյունների ուսումնասիրության լեզվաբանական-տեսական արժեքն այն է, որ իբրև լեզվի նյութական նվազագույն միավորներ՝ նրանք կազմում են նրա «բնական նյութը», որն ընկած է ինչպես հնչյունական, այնպես էլ բառային միավորների և քերականության մի շարք օրինաչափությունների բազմազան հարցերի բացատրման և պարզաբանման հիմքում: Մյուս կողմից, առանց հնչյունական տվյալների հնարավոր չէ պատկերացնել լեզուների պատմահամեմատական ուսումնասիրությունը, նրանց ցեղակցական-ծագումնաբանական կապերի, փոխադարձ ազդեցության բացահայտումը, ինչպես և, առհասարակ, ստուգաբանության բնագավառում կատարվող որևէ աշխատանք:

Հնչյունների ուսումնասիրության գործնական-կիրառական արժեքն այն է, որ նպաստում է լեզվի ուղղագրության և ուղղախոսության ուսուցմանը՝ ճիշտ գրելու և խոսելու սկզբունքների ու կանոնների յուրացմանը, անգամ՝ արտաբերական-արտասանական խանգարումների վերացմանը: Այն մեծապես կարող է նպաստել օտար լեզու սովորելու, ինչպես նաև օգնել մեկ լեզվից մի այլ լեզվով կինոնկարների հնչյունական խոսքը կրկնօրինակելու գործին և այլն:

Հնչյունը, մարդու խոսողական և լսողական գործարանների աշխատանքի արդյունքը լինելով, ոչ միայն լեզվի նյութական նվազագույն, այլևս անբաժանելի միավոր է, այլև հանրորեն գիտակցված, արժեքավորված և ընդունված միավոր:

Հնչյունների ուսումնասիրությունը կատարվում է բնախոսական (ֆիզիոլոգիական)-ֆիզիկական տեսանկյունով և հասարակական-պատմական կողմով:

Հնչյունների բնախոսական ուսումնասիրության նպատակն է պարզել և նկարագրել արտաբերական-արտասանական առանձին գործարանների դերը այս կամ այն հնչյունը արտաբերելիս: Հնչյունների ֆիզիկական ուսումնասիրությամբ երևան են հանվում նրանց ձայնաբանական հատկանիշները (ձայն, աղմուկ, երանգ, երկարություն և այլն): Հնչյունների վերոհիշյալ բնախոսական և ֆիզիկական հատկանիշների ուսումնասիրությամբ զբաղվող բաժինը կոչվում է **հնչյունախոսություն:**

Հնչյունների հասարակական-պատմական ուսումնասիրության նպատակն է քննել լեզվի հնչյունական (հնչույթային) համակարգը նրա հասարակական գնահատման և լեզվական դերի հիման վրա, բացահայտել հնչյունների փոփոխության պատմական օրինաչափությունները:

Հնչյունների (հնչույթների) համաժամանակյա օրինաչափություններով, հնչույթային համակարգի դասակարգման, հնչյունների փոփոխման հարցերով, այսինքն՝ նրանց գործառական հատկանիշների քննությամբ զբաղվում է **հնչույթաբանությունը**:

Հնչյունների (հնչույթների) տարաժամանակյա ուսումնասիրությամբ, նրանց փոփոխման պատճառների ու օրինաչափությունների պատմական գործընթացների բացահայտման ու պարզաբանման հարցերով զբաղվում է **պատմական հնչույթաբանությունը**:

Արտասանվածքի վերլուծությունը

Հնչյունների (հնչույթների)՝ իբրև լեզվի նյութական նվազագույն միավորների ուսումնասիրությունը նպատակահարմար է կատարել՝ սկսելով խոսքի առավել մեծ միավորից և աստիճանաբար հասնել նվազագույն միավորին, թեև հնարավոր է նաև հակառակ կարգի ուսումնասիրությունը, այսինքն՝ նվազագույն միավորից աստիճանաբար բարձրանալ դեպի ամենամեծ, առավելագույն միավորը:

Արտասանվածի վերլուծությանն անցնելուց առաջ անհրաժեշտ է տարբերակել **լեզու** և **խոսք** հասկացությունները:

Լեզուն և խոսքը փոխհաջորդում են միմյանց: Խոսքն իրականացնում է լեզվական միջոցներով: «**Լեզու**» բառը միատարր չէ և իբրև հաղորդակցման հիմնական միջոց ու մտածողության ձև՝ արտահայտում է մի քանի իմաստ. ա) մարդկային լեզու՝ իբրև բարձր զարգացած մատերիայի՝ մարդուն հատուկ խոսողական կարողություն. բ) իբրև ժողովրդի (կամ նրա մի հատվածի) հաղորդակցման միջոց. գ) իբրև անհատական լեզու՝ տվյալ անհատի հաղորդակցման միջոց:

Լեզու և խոսք: Լեզուն մի կողմ համակարգ է, միասնական մի ամբողջություն, որի մեջ բոլոր միավորները փոխադարձ կապի մեջ

են գտնվում միմյանց հետ ու փոխադարձաբար պայմանավորված են միմյանցով: Մյուս կողմից՝ լեզուն անընդհատ գործընթաց է, գտնվում է անընդհատ զարգացման մեջ:

Լեզուն յուրաքանչյուրի համար մի ներքին ունակություն է, որ նրան հնարավորություն է տալիս հաղորդակցվելու մի ուրիշի հետ: Այդ ունակությունը կյանք է ստանում, իրական վիճակի վերածվում այն ժամանակ միայն, երբ մարդ գործադրում է այն, այսինքն՝ մեկի հետ հաղորդակցվում, խոսում է: **Լեզվական կարողության այդ գործադրությունը կոչվում է խոսողություն:** Այդ առումով լեզուն հանդես է գալիս իբրև տվյալ հանրության կարողությունը, լեզվական մի այնպիսի ունակություն, որն իր ընդհանուր կողմերով գրեթե նույնությամբ գոյություն ունի ժողովրդի՝ այդ հանրության յուրաքանչյուր անդամի խոսքում և ամփոփվում է տվյալ լեզվի քերականության և բառարանի մեջ, մինչդեռ խոսողությունը այդ կարողության դրսևորումն է, նրա գործադրումը:

Խոսողության լեզվական այդ ունակության գործադրման արդյունքը խոսքն է, այսինքն՝ այն միտքը (մտածությունը), որ համապատասխան լեզվական ձևավորմամբ (նախադասություն, նախադասության անդամներ և այլն) հաղորդվում է մեկից մյուսին: Խոսքը, այսպիսով, լեզվի իսկական գոյավիճակն է, լեզվի կյանքը: Խոսքի մեջ կոնկրետանում, միս ու արյուն է առնում մեր լեզվական ունակությունը (պոտենցիան): Խոսքը, մյուս կողմից, գոյություն է ստանում ինչպես խոսելու և գրելու, այնպես էլ կարդալու և լուռ, ինքնին մտածելու ժամանակ: Խոսքի մեջ չկա որևէ միավոր՝ նախադասություն, բառ, քերականական ձև, որ սերտ հարաբերության մեջ չլինի նույն խոսքի մյուս միավորների հետ: Խոսքը կազմող բոլոր միավորները մի անբաժանելի միասնություն են կազմում և այս տեսակետից առանձին նախադասությունները, նրանց վերլուծությունն ու առանձին տարրերի բաժանելը գիտական վերացարկում է, որն անհրաժեշտ է այդ խոսքը ճիշտ և բազմակողմանիորեն վերլուծելու համար¹³:

Լեզվի և խոսքի տարբերակումը սովորաբար համադրվում է գի-

¹³ Տե՛ս *Աղայան Էդ.*, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1967, էջ 69-71:

տակցության և մտածողության հետ: Լեզվի ու խոսքի և գիտակցության ու մտածողության գուգահեռ համեմատության մեջ համապատասխանաբար առնչվում են լեզուն ու գիտակցությունը, խոսքն ու մտածողությունը: Ըստ որում, մտածողությունը (ինչպես և խոսքը) գործընթաց է, գիտակցությունը (ինչպես և լեզուն)՝ որոշակի գոյություն ունեցող վիճակ: Մտածողության յուրաքանչյուր գործողություն, հենվելով գիտակցության վրա, վերածվում է գիտակցության փաստի:

Խոսքը դրսևորվում է հնչյունական շղթայի (հնչաշղթայի) միջոցով: Հնչաշղթան արտասանության ամենամեծ, առավելագույն միավորն է, վանկը՝ նվազագույն:

Խոսքի միավորների տարբերակումը կատարվում է արտասանվածի հատույթավորման միջոցով: Արտասանվածի հատույթավորումը կատարելով իմաստային հիմքի վրա՝ ստացվում են երկու կարգի անվանումներ՝ նախադասություն և հնչյունական նախադասություն (կամ հնչանախադասություն, հնչադասություն), շարույթ և հնչյունական շարույթ (կամ հնչաշարույթ), բառ և հնչյունական բառ (կամ հնչաբառ):

Հնչական լեզուն՝ խոսքը, ունի միայն իրեն հատուկ հնչյունական միջոցները, որոնք ուղղակիորեն առնչվում են լեզվի բովանդակության արտահայտմանը: Հնչական լեզվի միջոցներն են՝ հնչանախադասությունը, հնչերանգը, հնչաշարույթը (կամ խոսքային տակտը), հնչաբառը, վանկը և շեշտը: Հնչաշղթայի առանձին օղակները՝ հնչանախադասությունը, հնչաշարույթը, հնչաբառը, վանկը և հնչույթը առավելագույնից նվազագույնը իջնող աստիճանականությամբ առանձին միավորներ են: Արտասանվածի հատույթավորման առանձին միավորները միմյանցից, նախ, տարբերվում են իրենց հնչման տևողությամբ, և ըստ այդմ էլ՝ հնչանախադասությունն իբրև առավելագույն միավոր, ունի հնչման ամենամեծ տևողությունը, իսկ հնչույթը, ընդհակառակը, ներկայացնելով ամենավաղից հատույթը, համապատասխանաբար օժտված է հնչման նվազագույն տևողությամբ:

Հնչաշղթան բաժանվում է որոշակի հատվածների, որոնք բնութագրվում են սկզբնային և վերջնական տևական դադարներով, ավարտային ելևէջումով: Արտասանվածի հատույթավորման մեջ

մեծ է հատկապես դադարի դերը: Նրա անհրաժեշտությունը բխում է հնչաշղթան ըստ իմաստների հատույթավորելու պահանջից: Անհրաժեշտ է նշել նաև, որ շարահյուսական նախադասությունը և հնչանախադասությունը խոսքում կամ հնչաշղթայում միշտ չէ, որ համընկնում են¹⁴: Շարահյուսական նախադասությունը՝ իբրև բովանդակության պլանի միավոր, առաջին հերթին շարահյուսական միավոր է և որպես կառուցվածքային սխեմա՝ գուրկ է հնչերանգից: Հնչանախադասությունը նախադասության նյութական դրսևորումն է և ձևավորվում է հնչերանգի շնորհիվ: Շարահյուսական և հնչական նախադասությունների ակնհայտ տարբերությունները բխում են նրանց գնահատման մեկնակետից: Վերջին հաշվով առաջին դեպքում նախադասությունը հանդես է գալիս իբրև քերականական (շարահյուսական) միավոր, հնչանախադասությունը՝ հնչյունական միավոր: Շարահյուսական նախադասությունն ու հնչանախադասությունը ձևով նույնը լինելու կամ համընկնելու դեպքում անգամ քննվում են տարբեր տեսանկյուններով:

Խոսքի հիշյալ միավորներն ստանալու համար անհրաժեշտ է կատարել արտասանվածի հատույթավորում, այսպես, օրինակ՝ *Ես իմ անուշ Հայաստանի արևահամ քառն եմ սիրում, Մեր հին սագի ողբանվագ, լացակումած լարն եմ սիրում, Արևանման ծաղիկների ու վարդերի բույրը վառման Ու նահրյան աղջիկների հեզանկուն պարն եմ սիրում* հնչաշղթան կազմված է մի քանի (չորս) հնչանախադասություններից, որոնք ձևավորվում են հնչերանգի միջոցով, հնչանախադասությունները և այնուհետև ավելի փոքր միավորները տարբերակվում են դադարներով, համապատասխան շեշտերի շնորհիվ: Բերված հնչաշղթայի առանձին միավոր է՝ *Ես իմ անուշ Հայաստանի արևահամ քառն եմ սիրում* հնչանախադասությունը: Այն՝ իբրև հնչական առավելագույն միավոր, ավարտուն միտք արտահայտող **ասություն** է, որ միավորված է հատուկ հնչերանգով և այդ հնչաշղթայի մնաճ միավորներից առանձնանում է դադարով:

Այսպիսով, հնչանախադասությունը արտասանվածի այն միա-

¹⁴ Հմմտ. Հնչերանգը և շեշտը ժամանակակից հայերենում, Երևան, 1978, էջ 130, 146-148, 177:

վորն է, որ ամբողջանում և ձևավորվում է հնչերանգի միջոցով: Մյուս կողմից, քերականորեն իբրև մտքի ավարտուն կազմություն՝ այն ունի ինքնուրույն, անկախ գործածություն: Հնչանախադասության համար հնչման տեսակետից հատկանշականը երկու համեմատաբար մեծ դադարների միջև գտնվող հնչերանգային միասնությունն է: Հնչերանգային այդ միասնությամբ է, որ Ե. Չարենցից բերված օրինակում տարբերակվում, առանձնանում են՝ *Ես իմ անուշ Հայաստանի արևահամ քառն եմ սիրում* և *Մեր հին սագի ողբանվագ, լացակունած լարն եմ սիրում* հնչանախադասությունները:

Հնչերանգը, սերտորեն կապված լինելով նախադասության նպատակային բովանդակության հետ, բնութագրում է ինչպես ամբողջ հնչանախադասությունը, այնպես էլ նրա առանձին մասերը (հնչաշարայինները, հնչաբառերը և այլն): Հնչերանգը հանդես է գալիս որպես հնչաշղթայի վերհնչույթային կամ վերհատույթային հատկանիշների որոշ հարաբերություն, որ ուժգնության, տևողության և բարձրության տարբերությունների պարբերականության դեպքում դրսևորվում է որպես ռիթմ: Հնչերանգը քերականական ձևավորման միջոց է, ինքնուրույն հնչական միավոր, որը թեև առնչվում է քերականությանը, բայց չի ստորադասվում նրան: Այն ավելի կապված է հաղորդակցման նպատակատրման, քան թե նախադասության կառուցվածքի հետ: Հնչերանգը կատարում է մի շարք կարևոր գործառնություններ. այն ոչ միայն ձևավորում է հնչանախադասությունը, զանազան շարահյուսական կառուցվածքներ (հնչական միավորներ), այլև մասնակցում է մտքի, զգացմունքների, կամքի արտահայտմանը: Հնչական խոսքի, հնչաշղթայի միևնույն հատվածը, նայած ինչպես և ինչ հնչերանգով է տարբերվում, կարող է ունենալ տարբեր իմաստներ, օրինակ՝ *Արմենը եկավ*, *Արմենը եկա՞վ*, *Արմենը եկավ* և այլն: Պատմողական խոսքի հնչերանգը բնութագրվում է հնչանախադասության սկզբում տոնի բարձրացմամբ և վերջում՝ իջեցմամբ: Հարցական հնչանախադասությանը բնորոշ է տոնի կտրուկ բարձրացում վերջում, բացականչական նախադասությանը՝ հավասար բարձր հնչերանգ:

Հնչերանգի կարևոր գործառնություններից մեկն էլ այն է, որ նրա օգնությամբ է կատարվում հնչանախադասության հատույթավորումը

(մասնատումը) հնչերանգափմաստային հատվածների՝ շարության և հնչաշարությունների:

Հնչաշարայի հաջորդ միավորը **հնչաշարությո՞ւն** է: Հնչաշարությո՞ւն կամ խոսքային տակտը հնչանախադասության առանձին միավոր է, երբ հնչանախադասության ներսում կատարվող դադարի հետևանքով առաջանում են մեկից ավելի հատվածներ: Օրինակ՝ *Ես իմ սնուշ / Հայաստանի / Արևահամ քառն եմ / սիրում* հնչանախադասությունը կազմված է չորս խոսքային տակտից կամ հնչաշարությից, որոնք անջատվում են դադարներով և բնութագրվում են անավարտվածության հնչերանգով: Հնչաշարություն կամ խոսքային տակտում դադարներն ավելի կարճ են, քան հնչաշարայի ավելի մեծ միավորների՝ հնչանախադասությունների դադարները: Կառուցվածքային տեսակետից հնչաշարությունները կամ հնչատակտերը հնչաբառերի այնպիսի կապակցություններ են, որոնք հնչանախադասությունների համեմատությամբ արտահայտվում են սկզբնային և վերջնային ավելի փոքր դադարներով և ելևէջային որոշակի բնութագրմամբ:

Փորձառական ուսումնասիրության տվյալներով¹⁵ հնչաշարությի արտասանման ժամանակ (ինչպես և բառերի) արտաբերությունն սկսվում է հնչման ուժի որոշակի ուժգնությամբ, որն աստիճանաբար նվազում է մինչև շարությո՞ւն եզրափակող միավորները: Հնչման ուժի որոշ ակտիվություն է նկատվում հնչաշարայի այն հատվածներում, որտեղ առկա են իմաստի ընդգծում ունեցող միավորներ: Այդ նույն տվյալներով լսողական մակարդակում հնչաշարությունները միմյանցից բաժանվում են դադարով, որը կարող է երբեմն հնչման իրական ընդհատում չունենալ: Առանձին դեպքերում շարությունները հատությավորվում են հնչանախադասություններից արտասանության տեմպի փոփոխմամբ, որի տարբերությունները նկատելի են դառնում երկու շարությունների սահմանագծում: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ հնչյունական շղթայում շարությունները պատրաստի տրված միավորներ չեն, այլ կազմվում են խոսքային գործածության ընթացքում, և խոսողի կողմից շարությունների հատությավորումը կա-

¹⁵ Տե՛ս Հնչերանգը և շեշտը ժամանակակից հայերենում, Երևան, 1978, էջ 205-206:

տարվում է այդ միավորների իմաստների ամբողջականության գիտակցման շնորհիվ: Շարույթի կազմավորմանը մասնակցում են շարույթային շեշտը (որ դրվում է հնչաշղթայի այդ հատվածի առավել կարևոր գիտակցվող բառի վրա), ինչպես նաև տոնն ու դադարը:

Հնչաշարույթն իր կառուցվածքով շատ կողմերով կարող է համեմատվել բառակապակցության հետ: Հնչաշարույթն ու բառակապակցությունը հնչաշղթայում հաճախ չեն նույնանում նախ և առաջ այն պատճառով, որ առանձին հնչաշարույթ կարող է կազմել երբեմն մեկ հնչաբառ, ինչպես օրինակ, բերվող հնչանախադասության մեջ՝ *Ես իմ անուշ / Հայաստանի / արևահամ բառն եմ / սիրում*: Այնուհետև՝ հաճախ բառակապակցությունը կարող է լինել ինչպես մեկ շարույթի կազմում (օրինակ՝ *Ես իմ անուշ, /արևահամ բառն եմ/*), այնպես էլ բաժանվել տարբեր շարույթների միջև:

Հնչաշարույթի հիմնական առանձնահատկությունն այն է, որ նրանում ընդհանրապես միավորվում են մեկ և մեկից ավելի հնչաբառեր: Հնչաշարույթը՝ իբրև հնչանախադասության մեկ հատված, ինչպես նաև հնչյունային համակարգի հասկացություն, ուղղակի կապ ունի լեզվի բովանդակության արտահայտման հետ: Հնչաշարույթի փոփոխմամբ հաճախ փոխվում է նաև ամբողջ հնչանախադասության բովանդակությունը: Օրինակ՝ *Թո՛ղ / զնա բողոքի, թող զնա՛ / բողոքի, թող զնա / բողոքի*:

Հնչանախադասության հատույթավորմամբ ստացվող հաջորդ միավորը **հնչաբառն** է: Հնչաշարույթը կամ խոսքային տակտը տրոհվում է հնչական ավելի փոքր միավորների՝ հնչաբառերի: **Հնչաբառը** հնչաշարույթի մեկ հատվածն է, որը միավորված է միասնական մեկ շեշտով: Հիշյալ հնչանախադասությունը հատույթավորվում է՝ *Ես / իմ / անուշ / Հայաստանի / արևահամ / բառն եմ / սիրում* հնչաբառերի:

Հնչաբառի առանձնացման կամ տարբերակման համար հիմք է ծառայում նրա շեշտակրությունը: Հայերենի բառային հիմնական շեշտի կայուն վերջնավանկային լինելու պատճառով արտասանության ընթացքում ազդարարվում է բառերի սահմանների մասին, որով և հնչաբառերը տարբերակվում կամ առանձնանում են հնչաշղթայում կամ տվյալ հնչանախադասության մեջ: Հնչաբառին՝ իբրև խոսքի

հնչյունական համակարգի կամ արտահայտության պլանի միավորի, համապատասխանում է լեզվական համակարգի, բովանդակության պլանի միավոր՝ բառը:

Անհրաժեշտ է նշել նաև, որ որոշ դեպքերում մեկ հնչաբառը կարող է պարունակել մեկից ավելի բառեր, որոնք իրենց շեշտագրկության պատճառով միանում են շեշտակիր բառերին, օրինակ՝ *գալիս են, երգում են, մի կողմ /զնայ/* և այլն: Մյուս կողմից, հնչաբառերը կարող են լինել ինչպես բառի ուղիղ, այնպես էլ թեքված ձևեր, այսինքն՝ բառեր և բառաձևեր: Հնչանախադասության մեջ հնչաբառերի քանակը փաստորեն որոշվում է բառային հիմնական շեշտերի քանակով: Յուրաքանչյուր հնչանախադասություն կունենա շեշտերի քանակությանը համապատասխան հնչաբառեր: Հնչանախադասության հատույթավորման ժամանակ ըստ ստորակարգության հնչաբառին հաջորդող մյուս միավորը **վանկն է**:

Վանկը ժամանակակից հայերենում

Վանկը հնչաբառի այն նվազագույն հատվածը, միավորն է, որը արտաբերվում է օղի մեկ մղումով, մեկ շնչով և որը դադարով սահմանագատվում է հնչաշարային մույնատիպ միավորներից: Չայնաբանական տեսանկյունով վանկը բառ է կամ բառի մի մասն է՝ կազմված մեկ և ավելի հնչյուններից և բնորոշվում է հնչման ուժգնությամբ (ուժով):

Վանկի մեջ հնչյուններից մեկը ավելի հնչուն է մյուսների համեմատությամբ: Այդ վերջինս էլ կոչվում է վանկարար հնչյուն և վանկ է կազմում: Մյուսները ոչ վանկարար հնչյուններ են: Արդի հայերենում վանկ են կազմում միայն ձայնավորները (և՛ շեշտակիր, և՛ անշեշտ դիրքերում): Բաղաձայնները վանկարար հնչյուններ չեն: Չայնավորը վանկ կարող է կազմել թե՛ միայնակ և թե՛ մեկ կամ մի քանի բաղաձայնների համակցությամբ: Օրինակ՝ *ար-լրա-հա-նել, գա-րուն, լը-սա-րան* և այլն: Հայերենում առանց ձայնավորի վանկ չի կազմվում, մինչդեռ բառի մեջ մեկ ձայնավորը, առանց բաղաձայնի կարող է վանկ կազմել, օրինակ՝ *ա-մառ, ու-լիկ* և այլն: Վանկը իմաստակիր

կամ իմաստատարբերակիչ միավոր չէ: Վանկի և լեզվի իմաստակիր միավորների՝ արմատի կամ ածանցի համընկնումը պատահական երևույթ է, ինչպես՝ *խաչ-քար*, բայց՝ *խաչ-քա-քա-կերոր*, *բան-վոր*, բայց՝ *բան-վո-քա-կան* և այլն:

Ըստ այն հանգամանքի, թե ձայնավորը բառում այլ հնչյունների հետ ի՛նչ համադրությամբ է հնչում, վանկերը լինում են *բաց* և *փակ*: *Բաց* են միայն ձայնավորով կազմված կամ էլ ձայնավորով վերջացող վանկերը, օրինակ (ընդգծվածները)՝ *ի-քա-վա-ցի*, *քա-ցա-կա*, *քր-նա-քա-կան*, *գր-քա-ղա-բան* և այլն, և այլն: *Փակ* վանկը վերջանում է բաղաձայնով, ինչպես (ընդգծվածները)՝ *փար-թե-քակ*, *գոր-ծա-վար*, *շր-քա-մուրք* և այլն, և այլն:

Բառերը կարող են կազմված լինել մեկ վանկից (օրինակ՝ *է* «Աստված, էակ», *արոք*, *մարոք*, *գառ*, *լեռ*, *հող*, *քար*, *շուն*, *գայլ* և այլն) և մեկից ավելի վանկերից (*անկրթամադրվածություն*, *այգեպղղաբանջարարություն* և այլն):

Հայերենում կան բառեր, որոնք կազմված են այսպես կոչված մեկ և կես վանկից (գաղտնավանկից). այդ դեպքում գրության ժամանակ գաղտնավանկի *ը* ձայնավորը չի գրվում, բայց արտաբերվում է, օրինակ՝ *կայսր* - *կայ-սրր*, *ասարդ* - *աս-րդդ*, *դուստր* - *դուս-րրր*, *գրիչ* - *գր-րիչ* և այլն: Բառասկզբում *ը*-ով սկսվող գաղտնավանկը այսօր գրական արևելահայերենում համեմատաբար թույլ է արտասանվում՝ *սկիզբ* – *քս-կ-զբ*, *սպանդ* - *քս-պանդ* (արևմտահայերենում բառասկզբի *ը*-ն ավելի հստակ է արտասանվում):

Վանկատման կանոնները

ա) Երկու ձայնավորի միջև գտնվող մեկ բաղաձայնը անցնում է երկրորդին, ինչպես՝ **ա-սեյ, կա-րեյ, տե-րու-նի, քե-րան:**

բ) Երկու ձայնավորների միջև գտնվող երկու բաղաձայնները (այդ թվում և ձայնորդները) բաժանվում են երկու վանկի վրա, ինչպես՝ **ամ-րոց, կար-գեյ, հայ-րիկ, ապ-րեյ:**

Գաղտնավանկ ը-ի դեպքում գործում են հետևյալ կանոնները.

ա) Բառասկզբում գրվող երկու բաղաձայնների միջև երբ արտասանվում է **ը**, այդ երկու բաղաձայնները բաժանվում են երկու վանկերի վրա, ինչպես՝ **գը-ծուծ, կը-ղեղ, տը-ղա, ժը-րաջան:**

բ) Առանձին են մնում *ս, գ, շ + պայթական* կապակցությունները, որոնք եթե ձայնավորի տղումով չեն ստացվել, ը-ն ստանում են առջևից՝ դարձյալ բաժանվելով երկու վանկերի վրա, ինչպես՝ **ըս-դանա, ըս-պառնա, ըս-կիզք, ըշ-դապեյ, ըգ-բաղվել** և այլն: Այս օրենքը չի գործում, եթե այդպիսի հնչյունակապակցությունները (*զք, գգ, սկ, սր, շր* և այլն) առաջացել են հնչյունափոխության հետևանքով, ինչպես՝ **սը-դախոս** (< սուս), **գը-տել** (< գուտ):

Բառասկզբի դիրքի համար պետք է հիշել նաև, որ երեք և ավելի բաղաձայններով սկսվող բառերում միշտ հաջորդ վանկ է անցնում վերջին բաղաձայնը, իսկ մյուսները **ը** գաղտնավանկով կազմում են առանձին վանկ՝ **գըդ-նեյ, գըս-պեյ, մըկ-րապ, տըրդ-մություն, մը-կըրդ-վեյ, կըրկ-նություն, քըմք-կահար** և այլն:

Բառամիջում գործում են հետևյալ կանոնները.

ա) երեք բաղաձայններից բաղկացած կապակցություններից, եթե առաջին երկուսը սովորաբար այնպիսիներն են, որոնցով բառերը կարող են հանգել, առաջին երկուսն անցնում են նախորդող, իսկ երրորդը՝ հաջորդող ձայնավորին, ինչպես՝ **բարձ-րա-բերձ, կարծ-րա-նյութ, բեղմ-նա-վոր, արք-շիր:**

բ) Չորս բաղաձայններից բաղկացած կապակցություններից առաջինն անցնում է նախորդ վանկին, երկրորդն ու երրորդը կազմում են մեկ վանկ՝ **ը** ձայնավորով, չորրորդն անցնում է հաջորդ վանկին, ինչպես՝ **եը-կըն-չեյ, մար-տըն-չեյ, ըն-կըր-կեյ, ան-կըր-բու-թյուն, ընդ-գըր-կեյ, ընդ-նըշ-մարեյ:**

գ) Հինգ բաղաձայնների բառակապակցություններով բառերը քիչ են և այն էլ՝ նախածանցներով կազմված, ինչպես՝ **ան-կրրկ-նելի, ան-փրրփ-մա-բար:**

Բառավերջում բոլոր բաղաձայնները որպես կանոն մտնում են մեկ վակի մեջ, ինչպես՝ **մեկ-նարկ, լու-սանցք, ար-վեսպ:** Որպես բացառություն՝ նշենք այս երկու դեպքերը՝

1) Բառավերջի երկու բաղաձայններից երկրորդը եթե **բ, ռ** կամ **դ** է, ապա դրանից առաջ ավելանում է **ը** գաղտնավանկ՝ **սա-նրը, գամ-փրը, ար-կրդ:**

2) Գաղտնավանկ է ավելանում նաև այն դեպքում, երբ բառավերջի բաղաձայնին ավելանում է որևէ հոդ (**ս, դ** կամ **և**)՝ **գոր-ծրս, միտ-քրդ**¹⁶:

Հայերենի շեշտը

Շեշտ ասելով՝ սովորաբար հասկանում ենք բառային շեշտը, որը բառի գլխավոր տարբերակիչ հատկանիշներից մեկն է (յուրաքանչյուր բառ անպայման ունի բառային շեշտ): Շեշտը բառի մեջ որևէ վանկի ուժգին արտաբերումն է: Ժամանակակից հայերենում շեշտը հիմնականում ընկնում է բառի վերջին վանկի վրա (եթե դրա ձայնավորը **ը**-ն է, ապա նախավերջին ձայնավորի վրա): Շեշտվող վանկն արտահայտվում է օղի հոսանքի առավել ուժեղ արտամղմամբ, հետևաբար և բառի վերջնավանկի վանկարար ձայնավորի ավելի ուժեղ արտասանությամբ: Շեշտավոր վանկը ձայնաբանորեն տարբերակվում է ձայնի ուժգնությամբ, բնախոսորեն (ֆիզիոլոգիական տեսակետից) մկանային լարվածության և արտաշնչման ուժեղությամբ: Շեշտավոր վանկը որակական տեսակետից էլ է տարբերվում ոչ շեշտավորից: Շեշտավոր վանկի արտասանությունն ավելի հստակ է, մինչդեռ անշեշտ վանկերը թուլանում և հստակ չեն արտասանվում¹⁷:

¹⁶ Աղսյան Է., Գրաբարի քերականություն, Երևան, 1964, էջ 252-256:

¹⁷ Տե՛ս Աղսյան Է., Լեզվաբանության հիմունքներ, Երևան, 1987, էջ 225-227: Ղարազյուլյան Թ., Ժամանակակից հայոց լեզվի ուղղախոսությունը, Երևան, 1974, էջ 218-224:

Հայերենի բառային շեշտը կայուն-շարժական է: Կայուն է, որովհետև որպես կանոն ընկնում է վերջին վանկի վրա, և շարժական է, որովհետև բառի ածմանը զուգընթաց (թեքման կամ բառակազմության ընթացքում) տեղափոխվում է վերջին ձայնավորի վրա, օրինակ՝ *գինվո՛ր – գինվորակա՛ն – գինվորականե՛ր – գինվորականե՛րից*:

Հայերենի բոլոր ձայնավորներն էլ կարող են շեշտ ստանալ՝ բացի *ը*-ից: Սա շեշտվում է միայն այն դեպքում, երբ բառում այլ ձայնավոր չկա, օրինակ՝ *պը՛զզ, ըհը՛, ը՛սպ, Մար՛ր* և այլն:

Հայերենում կան դեպքեր, երբ շեշտվում է ոչ վերջին վանկը.

1. Բառի վերջին վանկի (բաց թե փակ՝ նշանակություն չունի) ձայնավորը *ը*-ն է, օրինակ՝ *գի՛րքը, սա՛ռը, ա՛րկ(ը)դ, ծա՛ն(ը)ր* և այլն:

2. Ավանդաբար առաջին վանկն է շեշտվում գրաբարյան ծագում ունեցող հետևյալ բառերում՝ *գո՛ւցե, մի՛գուցե, մի՞՞քե, մա՛նափանդ, նա՛մանափանդ* և այլն:

3. Հայերենում վերջին վանկի վրա շեշտ չեն ընդունում *-երորդ* ածանցով կազմված բառերը՝ *յո՛թերորդ, հիսուեթե՛րերորդ, ո՞րե-րորդ, քանի՞՞երորդ* (*-րորդ*-ովները ընդունում են՝ *երկրորդ, երրորդ, չորրորդ*):

4. Հարադրավոր բայերում շեշտվում է նախադաս հարադիրը՝ *մե՛ջ ընկնե՛լ, վրա՛ Կայ, գլո՛ւխ բերե՛լ, աչքո՛վ անե՛լ* և այլն:

5. Շեշտ չեն ստանում նաև *որ* և *թե* բաղադրիչներով կազմված հարադրավոր բարդությունների այդ բաղադրիչները՝ *կաժե՛ս թե, սասե՛ս թե, ո՞նց թե, այնպե՛ս որ, ե՛րբ որ, ո՛նց որ* և այլն:

6. Շեշտ չի ընդունում բայի բաղադրյալ ժամանակաձևերի օժանդակ բայը, ինչպես նաև բաղադրյալ ստորոգյալի հանգույցը, ինչպես՝ *մոպե՛նո՛ւմ եմ, գալո՛ւ էիր, իմացե՛լ ենք*, նաև՝ *մա՛րդ ես, կապա՛ս էր*, ու նաև՝ *մա՛րդ դարձա, կապա՛սի քվաց*: Ժխտական կազմույթումնեղում օժանդակ բայը, երբ գալիս է նախադաս դիրք, արդեն շեշտվում է: Այս դեպքում շեշտից զրկվում է դերբայը՝ *չե՛մ մոպե՛նում, չէ՛իր գալու* և այլն: Բաղադրյալ ստորոգյալների ժխտական ձևերում հանգույցը չի տեղափոխվում նախադաս դիրք և բնականաբար չի շեշտվում:

7. Ժխտական հրամայականի կազմության ժամանակ շեշտվում է *մի* արգելականը՝ **մի՛ խոսեք, մի՛ գնա:**

8. Վերջընթեր վանկն է շեշտվում նաև *-իս* ածանցով կազմված տեղանուններում՝ **Իսպանիա, Իգուալիա, Գանիա**, նաև՝ **Արմենիա, Կիլիկիա**: Նաև փոխառյալ հասարակ անուններում՝ **քիմիա, մապեֆրիա, հիսպեֆրիա** և այլն:

Հայերենի փոխառյալ բառերում նույնպես, որպես կանոն, շեշտն ընկնում է վերջին վանկի վրա, որը բխում է արտասանության (շեշտադրության) ազգային-բնախոսական առանձնահատկություններից: Այդ տեսակետից շեշտը նույնքան պահպանողական է, որքան մայրենի լեզվի հնչյունական համակարգը և քերականությունը: Որոշ թվով փոխառությունների ուղիղ ձևերում շեշտն ընկնում է փոխատու լեզվում ընդունված դիրքում, սակայն բառի թեքման կամ բառակազմության ժամանակ այն տեղափոխվում է վերջին վանկ, ինչպես՝ **Լոնդոն**, բայց՝ **Լոնդոնում, լոնդոնցի՛, Շիլլեր**, բայց՝ **Շիլլերից, Շիլլերի՛ն, Արգենտինա**, բայց՝ **Արգենտինայում, արգենտինական, Ֆիզիկա**, բայց՝ **Ֆիզիկական, Ֆիզիկոսներ՛, լի՛զս**, բայց՝ **լիզայում** և այլն:

Հայերենի որոշ բաղադրյալ բառեր կարող են ստանալ երկրորդ՝ ավելի թույլ շեշտ: Դրանք հատվածական և մասամբ այլ բարդություններ են, ինչպես նաև *ամենա-*, *համա-*, *հակա-*, *վերա-* նախածանցներով և մի քանի այլ սկզբնաբաղադրիչներով կազմություններ, ինչպես՝ **ամենաբարի՛, վերերկրյա՛, հակահատավարական, համահամալսարանական, գերհոգնածություն, մակրոնթացություն, ռումսահայրենասիրական, ռոմանո գերմանական, հյուսիսարևմտյան, ջերմաէլեկտրակենտրոն, հե՛ ծանվալվա՛զք:**

Ժխտական ձևերում վերջին վանկի վրա՝ իր հիմնական տեղում, երկրորդ թույլ շեշտ կարող են ստանալ երեք և ավելի վանկերից կազմված բայերը, ինչպես՝ **չե՛ս կարողանում, չե՛նք ուշանում, մի՛ լիպիսանա՛:** Այս դեպքում երկրորդ շեշտը իրադրային է և պարտադիր չէ:

Այդ կրկնակ շեշտերը տարբերվում են իրենց ուժգնությամբ. մեկն ավելի ուժեղ է, մյուսը՝ համեմատաբար թույլ: Ուժեղ շեշտն ընկնում է բառի վերջին վանկի վրա և կոչվում է *հիմնական* կամ

գլխավոր շեշտ, թույլն ընկնում է բառի առաջին բաղադրիչի առաջին կամ վերջին վանկի վրա և կոչվում է երկրորդական կամ կողմնակի շեշտ:

Լեզվում գոյություն ունի նաև *տրամաբանական շեշտ*: Տրամաբանական շեշտը նախադասության մեջ որևէ բառի՝ մյուսների համեմատությամբ առավել ուժգին արտասանումն է: Նպատակը այդ բառով արտահայտված հասկացության վրա խոսակցի ուշադրությունը հրավիրելն է: Տրամաբանական շեշտ կարող է ստանալ նախադասության՝ նյութական նշանակություն ունեցող ցանկացած բառ, ինչպես՝ **Վաղը քննությունն կհանձնեն:** **Վաղը քննությունն կհանձնեն:** **Վաղը քննությունն կհանձնեն:**

Հնչյուններ

Արտասանվածքի վերլուծության ընթացքում պարզվեց, որ հնչվող խոսքի նվազագույն միավորները հնչյուններն են: Դրանք՝ իբրև նյութական նվազագույն, հնչման տեսակետից այլևս անբաժանելի միավորներ, հանրորեն գիտակցվում և արժեքավորվում են:

Լեզվաբանական դիտակետով հնչյունները լեզվում որոշակի գործառույթ են կատարում: Նրանք ոչ միայն բառի նյութական պատյանն են, այլև տարբերակում են բառերն ու բառաձևերը, հետևաբար և նրանց իմաստները: Հնչյունները լեզվում ունեն բառատարբերակիչ և իմաստատարբերակիչ նշանակություն: Այսպես, օրինակ՝ **բարդ** – **բուրդ** – **բերդ**, **քար** – **քոր**, **բեր** – **բար** – **բոր** շարքերն իբրև առանձին բառեր կամ բառաձևեր տարբերվում են ձայնավորներով, **ես** և **եզ**, **պատ** և **բաղ**, **բեռ** և **բեր**, **դաս** և **տաս** գույգերը՝ բաղաձայններով:

Բնության մեջ հանդիպող բոլոր հնչյուններից լեզվաբանական դիտակետը տարբերում է միայն մարդկային խոսքի հնչյունները, ավելի ճիշտ՝ հնչույթները, որոնք ընդունակ են կատարելու սոցիալական գործառույթ՝ հաղորդակցման ընթացքում տարբերակելով լեզվի իմաստակիր միավորները: Այդ առումով էլ հնչույթը դիտվում է իբրև լեզվի հնչյունական համակարգի հիմնական միավոր:

Հնչյունների ձևավորումը, արտաբերումն ու ընկալումը ֆիզիկա-

կան-բնախոսական (ֆիզիոլոգիական) երևույթ է: Հնչյուններն ստեղծվում են օդի տատանման և խոսողական՝ հնչարտաբերական գործարանների որոշակի գործունեության շնորհիվ: Այդ առումով էլ հնչյունը կարելի է դիտել իբրև մարդու արտասանական (արտաբերական) գործունեության և ընկալման արդյունք:

Հնչյուն և հնչույթ: Այս տերմինները լեզվաբանության մեջ տարբերակվում են իբրև միևնույն երևույթի ընդհանուր և մասնավոր (կոնկրետ) հասկացություններ: Հնչյունը խոսքի արտասանական նվազագույն նյութական միավորն է: Ֆիզիկական տեսակետից այն ձայնային ալիք է, որը ընկալում են մարդու լսողական գործարանները: Այն կարող է կազմված լինել թե՛ պարբերական ալիքներից (ինչպես ձայնավորները) և թե՛ ոչ պարբերական՝ աղմկային տատանումներից (խուլ բաղաձայններ): Այս երկուսը՝ պարբերական և ոչ պարբերական ալիքային տատանումները, կարող են համատեղվել մեկ հնչյունում (ձայնորդներ և ձայնեղներ):

Բնախոսական տեսակետից յուրաքանչյուր հնչյուն արտաբերվում է երեք փուլով՝ ելք, պահ, դարձ:

1) Ելքը այն փուլն է, երբ խոսողական գործարանները պատրաստվում են տվյալ հնչյունի արտաբերման համար, ընդունում են ելման դիրք:

2) Պահը հնչյունի արտաբերման բուն փուլն է, երբ այդ հնչյունը արտասանվում, հնչվում է:

3) Դարձի ժամանակ հնչյունի արտասանությանը մասնակցած գործարանը կամ գործարանները վերադառնում են ելման դիրք կամ էլ նախապատրաստվում են հաջորդ հնչյունի արտաբերմանը:

Հնչյունները իմաստակիր միավորներ չեն, սակայն ծառայում են լեզվի իմաստակիր միավորների կերտմանը: Հայերենում ունենք մեկ հնչյունից կազմված մի քանի բառ՝ ն (շաղկապը) և է (էություն, Աստված), ը (նախադիրը), օ, է (ձայնարկությունները) և այլն: Սրանք խոսքում բառեր են և ոչ թե սոսկ հնչյուններ, քանի որ ունեն բառային իմաստ: Միայն մեկ հնչյունից կազմված լեզվական միավորները կարող են ունենալ նաև այլ՝ բառակազմական կամ քերականական իմաստներ, ինչպես՝ երկսք +ը (աժանց), հայր+ն (աժանց), կամ՝

սեղասն +*հ* (սեռական-տրական հոլով), *խաղ* +*ւ* (ըղձական III դեմք), նաև գրաբարում՝ *գործ* +*ք* (հոգնակի թվի իմաստ) և այլն: Լեզվում բառիմաստի փոփոխություն կարող է առաջացնել ոչ միայն ամբողջական հնչյունի փոփոխությունը, այլև այդ հնչյունի որևէ մեկ հատկանիշի փոփոխությունը: Օրինակ՝ *գար* (III դեմքի բայ)–*կար*–*բար*, *գուր*–*սուր* (ձայնեղություն – խլություն–առաջին դեպքում՝ նաև շնչեղություն): Նաև ձայնավորների դեպքում՝ *դար*–*դուր*–*դեր*, *գեր*–*գիր* (ըստ բարձրացման և ըստ տեղի):

Իմաստատարբերակիչ դեր ունեցող հնչյունները լեզվաբանության մեջ կոչվում են *հնչյութներ*: Ժամանակակից հայոց լեզուն ունի այդպիսի 36 հնչույթ: Սրանցից յուրաքանչյուրի համար կարելի է բերել առնվազն մեկ բառազույգ, որտեղ տվյալ հնչյունի փոփոխությունը առաջացրել է բառիմաստի փոփոխություն:

Այսպիսով, հնչույթը իմաստատարբերակիչ դեր կատարող հնչյունն է. հնչյունը հնչույթի արտասանական և դիրքային տարբերակն է, հնչույթի դրսևորումն է խոսքում: Պայմանականորեն հնչյուն և հնչույթ տերմինները հաճախ նույնացվում են:

Հնչյունի դիրքը: Հնչաշղթայում հնչյունի գրաված տեղը կոչվում է հնչյունի դիրք: Հնչաշղթայում հնչյունը կարող է ունենալ երեք դիրք:

1. *Ուժեղ դիրք*: Սա հնչաշղթայում այն տեղն է, որտեղ հնչյունը պահպանում և արտահայտում է իր բոլոր իմաստատարբերակիչ հատկանիշները: Օրինակ, ձայնավորները շեշտի տակ ուժեղ դիրքում են:
2. *Թույլ դիրք*: Սա այն դիրքն է, որում հնչյունը կարող է կորցնել իր իմաստատարբերակիչ հատկանիշներից մեկը կամ մի քանիսը և կամ էլ վերածվել մեկ այլ հնչյունի (նաև աղվել): Այսպես, թույլ դիրքում են հայերենի բառավերջի կամ ձայնորդներին ու ձայնավորներին հաջորդող ձայնեղ այն բաղաձայնները, որոնք նաև այդ պատճառով արտասանվում են իբրև շնչեղ խուլեր (*միրգ*–*միրք*, *միջև*–*միչև*, *մարդ*–*մարք*):
3. *Բացառվող դիրք*: Սա էլ այն դիրքն է, որում տվյալ հնչյունը հնչաշղթայում չի կարող լինել, ասենք՝ բառասկզբի դիրքը *ը* հնչյունի համար (հայերենում ունենք այդ հնչյունով սկսվող

միայն մեկ արմատ՝ *րոպե*), կամ գրաբարում *ւ*-ի բառասկզբի դիրքը, բառավերջի դիրքը *ս* և *ն(օ)* ձայնավորների համար (կրկին գրաբարում):

Հնչյունների դասակարգումը

Հնչյունները ընդունված է բաժանել երկու մեծ խմբի՝ ձայնավորներ և բաղաձայններ: Սրանց միջև կան մի քանի կարևոր տարբերություններ: Նշենք հիմնականները:

1) Ձայնավորները պարունակում են միայն ձայն, ֆիզիկական տեսակետից օդի պարբերական ալիքներ են: Բաղաձայնները կազմված են կա՛ն միայն աղմուկից, կա՛ն էլ աղմուկից և ձայնից, այսինքն՝ նրանցում միշտ առկա է աղմուկը:

2) Բաղաձայնների արտասանությունը տեղայնացված է. յուրաքանչյուր բաղաձայն արտասանական գործարաններում ունի իր կոնկրետ տեղը: Ձայնավորների արտաբերմանը մասնակցում է բերանի արձագանքարանը ամբողջությամբ կամ իր այս կամ այն մասով:

3) Ժամանակակից հայերենում միայն ձայնավորներն են վանկարար հնչյուններ. միայն մեկ ձայնավորով կարող է կազմվել վանկ, իսկ միայն բաղաձայնով՝ ոչ: Վանկում միշտ պետք է լինի ձայնավոր:

Ժամանակակից հայերենի ձայնավորների դասակարգումը

Ձայնավորների համար ժամանակակից հայերենում իմաստատարբերակիչ հատկանիշներ են լեզվի գրաված ուղղահայաց և հորիզոնական դիրքը բերանի արձագանքարանի նկատմամբ, շրթունքների մասնակցությունը դրանց արտասանությանը:

Ըստ *բերանում լեզվի հորիզոնական դասավորության* հայերենի ձայնավորները լինում են *հետին, միջին և առաջնային շարքի*: Հետին շարքի են *ս, օ(ն), ու* ձայնավորները: Սրանք արտասանվում են լեզվի ամենասակավ ձգվածությամբ: Բերանի միջին մասում է կազմավորվում միայն *ը* ձայնավորը: Առաջնային կազմավորման են *լ* և

հ ձայնավորները: Սրանց արտաբերմանը մասնակցում է լեզվի առաջին մասը, իսկ ամբողջ լեզուն ձգվում է դեպի առաջ:

Ըստ արտասանության ժամանակ լեզվի ուղղահայաց դասավորության՝ առանձնացնում ենք *սիրորին, միջին* և *վերին բարձրացման* ձայնավորներ: Ստորին բարձրացման է միայն **ս** ձայնավորը (լեզուն գտնվում է ամենացածր՝ չբարձրացված դիրքում): Միջին բարձրացման են **օ(ո), է, ղ** ձայնավորները: Վերին բարձրացման են **ու** և **ի** ձայնավորները (լեզուն գտնվում է քիմքին համեմատաբար մոտ դիրքում):

Հայերենի որոշ ձայնավորների արտաբերմանը մասնակցում են շրթունքները: Ըստ այդմ էլ ձայնավորները լինում են *շրթնայնացված* և *ոչ շրթնայնացված*: Շրթնայնացած են **օ(ո)** և **ու** ձայնավորները, ոչ շրթնայնացած՝ մնացած չորսը՝ **ս, ի, է, ղ**:

Հայերենի ձայնավորների համար մյուս հատկանիշները (երկայություն, քմայնացում, ոնգայնացում) ոչ իմաստատարբերակիչ են:

Այս ամենը կարելի է արտահայտել աղյուսակով.

շարքեր բարձրացում	առաջին շարք	միջին շարք	հետին շարք
վերին բարձրացում	ի	—	ու [շրթնայնացված]
միջին բարձրացում	է	ը	օ(ո) [շրթնայնացված]
ստորին բարձրացում	—	—	ս

Ժամանակակից հայերենի բաղաձայնների դասակարգումը

Բաղաձայնները հայերենի ոչ վանկարար հնչույթներն են: Սրանք բնութագրվում են ձայնաբանական և արտասանական հետևյալ հատկանիշներով. բաղաձայններին բնորոշ է աղմուկի առկայությունը (երաժշտական ձայն կարող է լինել, կարող է և ոչ), ի տարբերություն ձայնավորների՝ արտաբերվում են օդի համեմատաբար

ուժեղ հոսանքով, արտաբերական արգելքի՝ փակվածքի կամ նեղվածքի հաղթահարմամբ, տեղայնացված են:

Բաղաձայնները դասակարգվում են հետևյալ հիմնական սկզբունքներով:

1. Ըստ **ձայնային հատկանիշի** (ըստ ձայնի և աղմուկի պարունակության) բաղաձայնները լինում են ձայնորդներ, ձայնեղներ և խուլեր:

ա) **Ձայնորդների** կազմության մեջ առկա են և՛ ձայնը, և՛ աղմուկը, սակայն գերակշռում է առաջինը: Ժամանակակից հայերենի ձայնորդներն են՝ **բ, ք, ռ, յ, մ, ն**:

բ) **Ձայնեղները** նույնպես պարունակում են և՛ ձայն, և՛ աղմուկ, սակայն սրանցում արդեն գերակշռում է աղմուկը: Ժամանակակից հայերենի ձայնեղներն են՝ **բ, գ, դ, ճ, ջ, գ, ժ, դ, վ**:

գ) **Խուլ** բաղաձայնները ամբողջությամբ կազմված են աղմուկային ձայնից: Ժամանակակից գրական հայերենի խուլերն են՝ **պ, կ, գ, ծ, ճ, ս, շ, ի, խ, ֆ, հ**, նաև՝ **փ, բ, ք, ց, չ**: Վերջին հինգն արտասանվում են ուժեղ շնչով, այդ պատճառով էլ կոչվում են **շնչեղ խուլեր** (կոչվում են նաև **հազազային հնչյուններ**. **հազազ** «կոկորդ, ձայնաճեղք, նաև՝ շունչ» բառից):

2. Ըստ **արտաբերման եղանակի** բաղաձայնները բաժանվում են երեք խմբի՝ **հպական, շփական և հպաշփական**: Այս դասակարգման համար հիմք է ընդունվում այն, թե տվյալ բաղաձայնի արտաբերման ժամանակ օդի հոսքն ինչպիսի՞ արգելք է հաղթահարում (փակվա՞ծք թե՞ նեղվածք):

ա) **Հպական բաղաձայններն** արտաբերվում են՝ որպես կանոն հաղթահարելով որևէ փակվածք: Այն առաջանում է, երբ արտասանական ակտիվ գործարանը հպվում, ոչ ակտիվ գործարանին: Ընդ որում՝ այդ փակվածքի ընթացքում որևէ ձայն չի առաջանում. ձայնը գոյանում է պայթյունի (փակվածքի հաղթահարման) ժամանակ: Սրանք **վայրկենական** կամ **ակնբարբային** հնչույթներ են: Ժամանակակից հայերենի հպականներն են **բ, պ, գ, կ, դ, գ, փ, բ, ք**, նաև՝ **մ, ն** (առաջին ինը արտասանվում են պայթուով և երբեմն կոչվում են պայթական):

բ) *Շփական բաղաձայններն* արտաբերվում են առանց փակվածքի: Օղի հոսքի առջև արգելքն ստեղծվում է ոչ թե հնչարտաբերական գործարանների հպումով, այլ մոտեցմամբ: Թորքերից եկող օդը շփվում է արտաբերական գործարաններում ստեղծված նեղվածքի (ճեղքի) պատերին, և առաջանում է ձայն: Մրանք տևական հնչույթներ են: Հայերենի շփականներն են՝ **զ, ս, ժ, շ, դ, խ, վ, ֆ, հ, և, ռ, յ:**

Մրանցից **ր**-ն (միաթրթիռ է) և **ռ**-ն (բազմաթրթիռ է) առանձնանում են իբրև *թրթռացող* կամ *թրթռուն բաղաձայններ*:

Մ-ն և **գ**-ն *սուլական բաղաձայններ* են, իսկ **ժ**-ն և **շ**-ն՝ *շակակն բաղաձայններ*:

գ) *Հպաշփական (պայթաշփական) բաղաձայններն* արտաբերվում են երկու դրվածքով՝ սկզբում հպում, փակվածք, որը սակայն չի ավարտվում պայթյունով (ինչպես բուն պայթականների դեպքում է), այլ երկրորդ փուլում վերածվում է նեղվածքի (ինչպես բուն շփականների դեպքում): Սակայն սրանց փակվածքի և նեղվածքի դրվածքները չեն նույնանում համապատասխան պայթականների և շփականների հետ (ձ \neq դ+գ): Մրանք արտաբերվում են փակվածքի և նեղվածքի միաժամանակյա հաղթահարումով, արտասանությամբ և գործառության մեկ միասնություն ունեն, ուղղակիորեն տարրալուծելի չեն:

Հայերենի հպաշփականներն են՝ **ձ, ժ, ց, ճ, ճ, չ:**

3. Ըստ *արտաբերման տեղի* բաղաձայնները դասակարգելիս ելնում ենք նրանից, թե հնչարտաբերական ո՞ր գործարաններով և սրանց ո՞ր մասով է օղի հոսքի առջև ստեղծվում արգելքը: Ըստ այդմ՝ էլ հայերենի բաղաձայնները լինում են *չրթնային, առաջնալեզվային, միջնալեզվային, հետնալեզվային և հազագային*:

ա) *Շրթնային բաղաձայնները* բաժանվում են երկու ենթախմբի՝ *երկշրթնային և շրթնարանային*: Առաջիններն արտաբերվում են երկու շրթունքների հպումով: Հայերենի երկշրթնային բաղաձայններն են՝ **բ, պ, փ, մ**: Շրթնատամնայիններն արտաբերվում են ստորին շրթունքի և վերին ատամնաշարի միջոցով ստեղծված նեղվածքի հաղթահարումով: Հայերենի շրթնատամնայիններն են՝ **վ, ֆ:**

բ) *Առաջնալեզվային բաղաձայններն* արտաբերվում են մի կողմից լեզվի առջևի մասի, ծայրի և մյուս կողմից վերին ատամնաշարի, լնդերի կամ քիմքի առաջամասի միջոցով ստեղծված փակվածքի կամ նեղվածքի հաղթահարմամբ: Սրանք են՝ **դ, փ, ք, ջ, ճ, չ, ծ, ց, գ, ս, ժ, շ, Է, Ը, Ն, Ա:**

գ) *Միջնալեզվային բաղաձայն* հայերենում միայն **յ**-ն է, որը բաղաձայնի և ձայնավորի միջև հանդես է գալիս իբրև կիսաձայն (**յ**-ին մոտ հնչյուն), իսկ միջձայնավորային դիրքում՝ իբրև ձայնակապ:

դ) *Երկրորդալեզվային բաղաձայնների* արտաբերմանը մասնակցում են լեզվի հետին՝ արմատային մասը և քիմքի հետնամասը: Սրանք են՝ **գ, Կ, ք, դ, խ:**

ե) *Հազազային* է կոչվում **հ** բաղաձայն հնչյունը. այն կազմավորվում է կոկորդում և միայն շունչ է պարունակում:

Ճանոթություն: Հայ լեզվաբանության մեջ ընդունված է բաղաձայնների դասակարգման նաև չորրորդ սկզբունքը՝ ըստ **կազմության:** Այս մոտեցմամբ հայերենի բաղաձայնները լինում են *պարզ* և *բարդ*:

ա) *Պարզ* են կոչվում այն բաղաձայնները, որոնք արտաբերվում են միայն նեղվածքի կամ միայն փակվածքի հաղթահարմամբ և իրենց մեջ չեն պարունակում շունչ: Պարզ են հայերենի բոլոր պայթական և բոլոր շփական հնչյունները՝ **բ, ս, գ, Կ, դ, փ,** նաև՝ **գ, ս, ժ, շ, դ, խ, վ, ֆ, հ,** ու նաև՝ **Է, Ը, Ն, Յ, Ա, Ա:**

բ) *Բարդ* են այն բաղաձայնները, որոնք արտաբերվում են փակվածքի և նեղվածքի միաժամանակյա հաղթահարմամբ և կամ իրենց մեջ պարունակում են ուժեղ շունչ: Դրանք են՝ հպաշփականներ **ծ, ծ, ց, ջ, ճ, չ** նաև՝ **փ, ք, ք:**

Երկբարբառներ և երկհնչյուններ

Երկբարբառները կազմվում են երկու ձայնավորներով, որոնք արտասանվում են մեկ վանկում, ընդ որում՝ դրանցից մեկը կորցնում է իր վանկարար ուժը: Երկբարբառներով հարուստ էր գրաբարը, որտեղ դրանք կազմվում էին մեկ ձայնավորով և **յ** կամ **չ** կիսաձայններով (*չայն, սենեակ, արք, գեղ // գիւղ, ալիւր, լոյս, որդւոց* և այլն): Սրանք ժամանակակից հայերենի բարբառներում վերածվել են մեկ պարզ ձայնավորի (*ձէն, գէղ, ալիւր // ալուր, օր, լուս // լիս և այլն*):

Երեք ձայնավորներ ունեցող վանկը կոչվում է եռաբարբառ: Սրանք նույնպես կային գրաբարում:

Ժամանակակից գրական հայերենում բուն երկբարբառներ չկան: Արդի հայերենում գրաբարի երկբարբառները վերածվել են երկհնչյունների, այսինքն՝ մեկ ձայնավորով և յ ձայնորոգով կազմված հնչյունակապակցությունների: **Յ**-ն բոլոր ձայնավորներին կարող է միանալ թե՛ սկզբից, թե՛ վերջից: Բացառություն է միայն **ը** ձայնավորները, որին միանում է միայն սկզբից՝ *հայը, թեյը, խոյը*: Հայերեն բառերում բացառվում է *իյ* կապակցությունը, սակայն փոխառություններում հնարավոր է մաս *իյ* երկհնչյունը՝ *Վիյ* (Ն. Գոգոլի կերպարի անունը), *կիյ* (բիլիարդի խաղաձողը) և այլն:

Հայերենի բաղաձայնների լծորդական շարքերը

Լծորդակից են կոչվում իմաստատարբերակիչ միայն մեկ հատկանիշով իրարից տարբերվող բաղաձայնները: Ժամանակակից հայերենում բաղաձայնները կազմում են եռանդամ կամ երկանդամ շարքեր: Կան մաս լծորդակից չունեցող բաղաձայններ: Եռաշարք են հետևյալ բաղաձայնները.

բ	պ	փ
գ	կ	ք
դ	տ	թ
ձ	ծ	ց
ջ	ճ	չ

Երկշարք են

զ	ւ
ժ	շ
ղ	խ
վ	ֆ

բաղաձայնները: Լծորդակից չունեն **հ**-ն և բոլոր ձայնորդները՝ **լ, ռ, ռ,** **մ, ն, յ**:

Այս աղյուսակի հորիզոնական շարքերում լծորդ բաղաձայնները տարբերվում են ձայնի և աղմուկի հարաբերությամբ, իսկ նույնն են արտաբերման տեղով և եղանակով (մի քանիսը՝ մասամբ): Ուղղահայաց լծորդական շարքերը նույնն են ձայնային հատկանիշով (I շարքը ձայնեղներն են, II-ը՝ խուլերը, III-ը՝ շնչեղ խուլերը), տարբերվում են արտաբերման տեղով և եղանակով:

Բաղաձայնների իմաստապարբերակիչ և ոչ իմաստապարբերակիչ հատկանիշները: Բաղաձայնների հիմնական իմաստատարբերակիչ հատկանիշը ժամանակակից հայերենում *ձայնեղ-խուլ-շնչեղ խուլ* հակադրությունն է, ինչպես՝ *գոռ-կոռ-քոռ, դուր-պուր-թուր*, նաև՝ *կող-կոխ, կիզել-կիսել* և այլն: Բաղաձայնների մնացած հատկանիշները իմաստատարբերակիչ հատկանիշներ են ձեռք բերում ձայնային հատկանիշին զուգահեռ, դրա համադրությամբ, սակայն կարող են նաև ինքնուրույնաբար ունենալ այդպիսի հատկանիշ: Օրինակ՝ *դոռ-փոռ* (ձայնեղություն-շնչեղ խուլություն և առաջնալեզվայնություն-երկշրթնայնություն), *բանակ-բանաք* (բառասկզբի համար՝ ձայնեղություն-շնչեղ խուլություն, իսկ բառավերջի համար՝ խլություն-շնչեղ խուլություն), *գեր-դեր* (հետնալեզվայնություն-առաջնալեզվայնություն) և այլն:

Ժամանակակից հայերենում բաղաձայնների մյուս հատկանիշները իմաստատարբերակիչ դեր չունեն, ինչպես՝ ոչ քմայնացում-քմայնացում (*մայրյան-մայրժյան*), երկարություն-կարճություն (*շվացնել-շվացնել*), բառավերջի թույլ դիրքում հնչյունի թուլացում՝ ընդհուպ մինչև անկումը (*աշխարհ-աշխար*), *դ*-ից հետո ձայնեղի պահպանում կամ խլացում (*նողկալի-նոխկալի*) և այլն:

ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հնչյունափոխություն է կոչվում հնչյունների՝ բառում կատարվող այս կամ այն կարգի փոփոխությունը՝ պայմանավորված տարբեր գործոններով: Հնչյունափոխության հիմնական պատճառներն են բառաշեշտի տեղափոխությունը, հնչյունների փոխազդեցությունը, հնչյունների դիրքը բառի մեջ և այլն: Այս գործոնները ժամանակակից հայերենում տարբեր դեր են կատարում: Հնչյունափոխությունների մի մասը կրում է պատմական բնույթ, և նրա հետևանքներն այժմ գոյություն ունեն որպես ավարտված արդյունք: Այդ նույն կաղապարներով այժմ էլ համաբանությամբ հաճախ փոփոխություններ են կատարվում նաև այլ բառերում: Կան նաև կենդանի երևույթներ, որոնք գործում են գրական հայերենի արդի փուլում:

Ժամանակակից հայերենում առանձնացվում է հնչյունափոխության երեք տիպ՝ *շեշտի ազդեցությամբ կատարվող* կամ *դիրքային, փոխազդեցական* և *պարմական*:

1. Շեշտափոխական կամ դիրքային հնչյունափոխություն

Բառաշեշտի տեղափոխման հետևանքով շեշտակորույս վանկի ձայնավորը արտասանության թուլացման պատճառով շատ հաճախ փոխվում, վերածվում է այլ ձայնավորի և կամ սղվում է: Հնչյունափոխության այս տիպն ունի ավանդական բնույթ, այն ժառանգված է լեզվի զարգացման առավել հին փուլերից և իր բնույթով *ավանդական* կամ *ժառանգորդական* է: Ժամանակակից գրական հայերենում նրա ոլորտն զգալիորեն նեղացել է, և նկատելի է շեշտակորույս ձայնավորի չհնչյունափոխվելու որոշակի միտում:

Ժամանակակից հայերենում հնչյունափոխվում են **է (ե), ի, ու** ձայնավորները: **Ա**-ն և **օ (ո)**-ն հնչյունափոխվում են սակավ դեպքե-

րում, որոնք փաստորեն բոլորն էլ ժառանգված են լեզվի զարգացման հին շրջաններից: Հնչյունափոխվում են նաև *յա, ույ*, երբեմն էլ *յու* երկհնչյունները:

Է (ե) ձայնավորի հնչյունափոխությունը:

1) **Է (ե)** ձայնավորը դառնում է **ի**

ա) մի քանի բառերի սկզբում. *էջ > իջնել, էշ > իշային* (բայց *էշոթյուն, էշանայ*), *էգ > իգական*.

բ) բառամիջում՝ փակ վանկում. *սեր > սիրո, սիրային, գես > գիսակ, գիսավոր, կես > կիսել, կիսար, վեպ > վիպասան, տեր > տիրոջ, տիրակալ, հայագետ > հայագիտություն, պարտեզ > պարտիզան, Հովհաննես > Հովհաննիսյան, Ներսես > Ներսիսյան*.

2) **Է (ե)** ձայնավորը չի հնչյունափոխվում.

ա) բառավերջում. *մարգարե > մարգարեություն, բուպե > բուպեական*.

բ) թեքման ձևերում և հոգնակիի կազմության ժամանակ. *պարտեզ > պարտեզի, պարտեզներ, վեպ > վեպի, վեպեր*.

գ) մի քանի բարդություններում. *էջ¹ > Էջմիածին, էջ² > էջա-կապ, էջաշար:*

Ի ձայնավորի հնչյունափոխությունը:

1) **Ի** ձայնավորը դառնում է **ը**.

ա) բառասկզբում մի քանի արմատներում. *ինչ – ընչենավոր, ընչուդր, ինչ(ք) – ընչաքաղց*.

բ) փակ վանկում (դառնում է գաղտնավանկի ը). *գիր – գ/ր/րա-կան, ծին – ծ/ր/նել, սիրտ – ա/ր/րտակից, ազնիվ – ազն/ր/վական, քիմք – ք/ր/մային*.

գ) արմատի կրկնությամբ կցական բարդություն կազմելու դեպքում. *թ/ր/թ/ր/ռալ (թիռ), գ/ր/լգ/ր/լալ (գիլ), չ/ր/գչ/ր/գում (չիգ), կ/ր/րկիպ*.

դ) բարդ բառերի թեքման դեպքում, երբ բարդության վերջին բաղադրիչը միավանկ է. *սակագին – սակագ/ր/նի, ծրագիր – ծրագ/ր/րի*.

2) Բառաբարդման և ածանցման դեպքերում բազմավանկ բառի բաց վանկի **ի** ձայնավորը, միանալով **ա** հոդակապին, դառնում է **է**

(գրվում է **ե** տառով). *այգի-ա-գործ* > *այգեգործ*, *գարի-ա-ջուր* > *գարեջուր*, *ուղի-ա-գիր* > *ուղեգիր*, *բարի-ա-կամ* > *բարեկամ*, *պա-
պանի-(ա)կան* > *պապանեկան*, *հոգի-(ա)վոր* > *հոգևոր* (ի+ա>ե,
ե+վ>և):

3) Բառավերջի **ի** ձայնավորը դառնում է **յ** -ակ վերջածանցով կազմվող բառերում. *աղավնի-ակ* > *աղավնյակ*, *հոգի-ակ* > *հոգյակ*, *պապանի-ակ* > *պապանյակ*:

4) **Ի** ձայնավորը սղվում է.

ա) մի շարք բառերի փակ վանկում. *կապիկ* – *կապիկե*, *կապ-
կանման*, *գեղեցիկ* – *գեղեցիկանալ*, *ծաղիկ* – *ծաղիկե*, *ծաղիկ*.

բ) բառավերջում հոլովման կամ բառակազմության ժամանակ. *որդի* – *աղամորդություն*, *հոգի* – *ազնվահոգաբար*, *մորթի* – *մորթե-
ղեն*, *մորի* – *մորույր* և այլն: Այս և նման բառերի սեռական-տրական հոլովի կազմության ժամանակ առկա է ի//ու հերթագայությունը (*որդի* – *որդու*, *հոգի* – *հոգու*, *գինի* – *գինու* և այլն):

5) **Ի** ձայնավորը չի հնչյունափոխվում.

ա) միավանկ բառերի բառավերջի դիրքում. *ձի* – *ձիու*, *ձիավոր*, *թի* – *թիու*, *թիակ*, *մի* – *միավորե*.

բ) բարդ բառերի վերջին բաղադրիչ հանդիսացող միավանկ այն բառերի հոգնակիների կազմության ժամանակ, որտեղ այդ բաղա-
դրիչներն իրենց հիմնական իմաստը չեն պահպանել կամ բայական արմատներ են. *հրաշիգ* – *հրաշիգներ*, *պատմագիր* – *պատմագիր-
ներ*, *բեռնակիր* – *բեռնակիրներ*, *գնդացիր* – *գնդացիրներ*:

Ու ձայնավորի հնչյունափոխությունը:

1) **Ու** ձայնավորը բառասկզբում մի քանի միավանկ բառերում բառակազմության ժամանակ դառնում է **ը**. *ունայ* – *ընպանակ*, *ընպել* (բայց՝ *ունպի*, *ունպով*), *ունդ* – *ընդեղեն*, *ունչ* – *ընչացք*.

2) **Ու** ձայնավորը բառամիջում (փակ վանկում) դառնում է գաղտնավանկի **ը**.

ա) բաղադրման, թեքման, հոգնակիի կազմության դեպքերում. *սուր* – *ա/ր/բասպարյան*, *ա/ր/րի*, *ա/ր/րեր*, *տուն* – *պ/ր/նային*, *շուն* – *չ/ր/ներ*, *ժողովուրդ* – *ժողով/ր/րդական*, *շունջ* – *շշ/ր/նջալ*.

բ) երբ միավանկ բառը, որպես բարդ բառի վերջին բաղադրիչ, պահպանում է իր հիմնական իմաստը. **անչրեաջուր – անչրեաջ/ը/-րի, անչրեաջ/ը/րեր, հողաքումբ – հողաք/ը/մբի, հողաք/ը/մբեր, հրոսակահտումբ – հրոսակահ/ը/մբի, հրոսակահ/ը/մբեր**.

գ) արմատի կրկնությամբ կցական բարդություն կազմելու դեպքում. **մ/ը/րմնուռ, ծ/ը/փծ/ը/փախ, փ/ը/րփ/ը/րել:**

3) Բառավերջի բաց վանկի **ու**-ն բառակազմության և բառի թեքման ժամանակ ձայնավորից առաջ սովորաբար դառնում է **վ. առու – առվի, առվակ, լեզու – լեզվաբան, մեղու – մեղվապան, ուրու – ուվական:** Անձնանիշ գոյականների դեպքում այս երևույթը լեզվում այսօր չի գործում. **դասապուր – դասապուրի, դասապուրական, չեռնածու – չեռնածություն, վրիժառու – վրիժառուի:** Կան նաև ոչ անձ ցույց տվող մի քանի այսպիսի բառեր. **բու – բուի, բուեր** (նաև **բվի, բվեր**), **Պերու – պերուական, պերուացի, ժողովածու – ժողովածուի**.

4) **Ու** ձայնավորը սղվում է որոշ բառերում (**անուր – անբացույց**), ինչպես նաև **-ում** ածանցով վերջացող բայանունների՝ **ան** հոլովման դեպքում. **մարզում – մարզման** (բայց՝ **մարզումի**), **կառուցում – կառուցման, ուսուցում – ուսուցման**.

5) **Ու** ձայնավորը չի հնչյունափոխվում.

ա) հոգնակիի կազմության դեպքերում, հիմնականում բառավերջի դիրքում. **կիւ – կիւներ, մեղու – մեղուներ, ժողովուրդ – ժողովուրդներ, սերունդ – սերունդներ**.

բ) բառի թեքման և բառակազմության դեպքում, երբ իբրև բարդ բառի վերջին բաղադրիչ հանդես եկող միավանկ արմատը բայական է և կամ չի պահպանում իր հիմնական գոյականական իմաստը. **հացքուի – հացքուիսի, հացքուիություն, գազամուղ – գազամուղի, ջրմուղ – ջրմուղագործ, մեծապուն – մեծապունի, վաչկապուն – վաչկապուններ:**

Ժամանակակից հայերենում որպես գործուն օրինաչափություն հնչյունափոխման չեն ենթարկվում **ա** և **օ** (ո) ձայնավորները: Այնուամենայնիվ կարելի է նշել նաև այդ հնչյունների հնչյունափոխման մի քանի դեպքեր:

1) Մի քանի բառերում առկա են **ս, օ** (ո) ձայնավորների տրաման դեպքեր. **պակաս – պակասորդ** (նաև **պակասորդ**), **պահապան – պահպանել**, **ամառ – ամռան**, **դադար – դադրել**, **քաղաք – քաղքենի**, նաև՝ **որկոր – որկրամուկ**, **օրորել – օրրան**, **կոճակ – կոճկել**, **ուկոր – ուկրանալ**:

Երկհնչյունների հնչյունափոխությունը: Բառաբարդման կամ անհնչյուն ժամանակ շեշտակորույս լինելով՝ հնչյունափոխվում են հետևյալ երկհնչյունները:

1) **Յա** երկհնչյունը դառնում է **է (ե)**. **վայրկյան – վայրկենական**, **մարյան – մարենադարան**, **արյան – արենակալ**, **քրիստոնյա – քրիստոնեական**:

2) **Ույ** երկհնչյունը վերածվում է **ու** պարզ հնչյունի. **բույր – բուրավեր**, **լույս – լուսե**, **հույս – հուսալի**, **կապույր – կապուրաչյա**:

3) **Ույ** երկհնչյունը մի քանի բառերում տվում է կամ դառնում է գաղտնավանկի **ը**. **կապույր – կապրել**, **սառույց – սառցակռ**, **քույր – ք/ր/րոջ**, **ք/ր/րոջորդի**, **պպույր – պպ/ր/րվել**:

4) **Յու** երկհնչյունը մի քանի բառերում ` ա) դառնում է **է (ե)**. **միություն – միութենական**, **եղջյուր – եղջերափող**, **արյուն – արենակից**, բ) դառնում է գաղտնավանկի **ը**. **չյուն – չնծաղիկ**, **չնագնդի**, գ) տվում է. **ալյուր – ալրադաց**, **արյուն – արնաբիծ**:

Մնացած երկհնչյունները ընդհանրապես չեն հնչյունափոխվում:

2. Պատմական հնչյունափոխություն

Պատմական է կոչվում հնչյունափոխության այն տիպը, երբ լեզվի զարգացման ընթացքում տարբեր պատճառներով որոշ հնչյուններ կամ հնչյունակապակցություններ փոխում են իրենց որակը կամ տվում են: Թվենք հայերենի պատմական հնչյունափոխության հիմնական դեպքերը:

1) Հնչյունների փոփոխություն կարող է առաջանալ բառում հնչյունի գրաված դիրքի պատճառով: Հնչյունն այս դեպքում փոփոխության է ենթարկվում ինչպես բառասկզբում, այնպես էլ բառավեր-

ջում, որ պայմանավորված է արտասանության թուլացմամբ կամ դադարով:

ա) Սղվել է գրաբարի **ի** վերջնահնչյունը մի քանի բառերում.
հիսիսի – հյուսիս, Կեղի – Կեղ:

բ) Սղվել է գրաբարի **յ** ձայնորդը բառավերջի **ս, ո** ձայնավորներից հաջորդող դիրքում. **Կղայ – Կղա, քահանայ – քահանա, արքայ – արքա, երեկոյ – երեկո, հանածոյ – հանածո**, բառաձևերում՝ **խաղայ – խաղա, յուտոյ – հուտ:**

գ) Սղվել է **ն** ձայնորդ վերջնահնչյունը մի շարք միավանկ և բազմավանկ բառերում, այդ թվում նաև բայանուններում, բառավերջի դիրքում. **գառն – գառ, դուռն – դուռ, չուկն – չուկ, լուսանն – լուսան, գագաթն – գագաթ, ուսումն – ուսում, որոշումն – որոշում:** Այս կարգի բառերի **ն** վերջնահնչյունը բառի թեքման, հոգնակիակազմության և բաղադրման դեպքում գրեթե միշտ վերականգնվում է. **գառ – գառներ, գառնուկ, դուռ – դռան** (պատմականորեն **ս** ներքին հոլովում), **դռներ, դռնապան, ուսում – ուսումնական, ուսումնասեր**, բայց **մաս** (<մասն) – **մասեր** (թեև՝ **մասնիկ**), **չեռ** (<չեռ<չեռն) – **չեռագործ, չեռագիր** (թեև՝ **չեռնոց, չեռնափայտ** և այլն):

2) Գրաբարյան բառասկզբի **յ** հնչյունը ժամանակակից հայերենում դարձել է **հ**. **Յիսուս – Հիսուս, յիսուն – հիսուն, յիմար – հիմար, յարութիւն – հարություն**, նաև **դ**-ից և **ս**-ից առաջ հետևյալ արմատներում և դրանցից կազմված բառերում՝ **յղել – հղել, յղի – հղի, յարակ – հարակ:**

3) Գրաբարի պատճառականի **-ուցան(ել)** ածանցը ժամանակակից հայերենում դարձել է **-(ու)ց, -ցն**. **խաղաղեցուցանել – խաղաղեցնել, մարտուցանել – մարտցնել, յարուցանել – հարուցել:**

4) Կատարվել է հնչյունների միացում. ա) խուլ պայթականի միջումով հաջորդ **հ**-ին տեղի է ունեցել պայթականի շնչեղացում. **սեպուհ + սկան > սեպիական > սեփական** (**պի > փ**), բ) պարզ հնչյունի վերածում բարդի. **արքաստոք > արցունք** (**լու > քու > ց**):

5) Կատարվել է գրաբարի երկբարբառների երկհնչյունացում. **ոյ > ույ** (**լոյս > լույս**), **իւ, եւ > յու** (**արիւն > արյուն, պիւր, ալիւր > ալյուր**), **ես > յա** (**մարեան > մարյան**):

6) Մի քանի բառերում հայաշփական հնչյունները վերածվել են սովորական հայկականների կամ շփականների. **ծածանել** > **զա-
պանել** և **սասանել** ($\delta > \varphi + u$), **աղաչել** > **աղոթք**, **ճանաչել** > **ժանոթ**
($\chi > \rho + \gamma$):

3. Փոխազդեցական հնչյունափոխություն

Փոխազդեցական է կոչվում հնչյունափոխության այն տեսակը, որի դեպքում հնչյունի փոփոխությունը կատարվում է բառի մեջ հնչյունների միմյանց վրա ազդելու պատճառով: Հնչյունափոխության այս տիպին են պատկանում **առնմանումը, տարմանումը, դրափոխությունը, հնչյունի հավելումը, հնչյունի կորուստը, ամփոփումը** և **համաբանական հնչյունափոխությունը**: Մրանցից ժամանակակից հայերենում գործուն և կենսունակ են թերի առնմանումն ու թերի տարմանումը:

1) **Առնմանում**: Առնմանման ժամանակ միևնույն բառի մեջ մի հնչյունն ազդում է մյուսի վրա և նույնացնում կամ մնանեցնում է իրեն: Առնմանումը լինում է ըստ նույնականացման աստիճանի՝ **լիակատար** և **թերի**, ըստ ազդեցության ուղղության՝ **առաջընթաց** և **հետընթաց**: **Լիակատար առնմանման** ժամանակ ազդող և ազդվող հնչյունները լիովին նույնանում են: **Թերի առնմանման** դեպքում ազդվող հնչյունը մասամբ՝ իր հատկանիշներից մեկով կամ մի քանիսով է մնանվում ազդող հնչյունին: Առաջընթաց **առնմանման** ժամանակ նախորդ հնչյունն է ազդում հաջորդի վրա, իսկ **հետընթացի** ժամանակ՝ հաջորդը նախորդի:

Առաջընթաց լիակատար առնմանում է առկա **բոկիկ** գրաբարյան բառից արդի հայերենում առաջացած **բոբիկ** բառում: Բառասկզբի **բ**-ն ազդել է իրեն առավել մոտ գտնվող առաջին **կ**-ի վրա և լրիվ, ամբողջությամբ մնանեցրել է իրեն, դարձրել **բ**: **Երկրաշարժ** բառի ժողովրդական-խոսակցական **ժաժք** հոմանիշում կա լիակատար հետընթաց առնմանում՝ **շարժ** > **ժաժք** (**ռ**-ի անկումով). բառավերջի **ժ**-ն, ազդելով բառասկզբի **շ**-ի վրա, նույնացրել է իրեն:

Չքողեի՝ սքողեի բառում կատարվել է թերի հետընթաց առնմանում: Իրեն նախորդող ձայնեղ **զ**-ի վրա ազդելով՝ շնչեղ խուլ **ք**-ն նրան դարձրել է խուլ **ս**: Առնմանումը թերի է, որովհետև փոխվել է **զ**-ի միայն մեկ՝ ձայնային հատկանիշը (ձայնեղ → խուլ), իսկ մյուս հատկանիշները՝ արտաբերման տեղը (առաջնալեզվային), եղանակը (շփական), կազմությունը (պարզ) մնացել են նույնը:

Թերի հետընթաց առնմանման գործուն օրինաչափությամբ է ժամանակակից հայերենում կազմվում *ք* հոլովակազմիչով գործիական հոլովը. ուղղ. **արյուն** → սեռ.-տր. **արյան** → գործ. **Արյանն**+**ք**>**արյանք**: Երկշրթնային **ք**-ն, հետընթաց ազդելով ռեզային (նաև լեզվի առաջամասով արտասանվող) **ն**-ի վրա, արտաբերման տեղով (միայն այս մեկ հատկանիշով) նույնացրել է իրեն՝ վերջինիս դարձնելով երկշրթնային **ն**:

2) Տարնմանում: Առնմանակ հակառակ երևույթն է, երբ բառի մեջ մի հնչյուն ազդում է նույնական կամ նման մի այլ հնչյունի վրա և պատճառ է դառնում նրա փոփոխության՝ հեռացնելով իրենից, երբեմն հասցնելով անկման: Ազդում և ազդվում են սովորաբար միատիպ հնչյունները (ձայնավոր – ձայնավոր, բաղաձայն – բաղաձայն): Տարնմանումը նույնպես կարող է լինել ա) **լիակապար**, երբ տարնմանման ենթարկվող հնչյունը բացարձակապես փոխում է իր որակը, և **թերի**, երբ հնչյունը մասնակիորեն է տարբերակման ենթարկվում, բ) **առաջընթաց**, երբ տարնմանման ենթարկող հնչյունն ազդում է իրենից առաջ գտնվող հնչյունի վրա, և **հեպրենթաց**, երբ հիշյալ հնչյունն ազդում է իրենից հետ գտնվող հնչյունի վրա: Այսպես, կրկնավոր շատ բարդություններում նույնական հնչյունները փոխազդում են, և տեղի է ունենում հնչյունափոխություն: **Քող**+**քող**>**քողքոջ** կազմության մեջ առաջին արմատի **ղ**-ն ազդել է երկրորդի **ղ**-ի վրա և մասամբ հեռացրել է իրենից (ըստ արտաբերման եղանակի, տեղի և կազմություն. ձայնային հատկանիշը մնացել է նույնը). տեղի է ունեցել թերի առաջընթաց տարնմանում: **Քառ**+**քառ**>**քարքառ** բառում, ընդհակառակը, վերջին **ռ**-ն է ազդել առաջինի վրա և մեկ հատկանիշով (բազմաթրթիռություն → միաթրթիռություն) հեռացրել իրենից. թերի հետընթաց տարնմանում: Գրավոր խոսքում ձայնավոր

կամ ձայնորդ հնչյունին հաջորդող դիրքում, մանավանդ բառավերջում, **բ, գ, դ** ձայնեղները բանավոր լեզվում դրանց ազդեցությամբ ենթարկվում են քերի հետընթաց տարմանան՝ դառնալով շնչեղ խուլ (ձայնաբանական հատկանիշի փոփոխություն). **մարդ>մար[բ], դարբին>դար[փ]ին, միրգ>միր[բ]:**

Արմատի կրկնությամբ կազմված կցական և կրկնավոր մի շարք բաղադրություններում տարանման են ենթարկվում կրկնվող **ա** և **օ(ո)** հնչյունները.

ա) **ա**-ն դառնում է գաղտնավանկի **ը. վազվ/ը/զեյ, քափթ/ը/փեյ, ծամծ/ը/մեյ, մագմ/ը/զուկ.**

բ) **ա**-ն դարձել է **ու. խաժամուժ, խարխուլ, աղջամուղջ, մանրմունր, մագմուգ, ծակծուկ, աղքատուղքույր, լակույր-լուկույր.**

գ) **ա**-ն դարձել է **օ (ո). հայիոյեյ.**

դ) **ա**-ն դարձել է **է (ե). մաղցր-մեղցր.**

ե) **օ (ո)**-ն դ դարձել է **ու. լակույր-լուկույր** (առաջին **ա>ու** հնչյունափոխությունն այս դեպքում առնմանում է):

3) Գրափոխություն: Հնչյունափոխության այս տեսակի ժամանակ բառում հնչյունները, ազդելով միմյանց վրա, փոխում են իրենց տեղերը: Այս երևույթը առավելաբար տարածված է ոչ գրական՝ ժողովրդախոսակցական և բարբառային արտասանության դեպքերում: Բայց կան մաս որոշ թվով բառեր, որոնք արդի գրական լեզվին են անցել հնչյունափոխված ձևով: Այս բառերում դրափոխությունը ստացել է օրինական, նորմատիվ բնույթ. **խարոդ>սխարոդ, կապերպ>կարպեպ, կրուկն>կրունկ, արմուկն>արմունկ, չգեյ>զեյ>զցեյ:** Խոսակցականում (ոչ նորմատիվ, մերժելի են)՝ **կամուրջ>կարմունջ, համբույր>համբյուր, գոքանչ>զոնքաչ, դարարկ>դարդակ, սկանչ>անգաճ** (վերջին երկուսում մաս առնմանում ու տարմանում) և այլն:

4) Հնչյունի հավելում: Այս դեպքում, դիրքով պայմանավորված կամ փոխազդեցական պատճառներով, բառում ավելանում, ներմուծվում է նոր հնչյուն: Օրինակ՝ **արբեյ – հարբեյ, սպա – հասպա**, գրաբարյան **անդ** (անդաստան), **ագանեյ, մեք** (անձնական դերանուն) բառերը արդի հայերենում դարձել են **հանդ, հագնեյ, մենք:** Այս

երևույթը ավելի տարածված է խոսակցական լեզվում և բարբառներում. *կանաչ – կանանչ, քմրեկ – քմրրեկ, մեծ – մեկնչ, կամաց – կամանց, քոնիր – քոնդիր, մի – մին, աշուն – աշունք*:

Հնչյունի հավելում է կատարվում մի շարք կրկնավոր բարդություններում. *աման – չաման, աղքատ – մաղքատ, ամբաղ – զամբաղ, առակ – պառակ, անուն – մանուն*:

5) **Հնչյունի կորուստ**: Այսպես է կոչվում հնչյունափոխական այն երևույթը, երբ որևէ պատճառով բառից ընկնում, վերանում է մի հնչյուն: Օրինակ՝ *քարշեկ – քաշեկ, խարշեկ – խաշեկ, խորհեկ – խոհ, արժան – էժան, տեսանեկ – տեսնեկ, պասու – պաս, Հակոբ – Ակոբ*: Հնչյունի կորուստ է հնարավոր՝

ա) կրկնավոր բարդություններում. *այլուն-փայլուն* (<փայլուն-փայլուն), *առոք-փառոք, ակաս-պակաս, ավալ-թավալ*:

բ) Արմատի կրկնությամբ կազմված կցական բարդություններում. *հեղեղ* (<հեղիեղ), *հոպոպ, հայթայթեկ, հոպոպեկ, հագագ, փաթաթեկ, փոփոխեկ*:

գ) Պատմական հնչյունափոխության արդյունքում հնչյունի կորուստ է տեղի ունեցել գրաբարյան *յ*-ով վերջացող բառերում, ինչպես նաև *և*-ով վերջացող մի շարք բառերում. *ծառայ – ծառու, քահանայ – քահանա, մուկն – մուկ, որոշումն – որոշում*:

դ) Բանավոր խոսքում մի շարք բառերում (արմատներում) կատարվել է *հ* հնչյունի անկում, որը, սակայն, չի արտահայտվում գրության մեջ. *աշխարհ – աշխար[հ], ճանապարհ – ճանապար[հ], արհամարհեկ – արհամար[հ]եկ, շնորհք – շնոր[հ]ք*:

6) **Հնչյունների ամփոփում և կրճատում**: Այս դեպքում բառի կազմում եղած իրար հաջորդող միանման վանկերից կամ հնչյունախմբերից մեկը կրճատվում, համառոտվում է. *հասարակահարգ>հասարակարգ, ճարտարասան>ճարտասան, երասանակահալ>երասանակալ, աշխարհահայացք>աշխարհայացք, տավարարած>տավարած*, տեղանուններում՝ *Մարմարաշեն>Մարմաշեն, Համամաշեն>Համշեն*:

Հնարավոր է ոչ միայն վանկերի, այլև բառի առանձին ամբողջական մասերի կրճատում (հատկապես անձնանուններում): Սա

կոչվում է արտակարգ (կարգից՝ օրենքից դուրս) հնչյունափոխություն. **Կարապետ – Կարո, Խաչատուր – Խաչո, Խեչո, Աստվածաբուր – Ծաբուր, Տաբուր, Հովհաննես – Ավանես, Հանես, Օհան, Օնիկ** և այլն:

7) **Համաբանական հնչյունափոխություն:** Համաբանական կամ նմանակալին է կոչվում հնչյունափոխական այն երևույթը, երբ իմաստաբանորեն կամ ձևաբանորեն նման կամ նույն իրողությունները արտահայտող բառի (բառաձևի) ազդեցությամբ տվյալ բառը (բառաձևը) ձեռք է բերում նոր հնչյուն: Այսպես՝ **հոկտեմբեր** բառի **մ**-ն ներմուծված է **սեպտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր** ամսանունների նմանողությամբ: Նմանապես նաև **սեպտեմբերի** բարբառային **սեկտեմբեր** արտասանությունը **հոկտեմբեր, դեկտեմբեր** բառերի համաբանությամբ է: **Յած>ցածր** (բարձր-ի նմանողությամբ), **կանաց>կանանց** (արանց բառաձևի ազդեցությամբ), **քնքուշ** բառի խոսակցական **քնքույշ** արտասանությունը (**զգույշ**-ի համաբանությամբ) և այլն:

ՈՒՂՂԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ

Ուղղախոսությունը լեզվաբանության մի բաժինն է, որն ուսումնասիրում է նորմավորված գրական արտասանության կանոնների ամբողջությունը¹⁸:

Ուղղախոսություն տերմինը հայերենում կերտված է օտար *orthoepia* (հուն. **ὀρθός**, *orthos* «ուղիղ» և **ἔπος**, *epos* «խոսք») բառի պատճենմամբ: Ուղղախոսությունը՝ իբրև ուղիղ, ճիշտ խոսելու կանոնների ամբողջություն, առաջին հերթին վերաբերում է բառերի ճիշտ արտասանությանը, բանավոր լեզվին: Այն սերտորեն առնչվում է հատկապես հնչյունաբանության և ուղղագրության հետ:

Ուղղախոսությունն ուսումնասիրում է գրական լեզվի արտասանական նորմերի տարբերակները և մշակում է ուղղախոսական մոտեցումներն ու նախապատվությունները, այդ տարբերակների օգտագործման կանոնները:

Ուղղախոսությունը տվյալ ժողովրդի կողմից պատմականորեն մշակված, ընդհանուր կիրառություն ստացած ճիշտ խոսելու կանոնների ամբողջությունն է: Այն բարդ համակարգ է և իր մեջ ներառում է՝ 1) բառերի, իսկ ավելի ճիշտ, նրանց կազմի մեջ մտնող հնչյունների և հնչյունակապակցությունների՝ տարբեր դիրքերում գրական արտասանությունը, 2) բառերի և բառակապակցությունների՝ գրական լեզվին հատուկ շեշտադրությունը, 3) բառերի և բառաձևերի կազմության ձևաբանական կանոնների կիրառումը (ասենք՝ շեշտի տեղափոխությունը), 4) բառերի կապակցության և ավելի լայն՝ նախադասությունների կառուցման սկզբունքների կիրառումը:

¹⁸ Լեզվաբանության մեջ *նորմ(ա)* է կոչվում լեզվի զարգացման տվյալ փուլի համար հանրայնորեն ընդունված միակ հնարավոր կամ նախապատվելի ձևը, տվյալ դեպքում՝ արտասանությունը:

Ուղղախոսությունը պատմական գիտակարգ է և անխզելիորեն կապված է գրական լեզվի պատմությանը: Լեզվի պատմական զարգացման, կրած փոփոխությունների հետ փոխվում են նաև ուղղախոսության կանոնները:

Ուղղախոսության նորմերը ձևավորվում են ժողովրդի բանավոր խոսքի մշակույթի պատմական զարգացման և կատարելագործման ընթացքում: Աստիճանաբար ընտրվում և տիրապետող են դառնում արտասանական ինչ-ինչ երևույթներ, որոնք վերաբերում են թե՛ ձայնավորների արտաբերմանը (փոկալիզմ), թե՛ բաղաձայնների արտաբերմանը (կոնսոնանտիզմ), թե՛ տվյալ հնչյունակապակցությունների դիրքային արտաբերմանը, ինչպես նաև բառային շեշտին և խոսքի ինտոնացիային:

Գրական արտասանության նորմերը կարող են ենթարկվել փոփոխությունների: Նոր, սկզբնավորման շրջանում ոչ կանոնիկ արտասանությունը ժամանակի ընթացքում կարող է տարածվել, ավելի մեծ ճանաչում ստանալ և ի վերջո դառնալ միակ տիրապետողը և կանոնականը: Նույն ընթացքում հին ձևը զիջում է իր տեղը և մոռացվում: Բայց լեզվի զարգացման մի որոշ փուլում այդ երկու նորմերը գոյատևում են միաժամանակ:

Արդի արևելահայերենի գրական արտասանության կանոնավորումը սկսվել է աշխարհաբարի ստեղծմանը զուգընթաց, և նրա կանոնավորմանն ու կատարելագործմանը զուգահեռ ինքն էլ կրել է փոփոխություններ, կանոնակարգվել է: Արդի գրական արևելահայերենի ուղղախոսության մշակումը ընթացել է գրաբարի և արարատյան բարբառի հիմքի վրա: Ենթադրվում է, որ գրաբարյան ուղղախոսությունն էլ հիմնված է եղել երկրի կենտրոնական՝ Արարատյան գավառների արտասանության վրա: Այսպես, բառավերջում ձայնորդներից (հատկապես *թ*-ից) և ձայնավորներից հետո ձայնեղների շնչեղ խլացումը Արարատյան բարբառի ժառանգությունն է, իսկ բառասկզբի ձայնեղ *թ*, *գ*, *դ*, *ձ*, *ջ* բաղաձայնների առանց շնչի արտաբերումը ավանդությամբ է: [Նախագրաբարյան շրջանում հայերենում եղել են շնչեղ ձայնեղներ (*թհ*, *գհ* և այլն), որոնք հինգերորդ դարի սկզբում արդեն վաղուց վերացած էին]: Բառամիջի *ն*, *հ* ձայնա-

վորների [o] և [t] արտասանությունը գրաբարյան է, իսկ բառասկզբում սրանց [i/o] և [j/t] արտաբերումը գալիս է Արարատյան բարբառից:

Հայերենի զարգացման արդի փուլում մենք առաջնորդվում ենք բառերի մեզ ավանդված արտասանական կանոններով և ավանդույթով [ղ-երի, գ-երի թ, ք արտասանությունը ավանդույթով է, այսօր այդ կանոնը չի գործում]: Արդի արևելահայերենի գրական արտասանությունը հիմնված է երկու աղբյուրների վրա՝ Արարատյան բարբառի և գրաբարի (արևմտահայերենինը՝ Պոլսի բարբառի և միջին հայերենի):

Ուղղախոսության նորմերը թեև ենթակա են փոփոխությունների, սակայն բավականաչափ կայուն են և պահպանում են իրենց գործունությունը համեմատաբար երկար ժամանակահատվածների ընթացքում: Իսկ ուղղախոսական համակարգի հիմնական, կարևորագույն նորմերը կարող են գոյատևել շատ երկար, դարերով, իսկ մի մասն էլ լեզվի զարգացման ողջ ընթացքում (ասենք, հայերենի *ս, ի* ձայնավորների կամ ձայնորդների, շնչեղ խուլերի արտասանությունը):

Ժամանակակից հայերենի ուղղախոսության հիմքում ընկած են հայոց լեզվի հնչյունների կազմավորման և փոխազդեցության օրինաչափությունները:

Բառերը, նախադասությունները պետք է արտաբերել հասարակության կողմից ընդունված և օրինականացված պահանջներին համապատասխան: Պատմականորեն ընդունված և կանոնականացված արտասանությունից շեղումները խանգարում են լեզվի հաղորդակցական դերի ճիշտ իրականացմանը:

Մենք այս բաժնում առավելապես կանդրադառնանք վերջին 25-30 տարում մեր լեզվում նկատվող զարգացումներին¹⁹:

¹⁹ Ուղղախոսության հիմնական սկզբունքների մասին տե՛ս սույն դասագրքի նախորդ հրատարակություններում (օրինակ, հինգերորդ հրատարակություն, Երևան, 2008, էջ 49-66): Նաև՝ Հայոց լեզու I մաս, Ա պրակ, Երևան, 1980, էջ 175-186: *Մարգարյան Ա.*, Հայոց լեզու, Երևան, 1997, էջ 220-246:

Չայնավորների գրական արտասանությունը

Արդի արևելահայերենի *ս*, *ու*, *ը* ձայնավորները բոլոր դիրքերում միշտ արտաբերվում են [ս], [ու], [ը]՝ առանց քմայնացման կամ ռնգայնացման. *աղաղակ*, *արեղա*, *կարու*, *ուրույն*, *ընկրանիք*, *պարանը*, *դասընթաց* և այլն:

1. Ե տառով գրվող բառերում այն բառասկզբում որպես օրենք արտաբերվում է [յէ]. [յէ]րգ, [յէ]ղանակ, [յէ]լակ: Բացառություն են *հմ* բայի ներկայի ձևերը, որոնք բաղաձայնով վերջացող բառերից և բառաձևերից հետո արտասանվում են [էմ]. գրում [էմ], գրել [էս], նստած [էնք], մարդ [էք]: Չայնավորավերջ ձևերից հետո այս բայը արտասանվում է [յէ]-ով. երեխա [յէս], գրելու [յէս], կինո [յէնք] գնալու և այլն:

Բառամիջում *ե*-ն [յէ] հնչվում է միայն այն բաղադրյալ բառերում, որոնց հաջորդ բաղադրիչը սկսվում է *ե*-ով, իսկ նախորդ բաղադրիչը վերջանում է ձայնավորով. *ամենա[յէ]րկար*, *համա[յէվ]րոպական*, *կիսա[յէվ]* և այլն: Բաղաձայնից հետո *ե*-ի [յէ] արտասանությունը գրական նորմից շեղում է և մերժելի է (չի կարելի ասել *ամ[յէ]րկբա*, *ամ[յէ]լանելի* և այլն):

Նշվում է, որ *Անդրեաս*, *ամեորս*, *Ֆեոդալական*, *հրեա* բառերում *ե*-ով գրվող հնչյունը արտասանվում է [յ] [*Անդրյաս*], [*ամյորս*], [*ֆյոդալական*], [*հրյա*]: Սակայն սրանցից առաջին երկուսը այսօր ունեն առավելապես գրային արտասանություն (*Ֆեոդալական*-ը ավելի սակավ), որը նույնպես պետք է համարվի նորմատիվ:

Կատարված դիտարկումները²⁰ ցույց են տալիս, որ որոշակի կազմություն ունեցող բառերում դասագրքերի հանձնարարելի ձևերից նկատելի շեղումներ կան, որոնք տիրապետող դառնալու միտում ունեն:

Թվարկենք այդ դեպքերը:

ա) **Աճ**- ժխտական նախածանց ունեցող բառերի մի զգալի մասում բառամիջի *է*-ի փոխարեն արտասանվում է [յէ], ինչպես՝

²⁰ Տե՛ս *Ավերիսյան Յ.*, Տեղաշարժեր արդի գրական հայերենում, Երևան, 2011, էջ 7-28:

ան[յէ]րկյուդ, ան[յէ]կամրաբեր, ան[յէ]նթակա, ան[յէ]ռանդ: Սրանց կողքին իհարկե կան նաև [է]-ով արտասանվող բառեր՝ *ան[է]րես, ան[է]զական* (սրանցից առաջինի վրա շատ ուժեղ է *երես* բառի խոսակցական [էրէս] արտասանությունը, իսկ երկրորդը նեղ մասնագիտական տերմին է և այդ պատճառով էլ պահպանում է դասական գրային արտասանությունը):

բ) Այն բարդություններում, որոնց բաղադրիչները իմաստային և կիրառական անկախություն ունեն, երկրորդ բաղադրիչը արտասանվում [յէ]-ով. *հոր[յէ]ղբայր, հյուսիս[յէ]վրոպական* և այլն:

գ) Այն թվականները, որոնց երկրորդ բաղադրիչը *երկու* կամ *երեք* է՝ *տասներեք, քսաներեք, քառասուներկու, ութսուներեք* և այլն: Ըստ կանոնի՝ *ե*-ն այս թվականներում պետք է արտասանվեր [է], բայց այսօր ավելի տարածված է [յէ] հնչյունը՝ *քսան[յէ]րեք, քառասուն[յէ]րկու, ութսուն[յէ]րեք*: Այս դեպքում ամենայն հավանականությամբ գործում է այն թվականների համաբանությունը, որոնցում, բաղաձայնների գուգորությամբ պայմանավորված, հնչվում է *ը* որպես առոգանական հենարան՝ *տասներհինգ, տասներվեց* և այլն: Սրանց ազդեցությամբ խոսակցականում հնչվում է *տասներ[յէ]րեք, տասներ[յէ]րկու*: Այստեղ առկա է նաև բաղադրիչների անկախ գիտակցման վերոհիշյալ հանգամանքը: Այսպիսի արտասանությունը այսօր այնքան տարածված է, որ չի կարող շեղում համարվել: Թերևս արդեն ժամանակն է, որ դրանք ընդունվեն որպես հայերենի ուղղախոսության մեջ ձևավորված արտասանական տարբերակներ:

2. Ո-ն բառակզբում միշտ արտասանվում է [վօ]՝ բացառությամբ *ով* բառի (արևմտահայերենի ուղղագրությամբ՝ նաև *Ովասսևնա, ովկիանոս, ովասիս* բառերի), ինչպես՝ *որդի* > [վօ]րդի, *ողկույզ* > [վօ]ղկույզ, *ոսկի* > [վօ]սկի և այլն: Բառամիջում այն արտասանվում է [օ] բոլորովին > բ[օ]լ[օ]ր[օ]վին, ան[օ]ր[օ]շ և այլն: Բացառություն են այն դեպքերը, երբ բաղադրյալ բառի վերջին բաղադրիչին նախորդում է ձայնավոր՝ *ամենավօրակյալ, արջավօրս*: Մակայն այսօր կա բառերի մի մեծ խումբ, որը ամբողջությամբ չի ենթարկվում այս կանոնին: Անցյալ դարի 80-ական թվականներին և ավելի վաղուց հրատարակված դասագրքերում մի շարք բառերի [վօ]-ով ար-

տասանությունը համարվում է ուղղախոսական շեղում և նույնիսկ անգրագիտություն, ինչպես՝ *անոխակալ, անողնաշարավորներ, անոզի, անուրնասան*: Այժմ կենդանի արտասանությամբ այդ և նման բառերը հնչվում են [վօ]-ով՝ *ան[վօ]խակալ, ան[վօ]ղջամիտ, ան[վօ]ր-դի, ան[վօ]րնահարեկ*²¹ և այլն: Այս արտասանությունը շարունակվում է տարածվել և այսօր պետք է համարվի առնվազն գուգաձև: Սրա պատճառներից մեկն էլ այն է, որ այս բառերը առանց ժխտական ածանցի արտասանվում են [վօ]-ով, որի վրա էլ ավելանում է ածանցը (այլ բառերի համաբանությամբ նախաածանցի հավելումը չի փոխում հիմքի և մանավանդ նրա սկզբնահնչյունի արտասանությունը):

3. Ակնհայտ հակասություն կա *կ-* եղանակիչին և *չ-* ժխտականին հաջորդող *ե-*ի և *ո-*ի արտասանության գործող կանոնի և կենդանի խոսքի միջև: Ըստ օրենքի՝ այդ տառերը պետք է կարդացվեն [է] և [օ]՝ *կ[է]նթադրենք, չ[է]րզի, կ[օ]րոշեմ, կ[օ]զևորվենք, չ[է]րկարացնենք* և այլն: Այժմ այս և նման բառերը այսպես գրեթե չեն արտասանվում. սրանց տարածված արտասանությունն է՝ *կ[յէ]նթադրենք, չ[յէ]րզի, կ[վօ]րոշեմ, կ[վօ]րակազրկվի* և այլն: Այսպիսի արտասանությունը իրականում չի հակասում լեզվի արտասանական օրինաչափություններին: Ըստ էության՝ գործում է այն օրենքը, որի համաձայն՝ ձայնավորին հաջորդող դիրքում *ո-*ն և *ե-*ն արտասանվում են [վօ] և [յէ]: Հիշենք, որ այդ մասնիկները արտասանվում են գաղտնավանկի *ր-*ով՝ *չը[վօ]րոշեցին, կը[յէ]րագեք* և այլն: Այսօր փաստորեն միակ ճիշտ արտասանությունը սա է, իսկ [օ]-ով և [է]-ով արտասանությունը արդեն հնացած է:

Չայնավորական գուգորդումներ

Սրանք գրավոր խոսքում երկու կից ձայնավորանիշ տառերով նշվող հնչյունների գուգորդումներն են (*աս, առ, ոս, առ, ուս, իս, իե, եի/էի* և այլն): Հայերենում *բառասկզբի դիրքում* երկու ձայնավոր

²¹ Տե՛ս նույն տեղում, էջ 11:

իրար սովորաբար չեն հաջորդում: Գրավոր տարբերակում երկու ձայնավորանիշ տառեր կարող են հաջորդել միմյանց, սակայն արտասանության ժամանակ նրանց միջև հնչվում է *յ* ձայնակապը (ուժեղ կամ համեմատաբար թույլ): Այդպես է, օրինակ, օժանդակ բայի անցյալի ձևերի արտասանությունը՝ *է[յ]ի, է[յ]իր, է[յ]ինք, է[յ]իք, է[յ]ին*, այդ *յ*-ն ավելի թույլ է հնչում *է[յ]ուրյուն, է[յ]ական* և այլ բառերում: Օտար բառերում (ոչ միայն բառասկզբում) հնարավոր է երկու ձայնավորի հաջորդում առանց ձայնակապի՝ *կակառ, Բուալո, Լաուրա, Ռուանդա* և այլն: Բուն հայկական բառերում երկու ձայնավոր իրար հաջորդում են թույլ երկրորդական շեշտ կրող բառերում, մեծ մասամբ *ամենա-, հակա-* և *ա-*ով վերջացող մի քանի այլ նախածանցներից և արմատներից հետո՝ *ամենաարագ, ամենարնրիր, հակամերիկյան, արեելասահական, գիտաարդարողական* և այլն:

Չայնավորական գուգորդումները, ինչպես նշվում է դասագրքերում և մենագրություններում, գրական հայերենում արտասանվում են երեք եղանակով՝

1. առանց ձայնակապի. այսպես է բաղադրյալ բառերում, որոնց առաջին բաղադրիչը որոշ չափով պահում է ինքնուրույն շեշտը (արտասանվում է թույլ երկրորդական շեշտով), ինչպես՝ *միանգամից, միաժամանակ, լիինասյր, լիիրավ, ափեափ, աշխարհեաշխարհ, այնուամենայնիվ, ռադիոալիք, հեռուստաաշտարակ, միկրոաշխարհ, հակահրավական* և այլն: Այնպես է նաև մի շարք փոխառյալ հասարակ և հատուկ անուններում՝ *կոալիցիա, կոոպրացիա, Լաուրա, Նիկարագուա, Լուանդա* և այլն:

2. Հստակ *յ* ձայնակապով, ինչպես՝ *Արիի[յ]ար, բազե[յ]ակիր, բոպե[յ]ում, հղի[յ]անալ, մի[յ]ավորել, Վի[յ]եննա, է[յ]ինք, է[յ]իք* և այլն:

3. Մի շարք բառերում ձայնավորական գուգորդումների մեջ *ի* և *ե* տառերով գրվող հնչյունները ձայնավորանախորդ դիրքում փոխում են իրենց արտասանությունը և արտասանվում են որպես *յ* կամ դրան շատ մոտ հնչյուն, ինչպես՝ *օվկ[յ]անոս, օր[յ]որդ, փաս[յ]ան, հեք[յ]ար, սկադեմ[յ]ա* և այլն:

Առաջին խմբի բառերում վերջին տասնամյակներում ոչ մի փոփոխություն չի կատարվել, և դրանք այսօր էլ ունեն գրային արտասանություն: Երկրորդ և երրորդ խմբերում նկատելի են էական տեղաշարժեր: Երկրորդ խմբի բառերը այսօր արտասանվում են ոչ հստակ, լիահունչ ձայնակապով: Այդ *յ*-ն այժմ թույլ է արտասանվում, և այդ բառերը կամաց-կամաց մոտենում են գրային արտասանությանը: Երրորդ խմբի բառերում այսօր թուլացել է *ի > յ* կամ *ե > յ* անցումը: Այդ բառերում այժմ *ի* և *ե(ե)* հնչյունները որոշ չափով վերականգնել են հնչումը, ընդ որում նրանց և հաջորդող ձայնավորի միջև հնչվում է թույլ *յ* ձայնակապ՝ *Մարի[յ]ամ, միլի[յ]ոն, բրիտանի[յ]ական* և այլն: Այս արտասանությունները այժմ նույնպես պետք է համարվեն գրական գուգաձևեր:

Քաղաձայնների գրական արտասանությունը

1) ***Կրկնակ քաղաչայնների արտասանությունը:*** Բառի կամ բառաձևի մեջ նույն քաղաձայնի կրկնության դեպքում ժամանակակից հայերենում դրսևորվում են արտասանական հետևյալ օրինակաչափությունները²²:

ա) Բառամիջում կրկնակ քաղաձայնները որոշակի տևականորեն հնչվում են մի շարք արմատական բառերում (այդ թվում նաև բնաձայնական բառերում), նրանցով կազմված քաղադրություններում, բառամիջում բառի մեջ կատարված հնչյունափոխությամբ առաջացած ձևերում, բառաձևերում, ինչպես նաև օտարագրի, փոխառյալ բառերում՝ **բբ - աբբա, աբբահայր, դդ - ընդդեմ, ընդդիմախոս, Բաղդա, թթ – փթթել, լլ - բալլադ, Տալլին, ծծ- կծծի, կկ - երկկողմ(անի), երկկայմանի, դդ - ուղղահայաց, ուղղագրություն, քաղղեկ, մմ - սեղմման, քամման, գամմա, Էմմա, յյ - նոյյան, նն – քննել, զննել, գերաններ, աննչմար, տոննա, Աննա, ջջ - բջջի, բջջակորիզ, սս – երեսսորիչ, մասսա, վվ – ապահովվել, գրավվել, հոլովվել, նգովվել, որ – անդորրագիր, բերրի, օրրան, մրրիկ, տարրական, երրորդ, ցց - կեցցե,**

²² Թ. Ղարազյույան, նշվ. աշխատ., էջ 105-120:

մեցցոստարանո, գ, ժ, շ, ո - կրկնակ բաղաձայններով կազմված բնաձայնական բառերում՝ **բզզալ, դզզալ, վզզալ, խզզալ, բծծալ, դծծել, վծծալ, թշշալ, խշշալ, վշշալ, բռռալ, գռռալ, մռռալ** և հազվագյուտ դեպքերում բառավերջում՝ **անդորր, տարր:**

բ) Բառասկզբի և որոշ դեպքերում նաև բառամիջի և բառավերջի դիրքերում կրկնակ բաղաձայններով գրվող բառերում և բառածնե-րում դրանց միջև հնչվում է գաղտնավանկ **ը**. բառասկզբում՝ **զզվել, զզվել, կկոցել, կկորցնի, կկանգնի, կկոտրի, կկու**. բառամիջում՝ **կազմման, դրոշմման, բառավերջում՝ լույսս, հարսս, հույսս, վարսս:**

2) **Բառասկզբում և բառավերջում իրար հաջորդող երկու և ավելի բաղաձայնների արտասանությունը:** ա) Բառասկզբի իրար հաջորդող երկու և ավելի բաղաձայնների դեպքում դրանց միջև արտասանվում է **ը՝ բռռընցքամարտ, գընացք, գըրեցի, դընգըստել, թըշնամի, հըրեշ, մըկրատ, մըկըրտել, մըրցել, ճըշգըրտել, չըղջիկ** և այլն: **Սկ, սս, սդ, սի, սք, գք, զգ, զմ, շս, շդ** հնչյունակապակցու-թյուններով սկսվող բառերի սկզբում արտասանվում է **ը**, որն արևելա-հայերենում այժմ արտաբերվում է համեմատաբար թույլ (արևմտա-հայերենում դրա արտասանությունը շատ հստակ է)՝ **ըսկսել, ըսպա-սել, ըսպիտակ, ըստույգ, ըստանալ, ըսփոփել, ըսքողել, ըզբաղմունք, ըզգույշ, ըզգետնել, ըզգոն, ըզմայլվել, ըշտապել, ըշտեմարան**, փո-խամյալ՝ **ըսպիրտ, ըսպորտ, ըշտաք** և այլն: Երեք և ավելի բաղա-ձայնների դեպքում **ը**-ն արտասանվում է վանկատման սկզբունքով՝ **մըկըրտել, Մըկըրտչյան, ճըշգըրտել, մըշտընջեմական, բըժըշկել** և այլն: **Ը**-ն պահպանում է իր արտասանությունը նաև այդ կարգի բաղադրիչ բառերով կազմված բաղադրություններում՝ **անմըկրատ, ազոավակըտուց, աղաթթթու, աննըման:** բ) Բառավերջում երկու և ավելի բաղաձայնների դեպքում դրանց միջև ըստ վանկատման սկզբունքի սովորաբար արտասանվում է **ը՝ ուրեմըն, երբեմըն, հայրըդ, մայրըդ, հայրըս, մայրըս:** Մի շարք բառերում գաղտնավան-կի **ը** չի արտասանվում, ինչպես՝ **կամք, բույլք:**

3) **Բաղաձայնական կապակցությունների արտասանությունը բառամիջում:** Բառամիջում երեք և ավելի բաղաձայնների կուտակ-ման դեպքում հնչումը կատարվում է վանկատման սկզբունքով՝ **արբ-**

շիռ, հանգ-չեւ, վայր-կյան (վայրկ-յան), հաշտ-վել, գաղտ-նի: Այս-պիսի դեպքերում երկու բաղաձայնները հնչվում են միասնաբար: Կա նաև այդ կարգի բառերի գաղտնավանկ **ը**-ով արտասանությունը՝ **ընկըղմեւ, ընկղմըվել, ընկըրկել, ակընկալել, պատըրվակ, շատըր-վան, մագըլցել, բոցկըլտալ, կըրկնել, ընկըճվել, տեսնըվել, օգտըվել, հայտնըվել. ը** գաղտնավանկ է առաջանում նաև **պս, փս, փս, փշ, քշ, քս** հնչյունակապակցություններում. **պատըսպարել, պատըշգամբ, հափըշտակել, թաքըստոց:** Բառամիջում **սի, սպ, սփ, սի, գթ, գգ, շպ, շփ** հնչյունակապակցություններից առաջ **ը** գաղտնավանկը պահպանվում և արտասանվում է, եթե դրանցով սկսվող հիմնական ձևույթին նախորդում է բաղաձայն (արդի փուլում այդ արտասանությունը համեմատաբար թույլ է)՝ **անըսպասելի, անըգգույշ, վերըստուգիչ, անըսփոփ, անըգբաղ, թաքըստոց, փախըստական** և այլն: Գաղտնավանկ չի արտասանվում, երբ այդ հնչյունակապակցություններին նախորդում է ձայնավոր՝ **հիսաքանչ, բանաստեղծ:**

4) **Չայնեղ պայթականների և հպաշփականների արտասանությունը:** Չայնավորներից և **թ, մ, ն, դ** հնչյուններից հետո ձայնեղ **թ, գ, դ** հպականները և **ճ, ջ** հպաշփականները որոշ դեպքերում խլանում և արտասանվում են իբրև **փ, ք, ք** շնչեղ խուլ և հպաշփական խուլ՝ **ց, ճ:**

ա) **թ - փ.** Չայնեղ հպական **թ**-ն շնչեղ **փ** է հնչվում հետևյալ բառերում և դրանցով կազմված բաղադրություններում.

1. ձայնավորից հետո՝ **խաբել - խափել (խաբեբա, խաբուսիկ), շաբաթ - շափաթ (երկուշաբթի, չորեքշաբթի և այլն), իբրև - իփրև, աբխազ - ափխազ.**

2. **թ - մ** ձայնորդներից հետո՝ **ուրբաթ - ուրփաթ, նուրբ - նուրփ, հարբել - հարփել, համբերել - համփերել, համբույր - համփույր,** նաև հետևյալ անձնանուններում՝ **Գաբրիել, Հակոբ, Սերոբ, Քերոբ: Գրաքարքար** բառն ունի երկակի արտասանություն (**փ**-ով և **թ**-ով):

բ) **թ - սփ.** Չայնեղ պայթական **թ**-ն խլանում է և դառնում խուլ պայթական **սփ:**

1. **Ղթ** հնչյունակապակցությունը **խսպ** է հնչվում հետևյալ բառերում՝ **աղթ - ախպ (աղբակույտ), աղթյուր - ախպյուր, եղբայր - էխ-**

պայր, ողբ - ռխս (ողբանվագ, ողբասաց, ողբերգություն): Մնացած բառերում **ղբ**-ն ունի գրային արտասանություն՝ **աղբյուս, բողբոջ(ել), շեղբ, Կողբացի:**

2. Մնացած բառերում, հատկապես միջին և նոր շրջանի փոխառություններում **բ**-ն ձայնավորից հետո պահպանում է գրային արտասանությունը՝ **աբա, աբբա, աբեթ, աշխարհաբար, պատահաբար, գուբ, դաբաղ, գոբ, կաբարե, հոբելյան, հոբոյ, յակոբին, նաբաթ, չոբան, պոբլեն,** ինչպես նաև մի շարք անձնանուններում՝ **Աբգար, Աբել, Չաբել, Չենոբ, Հաբեթ, Հոբ, Ռուբեն** և այլն:

գ) **գ - ք.** Չայնել պայթական **գ**-ն հնչվում է շնչել խուլ **ք** հետևյալ բառերում և դրանցով կազմված բաղադրություններում.

1. ձայնավորից հետո՝ **հոգի-հոքի, ավագ-ավաք, մարագ-մարաք, կարագ-կարաք, շոգ, արագ, ճրագ, ճրագու, թագավոր, սուգ (սգալ, սգավոր), մուգ (մգանալ), տեգր, օգուտ, օգնել (օգնական, օգտակար), գուգել, էգ, էգուց, ծեգ, ծագել (արևածագ, ծագում), հագնել (հագուստ), հոգալ (հոգատար), հոգնել, հոգի (հոգեառ, հոգեբանություն), հոգնակի, ձագ (ձագուկ), ձիգ (ձգձգել, հրաձիգ), ճիգ, ճգնել, ճգնաժամ, նորոգել, Գրիգոր, Օգսեն** և այլն:

2. **Բ** ձայնորդից հետո՝ **երգ - երք, կարգ - կարք, թարգմանել - թարքմանել, միրգ - միրք, մարգարիտ - մարքարիտ,** ինչպես նաև՝ **Գևորգ - Գևորք, Մարգար - Մարքար, Մարգիս - Մարքիս** և այլն: Բաղադրություններում սրանցից շատերը վերականգնում են իրենց ձայնել հնչումը, ինչպես՝ **երգիժանք, համերգ, ողբերգության, ժամերգություն:**

3. **Ն** ձայնորդից հետո՝ **անգամ - անքամ.** մյուս բառերում իշխում է գրային արտասանությունը՝ **սրինգ, հինգ, հանգչել, մանգան:**

4. Մնացած բառերում և հատկապես գրաբարից ժառանգած ու միջին և նոր փոխառություններում ձայնավորից հետո **գ**-ն պահպանում է գրային արտասանությունը՝ **ագահ, ագարակ, ագի, ագռավ, ահագին, արագ, արեգ(ակ), բագին, գագաթ, դագաղ, դեգերել, եղեգ(ն), թագ (թագադրել, թագաժառանգ), հագնալ, անհագուրդ, հեգ (հեգել), հեգնանք, ճագար, ճառագայթ, մեգ (միգամած), գուգաբանություն, գուգահեռ, մոգ, մոգական, նվագ (անգամ), դագանակ,**

ոգել (առոգանություն), ոգորել, ոռոգել, որոգայթ, սագ, սեգ (սիգանեն), վագր, տեգ, փափագ, դոգմա, զիզգագ, լիգա, մագնիս, վագոն, օգոստոս, ինչպես նաև մի շարք անձնանուններում՝ **Գագիկ, Գարեգին, Գրիգորիս, Տիգրան** և այլն:

5. Մի շարք բառերում **գ**-ն թեև ունի երկակի արտասանություն, բայց տերմինաբանական կոմիտեի որոշման համաձայն նախապատվությունը տրվում է գրային արտասանությանը՝ **գոգ (գոգավոր, գոգնոց), երկրպագել, երկրպագություն, գուգադիպել, գուգահեռ, գուգակցել, գուգընթաց, թագուհի, հեգ (խեղճ), նվագ (նվագել, նվագարան), վարագույր (վարագուրել)** և այլն:

դ) **Գ - թ**. Չայնեղ պայթական **դ**-ն հնչվում է իբրև շնչեղ խուլ **թ**.

1) ձայնավորից հետո՝ **օդ - օթ, դադար - դաթար (դադարել), դդում - դթում, գդալ - գթալ, Թադևոս - Թաթևոս**: Պահպանում է գրային արտասանությունը հետևյալ բառերում՝ **եդեն, բող, հող, հողված, Սեդրակ(յան), սադայել**:

2) **Բ** ձայնորդից հետո՝ **գարդ - գարթ, բուրդ - բուրթ, մարդ - մարթ, վարդ - վարթ, երդում - երթում (երդվել), կարդալ - կարթալ, ջարդել - ջարթել, բարդ - բարթ, լյարդ - լյարթ, լողորդ - լողորթ, արդար - արթար, հաջորդ - հաջորթ, արդյունք - արթյունք, ժողովուրդ - ժողովուրթ, ինչպես նաև այն բոլոր բաղադրյալ բառերում, որոնք կազմված են **-որդ, -ուրդ, -արդ** վերջածանցներով:**

Երկակի արտասանություն ունի բառավերջի **-րդ** կապակցությունը **թակարդ, կախարդ, երիտասարդ, խորանարդ, խորհուրդ, մնացորդ** բառերում: Մնացած բառերում և հատկապես միջին ու նոր փոխառություններում պահպանում է գրային արտասանությունը՝ **ադամանդ, ադամորդի (ադամամութ), բող, դողոշ, գողել, ծղրիդ, հող (հողորոշ), ադաթ, անող (էլեկտրական), կատող, իդեալիստ, լեդի, մեթող, յող, շոկոլադ, ռադիո, սադափ, սողա, դարդ, կոկորդիլոս, հորդա, նարդի, նամարդ, բուրդ, նաև՝ Ադամ, Ադամյան, Թողիկ, Թեողիկ, Թեողորոս, Մարդյան** և այլ անձնանուններում և ազգանուններում: Երկակի արտասանություն ունեն **վառող** բառը և **Սեդրակ** անձնանունը, նախապատվությունը տրվում է գրային արտասանությանը:

3. **Ն** ձայնորդից հետո՝ **անդամ - անթամ, խնդիր - խնթիր, կենդանի - կենթանի**, մյուս բառերում պահպանվում է գրային արտասանությունը՝ **հանդես, ծնունդ (ծննդաբերել), սնունդ, խնդալ** և այլն:

4. **Ընդ** նախդիրով կազմված մի քանի բառերում՝ **ընդունել - ընթունել, ընդհանուր - ընթհանար, ընդամենը - ընթամենը, ընդունակ - ընթունակ**: Այդ նախդիրով կազմված շատ բառեր ունեն գրային արտասանություն, **ընդգրկել, ընդդիմախոսել, ընդդեմ, ընդդիմադիր, ընդելուզել, ընդգծել**:

5. **Ղդ** կապակցությունը հնչվում է **խդ խեղդել-խեխտել, խեղդամահ, բքխեղդ**: Գրքային և փոխառյալ բառերում և հատուկ անուններում պահպանում է գրային հնչումը՝ **Քաղդատ**:

6. **Յ** ձայնորդից հետո **դ**-ն խլանում և արտասանվում **դի այդ - այտ** և դրանով կազմված բաղադրություններում՝ **այդպես, այդպիսի, այդքան, այդտեղ**:

ե) Չայնեղ պայթաշփական **ջ**-ն հնչվում է **ջ** հետևյալ դիրքերում.

1) ձայնավորից հետո՝ **օձ - օջ, օձածն, օձապտույտ, օձածուկ**:

2) **Բ** ձայնորդից հետո՝ **արձակ - արցակ, բարձ - բարց, բարձր - բարցր, բարձել - բարցել, դարձ - դարց, ինչպես և դերձակ - դերցակ, հանդերձ, խուրձ, համբարձում, որձ, վարձ, փորձ** և դրանցով կազմված բաղադրություններում՝ **արձակուրդ, համարձակ, մանկաբարձ, վերամբարձ, բարձիթողի, բարձրաբերձ, վերադարձ, իրադարձություն, դարձյալ, դարձնել, դարձվածք, նախահարձակ, հարձակում, որձակոտոր, վարձատրել, օրավարձ, վարձել, փորձագետ, փորձանք** և այլն: Նույն դիրքերում մի շարք բառերում **ձ**-ն ունի երկակի արտասանություն: Տերմինաբանական կոմիտեի որոշման համաձայն՝ նախապատվությունը տրվում է գրային արտասանությանը՝ **արձան (արձանագործ, արձանագրություն), արվարձան, վրձին** և նրանցով կազմված բաղադրություններում: Մնացած բառերում **բ** ձայնորդից հետո **ջ**-ն ունի գրային արտասանություն՝ **արձագանք, լորձ (լորձաթաղանթ), հերձ (հերձել, դիահերձարան), հորձանք, հորձանուտ, ձորձ, մերձ (մերձավոր, մերձակա, տնամերձ), քուրձ (քրձազգեստ), ուղերձ, հանդերձանք**:

3. **Ղջ** հնչյունակապակցությունը արտասանվում է **խջ** հետևյալ բառերում՝ **ղեղձ - դելխց, դեղձենի, դեղձան, դեղձանիկ, դաղձ**: Մյուս

դեպքերում **դՅ** հնչյունակապակցությունն ունի գրային արտասանություն՝ **ատաղձ (ատաղձագործ), գեղձ, գուղձ, բաղձ (բաղձալ, հայրենաբաղձ), իղձ, հեղձ (հեղձամահ, ջրահեղձ), մաղձ (մելամաղձոտ), մղձավանջ, փղձկալ, ըղձալ, ըղձական** և այլն:

զ) **Ջ** ձայնեղ պայթաշփականը հնչվում է խուլ հպաշփական չ հետևյալ դիրքերում.

1. ձայնավորից հետո՝ **աջ (աջակողմ), առաջ, մեջ, մեջք, ոջիլ, վայրէջք, առէջք, քաջք, առաջարկ, առաջին, առաջնորդ, առաջիկա:**

Մի շարք բառերում **ջ**-ն ունի երկակի արտասանություն, բայց տերմինաբանական կոմիտեի որոշման համաձայն նախապատվությունը տրվում է գրային արտասանությանը՝ **աջակցել, իջնել (իջևան, իջևանատուն, իջեցում), հաջող (հաջողակ, հաջողության), գիջել, մեջ** արմատից կազմված՝ **անմիջական, միջակ, միջակետ, միջանկյալ, միջանցք, միջատ, միջոց, միջքաղաքային, միջադեպ, միջնակարգ, միջուկ, միջավայր, միջև, միջամտել, ընդմիջում, անընդմեջ** և այլ բառերը, - **ոջ** հոլովիչով հոլովվող բառերը՝ **քրոջ, կնոջ, ընկերոջ** և այլն:

Մնացած բառերում և հատկապես միջին և նոր շրջանի փոխառություններում **ջ**-ն ունի գրային արտասանություն, արտասանվում է **ջ՝ բջիջ, դողոջ, էջ (էջադրում), խխոջ (խխոջյուն), խնջույք, հաջորդ, մարմաջ, շեջ (հրշեջ, անշեջ), քաջ, քրքիջ, քուջուջ, գաջ, դաջ (դաջել, դաջվածք), հաջի** և այլն:

2. **Ր** և **ռ** ձայնորդներից հետո՝ **արջ, վերջ, վերջին, թրջել առջև:** **Ջ**-ն պահպանում է գրային արտասանությունը նաև **ր** և **ռ** ձայնորդներից հետո (բացի վերոհիշյալ բառերից)՝ **երջանիկ, երջանկություն, լուրջ, կամուրջ (կամբջել), մրջյուն, շուրջ (շրջել, շրջապատել)** և այլն:

3. **Ղջ** հնչյունակապակցությունը **խջ** է արտասանվում հետևյալ բառերում և նրանցով կազմված բաղադրություններում՝ **աղջիկ – խխչիկ, ամբողջ (ամբողջական, ամբողջանալ), ողջ (ողջանալ, ողջույն, ողջակեզ, ողջություն, առողջ)** և այլն: Մնացած բառերում **ղջ** հնչյունակապակցությունն ունի գրային արտասանություն՝ **աղջամուղջ, գաղջ (գաղջություն), գեղջուկ (գեղջկուհի, գեղջկական), ողջախոհ,**

եղջերու, եղջուր (եղջուրավոր, եղջերաթաղանթ), գղջալ (գղջում, գղջահար), շեղջ (շեղջե, շեղջակույտ), չղջիկ և այլն²³:

5) **Խուլ պայթականների և պայթաշփականների արտասանությունը:** Ժամանակակից հայոց լեզվի գրական արտասանության օրինաչափությունն այն է, որ խուլ հպական *ս, ս, կ, փ, ք, ք* և խուլ հպաշփական *ծ, ճ, չ* բաղաձայն հնչյունները բոլոր դիրքերում՝ բառասկզբում, բառամիջում և բառավերջում, մնում են անփոփոխ, արտասանվում են խուլ²⁴:

6) **Հ շփական (հագագային) բաղաձայնի արտասանությունը:**

Հ-ն առանձնապես ուժեղ է բառասկզբի դիրքերում և պահպանում է իր արտասանությունը ինչպես բառասկզբում, այնպես էլ *հ*-ով սկսվող բաղադրիչներով կազմված բաղադրություններում՝ **հասնե, հոսե, հատե, հակառակ, հակադիր, համալիր, անհատ, օրհասական, ներհոսե, ընդհակառակը** և այլն:

Բաղաձայնների սղում: Որոշ բաղաձայններ ձայնորդից հետո կամ բաղաձայնների կուտակման դեպքերում չեն արտասանվում կամ թույլ են արտասանվում: Հ-ն չի արտասանվում կամ թույլ է արտասանվում բառավերջում և հատկապես *ք* ձայնորդից հետո՝ **աշխարհ, ճանապարհ, խոնարհ, շնորհ, ընդհանուր, խորհուրդ** և դրանցով կազմված մի շարք բաղադրություններում՝ **համաշխարհային, աշխարհաբաղաբացի, արհամարհե, ճանապարհագուրկ, ապաշնորհ, շնորհակալություն, խոնարհիվե, խորհրդավոր, ընդհանրական** և այլն: Արտասանության ժամանակ բաղաձայնների սղում է նկատվում նաև մի շարք բառերում՝ մի քանի բաղաձայնների կուտակման դեպքում՝ **երաժշտություն - երա(ժ)շտություն, որպեսզի - որպես(զ)ի, Մկրտչյան - Մկր(տ)չյան, աշխղեկ - աշ(խ)ղեկ** և այլն: Այդ երևույթը նկատվում է նաև նորագույն փոխառություններում՝ **մասշտաբ - մա(ս)շտաբ:**

²³ Մ. Ասարրյան, Արևելահայ գրական լեզվի ձայնեղ պայթական բաղաձայնների արտասանությունը // Բանբեր Երևանի համալսարանի, 1978, N 2, էջ 32-48: Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Երևան, 1978, էջ 207-214: Թ. Ղարազոյան, նշվ. աշխատ., էջ 127-124:

²⁴ Մ. Ասարրյան, Արևելահայ գրական լեզվի պայթական բաղաձայնների արտասանությունը // ՀՍՄՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1976, N 6, էջ 45-51:

ԳՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Լեզվաբանության մեջ **գրաբանություն** բառը ունի մի քանի իմաստներ:

ա) գրանշանների ամբողջությունն է, որով բանավոր խոսքը հարողովում է գրությամբ, գրավոր ձևով՝ առոգանության և տրոհության կետադրական նշանների միջոցով:

բ) Գրաբանությունը այբուբենի տառերով հնչյունների (հնչույթների) և հնչյունակապակցությունների արտահայտման միջոց է: Մինչդեռ ուղղագրությունը, բառերում և ձևույթներում որոշելով հնչույթի արտահայտման կանոնները, կապվում է նաև լեզվի իմաստային կողմի հետ:

գ) Ավելի լայն իմաստով գրաբանությունը համատեքստում տառերի և հնչույթների հարաբերակցության համակարգն է:

Գրաբանություն է կոչվում լեզվի մասին գիտության այն բաժինը, որն ուսումնասիրում և նկարագրում է տառերի և հնչույթների միջև եղած կապերն ու հարաբերությունը: Այն ուսումնասիրում է այբուբենի կապը տվյալ լեզվի հնչյունական համակարգի հետ, պարզում, թե որոնք են առանձին տառերի հնչյունական համապատասխանությունները, կամ ինչպես է կարդացվում այս կամ այն տառը: Նրա ուսումնասիրության հիմնական հարցը տառի հարաբերումն է հնչյունին (հնչույթին):

Գրանշանների մեջ մտնում են տառերը և կետադրական (տրոհության և առոգանության) նշանները:

Հայերենի գրային նշանները պայմանական բնույթ ունեն: Տպագիր տեքստում ամեն մի գրանշան գրվում է առանձին, այսպես կոչված, ընդհատական շարքում: Ձեռագիր տեքստում գրանշանները գրվում են մասամբ միացած, մասամբ՝ անջատ: Լեզվական արժեք ունեցող ընդհատումները գրավոր խոսքում նշանակվում են կան բա-

ցատով, կա՛ն հատուկ նշաններով, որոնք ցույց են տալիս ընդհատման տարբեր աստիճանները:

Տառը խոսքի հաղորդման գրային նշան է, որ նշում է որոշակի հնչույթ: Տառը յուրաքանչյուր առանձին հնչույթի կամ հնչույթակապակցության պայմանական նշանն է, հնչույթի գծապատկերը:

Տառերի ամբողջությունը՝ դասավորված ընդունված կարգով, կոչվում է *այբուբեն*: **Այբուբեն** բառը կամված է հայերենի այբուբենի առաջին և երկրորդ՝ **Ա** և **Բ** տառերի անվանումներից (*այբ, բեն* կցված *ու* շաղկապով)՝ հունարեն համանշանակ **ալֆաբետ** բառի նմանությամբ:

Հայերենն ունի 36 հնչույթ և 40 տառ (ներառյալ նաև այժմ այբուբենում վերականգնված **Է, ի** տառը):

Մեսրոպյան այբուբենն ուներ 36 տառ: Տարբեր ժամանակներում այբուբեն են մուտք գործել **Օ, Ֆ, ու, և** տառերը, և 1922 թ. դուրս էր բերվել **Է, ի** տառը (Սփյուռքում ընդունված ավանդական ուղղագրության մեջ այդ տառը պահպանվել է):

Ժամանակակից հայերենի այբուբենը ներկայացնում է որոշակի գրային համակարգ: Հայերենի յուրաքանչյուր հնչույթ ունի իր համապատասխան տառը: Որոշ տառեր նշանակում են երկու կամ երեք հնչյուն: Տառերն ունեն իրենց անվանումները և թվային արժեքը:

Մեսրոպ Մաշտոցը և հայ գրերի գյուտը: Հայաստանում 4-րդ դարի վերջերին և 5-րդ դարի սկզբներին ստեղծված հասարակական-քաղաքական պայմանների թելադրանքով՝ հայ ժողովրդի հոգևոր և ֆիզիկական անկախությունն ու ինքնուրույնությունը, պետական և ազգային միասնությունը պահպանելու, Աստվածաշունչը թարգմանելու և նոր կրոնը մայրենի լեզվով քարոզելու համար անհրաժեշտություն դարձավ սեփական գրի և գրականության ստեղծումը: Հայ գրերի ստեղծման նվիրական գործին ձեռնամուխ եղավ Մեսրոպ Մաշտոցը:

Մ. Մաշտոցը ծնվել է մոտ 361 թ. Տարոնի Հացեկաց գյուղում, երանելի Վարդանի ընտանիքում: Բարձրագույն կրթությունն ստացել է Ասորիքի Անտիոք քաղաքում: Մերձավոր Արևելքի՝ գիտության և մշակույթի այդ հռչակավոր օջախում նա սովորում է հունարեն և

ասորերեն, ծանոթանում ասորական և անտիկ գրականությանը: Գիտելիքների հարուստ պաշարով վերադառնալով Ասորիքից՝ Մ. Մաշտոցը քարտուղարի և թարգմանի պաշտոնով ծառայության է մտնում մայրաքաղաք Վաղարշապատում՝ արքունի դիվանում:

Հայոց Վռամշապուհի թագավորի, ինչպես նաև կաթողիկոս Սահակ Պարթևի հանձնարարությամբ, խրախուսանքով ու գործուն օժանդակությամբ հայերեն գրեր ստեղծելու նպատակով իր աշակերտների հետ նա ուղևորվում է Ժամանակի գիտության և մշակույթի խոշոր կենտրոններ՝ Եդեսիա, Ամիդ և Սամոսատ, ուսումնասիրում է այդ քաղաքների գրադարանները, մոտիկից ծանոթանում գիտական և մշակութային կյանքին: Նրա խոր և բազմակողմանի հետազոտական աշխատանքների փայլուն արդյունքն է լինում հայ գրերի գյուտը: 405 թվականին Մ. Մաշտոցը հաղթանակով վերադառնում է հայրենիք: Արաքս գետի ափին նրան ցնծազին դիմավորում են հայոց թագավորն ու կաթողիկոսը, նախարարները, հայ ժողովուրդը:

Հետագա տարիներին իր աշակերտների հետ նա շրջագայում է Հայաստանի գավառներում, բացում է բազմաթիվ դպրոցներ, տարածում նորագյուտ հայ գրերը: Մ. Մաշտոցը իր մշակութային գործունեությունը ծավալում է նաև Հայաստանի սահմաններից դուրս՝ Վրաստանում և Ադվանքում՝ մասնակցելով վրացական և ադվանական գրերի ստեղծման աշխատանքներին: Մ. Մաշտոցը վախճանվել է 440 թ. և թաղվել Օշական գյուղում:

Մ. Մաշտոցի հորինած հայոց այբուբենը պարունակում է 36 տառ և անթերի ներկայացնում է գրաբարի հնչյունական համակարգը: Իր այբուբենով Մ. Մաշտոցը փաստորեն դառնում է հայ առաջին խոշոր լեզվաբանը և հնչյունաբանը:

Հայկական այբուբենի տառերն ունեն նաև թվային արժեք (սահմանել է կրկին Մ. Մաշտոցը). Ա – Թ՝ միավորներ, Ժ – Դ՝ տասնավորներ, Ե – Զ՝ հարյուրավորներ, Ը – Թ՝ հազարավորներ:

Հայկական այբուրենի փառերի անվանումն ու թվային արժեքը

<i>№№</i>	<i>Տառը</i>	<i>Տառի անվանումը</i>	<i>Թվային արժեքը</i>	<i>Թվային կարգի արժեքը</i>
1	Ա, ա	Այբ	1	1-ին
2	Բ, բ	Բեն	2	2-րդ
3	Գ, գ	Գիմ	3	3-րդ
4	Դ, դ	Դա	4	4-րդ
5	Ե, ե	Եչ	5	5-րդ
6	Չ, զ	Չա	6	6-րդ
7	Է, է	Է	7	7-րդ
8	Ը, ը	Ըթ	8	8-րդ
9	Թ, թ	Թո	9	9-րդ
10	Ժ, ժ	Ժե	10	10-րդ
11	Ի, ի	Ինի	20	20-րդ
12	Լ, լ	Լյուն	30	30-րդ
13	Խ, խ	Խե	40	40-րդ
14	Ծ, ծ	Ծա	50	50-րդ

15	Կ, կ	Կենն	60	60-րդ
16	Հ, հ	Հո	70	70-րդ
17	Չ, ճ	Չա	80	80-րդ
18	Ղ, ղ	Ղսսո	90	90-րդ
19	Ճ, ճ	Ճե	100	100-րդ
20	Մ, մ	Մենն	200	200-րդ
21	Յ, յ	Հի (Յի)	300	300-րդ
22	Ն, ն	Նու	400	400-րդ
23	Շ, շ	Շա	500	500-րդ
24	Ո, ո	Վո	600	600-րդ
25	Չ, չ	Չա	700	700-րդ
26	Պ, պ	Պե	800	800-րդ
27	Ջ, ջ	Ջե	900	900-րդ
28	Ռ, ռ	Ռա	1000	1000-րդ
29	Ս, ս	Սե	2000	2000-րդ
30	Վ, վ	Վեվ	3000	3000-րդ

31	Տ, տ	Տյուն	4000	4000-րդ
32	Բ, բ	Բե	5000	5000-րդ
33	Ց, ց	ցո	6000	6000-րդ
34	Ու, ու	Ու Բռնում է մեսրոպյան Ն տառի տեղը:	Թվային արժեքից գուրկ է:	
35	Ի, ի	Վյուն (Հյուն)	7000	7000-րդ
36	Փ, փ	Փյութ	8000	8000-րդ
37	Ք, ք	Քե	9000	9000-րդ
38	Եվ, ե	Եվ, ավելացվել է ուշ շրջանում:	Թվային արժեքից գուրկ է:	
39	Օ, օ	Օ, ավելացվել է միջին դարերում:	Թվային արժեքից գուրկ է:	
40	Ֆ, ֆ	Ֆե, ավելացվել է միջին դարերում:	Թվային արժեքից գուրկ է:	

Ոչ տառային գրային նշաններ

Ժամանակակից հայերենի կետադրության նշանները.

1. վերջակետ :
2. միջակետ .
3. ստորակետ ,
4. բութ `
5. շեշտ ´
6. հարցական նշան (պարույկ) °
7. բացականչական նշան (կամ երկար) ~
8. չակերտներ « »
9. փակագծեր ()
10. կախման կետեր ...
11. բազմակետեր
12. անջատման գիծ –
13. միության գծիկ -
14. ենթամնա (տողադարձի գծիկ) ~,-
15. ապաքարց ´

Ապաքարցը արևելահայերենի գրության մեջ գրեթե չի գործածվում: Միության գծիկը և ենթամնան սովորաբար նույնացվում են:

Հայերենի գրատեսակները

Հայկական այբուբենի գրատեսակներն են՝ **երկաթագիր, բոլոր(ա)գիր, գլխագիր, գրչագիր, շղագիր, նոտր(ա)գիր**, որոնք ստեղծվել են Մ. Մաշտոցի կողմից կամ որոշ ձևափոխությունների ենթարկվել նրանից հետո գրիչների և գեղագիրների ձեռքով և տարբեր ժամանակներում ունեցել են որոշակի կիրառություն:

1. Երկաթագիր: Ստեղծել է Մ. Մաշտոցը որպես գլխագիր: Այն մաս վիմագրության գիր է: Գրվել է քարի վրա երկաթի գրոցով, որից և, ոմանց կարծիքով, ստացել է այդ անունը: Ոմանք էլ երկաթագիր

անվանումը կապում են երկաթի ժանգից պատրաստված թանաքով գրելու հետ: Բանասիրության մեջ կոչվում է «բուն մետրոպյան» կամ «մետրոպյան երկաթագիր»: Գրվում է երկու տողագծերի միջև՝ բացառությամբ Զ, Փ տառերի, որոնց երկար ուղղաձիգ գիծը ձգվում է տողագծից ներքև: Գրչության հիմնական գիր է եղել 5-13-րդ դդ. վիմագրության մեջ, իսկ որպես գլխագիր օգտագործվում է 5-րդ դարից ցայսօր: Գլխագրի ժամանակ ուղղաձիգ երկար գիծը ձգվում է վեր կամ վար: Հենք է ծառայել զարդագրի համար:

2. Քոլոր(ա)գիր (կամ բոլորակ գիր): Ստեղծել է Մ. Մաշտոցը: Գրվում է տողագծերի վրա իր բոլորակով, իսկ ուղղաձիգ մնացած մասը ձգվում է տողից վեր կամ վար: Օգտագործվել է իբրև առօրյա գիր: 10-րդ դարից դարձել է գրչության, 13-րդ դարի երկրորդ կեսից՝ հիմնական գրերից մեկը, 16-րդ դարից՝ տպագրության գիր: Մրանից առաջացել են շղագիրն ու նոտրգիրը:

3. Գրչագիր: Միջնադարում հայտնի է նաև «աղյուսակ գիր» կամ «տախտակագիր», ժամանակակից բանասիրության մեջ՝ «ուղղագիծ (ուղղանկյուն) երկաթագիր» անուններով: Գրվում է երկու տողագծերի միջև, հավասար բարձրությամբ, ուղիղ և թեք գրությամբ. նրա ուղղաձիգ գծերը իրար միանում են ուղղանկյան տակ, հորիզոնական ուղիղ նուրբերով: Իր բազմաթիվ տարբերակներով այն հիմնական գիր է եղել մինչև 12-րդ դարը: 10-րդ դարից սկսած և 13-րդ դարում, երբ բոլորգիրը դառնում է հիմնական գիր, գրչագիրը երկաթագրի հետ գերազանցապես գործածվում է իբրև գլխագիր: Մեր ժամանակներում օգտագործվում է հատկապես վերնագրերում, գրքերի ձևավորման մեջ:

4. Գլխագիր, կոչվում է նաև **գլխատառ, մեծատառ:** Այն գրքի, բնագրի, բանաստեղծական տան կամ գլխի սկզբնատառն է: Ստեղծել է Մ. Մաշտոցը: Մաշտոցյան շրջանում և հետո իբրև գլխագիր օգտագործվող գրատեսակը կոչվել է նաև երկաթագիր: Չեռագրերում գլխագիրը գրվել է բնագրից մեկուկես-երկու և ավելի անգամ մեծ, գրադաշտից դուրս՝ լուսանցքում: Հետագայում մտել է գրադաշտի մեջ, և վերև ու ներքև ձգվող երկար գծերը ավելի են երկարել:

10-րդ դարից սկսած, երբ բոլորգիրը աստիճանաբար դառնում է գրչության հիմնական գիր, երկաթագրի հետ գրչագիրը գործածվում է որպես գլխագիր: Նոտրգրի համար հետագայում գլխագիր է դառնում նաև բոլորգիրը:

5-րդ դարից սկսած մինչև օրս բոլոր գրատեսակների համար իբրև գլխագիր օգտագործվում է երկաթագիրը:

5. Շղագիր (շեղագիր): Առաջացել է բոլորգրից: Այդ գրով գրված հնագույն ձեռագիրը վերաբերում է 11-րդ դարին: Տառերն ունեն շեղ դիրք, անկյունները կտրացած են և իրար են կցվում նուրբ, մազման գծիկներով: Սա հնարավորություն է տալիս տառերը գրել կապակցված, առանց ընդմիջման:

6. Նոտրգիր (նոտրագիր): Առաջացել է բոլորգրից: Այն վերջինիս ավելի պարզեցված և արագագրության համար հարմարեցված ձևն է: Ձեռագրերում հանդիպում է 13-րդ դարից: Նոտրգրի հիման վրա են առաջացել ժամանակակից ձեռագրի տեսակները:

Հայերենի տառերի ուղղագրական իրացման և այբբենական արժեքի համառոտ բնութագիրը

Ա, ա – հայոց այբուբենի առաջին տառը, անունը՝ Այբ, թվային արժեքը՝ 1, 1-ին: Հայերենի հետին շարքի ստորին բարձրացման ոչ շրթնայնացած [ա] ձայնավոր հնչույթի գրային նշանն է: Այբբենական արժեքի և ուղղագրական իրացման միջև տարբերություններ չկան:

Բ, բ – հայոց այբուբենի երկրորդ տառը, անունը՝ Բեն, թվային արժեքը՝ 2, 2-րդ: Հայերենի եռաշարք, երկշրթնային, պայթական, պարզ ձայնեղ [բ] հնչույթի գրային նշանն է: Այբուբենական արժեքի և ուղղագրական իրացման միջև կան տարբերություններ: Մի շարք բառերում բառամիջում և բառավերջում ձայնավորներից և ձայնորդներից հետո (մանավանդ *բ*-ից հետո) նշում է նույն շարքի շնչեղ խուլ [փ] հնչյունը, օրինակ՝ *դարբին* - *դար[փ]ին*, *հարբել* - *հար[փ]ել*, *շարքաք* - *շա[փ]աք*, *Հակոբ* – *Հակո[փ]* և այլն: **Ղբ** կապակցությունը *աղբ*, *աղբյուր*, *եղբայր*, *ողբ* բառերում և դրանցով կազմված բաղադ-

րություններում նույն շարքի պարզ խուլի՝ *[այ]-ի* գրանշանն է (*դ*-ն նույնպես խլանում է՝ *իս*)՝ *ա[իսայ]*, *ա[իսայ]յուր*, *ե[իսայ]այր*, *ո[իսայ]*:

Գ, գ – հայոց այբուբենի երրորդ տառը, անունը՝ Գիւմ, թվային արժեքը՝ 3, 3-րդ: Հայերենի եռաշարք, հետնալեզվային, հպական, պարզ ձայնեղ *[գ]* հնչույթի գրային նշանն է: Այբուբենական արժեքի և ուղղագրական իրացման միջև կան տարբերություններ: Մի շարք բառերում բառամիջում և բառավերջում ձայնավորներից և ձայնորդներից հետո (հատկապես *ր*-ից հետո) նշում է նույն շարքի շնչեղ խուլ *[ք]* հնչյունը, օրինակ՝ *հոգի* – *հո[ք]ի*, *թագավոր* – *թա[ք]ավոր*, *երգ* – *եր[ք]*, *Սարգիս* – *Սար[ք]իս* և այլն:

Դ, դ – հայկական այբուբենի չորրորդ տառը, անունը՝ Դա, թվային արժեքը՝ 4, 4-րդ: Հայերենի եռաշարք, առաջնալեզվային, պայթական, պարզ ձայնեղ *[դ]* հնչույթի գրային նշանն է: Այբուբենական արժեքի և ուղղագրական իրացման միջև կան հետևյալ տարբերություններ: Մի քանի բառերում բառամիջում և բառավերջում ձայնավորներից և *ր, ն* ձայնորդներից հետո նշում է նույն շարքի շնչեղ խուլ *[թ]* հնչյունը, օրինակ՝ *օդ* – *օ[թ]*, *դադար* – *դա[թ]ար*, *դդում* – *դ(ր)[թ]ում*, *հաջորդ* – *հաջոր[թ]*, *արդար* – *ար[թ]ար*, *անդամ* – *ան[թ]ամ*, *ընդունակ* – *ըն[թ]ունակ* և այլն: Այդ ցուցական դերանվան և դրանիով կազմված բաղադրությունների մեջ Դ տառը նշում է նույն շարքի *[տ]* պարզ խուլ հնչյունը՝ *այդ* – *այ[տ]*, *այդպես* – *այ[տ]պես*, *այդքան* – *այ[տ]քան* և այլն:

Ե, ե – հայոց այբուբենի հինգերորդ տառը, անունը՝ Եչ, թվային արժեքը՝ 5, 5-րդ: Հայերենի առաջին շարքի միջին բարձրացման ոչ շրթնայնացած *[է]* ձայնավոր հնչույթի գրային նշանն է: Այբուբենական արժեքի և ուղղագրական իրացման միջև կան նկատելի տարբերություններ: Այս տառը *[է]* հնչույթն է նշում միայն բառամիջում՝ բաղաձայնից հետո, և բառավերջում, ինչպես՝ *ցեղեկ* – *ց[է]ր[է]կ*, *բույե* – *բույ[է]*, *Արփիկե* – *Արփիկ[է]*: Բառասկզբում և բառամիջում՝ ձայնավորից հետո, այն նշում է *[յէ]* հնչյունակապակցությունը՝ *երսզ* – *[յէ]րսզ*, *Երևան* – *[յէ]րևան*, *ամենատերկար* – *ամենա[յէ]րկար*, *կիսատեղափակիչ* – *կիսա[յէ]գրափակիչ* (բայց՝ *անեզակի* – *ան[է]զակի*, *անեզր* – *ան[է]զր*): Եւ բայում (նաև օժանդակ բայում) բաղաձայնով վերջացող բառերից և բառաձևերից հետո նշում է *[է]* հնչույ-

քը, ինչպես՝ *ուսանող եմ – ուսանող [է]մ, գնացել ես – գնացել [է]ս* և այլն: Չայնավորավերջ ձևերից հետո նույն դիրքում [յէ] հնչյունակապակցության գրային նշանն է՝ երեխա եմ – *երեխա [յէ]մ, գալու եմք – գալու [յէ]մք*:

Չ, գ – հայոց այբուբենի վեցերորդ տառը, անունը՝ Չա, թվային արժեքը՝ 6, 6-րդ: Հայերենի երկշարք, առաջնալեզվային, շվական, պարզ ձայնեղ սուլական [զ] հնչույթի գրային նշանն է: Այբբենական արժեքի և ուղղագրական իրացման միջև տարբերություններ չկան:

Է, է – հայերենի այբուբենի յոթերորդ տառը, անունը՝ Է, թվային արժեքը՝ 7, 7-րդ: Հայերենի առաջին շարքի միջին բարձրացման ոչ շրթնայնացած [է] ձայնավոր հնչույթի գրային նշանն է: Այբուբենային արժեքը և ուղղագրական իրացումը տարբեր են: Այն բառակերպում միշտ [է] հնչույթի գրանշանն է: Բառամիջում և բառավերջում [է] հնչույթն է նշում միայն բաղադրյալ բառերում, երբ դրա ոչ առաջին բաղադրիչն սկսվում է *է*-ով, օրինակ՝ *անէանալ, մանրէ, հնէաբան, ամենաէժան, դողէրոցք, վայրէջք* և այլն:

Ը, ը – հայերենի այբուբենի ութերորդ տառը, անունը՝ Ըթ, թվային արժեքը՝ 8, 8-րդ: Հայերենի միջին շարքի միջին բարձրացման ոչ շրթնայնացած [ը] ձայնավոր հնչույթի գրային նշանն է: Այբուբենային արժեքը և ուղղագրական իրացումը տարբեր են: Բառակերպում գրեթե միշտ, իսկ բառավերջում մշտապես գրվում է: Բառամիջում գրվում է միայն բաղադրյալ բառերում, երբ դրա ոչ առաջին բաղադրիչն սկսվում է *ը*-ով և կամ այնպիսի բառերում, որոնց միակ ձայնավորը *ը*-ն է օրինակ՝ *դասընկեր, ինքնըստիներյան, խոչընդոր, անըստգյուր, նաև՝ Մարը, տը՝զզ* (բայց՝ *տզզալ, տզզոց, տզզզան*), *թըր՝իսկ, ֆը՝շշ* և այլն: Մնացած բոլոր դեպքերում հնչվող և լսվող [ը] հնչույթը գրավոր խոսքում որևէ նշանով չի արտահայտվում. կազմում է գաղտնավանկ: Այսպես է նաև բառակերպի դիրքում՝ *սկ, սպ, սր, սի, սք, գք, զն, շպ, շր* կապակցություններով սկսվող բառերում՝ *սկսել –* գրական ընտիր արտասանությունն է *[ը]կսել*, նաև՝ *[ը]պատում, [ը]սփյուռք, [ը]սքողել, [ը]զգացողություն, [ը]շտապել* և այլն²⁵:

²⁵ Այսօր այդ [ը]-ն արևելահայերենում շատ թույլ է արտասանվում, իսկ արևմտահայերենում դրա հնչումը, ինչպես նշվել է, ավելի հստակ է:

Թ, թ – հայոց այբուբենի իններորդ տառը, անունը՝ Թո, թվային արժեքը՝ 9, 9-րդ: Հայերենի եռաշարք, առաջնալեզվային, հպական (այլ մոտեցմամբ՝ պայթաշփական), բարդ շնչել խուլ [թ] հնչույթի գրային նշանն է: Այբբենական արժեքի և ուղղագրական իրացման միջև տարբերություններ չկան:

Ժ, ժ – հայոց այբուբենի տասներորդ տառը, անունը՝ Ժե, թվային արժեքը՝ 10, 10-րդ: Հայերենի երկշարք, առաջնալեզվային, շփական, պարզ ձայնել շչական [ժ] հնչույթի գրային նշանն է: Այբբենական արժեքի և ուղղագրական իրացման միջև տարբերություններ չկան:

Ի, ի – հայերենի այբուբենի տասնմեկերորդ տառը, անունը՝ Ինի, թվային արժեքը՝ 20, 20-րդ: Հայերենի առաջին շարքի վերին բարձրացման ոչ շրթնայնացած [ի] ձայնավոր հնչույթի գրային նշանն է: Այբուբենական արժեքի և ուղղագրական իրացման միջև կան որոշ տարբերություններ: Մի շարք բառերում՝ *իս* տառակապակցության մեջ բառավերջում (փոխառյալ բառերում երբեմն մաս բառամիջում) նշում է *յ* ձայնորդ հնչյունը՝ *կրիս* – *կր[յ]ս*, *հեքիս* – *հեք[յ]ս*, *փասիս* – *փաս[յ]ս*, *սկադեիս* – *սկադեի[յ]ս*, *ավիսցիս* – *ավիսց[յ]ս*, *բիլիսարդ* – *բիլ[յ]արդ*, *միլիոն* – *միլ[յ]ոն*, *լեղասնուններում*՝ *Գերմանիս* – *Գերման[յ]ս*, *Դանիս* – *Դան[յ]ս* և այլն:

Լ, լ – հայոց այբուբենի տասներկուերորդ տառը, անունը՝ Լյուն, թվային արժեքը՝ 30, 30-րդ: Հայերենի միաշարք, առաջնալեզվային, շփական, պարզ ձայնորդ [լ] հնչույթի գրային նշանն է: Այբբենական արժեքի և ուղղագրական իրացման միջև տարբերություններ չկան:

Խ, խ – հայոց այբուբենի տասներեքերորդ տառը, անունը՝ Խե, թվային արժեքը՝ 40, 40-րդ: Հայերենի երկշարք, հետնալեզվային, շփական, պարզ խուլ [խ] հնչույթի գրային նշանն է: Այբբենական արժեքի և ուղղագրական իրացման միջև տարբերություններ չկան:

Ծ, ծ – հայոց այբուբենի տասնչորսերորդ տառը, անունը՝ Ծա, թվային արժեքը՝ 50, 50-րդ: Հայերենի եռաշարք, առաջնալեզվային, հպաշփական, խուլ [ծ] հնչույթի գրային նշանն է: Այբբենական արժեքի և ուղղագրական իրացման միջև տարբերություններ չկան:

Կ, կ – հայոց այբուբենի տասնհինգերորդ տառը, անունը՝ Կեմ, թվային արժեքը՝ 60, 60-րդ: Հայերենի եռաշարք, հետնալեզվային,

հպական, պարզ խուլ [կ] հնչույթի գրային նշանն է: Այբբենական արժեքի և ուղղագրական իրացման միջև տարբերություններ չկան:

Հ, հ – հայոց այբուբենի տասնվեցերորդ տառը, անունը՝ Հո, թվային արժեքը՝ 70, 70-րդ: Հայերենի միաշարք, կոկորդային (հագագային), շփական, պարզ խուլ [հ] հնչույթի գրային նշանն է: Այբուբենական արժեքի և ուղղագրական իրացման միջև կա մեկ տարբերություն: Հետևյալ բառերում և դրանցով կազմված բաղադրություններում *ր* ձայնորդից հետո գրվող *հ*-ն չի արտասանվում՝ *աշխարհ* – *աշխար[Օ]*, *ճանապարհ* – *ճանապար[Օ]*, *խոնարհ* – *խոնար[Օ]*, *շնորհ* – *շնոր[Օ]*, *խորհուրդ* – *խոր[Օ]ուրդ*, *ընդհանուր* – *ըն[թ][Օ]անուր*:

Չ, ձ – հայոց այբուբենի տասնյոթերորդ տառը, անունը՝ Չա, թվային արժեքը՝ 80, 80-րդ: Հայերենի եռաշարք, առաջնալեզվային, հպաշփական, ձայնեղ [ձ] հնչույթի գրային նշանն է: Այբուբենական արժեքի և ուղղագրական իրացման միջև կան տարբերություններ: *Օջ* բառում, ինչպես և մի շարք բառերում և դրանցից կազմված ձևերում *ր* ձայնորդից հետո նշում է նույն շարքի շնչեղ խուլ [ց] հնչյունը, ինչպես՝ *օջ* – *օ[ց]*, *արջակ* – *ար[ց]ակ*, *բարջ* – *բար[ց]*, *բարջր* – *բար[ց]ր*, *դարջ* – *դար[ց]*, *դերջակ* – *դեր[ց]ակ*, *խորջ* – *խոր[ց]*, *վարջ* – *վար[ց]*, *փորջ* – *փոր[ց]*, *որջ* – *որ[ց]*, *հանդերջ* – *հանդեր[ց]* և մի քանի այլ բառեր: *Ղ* չ կապակցության մեջ ևս հետևյալ բառերում նշում է շնչեղ խուլ [ց]-ն (այս դեպքում խուլ [խ] է հնչվում նաև *ղ*-ն)՝ *դեղջ* – *դե[խ][ց]*, *դեղջան* – *դե[խ][ց]ան*, *դաղջ* – *դա[խ][ց]*:

Ղ, դ – հայոց այբուբենի տասնութերորդ տառը, անունը՝ Ղատ, թվային արժեքը՝ 90, 90-րդ: Հայերենի երկշարք, հետնալեզվային, շփական, պարզ ձայնեղ [դ] հնչույթի գրային նշանն է: Այբուբենական արժեքի և ուղղագրական իրացման կան տարբերություններ: Մի շարք բառերում խուլ բաղաձայնից առաջ (կամ տվյալ դիրքում խուլ հնչվող բաղաձայնից առաջ) այս տառը նշում է նույն շարքի խուլ [վ] բաղաձայնը, օրինակ՝ *ողջ* – *ո[վ]ջ* (ամբողջությամբ բառն ունի *[վօխջ]* արտասանությունը), *աղբար* – *ա[վ]բար*, *ադր* – *ա[վ]ր*, *դեղջ* – *դե[խ][ց]*, *թուղթ* – *թու[խ][վր]*, *կեղր* – *կե[խ]ր*, *խեղդել* – *խե[խ][վր]ել*, *սանդուղթ* – *սանու[խ]թ*, *ուղր* – *ու[խ]ր*:

Ճ, ճ – հայոց այբուբենի տասնիններորդ տառը, անունը՝ Ճե, թվային արժեքը՝ 100, 100-րդ: Հայերենի եռաշարք, առաջնալեզվային, պայթաշփական, բարդ խուլ [ճ] հնչույթի գրային նշանն է: Այբբենական արժեքի և ուղղագրական իրացման միջև տարբերություններ չկան:

Մ, մ – հայոց այբուբենի քսաներորդ տառը, անունը՝ Մեն, թվային արժեքը՝ 200, 200-րդ: Հայերենի միաշարք, երկշրթնային, հպական, պարզ ռնգայնացած ձայնորդ [մ] հնչույթի գրային նշանն է: Այբբենական արժեքի և ուղղագրական իրացման միջև տարբերություններ չկան:

Յ, յ – հայոց այբուբենի քսանմեկերորդ տառը, անունը՝ Հի (հին ուղղագրությամբ՝ Յի), թվային արժեքը՝ 300, 300-րդ: Հայերենի միաշարք, միջնալեզվային, շփական, պարզ ձայնորդ [յ] հնչույթի գրային նշանն է: Այբբենական արժեքի և ուղղագրական իրացման միջև տարբերություններ չկան:

Ն, ն – հայոց այբուբենի քսաներկուերորդ տառը, անունը՝ Նու, թվային արժեքը՝ 400, 400-րդ: Հայերենի միաշարք, առաջնալեզվային, հպական, պարզ ռնգայնացած ձայնորդ [ն] հնչույթի գրային նշանն է: Այբբենական արժեքի և ուղղագրական իրացման միջև տարբերություններ չկան:

Շ, շ – հայոց այբուբենի քսաներեքերորդ տառը, անունը՝ Շա, թվային արժեքը՝ 500, 500-րդ: Հայերենի երկշարք, առաջնալեզվային, շփական, պարզ խուլ շշական [շ] հնչույթի գրային նշանն է: Այբբենական արժեքի և ուղղագրական իրացման միջև տարբերություններ չկան:

Ո, ո – հայոց այբուբենի քսանչորսերորդ տառը, անունը՝ Վո, թվային արժեքը՝ 600, 600-րդ: Բառավերջում և բառամիջում՝ բաղաձայնից հետո, հայերենի հետին շարքի, միջին բարձրացման, շրթնայնացված [օ] հնչույթի գրային նշանն է, իսկ բառասկզբում և բառամիջում՝ ձայնավորից հետո՝ [վօ] հնչյունակապակցության նշանը: Սրանով էլ պայմանավորված է նրա ուղղագրական իրացումը. *գողորշի* – *գ[օ]/[օ]րշի*, *Կարո* – *Կար[օ]*, *բայց*՝ *ոբղի* – *[վօ]ր[թ]ի*, *ոհմակ* – *[վօ]հմակ*, *ամենաորակյալ* – *ամենա[վօ]րակյալ*, *ամենաո-*

դորմած – ամենա[վօ]դորմած: Ուլ դերանվան մեջ նշում է [օ] հնչյունը՝ ուլ – [օ]վ:

Չ, չ – հայոց այբուբենի քսանհինգերորդ տառը, անունը՝ Չա, թվային արժեքը՝ 700, 700-րդ: Հայերենի եռաշարք, առաջնալեզվային, հպաշփական, շնչեղ խուլ [չ] հնչույթի գրային նշանն է: Այբբենական արժեքի և ուղղագրական իրացման միջև տարբերություններ չկան:

Պ, պ – հայոց այբուբենի քսանվեցերորդ տառը, անունը՝ Պե, թվային արժեքը՝ 800, 800-րդ: Հայերենի եռաշարք, երկշրթնային, հպական, պարզ խուլ [պ] հնչույթի գրային նշանն է: Այբբենական արժեքի և ուղղագրական իրացման միջև տարբերություններ չկան:

Ջ, ջ – հայոց այբուբենի քսանյոթերորդ տառը, անունը՝ Ջե, թվային արժեքը՝ 900, 900-րդ: Հայերենի եռաշարք, առաջնալեզվային, հպաշփական, ձայնեղ [ջ] հնչույթի գրային նշանն է: Այբուբենական արժեքի և ուղղագրական իրացման միջև կան տարբերություններ: Մի շարք բառերում և դրանցից կազմված բաղադրություններում՝ *ր* ձայնորդից, *ղ* ձայնեղից (որը խլանում է՝ *խ*) կամ ձայնավորից հետո գրվող *ջ* տառը նշում է նույն շարքի շնչեղ խուլ [ջ] հնչյունը, օրինակ՝ *արջ – ար[ջ], թրջեւ – թր[ջ]եւ, որջ – որ[ջ], վերջ – վեր[ջ], աջ – ա[ջ], առաջ – առա[ջ], մեջ – մե[ջ], քաջք – քա[ջ]ք, աղջիկ – ա[խ]/[ջ]իկ, գեղջուկ – գե[խ]/[ջ]ուկ* և այլն:

Ռ, ռ – հայոց այբուբենի քսանութերորդ տառը, անունը՝ Ռա, թվային արժեքը՝ 1000, 1000-րդ: Հայերենի միաշարք, առաջնալեզվային, շփական, պարզ, թրթռուն ձայնորդ [ռ] հնչույթի գրային նշանն է: Այբբենական արժեքի և ուղղագրական իրացման միջև տարբերություններ չկան:

Ս, ս – հայոց այբուբենի քսանիններորդ տառը, անունը՝ Սե, թվային արժեքը՝ 2000, 2000-րդ: Հայերենի երկշարք, առաջնալեզվային, շփական, պարզ խուլ սուլական [ս] հնչույթի գրային նշանն է: Այբբենական արժեքի և ուղղագրական իրացման միջև տարբերություններ չկան:

Վ, վ – հայոց այբուբենի երեսուներորդ տառը, անունը՝ Վեվ, թվային արժեքը՝ 3000, 3000-րդ: Հայերենի երկշարք, շրթնատամնա-

յին, շփական, պարզ ձայնեղ [վ] հնչույթի գրային նշանն է: Այբուբենական արժեքի և ուղղագրական իրացման միջև կա հետևյալ տարբերությունը: *Հարսա[վ]* բառում և դրանից բաղադրված ձևերում նշում է նույն շարքի խուլ [ֆ] հնչյունը՝ *հարսա[ֆ]*, *հարսա[ֆ]ային*, *հարսա[ֆ]ից* և այլն:

Տ, տ – հայոց այբուբենի երեսունմեկերորդ տառը, անունը՝ Տյուն, թվային արժեքը՝ 4000, 4000-րդ: Հայերենի եռաշարք, առաջնալեզվային, հպական, պարզ խուլ [տ] հնչույթի գրային նշանն է: Այբբենական արժեքի և ուղղագրական իրացման միջև տարբերություններ չկան:

Ր, ր – հայոց այբուբենի երեսուներկուերորդ տառը, անունը՝ Րե, թվային արժեքը՝ 5000, 5000-րդ: Հայերենի միաշարք, առաջնալեզվային, շփական, պարզ, ձայնորդ [ր] հնչույթի գրային նշանն է: Այբբենական արժեքի և ուղղագրական իրացման միջև տարբերություններ չկան:

Ց, ց – հայոց այբուբենի երեսուներեքերորդ տառը, անունը՝ Ցո, թվային արժեքը՝ 6000, 6000-րդ: Հայերենի եռաշարք, առաջնալեզվային, հպաշփական, շնչեղ խուլ [ց] հնչույթի գրային նշանն է: Այբբենական արժեքի և ուղղագրական իրացման միջև տարբերություններ չկան:

Ու, ու – հայոց այբուբենի երեսունչորսերորդ տառը, անունը՝ Ու, թվային արժեք չունի: Որպես առանձին, ինքնուրույն տառ՝ այբուբեն է ներմուծվել 1922 թ. ուղղագրական բարեփոխման ժամանակ: Նշում է հայերենի հետին շարքի, վերին բարձրացման, շրթնայնացած [ու] ձայնավոր հնչույթը: Այբբենական արժեքի և ուղղագրական իրացման միջև տարբերություններ չկան:

Ի, ի – հայոց այբուբենի երեսունչորսերորդ տառն էր, անունը՝ Վյուն (Հյուն), թվային արժեքը 7000, 7000-րդ: 1922 թ. ուղղագրական բարեփոխումից հետո հանվել է այբուբենից, քանի որ առանձին գործածության դեպքում նրանով արտահայտված հնչույթը աշխարհաբարում լեզվից վերացել էր: Այժմ գործածվում է միայն Սփյուռքում ընդունված ավանդական ուղղագրության մեջ, որում բառամիջում՝ երկու ձայնավորների միջև, և բառավերջում նշում է երկշրթնային ձայնեղ [վ] հնչյունը՝ *աւազակ* – *ա[վ]ազակ*, *քեւեռ* – *քե[վ]եռ*, *հիւանդ*

– *հի[վ]անդ, պարիս – պարի[վ], արմաւ – արմա[վ]* և այլն: Բառամիջի և բառասկզբի փակ վանկում միանալով նախորդ *ի* ձայնավորի հետ՝ կազմում է երկհնչյուն, որում նշում է հետնալեզվային վերին բարձրացման [ու] ձայնավորը (իսկ *ի*-ն փոխվում է *յ*-ի՝ *իւ > յու*), օրինակ՝ *բիր – բ[յ][ու]*, *գիդ – գ[յ][ու]*, *հարիր – հար[յ][ու]*, *իւղ – [յ][ու]*, *իրաքանչիր – [յ][ու]րաքանչ[յ][ու]* և այլն: Այժմ այբուբենում վերականգնված է:

Փ, փ – հայոց այբուբենի երեսուցերորդ տառը, անունը՝ Փյուր, թվային արժեքը՝ 8000, 8000-րդ: Հայերենի եռաշարք, երկշրթնային, հպական, շնչեղ խուլ [փ] հնչույթի գրային նշանն է: Այբբենական արժեքի և ուղղագրական իրացման միջև տարբերություններ չկան:

Ք, ք – հայոց այբուբենի երեսուցերորդ տառը, անունը՝ Քե, թվային արժեքը՝ 9000, 9000-րդ: Հայերենի եռաշարք, հետնալեզվային, հպական, շնչեղ խուլ [ք] հնչույթի գրային նշանն է: Այբբենական արժեքի և ուղղագրական իրացման միջև տարբերություններ չկան:

Լ (գլխագիրը գրվում է տառակապակցությամբ՝ **Եվ**) – հայոց այբուբենի երեսուներորդ տառը, անունը՝ Եվ, թվային արժեք չունի: Որպես առանձին, ինքնուրույն տառ՝ այբուբեն է ներմուծվել 1922 թ. ուղղագրական բարեփոխման ժամանակ: Բառասկզբի դիրքում չի գործածվում: Բառամիջում և բառավերջում՝ բաղաձայնից հետո նշում է [եվ] հնչյունակապակցությունը, իսկ ձայնավորից հետո՝ [յեվ] հնչյունակապակցությունը: Օրինակ՝ *տերև – տեր[Եվ]*, *բևեռ – բ[Եվ]եռ*, *բևեկնախեժ – բ[Եվ]եկնախեժ*, *նաև – նա[յեվ]* և այլն:

Օ, օ – հայոց այբուբենի երեսունիններորդ տառը, անունը՝ Օ, թվային արժեքից զուրկ է: Այբուբեն է ներմուծվել միջին հայերենի ժամանակներում իբրև *աւ* երկբարբառի հնչման փոփոխությամբ պայմանավորված առաջացած հնչյունի համարժեք: Հայերենի հետին շարքի, միջին բարձրացման, շրթնայնացած [օ] հնչույթի գրային նշանն է: Այբուբենական արժեքի և ուղղագրական իրացման միջև կան տարբերություններ: Բառասկզբում միշտ [օ] հնչույթի նշանն է: Բառամիջի դիրքում այդ հնչյունն է նշում միայն այնպիսի բաղադրյալ բառերում, որոնց ոչ առաջին բաղադրիչն սկսվում է *օ*-ով, ինչ-

պես՝ *ականջօղ, այսօր, հանապազօրյա, սպօրինի, հակաօդային* և այլն: Բառավերջի դիրքում չի հանդիպում:

Ֆ, ֆ – հայոց այբուբենի վերջին տառը, անունը՝ Ֆե, թվային արժեք չունի: Այբուբեն է ներմուծվել միջին հայերենի ժամանակներում: Հայերենի երկշարք, շրթնատամնային, շփական, պարզ խուլ [ֆ] հնչույթի գրային նշանն է: Այբբենական արժեքի և ուղղագրական իրացման միջև տարբերություններ չկան:

ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մովորաբար լեզվի հնչյունական համակարգի և այբուբենի լրիվ համապատասխանություն գոյություն չունի: Տառերի գործածությունը կարգավորվում է ուղղագրությամբ մշակված կանոնների միջոցով:

Բառերի գրության, նրանց իմաստային մասերի կից և անջատ գրության, գլխատառերի գործածության, ինչպես նաև տողադարձի կանոնների համակարգը կոչվում է *ուղղագրություն*²⁶: Ուղղագրությունը խոսքի գրային հաղորդման ժամանակ կարգավորում է գրային նշանները, օգտվելով գրաբանության միջոցներից՝ սահմանում է բառերի գրության միօրինակություն: Ուղղագրությունը որոշում է գրության նորմերը, որոնք ընդունված են յուրաքանչյուր լեզվում նրա զարգացման որոշակի փուլում: Նրա նորմերը պարտադիր են տվյալ լեզվով գրող հանրության համար:

Տառադարձություն (տարնակիպցիա): Տառադարձությունը որևէ լեզվի հնչույթների (հնչյունների) և արտասանական առանձնահատկությունների հաղորդումն է միջազգային հնչյունական այբուբենի կամ մեկ այլ լեզվի պայմանական գրության միջոցով: Առաջինը կոչվում է *գիտական փառադարձություն*, երկրորդ դեպքը՝ *գործնական փառադարձություն*: Տառադարձումը օգտագործվում է գիտական զանազան նպատակներով: Տառադարձությունը առավելաբար կատարվում է լատինական այբուբենի հիման վրա: Հայերենի համար գիտական տառադարձության սկզբունքներ է մշակել Հ. Հյուբշմանը, որը հետագայում կատարելագործել են Ա. Մեյեն և Է. Բենվենիստը:

²⁶ Հայերենի *ուղղագրություն* տերմինը կազմված է օտար orthography, орфография բառերի նմանողությամբ (հունարեն ὀρθογραφία < ὀρθός – ճիշտ, ուղիղ և γράφω – գրում եմ):

**Հայերենի գիտական տառադարձությունը
(ըստ Հյուբշման-Մեյե-Քեննլենիսպի համակարգի)**

ա – a	թ – t´	ձ – j	չ – č´	ց – c´
բ – b	ժ – ž	ղ – ł (γ)	պ – p	ու – u
գ – g	ի – i	ճ – č	զ – ž	ւ – w
դ – d	լ – l	մ – m	ռ – r	փ–p´(ph)
ե – e	խ – x	յ – y	ս – s	ք–k´(kh)
զ – z	ծ – c	ն – n	վ – v	և – —
է – ē	կ – k	շ – š	տ – t	օ – o
ը – ə	հ – h	ո – o(vo)	ր – r	ֆ–f

Այսպես, **Հրաչյա Քոչար** անուն-ազգանունը²⁷ գիտական տառադարձամբ կլինի **Hrač’ya K’oč’ar**, գործնականում անգլերեն կտառադարձվի **Hratchya Kochar**, ռուսերեն՝ **Рачья Кочар**, ֆրանսերեն՝ **Hratchya Kotchar**, գերմաներեն՝ **Hratschja Kotschar**, իտալերեն՝ **Hratchya Kotchar**:

Գրադարձություն (տրանսլիտերացիա): Գրադարձությունը տառադարձության մի ձև (տեսակ) է, երբ մի լեզվի այբուբենի տառերը, գրային նշանները վերածվում, փոխարինվում են մեկ այլ այբուբենի տառերով, գրանշաններով՝ օգտագործելով գրույթների համարժեքներ:

Գրադարձությունը պետք է տարբերել տառադարձությունից: Գրադարձության հիմնական նպատակն է գրային նշանի արտահայտումը այլ այբուբենի տառերով և ոչ թե տվյալ տառի նշանակած հնչյունի արտասանության վերարտադրումը, որ բուն տառադարձությանն է վերաբերում: Օրինակ՝ **Մկրտիչ** անձնանվան²⁸ տառադարձումը կլինի **Məkərtič´**, իսկ գրադարձումը՝ **Mkrtič´**:

Ուղղագրության հիմքում կարող են ընկնել մի քանի սկզբունքներ՝ հնչյունական, ձևաբանական, ստուգաբանական, ավանդական:

²⁷ Հմմտ. Հայկական սովետական հանրագիտարան, հտ. 11, Երևան, 1985, էջ 592:

²⁸ Հմմտ. նույն տեղում:

Ժամանակակից հայոց լեզվի ուղղագրության հիմքում ընկած են հիմնականում պատմական կամ ավանդական և հնչյունական սկզբունքները:

Պատմական կամ ավանդական սկզբունքը ենթադրում է բառերի այնպիսի ավանդական գրություն, երբ բառերի տառային կազմը համապատասխանում է ոչ թե նրանց ժամանակակից, այլ հին, մեր ժամանակներում արդեն հնացած արտասանությանը: Շատ դեպքերում այդպիսին է, օրինակ, արդի հայերենի շնչեղ պայթականների գրությունը ձայնորդներից կամ ձայնավորներից հետո (*[մարթ]*) գրվում է *մարդ*, *[արթար]* գրվում է *արդար*, *[վորփ]* գրվում է *որք* և այլն):

Ստուգաբանական ուղղագրության դեպքում ելնում են բառի՝ հին շրջաններում ունեցած արտասանությունից և գրությունից: Հայերենում բառամիջում բաղադրյալ բառերի հիմքի *ս* և *ո* ձայնավորները նշող տառերից հետո *յ*-ի գրությունը (ձայնավորից առաջ) ունի այդպիսի բնույթ (*արքայական*, *արեղայից*, *երեկոյանապ*, *Մարոյին* և այլն): Այսօր *ս*-վ և *ո*-վ ավարտող բառերի վերջում գրաբարում հնչվում և գրվում էր *յ* բաղաձայնը, որն արդի հայերենում վերականգնվում է բառաբարդման և հոլովման ժամանակ (գրաբարում մյուս ձայնավորներից հետո բառավերջում այդ *յ*-ն չկար և այսօր էլ թեև հնչվում է, բայց չի գրվում՝ *վերարկուի*, *ուղիուի*, *րոպեական* և այլն):

Հնչյունական սկզբունքն ընդունում է բառերի այնպիսի գրություն, երբ բառերի տառային կազմը առավելագույն չափով մոտ է նրանց հնչյունական կազմին: Այս դեպքում տառերը գրվում են իրենց հնչման համաձայն: Այդպիսին է արդի հայերենի բառերի մեծ մասի գրությունը (*սեղան*, *քայլեկ*, *կարմիր*, *արագավագ*, *ինչպես*, *ափսոս*, *պոլիվինիլացետիլաք* և այլն, և այլն):

Հնչյունական կամ ավանդական ուղղագրության դեպքում հաճախ հնարավոր չէ խուսափել ստուգաբանական սկզբունքից, և գրության ժամանակ հաշվի է առնվում նաև բառի ծագումն ու նրա նախնական կազմությունը: Ժամանակակից հայերենում այդպես է բառամիջի *օ*, *է*, *ը* տառերի ուղղագրությունը (*հանսպագորյա*, *անէսկան*, *հակընդդեմ* և այլն): Հնչյունական գրությունը հիմնականում բխում է գրական արտասանությունը գրքայինին մոտեցնելու միտումից:

Ժամանակակից հայերենի ուղղագրության կանոնները²⁹

Չայնավորների ուղղագրությունը: 1. **Ա, ի, ու** ձայնավորները հնչվում և գրվում են **ա, ի, ու՝** *արագ, բարակ, առու, միասին, ուրախություն, Արարատ, Հրազդան:*

2. ա) **Է** տառը գրվում է բառասկզբում, եթե լսվում է *Է Էակ, Էշ, Էջ, Էքսկուրսիա*, ինչպես նաև՝ *Է, Էի, Էիր, Էր, Էինք, Էիք, Էին:*

բ) Բառամիջում և բառավերջում **Է** գրվում է այն դեպքում, եթե բաղադրության մեջ մտնող բաղադրիչի սկզբնատառն է կամ բաղադրիչ արմատը՝ *վայրէջք, անէանայ, ամենատեղան, լայնեկրան, մանրէ, հնէաբան, որիէ, երբիէ:*

գ) Մյուս բոլոր դեպքերում բառամիջում, երբ լսվում է **Է**, գրվում է **ե** տառը՝ *հերկել, մանրեել, բերել, դենք, բերք, վերելք, մարգարե, բույն:*

3. ա) Բառասկզբում **ե** տառը գրվում է, երբ արտասանվում է **յե** երկհնչյունը՝ *երևայ, երեկ, երանի, երգ, երկար:*

բ) Բառամիջում **յե** երկհնչյունը լսվելիս **ե** գրվում է այն դեպքում, երբ, հանդես գալով բաղադրության կազմում, հաջորդում է ձայնավորով վերջացող այլ բաղադրիչի՝ *համահեկրոպական, ամենաերկար:*

4. ա) Բառասկզբում գրվում է **օ** տառը, երբ լսվում է **օ՝** *օր, օր, օրենք, օրինակ, օգուստոս, օրորոց, օվկիանոս:*

բ) Բառամիջում **օ** գրվում է այն դեպքում միայն, երբ այն բաղադրության մեջ մտնող բաղադրիչ բառի (արմատի) սկզբնատառն է՝ *անօրինական, ասօրինի, այսօր, ամենօրյա, արծաթագօծ, ոսկեօր:*

գ) Մյուս բոլոր դեպքերում, երբ լսվում է **օ** ձայնավորը, գրվում է **ո** տառը՝ *սովորել, բողբոջ, նոր, բոլոր, երեկո, կակաո, հեյրո, քո:*

5. ա) Բառասկզբում **ո** տառը գրվում է այն դեպքում, երբ արտասանվում է **փո** հնչյունակապակցությունը՝ *որ, ուի, ոմն, ողորմելի, որոշել, որմնադիր, որակ, ոսկի, ողջույն:* Բացառություն է կազմում *ով (ովքեր)* դերանունը, երբ լսվում է **օ**, բայց գրվում է **ո:**

²⁹ Ժամանակակից հայերենի ուղղագրության բարեփոխման վերաբերյալ որոշումների մասին տես սույն դասագրքի նախորդ հրատարակություններում (օր., Երևան, 1982, էջ 109-112, Երևան, 2008, էջ 87-89):

բ) Օտար լեզուներից փոխառնված բառերում (հիմնականում հատուկ անուններում) բառասկզբում լավող **վո** կապակցությունը գրվում է **վո՝ վոլեյբոլ վոլյը, վոլֆրամ, Վոլգա, Վորոնեժ, Վոլֆսբուրգ**:

գ) Հին փոխառյալ անունները այս կանոնին չեն ենթարկվում. գրվում է **ո**, արտասանվում է **վո՝ Ողիսև, ողիսական, Որմիզդուհիսը**:

դ) Բառամիջում **վո** կապակցությունը լավելիս **ո** է գրվում այն դեպքում, երբ բաղադրության մեջ նրանով սկսվող արմատը հաջորդում է ձայնավորով վերջացող բաղադրիչի՝ *ամենատողորկ, կիսատողորկ, ամենատրակյալ արջատրս, ենթատրովայնային*:

6. **Ը** տառը գրվում է բառասկզբում *ըսը, ընդ* նախալիրներում, **դ, մ, ն** բաղաձայններից առաջ **ը** արտասանվող բառերում՝ *ըղչալի, ըմպել, ընկեր, ըմբշամարտ*: Այդ **ը**-ն պահպանվում է նաև այդ կարգի բառերով կազմված բաղադրություններում՝ *անընդմեջ, ինքնարտիստական, դասընկեր, ամենարևոտի, ամենաըղչալի, անըմպել*:

7. ա) **Յ** ձայնակապը գրվում է միայն **ս** և **ո** տառերից հետո, երբ նրանց հաջորդում է որեէ ձայնավոր՝ *տղս - տղայի, գնալ - գնայի, շղթա - շղթայական, պահածո - պահածոյի, երեկո - երեկոյի, երեկոյանալ*:

բ) **Յ** ձայնակապը չի լավում և հետևաբար չի գրվում *ամենա-, ենթա-, ինքնա-, հակա-, կիսա-* և նման մի քանի այլ բաղադրիչներով կազմված բառերում, որոնք այդ բաղադրիչների վրա կրում են երկրորդական թույլ շեշտ՝ *ամենաընտրի, ամենատրակար, ամենասարագ, ամենատուշագրավ, ենթատրովայնային, ենթասարևադարչային, հակահմպերիալիստական, հակասառաջարկ, կիսասնամապարային, ջերմաէլեկտրական, ջրահնքնաթիռ*:

գ) **Յ** ձայնակապը **ս** և **ո** տառերից հետո չի գրվում մի շարք փոխառյալ բառերում՝ *Ուկրաինա, Նաիրի, նովոկաին, հերոին* և այլն:

դ) **Է** և **ի** ձայնավոր հնչյուններին համապատասխանող տառերը հաջորդ ձայնավոր հնչյուններին համապատասխանող տառերին միանում են առանց **յ** ձայնակապի գրության և կազմում են՝ **էս, էի, էո, էու, իս, իի, իո, իու** տառակապակցությունները՝ *միսվորել, միություն, չիով, չէի, էություն, միայն*:

Բաղաձայնների ուղղագրությունը: 1. ա) **Ր** ձայնորդից հետո լավող **փ** հնչյունը գրվում է **փ** տառով հետևյալ բառերում՝ *արփի,*

երփն (գույն), *տարփանք*, *թարփ* (ձկնորսական ցանց), *փրփուր*, *Արփիար*:

բ) Մյուս բոլոր բառերում **ր**-ից հետո լսվող **փ** հնչյունը գրվում է **բ** տառով՝ *երբ*, *նուրբ*, *սրբել*, *դարբին*:

գ) Չայնավորից կամ **մ** ձայնորդից հետո լսվող **փ** հնչյունը հետևյալ բառերում և դրանցով կազմված բաղադրություններում գրվում է **բ** տառով՝ *խարբել*, *շարբաք*, *հարբել*, *համբերել*, *համբուրել*, *Հակոբ*:

դ) Բոլոր մյուս բառերում լսվող **փ** հնչյունը գրվում է **փ** տառով՝ *սփ*, *շամփուր*, *դասփնի*, *ճամփորդ*, *փափագ*, *փամփուշտ*, *փափկասուն*, *փողփողել*:

2. ա) **Ր** ձայնորդից հետո լսվող **բ** հնչյունը գրվում է **բ** տառով հետևյալ բառերում և դրանցով կազմված բաղադրություններում՝ *արբուն*, *երբ*, *գարբնել*, *զվարբ*, *թարբել*, *թերբ*, *թերթերունք*, *բրթիռ*, *բրթնջուկ*, *լուրբ*, *խորբ*, *խրթին*, *կարբ*, *կիրբ*, *հերբ*, *հորբ*, *մերբ*, *մորբ*, *մրթմրթալ*, *շողոքորբ*, *շորթել*, *շուրբ*, *որբ* (խաղողի), *չորթան*, *պարթև*, *սաղարբ*, *սրբսրբալ փարթամ*, *փիփերբ*, *բարթու*, *քերթել*, *բրթնջալ*, *Վրթանես*:

բ) Մյուս բոլոր բառերում **ր** ձայնորդից հետո լսվող **թ** հնչյունը գրվում է **դ** տառով՝ *բուրդ*, *արդար*, *գարդ*, *վարդ*, *մարդ*:

գ) **Ն** ձայնորդից հետո լսվող **թ** հնչյունը գրվում է **դ** հետևյալ բառերում՝ *անդամ*, *խնդիր*, *կենդանի*, *ընդամենը*, *ընդհանուր*, *ընդունակ*, *ընդունել*:

դ) Մյուս բոլոր բառերում **ն**-ից հետո լսվող **թ** հնչյունը գրվում է **թ** տառով՝ *կանթ*, *շանթ*, *հակինթ*, *անթեղ*, *Գնթունի*:

ե) Չայնավորից հետո լսվող **թ** հնչյունը գրվում է **դ** հետևյալ բառերում՝ *դադար*, *դդում*, *զդալ*, *օթ*, *Թադևոս*:

զ) Մյուս բոլոր բառերում թե՛ ձայնավորից և թե՛ բաղաձայններից առաջ կամ հետո լսվող **թ** հնչյունը գրվում է **թ** տառով՝ *գաթա*, *թաս*, *թեթև*, *թռիչք*, *թվանշան*, *պոռթկալ*, *թերթել*:

3. ա) Բառասկզբում, բառամիջում ձայնավորից առաջ և բառավերջում լսվող **խ** հնչյունը գրվում է **խ** խաղող, *խոնարհ*, *խիզախ*, *կախել*, *բարախել*, *ուրախ*:

բ) Բաղաձայնից առաջ **խ** հնչյունը գրվում է **խ** հետևյալ անհնչյունափոխ բառերում՝ *ախար* (հիվանդություն), *սպուխար*, *քախար*, *քախարակ* (ծուկ), *գխարոր* (բույս), *դժոխք*, *ժխարեկ*, *լախար*, *խախարեկ*, *խրոխար*, *ծախք*, *կխարար*, *կմախք*, *հախճապակի*, *նախկին*, *նախնիր*, *դրախար*, *երախարիք*, *գմրուխար*, *թախար*, *թխկի* (ծառ), *թուխալ*, *թուխա*, *նախշուն*, *ջախջախեկ*, *պանդուխար*, *սխարոր*, *վախճան*, *վխարալ*, *տախարակ*, *ուխար* (ղաշինք), *Վախթանգ*, *Շահանդուխար*, *Սանդուխար* և այլն:

գ) Բոլոր մյուս բառերում բաղաձայնից առաջ լավող **խ** հնչյունը գրվում է **ղ** տառով՝ *առողջ*, *աղքատ*, *աղյր(ուր)*, *կեղյր(ուր)*, *խեղդեկ*, *սանդուղք*, *ուղյր* (կենդանի), *ընչուղյր*, *դեղձ*, *ծաղկանոց*, *թղթապանակ*:

4. ա) **Ք** ձայնորդից հետո **չ** հնչյունը գրվում է **չ** տառով՝ *դարչին*, *չարչի*, *փարչ* բառերում և **իչ**-ով կազմված բաղադրյալ բառերի հնչյունափոխված ձևերում. *նկարիչ – նկարչի*, *նկարչություն*, *վարիչ – վարչություն*:

բ) Բոլոր մյուս բառարմատներում **ք**-ից հետո լավող **չ** հնչյունը գրվում է **ջ** տառով՝ *արջ*, *վերջ*, *թրջեկ*:

գ) **Ղ**-ից հետո **չ** հնչյունը գրվում է **չ** տառով միայն *զեղչեկ* բառում: Բոլոր մյուս բառերում **ղ**-ից հետո **չ** հնչյունը գրվում է **ջ** տառով՝ *առողջ*, *աղջիկ*, *գղջալ*:

դ) Չայնափորից հետո լավող **չ** հնչյունը գրվում է **ջ** տառով հետևյալ բառերում և նրանցով կազմված բաղադրություններում՝ *առաջ*, *աջ*, *մեջ*, *ոջիլ*, *առաջնորդ*, *առաջապահ*, *անընդմեջ*, *միջամտել* և այլն:

ե) Բոլոր մյուս բառերում, որոնք նախորդ կանոնի մեջ չեն մտնում, **չ** հնչյունը գրվում է **չ** տառով՝ *աչք*, *չափեկ*, *կանչեկ*, *ճանաչեկ*, *չարչարվել*:

5. ա) **Պ** լավող հնչյունը գրվում է **ք** տառով *աղք*, *աղբյուր*, *եղբայր*, *ողբ* բառերում, և դրանցով կազմված բաղադրություններում՝ *աղբարկո*, *գումաղբ*, *աղբրակ*, *աղբյուրաջուր*, *եղբայրաբար*, *ողբանվագ*, *ողբաշայն*, *ողբերգություն*:

բ) Բոլոր մյուս դեպքերում **պ** հնչյունը գրվում է **պ** տառով՝ *սպակի*, *դեպի*, *պարսպ*, *պարեկ*:

6. ա) **Բ** ձայնորդից հետո **ց** հնչյունը գրվում է **ց** տառով հետևյալ բառերում՝ *սպաքարց, արցունք, ընթերցել, հարց, մրցել, պախուրց* (սանձ), *տրցակ* (կապոց, փունջ), *ցրցամ* (տալ), *ուրց* (բույս), *Արցախ*:

բ) Բոլոր մյուս դեպքերում **բ** ձայնորդից հետո լավող **ց** հնչյունը գրվում է **ջ** տառով՝ *արջակ, բարձր, դերձակ, փորձ, վրձին, արձա-կուրդ, դարձյալ*:

գ) **Ղ**-ից հետո **ց** տառով գրվում են միայն *աղցան, քաղց, քաղցր, քաղցկենդ, քաղցու* բառերը: Բոլոր մյուս բառերում **ց** հնչյունը **ղ**-ից հետո գրվում է **ջ** տառով՝ *ղաղձ, դեղձ, քաղձալ, իղձ*: Լավող **ց** հնչյունը **ջ** տառով է գրվում նաև *օջ* բառում:

դ) Այն մյուս բոլոր դեպքերում, որոնք չեն մտնում նախորդ կանոնի մեջ, **ց** հնչյունը գրվում է **ց** տառով՝ *գնացք, կեցցե, ցրեստ-քյուն, սառույց, փոցխ, հացթուխ, հացկերույթ, կառուցել մրցակից*:

7. ա) **Բ** ձայնորդից հետո լավող **բ** հնչյունը գրվում է **գ** տառով հետևյալ բառերում և դրանցով կազմված բաղադրություններում՝ *երգ, բարգման, կարգ, մարգարե, մարգարիտ, միրգ, պարգև, Մարգար, Սարգիս*:

բ) Բոլոր մյուս բառերում **բ**-ից հետո լավող **բ** հնչյունը գրվում է **ք** տառով՝ *արքա, դիրք, եզերք, գորք, հերքել, վերք, բրքիջ, բուրք*:

գ) Չայնավորից հետո լավող **բ** հնչյունը գրվում է **գ** տառով հետևյալ բառերում՝ *ալագ, գուգել գուգս, էգ, էգուց, թագավոր, ծագ, ծագել, ծեգ, կարագ, հագնել, հոգ, հոգս, հոգի, հոգնել հոգնակի, չագ, չիգ, ճիգ, ճրագ, մարագ, մուգ, նորոգ(ել), շոգ, շոգի, ոգի, պարարագ, օգնել, օգուտ*:

դ) **Ն** ձայնորդից հետո լավող **բ** հնչյունը գրվում է **գ** տառով *անգամ* բառում:

ե) Բոլոր մյուս բառերում, որոնք նախորդ կանոնների մեջ չեն մտնում, **բ** հնչյունը գրվում է **ք** տառով՝ *առաքել արդյոք, թուք, երեք, ինքը, ինչք, ժանիք, հայրենիք, հանք, մերոնք, մորմոքել շքեղ, ոք, ցամաք, քար, քրտիկ*:

8. ա) Բառասկզբում **բ** գրվում է միայն *բուպե, Բաֆֆի* և *բաբունի* բառերում: Բոլոր մյուս բառերի սկզբում արտասանվում և գրվում է **բ'** *ռամիկ, ռադիո, ռանչպար, ռեպիկ, ռունգ*:

բ) **Ն** ձայնորդ բաղաձայնից առաջ **ք** գրվում է *ինյերընացիոնալ* (որից *ինյերընացիոնալիստ, կոմինյերըն*) բառերում: Մյուս դեպքերում **և**-ից առաջ **ք** կարող է գրվել միայն այն ժամանակ, երբ **ք** և **և** բաղաձայնների միջև եղած ձայնավորը սղվում է, օրինակ՝ *արյուն - արնաներկ, արնագույն, վերին - վերնահարկ, գարուն - գարնանային*: Մյուս բոլոր դեպքերում **և**-ից առաջ գրվում է **ռ՝ առնել, դառնալ, դռնապան, գառնուկ, ընթերնելի, սպառնալ, Կալիֆոռնիա, Չեռնոգորիա:**

գ) Ուրիշ բաղաձայններից առաջ **ռ** գրվում է՝

1) Հետևյալ բառերում՝ *առջև, առվույր, խոպուր, կառչել, թռչել, կռթնել, կռվան, հռչակ, պառկել*:

2) Այն դեպքերում, երբ **ռ**-ի և բաղաձայնի միջև եղած ձայնավորը սղվում է՝ *սառույց - սառցահար, սառցարան, առում - առման, եռում - եռման, առիթ - առթիվ*:

4) **Ռ**-ով վերջացող արմատի կրկնությամբ կազմված բառերում առաջին **ռ**-ն փոխարինվում է **ր**-ով՝ *բարբառ, թրթիռ, մրմուռ, սարսուռ, կարկառ(ել)*:

5) **Ր**-ով վերջացող բառերի կրկնությամբ կազմված բառերում **ր**-ն անփոփոխ է մնում՝ *թրթուր, խորխորաք, փորփրել, բարբարոք*:

6) Բոլոր մյուս բառերում, որոնք չեն մտնում նախորդ կանոնների մեջ, եթե արտասանվում է **ռ**, գրվում է **ռ**, և եթե արտասանվում է **ր**, գրվում է **ր՝ առու, արու, եռալ, երագ, րառ, րարր, րարերք, ամառ, շմեռ, գարուն, գարնանամուր:**

7) ա) **Ք, պ, փ** պայթական բաղաձայններից առաջ գրվում է **վ՝ ամբիոն, ամրոց, ամփոփել, համբերել, ամպամած, դամբարան, ըմպել, գամբյուղ, ծծումբ, շամփուր, ամբարիշտ:**

բ) **Ք, պ, փ** պայթական բաղաձայններից առաջ **և** գրվում է այն դեպքում միայն, եթե բառը սկզբից *ան*- նախածանցն է ստացել, կամ **և**-ով վերջացող բառը բարդվել է **ք, պ, փ**-ով սկսվող մի ուրիշ բառով, օրինակ՝ *անբան (ան-բան), շեռնբաց, անբասիր, անբարեհույս, դռնբաց, անբիծ, անպարասխան, անփարարելի, դռնփակ*:

գ) Բոլոր մյուս բառերում, որոնք նախորդ կանոնների մեջ չեն մտնում, որտեղ լավում է **վ**, գրվում է **վ**, որտեղ՝ **և**, գրվում է **և մկրայր**,

նկար, նպաստ, հանկարծ, կամք, հանգչել, կանչել, հանդես, մշակել, քմբռնել, հիմնարկություն, շեռնարկ:

9) Բառամիջում և բառավերջում **ր** ձայնորդից հետո չի արտասանվում կամ թույլ է արտասանվում, բայց գրվում է **հ** տառը հետևյալ բառերում և դրանց հիմքերով կազմված բաղադրություններում՝ *խոնարհ, ճանապարհ, շնորհք, աշխարհ, արհամարհել, արհամարհանք:*

Եվ-ի ուղղագրությունը - **և** տառի փոխարեն **ել** տառակապակցություն է գրվում.

ա) **և** տառը մեծատառ գրվելու դեպքում՝ **Եվ**, օրինակ՝ *Եվրոպա, Եվգիներ:*

բ) **Եվ**-ով սկսվող հատուկ անուններից կազմված բառերում. *հնդեվրոպական, արևելաեվրոպական:*

գ) Եթե բաղադրության մեջ **է (ե)**-ից հետո լսվող **վ**-ն հաջորդ բաղադրիչ բառի սկզբնատառն է՝ *գերեվարել (գերի-ս-վարել), կարեվեր, ագեվագ, հոգեվարք, հոգեվիճակ, դափնեվարդ, նաև՝ գիներեվեր:*

դ) Բառի վանկատման ժամանակ, օրինակ՝ *բա-րե-վել, կարե-վոր, հա-րե-վան:*

Օտարազգի բառերի գրությունը: 1) ֆրանս., անգլ. **ս** -ն բաղաձայնին նախորդող դիրքում գրվում է՝ **յու**՝ *Հյուզո, Նյույորն, Նյու Յորք:*

2) Ֆրանս. **eu**, գերմ. **oe** նույն դիրքերում գրվում է՝ **յո**՝ *Յոժեն, Գյոթե:*

3) Օտարազգի **I (լե)**-ն տառադարձվում է **լ** տառով՝ *մեդալ, բոլշևիկ, պորտֆել սաֆալտ, կուլլորուա:*

Միաժամանակ զուգահեռաբար պահպանվում է հնում ընդունված մի շարք բառերի **դ**-ով գրությունը՝ *Պոդոս, Նիկոդոս, Ոդինսկոս:*

4) **Ja, je, ju, jo** կապակցությունները (ռուս. **я, ue, e, ю**) տառադարձվում են՝ **յա, ե, յու, յո**՝ *Յաֆա, բյագ, փրանսլյացիա, Դուբրովսկայա, յոդ, մայոր, յունկեր, պարաշյուտ, ալյումին, բյուրո:*

5) **Ia, ie, iu, io** կապակցությունները տառադարձվում են՝ **իա, իե, իու, իո**. *մալարիա, պիես, չեմպիոն, Լուիզա:*

6) Օտարազգի **ia** (ռուս. **ая, я**) անշեշտ վերջավորությամբ

անձնանուններում տառադարձվում է *ju*՝ *Ասյա, Վոլոդյա, Ամալյա, Օֆելյա*, տեղանուններում՝ *ju*՝ *Ասիա, Անգլիա, Գերմանիա, Ֆրանսիա*: Շեշտակիր *յա*-ն անձնանուններում տառադարձվում է *ju*՝ *Լիա, Մարիա*:

7) Բառասկզբում *o*-ն տառադարձվում է *o*՝ *օլիմպիադա, օրգան, Օդեսսա*, բառամիջում և բառավերջում՝ *n*՝ *Սոկրատ, Հյուգո*: Կրկնակ *o*-ն բառամիջում գրվում է *n*, եթե արտասանությունը պահում է՝ *կոոպերատիվ, կոոպերացիա, կոորդինացիա, կոորդինատ*:

8) Օտարազգի *vo*-ն (ռուս. *во*) բառասկզբում արտահայտվում է *վո*՝ *տառակապակցությամբ՝ Վոլտեր, Վոլտա, Վոզեզներ* (լեռնաշղթա), *վոլտ, վոդկի, վոլեյբոլ*:

9) Բառավերջի *u*-ն պահպանվում է հիմնականում հունալատիկական *-ika* վերջավորությամբ և այլ կարգի բառերում, ինչպես և հին փոխառություններում՝ *ֆիզիկա, մաթեմատիկա, պրակտիկա, դիալեկտիկա, դիլեմա*: *U*-ն չի գրվում այլևս մի շարք նոր փոխառություններում՝ *բրիզադ, պրորեմ, պիես*:

10) Բառասկզբում *r*-ն տառադարձվում է *n*՝ *ռադիո, ռեակցիա, Ռաֆայել*, բառամիջում և բառավերջում՝ *r*՝ *բարոն, ինժեներ, Շիլլեր*: Արմատական *l, n* ձայնորդ հնչյուններին նախորդող դիրքերում գրվում է *n*՝ *կիրենդեպրիկա, Առնոլդ, Բեռլին, Կալիֆոռնիա, առլեկին, Նիդերլանդներ*:

11) Բառամիջում և բառավերջում կրկնակ *rr*-ն արտահայտվում է *n*-ով՝ *յրենոր, Մառ*: Ռուսերենից փոխառված բառերում *л(т)* և *ж* ձայնավորներին նախորդող դիրքերում *r*-ն արտահայտվում է *r*-ով՝ *յերիպորիա*:

12) Հունարեն *β*-ն արտահայտվում է *p*-ով՝ *Բարսեղ, բարբարոս*: Միջին և նոր շրջանում փոխառված բառերում արտահայտվում է *վ*՝ *տառով՝ Վասիլ*:

13) Անգլերեն *w*-ն տառադարձվում է *վ*՝ *տառով՝ «Դեյլի վորկեր»*: Մի քանի տարածված բառերում պահպանվում է *ու*՝ *տառադարձությունը՝ Ուելս, Ուայլդ, Ուիթնեն*:

14) Օտարազգի կրկնակ բաղաձայնները (*ll, կկ, մմ, պպ, սս*) հայերեն սովորաբար արտահայտվում են մեկ բաղաձայնով՝ *կոմունիստ, կլասիկ, դոլար, սկորդ, կոլեկտիվ, սպարապ, պասիվ*,

Բարբյուս: Բացառություն են կազմում մի քանի բառեր, որոնցում կրկնակ բաղաձայնը հայերենում պահպանվել է՝ *մասսա, վիլլա:*

15) Օտարազգի *x, ks* (ռուս. *кс*) հայերեն արտահայտվում է *քս* գրությամբ՝ *էքսկուրսիա, քարքսի:* Բուն ռուսերեն բառերը տառադարձվում են *խս՝ Ակսակով:*

16) Լատինական լեզուների *k, p, t* (ռուս. *к, п, т*) տառադարձվում են *կ, պ, տ՝ կոնֆետ, պրոբլեմ, տերմին:*

17) Օտարազգի *h*-ն հայերեն արտահայտվում է *հ* տառով՝ *հիդրոլոգ, հերբարիում, հեզեմոնիա, Հեզել:*

18) Լատինական *c*-ն (*ч, g*) հին փոխառություններում տառադարձվում է *չ* տառով՝ *կրկես, կենտրոն, Կիկլոս, Կիկերոն,* նոր փոխառություններում՝ *g*-ով՝ *ցինկ, ցիպրոս:*

19) Օտարազգի *ch*-ն տառադարձվում է *ք* տառով՝ *քիմիկոս, քլոր, քրոս:* Մի քանի բառերում գրվում է *խ՝ խոլերա, սխեմա (սքեմա* ձևը հնացած է), *մեխանիզմ (բայց՝ մեքենա):*

20) Օտարազգի *th*-ն տառադարձվում է *թ*-ով՝ *թայրոն, անթոլոգիա, էսթերիկա, մաթեմատիկա, Թեոդոր:*

21) Օտարազգի *ph*-ն տառադարձվում է *ֆ* տառով՝ *ֆոնոգրաֆ, ֆոնոլոգիա,* հին փոխառություններում՝ *փ՝ փիլիսոփա, Փիլիպոս:*

22) Ռուսերեն *же, же, че* տառակապակցությունները տառադարձվում են *ժո, շո, շո՝ Խրուշչով, Լիխաչով, Տելեշով, Գորբաչով, դիրիժոր:*

23) Ռուսերեն *се*-ն տառադարձվում է *խե* կապակցությամբ՝ *Վիերնա, պրեմիեր, պրեմիերա, ֆելիետոն, Մոլիեր, Պոլովոժիե,* իսկ *се*-ն՝ *յե՝ օբյեկտ, սուբյեկտ:*

24) Արևելյան լեզուներից հայերենին անցած որոշ տերմիններ ու բառեր տառադարձվում են ըստ տեղական արտասանության՝ *Թեիրան, Ղազվին, Սինադ, Ղուրան, Էֆենդի:*

Մեծատառերի գործածությունը

Մեծատառով են գրվում հետևյալ կարգի բառերն ու կապակցությունները³⁰.

Ա) Կապակցության բոլոր բառերն սկսվում են մեծատառով.

1) Բոլոր պետությունների, նախկին Խորհրդային Միության միութենական և ինքնավար հանրապետությունների ու մարզերի բաղադրյալ հատուկ անունները: Օրինակ՝ *Ամերիկայի Միացյալ Նահանգներ*, *Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն*, *Գերմանիայի Դաշնային Հանրապետություն*, *Իրանի Իսլամական Հանրապետություն*, *Ֆրանսիական Հանրապետություն*, *Իսրայելի Պետություն*, *Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ*, *Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն*, *Հայաստանի Հանրապետության*:

2) Այն աշխարհագրական անուններում և պատմական անձնանուններում, որոնց բաղադրիչներից մեկը հանդես է գալիս իբրև հատուկ անուն՝ *Աշոր Երկաթ*, *Տիգրան Երկրորդ*, *Սահակ Պարթև*, *Իվան Ահեղ*, *Նոր Արեշ*, *Փոքր Մասիս*:

3) Բոլոր բաղադրյալ այն աշխարհագրական անուններում, որոնց մեջ՝

ա. բոլոր բաղադրիչներն առանձին-առանձին հատուկ անուն են. օրինակ՝ *Անի-Կամախի*, *Արփա-Սևան*, *Դոնի Ռոսարով*, *Էլզաս-Լոթարինգիա*, *Խուր-Բռնաշեն*, *Մայնի Ֆրանկֆուրտ*, *Վան-Տոսպ*, *Վոլգա-Դոն* և այլն.

բ. հասարակ անուն լրացումը նախադաս է, իսկ հատուկ անուն լրացյալը՝ հետադաս. օրինակ՝ *Արևելյան Եփրատը*, *Արևմտյան Բեռլին*, *Բարձր Հայք*, *Կենտրոնական Աֆրիկա*, *Հարավային Ամերիկա*, *Մեծ Մասիս*, *Նոր Արեշ*, *Փոքր Ասիա*, *Ներքին Թալին*, *Վերին Արլաշար*, այսպես նաև՝ *Հին Հունաստան*, *Հին Հռոմ* և այլն.

գ. լրացումն ու լրացյալը օտարալեզու, բոլոր բաղադրիչները մեծատառով գրվող (վերոհիշյալ որևէ տեսակի) անուններ են. օրինակ՝

³⁰ Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Երևան, 2006, էջ 295-297:

Աղիս Արեքա, Բուննոս Այրես, Իսիկ Կուլ, Խալիխին Գոլ, Կրիվոյ Ռոզ, Ղարա Բողազ Գյոլ, Միներալնիե Վոդի, Յասնայա Պոլյանա, Նիժնի Նովգորոդ, Նյու Յորք, Սան Ֆրանցիսկո և այլն.

դ. երկու բաղադրիչներն էլ հասարակ անուններ են, բայց պայմանական կամ փոխաբերական գործածությամբ դառնում են հատուկ անվան բաղադրիչ և գրվում մեծատառ. օրինակ՝ *Ծիր Կաթին, Նոր Երկիր, Հեռավոր Արևելք, Հին Արևելք, Մերձավոր Արևելք, Հայկական Պար (լեռնաշղթա), Մեծ Արջ, Փոքր Արջ (համասարեղություններ)*. այսպես նաև՝ հատուկ անվան և նրան հաջորդող պայմանական գործածության անվան բաղադրություններում. օրինակ՝ *Աֆրիկայի Եղջյուր (թերակղզի), Վիեննայի Անրառ (լեռնազանգված), Հյուսիսային Սառուցյալ օվկիանոս, Բերեռիկեի Վարսեր (համասարեղություն)* և այլն:

Բ) Միայն առաջին բառն է սկսվում մեծատառով՝ պահպանելով բաղադրության մեջ եղած հատուկ անվան մեծատառ գրությունը:

1) Գրական, գիտական, արվեստի և այլ երկերի ու ստեղծագործությունների, լրագրերի, պարբերականների անուններում, որոնք առնվում են չակերտների մեջ՝ *«Ամբոխները խելագարված»*, *«Հացի խնդիր»*, *«Գրական թերթ»*:

2) Հիմնարկ-ձեռնարկությունների, կուսակցությունների ու կազմակերպությունների և հաստատությունների անվանումներում, որոնք առնվում են չակերտների մեջ: Օրինակ՝ *«Հայկական ավիատրիներ»* ընկերություն, *«Երևան սիթի»* խանութների ցանց, *«Վան-Վասպուրական»* հայրենակցական միություն, *«Հայկական հանրագիտարան»* հրատարակչություն և այլն:

3) Պետության կողմից շնորհվող շքանշանների անուններում: Օրինակ՝ *«Սուրբ Մեսրոպ Մաշտոց»*, ԼՂՀ *«Ոսկե արծիվ»* շքանշաններ, *«Միֆթար Հերացի»*, *«Անանիա Շիրակացի»* մեդալներ և այլն:

4) Համաշխարհային կազմակերպությունների, հաստատությունների, եզակի քաղաքական, արհեստակցական միությունների անուններում՝ *Միավորված ազգությունների կազմակերպություն, Անվտանգության խորհուրդ, Շախմատի համաշխարհային ֆեդերացիա:*

5) Բոլոր երկրների, հանրապետությունների և ինքնավար մարզերի պառլամենտների և կառավարական մարմինների անուններում՝ *Ֆրանսիայի Ազգային ժողով, Անգլիայի Համայնքների պալատ*, նաև՝ *Խորհրդարան, Մեջլիս, Դումա, Պառլամենտ, Սենատ, Սրբորյինգ, Պենրագոն, Կրեմլ* և այլն:

6) Պատմահասարակական, համաշխարհային նշանավոր իրադարձությունների, տոների անուններում՝ *Հայրենական մեծ պատերազմ (Մեծ հայրենական պատերազմ, Մեծ հայրենական), Առաջին աշխարհամարտ, Հարյուրամյա պատերազմ, Բարդուղիմեոսյան գիշեր, Խաչակրաց արշավանք, Վերածնունդ, Մյունխենյան գործարք, Փարիզյան կոնուևս, Մայիսի մեկ, Մարտի ութ, Նոր տարի*:

7) Փոքրատառով են գրվում վերոհիշյալ կանոնների մեջ չմտնող բաղադրյալ անվանումները, եթե վերջիններս չեն տեղայնացված՝ *արյաքին գործերի նախարարություն, բանվորական կուսակցություն, գերագույն գլխավոր հրամանատար, գլխավոր դատախազ* և այլն:

8) Հապավումներում.

ա) Մեծատառերով է գրվում տառային հապավումն ամբողջությամբ՝ *ՀՀ, ԱՄՆ, ՄԱԿ, ԿԿ, ԳԱ* (գիտությունների ակադեմիա): Օտար, փոխառյալ հապավումներում և՛ *ՆԱՏՕ, ՅՈՒՆԵՍԿՕ, ՅՈՒՆԻՍԵՖ* և այլն: Հասարակ անուն դարձած մի շարք հապավումներ գրվում են փոքրատառերով՝ *քուհ, հէկ*, նաև՝ փոխառյալ *գազ*:

բ) Մեծատառ է գրվում բաղադրյալ հատուկ անունների ոչ տառային հապավումների միայն առաջին տառը՝ *Պետխորհուրդ*:

գ) Հասարակ անվան գործածություն ունեցող բաղադրյալ անունների տեղայնացնող բաղադրիչի առաջին տառը՝ *Հայկինո, Հայպերհրատ, Մոսֆիլմ, Հայֆիլմ*:

դ) Խառը տիպի հապավումների նաև առանձին բաղադրիչների առաջին բառերը, օրինակ՝ *ԱՄ Նահանգներ, ԼՂ Հանրապետություն*:

ե) Դիվանագիտական և պաշտոնական փաստաթղթերի ու հաղորդումների մեջ թույլատրվում է մեծատառի ազատ գործածություն՝ ըստ ընդունված կարգի:

Բառերի գծիկով և անջատ գրություն

Գծիկի գործածությունը: ա) Գծիկով են գրվում հետևյալ կարգի բառերը³¹.

1) Վերլուծական եղանակով կազմված կրկնավոր բարդությունները՝ *արագ-արագ, գույն-գույն, գույգ-գույգ, ինչ-ինչ, կամաց-կամաց, մեծ-մեծ, մեկ-մեկ, աման-չաման, բարակ-մարակ, մանր-մունր, պարսպ-սարսպ, քաղցր-մեղր, առոք-փառոք* և այլն:

2) Սիննույն խոսքի մասին պատկանող բառերի այն միասնությունները, որոնց բաղադրիչները պահպանում են իրենց հարաբերական անկախությունը՝ լրացնելով իրար կամ համադասվելով միմյանց և բնութագրելով կամ ներկայացնելով առարկան (անձը, իրը, երևույթը) տարբեր կողմերից՝ ա) *հասարակական-քաղաքական, գաղափարական-դաստիարակչական*, բ) *գեներալ-մայոր, ինժեներ-մեխանիկ*, գ) *վագոն-ռեստորան, րուն-բանգարան*, դ) *հարավ-արևելք, հյուսիս-արևմուտք*, ե) *ասել-խոսել, գնալ-գալ, ուրել-խմել*, զ) *կիրովար-ժամ, լիւր-վայրկյան, մարդ-օր, րոննա-կիլոմետր*, է) *Դուրյան-Արմենյան, Նիկոլաս-Տերեշկովս, Սալրիկով-Շչեդրին, Գվինեա-Բիսաու, Էլ-գաս-Լոբարինգիս, Կամենց-Պոդոլսկ*, ը) *աշակերտ-աշակերտուհի, ուսանող-ուսանողուհի* և այլն:

3) Բառերի այնպիսի միացությունները (առաջին բառի վերջածանցի կրճատումով), որոնք արտահայտում են տարբեր հարաբերություններ՝ ա) *հայ-անգլիերեն, հայ-ռուսերեն-լարիներեն, ռուս-գերմաներեն* (բառարան), *ռուս-ճապոնական*, (պատերազմ), *չին-իրիթթական* (լեզուներ), *թուրք-թաթարական, ֆրանս-գերմանական*, բ) *սովետա-լեհական, գերմանա-իրավական, եգիպտա-սիրիական*, գ) *անգլո-ամերիկյան, իրերո-կովկասյան* և այլն:

4) Որևէ անունից (կամ ազգանունից) և **Տեր-, Մելիք-, Միրզա-** ու մյան բաղադրիչներից կազմված անձնանունները (կամ ազգանունները), երբ նշված բաղադրիչներն արտասանվում են առանձին, օրինակ՝ *Տեր-Գաբրիելյան, Մելիք-Մուսյան, Միրզա-Ալիագյան:*

³¹ Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, 214-218:

5) **Վայ, ուռա** բառերով և գոյականով բաղադրված բառեր, որոնք արտահայտում են հեզմական իմաստ: Օրինակ՝ *վայ-առաջադիմականներ, ուռա-հայրենասիրություն:*

6) **Ինչ** դերանունով բաղադրված և անորոշության իմաստ արտահայտող բառերը՝ *ինչ-որ, փոքր-ինչ, դույզն-ինչ:*

7) Ավանդաբար գծիկով գրվող հատուկ անունները՝ *Նար-Դոս, Սայաթ-Նովա, Գամառ-Քաթիպա, Խնկո-Ապեր, Թամարա-խանուն:*

8) Կրճատ գրվող բառը, եթե պահպանվում է բառի վերջնահնչյունը: Օրինակ՝ *դ-ր* (դոկտոր), *պ-ն* (պարոն) և այլն:

9) Թվականների այն կապակցությունները, որոնք արտահայտում են մոտավորության իմաստ՝ *տասը-տասնհինգ* (մարդ), *չորսհինգ* (ժամ), *քսան-քսանհինգ* (գիրք), *երեսուն-քառասուն* (օր):

10) Տառերով արտահայտված պայմանանշանների, այլև բառերի և նրանց հետ գործածվող թվանշանային կապակցությունները: Օրինակ՝ *Մ-93* բենզին, *ՏՈՒ-134* ինքնաթիռ, «*Սոյուզ-6*» տիեզերակայան, «*Օրբիտա-2*» ուղեծրակայան և այլն:

11) Անկախ չգործածվող բառամասերը (ածանցներ, վերջավորություններ, հիմքեր, տառեր), այդ թվում՝ այն բառերի առաջին բաղադրիչները, որոնց երկրորդ բաղադրիչը բաց է թողնվում՝ գործածվելով միայն վերջին բառում:

ա) *-ից, -ական, -գր* ձևայիններ, բ) *մակրո-, մեզա-, միկրո-* (աշխարհ):

12) Այն բառաձևերը, որոնց հիմքերը գրված են թվանշաններով, տառային կամ վանկատառային հապավումներ, փոխանուններ են կամ առնված են չակերտների մեջ: Օրինակ՝ ա) *2-ից, 8-ի, 200-ը, X-ի, XX-ից, ք) ԱՄՆ-ից, ՄԱԿ-ում, ՆԱՏՕ-ի, գ) «Գարուն»-ի վերջին համարը, դ) երեք-ը թվական է, աշուն-ը երկվանկանի բառ է, մարդ-ը գրվում է դ-ով, բայց կարդացվում է ք-ով* և այլն, ե) այն բաղադրյալ բառերը, որոնց առաջին բաղադրիչն արտահայտված է թվանշանով՝ *25-ամյա, 100-ամյակ, 2-րդ, 10-ական* և այլն:

բ) Առանց գծիկի՝ միասին են գրվում հետևյալ կարգի բառերը.

1) Հոդակապով բարդ բառերը՝ *նյութատեխնիկական, ուսումնադաստիարակչական, ռոմանագերմանական, բառաքերականական,*

ժողովրդադրամական, գիրահեղափոխական, դրամախրային, ռազմածովային, աղետարանոքմասային և այլն:

2) Որեւ անունից (կամ ազգանունից) և **փեր, մելիք, բեկ, միրզա** ու նման բաղադրիչներից կազմված անձնանունները (կամ ազգանունները), երբ նշված բաղադրիչներն արտասանվում են միասին: Օրինակ՝ *Մելիքսեթ(յան), Մելիքջանյան, Բեկնազարյան, Բալարեկ, Միրզաբեկյան, Միրզախանյան* և այլն:

3) Արևելյան տեղանունները, որոնց կազմության մեջ կան **բենդ, սու, չայ, դուզ, քափա** և նման այլ բաղադրիչներ՝ *Շուշիբենդ, Մուրադսու, Բոյուքդուզ, Շիշքափա, Ալինջաչայ, Կրիբուլադ*:

4) **Փոխ, էքս, վիցե, օբեր** բաղադրիչներով կազմված բառերը՝ *փոխգնդապետ, փոխնահանգապետ, փոխծովակալ, փոխարքա, էքսչենսիոն, վիցեպրեզիդենտ, օբերլեյտենանտ*:

5) Ինքնուրույն բառի վերածված տառային հապավումների բերված ձևերը՝ *բուհի, բուհում, հէկի, մաս՝ զազսից* և այլն:

6) Անջատ գրվող բաղադրյալ տեղանուններից կազմված ածականները և գոյականները՝ *նորգելյանդական, նորգելյանդացի, վերին-թալինցի, հեռավորարևելյան, նորքարեղարյան, բրոնզեղարյան, փոքրասիական, մերձավորարևելյան* և այլն:

գ) Առանց գծիկի՝ անջատ են գրվում հետևյալ կարգի բառերը.

1) Տարբեր հասկացություններ արտահայտող **դոկտոր** և **պրոֆեսոր** բառերը, որոնք անջատվում են ստորակետով, ինչպես՝ *դոկտոր, պրոֆեսոր Գ. Չահուկյանը*:

2) Այն կապակցությունները, որոնց առաջին բաղադրիչն արտահայտված է որոշիչ դեր կատարող ածականով կամ գոյականով՝ ա) *ալ կարմիր, բաց դեղին, բաց մանուշակագույն, մուգ կարմիր*, բ) *Նոր Չելանդիա, Նոր Նախիջևան, Մեծ Պարնի, Վերին Թալին, Հեռավոր Արևելք, Մերձավոր Արևելք*, գ) *թղթակից անդամ, իսկական անդամ* (ԳԱ-ի), *տիեզերագնաց օդաչու*:

3) Անձի անվան և նրա գործունեությունն այս կամ այն առումով բնութագրող ետադաս գոյականի կապակցությունը՝ *Թումանյան քննադատը, Շիրվանզադե դրամատուրգը, Բաֆֆի պարմավիպասանը* և այլն:

4) **Տեր, քեկ, մեկիք** և նման բառերը հատուկ անվան հետ իբրև հարգական դիմելաձև գործածելիս՝ *յեր Սահակ, մեկիք Ավան, Խոսրով քեկ* և այլն:

5) Երկու կամ ավելի առանձին բաղադրիչներից կազմված հետևյալ օտարազգի հատուկ անունները՝ ա) արևմտյան **դա, դր, դե, դեկ, լա, վան, ֆոն, սան, սենյոր** և նման այլ բաղադրիչներ ունեցող անձնանունները՝ *Լեոնարդո դա Վինչի, Լյուդվիգ վան Բեթհովեն, Անյոուան դր սենյոր Էբգյուպերի, Վիլհելմ ֆոն Հումբոլդտ*, բ) արևելյան **ալ, էլ, էդ, էն** և նման բաղադրիչներ ունեցող անձնանունները՝ *Հարուն ալ Ռաշիդ, Նահր էլ Բարիդ, «Ալ Ահրամ»* (լրագիր), *Էլ Քարբիտ, Էլ Ջառաֆ, Նուր էդ Դին* և այլն:

6) Օտարազգի մի շարք բաղադրյալ տեղանուններ, որոնց բաղադրիչների հարաբերությունը հայերենում չի գիտակցվում՝ *Նյու Յորք, Նյու Ջերսի, Բուենոս Այրես, Ալմա Աթա, Լա Մանչ, Լե Կրեյո, Սանյո Յագո, Սան Ֆրանցիսկո*:

7) Թվականների այն կապակցությունը, որի առաջին բաղադրիչն արտահայտված է բացառական հոլովով՝ *ուրից տասը* (տարի), *երեքից յոթ* (տարեկան), *տասից տասնհինգ* (մետր):

Տողադարձի կանոնները³²

Ժամանակակից հայոց լեզվում տողադարձը հիմնականում կատարվում է վանկատման միջոցով, որոշ դեպքերում հաշվի է առնվում նաև բառի կազմությունը: Չեն տողադարձվում տառային և վանկատառային հապավումները, ինչպես, օրինակ՝ **ՄԱԿ, ՀՀԳ, ՌԱԿ** և այլն:

1. Տողադարձը հիմնականում կատարվում է հայերեն վանկատման կանոններով, բառերը վանկերի բաժանելով, ըստ որի՝

ա) Երկու ձայնավորների միջև եղող մեկ բաղաձայնը անցնում է հաջորդ տող՝ *գա-րուն, քա-նա-կա-յին, դա-սա-սեն-յակ, կա-րու, հե-քի-աթ, պի-ո-ներ*:

բ) Երկու ձայնավորների միջև եղող երկու և ավելի բաղաձայն-

³² Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, 295-297:

ներից հաջորդ տողն է անցնում միայն վերջին բաղաձայնը՝ *ար-չան, բուր-ժու-ա-կան, բեր-րի, Աստ-ղիկ, Արծ-վիկ, քարգ-ման, բարչ-րանա, երկ-դի-մի, ա-ռանցք-ներ:*

զ) **Յ** հնչյունին նախորդող բաղաձայնը կամ բաղաձայններից վերջինը կարող է **յ**-ին միացած անցնել, կարող է նաև չանցնել հաջորդ տող՝ *անկ-յուն* և *ան-կյուն, արդ-յոք, ար-դյոք, գոչ-յուն, գո-չյուն, գիտութ-յուն, գիտու-թյուն, կուսր-յուն, կու-տյուն, Հակոբ-յան, Հակոբ-յան, հոբել-յար, հոբե-լյար, մար-յան, մա-տյան, սեն-յակ, սե-նյակ, սին-յոր, սի-նյոր, վա-լյուրա, վա-լյուրա, ուխտ-յալ, ուխ-տյալ:*

դ) Բառամիջի ձայնավորից առաջ ընկած **ե**-ը տողադարձի ժամանակ գրվում է **եվ**, և **վ**-ն անցնում է հաջորդ տող՝ *Երե-վան, բարե-վել, սե-վաթույր, տերե-վաթափ:*

2) Գաղտնավանկ **ը** ունեցող բառերի տողադարձի դեպքում **ը**-ն գրվում է միայն տողավերջի և հաջորդ տողի սկզբի վանկերում, *չըդ-բա, կը-տըր-տել, Մը-կըրտիչ, Սկըր-տիչ, երբե-մըն, գըլ-խավոր, նույն ձևով նաև փոխառյալ բառերում և փոխառյալ ձևույթներով կազմված բաղադրություններում* *Էլեկ-տրոական, մանա-տրոր* (նաև՝ *մանտր-րո*), *Էքս-պրորտրիացիա, Էքսպրո-պրրիացիա:*

3) **Չբ, գգ, շբ, սպ, սբ** և նման հնչյունակապակցություններով սկսվող հատուկ անունների հիշյալ հնչյունակապակցությունները տողադարձի ժամանակ հաջորդ ձայնավորից չեն անջատվում, որպեսզի հատուկ անունը **Ը**-ով չսկսվի, պետք է տողադարձել՝ *Ստե-փան, Սպար-տակ, Ստրաս-բուրգ* և ոչ թե՝ *Ըս-տեփան, Ըս-պարտակ, Ըսր-բասբուրգ:*

4) Միաժամանակ պետք է խուսափել տողադարձի ժամանակ ավելորդ **ը** ներմուծելուց, փոխանակ գրելու՝ *խառնը-վածք, մարմը-նի, կազմը-վել, կարմը-րություն, վերցը-նել, հարցը-րին, էքս-կուրսիա, սուբս-տրատ, ինքը-նիշխան, համը-ընթաց, մարի-տըն* (ընկավ), *Դա-վի-թըն* (ասաց) և այլն, պետք է գրել՝ *խառն-վածք, մարմ-նի, կազմ-վել, կարմ-րություն, վերց-նել, հարց-րին, էքս-կուրսիա, սուբս-տրատ* կամ *սուբստ-րատ, ինք-նիշխան, ինքն-իշխան, համ-րընթաց, համ-ընթաց, մա-տիտըն* (ընկավ), *Դա-վիթըն* (ասաց):

5) Բարդ և նախածանցավոր բառերը կարելի է տողադարձել

նան առանց վանկատման՝ հաջորդ տողը փոխադրելով արմատը կամ ամբողջական բառը. ոչ միայն կարելի է տողադարձել՝ *արագընթաց, գերբ-նական, ս-նօգուր, հս-կազդեյ, ծո-վեզր, ինք-նիշխան, համ-րընթաց, վայ-րէջք*, այլ նաև՝ *արագ-ընթաց, ան-օգուր, ան-որոշ, հակ-ազդեյ, ծով-եզր, գեյր-ափ, ինքն-իշխան, համր-ընթաց, վայր-էջք*:

6) Եթե բարդ կամ նախածանցավոր բառի հաջորդ տողն անցնող մասը **ը** գաղտնավանկով սկսվող արմատ կամ նրանով կազմված բառամաս է, ապա այդ գաղտնավանկի **ը**-ն չի գրվում՝ *դարա-գլուխ, երկնա-սլաց, լեռնա-բնակ, գրա-քննիչ, շարա-դրեյ, հակա-կղերական, սպա-շնորհ, դիմա-դրման, հաշվե-րվություն, արև-մայրան, հակա-կրանք, նախա-դրյալ, բացա-րորական*:

Չակերտների գործածությունը

1. Չակերտներում առնվող անունների հոլովական վերջավորություններն ու հոդերը գրվում են չակերտներում անվան վերջին բաղադրիչին միացած, օրինակ՝ «*Մայրենի լեզվի*» վերջին հրատարակությունը, «*Փարիզը*» «*Մասայաց աղավնու*» հակառակորդն էր, Հովհաննիսյանը ոգևորված էր Շահագիզի «*Լեռնի վշտով*», «*Շունն ու կարվի*» բարբառային լեզուն, հատված «*Սպանված աղավնիից*», «*Անուշի*» առաջին տարբերակը, Հր. Քոչարի «*Գեներալի քրոջ*» հերոսների նախատիպերը, Վ. Անանյանի «*Հայրենի քիփ*» թարգմանությունը, Իսահակյանի «*Մեծ հաղթանակի օրվա*» ռիթմը, «*Պեպոյի*» գլխավոր դերակատարը, Դեմիրճյանին հարցրին՝ սա «*Վարդանանքիդ*» ո՞ր հրատարակությունն է, «*Գրական քերթի*» հասցեն, «*Բորոտիսիան*» ընդդեմ «*Բավարիայի*», «*Արարարի*» պաշտպանը գրավեց «*Փյունիկի*» դարպասը, «*Հառաչանքը*» աչքի է ընկնում իր ռեալիստական կոորդիտով, «*Հրագդանը*» լեվ-լեցուն էր, «*Արմենիայի*» նավապետը մոտեցավ մեզ:

2. Չակերտներում առնվող անունների հոլովական վերջավորություններն ու հոդերը գրվում են չակերտներից դուրս՝ գծիկով անջատված, միայն այն դեպքերում, երբ անվան և վերջավորության

կամ հողի միացած գրությունը առաջ է բերում հայերենի համար անսովոր ձևեր կամ դժվարացնում է բնագրի ընկալումը: Մասնավորապես.

ա) Եթե անունը արտահայտված է ամբողջական նախադասությամբ, օրինակ՝ «*Ղազարը գնում է պարերազմ*»-ի գլխավոր դերակատարը, հատվածներ Բ. Հովսեփյանի «*Մերմնացանները չվերադարձան*»-ից, «*Արև, արև, եկ, եկ*»-ի երաժշտությունը, տեսարան «*Բանի դեռ սայլը շուռ չի եկել*»-ից, լեզվով շատ է նման «*Մեռան չկորան*»-ին, օրինակներ՝ «*Սպիտակին է փախիս առազասուր մենավոր*»-ի թարգմանությունից, հեղինակը «*Այն Լոռու չորն է*»-ն փոխել է «*Էն Լոռու չորն է*»-ով, Գ. Սարյանի «*Դուք ո՞ր եք գնում, ծիծեռնակներ*»-ի բանաստեղծական շունչը, «*Եղբայր եմք մեք*»-ը վաղուց է երգվում:

բ) Եթե անունը բաղադրյալ լինելու դեպքում վերջին բաղադրիչը կան բառի հոլովածն է, կան չհոլովվող բառ, կան անձնական ու ցուցական դերանուն, օրինակ՝ երգեցին «*Ամսի փակից*»-ը, Իսահակյանի «*Հին ու նոր երգ ու վերքերից*»-ի բնագիրը, «*Վարդապետարան կրոնի հասարակաց հայտնություն*»-ի հեղինակը, Վ. Վաղարշյանի «*Արշալույսին*»-ի բեմադրությունը, «*Անրառում*»-ի տաղաչափական արվեստը, Գ. Չոհրապի «*Կարծեմ քե*»-ի հերոսի հոգեբանությունը, «*Լենինգրադ, քեզ համար*»-ը հեղինակին ճանաչում բերեց, «*Հայաստանը երգերի մեջ*»-ը բանաստեղծաչարի խորագիրն է, «*Երգ մեր քարերի մասին*»-ի տաղաչափությունը, Նար-Դոսի «*Ես և նա*»-ի հերոսը, քառատող Դուրյանի «*Նե*»-ից, Պուշկինի «*Դու և ես*»-ի թարգմանությունը:

գ) Եթե անունը բերված է օտար կամ կրճատ գրությամբ, անվան վերջին բաղադրիչը թվանշան կամ տառային հապավում է. օրինակ՝ «*Հ. Հ.*»-ի փոստից, «*Օլիմպիադա-80*»-ի նախապատրաստությունները, հաղորդում «*Սոյուզ-31*»-ից, «*Երգ-77*»-ի հաղթողները, «*ՄԻԳ*»-ի օդաչուն:

Ծանոթություն 1. Իբրև բացառություն՝ կարելի է հոլովական վերջավորությունը կամ հողը չակերտներից դուրս գրել նաև այն դեպքում, երբ վերջա-

վորության կամ հողի անջատ գրությամբ անհրաժեշտ է առանձնացնել անվան ուղիղ ձևը՝ այն հատակ ու հասկանալի դարձնելու նպատակով, օրինակ՝ Այս պատմավիճիկայությունը գալիս է «*Վահագն*»-ից, «*Ազգային երազ*»-ից, «*Անակնկալ հանդիպում*»-ից, «*Ուորկեր*»-ի վերջին հոդվածը մեծ հետաքրքրություն առաջ բերեց:

Ծանոթություն 2. Նախադասությամբ արտահայտված կամ հղովված բառով վերջացող որոշ անունների հղովակյան վերջավորություն կամ հողավելացնելու դեպքում երբեմն առաջանում են անվան ընկալումը դժվարացնող ու հայերենին անսովոր ձևեր: Նման անսովոր ձևերից խոսափելու համար խորհուրդ է տրվում անվան հետ գործածել համապատասխան լրացյալ, այսինքն՝ փոխանակ գրելու «*Զինվորը վերադառնում է տուն*»-ի կամ «*Զինվորը վերադառնում է տան*» դերակատարները, «*Վրաց ժողովրդին*»-ի տաղաչափական արվեստը, արտասանեց «*Նվեր մայրիկիս*»-ը, հատվածներ «*Մարյան ողբերգության*»-ից, պետք է գրել՝ «*Զինվորը վերադառնում է տուն*» կինոնկարի դերակատարները, «*Վրաց ժողովրդին*» բանաստեղծության տաղաչափական արվեստը, արտասանեց «*Նվեր մայրիկիս*» բանաստեղծությունը, հատվածներ «*Մարյան ողբերգության*» պոեմից:

ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Բառագիտությունը³³ լեզվաբանության այն բաժինն է, որն ուսումնասիրում է լեզվի բառային կազմը՝ բառապաշարը իր արդի վիճակում և պատմական զարգացման մեջ:

Բառագիտության ուսումնասիրության առարկան նախ և առաջ բառն է: Բառագիտության համար բառը կարևոր է, մի կողմից, իբրև ինքնուրույն միավոր՝ նրա բառային ու իմաստային առանձնահատկությունները ուսումնասիրելու, մյուս կողմից, իբրև լեզվի բառային կազմի՝ բառապաշարի միավոր՝ բառային համակարգը քննելու տեսակետից:

Տարբերակվում են նկարագրական և պատմական բառագիտությունները.

ա) **Նկարագրական բառագիտությունը** համաժամանակյա դիտակետով, այսինքն՝ լեզվի զարգացման տվյալ փուլի փաստերի հիման վրա, քննում է բառն ու նրա իմաստները, լեզվի բառային կազմի կամ բառապաշարի ծավալը և կառուցվածքը, ինչպես նաև բառերի գործածության ոլորտների, ոճական բնութագրման և այլ հարցեր:

բ) **Պատմական բառագիտությունը** տարժամանակյա դիտակետով ուսումնասիրում է լեզվի բառային կազմը իր զարգացման մեջ, ներկայացնում է բառապաշարի կրած փոփոխությունները լեզվի պատմության ընթացքում: Այն քննում է լեզվի բառապաշարի կազմավորման ու փոփոխման, բառի գործածության և բառիմաստի տարբեր փոփոխություններին վերաբերող հարցերը:

Լեզվի բառային կազմի ուսումնասիրությունը ավելի համակողմանի կարող է լինել, երբ այն կատարվում է միաժամանակ և՛ նկա-

³³ Հայերեն **բառագիտություն** բառը կազմված է օտար **лексикология**, **lexikologie** բառի նմանողությամբ: Վերջինս բաղադրված է հունարեն **lexikos** «բառային» և **logos** «ուսմունք, գիտություն» բառերից:

րագրական, և՛ պատմական բառագիտության միջոցով, այսինքն՝ համաժամանակյա և տարժամանակյա դիտակետերով: Այդ դեպքում ոչ միայն արձանագրվում են բառապաշարի արդի և անցյալ վիճակների օրինաչափությունները, այլև պատմական փաստերով պարզաբանվում են բառային կազմի ժամանակակից իրակությունները, որ շատ կարևոր է նյութի ամբողջական պատկերացման և ըմբռնման համար:

Անհրաժեշտ է նշել նաև, որ բառի ու բառիմաստների տարբեր փոփոխություններն ընդհանրապես հնարավոր չէ բացատրել առանց պատմական, տարժամանակյա մեկնաբանության:

Ժամանակակից հայոց լեզվի արևելահայ գրական տարբերակի բառագիտության ուսումնասիրության նյութը նրա բառային կազմի՝ բառապաշարի ողջ հարստությունն է: Բառապաշարի մեջ է մտնում նաև դարձվածաբանությունը, լեզվում առկա դարձվածքների ամբողջությունը:

Բառագիտության բաժիններն են՝ **բառի ուսումնքը, իմաստաբանությունը, ստուգաբանությունը, բառակազմությունը և դարձվածաբանությունը**: Բառագիտության մեջ են առնում նաև **բառարանագրությունը**:

Բառի ուսումնքը բաժնում քննվում են բառի ուսումնասիրության բնագավառները, բառի սահմանումը, նրա առանձնահատկությունները, հիմնական հատկանիշները, բառի և հասկացության, բառի և լեզվի իմաստային այլ միավորների կապերն ու հարաբերությունները:

Իմաստաբանության (և ստուգաբանության) բաժնում քննվում են բառի և բառիմաստի առանձնահատկությունները, բառիմաստի տեսակները, նրա տարբեր փոփոխությունները, հայերենի համանունները, հոմանիշները, հականիշները, բառերի ստուգաբանության ընդհանուր օրինաչափությունները:

Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը բաժնում քննվում են բառային կազմի և հիմնական բառաֆոնդի փոխհարաբերության հարցերը, այնուհետև հայերենի բառապաշարը ներկայացվում է ըստ գործուն ու ոչ գործուն կազմի, ըստ ծագման, ըստ լեզվի տարբեր

ողորտների, ոճական կիրառության և հուզաարտահայտչական գա-
նազան գունավորման:

Քառակազմության բաժնում ուսումնասիրվում են բառերի տե-
սակները ըստ կազմության, բառերի բառակազմական կաղապար-
ները, կազմության ձևերն ու եղանակները:

Ժամանակակից հայոց լեզվի **դարձվածաբանության** բաժնում
քննվում են դարձվածքների ընդհանուր առանձնահատկությունները,
իմաստի միաձուլության ու կառուցվածքի տեսակետից դարձվածք-
ների տարբեր տիպերը, դարձվածքների իմաստներին, հոմանշությու-
նը, տարբերակներին, ծագմանն ու գործածությանը վերաբերող հար-
ցերը:

Քառաբանագրության բաժնում ներկայացվում են բառաբանա-
գիտության հիմնական հասկացությունները, տարբեր տիպի և
բնույթի հայերեն և հայերենին առնչվող հիմնական բառաբանները:

Քառի ուսմունքը

Մարդկային լեզվի իմաստային հիմնական միավորը բառն է, որը
և նախադասության հիմնական բաղադրատարրն է: Լեզուն թեև իր
հաղորդակցման կարևոր դերը նախադասության շնորհիվ է կատա-
րում, բայց, այնուհանդերձ, բառը մնում է իբրև լեզվի հիմնական,
կենտրոնական միավոր անկախ այն բանից, թե լեզվի մեկնակետը
նախադասությունն է համարվում, թե ձևույթը (հնչյունի և իմաստի
միաձուլության տեսակետից նվազագույն միավորը):

Բառը քննության առարկա է ծառայում ինչպես բառագիտու-
թյան, այնպես էլ հնչյունաբանության ու քերականության համար:

Հնչյունաբանության տեսակետից քննվում է բառի հնչյունային
կազմը, այսինքն՝ քննության են ենթարկվում բառը կազմող հնչյուն-
ները, որոշվում՝ նրանց հնչյունափոխական օրինաչափությունները,
տիպերը, տեսակները և այլն:

Քերականության տեսակետից երևան են հանվում բառի պատ-
կանելությունը այս կամ այն խոսքի մասին, բառի առանձնահատուկ
քերականական իմաստներն ու քերականական ձևերը, բառերի դերը

կամ պաշտոնը նախադասության մեջ, բառերի տարբեր կապակցությունները:

Նկարագրական բառագիտության տեսակետից վեր է հանվում այն ամենը, ինչ կապված է բառի իմաստի հետ, որոշվում են բառիմաստի տիպերը, բացահայտվում բառի գործածության ոլորտները, նրանց ոճական տարբեր գունավորումները:

Պատմական բառագիտության համար կարևորը լեզվի զարգացման տարբեր փուլերում բառի ծագման, նրա իմաստի, գործածության ոլորտների, ոճական պատկանելության փոփոխությունների հարցերն են:

Բառերի տիպերի և տեսակների, ինչպես նաև իմաստաբանական և կառուցվածքային-քերականական հատկանիշների բազմազանությունը դժվարացնում է բառի համակողմանի գիտական սպառնիչ սահմանումը: Այդ է պատճառը, որ լեզվաբանական գրականության մեջ մինչև այժմ դեռևս չկա բառի՝ բոլորի կողմից անվերապահորեն ընդունելի սահմանում: Չափազանց դժվար է հսկիլը սահմանման մեջ ամփոփել նրա բոլոր առանձնահատկությունները: Եղած բազմաթիվ սահմանումներն էլ այս կամ այն չափով թերի են ու միակողմանի³⁴:

Բառը սահմանելիս, առաջին հերթին, պետք է հաշվի առնել բառի էական հատկանիշները, որոնք անհրաժեշտ է ճշտորեն առանցնացնել ոչ էական, երկրորդական հատկանիշներից, դրանք տարբերակելու համար պետք է համակողմանի և մանրամասն ուսումնասիրվեն և բացահայտվեն բառի բոլոր ներքին առանձնահատկությունները և այն բոլոր հատկանիշները, որոնցով այն տարբերվում է լեզվական այլ միավորներից:

Ժամանակակից լեզվաբանական գրականության մեջ բառը սահմանվում է իբրև **լեզվի իմաստային նվազագույն (կարճագույն), հիմնական, ինքնուրույն և ազատ միավոր, որով նախադասություն է կազմվում:**

Բառն իբրև լեզվի իմաստային հիմնական, ինքնուրույն և ազատ

³⁴ Բառի տարբեր սահմանումների մասին տե՛ս սույն դասագրքի նախորդ հրատարակություններում (օրինակ՝ Երևան, 2008, էջ 92-93):

միավոր, իր հնչյունական կազմով արտահայտում է հասկացություն՝ առարկայի, գործընթացների, օբյեկտիվ իրականության երևույթների, նրանց հատկանիշների կամ իրար հետ ունեցած հարաբերությունների մասին:

Քառի՝ իբրև լեզվական միավորի հիմնական հատկանիշները հետևյալներն են համարվում³⁵.

ա) հնչյունական ձևավորվածությունը (քառի հնչյունական կազմը),

բ) բառաիմաստաբանական հատկանիշը (քառի բառային իմաստը),

գ) քերականական հատկանիշը (քառի ձևաբանական կառուցվածքը և բառը՝ որպես նախադասության բաղադրիչ մաս կամ հնարավոր նվազագույն տարր, միավոր):

1) Քառի հնչյունական կազմը կամ հնչյունական ձևավորվածությունը:

Քառի հնչյունային (հնչյունական) կողմը այն է, որ յուրաքանչյուր բառ ունի իր հնչյունական կազմը: Ըստ որում, այն կազմվում է մեկ կամ ավելի հնչյուններից: Ժամանակակից հայերենում, օրինակ, մեկ և սակավաթիվ հնչյուններից են կազմվում ձայնարկությունները: Հնչյունական տեսակետից պարզ կազմություն ունեն մաս բնածայնական բառերը, որոշ շաղկապներ, նախդիրներ (**ու, ի**) և այլն:

Քանակական տեսակետից ժամանակակից հայերենում բառերը սովորաբար կազմված են մեկից ավելի հնչյուններից և ներկայացնում են բաղաձայնների ու ձայնավորների տարբեր գույգորումները:

Այսպիսով, բառը՝ որպես լեզվի իմաստային միավոր, անպայմանորեն պետք է հնչյունային ձևավորում ունենա (իսկ գրավոր լեզվում, խոսքում մաս՝ գրային ձևավորում)³⁶: Ըստ որում, յուրաքանչյուր բառային միավոր «միշտ հանդես է գալիս իբրև հնչյունային-կառուցվածքային միասնություն, որը համապատասխանում է տվյալ լեզվի

³⁵ Տե՛ս *Шанский Н. М.*, Лексикология современного русского языка, Москва, 1972, с. 11:

³⁶ *Շանսկի Ն. Մ.*, նշվ. աշխատ., էջ 15:

համակարգի հնչյունախոսական կանոններին»³⁷: Մրանից հետևում է, որ հայերենում բառերը՝ իբրև որոշակի հնչյունական ամբողջություն, խստիվ ենթարկվում են լեզվի հնչյունաբանական օրինաչափություններին, որոնք պայմանավորված են հայերենի հնչյունական համակարգի հնարավորություններով: Այդ է պատճառը, որ փոխառության դեպքում օտարազգի բառերը յուրացնելիս հայերենը վերջիններս ենթարկում է իր հնչյունական գործող կանոններին:

2) **Բառի իմաստային կողմը:** Բառը, կազմված լինելով հնչյունից կամ հնչյուններից, ունի որոշակի իմաստ: Իմաստատարբերակիչ դեր կատարող հնչյունները (այսինքն՝ հնչույթները) միայն ինքնին վերցրած չունեն իմաստներ և նույնիսկ անմիջականորեն կապված չեն իմաստների հետ, միայն լեզվի իմաստային միավորների հնչյունային պատյանն են³⁸: Հնչույթը ձեռք է բերում այս կամ այն իմաստը, երբ այն հանդես է գալիս իբրև բառի կամ ձևույթի հնչում³⁹: Այդ պատճառով էլ հնչույթի (հնչյունի) և բառի տարբերությունը հստակորեն է գիտակցվում, որովհետև հնչյունները լեզվում իմաստային միավորներ չեն: Մյուս կողմից, բառիմաստը ինքնին՝ վերացականորեն, հասարակայնորեն որպես բառ գիտակցվող հնչյունից դուրս գոյություն չունի: Բառի մեջ հնչյունային և իմաստային կողմը, հնչյունն ու իմաստը հանդես են գալիս անքակտ միասնության մեջ: Իրականում բառի հնչյունական կազմը և նրա արտահայտած իմաստը սերտորեն կապված են իրար և իրարից անկախ գոյություն ունենալ չեն կարող:

Բառը կարող է ունենալ բառային ու քերականական իմաստներ:

Բառի քերականական իմաստը բառի բառային իմաստին տրվող լրացուցիչ իմաստն է և արտահայտում է զանազան հարաբերություններ (բառի տարբեր պաշտոնները նախադասության մեջ, բառակապակցության կամ նախադասության մեջ բառերի, գործողություն կա-

³⁷ *Виноградов В. В.*, О фонемах слова, Известия АН СССР, Отдел литературы и языка, 1944, том 3, вып. 1, с. 31.

³⁸ *Аванесов Р. И.*, Фонетика современного русского литературного языка, Москва, 1956, с. 15.

³⁹ *Левковская К. А.*, Теория слова, Москва, 1963, с. 101. *Շանկի Ն. Մ.*, նշվ. աշխատ., էջ 17:

տարողի կամ այլ անձի հարաբերություններ, հաղորդվող փաստի հարաբերությունը իրականությանը կամ ժամանակին, խոստով հարաբերությունը հաղորդվածին և այլն):

Մովորաբար բառն ունենում է մի քանի քերականական իմաստներ: Օրինակ՝ **տուն** – ուղղական հոլով՝ հոլովական գրո վերջավորությամբ, եզակի թիվ, անորոշ առում: **Գրեցի** – ներգործական սեռ, սահմանական եղանակ, անցյալ կատարյալ ժամանակ, առաջին դեմք, եզակի թիվ և այլն: Մյուս կողմից՝ այդ նույն **տուն** բառը իր ուղիղ և թեքված ձևերով խոսքի մեջ տարբեր նախադասություններում տարբեր պաշտոններ կարող է ստանալ:

Այսպիսով, լեզվում քերականական իմաստներն արտահայտվում են հիմնականում բառերի ձևերով, ունեն իրենց ձևաբանական կամ շարահյուսական դրսևորումները: Դրանք կազմվում են վերջավորություններով, ներքին թեքմամբ, տարարմատությամբ և տարահիմքությամբ, հոդերով, օժանդակ բառերով:

Բառի բառային իմաստը բառի բովանդակությունն է. դա այն հարաբերակցությունն է, որ հաստատվում է բառի հնչյունական կողմի (հնչյունային կազմի) և առարկայի, երևույթի ու օբյեկտիվ իրականության միջև: Բառի իմաստը մտնում է բառի կառուցվածքի մեջ որպես բովանդակություն, ներքին կողմ, որի նկատմամբ բառի հնչյունային կազմը հանդես է գալիս իբրև նրա արտաքին կողմ՝ նյութական պատյան: Բառի մեջ այդ ներքին և արտաքին կողմերի միասնությունը արտահայտված է բառի իմաստի և հնչման (հնչյունային կազմի) միջև մշտական և անքակտ կապի հաստատմամբ: Այսպես, **մարդ** բառի «մտածելու և խոսելու կարողությամբ օժտված կենդանի էակ» իմաստը և հնչյունային կազմը պայմանավորված են նրա ներքին և արտաքին կողմերի՝ բովանդակության և հնչյունային կազմի միասնությամբ, նրանց մեջ գոյություն ունեցող մշտական և անքակտ կապով:

Բառ և հասկացություն⁴⁰: Բառը և հասկացությունը իրար նկատմամբ որոշակի հարաբերության մեջ են գտնվում: Բառը լեզվի իմաս-

⁴⁰ Բառի և հասկացության մասին տե՛ս *Աղայան Էդ.*, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 9, 25-28:

տային միավոր է, որով նախադասություն է կազմվում, իսկ հասկացությունը՝ իբրև տրամաբանական միավոր, նշանակում է օբյեկտիվ իրականության առարկան կամ երևույթը՝ գիտակցության մեջ արտացոլված:

Լեզվում միևնույն հասկացության համար հաճախ առկա են լինում մի քանի բառեր, թեև չի բացառվում նաև հակառակ երևույթը, երբ լեզվում տարբեր հասկացություններ արտահայտվում են միևնույն բառով: Հետևաբար հասկացությունն ու բառը ձևականորեն նույնպես չի կարելի նույնացնել: Հասկացությունները իբրև օբյեկտիվ աշխարհի այլևայլ առարկաների, երևույթների, հատկանիշների կրողներ, իրենց նյութական արտահայտությունն են ստանում հնչյունական որոշակի կաղապարի մեջ, բառերի շնորհիվ: Իբրև տրամաբանական կարգ, հասկացությունները լեզվական արտահայտություն են ստանում բառի մեջ և բառի շնորհիվ, հնչյունական որոշակի կազմով (կաղապարով) և բառային որոշակի իմաստով:

Այսպիսով, բառիմաստը բառի մեջ պարունակվող այն բովանդակությունն է, որ կապված է հասկացության հետ՝ որպես գիտակցության մեջ օբյեկտիվ աշխարհի առարկաների, երևույթների, հատկանիշների և այլնի արտացոլման արդյունք:

Բառի արտահայտած հասկացությունը մեկն է, իսկ բառի իմաստը կարող է մեկից ավելի լինել, օրինակ՝ հայերեն **կրակ** բառն ունի 10-ից ավելի առանձին իմաստներ՝ *«խարույկ, օջախ, բոց, հրդեհ, աշխույժ, ճարպիկ, քանկ»* և այլն:

Հասկացությունը իրականության օբյեկտիվ արտացոլումն է, մինչդեռ բառիմաստին կարելի է ավելացնել սուբյեկտիվ գնահատական (օրինակ՝ **որդի-որդյակ, աղավնի-աղավնյակ, մայր-մայրիկ, հայր-հայրիկ, սիրուն-սիրունիկ**, կամ՝ **մեռնել-վախճանվել-հոգին ավանդել-հրեշտակների հետ խոսել և սատկել-շանսատակ լիել-դժոխքը գնալ-Ալլահի ծոցը գնալ** և այլն):

Բառիմաստը գոյանում է բառի բառային իմաստից, նրա նյութական բովանդակությունից (որն արտահայտում է բառի հիմքը) և քերականական իմաստից, այն իմաստից, որը ցույց է տալիս տարբեր հարաբերություններ և սովորաբար իր արտահայտությունն է գտնում բառի ձևական պատկանելության մեջ:

Բառի և լեզվի իմաստային մյուս միավորների կապը: Լեզվի իմաստային միավորներն են նաև ձևույթները: Ձևույթը բառի այլևս չբաժանվող, չտարրալուծվող իմաստային մասն է: Այն արդեն բառի իմաստային նվազագույն միավորն է:

Ձևույթը սահմանվում է իբրև ձևի և իմաստի միասնություն կազմող նվազագույն լեզվական միավոր*:

Բառի և ձևույթի միջև ընդհանուրն այն է, որ և՛ բառերը, և՛ ձևույթները իմաստներ ունեն, բայց տարբերվում են ինչպես իրենց իմաստների բնույթով, այնպես էլ գործածությամբ: Բառը անկախ գործածություն ունի, այնինչ ածանցները և քերականական մասնիկները, շատ արմատներ ինքնուրույն, անկախ գործածություն չունեն:

Բառի և ձևույթի էական տարբերությունն այն է, որ նրանք պատկանում են լեզվական տարբեր մակարդակներին: Ձևույթն իբրև իմաստային միավոր իրեն իրացնում, դրսևորում է բառի մեջ, մինչդեռ բառը գործածվում է նախադասության մեջ: Մյուս կողմից, բառն օժտված է բառաքերականական վերաբերությամբ: Ձևույթները գոյություն ունեն բառի մեջ որպես իմաստային տեսակետից անբաժանելի միավորներ, նրանք չունեն բառաքերականական վերաբերություն, հանդես են գալիս միայն իբրև իմաստային մասեր, որոնք գուրկ են ոչ միայն որևէ ձևաբանական ձևավորվածության հատկանիշից, այլև չեն պատկանում որևէ բառաքերականական կարգի՝ որևէ խոսքի մասի⁴¹:

Բառի ամբողջական ձևավորվածությունը և բառական շեշտը: Բառի հիմնական հատկանիշներից են նրա ամբողջական ձևավորվածությունը և բառական շեշտը:

Բառը բառակապակցություններից և դարձվածքներից տարբերվում է իր ձևավորման ամբողջականությամբ (ամբողջաձևավորվածությամբ): Բառի ամբողջական ձևավորվածություն տերմինով հասկացվում է նրա հանդես գալը իբրև լեզվի իմաստային, ամբողջական, անբաժանելի միավոր, որը հնարավոր չէ տարրալուծել, ինչպես նաև

* Ձևույթների մասին ավելի մանրամասն տե՛ս էջ 252-259:

⁴¹ Տե՛ս *Սովորնիցկի Ա. Բ.*, նշվ. աշխատ., էջ 194:

նրանում հնարավոր չէ լեզվական այլ միավորների մուծումը առանց նրա իմաստի ամբողջությունը վոխելու կամ խեղաթյուրելու:

Բառը ինչպես ձևությներից, այնպես էլ բառակապակցություններից ու դարձվածքային միավորներից տարբերվում է նաև նրանով, որ ունի մեկ հիմնական բառային շեշտ: Ինչպես հայտնի է, ձևայինները գուրկ են դրանից, իսկ բառակապակցություններն ու դարձվածքները օժտված են մեկից ավելի շեշտով:

Բառի գործառույթները

Բառի գործառույթը խոսքի մեջ բառային միավորի կենսագործունեության նպատակն ու կոչումն է, նրա իրացումը: Ըստ այդմ էլ՝ բառի հիմնական գործառույթներն են.

ա) **Անվանողական գործառույթ:** Երբ բառը հանդես է գալիս իբրև առարկայի, երևույթի, հատկանիշի և այլնի անվանում:

բ) **Հաղորդակցման գործառույթ:** Երբ բառը հանդես է գալիս իբրև լեզվի հաղորդակցման և հաղորդման միջոց:

գ) **Գեղագիտական գործառույթ:** Երբ բառը հանդես է գալիս իբրև գեղարվեստական արտահայտչականության միջոց:

Բառ, բառույթ և բառածև: Բառը լեզվի իմաստային նվազագույն, ավարտուն և ինքնուրույն միավոր է՝ քերականական որոշակի ձևավորվածությամբ:

Բառույթը լեզվի միավոր է, լեզվական համակարգի կառուցվածքային տարր: Այն բառն է՝ իր բառային հատկանիշներով, երբ բառը հանդես է գալիս որպես բառապաշարի ինքնուրույն միավոր՝ ի տարբերություն խոսքում, նախադասության մեջ բառի ձեռք բերած քերականական զանազան իմաստների և ձևավորությունների:

Բառածևը բառի գործառական իրացումն է (ավելի մանրամասն տե՛ս էջ 256-257):

Բառի տարբերակները

Բառի տարբերակ կարելի է համարել այն միավորները (կազմությունները), որոնք ունեն համարյա նույն ձևային կազմը, նրանց

միջև տարբերությունն այնքան չնչին է, որ ամբողջությամբ առած չի խախտում բառային տվյալ միավորի միասնությունը:

Ժամանակակից հայերենում բառի տարբերակ պետք է համարել միայն միևնույն բառի հնչյունական-ուղղագրական տարատեսակը կամ տարբերակը: Ինչ վերաբերում է, այսպես կոչված, քերականական կամ ձևաբանական տարբերակներին, դրանք պարզապես հոլովված, խոնարհված, հոգնակի վերջավորություն, հոդ ստացած բառաձևերն են, որոնց ճիշտ չէ բառի բուն տարբերակ համարել: Ուրեմն՝ բառի ուղղագրական կամ հնչյունային տարբերակը կապված չէ նրա հարացուցային կամ ձևաբանական այլևայլ փոփոխությունների հետ: Դրանք նույն բառի հնչյունական տարբեր դրսևորումներն են, որոնցից մեկը լեզվի զարգացման տվյալ փուլի համար համարվում է ճիշտն ու ընդունելին և օրինականացվում է: Բացառիկ դեպքերում ընդունվում է միևնույն բառի երկակի գրությունը կամ արտասանությունը:

Այսպիսով, ժամանակակից հայերենում բառի ուղղագրական կամ հնչյունական տարբերակները զանազան պատճառներով միևնույն բառի տարբեր գրությամբ արտահայտված ձևերն են. ինչպես՝ **գեղգեղալ–գեղգեղել, մախաղ–մաղախ, ող–ողն, պասիվ–պասսիվ, հաչել–հաչալ, մրթմրթալ–մոթմոթալ** և այլն:

Բառի ուղղախոսական տարբերակներ են համարվում նրա տարբեր հնչումները, որոնք գրավոր չեն արտահայտվում: Հաշվի առնելով բառի արդի արտասանությունը՝ մեր լեզվում կարելի է նկատել նաև ուղղախոսական տարբերակներ. ինչպես՝ **գրաբար–գրա[փ]ար, կարգ–կար[ք], արձան–ար[ց]ան** և այլն:

Լեզվի զարգացման արդի փուլում լեզվական համակարգի միօրինականացման և հատկապես ուղղագրության դյուրացման նպատակով Տերմինաբանական կոմիտեի որոշումներով և ուղղագրական բառարանների միջոցով նվազագույնին են հասցված ժամանակակից հայերենի բառերի ուղղագրական կամ հնչյունական տարբերակները:

Լիինաստ բառեր և սպասարկու բառեր

Ժամանակակից հայերենի բառերը ստորաբաժանվում են **լիինաստ** կամ **ինքնուրույն** բառերի և **սպասարկու** բառերի:

ա) **Լիինաստ բառեր:** Դրանք այն բառերն են, որոնք օժտված են ինքնուրույն բառաառարկայական իմաստով, կատարում են անվանողական դեր, անվանում են առարկան, հատկանիշը, գործողությունը, օբյեկտիվ իրականության զանազան հարաբերությունները և ինքնուրույնաբար հանդես են գալիս որպես նախադասության անդամ: Դրանք ներկայացնում են գոյական, ածական, թվական, բայ, մակբայ, դերանուն խոսքի մասերը, ինչպես՝ **տուն, գիրք, մարդ, գալ, գնալ, վազել, կարմիր, դեղին, լավ, վատ, նոր, մեկ, երեք, արագ, հաճախ, ես, դու, այս, որքա՞ն** և այլն: Լիինաստ բառերում բառի բառային իմաստը գերիշխում է քերականական իմաստի վրա:

բ) **Սպասարկու բառեր:** Դրանք այն բառերն են, որոնք անվանողական դեր չեն կատարում, չեն անվանում առարկաները, գործողությունը, հատկանիշները, այլ ծառայում են օբյեկտիվ իրականության առարկաների և երևույթների անվանումների, լիարժեք բառերի տարբեր հարաբերություններն արտահայտելուն և գործածվում են գլխավորապես միայն վերջիններիս հետ: Սպասարկու բառերը ձևաբանական փոփոխման չեն ենթարկվում, չեն հոլովվում կամ խոնարհվում: Չունենալով անվանողական գործառույթ՝ նրանք նախադասության անդամ չեն, այլ գործածվում են իբրև ձևաբանական (քերականական) միջոցներ: Այդ կարգի բառերն անտարակույս օժտված են մաս բառային իմաստով, բայց այդ իմաստները կոնկրետ, առարկայական չեն, այլ՝ ընդհանուր, վերաբերական:

Ժամանակակից հայերենում սպասարկու բառեր են կապերը, շաղկապները, ձայնարկությունները և եղանակավորող բառերը, ինչպես, օրինակ՝ **համար, հետ, առաջ, ու, և, բայց, իսկ, ա՛խ, վի՛շ, թերևս, գուցե** և այլն:

Բնաձայնական բառեր

Մրանք այն բառերն են, որոնք իրենց հնչյունային ձևավորմամբ մարդկանց ինքնաբերական բացականչության արտահայտությունն

են, ներկայացնում են բնության երևույթների ու առարկաների, կենդանիների, թռչունների և այլնի ձայների նմանացումներ, ճիչեր, աղմուկ և այլն: Դրանք օգտագործվում են իբրև իրականության արտացոլման արտահայտչական միջոց:

Արտաքին տեսքով մի շարք բնաձայնական բառեր մոտենում են ձայնարկություններին, բայց տարբերվում են նրանցից, քանի որ չեն արտահայտում զգացմունք, հուզմունք, զեղում և այլն:

Ըստ Հ. Աճառյանի՝ հայերեն բնաձայնական բառերը կազմվում են իրենց առաջին բաղաձայնից, որը և նրանց արմատն է: Բնաձայնական բառերը կազմված են այդ արմատի վրա դրված **ն, չ, նչ, ո** և այլ հնչյուններով կամ ածականներով կամ էլ այդ արմատի կրկնությամբ, ինչպես, օրինակ՝ **շաչեւ, շչեւ, շառաչեւ, շուուկ, շուունջ, ճոխնչ, տոզոց, ֆշշալ, սվսվոց, շրշուն** և այլն:

Հ. Աճառյանի տվյալներով⁴² հայերենի բնաձայնական բառերի թիվը 150-ից անցնում է: Այդ կարգի որոշ բառեր իրենց զուգահեռներն ունեն հնդեվրոպական ցեղակից լեզուներում: Քանի որ բնաձայնական բառերի մեծ մասը ընդհանուր է շատ լեզուների համար, Հ. Աճառյանը դրանք բնիկ հայերեն բառեր չի համարում և չի որոշում դրանց ցեղակցության հարցը:

Ստորև բերում ենք հայերեն բնաձայնական բառերից մի քանիսը, որոնք վերաձվել են լիիմաստ, լիարժեք բառերի՝ **բառաչ, բզզալ, բոմբյուն, բու, գոչեւ, գոռոռոց, դոփեւ, գռալ, խնչեւ, խոխոջ, խրխինջ, կական, կարկաչեւ, կլկլացնեւ, կկու, կնտնտոց, հոպոպ, ճիչ, ճնճողուկ, ճողփյուն, մայեւ, սլավեւ, մրմնջեւ, նվալ, վնկվնկալ, վնգստալ, փնչեւ** և այլն⁴³:

Բառի ներքին ձև

Բառի ներքին ձևը բառահիմքի ձևահնչյունաբանական (ձևահնչույթաբանական) կազմն է, որը ցույց է տալիս բառի հնչման և տվյալ իմաստի պատճառաբանված կապը: Օրինակ՝ **սպիտակահեր**

⁴² Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, 1-ին մաս, Երևան, 1940, էջ 113-116:

⁴³ Նույն տեղում:

«սպիտակ մազեր՝ հեր ունեցող», **գրաստխտակ** «տախտակ, որի վրա գրում են», **կարմրագույն** «կարմիր գույն ունեցող» և այլն:

Բառի ներքին ձևը երևում է բաղադրյալ, հատկապես՝ բարդ բառերում: Այն որոշ չափով դրսևորվում է նաև անձնանունների, օրինակ՝ **անտուն** «տուն չունեցող», **դժբախտ**, **անբախտ** «բախտ չունեցող, բախտից զուրկ», **ուսանողուհի** «իգական սեռի ուսանող», **երևանցի** «Երևանի բնակիչ» և այլն:

Բառի ներքին ձևը իրականում բառի հնչյունական կազմից բխող, բառի հնչյուններով պայմանավորված բովանդակությունն է: Այդ տեսակետից պարզ բառերի ներքին ձևը ժամանակակից հայերենում պատճառաբանված* չէ, և այդ կապը հնարավոր էլ չէ գտնել կամ պարզաբանել:

Բառի՝ իբրև լեզվի նշանային համակարգի միավորի իմաստը ինչպես այլ լեզուներում, այնպես էլ ժամանակակից հայերենում ոչ մի տրամաբանական, պատճառաբանված կապ չունի նրա հնչյունական կազմի՝ հնչյունների հետ: Այդ առումով վերևում նշված բաղադրյալ բառերի, այսպես կոչված, ներքին ձևի մեջ արտահայտված կապը պայմանական, երևութական է: Բարդության մեջ բառերի ներքին երևութական կապը իմաստի հետ նշում է նրա բաղադրիչների արդեն հայտնի իմաստների առկայությունը: Այդ պատճառով էլ պարզ կամ արմատական բառերի այդ ներքին ձևը հնարավոր չէ ցույց տալ: Այս հարցում առանձնակի տեղ կարող են գրավել բնածայնական բառերը և ձայնարկությունները:

Չայնարկություններում (իբրև հոգեկան, զգացմունքային որոշակի գործողություն արտահայտող բառերի) և բնածայնական բառերում (որպես բնության երևույթների, առարկաների, կենդանիների և այլնի աղմուկի, ձայնի, ճիչի նմանակումով կազմված բառերի) որոշ չափով, կարծես թե, հնարավոր է տեսնել այդ ներքին կապը՝ նմանությունը տվյալ բառի համար որպես հիմք ծառայած ձայնին:

* Բառակազմական պատճառաբանվածության մասին ավելի մանրամասն տե՛ս էջ 270-275:

ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ⁴⁴

Հայերենում **իմաստաբանություն** տերմինը երկու իմաստ է արտահայտում: **Իմաստաբանությունը** լեզվաբանության այն բաժինն է, որ զբաղվում է բառերի և դարձվածքային միավորների բառային իմաստներով և նրանց փոփոխություններով: Այս իմաստով իմաստաբանությունը մտնում է բառագիտության մեջ և այն գիտաճյուղն է, որ զբաղվում է բառերի և դարձվածքների բառային իմաստներով, նրանց տարբեր տիպերով, տեսակներով, իմաստային տարբեր հարաբերություններով ու փոփոխություններով:

Իմաստաբանություն նշանակում է նաև ընդհանրապես լեզվական միավորների՝ բառի, դարձվածքի, քերականական ձևի իմաստ (*սեմանտիկա*): Այս նշանակությամբ հայերեն **իմաստաբանություն** բառը ամբողջապես համընկնում է բառի բառային և քերականական իմաստներին, հետևաբար ընդհանուր լեզվաբանության կարգ է և որքանով որ վերաբերում է բառագիտությանը, նույնքանով էլ՝ ձևաբանությանը և ընդհանրապես քերականությանը:

Բառի բառային իմաստ. նրա տիպերն ու տեսակները

Բառի բառային իմաստը բառի բովանդակությունն է, այսինքն՝ նրա հնչյունական կազմի և օբյեկտիվ իրականության առարկայի, երևույթի, հատկանիշի և այլնի միջև եղած հարաբերակցությունը: Բառի բառային իմաստը արտացոլում է առարկաների և երևույթների ճանաչված ոչ բոլոր հատկանիշները, այլ դրանցից միայն այնպիսի-

⁴⁴ Հայերեն **իմաստաբանություն** բառը կազմված է **семантика** և **семасиология** բառերի նմանողությամբ (*семантика*-ն ծագում է հունարեն **semantikos** «նշանակող», *семасиология*-ն հունարեն **semasia** «նշանակություն»+**logos** «հասկացություն, ուսմունք» բառերից):

ները, որոնք էական են համարվում կամ օգնում են մի առարկան տարբերելու մյուսից: Օրինակ, երբ ասում ենք՝ **մարդ, ձյուն, ձուկ** կամ **ռչխար**, ապա՝ մենք նկատի ունենք միայն դրանց ընդհանուր հատկանիշները, յուրաքանչյուրի համար առանձին-առանձին:

Իրենց հասարակական կենսագործունեության ընթացքում մարդիկ ճանաչում են առարկաները, երևույթները, գործընթացները, զանազան որակներն ու հատկանիշները, և օբյեկտիվ իրականության այդ առարկաների, երևույթների, գործընթացների կամ որակների որոշակի տարբերակված հատկանիշներն էլ հիմք են ծառայում բառերի այս կամ այն իմաստների համար:

Բառի բառային իմաստի էական առանձնահատկությունն այն է, որ բառն իբրև լեզվական միավոր իր բառային իմաստի համար հարաբերակցվում է արտալեզվային նյութի՝ օբյեկտիվ իրականության առարկաների և երևույթների հետ: Այդ վերջիններս հասկացության շնորհիվ անմիջականորեն դառնում են բառիմաստի բաղադրատարր⁴⁵:

Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարի ճնշող գերակշռությունն են կազմում այն բառերը, որոնք իրենցից ներկայացնում են օբյեկտիվ իրականության զանազան երևույթների անվանումները (առարկաներ, գործողություններ, հատկանիշներ և այլն): Այդ լիիմաստ բառերը քերականորեն գոյականներ, ածականներ, բայեր, մակբայներ, թվականներ և դերանուններ են: Այս կարգի բառերի էական առանձնահատկությունը նրանց անվանողական դերն է: Այս առումով հիշյալ կարգի բառային իմաստ ունեն ոչ բոլոր բառերը: Այլ է ձայնարկությունների, եղանակավորող բառերի, կապերի, շաղկապների իմաստների բնույթը: Չի կարելի ժխտել այդ կարգի բառերի մեջ բառային իմաստի առկայությունը: Հիշյալ կարգի սպասարկու բառերի բառային իմաստների բնույթը այլ է: Սպասարկու բառերն անմիջապես կապված չեն օբյեկտիվ իրականության առարկաների և երևույթների հետ, չունեն առարկայական իմաստ, բայց և սխալ է դրանք գրկել ընդհանրապես բառային իմաստից: Կասկածից վեր է,

⁴⁵ Տե՛ս *Շանկի Ն. Մ.*, նշվ. աշխատ., էջ 33:

որ այդ կարգի բառերը նույնպես, ինչպես և լիիմաստ բառերը, ունեն բառային իմաստ, որը, սակայն, առարկայական չէ, այլ՝ վերաբերական, կոնկրետ չէ, այլ՝ ընդհանուր: Սպասարկու բառերի իմաստը հիմնականում տարբերվում է լիիմաստ բառերի իմաստից նրանով, որ առաջինների իմաստը անվանողական չէ, այլ՝ ընդհանուր և վերաբերական: Ոչ ոք չի կարող ժխտել, օրինակ, ձայնարկությունների (*ա՛խ, վա՛խ, հե՛յ, օ՛հ*) կամ կապերի ու շաղկապների (*հևր, պես, առաջ, համար, բացի, և, ու, բայց, իսկ, եթե* և այլն) բառային իմաստները, որով և պայմանավորված է վերջիններիս՝ որպես բառի՝ լեզվի իմաստային ազատ միավորի կոչումը: Այլապես դրանք լեզվում չէին կարող հանդես գալ որպես ինքնուրույն բառային միավորներ: Բառային իմաստ ունեցող բառերը իրարից տարբերվում են այդ իմաստի արտահայտման յուրահատկությամբ:

Ժամանակակից հայերենում կարելի է առանձնացնել բառի բառային իմաստների հետևյալ տիպերը՝ **ուղղակի** կամ **անվանական իմաստ**, **փոխաբերական իմաստ** և **դարձվածաբանորեն կապված իմաստ**:

ա) **Բառի անվանական կամ ուղղակի իմաստ**: Բառի անվանական կամ ուղղակի իմաստը բառային այն իմաստն է, որն անմիջականորեն կապված է օբյեկտիվ իրականության առարկաների և երևույթների արտացոլման հետ:

Ուղղակի կամ անվանական իմաստը բառի կողմից առարկայի, երևույթի, հատկանիշի և այլնի անվանումն է՝ կապված նրա անվանողական գործառույթի հետ: Օրինակ՝ *ծառ, խոտ, սար, այծ, կով, պար, քար, պարզգամբ, խոսք, նվագ, խոսել, երգել, դեղին* և այլն:

Անվանական կամ ուղղակի իմաստ ունեցող բառերի կապերն ու հարաբերությունները ուրիշ բառերի հետ որոշվում են առարկայական-տրամաբանական օրինաչափություններով և բառային համակարգի օրենքներով: Այդ կարգի բառերի գործածության սահմաններն ավելի լայն են, նրանց կապերն այլ բառերի հետ բազմազան են և ազատ, նրանք սահմանափակվում են միայն առարկայական-տրամաբանական հարաբերություններով:

Անվանական կամ ուղղակի իմաստ ունեցող բառերն ունեն լայն

ու բազմազան բառային կապեր, և այդ պատճառով էլ անվանական կամ ուղղակի իմաստը կոչվում է նաև *ազայր իմաստ*: Այդ կարգի բառերի կապակցելիության հնարավորությունները այլ բառերի հետ, այնուամենայնիվ, անսահմանափակ չեն: Այսպես՝ *սեղան* բառը կարող է հարաբերվել կամ կապակցվել՝ *մեծ, փոքր, ցածր, բարձր, կլոր, քառակուսի, տափակ, երկար, սպիտակ* և այլ բառերի հետ: Բայց ելնելով նրա առարկայական-տրամաբանական հարաբերություններից՝ նույն *սեղան* բառը ի վիճակի չէ կապակցվելու ցանկացած այլ բառերի հետ, ինչպես, օրինակ՝ *արագ, ճիշտ, սխալ, երեկ, այսօր, գրեկ, երգեկ, լողալ, մրսել, ծեծել* և այլ բառերի հետ: Բնական է, որ անվանական կամ ուղղակի իմաստ ունեցող յուրաքանչյուր բառի կապակցելիության ունակությունները անսահման չեն և նույնպես ենթարկվում են որոշակի օրինաչափությունների:

բ) **Բառի փոխաբերական իմաստ**: Այն իմաստն է, որ խոսքում բառը ձեռք է բերում այնպիսի առարկա, երևույթ, հատկանիշ և այլն նշանակելու համար, որը նրա սովորական կամ բնական հասկացական բովանդակությունը չէ: Բառի փոխաբերական իմաստը երկրորդական, ածանցյալ, ոչ հիմնական իմաստն է, որ ձեռք է բերում բառը և գործում է նրա մեջ ուղղակի կամ անվանական իմաստի հետ, որը, ինչպես հայտնի է, անմիջականորեն ցույց է տափս օբյեկտիվ իրականության առարկաներն ու երևույթները: Ի տարբերություն ուղղակի կամ անվանական իմաստի, որը (եթե նկատի ունենանք պարզ բառերը) պատճառաբանված չէ, փոխաբերական իմաստը պատճառաբանվում է ուղղակի իմաստով: Օրինակ՝ *աղոթից* – ուղղակի կամ անվանական իմաստով՝ «աղ և հաց», փոխաբերական իմաստով՝ «1. խնջույք. 2. պատիվ. 3. հարգանք». *անչքև* – ուղղակի, անվանական իմաստով՝ «մթնոլորտային տեղում», փոխաբերաբար՝ «մեծ քանակությամբ տեղացող, թափվող որևէ բան. *նսկե անչքև, հրեղեն անչքև*». *անուն* – ուղղակի, անվանական իմաստներով՝ «անձնանուն, հատուկ և աշխարհագրական անուններ», փոխաբերաբար՝ «համբավ, հռչակ». *արյուն* – փոխաբերական իմաստով՝ «1. կոտորած, արյունահեղություն. 2. պատերազմ. 3. զոհ, զոհաբերություն. 4. մերձավոր ազգական, արյունակցական կապ» և այլն:

Իմաստի փոխաբերությունը կատարվում է՝ ըստ ձևի, գույնի, չա-

վի և այլ առարկաների նմանության, գործողության բնույթի, առարկայի դերի, կցորդության, ինչպես նաև ժամանակի տարածության և այլ զուգորդումների հիման վրա:

Բառի փոխաբերական իմաստն առաջանում է հիմնականում փոխաբերության (մետաֆորա), փոխանունության (մետոնոմիա) և այլաբերության (սիմեկրոլիա) հիման վրա:

գ) **Բառի դարչվածաբանորեն կապված իմաստ:** Դա այն բառային իմաստն է, որ բառը ձեռք է բերում միայն դարձվածքային միավորի կազմում կամ կայուն բառակապակցության մեջ: Այդ իմաստը պայմանավորված է ոչ թե առարկայական-տրամաբանական հարաբերություններով, այլ հայոց լեզվի բառային համակարգի ներքին օրենքներով: Խոսքի մեջ այդ բառերը գործածվում են խիստ որոշակի բառերի հետ, և որպես կանոն, ոչ մեծաքանակ կապակցություններում: Այդ կարգի իմաստ ունեցող բառերը գործածության տեսակետից ազատ չեն, նրանց կապերն ու հարաբերությունները այլ բառերի հետ անհամեմատ սահմանափակ են: Այդ կարգի բառերի կապը օբյեկտիվ իրականության առարկաների և երևույթների հետ ոչ թե ուղղակի, անմիջական է, այլ՝ միջնորդավորված: Օրինակ՝ **աղվեսասարկ, աղվեսաքուն, լուսնահաչ** բառերը առանձին անգործածական են, իրենց իմաստը դրսևորում են՝ **աղվեսասարկ փայ** կամ **անեյ, աղվեսաքուն փայ** կամ **անեյ, լուսնահաչ փայ** բայական կապակցությունների մեջ «սուտ քուն ձևանալ», «գուր կերպով խոսել» իմաստներով:

Բառի մենիմաստությունն ու բազմիմաստությունը

ա) **Մենիմաստությունը**⁴⁶ բառի մեջ միայն մեկ իմաստի առկայությունն է: Սովորաբար մեկ իմաստ են ունենում տերմինները կամ գիտաբառերը: Օրինակ՝ *ածխածին, քթվածին, ծծումբ, ուրան, մանրէ, վիրահատություն, թոքաքորք*, կամ՝ *անկյունագիծ, փրամագիծ, քանոթոք*, կամ՝ *խնչորենի, հացենի, թխկի, սոսի* և այլն:

⁴⁶ Մենիմաստություն (հուն. monosemia, monos «մեկ» + sēma «նշան»):

Տերմինաբանական արժեք ունեցող բառերից բացի՝ մենիմաստ կարող են լինել առարկա և հատկանիշ ցույց տվող որոշ գոյականներ ու ածականներ, մակբայներ, դերանուններ, ինչպես նաև մի շարք ձայնարկությունները:

Օրինակ, գոյականներ՝ *գրասեղան, գրասպասարան, բազմոց, օթոց, սպասքասպասարան, գրախ, դանակ, պարտառքաղ* և այլն, և այլն:

Ածականներից մենիմաստ են այնպիսիները, որոնք գլխավորապես ցույց են տալիս առարկայի՝ ինչ նյութից լինելը կամ վերացական հատկանիշ, ինչպես, օրինակ՝ *փայլե, արծաթյա, փղոսկրյա, մեծաշառաչ, մեծադողորդ, լայնախոհ, անհատական, հասարակական, գյուղական, քաղաքային* և այլն:

Մենիմաստ է նաև դերանունների մեծ մասը, ինչպես՝ *նա, այնքան, որքան, ինչքան, ինչ, ինչպես, այսպեղ, այնպեղ* և այլն, մակբայների մի մասը, ինչպես՝ *երեկ, ուշ, շուր* և այլն, որոշ ձայնարկություններ՝ *ա՛խ, վա՛խ, հե՛յ* և այլն:

Չթեքվող խոսքի մասերին պատկանող բառերի մենիմաստությունը բացատրվում է նրանով, որ դրանք բառային ընդհանուր իմաստ են արտահայտում և առարկաների և երևույթների տարբեր գուգորդման, հետևաբար և փոխաբերության հնարավորությունը դրանցում բացառվում է:

բ) **Բազմիմաստությունը**⁴⁷ միևնույն բառի մեջ մեկից ավելի փոխկապակցված իմաստների առկայությունն է, որ առաջանում է սովորաբար այդ բառի սկզբնական իմաստի զարգացման հիման վրա: Այն միևնույն բառի՝ տարբեր, մեկից ավելի իմաստներով գործածվելու հատկությունն է:

Ժամանակակից հայերենում, օրինակ, **գիծ** բառն ունի մոտ 15 իմաստ. «1. Հետք թողնող առարկայով (կավիճ, մատիտ, գրիչ և այլն) քաշած խազ: 2. (ռազմ.) Դակատ, ճակատագիծ: 3. Տողան, երկարությամբ ձգվող առարկաների շարք: 4. Երկարողագիծ: 5. Օղային և ջրային տրանսպորտային ուղի: 6. Երկարությամբ ձգված լար (հեռա-

⁴⁷ Բազմիմաստություն (հուն. polisemia, poli «բազում, շատ» + sēma «նշան»):

գրական, ռադիոյի, էլեկտրականության հաղորդման համար): 7. Էլեկտրական հոսանքի, ռադիոհաղորդման, հեռագրային հաղորդակցման և այլն ճյուղավորում: 8. Սահման, սահմանագիծ: 9. Հետք, հետագիծ: 10. (փխբ.) Կնճիռ, խորշոմ: 11. Բնորոշ կողմ, հատկանիշ: 12. Դիմագիծ: 13. Դիրքավորում (քաղաքական, գաղափարական, տնտեսական գործունեության մեջ հիմնական ուղղություն)» և այլն⁴⁸:

Գլուխ բառն ունի մոտ քսան իմաստ. «1. Մարդու և կենդանիների մարմնի մաս: 2. Առարկայի վերին մաս: 3. Կատար, գագաթ (*Արարարի գլուխ*): 4. Առաջամաս, շարքի առաջին մասը: 5. Սկիզբը (*ամսի գլուխ*): 6. Որևէ բանի կամ տարածության ծայրային մաս (*կամրջի գլուխ*): 7. Վերին կողմը, պատվավոր տեղը (*սեղանի գլուխ*): 8. Ստեղծագործության, աշխատանքի առանձին բաժին: 9. Ղեկավար, առաջնորդ, գլխավոր: 10. Առարկայի գնդաձև կամ կլոր վերջավորություն կամ ծայր: 11. Գլխի մազերը (*գլուխը սպիրակեղ է*): 12. Հատ, հաշվի միավոր (*20 գլուխ ոչխար*): 13. (փխբ.) Կյանք (*Մի գարի հացը մի գլուխ արժե* (ԱԻ)): 16. Տոկոսով տրված դրամ» և այլն⁴⁹:

Դարձնել բայն ունի 6 իմաստ. «1. Անել, վերածել, փոխարկել: 2. Վերադարձնել: 3. Շուռ տալ, շրջել: 3. Պտտել, պտտեցնել: 5. Ուղղել: 6. Մեկի անունով գրել (*ունեցվածքը*)»⁵⁰:

Քառիմաստի փոփոխություն

Լեզվի պատմական զարգացման ընթացքում կատարված իմաստաբանական բարդ գործընթացների հետևանքով տեղի են ունենում քառիմաստի տարբեր փոփոխություններ: Դրանց հիմնական առանձնահատկությունն այն է, որ կատարվում են համեմատաբար երկար ժամանակահատվածում, որակական փոփոխությունների աստիճանական կուտակման ձևով: Բառերի իմաստների համարյա աննկատելի կատարվող այդ փոփոխությունները որոշ ժամանակից

⁴⁸ *Աղայան Էդ.*, Արդի հայերենի բացատրական բառարան, հտ. I, Երևան, 1976, էջ 236:

⁴⁹ Նույն տեղում, էջ 244:

⁵⁰ Նույն տեղում, էջ 283:

հետո վեր են ածվում որոշակի որակական տարբերության: Բառի իմաստի կամ իմաստների փոփոխության տիպերը սերտորեն կապված են նրանց առաջացնող տարբեր պատճառների հետ: Այդ պատճառները կարող են լինել և՛ **լեզվական**, և՛ **արտալեզվական**: **Լեզվական** են կոչվում բառիմաստի փոփոխման այն պատճառները, որոնք բխում են գուտ լեզվական գործոններից և պայմանավորված են վերջիններով: **Արտալեզվական** են համարվում բառիմաստի փոփոխությունն առաջացնող այն պատճառները, որոնք պայմանավորված են ոչ թե գուտ լեզվաբանական, այլ արտալեզվական՝ հասարակական գործոններով: Բառերի իմաստափոխության մասնավոր պատճառները շատ են և բազմազան: Այդ փոփոխություններին այս կամ այն ձևով կարող են ազդակ ծառայել կամ նպաստել գիտության և մշակույթի առաջընթացը, երկրի, ժողովրդի կյանքում քաղաքական-տնտեսական շրջադարձային տեղաշարժերը կամ լեզուների տարբեր ազդեցությունները:

Բառիմաստի փոփոխությունները հիմնականում կատարվում են բառիմաստի նեղացման, ընդլայնման, շրջման, համաբանության, իմաստի մեկ ուղղությամբ զարգանալու, ըստ գործառույթի և նմանության նոր իմաստ ձեռք բերելու և այլնի պատճառներով⁵¹:

ա) Բառիմաստի նեղացում: Պատմական զարգացման ընթացքում խոսքային գործածության համատեքստում հայերենում տեղի է ունեցել բառի իմաստային ծավալի նեղացում՝ բառի ավելի լայն իմաստի կամ իմաստների մասնավորման շնորհիվ: Օրինակ՝ գրաբարում **հալ** բառը նշանակում է «թռչում (ընդհանրապես), հավք», ժամանակակից հայերենում այն ձեռք է բերել թռչունի մի տեսակի իմաստը: **Քաջ** բառը գրաբարում նշանակում էր «ընդհանրապես լավ» (հմմտ. *քաջարեղյակ* «լավ տեղյակ»), այժմ՝ միայն «կտրիճ, անվեհեր»:

Իմաստի նեղացման բազմաթիվ օրինակներ կարելի է բերել տերմինաբանության բնագավառից, երբ լեզվի սովորական, ընդհանուր գործածական բառը տերմինացման ենթարկվելով՝ վեր է ածվում

⁵¹ Տե՛ս *Արեղյան Մ.*, Երկեր, հ. 2, Երևան, 1974, էջ 112-124: *Աղայան Էդ.*, Լեզվաբանության հիմունքներ, Երևան, 1987, էջ 358-383:

որևէ գիտության կամ արտադրության որևէ ճյուղի տերմինի, ինչպես, օրինակ՝ **արբանյակ, պասպառ** (էկրան), **կարգ** (կատեգորիա), **կռունկ, սայր** և այլն:

բ) Բառիմաստի ընդլայնում: Իմաստի ընդլայնում է կոչվում իմաստափոխական այն երևույթը, երբ լեզվի պատմական զարգացման ընթացքում բառը, կորցնելով իր էական հատկանիշների մի մասը, ընդարձակում է իր իմաստային ծավալը: Օրինակ՝ **կայսր** նշանակում է «թագավոր, միապետ (կայսրության, թագավորության գլուխ)», առաջացել է **Կեսար** (Հռոմի միապետի) հատուկ անունից. ստացել է ընդհանրական իմաստ: **Տուն** նշանակում է «բնակարան, կացարան, ապրելու տեղ», ունի նաև՝ «ցեղ, տոհմ, ժողովուրդ» իմաստները: **Կառավարել** իր նախնական իմաստով նշանակել է «կառք վարել», **կառավարություն** բառը ըստ այդմ՝ «կառք վարելը», մինչդեռ այժմ այն ունի՝ «պետական բարձրագույն մարմին» իմաստը:

Նույն ձևով բառի նախնական իմաստի կամ իմաստների համեմատությամբ իմաստի ծավալի ընդարձակում է կատարվել նաև **ժամապահ, տարեգրություն, տոնավաճառ** և այլ բառերում: Նույն ձևով որոշ հատուկ անուններ ու տեղանուններ վեր են ածվել անվանականարգային անվանումների, ինչպես՝ «**Վոլգա**», «**Ժիզուլի**» (ավտոմեքենաներ), «**Նաիրի**», «**Գլին**», «**Աղբամար**», «**Երևան**» (կոնյակ), «**Արևի**», «**Ոսկեվազ**» (գինի) և այլն:

գ) Բառիմաստի շրջում: Իմաստի շրջումը լեզվի պատմական զարգացման ընթացքում բառի մեջ տրամագծորեն հակառակ իմաստի կամ իմաստների առաջացումն է: Այսպես՝ **սհազին** նշանակում է «ահեղ և սոսկալի», ունի՝ «մեծ, հսկա, ահռելի» իմաստները: **Պարսպ** նշանակում է՝ «ազատ, անգործ, առանց զբաղմունքի, դատարկ», մինչդեռ **պարսպել** նշանակում է «մի բանով զբաղվել, գործ կատարել, գործ անել»:

դ) Բառի վերաիմաստավորում: Ժամանակակից հայերենում որոշ գրաբարյան, բարբառային (զավառական), գրական նոր բառերի նախկին իմաստների փոխարեն մի քանի բառեր ձեռք են բերել նոր իմաստներ: Շատ դեպքերում նախկին իմաստները մթագնում կամ ետին շարքն են մղվում՝ դառնալով երկրորդական, լրացուցիչ,

տեղի տարվով նորերին՝ որպես առաջնային, հիմնական իմաստների: Վերաիմաստավորման այդ գործընթացը լայն չափերով տարածված է հատկապես տերմինաբանության բնագավառում և կատարվում է գիտական հասկացությունների համար համապատասխան տերմիններ կամ էլ օտարազգի տերմինների ու բառերի հայերեն համանշանակներ ստեղծելու նպատակով: Օրինակ՝ *սարյան* (ժյուրի), *ագարակ* (ֆերմա), *վարդապեկություն* (դոկտրինա), *հրահան* (зажигалка) *մակակ* (ключка), *նախարար* (մինիստր) և այլն:

Այս եղանակով գրաբարյան շատ բառեր, ձեռք բերելով նոր իմաստներ, ժամանակակից հայերենում երբեմն գործածվում են բոլորովին տարբեր բնագավառներում: Օրինակ՝ գրաբարում *հասարակ* բառը նշանակում էր «անջրպետ, պատվար», այժմ՝ «1) դագահ, գործասեղան, 2) հրետասայլ (թնդանոթի)» և այլն: *Գիպակ* – «1) աչքի ընկած բան, 2) պահակ, հսկող, 3) թուղթ, նամակ», այժմ՝ «գործիք, որ հեռու առարկաները մոտեցնում է աչքին»: *Լուսանկար* – «լուսավոր, լուսագարդ», այժմ՝ «լուսանկարչական ապարատով հանված պատկեր՝ նկար» (որից՝ լուսանկարել, լուսանկարիչ, լուսանկարչական, լուսանկարչություն, լուսանկարչատուն): *Պաղպաղակ* – «բյուրեղ», այժմ՝ «կաթով, շաքարով, սերուցքով և պտղահյութերով պատրաստվող սառեցրած քաղցր ուտելիք, սառնանույշ»: *Օղապարիկ* – «օղի մեջ սավառնող (ձիու համար գործածվող մակդիր)», այժմ՝ «գազով լցված օդում թռչող սարք, հարմարանք»: *Անպիպ* – «անձև, անկերպարան», այժմ՝ «չտպված, չտպագրված»: *Գյուրապար* – «հեշտ համբերելի, որին հեշտ է համբերել, 2. հեշտ հասկանալի, դյուրահասկանալի», այժմ՝ «հեշտությամբ տարվող, այն, որի ծավալի փոքրության պատճառով կարելի է հեշտությամբ տանել»⁵²:

ե) Իմաստափոխություն ըստ գուգորդության: Իմաստափոխության այս տեսակը կատարվում է առարկաների և երևույթների նմանության հիման վրա: Օրինակ՝ *գլուխ* «մարդու և կենդանիների մարմնի մաս» և *գլուխ* «գագաթ, լեռան կատար»: *Մշակ* – «1) աշխատավոր, ծառա, նաև՝ բեռնակիր (ֆիզիկական աշխատանք կատարող)» 2) գիտության՝ արվեստի մեջ մեծ վաստակ ունեցող (օր.՝ *գիտու-*

⁵² Տե՛ս *Աճառյան* Հ., Հայոց լեզվի պատմություն, Բ մաս, Երևան, 1951, էջ 481-482:

թյան մշակ)»: **Փուլ** – «1) լուսնի լրումից հետո հետզհետե նվազելը»։ Ստացել է նոր իմաստներ՝ «2) մարգական բնագավառում՝ խաղաշրջան, 3) հասարակական կյանքի զարգացման շրջան, փուլ»: **Անկում** – նշանակում է «ընկնելը, կործանվելը», ձեռք է բերել նաև «անասունների մասսայական կորուստ, կտորած՝ հիվանդության կամ որևէ աղետի հետևանքով» իմաստը: **Թրթուր** – նշանակում է հիմնականում՝ «միջատի տեսակ»։ ձեռք է բերել՝ «տրակտորի, մեքենայի, տանկի և այլն անիվի շարժական մետաղյա մաս իմաստը (թրթուրավոր տրակտոր, տանկի թրթուր)»:

զ) **Իմաստափոխություն ըստ կցորդության** կամ **առընթերոթյան**: Իմաստափոխության այս տեսակը նույնպես կատարվում է իմաստների նմանության հիման վրա: Օրինակ՝ **կարփնեղ** – «զանազան նպատակներին ծառայող սենյակ, սրահ» և նոր՝ «միևիստրների՝ նախարարների խորհուրդ»: **Համար** – «թվի կարգ» և «հյուրանոցի՝ լսարանի տեղ՝ սենյակ»: **Երակ** – «արյունատար անոթ» և «հանքի երևակում՝ շերտ»:

է) **Գործառական իմաստափոխություն**: Իմաստափոխության այս տեսակը կատարվում է միևնույն գործառույթը կատարող առարկաների հաջորդականության հիման վրա: Այս դեպքում որևէ առարկայի կամ երևույթի անունը անցնում է այնպիսի մի նոր առարկայի կամ երևույթի, որն իր դերով փոխարինում է նախկին առարկային: Օրինակ՝ **ոպր** «մարդու և կենդանիների մարմնի մաս, ստորին վերջավորություն» և «1. կահույքի՝ սարածների՝ մեքենայի և այլն ներքևի հենարաններից յուրաքանչյուրը, 2) հրազենի շնիկ, հրահան, 3) սանդուղքի, աստիճանի մաս» և այլն: **Թև** – «1) թռչունների թռչելու գործարանը, 2) մարդու բազուկ, կուռ, ձեռք, 3) զանազան կարգի անիվների (ջրաղաց, հողմաղաց) շառավիղ՝ տախտակ, 4) ինքնաթիռի մաս, քաշող մակերեսներից մեկը, 5) գութանի մետաղյա թիակաձև մասը, 6) շինության կողմնային մասը, 7) գորքի մարտական դասավորության՝ աջակողմյան և ձախակողմյան մասերը, 8) քաղաքական կազմակերպության՝ կուսակցության խմբավորում, 9) կշեռքի յուրաքանչյուր թաթը՝ լծակի հետ, 10) հովանավորություն, պաշտպանություն, սատար, թիկունք» և այլն:

Հայերենի համանունները⁵³

Համանուններ են կոչվում երկու (հազվադեպ՝ ավելի) ձևով (արտասանությամբ, գրությամբ, քերականական ձևավորմամբ) նույն, իսկ իմաստով տարբեր բառերը: Օրինակ՝ *բուն* «ծառի մաս» – *բուն* «հիմնական», *տալ* «հանձնել» (բայը) – *տալ* «ամուսնու քույրը», *անարգել* – *անարգել*, *մարտ* – *մարտ*, *ափ* – *ափ*, *աղոյր* – *աղոյր*, *վարել* – *վարել* և այլն, և այլն:

Տարբերակվում են համանունների երկու տեսակ՝ **լիակապար** և **մասնակի** (ոչ լիակատար): **Լիակապար** համանուններ են մինևույն խոսքի մասին պատկանող այնպիսի բառերը, որոնց քերականական բոլոր ձևերը համընկնում են, նույնական են, ինչպես վերոհիշյալներինց՝ *ափ* «ջրի եզր» – *ափ* «ծեռքի մաս» (*ափեր*, *ափից*, *ափերով*, *ափում* և այլ ձևերը նույնն են երկու բառերի համար), կամ՝ *վարել* «ղեկավարել, քշել» – *վարել* «արտը հերկել»՝ *վարում եմ*, *կվարի*, *վարեցինք*, *վարե՛ք* (և՛ մեքենան, և՛ արտը):

Մասնակի (ոչ լիակատար) համանուններում համընկնում են քերականական ոչ բոլոր ձևերը: Օրինակ՝ *սևր* «զգացմունք» – *սևր* «կաթնամթերք» գույգի առաջին բառի սեռական-տրական հոլովը լինում է *սիրո*, երկրորդինը՝ *սերի*, առաջինի հոգնակին լինում է *սերեր*, իսկ երկրորդը հոգնակի թվով սովորաբար չի գործածվում, իրականում հոգնակի չունի: Նմանապես *սկ* «մատանու քար» և *սկ* «անիվ» գույգի առաջին բառի հոգնակին կազմվում է *սկներ* ձևով, երկրորդինը՝ *սկեր* ձևով:

Համանունները տարբերակում ենք նաև այլ սկզբունքներով: Միայն արտասանությամբ նույն (գրությամբ տարբեր) բառերը կոչվում են **համահունչ** բառեր: Օրինակ՝ *ախար* «հիվանդություն» – *աղբ* (արտասանվում է [ախար]) «կեղտ», *աչ* «աչք (փաղաքշական)» – *աջ* «աջակողմյան, ձախի հակառակը», *գդալ* «սեղանի սպասքի առարկա» – *գրալ* «խղճալ, կարեկցել», նաև *կեպի* «*կեպ* 1. Երկրաչափա-

⁵³ Հայերեն **համանուն** տերմինը համապատասխանում է օտար **омоним** բառին, որը ծագում է հունարեն **homos** «նույն, նույնակերպ» + **onyma, onoma** «անուն» բառերից (ըստ այդմ՝ հայերենի պատճենումը կլինի **նույնանուն**):

կան պատկեր, 2. տրոհության կետադրական նշան» գոյականի եզակի թվի սեռական-տրական հոլովը – **կէրի** «*էրել* բայի պայմանական ապառնիի եզակի երրորդ դեմքը», **կողակի** «*կողակ* ձկնանվան եզակիի սեռական-տրականը» – **կողակի** «*ողակել* բայի պայմանական ապառնիի եզակի երրորդ դեմքը» և այլն: **Համագիր** են կոչվում այն համանունները, որոնք մույնական են միայն գրությամբ (արտասանությամբ տարբեր են), ինչպես՝ **անարգել** (արտասանվում է [*անարգէլ*]) «խայտառակել, պատվազրկել» – **անարգել** [*անարքէլ*] «առանց արգելքի, անխոչընդոտ», **պատրանդ** [*պատրանդ*] «գերված՝ ներկաված անձ» – **պատրանդ** [*պատրանրդ*] «*պատրան* (*պատրանք*) գոյականի «ղ» հոդով ձևը», **շանս** [*շանս*] «որևէ բանի իրագործման հավանական հնարավորություն» – **շանս** [*շանրս*] «*շուն* կենդանանվան եզակի սեռական-տրականի հոլովածևը «ս» հոդով, **դուրս գալ** [*դուրս գալ*] «ելնել» – **դուրս գալ** [*դուրրս գալ*] «հավանել (առաջին դեմքի համար)» և այլն:

Համանունները կարելի է դասակարգել նաև ըստ համանունության եզրերի բառային և քերականական ձևավորվածության: Ըստ այդմ՝ ունենում ենք **բառային**, **բառաքերականական** և **քերականական** համանուններ:

Բառային համանունների երկու (հազվադեպ՝ ավելի) եզրերն էլ ինքնուրույն բառեր են, օրինակ՝ **անկարգել** «անկարգ դարձնել» – **անկարգել** «պարաշյուտ» – **անկարգել** (ժող.) «առանց ամուսնանալու, չամուսնացած», **անկար** «անկարող, անուժ» – **անկար** «անկարիք» – **անկար** «կարագուրկ, չկարված», **քաղ** «քաղելը» – **քաղ** «արու այծ», **բազուկ** «ձեռքի՝ թևի արմունկից մինչև ուսն ընկած մասը» – **բազուկ** «ճակնդեղ», **մածնասեր** «մածուցի սեր՝ սերուցք» – **մածնասեր** «մածուն սիրող» և այլն, և այլն:

Բառաքերականական համանունների մի եզրն ինքնուրույն բառ է, իսկ մյուս եզրը՝ քերականական որևէ ձև (այս բառի ուղիղ ձևը համանունային գույգ չի կազմում), ինչպես՝ **երկիցս** «երկու անգամ, կրկին» – **երկիցս** «*երկ* գոյականի եզակի բացառականի հոլովածևը՝ «ս» հոդով», **հարկում** «հարկ՝ տուրք դնելը» – **հարկում** «*հարկ* գոյականի եզակի ներգոյականի հոլովածևը», **հյուսիս** «աշխարհագ-

րական կողմ» – **հյուսիս** «*հյուս* գոյականի եզակի սեռական-տրականի ձևը՝ «ս» հոդով՝ իմ հյուսիս, **կառուցում** «կառուցելը, կառուցվելը» – **կառուցում** «*կառուցել* բայի անկատար դերբայը», **ալմանակից** «ավանին կից, ավանամերձ» – **ալմանակից** «*ալմանակ* գոյականի եզակի բացառականի հոլովաձևը» և այլն:

Կան համանուններ, որոնց երկու եզրներն էլ բառաձևեր են (ուղիղ ձևերը համանուններ չեն): Սրանք *քերականական համանուններն* են: Օրինակներ՝ **ծխում է** «*ծխել* բայի եզակի ներկայի երրորդ դեմքը» – **ծխում է** «*ծխալ* բայի եզակի ներկայի երրորդ դեմքը», **լարեր** «*լար* գոյականի հոգնակին» – **լարեր** «*լարել* բայի ըղձական ապառնիի եզակի երրորդ դեմքը», **մանրէն** – **մանրեն** (*մարէ* և *մանրել*), **գրի** – **գրի** (*գիր* և *գրել*), **ծրագրում** – **ծրագրում** (*ծրագիր* և *ծրագրել*), **սիրելիս** – **սիրելիս** (*սիրելի* և *սիրել*) և այլն, և այլն:

Համանունների ծագումը

Լեզվում համանուններ կարող են առաջանալ տարբեր պատճառներով: Նշենք ամենահիմնականներն ու տարածվածները:

Գլխավոր պատճառներից մեկը բազմիմաստ բառի իմաստային տրոհումն է: Բազմիմաստ բառի նշանակություններից մեկը լեզվի զարգացման բավականին երկարատև ընթացքում հեռանում է մյուսներից, առանձնանում: Ժամանակի ընթացքում այդ տարբերությունը այնքան է մեծանում, որ լեզվակիրները (տվյալ դեպքում հայախոսները) միևնույն բառի զանազան իմաստները արդեն ընկալում են իբրև տարբեր, ինքնուրույն բառեր: Միայն ստուգաբանական հատուկ վերլուծության միոցով է հնարավոր վերականգնել այդ բառերի իմաստային կապը, ընդհանրությունը: Հայերենի համար այսպիսի օրինակ է **սուր** «հատու, կտրող» ածականի իմաստային զարգացումը: Այդ բառի իմաստներից մեկը (վերոհիշյալը), երկար ժամանակ գործածվելով իբրև **քուր** գենքի որակական հատկանիշ ցույց տվող լրացում՝ որոշիչ՝ **սուր քուր**, սկսել է գործածվել փոխանվանաբար՝ նշանակելով նաև այն առարկան, որի հատկանիշն է ցույց տալիս (**սուր քուրը**→**սուրը**): Ապա այն սկսել է ըմբռնվել ուղղակի գոյակա-

նաբար, տեղի է ունեցել խոսքիմասային անցում (ածական→գոյական), և այսօր հայերենում ունենք երկու **սուր** բառ (ածական և գոյական): Այսպիսի համանունները կոչվում են *նույնարմայր համանուններ*: Այլ օրինակներ՝ **սկ** («մատանու քար») – **սկ** («ակունք») – **սկ** («անիվ») – **սկ** («փեթակի անցք». բոլորն էլ **սկն** բառի «աչք» իմաստից), **դարման** «հարդ» – **դարման** «դեղ»: Այսօր թերևս համանունների վերածվելու ճանապարհին են **պարսրք** («փոխարինաբար վերցված գումար» և «պարտականություն, պարտավորություն» նշանակություններով), **գործել** («գործողություններ ծավալել» և «հյուսել»), **վարկ** («հեղինակություն, պատիվ» և «դրամի փոխավորություն որոշակի պայմաններով»), **գլուխ** («մարդու և կենդանիների մարմնի մաս» և «գրքի առանձին ավարտուն հատված») և նման բազմաթիվ բառեր:

Համանունների մյուս բոլոր տեսակները *տարարմայր համանուններ* են: Սրանց առաջացման աղբյուրները բազմազան են:

Դրանցից մեկը փոխառությունն է: Որոշ փոխառյալ բառեր կարող են ձևով համընկնել բնիկ հայկական բառերի հետ, կամ երկու տարբեր լեզուներից կատարված փոխառությունները կարող են հայերենում ձևով համընկնել: Օրինակ՝ **բաս** («տղամարդու երգեցիկ ամենացածր ձայնը») երաժշտական տերմինը փոխառություն է իտալերենից և ձևով համընկնում է հայերենի **բա՛ւ** ձայնարկության հետ: **Մարդ** «կռիվ, պատերազմ» բառը բնիկ է, իսկ **մարդ** ամսանունը փոխառություն է լատիներենից: Կամ էլ հայերենի երկու **կամար** բառերը փոխառվել են տարբեր լեզուներից. «ճարտարապետական կառույցի մաս» իմաստով բառը փոխառություն է հունարենից (xamara), իսկ «մեջքի գոտի»-ն (բրբ. *քյամար*)՝ պահլավերենից (kamar):

Համանունների առաջացման մեկ այլ աղբյուր է բառակազմությունը: Բաղադրյալ (բարդ և ածանցավոր) որոշ բառեր համընկնում են արտաքին կողմով՝ հնչյունով և արտասանությամբ, թեև տարբերվում են ձևային կազմով և բառակազմության սկզբունքով: Սրանք առաջանում են լեզվում արդեն իսկ գոյություն ունեցող համանուններից, սակայն կարող են կազմվել նաև հնչյունով միմյանց հետ

չառնչվող բառերից: Այսպես՝ *այրանման* «քարանձավանման և *այրանման* «տղամարդու նման», *քրվասեր* «ած., գոյ. քթու սիրող» և *քրվասեր* «գոյ. կաթնամթերքի մի տեսակ». սրանց մեկ արմատն ընդհանուր է: Այլ օրինակներ՝ *լեռնապար* «լեռնային ապար» (*լեռն* + *ապար*) և *լեռնապար* «լեռնաշղթա» (*լեռն* + *ա* + *պար*), *անվահան* «առանց վահանի» (*ան* + *վահան*) և *անվահան* «անիվը հանած» (*անիվ* + *ա* + *հան*), *հուսալիք* «ակնկալիք, սպասելիք» (*հուսալ* + *իք*) և *հուսալիք* «հուսալքված, հուսագուրկ» (*հույս* + *ա* + *լիք*), *բռնավոր* «բռնակալ» (*բռն(ն)* գոյականից) և *բռնավոր* «(խսկց.) բանտարկյալ» (*բռն(վ)ել* բայից) և այլն:

Համանունության և բազմիմաստության փարբերակումը:

Իրականում հաճախ դժվար է լինում հստակ որոշելը՝ մեր առջև երկու տարբեր բառեր են, թե՞ միևնույն բառի տարբեր իմաստներ: Իհարկե հնարավոր է գտնել, նշել մի քանի միջոցներ, որոնցով հնարավոր է գանազանել բառիմաստը առանձին բառից.

1) Բազմիմաստ բառերի նշանակությունների միջև կա իմաստային ուղղակի առնչակցություն: Չգացվում են դրանց գուգորդումները, իմաստների միջև եղած ստորադասական և ենթաստորադասական կապերը: Օրինակ՝ *գլուխ* «1. մարդու մարմնի վերին, իսկ կենդանիների մարմնի վերին կամ առաջնային մասը»: Այս հիմնական նշանակության հետ առնչակցվում են այդ բառի այլ իմաստները՝ «2. խելք» (ուղեղը գլխում է), նաև «3. մեծ խելքի տեր մարդ», «4. սննդամթերքի կտոր՝ գունդ. *մի գլուխ պանիր՝ շաքար՝ սոխ*» (ձևով նման է գլխի), «5. անասուններ հաշվելու միավոր» (հաշվում են գլուխները), «6. որևէ բանի վերին մասը. *սարի գլուխ, գլուղի գլխին կանգնած է*» (նման է տեղով՝ դիրքով), «7. առաջնորդ, ղեկավար, պետ» (կենդանու գլխի դիրքը, նաև առաջնորդողի գրաված տեղը՝ դիրքը): Այս բառի մեկ այլ նշանակությունը՝ «գրքի ամբողջական ավարտուն հատված՝ բաժին», արդեն այնքան է հեռացել հիմնական իմաստից, որ դժվար է ընկալել կապը նախնական նշանակության հետ, և շատ բառարաններում այն արդեն ներկայացվում է իբրև համանուն: Իսկ, ասենք, *գունդ* «գորամիավորում» և *գունդ* «կլոր՝ շրջանաձև մարմին» բառերի միջև իմաստային որևէ առնչակցություն հնարավոր չէ գտնել ո՛չ համաժամանակյա, ո՛չ էլ տարժամանակյա

մոտեցմամբ: Սրանք համանուններ են: Նմանապես՝ **մեկնեի** «գնալ» և **մեկնեի** «բացատրել», **մարզական** «մարզին հատուկ՝ բնորոշ» և **մարզական** «մարզումի, սպորտային» և այլն:

2) Այդպիսի միջոցներից մեկն էլ ենթադրյալ համանունների համար հոմանիշների ընտրությունը և ապա դրանց համեմատումն է: Եթե այդ երկու բառերի համար ընտրված հոմանիշները ունեն իմաստային ինչ-ինչ ընդհանրություններ, առնչակից են, ուրեմն գործ ունենք ոչ թե երկու տարբեր բառերի, այլ միևնույն բառի տարբեր նշանակությունների հետ: Ասենք, **հոյ**¹ «ոչխարների խումբ» բառի համար հոմանիշների բառարանում ունենք հետևյալ շարքը՝ *երամ, երամակ, նախիր, ջոկ* և այլն (որպես «կենդանիների խումբ» ընդհանրական հասկացության ենթատեսակների անվանումներ), իսկ մյուս **հոյ**² բառի հոմանիշներն են *բույր, բուրմունք, բուրումնավերություն*: Ակնհայտ է, որ գործ ունենք երկու տարբեր բառերի հետ: Կամ **հարսություն**¹ բառն ունի *կարողություն, ունևորություն, զանձ, նաև նոխություն, փարթամություն* հոմանիշները, իսկ **հարսություն**² բառը՝ *դինասուրիս, արքայապոռիս, գահապոռիս* հոմանիշները:

Հայերենի բառային հոմանիշները

Հայերենում հոմանիշ հասկացության համար տարբեր ժամանակներում գործածվել են մի քանի տերմիններ՝ *հոմանիշ, համանիշ, նույնանիշ*: Դրանք կազմվել են հունարեն *synonymos* բառի հիման վրա, որ բառացի նշանակում է նույն անունն ունեցող: Այժմ գործածության մեջ են մնում, փաստորեն *հոմանիշ, համանիշ, նույնանիշ* տերմինները, որոնք թեև ըստ բաղադրիչների իմաստների նույն նշանակությունն ունեն, բայց արդի հայերենում ձեռք են բերել միևնույն հասկացության որոշակի տարբերակված իմաստներ: Հայերենում մեզ հետաքրքրող իրողության ընդհանուր հասկացության համար այժմ ընդունված է **հոմանիշ** տերմինը, իսկ *համանիշ* և *նույնանիշ* տերմինները գործածվում են լեզվաբանական միևնույն իրողության երկու տարբերակների, առաջինը՝ մոտ իմաստ ունեցող, երկրորդը՝ նույն իմաստն ունեցող բառերի համար:

Հոմանիշների սահմանումը: Հայերենում հոմանիշներ են կոչվում միևնույն հասկացությունն արտահայտող այն բառերը, որոնք ունեն մոտ կամ նույն իմաստներ և միաժամանակ կարող են տարբերվել ոճական կիրառությամբ, հուզաարտահայտչական գունավորմամբ, ինչպես նաև գործածականությամբ և ուրիշ բառերի հետ կապակցվելու տարբեր ունակությամբ:

Ժամանակակից հայերենի հոմանիշները ստորաբաժանվում են **համանիշների**, որոնք ունեն մոտ իմաստներ կամ իմաստային նրբերանգներ, և **նույնանիշների**, որոնք ունեն նույն իմաստները:

Հոմանիշության չափանիշները: Հոմանիշներ կարող են համարվել հայոց լեզվի զարգացման տվյալ փուլի բառապաշարի մեջ մտնող այն բառերն ու դարձվածքները՝ իրենց իմաստային-նրբերանգային նույնությամբ կամ մոտությամբ, ոճական-կիրառական և հուզաարտահայտչական գունավորման որոշ տարբերություններով, որոնք իրենց իմաստային և ոճական արժեքներով արտահայտում են լեզվի զարգացման տվյալ փուլի օրինաչափությունները: Սրանից, սակայն, ամենևին չի հետևում, թե գրաբարյան և միջին հայերենի որոշ բառեր, որոնք հնացած ու հազվադեպ գործածություն ունեն ժամանակակից հայերենում և հատկապես նրա գրքային ու բանաստեղծական ոճերում, ինչպես նաև ժողովրդախոսակցական լեզվի շատ բառեր նույնպես պետք է ընդհանրապես զանց առնել: Այդ կարգի բառերը, ինչպես հայտնի է, կազմում են ժամանակակից հայերենի բառային կազմի բաղկացուցիչ մասը և, ինչպես ընդունված է, բառարանագրական մշակման են ենթարկվում և հատուկ նշումներով տեղ են գրավում ժամանակակից հայոց լեզվի բառարաններում:

Հոմանիշության հնչյունաբանական, բառաբերականական, ձևաբանական և իմաստաոճային չափանիշները:

ա) **Հնչյունաբանական չափանիշ:** Ըստ հնչյունաբանական չափանիշի՝ հոմանիշները պետք է տարբերվեն իրենց հնչյունական կազմով: Ժամանակակից հայերենի բառային կազմի, հետևաբար և համանշության համար որևէ արժեք չեն ներկայացնում համաժողովրդական ընդհանուր լեզվի բառային կազմի մեջ մտնող բառերի բարբառային հնչյունական տարբերակները:

բ) **Բառաբերականական չափանիշներ:** Հայերենում բառարա-

նային արժեք չունեն *ամենա-* և *-գույն* ածանցներով կազմված որակական ածականի գերադրական աստիճանը ցույց տվող բառերը, *ան-* ժխտական ածանցով կազմվող բառերը, որոնք պարզապես առարկայի կամ հատկանշի բացակայություն, մի բանից գուրկ լինելն են նշանակում: Բայց նույն կարգի բառերը բառարանային արժեք են ստանում, երբ ձեռք են բերում առանձին, ինքնուրույն իմաստներ, ինչպես *ամենակարող, ամենաողորմած, գերագույն, անպուն, անօփաս* և այլն:

Արդի հայերենում հարակատար և ենթակայական դերբայների գերակշիռ մասը բայի բառածներ համարվելու պատճառով նույնպես բառարանային արժեք չունի՝ բացառությամբ այն բառերի, որոնք որոշակի, մասնավոր բառային տարբերակված իմաստ են ձեռք բերել և նշանակում են օբյեկտիվ իրականության առարկա, երևույթ, հատկանիշ, վիճակ և կորցրել են իրենց դերբայական հատկանիշները (*գրող, ծնող, սպառող, հորպրող, սիրած, նշանած, հայրված*):

գ) *Չհարսնական հայրկանիշ*: Ըստ համանշտության ձևաբանական չափանիշի՝ հոմանշության համար որպես անհրաժեշտ նախապայման առաջ է քաշվում միևնույն խոսքի մասին պատկանելու պահանջը: Հետևաբար, գոյականները, բայերը, ածականները, մակբայները և մնացած խոսքի մասերը համապատասխանաբար առանձին-առանձին կազմում են հոմանշային ինքնուրույն շարքեր:

դ) *Իմաստարանական և ոճարանական չափանիշներ*: Բառային հոմանիշների կարևոր չափանիշները նրանց իմաստային և ոճական գործառնություններն են: Նրանք են որոշում նույն կամ մոտ իմաստ ունեցող բառերի յուրահատուկ կապերն ու հարաբերությունները, ինչպես նաև այդ կարգի բառերի տեղը լեզվի բառային համակարգում:

Համանշտության հիմնական չափանիշը վերջին հաշվով բառիմաստն է, բառերի իմաստային մոտությունը կամ նույնությունը: Իմաստով իրար հետ կապված, այսինքն՝ մոտ կամ նույն իմաստ ունեցող բառերը կազմում են հոմանիշների փակ շարք, որը լեզվի տվյալ համաժամանակյա վիճակի համար տեսականորեն չի կարող ոչ ընդարձակվել, ոչ էլ կրճատվել: Այն հարաբերականորեն կայուն է,

բայց լեզվի զարգացման հետ և նրա հետևանքով այդ շարքը անխուսափելիորեն ենթակա է փոփոխման և փոփոխվում է, ինչպես լեզվում նոր բառեր երևան գալու և հին բառերի դուրս մնալու, այնպես էլ լեզվի կազմում իմաստաբանական փոփոխությունների պատճառով առաջացող հետևանքների կապակցությամբ:

Հոմանիշների միջև հոմանշային հարաբերությունների համար վճռորոշ դեր են կատարում իմաստային-նրբերանգային տարբերությունները: Նրբիմաստի կամ իմաստային նրբերանգի բնորոշ կողմնայն է, որ խոսքի մեջ այն իրացվում է բառի գործածության կամ կիրառության շնորհիվ: Այնինչ բառի ինքնուրույն իմաստներին բնորոշ են շարահյուսական և կառուցվածքային պայմանավորվածության ձևերը, նրանց տարբեր դրսևորումները:

Որպես հոմանշության չափանիշ՝ առաջ է քաշվում նրանց իրարով փոխարինելիություն, կամ, այսպես ասած, հոմանիշների փոխադարձ փոխարինելիության հարցը: Վերոհիշյալ հարցը կարելի է ըմբռնել երկու իմաստով. փոխադարձ փոխարինելիությունը դիտել որպես հոմանշության բացարձակ չափանիշ, կամ այն համարել օժանդակ, երկրորդական չափանիշ:

Հոմանիշների փոխադարձ փոխարինելիությունը, նախ, գործնական և բացարձակ չափանիշ չի կարելի համարել, քանի որ նույնիսկ նույնանիշ բառերը ոչ բոլոր համատեքստերում է հնարավոր իրարով փոխարինել: Մյուս կողմից, եթե անգամ հոմանիշների շարքի մեջ մտնող առանձին բառեր իմաստներով ոչ մի տարբերություններ չունեն, նրանք կարող են տարբերակվել ոճական կիրառությամբ կամ գործածականությամբ, ինչպես **Նոր տարի, ամանոր, նավասարդ, կաղանդ** հոմանիշները իմաստով նույնն են. բայց միայն **նոր տարին** է գործածվում ժամանակակից հայերենի արևելահայ գրական տարբերակի չեզոք բառապաշարում որպես լեզվի ընդհանուր գործածական բառ, մինչդեռ **ամանոր, կաղանդ, նավասարդ** բառերի գործածությունը արդի հայերենում սահմանափակված է իբրև գրքային-բանաստեղծական (**ամանոր**), գրքային-հնացած (**նավասարդ**) և միայն արևմտահայերենում գործածվող (**կաղանդ**) բառերի: Այս դեպքում հնարավոր է նույնանիշների փոխարինում այն պայմանով,

էթէ անտեսվեն տվյալ բառերի ոճական-կիրառական տարբերությունները:

Հոմանիշների փոխադարձ փոխարինելիությունը համարյա անհնար է դառնում նրանց մեջ նրբիմաստային տարբերությունների առկայության դեպքերում: Օրինակ՝ **խնորհեյ, քախսանջեյ, աղաչեյ, պաղապրեյ**, կամ **պոչ** (ընդհանուր), **ազի** (ձարավոր, նաև թավամազ), **ջեպ** (թավամազ) (բրբ. խակց.), **տրտուն, տուտ** (քղանցքի) և **զես** (աստղի) և այլն:

Հոմանիշների փոխադարձ փոխարինելիությունը, այսպիսով, փաստորեն անհնար է իմաստային նրբերանգներով կամ միաժամանակ ոճական կիրառությամբ և հուզաարտահայտչական տարբերության գունավորմամբ իրարից տարբերվող հոմանիշ բառերի դեպքում:

Հոմանիշների որոշ, մասնակի փոխարինելիություն կարող է տեղի ունենալ հոմանիշների շարքի ներսում, շարքը կազմող առանձին գույգերի կամ շարքի որևէ անդամի և հիմնաբառի միջև: Այդ դեպքում հոմանիշների միջև առկա է իմաստների ընդհանրությունը, ավելի ճիշտ՝ նույնությունը, իսկ այդ բառերի ոճական և հուզաարտահայտչական գունավորման տարբերություններն անտեսվում են: Օրինակ՝ **քամքասեյ-չարախոսեյ, ծովափ-ծովեզր, շրթունք-պոռոշ, այտ-բուշ, արջոր-արաղաղ, համեմատեյ-բաղդատեյ, Արուսյակ-Աստղիկ-Վեներա** և այլն:

Փոխադարձ փոխարինելիությունը որպես հիմնական չափանիշ կարելի է ընդունել նույնանիշների կամ բացարձակ հոմանիշների համար, այն էլ՝ գլխավորապես տերմինային արժեք ունեցող բառերի դեպքում:

Այսպիսով, իրականում փոխադարձ փոխարինելիության չափանիշը, որ կիրառվում է հոմանիշների իմաստային բովանդակության գուգադիպության, նրանց իմաստային նույնության դեպքերի համար, չի կարող համարվել հոմանիշների ընդհանուր և գործնական չափանիշ: Այն պետք է ընդունել իբրև օժանդակ, երկրորդական չափանիշ:

Հոմանիշների շարքը ժամանակակից հայերենում

Հոմանիշների շարքը բառերի և դարձվածքների այն խումբն է, որի մեջ մտնող բառերը կամ դարձվածքները իրար հետ կապված են հոմանշային հարաբերությամբ: **Քառերի կամ դարձվածքների այն խումբը, որ միավորում է երկու կամ ավելի հոմանիշ բառեր կամ դարձվածքներ, կոչվում է հոմանիշների շարք:** Հոմանիշների շարք տերմինից բացի՝ բառերի այդ խումբն անվանում են նաև **հոմանիշների փունջ** կամ **հոմանիշների բույն:**

Հոմանիշների շարքն իրենից ներկայացնում է բառերի և դարձվածաբանական միավորների պատմականորեն կազմավորված համաժամանակյա խմբավորում, որը համակարգային բնույթ ունի: Հոմանիշների շարքի մեջ մտնող բառերն ու դարձվածքները արտահայտում են միևնույն հասկացությունը, բայց իրարից տարբերվում են կան իմաստային նրբերանգներով, կան ոճական կիրառությամբ, կան էլ և՛ մեկով, և՛ մյուսով:

Լեզվի զարգացման տվյալ փուլում հոմանիշների շարքը հարաբերականորեն կայուն է և սերտորեն կապված է բառապաշարի տեղաշարժերի հետ: Բառապաշարի կազմում կամ բառիմաստի մեջ կատարվող բոլոր, անգամ ամենաչնչին փոփոխությունները իրենց արձագանքն են գտնում հոմանշային կապերի մեջ և գրանցվում են հոմանշային շարքերի միջոցով:

Քանակական տեսակետից հոմանիշների շարքի նվազագույն սահմանը, բնականաբար, երկու հոմանիշներն են: Հետևաբար, հոմանիշների շարքերը կարող են լինել *երկանդամ* և *բազմանդամ*:

ա) Երկանդամ հոմանիշների շարքերը հայերենում համեմատաբար սակավ են: Այդ կարգի շարքեր հայերենում կազմվում են հիմնականում նույնանիշներից: Այդ շարքերը կազմող հոմանիշները մեծ մասամբ տերմինաբանական բնույթ ունեն, օր.՝ *ախպսանիշ – ախպսանշան* (բժշկություն): Երկանդամ շարքեր են կազմում նաև գրական և բարբառային (զավառական) բառերի հոմանիշներից, ինչպես *ալրաբնդիռ – ալրամիջապ:*

բ) Բազմանդամ հոմանիշների շարքերը կազմվում են երկուսից

ավելի հոմանիշներից: Այդ շարքերը հայերենում գերակշիռ մաս են կազմում: Մովորաբար բազմանդամ հոմանիշների շարքեր են կազմում նրբիմաստով և ոճական կիրառություններով տարբերվող հոմանիշ բառերը: Ժամանակակից հայերենում բազմանդամ հոմանիշների շարքերում հոմանիշ բառերի և դարձվածքների թիվը երբեմն տասնյակից անցնում է: Օր.՝ *մեռնել – մահանալ, վախճանվել, ննջել, հանգչել, աշխարհից հրաժարվել, աշխարհից գնալ, հոգին ավանդել, հոգին փալ, հոգին Աստծուն փալ, կնքել մահկանացուն, կյանքի թելը կտրվել, կյանքը կարճել, կյանքը (մեկին) բաշխել, կյանքը խավարել, աստղը խավարել, արևը խավարել, արևը (մեկին) բաշխել, արևը մարել, արևը սևանալ, արևը կծկել, արևը փալ, արևը հանգչել, արևից ընկնել, աշխարհին մնաս բարով ասել, կյանքին մնաս բարով ասել, կյանքի հեյր հաշիվները փակել, աշխարհի հեյր հաշիվը փակել, մեկի չարը փանել, սրտի թելը կտրվել, Աստծու մոյր զնալ, հրեշտակների հեյր խոսել, պապերի մոյր զնալ, հորական փուն զնալ, անցավորաց բարև փանել, Տիրոջ հույսին մնալ, ոսկորները հանգաբացնել, պապարագ ասպարել, (անարգ., գռիկ.) շանսարակ լինել, ոբները պարզել, ոբները փնկել, գրողի ծոցը զնալ, Այլահի գիրկը զնալ* և այլն:

Հոմանիշների շարքեր կազմում են և՛ նույնանիշներով, և՛ համանիշներով: Նույնանիշների շարքերը հայերենում կազմում են.

ա) Միայն գրական լեզվի բառերից, ինչպես, օրինակ՝ *ականակիր-ականանալ, ականահարել-ականակոծել, այցեքարտ-այցեփոմ:*

բ) Գրական լեզվի արևելահայ և արևմտահայ տարբերակների բառերից՝ *սպիտակ-ճերմակ, գեղեցիկ-աղվոր, այսպեղ-հոս, սառը-պառ, պաղպաղակ-սառնանույշ:*

գ) Գրական և գավառական բառերից՝ *ականջարմար և ականջքոք, Արուսյակ, Աստղիկ, Այգասպոյ, Լուսաբեր, Գիշերավար, Եղջերու և Քարվանկորուսր, Քարվանկորուկ, Քարվանի ասպոյ:*

դ) Միայն գավառական բառերից՝ *ակիշ-ակիշքաք-քաքակիշ-փաշտաքեր, փաշտաքերիչ* (խմորի տաշտը քերելու երկաթե փոքր գործիք) և այլն:

Ի տարբերություն նույնանիշների՝ համանիշների շարքերը ընդհանրապես հարուստ են համանիշ բառերի իմաստային, բառաքերականական, ոճական և հուզաարտահայտչական, կիրառական առանձնահատկություններով, ինչպես նաև շարքերի քանակային կազմությամբ:

Համանիշների շարքերի իմաստաբանական կապերի էական առանձնահատկությունը հոմանիշների իմաստային որոշ տարբերություններն են: Համանիշների շարքերի մեջ բառերի նրբիմաստային տարբերությունները կարող են արտահայտվել և հանդես գալ բազմազան ձևերով:

1) Իմաստի նրբերանգային տարբերություններ, որոնք ցույց են տալիս գործողության ուժգնությունը կամ տարբեր աստիճանները, ինչպես՝ *խնդրել – հայցել, աղերսել, աղաչել, պաղապրել, քահանաչել, աղաչել-պաղապրել, լալ – արտաալել, հեկեկալ, հեծկլիտալ, ողբալ, կոծել, կականել* և այլն, *ծիծաղել – խնդալ, ժպտալ* (թեթևակի), *հռռոալ, կարկաչել, կչկչալ, քրքջալ* (բարձրաձայն), *ճխալ* (ուրախությունից), *փոքկալ, փոքկացնել, փիկալ* (հանկարծակի), *արտաները ցույց տալ* և այլն, կամ՝ *հարգել – համակրել, սիրել* և այլն:

2) Որակի տարբեր աստիճաններ ցույց տվող համանիշներ՝ *լավ – հիանալի, հրաշալի, սքանչելի, զմայլելի, անզուգական, չնաշխարհիկ* և այլն:

3) Վերացական և թանձրացական (կոնկրետ), ընդհանուր և թանձրացական հարաբերություններ ցույց տվող համանիշներ՝ *սարկ – գոյարևել, գոյություն ունենալ, նայել – հայել, դիտել, տեսնել, աչքերը չռել* և այլն:

4) Որևէ հատկանիշի աստիճանով. ա) *մեծությամբ՝ մեծ – խոշոր, հսկա, վիթխարի, սևեռի* և այլն, բ) *գույնով կարմիր – կարմրագույն, հրագույն, բոցագույն, ալ, շառագույն, կարմրավուն, կարմրորակ, կարմրերանգ, կարմրաժեռ* (կարմրին մոտ):

5) Միևնույն առարկայի, երևույթի տարբեր տեսակները, ձևերը, արտահայտությունները, ինչպես՝ *քամի – հողմ* (ուժեղ), *զեփյուռ, սյուռք, հովիկ* (մեղմ), *հյուսիս, պահարցի* (ցուրտ), *բուք* (ցրտաշունչ,

ձյունախառն), *մրրիկ, փոքրիկ* (ուժեղ, անձրևախառն), *սամուձ* (ուժեղ, անապատային), *վիշապ, քարառ* (ուժեղ), *հարավ, խորշակ* (տաք), կամ՝ *այծ – քառ, քոչ, նոխազ* (արուն), *ձի – հովապրակ* (արուն), *գամբիկ* (էգը), *քուռակ* (ձագը) և այլն:

6) Համանիշներ, որոնք չեն համընկնում իրենց արտահայտած հասկացությունների ծավալով՝ *արտիստ – դերասան (թատերական), նկարիչ – գեղանկարիչ, կենդանագիր, ծովանկարիչ, բնանկարիչ, գյուղանկարիչ, դաշտանկարիչ* և այլն:

7) Միևնույն առարկայի, հասկացության տարբեր հատկանիշներն արտահայտող համանիշներ. *Աստված – Արարիչ, Սրեղծող, Սրեղծիչ, Տեր, Հայր, Ամենակալ, Արքա երկնավոր, Երկնային քագավոր, Երկնային դատավոր, Տիեզերքի քագավոր, Թագավոր քագավորաց* և այլն:

Հիմնաբառը կամ հենաբառը հոմանիշների շարքում: Հոմանիշների բազմազան կապերի համար շարքի մեջ ելակետային անդամը *հիմնաբառը* կամ *հենաբառն* է: Հիմնաբառը պետք է արտահայտի հիմնական, ընդհանուր իմաստը, ոճականապես պետք է չեզոք լինի և գործածականությամբ ավելի ակտիվ: Համեմատաբար հեշտ է հիմնաբառի կամ գերիշխող բառի ընտրությունը համանիշների շարքում: Ինչպես, օրինակ՝ *սոչ – ազի* (ձարավոր), *ձեպ* (թավամազ), *գևս* (աստղի) և այլն: Հոմանիշների այս շարքում իմաստի ընդհանրությամբ, ոճական և կիրառական առանձնահատկություններով առանձնանում է *սոչ* բառը, այն պատկանում է լեզվի չեզոք բառապաշարին, գուրկ է լրացուցիչ հուզաարտահայտչական գունավորումից, այդ շարքի մնացած անդամների համեմատությամբ ամենագործածականն է լեզվում և, ամենազխավորը, տվյալ հասկացության ընդհանուր գաղափարն է արտահայտում: Հետևաբար, այդ շարքի համար հիմնաբառ է ընտրված *սոչ* բառը:

Հայերեն հոմանիշների դասակարգումը

Հոմանիշների դասակարգումը կատարվում է ըստ իմաստաբանական և ոճական չափանիշների:

Ըստ իմաստաբանական չափանիշների կամ իմաստային հատկանիշների՝ հայոց լեզվի հոմանիշները ստորաբաժանվում են երկու խմբի՝ **նույնանիշների** և **համանիշների**:

ա) **Նույնանիշները** նույն իմաստն ունեցող բառերն են և կոչվում են *բացարձակ հոմանիշներ*: Օրինակ՝ **համեմապել-բաղդապել, սքաղաղ-սքլոթ, արև-արեգակ-արփի, գեղասի-գեղեզո, գնալ-երթալ, բնականաբար-բնականապես-բնականորեն, մեխ-գամ, այգրուշ, շրթունք-պոռշ** և այլն:

բ) **Համանիշները** մոտ իմաստ ունեցող բառեր են և կոչվում են նաև *հարաբերական հոմանիշներ*: Օրինակ՝ **բարկանալ – նեղանալ, սրդողել, սրբմղել, սրբնեղել, հերսույել, չարանալ, ջղայնանալ, գայրանալ, կատաղել, մոլեգնել, դիվոպել** և այլն:

Ոճական հոմանիշներ: Հոմանիշների ոճական դասակարգման հիմքում ընկած է նրանց՝ լեզվի տարբեր ոճերին, կիրառության տարբեր ոլորտներին, բառապաշարի տարբեր շերտերին պատկանելը, ինչպես նաև բառակազմական առանձնահատկություններն ու այլ բառերի հետ կապակցվելու տարբեր ունակությունները:

ա) Հոմանիշներ, որոնք օժտված են հուզաարտահայտչական տարբեր գունավորումներով: Օրինակ՝ **մեռնել** (չեզոք) – **վախճանվել, հոգին ավանդել, Ասրծու մոյր (գոգր) գնալ, հրեշտակների մոյր գնալ, հրեշտակների հեյր խոսել** (դրական գունավորում), **սապիկել, շանսաբակ լինել, գրողի ծոցը գնալ, Ալլահի ծոցը գնալ** (անարգական, բացասական գունավորում), **ոյրները պարզել, ոյրները երկարել, նալերը րնկել** (գռեհկաբանական, բացասական գունավորում), կամ՝ **հարբել** և **լակել** (անրգ., բացասական):

բ) Մեղմասական և ծածկաբանական հոմանիշներ՝ **խմել – կոնծել, օղի – առյուծի կաթ, սպանել – և ևս անել** և այլն:

գ) Բառերի տարբեր կապակցելիությամբ օժտված հոմանիշներ: Օրինակ՝ **սրեղծել** (ընդհանուր) – **կերպել** (շենք, կոթող), **հորինել** (կեղծ, սուտ), կամ՝ **պարզ** (ընդհանուր) – **վճիպ, սկանակիպ** (ջուր, աղբյուր), **մազ** (ընդհանուր) – **վարս, հեթ, ծամ** (կնոջ):

դ) Լեզվի տարբեր շերտերին, պատմական տարբեր շրջաններին, գործածության տարբեր ոլորտներին պատկանող, տարբեր ծագում ունեցող հոմանիշներ:

1) Հայ գրական լեզվի արևելահայ և արևմտահայ տարբերակների հոմանիշներ: Օր.՝ *գեղեցիկ – աղվոր, սփսե – պնակ, վասր – գեշ, սառը – պաղ, հեռուստացույց – հեռադեպի, բուպե – վայրկյան, պատվիրել – սպասարել, քամի – հով, կծել – խածնել, քանկ – սուղ* և այլն:

2) Գրական լեզվի և բարբառային-գավառական ու ժողովրդախոսակցական շերտերի հոմանիշներ: Օրինակ՝ *սծուխ – գործելի (բրբ.), կողք – կուշտ, խեչ (բրբ.), վաղը – էգուց (ժող. խսկց.), փաթիլ – գլուց (բրբ.), քուլա, պարանոց – վիգ, ճիպ (բրբ.), շրթունք – պռոշ (ժող., խսկց.):*

3) Գրական լեզվի չեզոք շերտի և հին, հնացած, հազվադեպ գործածական հոմանիշներ: Օր.՝ *սկանջ – ունկն (հնացած), աչք – սկն (հնացած), չի – սասպ, քիք – ունչ:*

4) Գրական լեզվի, գիտության և տեխնիկայի տարբեր ոլորտներում գործածվող հոմանիշներ: Օրինակ՝ *մայրի-սուխ-չամ (բուսաբանական), սպաքարց-մակակերպ, կիսաշփական-կիսահպական-հպաշփական (լեզվաբանական):*

5) Լեզվի սեփական և փոխառյալ բառերով կազմվող հոմանիշներ: Օրինակ՝ *մակարդանյութ – ֆերմենտ, Արուսյակ – Աստղիկ – Վեներա* և այլն:

ե) Բառային և դարձվածաբանական հոմանիշներ:

1) Բառային արժեք ունեցող դարձվածաբանական միավորներով և համանշանակ բառերով կազմվող հոմանիշներ: Օրինակ՝ *գլխի գցել – հասկացնել, գլխի ընկնել – հասկանալ, գլուխ գալ – հաջողվել, գլուխ փանել – շանչրացնել, աչքից գցել – արել, երեսի ջուր – ամոք, պարկառանք* և այլն:

2) Բառային ընդհանուր արժեք ունեցող հարադրություններով և համանշանակ բառերով կազմվող հոմանիշներ, ինչպես, օրինակ՝ *լուռ մնալ, լուռ կենալ – լռել, լաց լինել – լալ, աղաչանք անել, պաղարանք անել – աղաչել, պաղարել, պար գալ – պարել, պար ածել – պարեցնել, շուռ գալ – շրջվել, պարառ – պարառ անել – պարառորել* և այլն:

3) Միայն դարձվածաբանական միավորներով կազմվող հոմանիշներ, օրինակ՝ **ուղիի սկանջում քնած – դո՞ւ կաս միայն երուսաղիմ:**

Հոմանիշների դերը չափազանց մեծ է լեզվի բառապաշարի և դարձվածքային հարստության ճիշտ և նպատակային օգտագործման, օրինակելի բառային և դարձվածքային շրջանառության, ակտիվ բառապաշարի ծավալի ընդլայնման, բառերի գործածության նրբերանգների յուրացման, խոսքի ճոխ դրսևորման, լեզվի ոճական միջոցների հարստացման և խոսքի մշակույթի զարգացման գործընթացում:

Հոմանիշները հնարավորություն են տալիս արտահայտելու բառերով արտացոլված օբյեկտիվ աշխարհի առարկաների և երևույթների զանազան նրբերանգները, նրանք ավելի կատարելագործում և զարգացում են գրական լեզուն, ճշտության և ստուգության տալիս բառին և բառագործածությանը, լեզվում մտցնում են ոճական և հուզաարտահայտչական բազմազանություն և պեսալիսություն, օգնում խուսափելու խոսքի միօրինակությունից, նույն բառի կրկնությունից և այլն: Այսպիսով, նրանք բազմազան և պատկերավոր, արտահայտիչ և գեղեցիկ են դարձնում խոսքը:

Հոմանիշների՝ որպես գեղարվեստական խոսքի արտահայտչական և պատկերավորման միջոցի նշված առանձնահատկություններն առանձնապես վառ դրսևորում են ստանում գեղարվեստական գրականության և հրապարակախոսության մեջ:

Հականիշները ժամանակակից հայերենում

Հականշությունը⁵⁴ բառային միավորների իմաստների հակադրությունը կամ բևեռացումն է: Հականիշները այն բառերն են, որոնք զուգորդական հարաբերությունների դեպքում ունեն հակառակ

⁵⁴ **Հականիշ** հայերեն տերմինը կազմված է *антоним* բառի նմանողությամբ, իբրև նրա պատճենում (հունար. *anti* «հակառակ» + *onyma* «անուն»):
Շալունց Ռ., Հականիշ բառերը ժամանակակից հայերենում, Երևան, 1979:

իմաստներ: Լեզվում հականիշները գործածվում են այնպիսի հակադիր առարկաներ, երևույթներ, հատկանիշներ և այլն նշանակելու համար, որոնք իմաստով (իմաստաբանորեն) կարող են իրար հարաբերակցվել, ինչպես օրինակ՝ **սպիտակ – սև, ուրախ – տխուր, հարուստ – աղքատ, առողջ – հիվանդ, ճիշտ – սխալ, հիշել – մոռանալ, հարց – պատասխան, ծնվել – մեռնել** և այլն:

Բերված զույգերը հակադրվում են իմաստային մակարդակում, բայց այնուամենայնիվ, հարաբերակցվում են իրար հետ, միաժամանակ ունեն նաև որոշակի ընդհանրություններ այն առումով, որ յուրաքանչյուր զույգ հակադրվում է խոսքիմասային միևնույն երևույթը, հատկանիշը և այլն հակադիր հասկացությամբ արտահայտելու ընդհանրությամբ: Այդ տեսակետից բառերը հականիշներ չեն դառնա, եթե իրար հակադրվեն տարբեր խոսքի մասեր, անհարիր երևույթներ, առարկաներ կամ հատկանիշներ, ինչպես, օրինակ՝ **սպիտակ և սեղան, երկինք և վազել, տուն և տխուր** և այլն: Հականշության առանձնահատկությունն այն է, որ հակառակ, հակադիր իմաստներով պետք է օժտված լինեն միևնույն բառաբերականական կարգին, դասին պատկանող առարկաներ, երևույթներ, որակ-հատկանիշներ արտահայտող բառերը:

Հականշության համար առաջին հերթին հիմք կարող է ծառայել բառի բառային իմաստի մեջ որակական հատկանշի առկայությամբ: Այդ հատկանիշը կարող է աճել կամ նվազել և հասնել հակադրության: Պատահական չէ, որ հականշային հարաբերությունների ավելի հարուստ կապեր են դրսևորում հատկապես այն ածականները, որոնք արտահայտում են որակական հատկանիշներ: Օրինակ՝ **տաք – սառը, բաց – չոր, քաղցր – դառը, համեղ – անհամ** (տարբեր զգայությունների արտահայտող հասկացություններ), **հաստ – բարակ, մեծ – վոքր, բարձր – ցածր, կարճ – երկար, խոր – ժանձաղ, մուր – հեռու, ներքև – վերև** (ծավալի, չափի, տարածության, տեղի հասկացություն), **հին – նոր, երկարատև – կարճատև** (ժամանակային տարբեր հարաբերություն), **սպիտակ, ճերմակ – սև, բաց – մուգ** (գունային տարբեր հարաբերություններ), **սիրելի – սպրտելի, քաջ – վահկոտ, քայլ – ուժեղ, գեղեցիկ – տգեղ, լավ – վատ, վեհ – սպոր, վսեմ –**

նվասար, հիվանդ – **ստողջ** (ֆիզիկական և հոգեկան տարբեր հարաբերություններ) և այլն:

Հակադրական նման իմաստներ կարող են ունենալ նաև գոյական անուններն ու բայերը, որոնք վերաբերում են բնության և հասարակական կյանքի զանազան առարկաներին, երևույթներին և արտահայտում են տարբեր վիճակներ, ժամանակային, տարածական, զգացմունքային և այլ տարբեր՝ հակադիր հարաբերություններ՝ **երկրասարդություն** – **ծերություն**, **մանուկ** – **ծեր**, **մանկություն** – **ծերություն**, **աղջիկ** – **տղամարդ**, **արու** – **էգ**, **մարի** (էգ ոչխար) – **խոյ** (արու ոչխար, տարիքային, սեռային հարաբերություն), **լույս** – **խավար**, **առավոտ** – **երեկո**, **ամառ** – **չմեռ**, **արևելք** – **արևմուտք**, **երկինք** – **երկիր** (բնության, երևույթների հակադիր հարաբերություններ), **բարություն** – **չարություն**, **քննամոլություն** – **բարեկամություն**, **սիրելի** – **արևել**, **ուրախություն** – **վիշտ**, **լաց** – **ծիծառ**, **պարերազմ** – **խաղաղություն**, **սպրել** – **մեռնել**, **աշխատել** – **հանգստանալ**, **իջնել** – **բարձրանալ**, **գալ** – **գնալ**, **ծաղկել**, **փթթել** – **թառամել**, **թռնել**, (մարդու հասարակական գործունեության, մարդկային հոգեբանության, կենսագործունեության, զգացմունքային տարբեր գնահատության հակադիր հարաբերություններ):

Հականշային հարաբերության մեջ կարող են գտնվել նաև մակբայները՝ **շուտ** – **ուշ**, **կանուխ** – **ուշ**, **վաղ** – **ուշ**, **մոտ** – **հեռու**, **արագ** – **դանդաղ**, **առաջ** – **հետ**, կապերը՝ **մեջ** – **դուրս**, **տակ** – **վրա** և այլն:

Բառի բազմիմաստությունը և հոմանշությունը երբեմն պայմանավորում են նույն բառի կամ նույն կամ մոտ իմաստ ունեցող բառերի մեկից ավելի հականշային հարաբերությունների մեջ մտնելը, հետևաբար և հականիշներ ստեղծելը, օր.՝ **տասիակ** (առարկա) – **սուր** (առարկա), **տասիակ** (հիմար, ոչ սրամիտ) – **սրամիտ**, **ցածր** (պատ, դիրք) – **բարձր**, **ցածր** (արարք) – **վեհանշն** (արարք):

Իրենց ձևաբանական և բառակազմական առանձնահատկություններով հականիշ բառերը կարող են լինել **տարարմասար** (**տարահիմք**) և **նույնարմասար** (**նույնահիմք**):

ա) **Տարարմասար հականիշներ**: Դրանք այն հականիշներն են, որոնց արմատները (կամ հիմքերը) տարբեր են և ծագումնաբանա-

կան որևէ կապ չունեն իրար հետ՝ *մեծ – փոքր, սև – սպիտակ, գեղեցիկ – արգել, գիշեր – ցերեկ, աղքատ – հարուստ, սկավել – վերջանալ, հաջողվել – չախողվել, ծնունդ – մահ, լայն – նեղ, իսկոռք – հիմար, բարակ – հասար* և այլն:

բ) *Նույնարմատ հականիշներ*: Դրանք այն հականիշ բաղադրյալ բառերն են, որոնց կազմում ընդհանուր է առնվազն մեկ հիմնական ձևույթ՝ *ջրագուրկ – ջրաշատ, անհող – հողառատ, ջրանցիկ – անջրանցիկ, տնաշեն – տնավեր, օրինական – անօրինական, հեղափոխական – հակահեղափոխական, հավապարիմ – անհավապարիմ, ներշնչել – արտաշնչել, համակրել – հակակրել* և այլն:

Հականիշները լայնորեն գործածվում են գեղարվեստական գրականության, հրապարակախոսության և ժողովրդական բանահյուսության մեջ, որպես հակադրություն ստեղծելու գեղարվեստական միջոց: Նրանք խոսքին հաղորդում են դիպուկություն, արտահայտչականություն, պատկերավորություն: Յուրահատուկ նշանակություն են ստանում հականիշները գեղարվեստական ստեղծագործության մեջ և հատկապես բանաստեղծական արվեստում: Գեղարվեստական պատկերներ ստեղծելիս հայերենում հականիշների կիրառության փայլուն օրինակներ են տալիս Գ. Նարեկացին, Ավ. Իսահակյանը, Պ. Սևակը: Ինչպես՝

Այլիրատ աշխարհ, ուր հզոր ոսկին դարձնում է գողին՝ ազնիվ, բարեհույս,

Ապուշին՝ հանճար, վախկոտին՝ կտրիճ, տգեղին՝ չքնաղ և պռոնիկին՝ կույս:

(Ավ. Իսահակյան, «Աբու-Լալա-Մահարի»)

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ

Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը լեզվի մեջ մտնող բոլոր բառերի ամբողջությունն է: Բառապաշարի մեջ մտնում են ոչ միայն լեզվի համագործածական (ընդհանուր գործածական) բառերն ու դարձվածքները, այլև սովորական, ոչ գիտական լեզվում լայն գործածություն ունեցող տերմինները կամ գիտաբառերը: Լայն առումով ժամանակակից հայոց լեզվի բառային կազմն ընդգրկում է ինչպես գործուն (ակտիվ) և ոչ գործուն (պասիվ) բառապաշարները, այնպես էլ՝ տերմինաբանությունը:

Բառապաշարը պատմական կարգ է: Այդ նշանակում է, որ հայոց լեզվի պատմական զարգացման ընթացքում այն անընդհատ փոփոխվում, լրացվում և կատարելագործվում է: Լեզվի կառուցվածքային բաղադրիչներից ամենազգայունը, որն ամենից շատ է ենթարկվում արտալեզվական գործոնների ազդեցությանը, բառապաշարն է: Հասարակական կյանքում կատարվող փոփոխություններն առաջին հերթին իրենց արտահայտությունն են գտնում բառապաշարի մեջ: Նրա փոփոխումն ու լրացումը անմիջականորեն կապված է կյանքում կատարվող սոցիալական փոփոխությունների, մարդու արտադրական գործունեության, հասարակական-տնտեսական կյանքի, մշակույթի, գիտության և տեխնիկայի զարգացման հետ: Վերոհիշյալ կարգի ազդակների շնորհիվ նոր առարկաների և երևույթների երևան գալու կապակցությամբ լեզվի բառային կազմի համարումը կատարվում է կա՛ն սեփական բառերի կերտման, կա՛ն էլ օտարազգի բառերի փոխառության միջոցով. մյուս կողմից, լեզվում որոշ հասկացությունների՝ իրենց դարձն ապրելու, հմանալու հետևանքով գործածությունից դուրս են գալիս նաև նրանց համապատասխան անվանումները: Բառապաշարի փոփոխմանն ու լրացմանը մեծապես նպաստում են նաև իմաստաբանական բարդ գործընթացները, որոնք

լեզվի կենսագործունեության մշտական ազդակներից մեկն են: Բառային կազմի լրացման աղբյուր կամ բառապաշարից բառերի դուրս մղման պատճառ կարող են ծառայել նաև տարբեր պատճառներով բառի մեջ նոր իմաստի կամ իմաստների առաջացումը, բառի իմաստի մթագնումը և այլն: Այսպիսով, բառապաշարի տեղաշարժերն արտահայտվում են նորաբանություններով՝ նոր բառերի կազմությամբ, նորագույն փոխառություններով, լեզվի տարբեր ոլորտներում արդեն գործածվող բառերի նորանոր իմաստների ձեռքբերմամբ, ինչպես նաև լեզվում առկա բառերի վերաիմաստավորման, հների մոռացման և այլ իրողությունների շնորհիվ: Հետևաբար, լեզվի բառային կազմում կատարվող փոփոխությունների ընդհանուր գործընթացն իրագործվում է բառապաշարի համալրման ու իմաստաբանական զարգացման և բառապաշարի կատարելագործման միջոցով:

Բառապաշարի զարգացման և հարստացման ոչ պակաս կարևոր լեզվական իրողությունը նրա կատարելագործումն է⁵⁵: Բառապաշարի կատարելագործումը լեզվի բառային կազմում այնպիսի փոփոխությունների ամբողջությունն է, որ կարող է բնութագրվել իբրև բառապաշարի որակական զարգացում: Այդ նշանակում է, թե բառապաշարի կատարելագործումը ենթադրում է ոչ այնքան նոր բառերի և իմաստների մուտքը լեզվի բառային կազմի կամ իմաստաբանական համակարգի մեջ, որքան լեզվում արդեն գոյություն ունեցող բառերի զանազան կարգի փոփոխությունները, բառերի անցումները գործառական մեկ ոճից մյուսը, կամ բառերի փոխադարձ ներթափանցումները կիրառական տարբեր ոլորտներ, որոնք ամբողջությամբ վերցրած, ուղղված են լեզվի համակարգայնության և միօրինակության ծավալմանը, բառագործածությունների և բառիմաստների ճշգրտմանը, բառակազմական կաղապարների և տիպերի միասնականացմանը, լեզվի մաքրության ապահովմանը, բառապաշարի արդիականացմանը: Այսպիսով, բառապաշարի կատարելագործումը լեզվում գործող զարգացման ներքին (ներլեզվական) օրինաչափու-

⁵⁵ *Աղայան Էդ.*, Ժամանակակից հայերենի բառապաշարի կատարելագործումը // Բանբեր Երևանի համալսարանի, հասարակական գիտություններ, 1978, №2, էջ 155-170:

թյուններին համապատասխան և արտաքին (արտալեզվական) գործունեքի թելադրանքով տվյալ լեզվի բառային կազմի ներքին զարգացումն է, որ ուղղված է լեզվում առկա բառերի իմաստաբանական, գործառական, ձևական-ձևաբանական և բառակազմական հատկանիշների արդիականացմանը:

Ժամանակակից հայերենի բառապաշարի կատարելագործումն իրականանում է տարբեր ուղիներով: Այն կատարվում է ինչպես ներլեզվական տարբերակների, ինչպես, օրինակ՝ հնատիպ և նորատիպ հիմքերով կազմված բաղադրությունների (**աստեղատուն** և **աստղատուն**, **աստեղալից** և **աստղալից**, **աստեղային** և **աստղային**, կամ՝ **հորական** և **հայրական**, **մորական** և **մայրական**, **գագաթնային-գագաթային**, **աղեղնային-աղեղային**, **բաղեղնապատ-բաղեղապատ**), հնչյունափոխված և անհնչյունափոխ հիմքերի տարբերակների (**լուսային** – **լույսային**, **ձևութային** – **ձևույթային**, **թրքախոս** – **թուրքախոս**) միջև մղվող պայքարի ձևով, մինչև այդ ձևերից մեկի հաղթանակը: Բառապաշարի իմաստաբանական ու գործառական կատարելագործումը վերաբերում է առաջին հերթին բառերի իմաստների և գործածության ճշգրտումներին, որ կատարվում է իմաստային անորոշություններ ու շփոթություններ առաջացնող որոշ բառերի բազմիմաստության վերացման (ինչպես՝ **ճակատ–ռազմաճակատ**, **թև–գորաթև**, **կազմակերպական** (организационный) և **կազմակերպչական** (организаторский), **հրատարակություն** (հրատարակված գործ) և **հրատարակչություն** (հրատարակող մարմին), հոմանիշների գործառական, իմաստային և ոճական տարբերակումների (**գիտուն–գիտնական**, **պատմաբան–պատմագետ**), ինչպես նաև նույն հասկացության համար կազմված մեկից ավելի նույնանիշների՝ բառային կրկնակների կրճատման միջոցով, նրանցից մեկի հաղթանակի հետևանքով (**արտադրամաս** – գործամաս, **գեղագիտություն** – գեղեցկագիտություն, **վառիչ** – ինքնավառիչ, ինքնավառ, լուցիչ և այլն): Վերջապես, ժամանակակից հայերենի բառապաշարի կատարելագործման ուղիներից մեկն էլ, լեզվի մաքրության շահերից ելնելով, անհարկի փոխառյալ բառերի փոխարինումն է սեփական, հայերեն բառերով (**Ֆիլոլոգ–բանասեր**, **Ֆիլոլոգիա–բանասիրություն**, **բուտա-**

նիկա–բուսաբանություն, բիոլոգիա–կենսաբանություն, գեոլոգիա–երկրաբանություն):

Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը կազմված է **բառա-յին հիմնական ֆոնդից (հիմնական բառաֆոնդից, բառագանձից) և բառային կազմից:**

Բառային հիմնական ֆոնդ (բառագանձ): Բառային հիմնական ֆոնդը բառապաշարի հիմքն է, նրա բազան, ամենակայուն շերտը, որի մեջ առաջին հերթին մտնում են նախասկզբնական և նախնական ամենակարևոր և ամենաանհրաժեշտ այն բառերը, որոնք հաստատապես մուտք են գործել այդ լեզվով խոսող ժողովրդի կյանքում: Դրանք ընդհանուր գործածական այն բառերն են, որոնք անվանում են օբյեկտիվ իրականության առարկաները, երևույթները, գործընթացները, հատկանիշները և այլն: Այդ բառերը տարբեր դարաշրջանների և տարբեր ժողովուրդների լեզուների համար կարող են բնույթով տարբեր լինել:

Ժամանակակից հայոց լեզվի բառային հիմնական ֆոնդի մեջ են մտնում այն բառերը, որոնք հանրաձայն են հայերեն խոսողներին, դրանց իմաստները բացատրության կարիք չեն զգում և գործածական են բոլորի կողմից անկախ այդ մարդկանց կրթությունից, մասնագիտությունից և բնակության վայրից:

Բառային հիմնական ֆոնդը ընդգրկում է լեզվի ամենաանհրաժեշտ բառերը, և չպետք է կարծել, թե նրանք ճշտորեն համապատասխանում են միայն կարևոր հասկացություններին կամ անհրաժեշտ առարկաներին, քանի որ միևնույն հասկացությունների հետ կարող են կապված լինել տարբեր բառեր, իսկ նույն առարկաները կարող են անվանվել տարբեր բառերով:

Նույն հասկացությունը նշանակելու համար, ինչպես հայտնի է, լեզվում գոյակցում են մի շարք հոմանիշներ, բառապաշարում խաղացած իրենց դերի և արժեքի համապատասխան էլ՝ դրանցից ոչ բոլորն են մտնում բառային հիմնական ֆոնդ:

Հիմնական բառաֆոնդի բառերը չեզոք բառապաշարի են վերաբերում: Դրանք կարելի է գործածել միևնույն իմաստներով՝ խոսքի ցանկացած համատեքստում և ժանրերում:

Լեզվի բառային հիմնական ֆոնդի կորիզն են կազմում արմատ-

ները կամ արմատական բառերը, որոնք հիմք են ծառայում բազմաթիվ բաղադրյալ բառերի համար: Օրինակ՝ *մարդ, գուն* արմատական բառերից բաղադրված են՝ *մարդ – մարդկային, մարդկայնաբար, մարդկայնորեն, մարդկայնություն, մարդանալ, մարդկություն, մարդամուտ, մարդասիրտյա, մարդավայել, մարդավարի, մարդակերպ, մարդակապիկ, կապկամարդ, անմարդկային, գմարդի* և այլն: *Տուն – տնային, տնական, տնաբույս, անտուն, հեռագրատուն, անտնտնավար* և այլն:

Հայոց լեզվի բառային հիմնական ֆոնդը ձևավորվել է նրա կազմավորման ընթացքում, ընդգրկում է բնիկ հայերեն, այսինքն՝ հնդեվրոպական նախալեզվից ժառանգած, ցեղակից, ինչպես նաև հայ ժողովրդի կազմի մեջ մտնող ոչ ցեղակից (ոչ հնդեվրոպական) լեզուների, այսինքն՝ այլ ծագում ունեցող փոխառյալ բառեր, որոնք հայերի՝ այլ ժողովուրդների և քաղաքակրթությունների հետ ունեցած մշակութային, տնտեսական և քաղաքական հարաբերությունների բնականոն արդյունքը կամ հետևանքն են հանդիսանում:

Բառային հիմնական ֆոնդից դուրս են մնում մասնավորապես՝ ա) ժարգոնային տարրերը, բ) նեղ մասնագիտական բառերը, գ) առանձին հեղինակների մոտ գործածվող այն բառերը, որոնք լեզվում համընդհանուր գործածություն չունեն:

Բառային հիմնական ֆոնդի բառերը իրենց իմաստներով վերաբերում են հիմնականում հետևյալ բնագավառներին.

ա) Մարմնի տարբեր մասերի և նյութերի անուններ, ինչպես՝ *գլուխ, աչք, ձեռք, մասր, սկանջ, երես, ճակատ, քիթ, քե, ուս, կուրծք, թոք, լյարդ, սրամորս, ոսկոր, ստամ, արյուն, թուք, միս, երակ* և այլն:

բ) Ազգակցական և խնամիական տարբեր հարաբերություններ ցույց տվող բառեր՝ *հայր, մայր, եղբայր, քույր, դուստր, աղջիկ, տղա, երեխա, փեսա, հարս, քեռի, մորաքույր, սկեսուր, անեթ, քենի, գորանչ* և այլն:

գ) Բնության երևույթների և առարկաների անվանումներ, ինչպես՝ *արև, հող, ջուր, անչրե, չյուն, քամի, կայծակ, անտառ, դաշտ, լեռ, ծով* և այլն:

դ) Կենդանական աշխարհի անվանումներ՝ *մարդ, չի, ոչխար,*

խոգ, քոչուն, ծիւր, հափ, մեղու, ճանճ, շուն, կապու, գայ, աղվես և այլն:

ե) Բուսական աշխարհի անվանումներ՝ *ցորեն, գարի, խոպ, ծառ, կանաչ, տերև, բույս, վարդ, մասուր, կաղնի, սոճի, բարդի, կեչի* և այլն:

զ) Սննդի առարկաների, սննդամթերքների տարբեր անվանումներ, ինչպես՝ *հաց, ջուր, աղ, միս, կարագ, չեթ, բրինձ, երշիկ, մեղր, չմերուկ, խաղող, ծիրան, ընկույզ, միրգ, բանջար* և այլն:

է) Աշխատանքային տարբեր գործիքների անվանումներ՝ *մուրճ, դանակ, կացին, ուրագ, սղոց, մեքենա, հաստոց, տրակտոր* և այլն:

ը) Աշխատանքային գործընթացների անվանումներ, ինչպես՝ *հերկել, ցանել, մշակել, հնչել, քաղել, մաքրել, գրել, տնկել* և այլն:

թ) Ամենօրյա կենցաղի հետ կապված առարկաների և գործողությունների տարբեր անվանումներ՝ *եփել, լվանալ, սրբել, տուն, սենյակ, հափակ, կտուր, դուռ* և այլն:

ժ) Արհեստների և մասնագիտությունների տարբեր անվանումներ՝ *մրավորական, առևտրական, բանաստեղծ, գիրական, ուսուցիչ, հողագործ, այգեգործ, նախապան, ծրագրավորող* և այլն:

ժա) Բնակավայրերի, վարչական բաժանումների հետ կապված անվանումներ՝ *գյուղ, քաղաք, ավան, գյուղաքաղաք, երկիր, մարզ, քաղամաս, շրջան* և այլն:

ժբ) Գործողության և վիճակի վերացական և թանձրացական տարբեր անվանումներ՝ *քայլել, քնել, նստել, ուրել, պառկել, վազել, խոսել, մրսածել, լսել, սիրել, սրել, տիրել, հիշել, մոռանալ* և այլն:

ժգ) Որակ, հատկանիշ ցույց տվող բառեր՝ *սև, կարմիր, կապույտ, բարձր, ցածր, երկար, բարակ, կարճ, հասար, խելոք, հիմար, ուրախ, տխուր, արագ, շատ* և այլն:

ժդ) Հաճախ գործածվող դերանունները, թվականները, շաղկապները, կապերը, ձայնարկությունները, եղանակավորող բառերը:

Բառային հիմնական ֆոնդին առանձնահատուկ է նրա ոչ մեծ ծավալը, կայունությունը, գործածության տևականությունը: Նրա համեմատական կայունությունից էլ բխում է մյուս կարևոր առանձնա-

հասկությունը՝ ժառանգորդությունը, փոխանցումը սերնդից սերունդ: Հայոց լեզվով խոսող հանրությունը, յուրացնելով ժառանգած բառային հիմնական ֆոնդը, իր գոյատևման յուրաքանչյուր փուլում փոխանցել է հաջորդ սերնդին:

Մյուս կողմից՝ հասարակական կյանքի, արտադրական հարաբերությունների բնույթի փոփոխման, տնտեսության, քաղաքական կյանքի, գիտության ու մշակույթի զարգացման և առաջընթացի հետ բառային հիմնական ֆոնդը իր հերթին, թեև շատ դանդաղ, բայց և ենթակա է որոշ փոփոխման:

Բառային հիմնական ֆոնդի լրացումը կատարվում է ներքին և արտաքին գործոնների շնորհիվ՝ լեզվի բառային կազմին պատկանող բառերի փոխանցման, նորակազմ բառերի երևան գալու և փոխառությունների միջոցով: Բառային հիմնական ֆոնդը հարստանում է նախ՝ հատկապես այնպիսի նոր բառերի շնորհիվ, որոնք անվանում են նոր հասկացություններ (արտահայտում են արտադրության նոր տեսակներ և ձևեր, հասարակական նոր հարաբերություններ) և երկրորդ՝ գլխավորապես ի հաշիվ բառային կազմի այն բառերի, որոնք լեզվի ներքին հնարավորություններով և միջոցներով առաջացել են հիմնական բառաֆոնդի բազայի վրա:

Սվողեշի կարծիքով լեզվի հիմնական բառաֆոնդը փոփոխման է ենթարկվում հավասար արագությամբ, ըստ որում, յուրաքանչյուր հազարամյակի ընթացքում դուրս է ընկնում այդ բառերի 15 %-ը⁵⁶:

Այսպիսով, լեզվի հիմնական բառաֆոնդը մտնում է բառապաշարի մեջ իբրև նրա հիմնական և համեմատաբար կայուն մաս:

Բառային կազմ: Բառային կազմի մեջ մտնում են լեզվի բոլոր բառերը, այդ թվում նաև բառազանձի բառերը: Լեզվի բառային կազմը հիմնական բառաֆոնդի համեմատությամբ քանակապես շատ ավելի ընդարձակ և ավելի փոփոխական է, նրա սահմաններն ավելի շարժուն են: Այն անընդհատ լրացվում է նորանոր բառերով և իմաստներով, նրանից դուրս են մնում հնացած և հազվադեպ գործածվող որոշ թվով բառեր: Այն կարող է լրացվել նաև բառի կա-

⁵⁶ Տե՛ս *Ձսհոկյան Գ.*, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 219:

ռուցվածքի փոփոխման և բառերում նոր իմաստներ զարգանալու հետևանքով առաջացած նոր բառերով ու իմաստներով:

Բառային կազմն ավելի զգայուն է հասարակական, մշակութային կյանքում մարդու գործունեության մեջ կատարված փոփոխությունների նկատմամբ: Նրանում արձագանք են գտնում նշված բնագավառներում կատարվող քիչ թե շատ զգալի փոփոխությունները:

Ի տարբերություն հիմնական բառաֆոնդի՝ բառային կազմում տեղ են գրավում բառապաշարի հետևյալ խմբերը:

ա) Նորաբանությունները, այսինքն՝ նորակազմություններն ու նորագույն փոփոխությունները:

բ) Հնացած և հազվադեպ գործածվող այն բառերը, որոնք դեռևս գործածվում են լեզվի տարբեր ոճերում, գեղարվեստական կամ գիտական գրականության մեջ:

գ) Ոչ համաժողովրդական բառապաշարի այն բառերը, որոնք գործածվում են որևէ բնագավառում կամ գեղարվեստական գրականության մեջ (օրինակ՝ կերպարների, հերոսների լեզվում):

դ) Ջբաղմունքային՝ մասնագիտական և տերմինաբանական բառապաշարը:

ե) Ժողովրդախոսակցական լեզվի այն բառերը, որոնք չեն մտնում հիմնականում բառաֆոնդի մեջ:

զ) Օտարազգի ծագում ունեցող այն բառերը, որոնք չեն մտնում հիմնական բառաֆոնդի մեջ և իրենց համագործերը չունեն լեզվում:

Հիմնական բառաֆոնդը և բառային կազմը իրենց ակնհայտ տարբերություններով հանդերձ՝ անանցանելի պատկերով իրարից, այնուամենայնիվ, չեն սահմանազատվում: Նրանք գտնվում են փոխադարձ կապի և փոխներգործության մեջ, որն արտահայտվում է լեզվի կենսագործունեության ընթացքում բառային կազմից հիմնական բառաֆոնդը կամ վերջինից բառային կազմը մշտապես որոշակի թվով բառերի փոխադարձ անցումներով:

Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը ըստ հայերենի գարգացման տարբեր փուլերի և լեզվական տարբեր շերտերի

Հայոց լեզուն իր գրավոր շրջանում անցել է հին գրական հայերենի (գրաբարի), միջին գրական հայերենի և նոր գրական հայերենի (աշխարհաբարի) գարգացման փուլերը:

Ժամանակակից հայոց գրական լեզվի արևելահայ տարբերակի բառապաշարում կարելի է տեսնել ինչպես ընդհանուր հայերենի գարգացման բոլոր փուլերի բառապաշարային դրսևորումները, այնպես էլ նրա ինքնուրույն գարգացման հետևանքով ձեռք բերած բառապաշարային հարստությունը:

Ըստ գարգացման տարբեր փուլերի և լեզվական տարբեր շերտերի՝ ժամանակակից հայոց գրական լեզվի արևելահայ տարբերակի բառապաշարը կազմված է գրաբարյան, միջին հայերեն, բարբառային (գավառական), արևելահայ և արևմտահայ գրական տարբերակների բառերից, որոնք և կազմում են նրա բառապաշարային առանձին շերտերը: Ժամանակակից հայերենի բառապաշարն իրականում միասնական և մի կոռ համակարգ է, և նրանում շերտերի առանձնացումը, իհարկե, որոշ չափով պայմանական բնույթ ունի:

Քանակական տեսակետից գրաբարյան, միջին հայերեն, բարբառային (գավառական) և զուտ արևմտահայերեն բառերը ժամանակակից հայոց գրական լեզվի արևելահայ տարբերակի բառապաշարում (վերջինս, եթե պայմանականորեն ընդունենք, մոտ 200-250 հազար բառային միավոր) կարող են կազմել մոտ 1/5 մասը միայն: Հետևաբար, արևելահայ գրական լեզվի բառապաշարի մեծագույն մասը կամ հիմնական զանգվածը ստեղծվել և կազմավորվել է նրա պատմական գարգացման ընթացքում՝ հայերենի բառակազմական օրենքներով կերտված նորանոր բառերի, գրաբարյան, միջին հայերեն, բարբառային բառերի ձեռք բերած նոր իմաստների և մասամբ օտար, հատկապես ռուսերենի, այսօր նաև անգլերենի միջոցով կատարվող փոխառությունների շնորհիվ:

1. Գրաբարյան բառեր և բառաձևեր: Գրաբարը՝ որպես գրական լեզու, գրի է առնվել 5-րդ դարում, իբրև գրավոր լեզու իր գոյությունը

պահպանել է մինչև 19-րդ դարը: Ըստ որում, նրա խոսակցական տարբերակը համաժողովրդական լեզվի իր դերը կատարել է մինչև 9-10-րդ դարերը՝ հետագայում իր տեղը զիջելով բարբառներին և միջին գրական հայերենին: Ժամանակակից հայերենում գրաբարյան շերտը կազմում են գրաբարից ժառանգած բառերն ու իմաստները, ինչպես նաև գրաբարյան բառաձևերը, որոնք այժմ ներկայացնում են գրաբարի քերականական քարացած ձևեր և ժամանակակից հայերենում գիտակցվում, ընդունվում են իբրև ինքնուրույն բառեր:

Գրաբարի բառապաշարը իր ամբողջական արտահայտությունն է գտել երկհատոր «Նոր հայկազյան բառարանում» (Վենետիկ, 1836–37 թթ.), որ պարունակում է մոտ 51 հազար բառահոդված, և հատկապես սրա համառոտ տարբերակում՝ «Առձեռն հայկազյան բառարանում» (2-րդ հրատ., Վիեննա, 1865 թ.), որ ընդգրկում է ավելի քան 56 հազար բառ⁵⁷:

Այսպիսով, ըստ գրաբարյան բառարանների տվյալների, գրաբարյան բառերի քանակը մոտ 50–55 հազար է կազմում⁵⁸: Այդ չի նշանակում, որ գրաբարի բառային կազմը միայն վերոհիշյալ բառաքանակով է սահմանափակվում: Հիշյալ բառերը, ինչպես հայտնի է, միայն գրաբարյան գրավոր հուշարձաններում արձանագրված բառերն են: Այդ հուշարձանների սահմանափակությունը, այդ հուշարձաններում գիտությունների, կյանքի և մշակույթի տարբեր բնագավառների ընդգրկման համեմատաբար ոչ մեծ բազմազանությունը, իհարկե, մեծապես ազդել են բառարաններում գրաբարյան բառերի իրական թվի արտացոլման վրա: Մյուս կողմից՝ գրաբարյան գրավոր հուշարձաններում լրիվ չափով չի ներկայացված նաև խոսակցական բառապաշարը: Ամենահամեստ հաշվումներով ժամանակակից հայերենին է փոխանցվել գրաբարյան ընդհանուր բառապաշարի մոտ 40 տոկոսը: Այդ բառերի մեծ մասը պահպանել է իր հիմնական իմաստները, որոշ բառեր ձեռք են բերել լրացուցիչ իմաստներ, որոշ

⁵⁷ Հմմտ. *Աճառչան* Հ., Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951 թ., էջ 490:

⁵⁸ Նորագույն տվյալներով այն անցնում է 60 000-ից (տես *Ղազարյան Ռ.*, Գրաբարի բառան, հտ. 1-2, Երևան, 2000: *Հովհաննիսյան Լ.*, Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, Երևան, 2010):

բառեր էլ իմաստափոխվելով ժամանակակից հայերենում հանդես են գալիս նոր իմաստներով:

Ժամանակակից հայերենում գրաբարյան բառերը բաժանվում են հետևյալ հիմնական խմբերի՝ **ընդհանուր հայերեն բառեր, գրաբարից անցած տերմիններ, գրաբարյան իմաստափոխված բառեր** (որոնք արդի հայերենում հիմնականում տերմիններ են դարձել) և **գրաբարյան կազմություններ**:

ա) Ընդհանուր հայերեն բառեր: Այդ կարգին են պատկանում գրաբարյան այն բառերը, որոնք ժառանգել է արդի հայերենը և ընդհանուր են հայերենի բոլոր դրսևորումներին՝ ինչպես գրաբարին, այնպես էլ միջին գրական հայերենին, բարբառներին և ժամանակակից գրական հայերենի երկու տարբերակներին՝ արևելահայերենին և արևմտահայերենին:

Գրանք մեծ մասամբ բառային հիմնական ֆոնդի բառերն են, ինչպես՝ **հայր, մայր, քույր, զավակ, մարդ, կին, ամուսին, հաց, ջուր, փուն, լեռ, գետ, մեծ, փոքր, լավ, կարմիր, դանդաղ, մեկ, երկու, քայլեր, խոսել, այս, որքան** և այլն, որոնք իրենց հիմնական առարկայական (իբեղեն) իմաստներով գրաբարյան շրջանից գոյատևում են մինչև մեր օրերը: Այս կարգի բառերը ընդհանուր են նաև միջին հայերենի և հայերեն տասնյակ բարբառների համար: Միակ առանձնահատկությունն այն է, որ միջին հայերենում, բարբառներում, հաճախ նաև աշխարհաբարում այդ բառերը ենթարկվել են համապատասխան հնչյունական այլևայլ ձևափոխությունների (ինչպես՝ **հայր-հէր, իւէր, մայր-մէր, հաց-խաց, հօց, եղբայր-ախպեր, ապեր, ախպար, աղբար, լեառն-լեռ, քոյր-քույր, որդի-վօրթի, քայլեք-քալեկ**):

Գրաբարից են անցել նաև բաղադրյալ շատ կազմություններ, որոնք նույն կամ իմաստային աննշան փոփոխմամբ գործածվում են ժամանակակից հայերենում: Այսպես, «Առձեռն» բառարանի պատահականորեն ընտրված 120-130 էջերում (10 էջում) գետեղված ավելի քան 150 բառ գործածվում է ժամանակակից հայերենում: Այդ կարգի բառերի զգալի մասը գեղարվեստական գրականությունից քաղված բնագրային օրինակներով տեղ է գտել «Ժամանակակից

հայոց լեզվի բացատրական բառարանում» (Ա հատոր, 1969 թ.): Բե-
րենք դրանցից մի քանիսը՝ *ասպեյր, ասպեյրություն, ասպնջական, ասպիճանավոր, ասպրաբաշխություն, ասպրագեյր, ասպրագուշակ, ասպրաշին, ասպրանկար, ասպրապասկ* և այլն, կամ՝ *արադձագործ, արամնաթափ, արամնավոր, արամնացավ, արագագնաց, արագախոս, արագահոս, արագաշարժություն, արագընթաց, արագություն, արարավորություն, արարողություն* և այլն: Հիշյալ և տասնյակ այլ բառերի բնագրային գործածման օրինակները «Ժամանակակից հայոց լեզվի բառարանում» բերված են արևելահայ և արևմտահայ դասական և ժամանակակից գրողներից (Ռ. Պատկանյան, Բաֆֆի, Հ. Պարոնյան, Նար-Դոս, Հ. Թումանյան, Ա. Իսահակյան, Դ. Վարուժան, Գ. Չոխրապ, Ե. Օտյան, Դ. Դեմիրճյան, Ստ. Չորյան, Ն. Չարյան, Ա. Բակունց, Պ. Սևակ, Ս. Խանգաղյան և ուրիշներ): Այս կարգի բառերն այժմ լայն գործածություն ունեն ինչպես գրավոր և բանավոր խոսքում, այնպես էլ՝ գրական լեզվի տարբեր ոճերում:

բ) Գրաբարյան իմաստափոխված բառեր ժամանակակից հայերենում: Լեզվի պատմական զարգացման ընթացքում գրաբարյան հազարավոր բառեր կա՛մ իմաստափոխվել են, կա՛մ էլ իրենց հիմնական, առարկայական իմաստներին զուգահեռ ձեռք են բերել նոր իմաստներ, ըստ որում շատ դեպքերում այդ նոր իմաստներն այժմ ավելի գործածական են, քան նախնական իմաստները: Այսպես, **օղապարիկ** գրաբարում գործածվում էր իբրև ձիուն տրվող մակդիր՝ «օղի մեջ պարող՝ սավառնող», հետագայում՝ ժամանակակից հայերենում այն գործածվում է իբրև «զագոլ լցված հատուկ թռչող սարքի անվանում»: **Ազապական** գրաբարում նշանակում է՝ «1. ազնվականին հատուկ, 2. համարձակ», այժմ՝ «ազատամիտ գաղափարների տեր (անձնավորություն)»: **Պահպանողական** գրաբարում ունի հետևյալ իմաստները՝ «1. պահող, պահպանող, 2. ժողովրդի կառավարիչ», ժամանակակից հայերենում՝ «1. ամեն մի նորությանը թշնամի, քաղաքական կարգի, կենցաղի և այլնի անփոփոխության պաշտպան, 2. այդ հայացքներն ունեցող մարդ, 3. ծայրահեղ աջ քաղաքական կուսակցության անդամ»:

զ) Գրաբարից անցած տերմիններ: Գրաբարից են անցել և ժամանակակից հայերենում լայն գործածություն ունեն քերականական, գրականագիտական, փիլիսոփայական, բժշկագիտական, բուսաբանական որոշակի քանակով տերմիններ: Ինչպես, օրինակ՝ *բայ, մակբայ, բառ, տառ, դերանուն, գոյական, իմաստասեր, քերականություն, սրուգաբանություն, ածանց, ստորակերպ, ներկա, անցյալ, անորոշ, հրամայական, հոլով, սեռական, չայնորդ, առոգանություն, կամ՝ մակդիր, կատակերգություն, ողբերգություն, մեծավերջ* (յամբ), *վերջարանջ* (անապեստ). ռազմական գործում՝ *գումարարակ, դասակ, վաշտ, նավատորմ, պարեր, իրավաբանական՝ դատախազ, դատավոր, դատարան* և այլն:

Հատկանշական է, որ պատմական զարգացման ընթացքում այդ կարգի տերմինների հիմքում ընկած հասկացությունների ծավալի փոփոխման հետևանքով շատ տերմիններ, ընդարձակելով կամ համապատասխանաբար փոփոխելով հասկացության ծավալը, պահպանել են իրենց կենսունակությունը, ինչպես այն կատարվել է քերականական և փիլիսոփայական-տրամաբանական հայերեն բազմաթիվ տերմինների հետ:

դ) Գրաբարյան կազմություններ: Այս կարգի բառերի շերտը ժամանակակից հայերենում ներկայացնում են *գրաբարյան քարագած ձևերը*:

Գրաբարյան քարագած ձևերը գրաբարյան նախդիրներով, գրաբարի հոլովման և խոնարհման ձևերով, բայական ածանցներով կազմված, ինչպես նաև գրաբարյան շարահյուսական կապակցություններ, անգամ ամբողջական նախադասություններ ներկայացնող միավորներ են, որոնք ժամանակակից հայերենում գիտակցվում և գործածվում են իբրև ինքնուրույն բառեր:

Անհրաժեշտ է նշել նաև, որ այդ կարգի բառերի որոշ մասը համաբանությամբ կազմվել է ոչ թե լեզվի զարգացման գրաբարյան փուլում, այլ հետագա շրջանում:

Գրաբարյան *առ, գ, ընդ, ըստ, ի, ց* նախդիրներով կազմված բառեր.

Առ – *առայժև, առանջին, առարկել, առաինյա, առընթեր, առ-*

կախի, առկայծել, առհասարակ, առջեռն, առմիշտ, առնչութիւն, առնվազն, առողջ, առօրյա:

Չ – զարմանալ, զարկել, զգալ, զեռալ, սքափվել (<զքափվել), զեղել (<զհեղել), զեղծել, զիջել, զովանալ (<զհովանալ), սքողել (<զքողել), զօծել, հեղգհեղտ:

Ընդ – ընդամենը, ընդառաջ, ընդարշակել, ընդգծել, ըմբռնել (<ընդըռնել), ընդդէմ, ընդհարել, ընդհուպ, ընդհանուր, ընկողմանել (<ընդկողմանել), ընկրկել (<ընդկրկել), ընդմիջտ, ընդունարան, զիրկընդիսառն, մեջընդմեջ:

Ըստ – սրանչնել (<ըսրանչնել), ըստ այդմ, ըստ այսմ, ըստ ամենայնի, ինքնրստիկնքյան, օրըստօրե:

Ի (>յ>ի) – իհարկե, հաջողել (<յաջողել < ի աջողել), հօգուր (<յօգուր), ի միջի այլոց, հավելյալ (<յավելյալ), հանչինս, խառնիխուռն, վայրիվերո:

Յ – ցայգ, ցերեկ, ցմահ, ցկյանս, ցրեսութիւն:

Գրաբարյան հոլովակիան չեեր: Դրանք այն բառերն են, որոնց մեջ պահպանվել են գրաբարի հոլովված տարբեր ձևերը:

1) Եզակի ուղղական-հայցականը՝ **-ի** վերջնահնչյունով՝ **տեղի** (տեղի տալ), **անրեղի**, **գերեզմանարեղի**, **ուխարարեղի:**

2) Եզակի սեռական-տրականը՝ **-ա**, **-ո**, **-ույն** (<ոյն) վերջավորությամբ՝ **Վանա**, **Սեանա**, **հուսո**, **պարտո** (պահակ), **սիրույն**, **արժանվույն**, **քեռորի**, **քեռայր** (գրք. քոյր – քեռ):

3) Եզակի բացառականը **-ե** (<է), **-են** (<էն) վերջավորությամբ՝ **դարեդար**, **օրեցօր**, **բացեիբաց**, **օրըստօրե**, **իհարկե:**

4) Եզակի գործիականը՝ **-բ**, **-ալ** (<ալ), **-իլ** (<իլ) վերջավորությամբ՝ **չերբագարվել**, **չերբակալել**, **բնալ**, **հարկալ**, **հագիլ**, **խարիլ**, **շնորհիլ**, **միով բանիլ**, **մեծալ մասամբ**, **այնուամենայնիլ:**

5) Հոգնակի ուղղականը **-ք** վերջավորությամբ՝ **տիկնայք**, **բաժանմունք** (<բաժանումն), **մրածմունք**, **հարցմունք**, **ցուցմունք**, **ուսմունք**, **սամունք**, **արարմունք**, **բուրմունք**, **քրտիք** (<քիտրն):

6) Հոգնակի սեռական-տրականը՝ **-աց**, **-ից**, **-ոց** վերջավորությամբ՝ **վրաց**, **պարսից**, **հայոց** (<Վիրք, Պարսք, Հայք), **խորոց** (ի խորոց սրտի), **գլուխգործոց**, **չեռագիր**, **չեռացափող:**

7) Հոգնակի հայցականը՝ **-u** վերջավորությամբ՝ **բաղնիս, զուգս, պաս, ծախս, խելոք, ծառս** (լինել):

8) Հոգնակի գործիականը՝ **-ոք** (< *օք* < *աւք*) վերջավորությամբ՝ **իրոք, առոք-փառոք, ընկրանկոք**:

9) Գրաբարյան հոլովական և խոնարհման ձևերից ծագող մակբայներ, եղանակավորող բառեր, շաղկապներ, կոչականներ՝ **կրքեմն, հագիվ, իբրև, որովհետև, կեցցե՛, ավա՛ դ, օ՛ն**:

10) Գրաբարյան բայական որոշ ձևեր՝ **-ուց, -ույց** (<*ոյց*) պատճառական ածանցով, **ան** սոսկածանցով, ցոյական կամ պարզ անցյալի հիմքով, եզակի երրորդ դեմքի ձևով՝ **մապույց, հապույց, կառույց, ասացող, փաղասաց, հեռագնաց, հարամնա, բայ, գոյ**:

11) Գրաբարյան անցյալ դերբայի **-եալ** վերջավորությամբ կազմված բառեր՝ **անցյալ, լքյալ, կարծեցյալ, հանգուցյալ, հեծյալ, հեպելյալ, սառուցյալ, սպորադրյալ, վերոհիշյալ**:

12) Գրաբարի դարձվածքներ, ոճեր, արտահայտություններ՝ **չայն բարբառո հանապարհ, սահման քաջաց զենն յուրյանց, ի խորոց սրտից, ոչ միայն հացիվ** (կեցցե մարդ), **ակն ընդ ական, սպամն ընդ սպաման, երիցս նզովյալ, հավոր պապշածի, նման զնմանն սիրև, ունայնություն ունայնության, ավա՛ դ փառացս անցավորի**:

13) Գրաբարյան շարահյուսական կապակցություններ՝ **համեմայն դեպս, այնուամենայնիվ, ընդ որում, այսուհետև, հեպզհետև, ամենայն հավանականությամբ, ըստ մեծի մասին, ըստ օրենքի, ըստ այսմ, ընդ ամին, ի փառս, ի վիճակի** (լինել), **ի հիշարակ, ի պսպրիվ, ի պաշտոնն, ի նպաստ**:

14) Գրաբարյան ամբողջական նախադասություններից կազմված բառեր. **որևէ, ովևէ, ինչևէ, ովևիցե, երբևիցե, որևիցե, ուրևիցե, քերոդորմյա, քաջալեր** (*եյ*) և այլն:

2. Միջին հայերեն բառեր: Միջին հայերենը⁵⁹, լինելով 12-16-րդ

⁵⁹ Հմմտ. *Աճառյան* Հ., Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Երևան, 1951, էջ 226-254: *Ղազարյան* Ս., Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1954, էջ 231-235, 320-323: *Մուրադյան* Ս., Բառագիտություն // Ակնարկներ միջին հայերենի պատմության, Երևան, 1972, էջ 169-296:

դարերի լեզուն, անցման շրջան է ծառայում գրաբարի և աշխարհաբարի միջև: Միջին հայերենով հասել է տարբեր բնույթի հարուստ գրականություն: Այն եղել է ժամանակի ոչ միայն գրականության, այլև ժողովրդի խոսակցական, կենդանի լեզուն: Միջին հայերենին գուգահեռաբար դեռևս գիտական որոշ ուսումնասիրությունների և եկեղեցու համար գրաբարը՝ որպես գրական և գրքային լեզու, իր գոյությունը պահպանում է մինչև 19-րդ դարը: Միջին հայերենի գործառության և տարածման շրջանում Հայաստանի տարածքում գործում էին նաև հայերեն բարբառները:

Հայերենի մասնագետները համակարծիք են այն հիմնական կետում, որ միջին հայերենի լեզվական իրողությունները որակապես տարբերվում են ինչպես գրական հին հայերենից՝ գրաբարից, այնպես էլ գրական նոր հայերենից՝ աշխարհաբարից: Այդ հանգամանքն էլ հիմք է տալիս միջին հայերենը անվերապահորեն ընդունելու որպես հայերեն գրական-խոսակցական լեզու, որը հաջորդել է գրաբարին և նախորդել աշխարհաբարին:

Միջին հայերենը իր ծնունդով և գոյությամբ սերտորեն կապված է գրաբարի և բարբառների հետ, որոնցից էլ բխում են նրա բառապաշարի օրինաչափություններն ու ընդհանրությունները հիշյալ լեզուների հետ:

Նախ, միջին հայերենը ժառանգել է գրաբարի բառապաշարը՝ ենթարկելով իր հնչյունաբանական, ձևաբանական, բառաիմաստաբանական օրինաչափություններին: Մյուս կողմից, իր գոյատևման ընթացքում նա ինքնուրույնաբար փոխառություններ է կատարել արաբերենից, նոր պարսկերենից, թուրքերենից, եվրոպական և այլ լեզուներից⁶⁰: Միջին հայերենի բառապաշարի բաղադրատարրն են կազմում նաև ժամանակի բարբառային բառերը: Հետաքրքրական է նաև, որ բարբառային (գավառական) շատ բառեր առաջին անգամ արձանագրվել են միջին հայերեն գրական հուշարձաններում: Միջին հայերենի բառապաշարը կազմված է գրաբարյան ժառանգությունից, ինքնուրույնաբար կատարած փոխառություններից, բարբառա-

⁶⁰ Տե՛ս *Մուրադյան Մ.*, նշվ. աշխ., էջ 169-296:

յին (գավառական), ինչպես նաև հայերենի բառակազմական օրենքներով այդ շրջանում կերտված բառերից: Մյուս կողմից, գրաբարից ժառանգած որոշ բառեր միջին հայերենում ձեռք են բերել նոր իմաստներ:

Ժամանակակից հայերենի բառապաշարում միջին հայերեն բառերի շերտը որոշելիս պետք է զանց առնել այն բառերը, որոնք ընդհանուր են գրաբարին, միջին հայերենին և ժամանակակից հայերենին: Դրանք գրաբարյան շրջանից եկող ընդհանուր հայերեն բառեր են, պատկանում են հիմնական բառաֆոնդին, գոյատևել են հայերենի պատմական զարգացման բոլոր դրսևորումների ժամանակ:

Ժամանակակից հայերենի բառապաշարում միջին հայերեն բառերի շերտն են կազմում գրավոր և բանավոր խոսքում այժմ գործածվող բառային այն միավորներն ու բառիմաստները, որոնք ստեղծվել կամ փոխառնվել են միջին հայերենի շրջանում, հետևաբար և ծագումով պատկանում են միայն այդ լեզվին:

Միջին հայերենից ժամանակակից հայերենին ավանդված պետք է համարել այն բառերն ու իմաստները, որոնք հատուկ են միայն միջին հայերենին և չեն արձանագրվել 5–11-րդ դարերի գրաբարյան հուշարձաններում:

Այժմ հրապարակի վրա է այդ շրջանի բառապաշարն ամփոփող մի ստվարածավալ բառարան⁶¹, որով էլ հնարավոր է գաղափար կազմել այդ լեզվի բառային կազմի սահմանների, նրա քանակի, որակական հատկանիշների մասին: Բառարանը լուծում է տվել նաև բառապաշարային այն ընդհանրությունների խնդրին, որոնք գոյություն ունեն գրաբարի և միջին հայերենի միջև, մի կողմից, և բարբառների ու միջին հայերենի միջև, մյուս կողմից:

Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարում միջին հայերեն բառերի⁶² շերտն են կազմում հիմնականում բնությանը, մարդկային գործունեությանը և հարաբերություններին, ընտանիքին, զանազան

⁶¹ Ղազարյան Ռ., Ավերիխյան Հ., Միջին հայերենի բառարան, 2-րդ բարեփոխված հրատ., Երևան, 2009:

⁶² Տե՛ս Ղազարյան Ռ., Միջին գրական հայերենի բառապաշարը, Երևան, 2001:

պաշտոնների, զբաղմունքների, արվեստին ու կրթությանը, կրոնին, հագուստեղենին, ուտելիքին, բուսական և կենդանական աշխարհին վերաբերող բառերը:

Ժամանակակից հայերենի գրական և գրականության լեզվի բառային կազմի մեջ մուտք գործած միջին հայերեն բառերից կարելի է հիշատակել՝ **այոճ, բաժ, բովեյ, գաթա, գաջ, թոկ, լավաշ, խավիժ, ծես, կարդինալ, կաֆա** (բանաստեղծության տեսակ), **կեռ, կոթ, հաք, ճուլ, մարկիզ, մելիք, մունեպիկ, մաշիկ, մշուշ, պարոն, ռանդա, վեզիր, փնթի, փոցխ** և այլն:

Միջին հայերենից են անցել հատկապես բուսական աշխարհին վերաբերող զանազան անուններ, ինչպես՝ **գիհի, կողեանի, լալա, լալազար, խառքուք, մահդանակ** և այլն:

Ժամանակակից հայերենի ժողովրդախոսակցական լեզվում տարածված պետք է համարել միջին հայերենի հետևյալ բառերը. **ակոռ, բլուզ** (վերնաշապիկ), **գզիր, գորգ, գավ, գիժ, լակ, լաք, լաչակ, խան, խզար, խանչալ, խալի, խալիչա, խոշապ** (օշարակ), **խլեզ կոժիժ, կպրիճ, կոպոշ, հիմա, ծայր, ճմուռ, ճաղ, նան, մաք** (դռաք), **մլուկ, մզլե, մղլակ** (դռան փակ), **մահպեսի, շվաք, պուլիկ, ջոջ, ռանչպար, փաղիշահ, փեշ, քով** (մոտ), **քոշ** և այլն⁶³:

Այս կարգի բառերի որոշ մասը հասարակաբանություններ և գոտեկաբանություններ են, դիտվում են անգամ գավառաբանություններ և բարբառաբանություններ և այդ իմաստով դուրս են մնում գրական լեզվի բառային կազմից, ինչպես, օրինակ՝ **բազագ, բիճ, բշպեկ** (կոպտեկ), **դուքան, ժուռ** (խակ), **ժուկ** (ժամանակ), **լայեդ, հալ, հալալ, շեք, նադդ** (կանխիկ), **փարդա** (վարագույր) և այլն:

Հիշյալ բառերի զգալի մասի մուտքը հավանաբար կատարվել է բանավոր ճանապարհով, հայ բարբառների միջոցով, բարբառներ, որոնք գոյակցում էին միջին հայերենին:

3. Բարբառային բառեր: Հայոց գրական լեզվի բառապաշարում կարելի է առանձնացնել բառեր, որոնք գործածության ավելի սահմանափակ շրջանակներ ունեն: Դրանք հայերեն տասնյակ բարբառների բառերն են:

⁶³ Հմմտ. Մորադյան Մ., նշվ. աշխատ., էջ 169-296:

Սկզբունքորեն բարբառային ոչ բոլոր բառերն են մտնում գրական լեզվի բառապաշարը: Այդ հատկապես վերաբերում է գրաբարյան բառերի բարբառային հնչյունափոխված ձևերին՝ գրաբարյան բառերի բարբառային հնչյունական տարբերակներին: Ինչպես, օրինակ՝ **մօկնը** (մուկը(ն)), **խաց, հօց** (հաց), **հէր, խէր, հար** (հայր) և այլն: Այդ տեսակետից ժամանակակից հայերենի համար որևէ արժեք չեն ներկայացնում մաս այլևայլ լեզուներից (առանձնապես արևելյան լեզուներից) կատարված բարբառային փոխառությունները: Այդ կարգի բառերի մեծ զանգվածից ժամանակակից հայ գրական լեզվի արևելահայ տարբերակի բառապաշարն են մուտք գործել խիստ սահմանափակ քանակով բառեր և հատկապես այնպիսիները, որոնց համանշանակներն ինչ-ինչ պատճառներով չեն կազմվել կամ չկան (օր.՝ **ջան, յոյս** (զնալ) և այլն):

Գրական լեզվի բառապաշարը լրացնելու գործում այլ արժեք են ներկայացնում, այսպես կոչված, գավառական բառերը:

ա) **Գավառական** են կոչվում մեծ մասամբ հին կյանքը, կենցաղը, առտնին հարաբերությունները ցույց տվող, զանազան զբաղմունքների, գյուղատնտեսական գործիքների, հին պաշտամունքին, հավատալիքների, ծեսերին, ինչպես մաս բուսական և կենդանական աշխարհին վերաբերող, այլևայլ հասկացություններն անվանող բառերը: Իրենց հնությանը դրանց գերակշիռ մասը ամենայն հավանականությամբ գրաբարյան շրջանին է վերաբերում, թեև մեզ հասած գրաբարյան գրավոր հուշարձաններում այդ կարգի բառերը չեն արձանագրվել, ինչպես, օրինակ՝ **ագապ, ադամամերկ, ադամորդի, բանջար, դարսեյ, դեղնուց, իլիկ, իրարանցում, լոլիկ, լուսնիկ, խելառ, կռահեյ, հաղարջ, հավկիթ, հեշտ, հենց, հիմա, մոռ, մուգ, նորեկուկ, շիպակ, պապառ** և այլն:

բ) Գավառական բառերի մի փոքր մասը գրաբարյան բառերի հնչյունափոխված ձևերի հետևանքով առաջացած նոր բառեր են. ինչպես՝ **արցունք** (գրբ. *արցասուք*), **էլ** (գրբ. *այլ*), **էփեյ** (գրբ. *յոփեյ* «հատել, կտրել»), **իրիկուն** (գրբ. *երեկոյ*), **ճամփա** (*ճանապարհ*), **պաս** (*պահք*) և այլն:

գ) Գավառական բառերի մյուս մասն էլ գրաբարյան բառերի՝ բարբառներում ձեռք բերած նոր իմաստներն են ներկայացնում,

ինչպես՝ **սովորել** «ուսանել», **կարդալ** «ընթեռնել», **մեռել** «ղի, դիակ», **ճար** «հնար, միջոց», **առնել** «զննել, տիրել, սկսել», **ծիրանի** «պտղատու ծառի տեսակ», **ծիծ** «ստինք», **ածել** «1. լցնել, 2. նվագել, 3. ձու դնել», **այարել** «ծուլանալ», **անբասն** «անգործ, գրք. բանակա- նություն չունեցող, անխելք, անխոս, մունջ» և այլն:

դ) Գավառական են կոչվում նաև բնիկ (գավառական) և փոխառյալ բառերով բարբառներում կազմված բաղադրյալ բառերը, ինչպես՝ **լսկաման, լսկանալ, լսկեյ, գյուլլախորով, ծնկաչոք:**

Գավառական բառերի որոշ մասն ընդհանուր է միջին հայերենի հետ: Ինչպես, օրինակ՝ **լաթ, լավաշ, խավիժ, իլեգ, նան** և այլն: Այդ կարգի բառերի միջին հայերենին պատկանելը պայմանական է: Դրանք միջին հայերենին են վերաբերում միայն այդ լեզվի գրավոր հուշարձաններում առաջին անգամ հիշատակված լինելու կապակցությամբ, թեև այդ բառերը իրավամբ կարող են որևէ բարբառի սեփականությունը լինել և համարվել գավառական:

Բարբառային (գավառական) բառերի մուտքը գրական լեզվի բառապաշարը կատարվել և կատարվում է հետևյալ ուղիներով.

ա) Ժամանակակից հայոց գրական լեզուն, կազմվելով բարբառային հիմքի վրա, քերականական, հնչյունաբանական համապատասխան իրակությունների հետ ժառանգել է նաև բարբառային բառապաշարի որոշ մասը և հատկապես այն բառերը, որոնց համագործերը չեն արձանագրվել գրաբարում և միջին հայերենում:

բ) Բարբառային (գավառական) բառերը հետագայում գրական լեզու են սկսում թափանցել խոսակցական լեզվի շնորհիվ:

գ) Բարբառային բառերի գրական լեզու թափանցելու մյուս ուղին գեղարվեստական գրականության մեջ այդ կարգի բառերի գործածությունն է՝ գեղարվեստական պատկերավորման, արտահայտչական միջոցների, հերոսների կերպավորման և միջավայրի կոլորիտ ստեղծելու նպատակով:

դ) Եվ, վերջապես, բարբառային բառապաշարը ժամանակակից հայերենի գիտատեխնիկական տերմինաբանության աղբյուրներից մեկն է. այդ կարգի բառերը տերմինացման շնորհիվ մուտք են գործում գրական լեզվի բառային կազմը:

Ժամանակակից հայ գրական լեզվում բարբառային շերտը կազմող բառերը գործածության տեսակետից կարելի է բաժանել երեք խմբի.

ա) Առաջին խմբի մեջ մտնում են այն բառերը, որոնք ամբողջապես մերվել, ձուլվել են գրական բառապաշարին՝ կազմելով նրա անկապտելի մասը: Նրանք ամենօրյա և անասհմանափակ գործածություն ունեն: Այդ կարգի բառերը ծագումով միայն կարելի է բարբառային համարել: Նման բառերից կարելի է հիշատակել՝ **արքառոց, արլոր, գովական, գործարար, հավարույն, հորքարած, հենց, նախրապան, նորելուի, դարսե, քանապուր, կռահե, փարիքավոր, փռշեկալեյ** և այլն⁶⁴:

բ) Հաջորդ խմբի մեջ են մտնում այն բառերը, որոնք դեռևս ամբողջապես չեն ձուլվել գրական լեզվում, և բարբառային երանգն, այնուամենայնիվ, զգալի է թե՛ կազմությամբ, թե՛ իմաստով և թե՛ ոճական կիրառությամբ, ինչպես, օրինակ՝ **աղջիկդես, աման-չաման, անաղուհաց, աչքալուսանք, աչքածակ, ասեկոսե, բաժինք, բզբզե, բղավե, բոթե, դմբո, դնգարե, էգուց, քերխաշ, իրասածի, լավամարդ, խունջիկ-մունջիկ, ծալպակաս, ծակաչք, ծամձմեկ, ծլկեյ, հանաք, հրես, դժվժոց, ճղճղան, մարդասիաշիվ, մեռելոց, մոզոնե, մոթալ, նեղլիկ, շարվոր, շեկլիկ, շնթոկեյ, շշպոեյ, չաչանակ, չարաչք, պարզերես, պոզ, փնաշեն, փնաքանդ, փնպղեյ, փնփեսա, ուշունց, քեռակիկ** և այլն:

գ) Առանձին խումբ են կազմում այն բառերը, որոնք իրենց իմաստներով և ոճական կիրառության այլևայլ առանձնահատկություններով կանգնած են գրական լեզվի եզրին, մտնում են խոսակցական բառապաշարի մեջ: Գեղարվեստական գրականության մեջ այդ կարգի բառերը գործածվում են միջավայրի բներանգ (կոլորիտ) ստեղծելու համար կամ ծառայում են իբրև պատկերավորմանարտահայտչական միջոց՝ հերոսների կերպավորման նպատակով, ինչպես՝ **ակրասր** (թեթև նախաճաշ), **աղոթարան, սայի** (ափի, ափո), **բարուր** (բալուլ), **դանդալոշ, դարչվոր, երկուհոգիս, զանգուլակ,**

⁶⁴ Հմմտ. *Աճառյան* Հ., Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, էջ 480-481:

բարալոշ, քլոզել, քրփոշ, լղոզել, կինարմար, կոլուր, կոպայ, մերի (անտառ), *պապրճառավոր, փակ* (ճակնդեղ), *փկլոզ, ուզվոր, օճորք* և այլն:

4. Արևմտահայերեն բառեր: Հայ ժողովրդի պատմական ճակատագրի բերումով հայոց գրական լեզուն ունեցավ իր երկու ճյուղավորումները՝ արևելահայ և արևմտահայ: Առաջինը կազմավորվեց Արևելյան Հայաստանում, երկրորդը՝ Արևմտյան Հայաստանում: Արևելահայ գրական լեզուն այժմ Հայաստանի Հանրապետությունում փաստացի ունի պետական լեզվի կարգավիճակ, մեր ժողովրդի արևելահայ հատվածի ազգային լեզուն է, իսկ արևմտահայ գրական լեզուն Արևմտյան Հայաստանի վերացումից հետո դարձել է Սփյուռքի հայ գաղթօջախների գրական լեզուն: Արևմտահայերենն, այսպիսով, այժմ աշխարհի տարբեր մասերում ցրված հայ ժողովրդի խոսակցական լեզուն է, նրա հաղորդակցման միջոցը: Բացառություն են կազմում Իրանի հայկական գաղութը, ինչպես նաև Ամերիկայի և Ռուսաստանի նոր գաղթօջախները, որոնց գրական լեզուն արևելահայերենն է:

Արևմտահայերենով աշխարհի համարյա բոլոր մայրցամաքներում շարունակվում է ստեղծվել գեղարվեստական, հրապարակախոսական, մանկավարժական հարուստ գրականություն: Արևմտահայերենով է կատարվում հիմնականում Պոլսում, Մերձավոր Արևելքում, Արևմտյան և Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում, ԱՄՆ-ում, Կանադայում, Արգենտինայում, Ավստրալիայում և այլուր գործող հայկական դպրոցների ուսուցումը:

Գրական լեզվի այդ երկու ճյուղավորումների առանձնահատկությունն այն է, որ չնայած դրանց միջև գոյություն ունեցող տարբերություններին, մեր ժողովրդի երկու հատվածներն էլ հաջողությամբ հաղորդակցվում են այդ երկու տարբերակների բանավոր և գրավոր ձևերով: Հայ գրական լեզվի այդ երկու ճյուղերի ներկայացուցիչների համար նույն նշանակությունն ու արժեքն ունի ինչպես արևելահայերենով, այնպես էլ արևմտահայերենով ստեղծված գրականությունը:

Ինչ վերաբերում է գրական լեզվի այդ երկու տարբերակների բառապաշարին, ապա այդ մարզում ընդհանրություններն այնքան

մեծ են, որ կարելի է անգամ ուշադրություն չդարձնել մասնակի տարբերությունների վրա: Այդ ընդհանրությունները բխում են, անշուշտ, դրանց սնող միևնույն աղբյուրներից՝ գրաբարից, միջին հայերենից, հայ բարբառներից, ինչպես նաև բառակազմական նույն օրենքներից, որոնցից հավասարապես օգտվում են գրական լեզվի այդ երկու տարբերակները: Այդ է պատճառը, որ միևնույն հասկացության համար կերտված նորակազմ բառերը հավասարապես մատչելի են և հաճախ ընդունվում են և՛ արևելահայերենում, և՛ արևմտահայերենում:

Ժամանակակից հայոց գրական լեզվի արևելահայ տարբերակի բառապաշարում արևմտահայ գրական տարբերակի բառերի շերտը որոշելու և պատկերացնելու համար անհրաժեշտ է առանձնացնել և ներկայացնել բառերի և բառիմաստների գործածության այդ տարբերություններն ու ընդհանրությունները հիշյալ տարբերակներում⁶⁵:

ա) *Միայն արևմտահայերենում գործածվող բառեր*, որոնք անցել են ժողովրդախոսակցական լեզվից, բարբառներից և այլն, անտվոր են արևելահայերենին.

սկոռս «ատամ», *աղեկ* «լավ», *աղջ(կ)նակ*, *աղվոր* «գեղեցիկ», *անապարեյ* «շտապել», *այպանեյ* «հանդիմանել», *անանկ* «այնպես», *ասանկ* «այսպես», *աբանկ* «այդպես», *արեն* «ժամանակ», *արեն-արեն* «ժամանակ առ ժամանակ», *արիկա* «այդ», *արտորայ* «շտապել», *դաշնակ* «դաշնամուր», *գեշ* «վատ», *ընթերցարան* «դասագիրք», *էրիկ*, *էրիկնարդ* «տղամարդ, ամուսին», *լնննայ* «ավարտվել», *լննցնեյ* «ավարտել», *խպնեյ* «ամաչել», *խպնոք* «ամաչկոտ», *կաղանդ* «Նոր տարի», *կանչվորեյ* «գոռգոռալ», *հող* «այդտեղ», *հոն* «այնտեղ», *հոս* «այստեղ», *հրեյ* «մղել», *ճանչվոր* «ծանոթ», *պագ* «համբույր», *պագնեյ* «համբուրել», *պգպիկ* «փոքր», *պգպիկություն* «փոքրություն, ստորություն», *պլլուիլ* «փաթաթվել», *պոռայ* «կանչել, աղմկել», *սահմոկեյ* «սարսափել, փշաքաղվել», *սառնանույշ* «պաղպաղակ», *տասպիլտիլ* «թավալվել», *փրցլինք* «լորձունք», *փասպեյ* «ապացուցել», *քով* «մոտ» և այլն:

⁶⁵ Հմմտ. *Աճառյան Հ.*, Հայոց լեզվի պատմության, 2-րդ մաս, 1951 թ., էջ 563-588: *Սարգսիտյան Ռ.*, Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները, Երևան, 2004:

բ) Ընդհանուր հայերեն այնպիսի բառեր կամ բառերի այնպիսի իմաստներ, որոնք *ավելի շար գործածվում են արևմտահայերենում, ազի* «պոչ», *ադր* «կեղտ», *ավրել* «1. փչացնել, 2. ապականել», *առինքնել* «ոլորել», *ասպահովություն* «անվտանգություն», *անպարար* «ձեռնածու», *անպարարություն* «ձեռնածություն», *ամանոր* «Նոր տարի», *բաղդարել* «համեմատել», *բանել* «աշխատել», *գոց* «1. փակ, 2. անգիր (ասվող)», *գոցել* «փակել», *երկվայրկյան* «վայրկյան», *վայրկյան* «րոպե», *կռնակ* «թիկունք», *հանձնախումբ* «հանձնաժողով», *ձերմակ* «սպիտակ», *չգել* «զգել», *պաղ* «սառք», *պաղարյուն* «սառնարյուն», *պաղանձավ* «քարանձավ», *պարկան* «համապատասխան», *բակել* «քանդել, բացել, անջատել» և այլն:

գ) Արևմտահայերենում կյանքի կոչված գրաբարյան այնպիսի բառեր, որոնք արևելահայերենում չեն գործածվում կամ հազվադեպ են գործածվում. *ագագուն* «չորացած», *սկադշուն* «լեցուն», *այր* «տղամարդ», *կադամար* «թանաքաման», *մելան* «թանաք», *պոսպել* «հոնքերը կիտել», *վասնզի* «որովհետև», *փաքար* «անդրավարտիք», *ուծանալ* «1. մի բանից սառչել, 2. օտարանալ», *ցփսի* «շալ», *բայո* «վզնոց, մանյակ» և այլն:

դ) Միայն արևելահայերենին հատուկ ընդհանուր հայերեն բառեր, որոնք անցել են ժողովրդախոսակցական լեզվից կամ բարբառներից, բայց չկան արևմտահայերենում, *գագագել* «կատաղել», *գարգանդ* «սարսափ», *թխել* «եփել», *թոկ* «չվան», *խկի* «բնավ», *խունանալ* «խամրել», *կածան* «նեղ ճանապարհ», *կուռ* «թև», *հերթ* «կարգ», *շոգ* «տաք», *շուռ փայ* «դարձնել», *պոռոշ* «շրթունք», *պրծնել* «1. ազատվել, 2. վերջանալ», *սարթել* «հորինել, շինել», *փկլոր* «մերկ», *քորոց* «զնդասեղ» և այլն:

ե) Միևնույն բառի *հնչյունական-ուղղագրական փոփոխություններ*. արևմտահայերենում բառի մեջ ձայնավորի կամ բաղաձայնի տղում, հնչյունի հավելում, բառի հնչյունափոխված ձևեր և այլն, *ամաչեխամչնալ*, *անեխընել*, *արթնանալ-արթննալ*, *առավուր-առուր*, *ասեկոսե-բսե-բսավ*, *դադարե-դադրի*, *էլ-ալ*, *ընկնե-իյնալ*, *լինե-լլալ*, *լցնե-լցնել*, *ծալե-ծալել*, *ծախ-ծախք*, *կակղացնե-կակուղցնել*, *կապաղե-կապղի*, *կարենալ-կրնալ*, *կողպե-կղպել*,

կորչել-կորավի, հազնվել-հազվի, հոգս-հոգ, ճանաչել-ճանչնալ, մենակ-միմակ, մեկ-մեկ-մեյմեկ, մեն-մենակ-միամենակ, մրսել-մսել, սպանել-սպաննել, սովորել-սորվի, վախենալ-վախնալ, վայր-վար, քայլել-քայլել, քնել-քնանալ և այլն:

զ) Բառեր, որոնք գրական լեզվի երկու ճյուղավորումներում *փարբեր իմաստներ* ունեն. *խնանալ* «գիտենալ» (արևլի.) և «լսել» (արևմտի.), *լաթ* «կեղտոտ շոր» (արևլի.) և «հագուստ» (արևմտի.), *հայրնի* «նշանավոր» (արևլի.) և «ակներև» (արևմտի.), *հով* «գով» (արևլի.) և «քամի» (արևմտի.), *մեջք* «թիկունք» (արևլի.) և «գոտկատեղ» (արևմտի.), *մփրիկ անեկ* «նայել, դիտել (արևլի.) և «լսել» (արևմտի.), *պփրկել* «շուռ տալ» (արևլի.) և «գբոսնել, ման գալ» (արևմտի.), *վայրկյան* «1/60-երորդական բուպե» (արևլի.) և «բուպե» 1/60 ժամ» (արևմտի.):

է) *Միևնույն հասկացության համար փարբեր բառերի գործածությունն* գրական լեզվի արևելահայ և արևմտահայ տարբերակներում (այդ թվում՝ նաև նորակազմ բառեր). *այնուամենայնիվ-ասոր հեյր մեկտեղ, ասիսե-պնակ, բադրիջան-ամբուկ, բանվոր-գործավոր, գազար-սրեպղին, գործադուր-բանդուր, գործարան-գործարան, դեղատուն-դեղագիր, դեղատուն-դեղարան, դուրս գալ-ելլե, ընթերցարան-ընթերցարան, բանկ-սուդ, թվալ-երևի, ծրար-պահարան, կուլ փալ-կլլե, կպչել-փակչի, համար-թիվ, հանգչել-մարել, հասարոց-գործասեղան, հարեան-դրացի, հաց-թուխ-հացագործ, հեծանիվ-հեծելանիվ, հեռախոս-հեռաչայն, հեշտ-դյուրին, դյուրավ, հեռուստացույց-հեռաբեռի, չու-հավկիթ, մարդ-էրիկ, մեխ-գամ, նավթ-քարյուդ, ներքե-վար, վաղ-կանուխ, վերցնել-առնել, վայրկյան-երկվայրկյան, վիրահայություն-գործողություն, փղա-մանչ, ցած, ցածր-վար(ը), փուլ գալ-փլի, քաղ-ցած-անոթի, քաղցածանալ-անոթենալ, քամի-հով* և այլն:

ը) Երբ օտարազգի բառերի փոխարեն արևմտահայերենը ստեղծում է նոր բառեր կամ համապատասխանեցնում հները, իսկ արևելահայ տարբերակը հիմնականում փոխառություններ է կատարում. *սկսադեմիկոս-կանառորդ, պրո.ֆեսոր-ուսուցչապետ, արսպրակցիոնիզմ-վերացապաշարություն, ավտոմոբիլ-ինքնա-*

շարժ, սպում-հյուլե, գինեկոլոգ-կնախարարան, դեմագոգիա-ամբոխ(ա)վարություն, բունեյ-փապուղի, ժյուրի-մրցապրյան, իմպերիալիզմ-կայսերապաշտություն, կոմպոզիտոր-երգահան, կոմունիզմ-համայնավարություն, կապիտալիզմ-դրամատիկություն, կաթինեկ-դահլիճ («կառավարություն» իմաստով), կինո-շարժանկար, ռադիո-ձայնասփյուռ, ռեսպիզմ-իրապաշտություն, ռեսլիսպ-իրապաշտ, սյուրռեսպիզմ-գերիպաշտություն, փանկ-հրասայլ և այլն:

թ) Երբ օտարազգի բառերի դիմաց նույն հասկացության համար արևելահայերենն ու արևմտահայերենը տարբեր բառեր են կերտում. *գնացք-կառահումբ, շոգեքարշ-վայրաշարժ, կինոնկար-շարժանկար, շարժապարկեր, հեռուստացույց-հեռադեկ, հաղորդավար-խոսնակ* և այլն:

Օտարազգի բառերի արևմտահայերեն վերոհիշյալ համագործակցից շատերն այժմ էլ մուտք են գործում արևելահայերեն գրական լեզվի բառապաշարը: Այդ կարգի բազմաթիվ բառեր, դեռ 19-րդ դարի երկրորդ կեսից սկսած, արևմտահայ հեղինակների կազմած դասագրքերի ու բառարանների շնորհիվ սկսեցին թափանցել և հաստատուն տեղ գրավել արևելահայ գրական լեզվի բառային կազմում, ինչպես, օրինակ՝ *ջրածին, քրվածին, ախարաբան, ախարաբանություն, մանրէ, մանրէաբանություն* և այլն:

Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը ըստ գործուն (ակտիվ) և ոչ գործուն (պասիվ) կազմի

Բառային հիմնական ֆոնդի և բառային կազմի մեջ կատարվող փոփոխություններն ու փոխազդեցությունները պայմանավորված են գլխավորապես լեզվի զարգացման օբյեկտիվ գործոններով: Մինչդեռ գործուն և ոչ գործուն բառապաշարները սուբյեկտիվ կարգեր են: Դրանց գոյության փաստը, ինչպես և փոխազդեցություններն ու դրանցում կատարվող փոփոխությունները անմիջականորեն առնչվում են լեզուն կրողների, լեզվական հանրության հետ:

Գործուն (ակտիվ) բառապաշարի մեջ մտնում են ամենօրյա

գործածական այն բառերը, որոնց իմաստները հասկանալի են տվյալ լեզվով խոսող մարդկանց հանրությանը: Դրանք այն բառերն են, որոնք որևէ լեզվով խոսողը (տվյալ դեպքում՝ հայերեն խոսողը) ոչ միայն, հասկանում, այլև ակտիվ կերպով գործածում է իր ամենօրյա հաղորդակցման ընթացքում:

Ժամանակակից հայոց լեզվի բառային կազմի հիմնական, անհրաժեշտ մասը (մոտավորապես այն, ինչ համարվում է հիմնական բառաֆոնդ) այս կամ այն չափով ընդհանուր է գործուն բառապաշարի հետ:

Ոչ գործուն (պասիվ) բառապաշարը՝ իբրև սուբյեկտիվ կարգ, տարբեր է հասարակական առանձին խմբերի, անգամ տարբեր անհատների համար: Նրա ծավալը և բնույթը կախված է անհատի կրթության և ընդհանուր զարգացածության մակարդակից, մասնագիտությունից և սուբյեկտիվ այլ հանգամանքներից: Մյուս կողմից, հայերեն խոսողների այս կամ այն խմբերին, իրենց մասնագիտությանը կամ զբաղմունքին համապատասխան՝ հատուկ են որոշ բառեր ու արտահայտություններ, որոնք նույնպես մտնում են նրանց ոչ գործուն բառապաշարի մեջ:

Ոչ գործուն բառապաշարի մեջ մտնում են այն բառերը, որոնք տվյալ լեզվով խոսողը (տվյալ դեպքում՝ հայերեն խոսողը) հասկանում է կամ դրանց իմաստները կարող է կռահել համատեքստից: Այդ բառերը, սակայն, նա կարող է ընդհանրապես չգործածել կամ սակավ գործածել: Այդ կարգի բառերից շատերը մարդու գիտակցության մեջ երևան են գալիս կամ հիշվում են ընթերցանության ժամանակ կամ լսվում են ուրիշից: Դրանք հիմնականում հասկանալի, ծանոթ, բայց խոսողի կողմից ամենօրյա հաղորդակցման ժամանակ չգործածվող բառերն են:

Ոչ գործուն բառապաշարն են կազմում այն բառերը, որոնք տվյալ անհատի կամ հասարակական խմբի ամենօրյա, գործուն բառապաշարի մեջ չեն մտնում. դրանք կարող են վերաբերվել նրանց անձանոթ մասնագիտական տերմինաբանությանը կամ կարող են արտահայտել հուզաարտահայտչական տարբեր գունավորումներ, ինչպես նաև ունենալ հնացածության ցայտուն արտահայտված գու-

նավորումը (այս կամ այն բառերը նշանակող հասկացությունների հնանալու կապակցությամբ վերջիններս մահացման եզրին են գտնվում և լեզվում հազվադեպ գործածություն ունեն): Մյուս կողմից, այդ կարգի շատ բառեր, իրենց նորությամբ լեզվում դեռևս քաղաքացիության իրավունք ձեռք չբերելով և լայն ճանաչման չարժանանալով, ամենօրյա գործածություն չունեն: Հատկանշական է նաև այն, որ մշտական փոխազդեցության և փոխլրացման անընդհատ փոփոխման մեջ գտնվելու կապակցությամբ գործուն և ոչ գործուն բառապաշարների սահմանները մույնպես փոփոխական են:

Ոչ գործուն բառապաշարը ստորաբաժանվում է **նորաբանությունների** և **հնաբանությունների**:

Ժամանակակից հայոց լեզվի նորաբանությունները⁶⁶

Նորաբանություն է կոչվում այն բառը կամ դարձվածքային միավորը, որ կազմվում է նոր հասկացություն արտահայտելու կամ նոր առարկա, երևույթ, հատկանիշ և այլն նշանակելու համար:

Նորաբանությունները լեզվում հիմնականում ստեղծվում են մարդու հասարակական գործունեության ընթացքում նոր հասկացություններ երևան գալու կապակցությամբ: Նորաբանությունների մեջ են առնվում նաև նորագույն փոխառությունները: Տարբերակվում են՝ **բառային նորաբանություններ** և **իմաստային նորաբանություններ**:

Բառային նորաբանությունները իրենց արտաքին՝ հնչյունական պատյանով և իմաստով բոլորովին նոր բառեր են, որ առաջին անգամ են գործածվում լեզվում: **Իմաստային նորաբանությունները** լեզվում արդեն եղած բառերի նոր ձեռք բերած իմաստներն են:

Նորաբանությունների հոսքի մասին ժամանակակից հայերենում ավելի հստակ պատկերացում կազմելու համար օգտակար կարող են լինել բառարանագրության տվյալները: Գրաբարի բառապաշարն ամփոփող «Նոր հայկազյան բառարանը»⁶⁷ պարունակում է

⁶⁶ Հայերեն *նորաբանություն* բառը կազմված է օտար *неологизм* բառի նմանողությամբ (հուն. *neos* «նոր» + *logos* «բառ, հասկացություն»):

⁶⁷ Բառգիրք նոր հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836-37:

մոտ 50 հազար բառ, Հ. Գաղբաշյանի հայ-ռուսերեն բառարանը⁶⁸, որն ընդգրկում է 70 հազար բառահոդված, գրաբարի համեմատությամբ մոտ 20 հազար նոր բառ է պարունակում, որոնց մի մասը նորաբանություն է: Ստ. Մալխասյանցի քառահատոր «Հայերեն բացատրական բառարանը»⁶⁹, որի բառացանկը մոտ 120 հազար բառ և դարձվածքային միավոր է, նախորդին գերազանցում է մոտ 40 հազար բառով: 1960–70-ական թվականներից հետո լույս տեսած «Հայոց լեզվի հոմանիշների բառարանը»⁷⁰, «Ժամանակակից հայոց լեզվի բառարանը»⁷¹, Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանը»⁷² Ստ. Մալխասյանցի բառարանի համեմատությամբ առաջին անգամ արձանագրել են 30–40 հազար նոր բառեր և հազարավոր նոր իմաստներ⁷³:

Նորաբանությունների էական առանձնահատկությունն այն է, որ նրանք անմիջականորեն կապված են նոր հասկացությունների հետ: Լեզվի դերը տվյալ դեպքում այդ կարգի հասկացությունների համար պարտադիր կերպով իր համապատասխան նշանը ստեղծելն է: Այդ նոր բառերը կազմվում են լեզվի միջոցներով, բառակազմական գործող կադապարներով:

Նորաբանությունների մյուս առանձնահատկությունն էլ այն է, որ նրանք վերաբերում են կյանքի բոլոր բնագավառներին և այդ պատճառով էլ մեծ է նրանց արժեքը և կշիռը բառապաշարի թարմացման և հարստացման գործում:

Լեզվի ներքին միջոցներով, բառակազմական գործող կադապարներով են առաջացել հայերենի հազարավոր նորաբանությունները կամ նորակազմ բառերը:

Միայն վերջին տասնամյակներում, օրինակ, էլեկտրոնիկայի և

⁶⁸ Գաղբաշյան Հ., Լիակատար բառարան հայերենից ռուսերեն, Թիֆլիս, 1911:

⁶⁹ Մալխասյանց Ս., Հայերեն բացատրական բառարան, հտ. I-IV, Երևան, 1944-1945:

⁷⁰ Մաքիասյան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, 1967:

⁷¹ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Երևան, 1 հ., 1969, 2 հ., 1972, 3 հ., 1974, 4 հ., 1980:

⁷² Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976:

⁷³ 1990-ական թթ. վերջերին ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի մի խումբ աշխատակիցների կազմած դեռևս անտիպ բացատրական բառարանը պարունակում է ավելի քան 220 000 բառային միավոր:

մանավանդ համակարգչային բնագավառի բառային, նաև իմաստային նորաբանություններից են՝ **առցանց, բեռնում, զննարկիչ** (բրաուզեր), **կայքէջ, կրիչ, հաղորդակարգ, հաճախորդ, համացանց, համացանցային, միջերես** (ինտերֆայս), **մկնիկ, նավարկում** (նավիգացիա), **նշոց** (ֆայլ), **նշորդ** (կուրսոր), **վերբեռնել, տիրույթ** (դոմեն), **տպիչ, փոխգործուն** (ինտերակտիվ), **փոստաղբ** (սպամ), **հեղարկում** (անդու), **օգրասեր** և այլն:

Կառուցվածքային-բառակազմական տեսակետից նորաբանությունների էական առանձնահատկությունն այն է, որ դրանք բաղադրյալ բառեր են՝ կազմված բարդության և ամանցման շնորհիվ: Օրինակ՝ **աշխարհագրացում, սպակեթել, ակտուարական, սպահուսակցական, գինեչոն, դրամաշնորհ, էքնիկամշակութային, էներգախնայում, ընկրազանգված, ընկրակաշառք, կառուցապատել, մանրահատակ, մարգադաշտ, խաղավար, հանրօգույր, ճեպագրույց, մրցավազք, ցուցանմուշ, հուշ-երեկո, գերճգրիտ, գերհզոր, ներտաշ, համատիրություն, վարչարար, ստուգայց, ճեպագրույց, շերտավարագույր, շնորհանդես, շուկայագիտություն, չափորոշիչ պնդօղակ, սննդակարգ** և այլն:

Ժամանակակից հայերենում նորաբանությունների երևան գալը պայմանավորված է լեզվի բառապաշարի լրացման պահանջով, լեզվի զարգացման և կենսագործունեության թելադրանքով: Նոր հասկացությունների համար ստեղծվող բոլոր հաջող բառերի մեծ մասը լեզվում քաղաքացիության իրավունք է ձեռք բերում և մտնում ժամանակակից հայերենի բառապաշարը:

Ժամանակի ընթացքում ժամանակակից հայերենի բառերի հետ նրանք այնպես են մերվում, որ հետագայում դժվար է լինում դրանք տարբերել բառային կազմի այսպես կոչված «հմաբնակներից»: Լեզվում լայն գործածություն ձեռք բերելով՝ այդ կարգի բառերը դադարում են այլևս նորաբանություն լինելուց, ինչպես, օրինակ՝ **մթերական, բարչորակ, ցածրորակ, ինքնագործունեություն, կերպար, հեռուստացույց, հեռուստադիտող, շաքաօրչակ, գեղասահք, գեղասահորդ, տիգերազնացություն, ճոպանուղի** և այլ հազարավոր բառեր այլևս նորաբանություններ չեն կարող համարվել: Լեզվում

ամրանալուն, քաղաքացիական իրավունք ձեռք բերելուն նպաստում են մի շարք գործոններ՝ առաջին հերթին նոր բառերի պահանջը և, իհարկե, նրանց կառուցվածքային-իմաստաբանական արժանիքները:

Նորաբանություններից լեզվում քննություն չեն բռնում, լեզվում չեն ամրանում այնպիսիները, որոնք հնչյունական կազմով և կառուցվածքով (անբարեհնչյունությամբ, բառի երկարությամբ, սխալ կազմությամբ և այլն) կամ էլ իմաստային տեսակետից լիարժեք չեն և տվյալ հասկացության լեզվական համապատասխանություն չեն կարող համարվել:

Միևնույն հասկացության համար հաճախ ստեղծվում են մեկից ավելի նորակազմ բառեր: Այդ կարգի հոմանիշ բառերի միջև ընթացող պայքարում հաղթանակում է մեկը, իսկ մյուսները կամ դուրս են մնում լեզվից, կամ էլ նոր իմաստ կամ իմաստային նրբերանգներ ստանալով՝ արդեն իբրև առանձին բառեր հանդես են գալիս իմաստաբանական նոր համակարգում:

Իբրև բառերի առանձին խումբ նորաբանությունների մեջ առանձնանում են **հեղինակային նորակազմությունները** կամ **դիպվածական բառերը**: Այդ կարգի բառերը գլխավորապես կազմվում են հեղինակների կողմից գեղարվեստական ստեղծագործության ոճավորման և այլ նպատակներով, որոնք, սակայն, սովորաբար լայն տարածում չեն գտնում և մուտք չեն գործում լեզվի բառային կազմը: Այսպես, Ս. Խանգաղյանը ոճավորման նպատակով կազմել և գործածել է **եզկարսս** բառը: «Բրուտանոցի մուտքի մոտ դրված էր մի մեծ կարաս: Դա նման էր եզան գլխի: ... Երբեմն Մանասարը ժամերով նայում էր հնամենի եզկարասի կույր աչքին ու միտք էր անում աշխարհի բաների վրա»: Կամ՝ «Արման... մոտեցավ, քարին տնկած արմատակալը քաշեց և մանրակրկիտ նայեց, շոշափեց **որդագույն** և **որդաբևեռ** արմատները» (Մ. Գալշոյան, «Բովտուն»): Գ. Մահարու քննադատական հոդվածներից մեկում հանդիպում ենք **լեզվաչմդածողություն** բառին:

Բնական է, որ այս կարգի նորակազմությունները լայն տարածում չեն կարող ստանալ և իրականում դուրս չեն գալիս հեղինակի բառապաշարի սահմաններից:

Նորաբանությունը պատմական հասկացություն է: Այն, ինչ լեզվի զարգացման տվյալ փուլում նորաբանություն է համարվում, պատմական այլ շրջանում որպես այդպիսին այլևս չի գիտակցվում և չի ընդունվում: Այդ տեսակետից հատկանշական է, որ որոշ նորաբանություններ լեզվի զարգացման ընթացքում հնանում և լեզվից դուրս են մնում: Խորհրդային շրջանում ստեղծված նորակազմ շատ բառեր այժմ հազվադեպ գործածություն ունեն կամ պարզապես գործածությունից դուրս են մղվել և անցել են հնաբանությունների շարքը, ինչպես, օրինակ՝ **կենդագործկոմ, նէպման, կուսքջիջ, հեղկոմ, ժողկոմ, ժողկոմապ, կարմիրբանակային, շրջկոմ, կոմերիտմիություն, պիոներական** և այլն:

Հնաբանությունները ժամանակակից հայերենում

Հնաբանություն⁷⁴ են համարվում լեզվի զարգացման տվյալ փուլի համար հնացած, ակտիվ գործածությունից դուրս եկած բառերն ու դարձվածքային միավորները:

Հնաբանություններն հաճախակի գործածությունից դուրս եկած այնպիսի բառեր են, որոնք սովորաբար ընկալվում են իբրև լեզվի զարգացման ավելի վաղ շրջանի մնացուկ: Հնաբանությունները քանակապես զիջում են նորաբանություններին և, որպես կանոն, լեզվի գործուն բառապաշարից փոխանցվում են ոչ գործուն բառապաշարին:

Հնաբանությունները ստորաբաժանվում են հետևյալ խմբերի.

1) Բառային հնաբանություններ: ա) Բառային հնաբանությունների մի տեսակ են համարվում այն բառերը, որոնք հասարակության պատմական զարգացման հետևանքով համապատասխան հասկացությունների վերացման կամ ծավալի փոփոխման կապակցությամբ կամ էլ այլ պատճառներով ժամանակակից լեզվում ակտիվ գործածությունից դուրս են մնացել: Սրանք կոչվում են **պատմական բառեր (խորհրդանշաններ)**: Օրինակ՝ **ազգաբանի, ազգապագունդ, ամիրս, նս-**

⁷⁴ Հայերեն *հնաբանություն* տերմինը կազմված է αρχαιος բառի նմանությամբ (ծագում է հունարեն archaios «հին» բառից):

խարսր (իշխան), *սպարապետ*, *մարզպան*, *կուսակալ*, *բռեշի*, *կապարն*, *տեգ*, *ավայր*, *աղահարկ*, *սպրուշան*, *գրադաշպ*, *գրադաշպական*, *հեթանոս*, *հրովարտակ*, *բեգ*, *խան*, *չարչի*, *տանուրեր*, *ճորտ*, *սպրուկ*, *պրիսպալ*, *ուրյադնիկ*, *քեդիտուրա*, նաև՝ *կոմերիպական*, *կուսքարպուդար*, *շրջխորհուրդ*, *սոցմրցություն* և այլն:

բ) Առանձին խումբ են կազմում այն բառային հնաբանությունները, որոնք ժամանակակից հայերենում ունեն իրենց համապատասխան հոմանիշները, ինչպես, օրինակ՝ *սույն*, *դույն*, *նոքա* (այս, այդ, նրանք), *ագանեղ* (գիշերել), *զենուլ* (մորթել), *յուր* (իր), *միով բանիվ* (մի խոսքով), *մեծավ մասամբ* (մեծ մասամբ), *վարժապետ* (ուսուցիչ), *վարժուհի* (ուսուցչուհի) և այլն: Այս կարգի հնաբանությունների հիմնական առանձնահատկությունն այն է, որ ոչ թե վերացել են դրանց համապատասխանող հասկացությունները, այլ այդ բառերը հնանալով իրենց տեղը զիջել են նորերին, համապատասխան հասկացություններն արտահայտող նույնանիշ բառերին կամ բառային կրկնակներին: Սրանք կոչվում են *հնաբառեր* (*արխաիզմներ*):

Հատկանշական է նաև այն երևույթը, որ շրջանառությունից դուրս եկած որոշ հնացած բառեր ժամանակ անց «վերակենդանանալով», նույն կամ մոտ իմաստներով վերստին սկսում են գործածվել լեզվում, ինչպես՝ *այր*, *կանառ*, *չոն*, *այրուջի*, *նախարար* և այլն:

3) **Հազվադեպ գործածվող բառեր:** Ոչ գործուն բառապաշարի մեջ առանձին խումբ են կազմում այն բառերը, որոնք լեզվում հազվադեպ գործածություն ունեն: Այդ կարգին են պատկանում ինչպես հնացած կամ անգամ նորակազմ բառերը, որոնք մարդու կենսագործունեության, նրա հասարակական և անձնական կյանքի համար ոչ այնքան անհրաժեշտ հասկացությունների բառային համապատասխանություններն են, այնպես էլ գրավոր և բանավոր խոսքում քիչ տարածված բարբառայնություններն ու օտարաբանությունները, հուզաարտահայտչական վառ գունավորմամբ բառեր և գռեհկաբանություններ. ինչպես՝ *աղբյուս* (աղբի կույտ), *արասի*, *արասանոց*, *արբեշուն*, *ագեհասր* (պոչատ), *ագուռ* (աղյուս), *ագզաքքանք*, *ախլուամոյ*, *սկահ* (արթուն) և այլն: Այս կարգի բառերը այսօր գրական լեզվի բառապաշարից դուրս են մնացել կամ դուրս մնալու ճանապարհին են:

Հնաբանություններն ունեն որոշակի ոճական արժեք և գործածվում են ոչ գործուն բառապաշարում: Ինչպես հնաբանությունների, այնպես էլ պատմական բառերի զգալի մասը գործածվում է գեղարվեստական և գիտապատմական գրականության մեջ, առաջինում՝ որպես գեղարվեստական պատկերավորման միջոց՝ ունենալով ոճական արժեք, իսկ երկրորդ դեպքում նրանք ծառայում են որպես անցած պատմական դարաշրջանների համապատասխան հասկացությունների անվանման միջոց՝ այս կամ այն պատմական դարաշրջանը պատկերելու համար:

Հնաբանությունների և պատմական բառերի արժեքը լեզվում այն է, որ այդ կարգի բառերը խոսքի ոճավորման համար գործածվում են.

ա) Դարաշրջանի պատմական բներանգը վերականգնելու համար (պատմական բնույթի գեղարվեստական ստեղծագործություններում):

բ) Գեղարվեստական խոսքին հանդիսավորություն, հուզաարտահայտչական երանգ տալու համար (չափածո և հրապարակախոսական գործերում, ճարտասանության մեջ, հռետորական ելույթներում):

գ) Չավեշտական, հեզնական, երգիծական տպավորություն ստեղծելու համար (ֆելիետոնային, պամֆլետային, երգիծական ստեղծագործություններում):

դ) Գեղարվեստական ստեղծագործության կերպարների խոսքային բնութագրման համար:

ե) Պատմական տվյալ դարաշրջանի հասկացությունների անվանման համար (պատմափիլիսոփայական, գիտական գրականության մեջ և այլն):

**Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը
իմաստային տարբերակման, ոճական կիրառության
և հուզաարտահայտչական գունավորման տեսակետից**

Բառապաշարը արտահայտչական-պատկերավորման՝ հուզաարտահայտչական գունավորման և ոճական կիրառության տեսա-

կետից ստորաբաժանվում է **չեզոք** և **դրական գնահատություն ունեցող** խմբերի.

1) **Միջոճային** կամ **չեզոք բառապաշար**: Ինչպես ամեն մի լեզվի, այնպես էլ ժամանակակից հայերենի բառաոճային խմբերը կարող են առանձնաճանալ կամ տարբերակվել համագործածական, միջոճային բառապաշարի ֆոնի վրա: Այդ բառապաշարը դրական գունավորմամբ օժտված բառերի նկատմամբ ոճականորեն չեզոք է կամ ունի, այսպես կոչված, «ոճական զրո բնութագրում»⁷⁵: Այս վերջինիս շուրջն էլ խմբավորվում են մնացած բոլոր ոճական կարգերը: Չեզոք բառապաշարը այն կենտրոնն է, որից ելնելով՝ հնարավոր է որոշել բառերի խմբավորումները ոճականորեն դրական գունավորման տեսակետից:

Չեզոք կամ **միջոճային** բառապաշարին պատկանող բառերի հիմնական առանձնահատկությունն այն է, որ նրանք պատկանում են բառային հիմնական ֆոնդին, ստեղծվել են լեզվի զարգացման ավելի երկար ժամանակահատվածի ընթացքում: Այդ կարգի բառերը առարկաների, երևույթների, հատկանիշների անվանումներն են, հիմնականում արտահայտում են բառերի ուղղակի կամ անվանական և որոշ չափով հետագայում ձեռք բերած փոխաբերական այն իմաստները, որոնք ոճական և հուզաարտահայտչական գունավորման տեսակետից գործածության որևէ սահմանափակում չունեն: Դրանք, ոճական և հուզաարտահայտչականության տեսակետից չեզոք լինելով, չունեն ոճական կամ հուզաարտահայտչական գունավորման որևէ բնութագիր: Վերոհիշյալ առանձնահատկությունների շնորհիվ այդ կարգի բառերը կարող են գործածվել խոսքային հաղորդակցման տարբեր ոլորտներում և ընդհանրապես տարբեր ոճերում:

Չեզոք բառապաշարի մեջ մտնում են նաև այն բառերը, որոնք, գուրկ լինելով ոճական որևէ գունավորումից, ունեն ոճական հոմանիշներ լեզվի գործառական՝ գրքային, խոսակցական, հասարակաբանական և այլ ոճերում: Օրինակ՝ **քափառեկ** (չեզոք) – **դեզերեկ, ասփառեկ, նժդեհեկ** (գրքային), **պրփրեկ, ման գալ, թրև գալ, քաշ գալ**

⁷⁵ *Ахманова О. С.*, Очерки по общей и русской лексикологии, Москва, 1957, с. 243-262.

(խոսակցական), *զվռնել, զվռտել* (հասարակաբանական): **Խտաբել** (չեզոք) – 1. *Խտարդավանել, պատրել* (գրքային), *զլխահան անել, զլիւից հանել, աչքերը կապել, զլուխը յուղել, զլուխը կապել* (խոսակցական), *զլուխը կլայակել, պարանի հանել, պարանի քաշել, սառցի քաշել* (հասարակաբանական), *էշի տեղ դնել* (գոեհկաբանական), *թլոզել, թլամորել, թլտրել* (խոսակցական), 2. *փչել, դուրս տալ* (խոսակցական): **Ամուսին** (չեզոք) – *այր, կողակից, կենակից* (գրքային), *մարդ* (խոսակցական), *ամուսնյակ* (փաղաքշական) և այլն:

2) **Հուգաարտահայտչական բառապաշար:** Այդ բառապաշարի մեջ մտնող բառերը ծառայում են խոսքում հույզերի, ապրումների, տրամադրության արտահայտման, բառի մեջ սուբյեկտիվ վերաբերմունքի դրսևորման համար: Դրանք այն բառերն են, որոնք լեզվական միջոցներով արտահայտում են հուգաարտահայտչական զանազան երանգներ, ինչպես, օրինակ՝ **սիրունիկ, քնքուշիկ, քաղցրիկ, հոգյակ, աղավնյակ** և այլն:

Արտահայտչականությունը բառին կամ դարձվածքին ներքնապես հատուկ կամ դրանց կողմից ձեռք բերված արտահայտչական-պատկերավորման հատկությունն է, որը բառին տալիս է պատկերավորություն և արտահայտչական գունավորում, որով և հիշյալ բառերն ու արտահայտությունները տարբերվում են սովորական կամ ոճականորեն չեզոք բառերից:

Արտահայտչական (էքսպրեսիու) են կոչվում այն բառերը (կամ դարձվածքները), որոնք արտահայտում են փաղաքշանք, կատակ, հեզմանք, արհամարհանք, ընտանեվարություն և այլն: Օրինակ՝ *գրող* և *գրչակ, թուղթ մրող, հանգաթուխ* (ծախսու կամ վատ գրող), կամ՝ *մեռնել – վախճանվել, հոգին ավանդել, մահկանացուն կնքել, հրեշտակների հեկր խոսել* և *սասկել, դժոխք գնալ, Ալլահի մոտ (գոզք) զնալ, ոտները (նալերը) տնկել* և այլն:

Հուգական (էմոցիոնալ) բառապաշարի մեջ մտնում են.

ա) Այն բառերը, որոնք լեզվական տարբեր միջոցներով բառին տալիս են հուգական զանազան գունավորումներ, ինչպես, օրինակ՝ **հոգյակ, աղավնյակ, հայրիկ, մայրիկ, պապիկ, տատիկ, դպրիկ** և այլն:

բ) Գոեհկարգությունները. ինչպես, օրինակ՝ *Էջի տեղ դնել, Էջի սկանջում քնած, փսխել, խնչել* և այլն:

գ) Չայնարկությունները և եղանակավորող բառերը, ինչպես, օրինակ՝ *կեցցե՛, կեցցե՛ս, սապանան փանի, գրողի ծոցը, իհարկե, ուրեմն, անպայման, ա՛ իս, վա՛իս, էհե՛ յ, օ՛ն, ուռա՛* և այլն:

3) Ժամանակակից հայերենի բառապաշարը ոճական կիրառության տեսակետից:

Բառերի ոճական պատկանելությունը որոշելու համար անհրաժեշտ է առաջին հերթին առանձնացնել բառապաշարի այն զանգվածը, որն իր գործածությամբ սահմանավակված չէ: Այդ կարգի բառերը, գործածվելով խոսքի տարբեր ոճերում, պահպանում են ոճական-կիրառական իրենց չեզոքությունը, հավասարապես ընդունելի և մատչելի են լեզվի տարբեր ոճերին, կարող են գործածվել լեզվի ցանկացած ոճում ու ժանրում և կազմում են լեզվի չեզոք բառապաշարը:

Չեզոք բառապաշարը այն հենքն է, որի հիման վրա կամ որի համեմատությամբ առանձնանում են բառերի ոճական տարբեր կիրառությունները, ոճականորեն դրական գունավորում ունեցող բառերը: Ոճականորեն չգունավորված «չեզոք» բառերի համեմատությամբ բառապաշարի մեջ մտնող մյուս բառերը կարող են բաժանվել «բարձր» և «ցածր» ոճերի: Մյուս կողմից՝ տարբեր ոճերի սահմանները մշտական չեն. ժամանակի ընթացքում բառերը իրենց ձեռք բերած նորանոր կիրառությունների շնորհիվ հաճախ փոխում են նաև գործածության ոլորտները և լեզվի մի ոճից անցնում են մյուսը:

ա) «Բարձր» ոճին պատկանող բառապաշար: «Բարձր» ոճին պատկանող բառերը սովորաբար անվանվում են նաև **գրքային**: Չեզոք բառապաշարի համեմատությամբ «բարձր» ոճին պատկանող բառերի գործածությունը լեզվում ընկալվում է իբրև լեզվի լավիմացության վկայություն: Ի տարբերություն խոսակցական բառապաշարին պատկանող բառերի՝ գրքային բառերը գուրկ են վառ արտահայտված արտահայտչականությունից, և նրանք որոշ մասով ընդհանուր գործածական, գիտական լեզվի մասնագիտական բառեր՝ տերմիններ են: Այդ կարգի բառերը լեզվին տալիս են որոշ չափով արհեստական, «բռնազբոսիկ», «չոր», պաշտոնական բնույթ, երբեմն նույնիսկ՝ որոշ շքեղություն (պճնանք):

Գրքային բառապաշարը առաջին հերթին լրացնում են ընդհանուր գործածական և համագիտական տերմինները, որոնք նպաստում են հիմնականում գիտական հաղորդակցմանը և հարակից ոլորտների սպասարկմանը:

Ոճական «բարձրացումը» ավելի ցայտուն արտահայտվում է «**բարձր**» և «**բանաստեղծական**» ստորաբաժանումներում:

«Բարձր» ոճի բառերից բանաստեղծականները տարբերվում են նրանով, որ վերջիններն առաջինի համեմատությամբ ավելի նեղ և յուրահատուկ բնույթ ունեն, քանակապես ավելի քիչ են և համեմատաբար օժտված են բառինաստային սահմանափակությամբ, որոշ չափով իրենց վրա կրում են հնության, հնացածության կնիք: Բանաստեղծական բառերն ունեն իրենց չեզոք համարժեքները կամ հոմանիշները: Օրինակ՝ **սյուք** (բանաստեղծական) – **քամի** (չեզոք), **հով**, **զեփյուռ** (բանաստեղծական), **զով** (չեզոք): Բանաստեղծական բառապաշարում զգալի տեղ են գրավում հնաբանությունները, մասնավորապես գրաբարյան բառերն ու բառածևերը և հեղինակային նորաբանությունները:

«Բարձր» ոճի բառերը գործածվում են գլխավորապես արձակում, հրապարակախոսության մեջ, ըստ պարագաների՝ կարող են գործածվել շատերի կողմից, երբ պահանջվում են արտահայտման «բարձր» ձևերը: Բանաստեղծական բառերի համեմատությամբ այս կարգի բառերը քանակապես ավելի շատ են և ավելի լայն չափերով են տարածված ժամանակակից գրական լեզվի գրավոր տարբերակում:

Բացի վերոհիշյալ՝ բանաստեղծական և «բարձր» շերտերից, «բարձր» ոճը ստորաբաժանվում է նաև՝ ճարտասանական, ակադեմիական, մասնագիտական տեխնիկական և այլ շերտերի:

Գրքային բառապաշարում առանձնանում են մի քանի ոճային խմբեր՝ պաշտոնական-գործարարական, արտադրական-տեխնիկական, գիտական, հասարակական-հրապարակախոսական և այլն, որոնք, իրենց հերթին, լրացուցիչ կերպով ստորաբաժանվում են առանձին ենթախմբերի:

1) *Պաշտոնական-գործարարական բառապաշարին* բնորոշ են

զանազան տիպի գրասենյակային փաստաթղթերի, արձանագրությունների, որոշումների, հրահանգների, կոչերի, դիվանագիտական և իրավաբանական գրագրությունների մեջ հաճախ գործածվող բառերը:

Պաշտոնական լեզվում կարևոր նշանակություն ունի մտքերի ճշգրիտ շարադրանքը, փաստերի ստույգ անվանումը, հետևաբար և նրանում զգալի տեղ են գրավում մասնագիտական բառերը: Իրավաբանական-դիվանագիտական բառապաշարում գործածվում են նաև որոշ թվով հնացած, այսպես կոչված՝ գրասենյակաբանություններ, ինչպես նաև այդ բնագավառում հաճախ գործածվող կաղապարներ, ինչպես, օրինակ՝ **առ այն, սույն, վերոբերյալ, վերոգրյալ, վերոհիշյալ, ի ցույց, ի կատարումն, ի լրումն, ի լուր** (ամենքի), **վերոշարադրվածի հիման վրա, ըստ այդմ, ըստ այնմ, ըստ որում, ընդ որում, ընդամին** և այլն:

Պաշտոնական բառապաշարը գործածական է նաև գեղարվեստական գրականության մեջ, հատկապես այն դեպքերում, երբ ներկայացվում են համապատասխան կերպարներ կամ նկարագրվում են համապատասխան իրադարձություններ, ինչպես, օրինակ՝ **դասվարություն, նիստ, ժողով** և այլն:

2) *Գիրական բառապաշարը* բնորոշվում է վերացական իմաստ ունեցող բառերի և հատկապես համապատասխան մասնագիտական տերմինների գործածության առատությամբ:

3) *Արտադրական-րեխնիկական բառապաշարը* գիտատեխնիկական հեղաշրջման արդի փուլում աստիճանաբար ընդլայնում է իր տեսակարար կշիռը գրքային ընդհանուր բառապաշարում: Վերոհիշյալ լեզվում զգալի տեղ են բռնում կիրառական տեխնիկային, արտադրական գործողություններին, տեխնոլոգիական գործընթացներին վերաբերող մասնագիտական բառերը և տերմինները:

4) *Հասարակական-քաղաքական բառապաշարը* ավելի գործածական է հասարակական-քաղաքական և գրաքննադատական աշխատություններում, լրագրահանդեսային տեսություններում և հոդվածներում, ակնարկներում, ֆելիետոններում, պարսավագրերում (պամֆլետ) և այլն:

Հատկանշական է, որ գրքային բառապաշարի մեջ մտնող հիշ-
յալ՝ պաշտոնական, գիտական, արտադրական-տեխնիկական, հա-
սարակական-քաղաքական խմբերը մեկուսացած, ներփակված չեն,
կարող են փոխադարձաբար ներթափանցել միմյանց բնագավառ-
ները:

բ) «Ցածր» ոճին պատկանող բառապաշար: Չեզոք բառապա-
շարի համեմատությամբ, այսպես կոչված՝ «ցածր» ոճին է պատկա-
նում խոսակցական բառապաշարը, որի մեջ առանձին ենթախմբեր
են կազմում հիմնականում հասարակաբանությունները և գոեհկաբա-
նությունները:

1) Խոսակցական բառապաշար: Խոսակցական բառապաշարը
մտնում է բանավոր խոսքի մեջ. նրան հիմնականում վերաբերում են
այն կարգի բառերը, որոնք առաջին հերթին անհրաժեշտ են առօրյա
անկաշկանդ խոսակցության համար: Հիշյալ բառապաշարի հիմքն
են կազմում լեզվի համագործածական բառերը, ինչպես նաև հուզա-
արտահայտչական գունավորմամբ օժտված այնպիսի բառեր, որոնք
անկաշկանդ, անբռնազբոսիկ խոսքին տալիս են նաև որոշակի ար-
տահայտչականություն և աշխուժություն: Կառուցվածքային տեսա-
կետից խոսակցական բառապաշարին են վերաբերում նաև այն բա-
ռերը, որոնք կազմված են նվազական, փաղաքշական, արհամարհա-
կան իմաստ ունեցող ածանցներով, ինչպես, օրինակ՝ **հոգյակ,
աղավնյակ, ամուսնյակ, հյուղակ, տնակ, խենթուկ** և այլն:

Խոսակցական բառապաշարին են հարում խոսակցական-առ-
օրյա և կենցաղային (առտնին) բառերը: Խոսակցական-առօրյա բա-
ռերն անհրաժեշտ են խոսակցական բառապաշարին՝ առօրյա հա-
ղորդակցման ամենօրյա գործառնությունը կատարելու համար:

Կենցաղային (առտնին) կամ խոսակցական-կենցաղային բա-
ռապաշարի մեջ մտնում են ամենօրյա գործածության բառերը, որոնք
անվանում են կենցաղի առարկաներն ու երևույթները, արտահայ-
տում են կյանքի ընդհանուր կացութաձևը, մեզ շրջապատող իրակա-
նությունը, սովորությունները, բարքերը և այլն:

2) Հասարակաբանություններ: Խոսակցական բառապաշարից
նկատելիորեն տարբերվում են հասարակաբանությունները, որոնք

իրենց ոճական-արտահայտչական գունավորմամբ հաճախ ունեն վառ արտահայտված բացասական երանգ:

Հասարակաբանական բառապաշարի հիմքը ժամանակակից հայերենում կազմում են գլխավորապես բարբառային-գավառական բառերը, մասամբ նաև գրական լեզվի այն բառերը, որոնք իրենց ձեռք բերած փոխաբերական նոր իմաստների շնորհիվ հուզաարտահայտչական տարբեր երանգներ են արտահայտում, ինչպես, օրինակ՝ **ռեխ, կարկաժ** (գրուխ):

Հիշյալ բառապաշարի մեջ առանձնանում է նաև բառերի մի խումբ, որի մեջ մտնող բառերը զուրկ են վառ արտահայտված բացասական գունավորումից և գտնվում են գրական գործածության եզրին, ինչպես, օրինակ՝ **ծղկեխ, ծիկրակեխ, պաչեխ, պռոշ, մռուք, քուշ** և այլն:

Սովորաբար այս կարգի բառերը գրական նորմաներից դուրս են գտնվում և բնորոշվում են հասարակեցման, պարզեցման, ցածրացման, կոպտության երանգներով, որ հաճախ գեղարվեստական ստեղծագործություններում և խոսակցական լեզվում գործածվում են իբրև արտահայտչական տարբեր՝ խոսքին հատուկ արտահայտչական երանգ տալու, խոսքը ոճավորելու կամ գեղարվեստական գրականության մեջ գործող անձանց անհատական բնութագրման համար:

3) Գռեհկարանություններ: Այս կարգի բառերը բառապաշարի մի չնչին մասն են կազմում և փաստորեն գտնվում են գրական լեզվի բառապաշարից դուրս: Դրանք այն բառերն են, որոնցում կոպտության կամ արհամարհանքի երանգը չափազանց վառ կերպով է արտահայտված:

4) Ժարգոնային բառեր և արդասիայություններ, որոնք առաջին հերթին հատուկ են երիտասարդությանը, մեծ մասամբ կրում են ժամանակավոր բնույթ. հները մոռացվում են, երևան են զալիս նորերը: Դրանք հիմնականում հասարակաբանություններ ու գռեհկաբանություններ են կամ փոխառություններ, որոնք նոր իմաստներով գործածվում են հաղորդակցման նեղ շրջանակներում, ինչպես, օրինակ՝ **հաջող, քաշեխ, քաշվեխ, կայֆալում, ցվրվեխ, քյոլեխ, դուխով, դուխովանայ, ցվուր, ցիրեխ, կայֆ անեխ, մանդրաժ ընկնեխ, շուխուր օգեխ, լովեխ, դգեխ** և այլն:

**Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը
ըստ գործածության տարբեր ոլորտների**

Ջբաղմունքային և տերմինաբանական բառապաշար

1) Ջբաղմունքային բառապաշար: Ժամանակակից հայերենում ընդհանուր գործածական բառապաշարի մեջ մտնող բառերին գուգահեռ կան նաև շատ բառեր ու բառակապակցություններ, որոնք ամենօրյա հաղորդակցման ընթացքում գործածվում են իրենց աշխատանքային գործունեությամբ, զբաղմունքով, միևնույն մասնագիտությամբ միավորված մարդկանց որոշակի խմբերի կողմից: Այդ կարգի բառերն ու արտահայտությունները կազմում են լեզվի *զբաղմունքային բառապաշարը*:

Ջբաղմունքային բառապաշարի մեջ մտնող բառերի բնորոշ հատկանիշն այն է, որ նրանք խիստ տարբերակման և մասնավորման են ենթարկում արտադրության միջոցների, արտադրական գործիքների, մասնագիտական առարկաների, կոնկրետ երևույթների, գործողությունների անվանումները: Առանձին մասնագիտությունների տեղ մարդկանց բնագավառի աշխատողները (ինչպես, օրինակ՝ բժիշկները, ճարտարապետները, շինարարները, վարորդները, քիմիագործները, ատաղձագործները, լամպագործները, կոշկագործները, տպագրիչները և այլն) իրենց բառապաշարում այնպիսի յուրահատուկ բառեր ու բառիմաստներ են գործածում, որ անհասկանալի կամ դժվարհասկանալի են մեկ այլ բնագավառի աշխատողներին: Այդ կարգի բառերի, մյուս առանձնահատկությունն էլ այն է, որ դրանք իրացվում են բանավոր հաղորդակցման ընթացքում և, համաժողովրդական լեզվի ընդհանուր գործածական բառապաշարի համեմատությամբ իրենց գործածության ոլորտները սահմանափակ լինելով, դուրս չեն գալիս խոսակցական լեզվի շրջանակներից:

2) Տերմինաբանական բառապաշար: **Տերմինաբանություն, տերմին:** Ժամանակակից հայոց լեզվի բառային կազմի բաղադրիչ մասն է կազմում տերմինաբանական բառապաշարը: Կապված լինելով այս կամ այն գիտության հասկացու-

թյունների համակարգի հետ՝ տերմինաբանությունը լայն առումով տվյալ լեզվի տերմինների, նեղ առումով՝ տվյալ գիտության կամ բնագավառի, ճյուղի, անգամ մասնաճյուղի տերմինների ամբողջությունն է և որպես համաժողովրդական գրական լեզվի բառապաշարի բաղկացուցիչ մաս՝ սպասարկում է գիտության և տեխնիկայի, տնտեսության և արտադրության, մշակույթի՝ արվեստի ու գրականության և այլ բնագավառները:

Տերմինաբանություն բառն ունի մեկ այլ իմաստ ևս. այն բառագիտության բաժին է, որ զբաղվում է տերմինների տեսության և կիրառության զանազան հարցերով: Տերմինաբանության այս իմաստին այժմ փոխարինում է *տերմինագիտություն* բառը⁷⁶:

Տերմինաբանությունը համարվում է գիտության լեզու, ազգային ընդհանուր գրական լեզվի ինքնուրույն գործառական տարբերակ, գրական լեզվի գործառական ենթահամակարգ: Այդ առումով ընդհանուր համագործածական լեզվի համեմատությամբ տերմինաբանությունը՝ գիտության լեզուն, ավելի նեղ հասկացություն է, նրան հատուկ չեն գրական լեզվի կիրառական-գործառական բոլոր առանձնահատկությունները: Տերմինաբանությունը, ներառելով մասնագիտական բառապաշարը, միայն իրեն հատուկ գործառական (տեղեկատվական-հաղորդակցման) և լեզվական յուրահատկությունների պատճառով, իբրև գիտության, մշակույթի, արտադրության տարբեր բնագավառների մասնագետների զբաղմունքային (պրոֆեսիոնալ) հաղորդակցման միջոց, փաստորեն գտնվում է սովորական, ոչ պրոֆեսիոնալ հաղորդակցման սահմաններից դուրս: Ծագելով և զարգանալով ընդհանուր գրական լեզվի նյութական ու բառակազմական օրինաչափությունների հիման վրա, տերմինաբանությունն օժտված է նաև որոշակի առանձնահատկություններով, որոնք արտահայտվում են իմաստային համակարգայնությամբ, ինչպես նաև կառուցվածքային կամ մասնագիտական արտահայտման միջոցների միօրինակությամբ, որոշ ընդհանուր օրինաչափությունների միասնականություն ստեղծելու միտումներով:

⁷⁶ *Աղայան Էդ.*, Տերմինաբանություն, Երևան, 1978: *Ղազանչյան Լ.*, Հայերեն լեզվաբանական տերմինների համակարգային, կառուցվածքային վերլուծություն // Լեզվի և ոճի հարցեր, հ. 4, Երևան, 1977, էջ 200-327:

Տերմինը (*եզր, եզրույթ*)⁷⁷ բառ կամ բառակապակցություն է, որ նշանակում է հասարակական-քաղաքական, գիտության և տեխնիկայի, արվեստի և գրականության տարբեր բնագավառների որևէ հասկացություն: Տերմինները մասնագիտական լեզվի այն բառերը կամ բառակապակցություններն են, որոնք ստույգորեն (ճշգրտորեն) արտահայտում են մասնագիտական հասկացություններ և նշանակում են մասնագիտական առարկաներ: Տերմինը, միաժամանակ, այն բառը կամ բառակապակցությունն է, որ նշանակում է միայն գիտական ստույգ հասկացություն: Իբրև գիտական հասկացություն՝ յուրաքանչյուր տերմինի իմաստ հնարավոր է գիտականորեն սահմանել: Այս դեպքում տերմինի բովանդակությունը նույնացվում է առարկայի, երևույթի հասկացության հետ:

Տերմինը լեզվի սովորական բառից տարբերող հատկանիշներն են.

ա) Տերմինի գոյությունը պայմանավորված է միայն մասնագիտական հասկացություններ արտահայտելու պահանջով:

բ) Հետևաբար տերմինը ոչ թե հատուկ բառ է, այլ բառ՝ հատուկ գործածությամբ:

գ) Տերմինը ճշգրտորեն հարաբերում է իր նշանակած հասկացությանը՝ ի տարբերություն սովորական բառի, որի նշանակած հասկացության ծավալն ավելի լայն է:

դ) Տվյալ մասնաճյուղի տերմինները սովորաբար մենիմաստ են՝ ի տարբերություն սովորական բառերի, որոնց հիմնականում բնորոշ է բազմիմաստությունը:

ե) Տվյալ տերմինաբանական համակարգի տերմինների հարաբերակցությունը իրար նկատմամբ հիմնականում ստորակարգային է, թեև նույն համակարգի ներսում նրանք կարող են իրար նկատմամբ համադաս հարաբերության մեջ գտնվել:

Տերմինը, որպես կանոն, տվյալ տերմինաբանական համակարգում մենիմաստ է, զուրկ է որևէ հուզաարտահայտչական գունավո-

⁷⁷ *Տերմին* բառը ծագում է լատիներեն *terminus*-ից, որ բառացի նշանակում է «սահման, սահմանային նշան, եզր»: Արևելահայ գրական հայերենում թարգմանվում է *զիրաբառ*, երբեմն՝ *անվանում*, արևմտահայերենում՝ *եզր*:

րումից և ոճական կիրառական առանձնահատկություններից: Տերմիններին՝ որպես հասկացության լեզվական նշանների, բնորոշ է միանշանակ հարաբերումը հասկացություններին: Մեկ նշան՝ մեկ հասկացություն, մեկ հասկացություն՝ մեկ նշան. այս է տերմինի և հասկացության փոխհարաբերությունը: Մինչդեռ լեզվի սովորական բառը հիմնականում ոչ միայն բազմիմաստ է, այլև գրեթե պարտադիր կերպով մտնում է որևէ հոմանշային և հականշային շարքի մեջ: Նույն համակարգի ներսում տերմինի բազմիմաստությունը կարող է ստեղծել ավելորդ կրկնաբանություններ, տերմինի սահմանման ճշգրտության խախտում և այլն: Նույնը ամբողջությամբ վերաբերում է նաև տերմինների համանունությանը միևնույն համակարգի ներսում:

Այլ բան է տերմինների արտահամակարգային բազմիմաստությունն ու համանունությունը: Օրինակ՝ *սև* տերմինը հավասարապես կարող է օգտագործվել՝ կենսաբանության, բժշկության, բուսաբանության, լեզվաբանության մեջ այդ գիտությունների համապատասխան իմաստային տարբերակումներով:

Հաճախ դժվար է սահմանագիծ տանել տերմինի և ոչ տերմինի (սովորական բառի) միջև: Նախ՝ որևէ բնագավառում տերմինացված բառերը շարունակում են միաժամանակ օգտագործվել իբրև լեզվի ընդհանուր բառեր (օրինակ՝ *ենթակա, խնդիր, արմատ, օդ, մթնոլորտ, ջուր, գետ, ծով, լիճ, երկիր, երկաթ, պղինձ, աղ, բույս, ծառ, թուփ, գայլ* և այլն): Այնուհետև՝ ընդհանուր լեզվի բառերի մի մասը տերմինացվում է միայն բառակապակցական տերմինների մեջ (օրինակ՝ *բառային կազմ, հնչույթային կազմ, ածականի համեմատության աստիճան* և այլն):

Լեզվի սովորական բառերը տերմինացվում են, սովորաբար, բառիմաստի փոփոխության զանազան եղանակներով՝ իմաստի նեղացման, ընդլայնման, ըստ գործառնության, գուգորդության կամ ըստ փոխաբերության իմաստափոխության շնորհիվ:

Տերմինաբանական և լեզվի համագործածական բառապաշարները գտնվում են փոխադարձ կապի և փոխներթափանցման գործընթացի մեջ: Այդ ընթացքում նկատվում է երկու հակառակ միտում, մի կողմից տերմինացում՝ ընդհանուր լեզվի բառի վերածում տերմինի

(օրինակ՝ **օդ, ջուր, շուն, վարդ, երկաթ, ոսկի**), մյուս կողմից՝ ապատերմինացում. տերմինի վերածում ընդհանուր լեզվի բառի (օրինակ **հեռուստաբեռնություն, հեռուստակառավարում, փեկերագնաց, համակարգիչ**): Առաջին դեպքում տեղի է ունենում գործածության ոլորտների նեղացում (բառիմաստի նեղացում), երկրորդ դեպքում՝ գործածության ոլորտների ընդլայնում: Ըստ որում, ընդհանուր լեզվի բառը տերմինանալով չի դադարում գործել ընդհանուր գրական լեզվի համակարգում, և տերմինը ապատերմինանալով չի դադարում գործել իր տերմինաբանական համակարգում: Ստանալով տերմինաբանական նոր գործառնություն և մուտք գործելով գործածության նոր ասպարեզ՝ ընդհանուր լեզվի բառը կտրում է իր նախկին բառային՝ հոմանշային և հականշային կապերը: Քանի որ այդ կարգի տերմիններից յուրաքանչյուրը հանդես է գալիս մեկ առանձին տերմինահամակարգի մեջ, չի խախտվում տերմինների և նրանց իմաստների համակարգայնությունը և շփոթության պատճառ չի դառնում:

Տերմինաբանության մյուս կարևոր առանձնահատկությունը նրա համակարգայնությունն է: Տերմինաբանությունն ամենից առաջ կապված է տվյալ գիտության հասկացությունների համակարգի հետ: Տերմինների համակարգայնությունը պայմանավորված է այս կամ այն գիտաճյուղի հասկացությունների որոշակի օրինաչափ կապակցվածությամբ, և տվյալ ճյուղի կամ մասնաճյուղի տերմինները նույն բնագավառին պատկանող հարակից այլ տերմինների հետ մի ամբողջական համակարգ են կազմում: Տերմինային համակարգ կամ տերմինահամակարգ կազմում են ինչպես նույն բնագավառի առանձին մասնաճյուղերը, որպես, այսպես կոչված՝ մանրահամակարգ (միկրոհամակարգ), այնպես էլ գիտության ամբողջ ճյուղը կամ տվյալ գիտության, տեխնիկայի, արտադրության բնագավառը ամբողջությամբ առած իբրև ընդհանուր համակարգ (մակրոհամակարգ):

Այդ սկզբունքով էլ գիտության, տեխնիկայի, արտադրության, արվեստի և գրականության յուրաքանչյուր ճյուղ կամ բնագավառ ունի իր յուրահատուկ տերմինների ամբողջությունը, որը և կազմում է

առանձին տերմինաբանական համակարգ կամ տերմինահամակարգ, ինչպես, օրինակ՝ բժշկական, բուսաբանական, մաթեմատիկական, քաղաքական, տնտեսագիտական, իրավաբանական, փիլիսոփայական, լեզվաբանական, գրականագիտական, արվեստագիտական և այլն:

Տերմինաբանական ընդհանուր և մանրահամակարգերի միջև գոյություն ունի համադասային և ստորակարգային հարաբերություն:

Ժամանակակից հայոց լեզվի տերմինների կազմության աղբյուրներն ու միջոցները: Հասարակական-քաղաքական, գիտատեխնիկական հայերեն տերմինների կերտման աղբյուրներն են՝ հայոց լեզուն իր զարգացման հիմն, միջին և նոր փուլերով, հայերեն բարբառները և փոխառությունները, իսկ միջոցները՝ հայերենի բառակազմական օրինաչափությունները:

ա) Հայերեն տերմինների զգալի մասը ստեղծվել է լեզվի ընդհանուր գործածական բառապաշարի մեջ մտնող սովորական բառերի տերմինացման շնորհիվ, ինչպես, օրինակ՝ *բառ, հնչյուն, խոսք, բարբառ*, կամ՝ *կարմրուկ, վարդախոտ, կարմիր քամի, թոք, թև, թիակ, արմուկ, աչք, գլուխ, դասարակ, կոկորդ*, և կամ՝ *երկաթ, պղինձ, սևագ, նաև՝ կեչի, թխկի, սոսի* և այլն, որոնք որպես մասնագիտական բառեր կամ տերմիններ, մտնում են տերմինաբանական այս կամ այն համակարգի մեջ:

Լեզվի սովորական բառի տերմինանացումով սահմանափակվում է նրա բովանդակության ծավալը, այն ձեռք է բերում նոր, մասնագիտական իմաստ և մուտք գործելով համապատասխան տերմինահամակարգ՝ մի կողմից, նույն համակարգի տերմինների հետ մտնում է իմաստային-ձևաբանական նոր հարաբերությունների մեջ, մյուս կողմից՝ խզում է իր նախկին բառային կապերը հոմանիշների, հականիշների, համանունների հետ՝ պահպանելով ձևաբանական-բառակազմական հատկանիշները:

Լեզվի ընդհանուր գործածական բառապաշարի բառերի տերմինացման դրական կողմն այն է, որ, նախ, պահպանվում է սեփական, ոչ փոխառոյալ բառային կազմը, բառապաշարը չի համալրվում անհարկի նոր բառերով կամ տերմիններով և, որ կարևոր է, այդ կարգի

տերմիններն ավելի մատչելի և հասկանալի են դառնում տվյալ լեզվով խոսող հանրությանը:

բ) Հայ տերմինաբանության աղբյուրներից են գրաբարը և միջին հայերենը: Այդ կարգի բառերը կամ բառաձևերը նույնպես տերմինացման են ենթարկվում նույն իմաստներով կամ մեծ մասամբ իմաստափոխված: Օրինակ՝ գրաբարյան **հասարոց** բառը, որ նշանակում է «խտրոց, պատվար», իմաստափոխվելով, վեր է ածվել մեքենաշինության բնագավառի տեխնիկական տերմինի: Նույն ձևով նաև՝ **պարեպ, արբանյակ** և այլն:

գ) Հայերեն տերմինաբանության աղբյուրներից է բարբառների գավառական բառապաշարը: Հատկապես կարելի է հիշատակել գյուղատնտեսության, բուսաբանության և մի շարք այլ բնագավառներ, որտեղ մուտք են գործել տերմինացված գավառական շատ բառեր, ինչպես՝ գյուղատնտեսությանը վերաբերող՝ **էպ, այգեթաղ, այգեքսաց, այգեփոր, աշնանացան** և այլն, ինչպես նաև հազարավոր բուսանունները, որոնք մտնում են հայերեն բուսաբանական տերմինաբանության մեջ:

Բարբառներում պահպանված շատ բառեր այժմ գործածվում են իբրև բժշկական, կազմախոսական տերմիններ, ինչպես՝ **կարմրուկ, աճուկ, կարմիր քամի, կապույտ հազ** և այլն:

դ) Հայերեն տերմինաբանության հարստացման հաջորդ աղբյուրը փոխառությունն է:

Գիտության, տեխնիկայի, արտադրության, մշակույթի զարգացման հետևանքով առաջացած նորանոր հասկացություններին համապատասխանող տերմինները փոխառության շնորհիվ սկզբնաղբյուր լեզուներից անցնում են աշխարհի տարբեր լեզուների, այդ թվում՝ նաև հայերենին:

Ներմուծվող գիտական նոր հասկացության համար հայերենը, հանպատրաստից բառեր չունենալով, փոխ է առնում օտարը մինչև սեփական, ձևով և բովանդակությամբ համապատասխան տերմինի ստեղծումը:

Հայերենի տերմինակազմության հիմնական միջոցը հայերենի բառակազմական ներքին հնարավորություններն են: Հայերենի բա-

ռակազմության պատրաստի կադապարներով կազմվում են հազարավոր բաղադրյալ՝ ածանցավոր, բարդ և բարդ ածանցավոր, ինչպես նաև բառակապակցական տերմիններ: Այս վերջին կարգի՝ բաղադրյալ և բառակապակցական տերմինների առավելությունը արմատական, պարզ տերմինների համեմատությամբ այն է, որ սրանց տերմինային իմաստները, պատճառաբանված լինելով, իրենց բաղադրիչների՝ հիմնական և երկրորդական ձևայինների արդեն հայտնի իմաստների առումով, ավելի դյուրամատչելի և հասկանալի են գործածության համար, ինչպես, օրինակ՝ **փինգերազնաց, փինգերակայան, փինգերանավորո, փինգերանավ, փինգերական, ասպդադիփարան** և այլն:

Մյուս լեզուների նման հայերենը նույնպես հաճախ ոչ թե փոխ է առնում օտար տերմինը, այլ համապատասխան հասկացությունը: Այս դեպքում հայերեն տերմինների նյութը սեփական բառերն են, միջոցները՝ լեզվի բառակազմական ներքին օրինաչափությունները:

Հայերենի բառապաշարային նյութի հիման վրա օտար հասկացությունների համար նոր տերմինների կազմության եղանակներն են՝ թարգմանությունն ու պատճենումը:

Օտար տերմինը հիմնականում թարգմանվում է հայերեն համագոր մեկ բառով կամ կապակցությամբ, որին ամրացվում է տվյալ հասկացության համապատասխան իմաստը. ինչպես՝ **շարսարոյակ, շուկայական հարաբերություն, ներքին այրման շարժիչ** և այլն:

Հայերեն նոր տերմինների կազմության մյուս եղանակը պատճենումն է, երբ օտար տերմինի կամ տերմինակապակցության իմաստային փոխառության հետ ընդօրինակվում է նաև նրա բառակազմական ձևական կողմը. **հակազազ** (противогаз), **ջերմաքարշ** (тепловод), **ինքնաթիռ** (самолет):

Տերմիններն իբրև որոշակի տերմինահամակարգի տարրեր՝ ենթարկվում են նրա օրինաչափություններին: Տվյալ ճյուղի կամ բնագավառի տերմինաբանության մշակման ընթացքում անհրաժեշտ է միօրինակություն և ներդաշնակություն հաստատել լեզվում արդեն առկա տերմինների և կերտվող ու փոխառվող տերմինների միջև: Ըստ որում, նոր տերմիններ կերտելիս կամ փոխ առնելիս անհրա-

Ժեշտ է հաշվի առնել ոչ միայն տերմինի բառապաշարային և իմաստաբանական առանձնահատկությունները և կապը լեզվի ընդհանուր բառապաշարի օրինաչափություններին, այլև տերմինի առնչակցությունը տվյալ լեզվի համակարգի մյուս կողմերին՝ նրա հնչյունաբանական, ձևաբանական և բառակազմական առանձնահատկություններին, տերմինի դյուրահնչյունության, հնարավորության սահմաններում, նաև՝ կարճության, հոլովվելու և խոնարհվելու, բարդություններ և ածանցումներ կազմելու նրա կարողություններին:

Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարի ծագումնաբանական դասակարգումը

Ծագումնաբանական տեսակետից ժամանակակից հայերենի բառապաշարը բաժանվում է բնիկ հայերեն բառերի, ստացվածքային կամ ժառանգորդական բառերի և փոխառությունների:

Բնիկ հայերեն բառեր: Բնիկ պետք է համարել հայոց լեզվի այն բառերը, որոնք կազմում են նախնական՝ հնդեվրոպական բառապաշարը կամ կերտվել են հետագայում հայերենի բառապաշարային նյութի հիման վրա: Դրանք, նախ, հնդեվրոպական ծագում ունեցող բառարմատները կամ արմատական բառերն են, որոնք գրաբարից, միջին հայերենից և հայ բարբառներից փոխանցվել են ժամանակակից հայերենին, ինչպես նաև վերոհիշյալ արմատներով կամ արմատական բառերով լեզվի զարգացման հին և նոր շրջաններում կազմված բաղադրությունները:

Հայերեն գրավոր հուշարձաններով ավանդված մոտ 11 հազար բառարմատներից, ըստ Հ. Աճառյանի տվյալների⁷⁸, հնդեվրոպական ծագում ունեն հայերեն մոտ 930-ը: Այդ թիվը որոշ չափով կարող են լրացնել հայերեն բարբառներում պահպանված գավառական այն բառերը և դրանցից հատկապես այնպիսիները, որոնք հնդեվրոպական ծագում ունեն կամ առնչվում են հնդեվրոպական ցեղակից լեզուներին: Այս կարգի բառերի ցուցակներ են բերում Հ. Աճառյանը և

⁷⁸ *Աճառյան Հ.*, Հայոց լեզվի պատմություն, Ա մաս, էջ 108-112:

Գ. Ջահուկյանը⁷⁹: Այդ բառերից կարելի է հիշատակել՝ *բոթել, բոռալ, լակ, կուլա, մուգ, նան, շիվ, փիփերթ* և այլն: Այսպիսով, ինչպես գրաբարյան հուշարձաններով վկայված, այնպես էլ բարբառներում պահպանված հնդեվրոպական ծագում ունեցող բառարմատների ընդհանուր թիվը այդ լրացումներով անցնում է 1200-ից:

Ըստ բնության, կենդանական և բուսական աշխարհի, մարդու և մարդկային գործունեության տարբեր բնագավառների պատկանելության՝ հիշյալ բառերը ստորաբաժանվում են հետևյալ խմբերի:

1) Մարդուն վերաբերող և մարդու մարմնի մասեր նշանակող բառեր՝ *ակ (ակն), աչք, ականջ, ունկն, տունգ(ն), այր, բերան, լեզու, ստամ, երես, որկոր, արմունկ, ուս, ափ, մասր, լանջ, սպինք, սիրտ, լյարդ, կող, մեջք, ող(ն), որովայն, փայծաղ, արգանդ, ընդերք, շեք, ծունկ, ազդր, ծունր, ամորչիք, հեպք, ոտ, ոլոք, սրունք, ջի, գեղձ, արյուն, միս, մարմին, անչ(ն), ոսկր, հող, նյարդ, արտասուք, թուք, մեզ, միտք, հոգի, արու* և այլն:

2) Ընտանիք, արյունակցական-ազգակցական, բարեկամական կապեր ցույց տվող բառեր՝ *ամուսին, այր, կին, հայր, մայր, եղբայր, թոռ, քույր, դուստր, ուստր, որդի, մանուկ, մանչ, սան, հարս, նու, սկեսուր, փայգր (փեգր), փայ, քենի, որք, ընկրանիք, գերդաստան, ընկեր, մարդ* և այլն:

3) Բնությանը, բնության երևույթներին պատկանող բառեր՝ *արև, արեգ, աստղ, լույս, ամպ, ամպրոտ, բուք, մրրիկ, կարկուտ, չյուն, սառն, գեպ, աղբյուր, ալիք, ողողեյ, փիղմ, հուն, սար, բլուր, հողմ, հով, օդ* և այլն:

4) Հիվանդություններ և այլ երևույթներ նշանակող բառեր՝ *երկունք, պալար, էլունդ, դարուկ, ջերմ, մրմուռ, քարախ, շի, խեղ, ործ(կ)ար, հեալ, հղի, դեղ, թոթով* և այլն:

⁷⁹ *Աճառյան Հ.*, նույն տեղում, էջ 119-122: *Ջահուկյան Գ.*, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 283-299:

5) Կրոնին, դավանանքին վերաբերող բառեր՝ **դիք** (հեթանոսական աստվածներ), **Յոն** (մատաղ, նվեր), **մաղթել, մեղք, սուրբ, փուն, երդում, անեծք, բովել, սրեղծել, քավել** և այլն:

6) Կենդանական աշխարհին վերաբերող բառեր՝ **ամիկ** (մեկ տարեկան այծ), **ույ, այծ, արաղատ, աղվես, առյուծ, արծիվ, արջ, գառ, անիծ, բռռ, եգ, էշ, կով, հապ, ճի, մաքի, մարի** (էգ), **մեղու, մոզի, մրջյուն, շուն, փավար, ցուլ, ճագ, շուկ, օձ, գորգ, մուկ** և այլն: Բայեր՝ **մկկալ, խլշել, խլշացնել** (ակամջները ցցել), **կռավել, խլվլալ, խլլլլալ** (շարժվել, բռվոտալ, թպրտալ), **ռռնալ** և այլն:

7) Երկիր, պետություն, զենք նշանակող բառեր՝ **արյան, մարդ, աղմուկ (կռիվ), թուր, նեպ, սլաք, կումբ, գերի** և այլն:

8) Մետաղներ, հանքեր նշանակող բառեր՝ **աղ, արծաթ, ավազ, պալ, քար** և այլն:

9) Գյուղատնտեսությանը, երկրագործությանը, անասնապահությանը վերաբերող բառեր՝ **արմար, բողբոջ, բողի, բույս, գաղձ, գարի, եղևին, սիպոր, կաղին, հացի, բոխի, թեղի, մայրի, ոսպ, դաղձ, շիվ, որթ, սիսեռ, փափասակ, փիփերթ, արոր, բահ, եղան, դիզել, քաղել, որոճալ, սրերջ** և այլն:

10) Շինարարությանը, արհեստներին, առևտրին վերաբերող բառեր՝ **անկյուն, առասպաղ, սպաղձ, գերան, դուռ, կամուրջ, մայթ, մույթ, սանդուղք, սյուն, փուն, ասեղ, աղալ, կնուն, գնել, քերթել** և այլն:

11) Արվեստին, կրթությանը վերաբերող բառեր՝ **գիր, գրել, ընթերցել (ընթեռնել), ուսանել, թիվ, գեղգեղել, երգ, երգել, առած, առակ, առասպել** և այլն:

12) Հագուստեղենին և զարդեղենին վերաբերող բառեր՝ **հագնել, անկողին, բարձ, մերկ, բոկ** (բոկոտն), **գինը, արդ, զարդ, զգեստ, օրոց, օժեղ** և այլն:

13) Ուտելիք և ըմպելիք նշանակող բառեր՝ **աղանձ, դալ, կաթ, կորկուպ, կեր, կուպ, կերակուր, արթ** (արթեճալ), **ուրել, ալյուր, բան, մածուն, մեղր, չիր, ջուր** և այլն:

14) Առտնին տնտեսությանը, կենցաղին վերաբերող բառեր՝ **աղալ, աճյուն, ավել, աման, այրել, բորբոքել, բովել բոց, բուրդ, եռալ,**

եփեյ, լսեյ, լոգանք, լվանայ, խանչեյ, խաշեյ (խարշեյ), կայծ, հալեյ, հեղեյ, հում, հուր, մոխ, մրկեյ, շաղեյ, շաղախեյ, պղպջակ, ջեռուցեյ, գդալ (ղրգալ), քամեյ և այլն:

15) Գույների անուններ՝ *դեղին, դեղձան, մուգ* և այլն:

16) Թիվ, չափ նշանակող բառեր՝ *մի, երկու, երեք* (մինչև իննսունհր), *ամբողջ, ամենայն, ավելի, քիչ, կրկին, միայն, հոլով, սրեպ, քան(ակ), երկայն, երկար, լայն* և այլն:

17) Դերանուններ, շաղկապներ, նախդիրներ՝ *ևս, դու, նա, սա, դա, նա, մե(ն)ք, սույն, նույն, այս, այդ, այն, ասկասիկ, այլ, սո (մոտ), արդյոք, բոլոր, եթե, ես, մի, ինչ, յուր, քե, ընդ, ըստ, մյուս, միայն, միմյանց, ով, որ, ոմն, ոք, ոչ, ուր, ուրեմն, ի, ց, քան, իսկ* և այլն:

18) Ժամանակ, տեղ, տարածություն, շարժում ցույց տվող բառեր՝ *ամ, ամառ, ամիս, արտ (դուրս), գարուն, գիշեր, երեկո, երեկ, դեռ, առընթեր, հեռու, հուպ, չմեռ, մերձ, մեջ, մուր, մինչ, հեկո (յետո), ներքո, ի վեր, րեկ, րեդ, օր, օրեանեյ, արահեպ, կածան, ուղի, գալ, չվել* և այլն:

19) Կյանքի սովորական բառեր՝ *աղտ, անուն, աղքատ, արթուն, առնեյ, արեյ, արդար, անուրջ, ասեյ, քան, բառ, քամքասեյ, քարչր, բերեյ, բուր, բրդեյ, գալ, գեղեցիկ, գող, գլորեյ, գիպեմայ, գրնեյ, դառնայ, դիակ, դնեյ, գայրանայ, գարկ, գգալ, քաքնվեյ, քառամ, քանչր, քարմ, լավ, լիզեյ, լցնեյ, լիրք, լուռ, խայթեյ, խայծ, խանդ, ծիծաղ, ծամեյ, ծեծեյ, ծեր, ծնեյ, կարդայ, կենդանի, կողմ, հասնեյ, հաստ, հին, չրի, ճանաչեյ, մեղմ, մեռնեյ, մոռանայ, սերունդ, սիրեյ, սիսայ, սրանայ, սուտ, սուր, սուրք, րնքայ, րեսնեյ, րեկեյ, ուրեկ, ուրանայ, փորչեյ, փոքր, քուն, օգնեյ, օգուտ* և այլն:

Փոխառյալ բառեր: Ժամանակակից հայերենի բառապաշարի բաղկացուցիչ մասն են կազմում փոխառյալ բառերը: Փոխառությունները փաստորեն ուրիշ ժողովուրդների հետ տնտեսական, քաղաքական, մշակութային կապերի բնական արդյունքն են, երբ այդ շփման հետևանքով նորանոր հասկացությունների, իրույթների հետ լեզվի մեջ մուտք են գործում նաև դրանց նշանակող բառերը: Այդ եղանակով երկարատև տնտեսական, քաղաքական, մշակութային, ռազմա-

կան, կրոնական և այլ կապերի շնորհիվ հայոց լեզվում մուտք են գործել և ամրացել օտար բառեր: Դրանք այն բառերն են, որ հայերենը իր պատմական գոյատևման ու զարգացման ընթացքում փոխ է առել ցեղակից և ոչ ցեղակից լեզուներից:

Փոխառությունները սովորաբար ավելի շատ վերաբերում են.

ա) հասարակական-քաղաքական, գիտատեխնիկական տերմիններին,

բ) կենցաղային, տնային գործածության առարկաներին (հագուստեղենի, կոշիկեղենի, զանազան գործիքների, ուտելիքի, ճաշատեսակների և այլնի անվանումներ),

գ) տեղանուններին, աշխարհագրական անուններին (երկրների, բնակավայրերի, գետերի, լեռների և այլ անուններ),

դ) ժողովուրդների և մարդկանց անուններին:

Միաժամանակ հատկանշական է, որ բառապաշարի ոչ բոլոր բաժիններն են հավասարապես կամ նույն չափով լրացվում փոխառությունների շնորհիվ: Որպես կանոն, խիստ հազվադեպ են փոխառվում հիմնական ֆոնդի բառերը:

Բառային փոխառություններն ունեն *արտաքին* և *ներքին*, *արտալեզվային* և *լեզվական* պատճառներ:

Փոխառության *արտալեզվական* գործոնները կապված են ժողովուրդների միջև ծավալվող քաղաքական, տնտեսական, մշակութային, կրոնական և նման կապերի հետ, պայմանավորված են նաև գիտության, տեխնիկայի և արտադրության փոխազդեցությամբ և փոխներգործությամբ: Նշված հարաբերությամբ պայմանավորված փոխառությունները կոչվում են *մշակութային-պատմական*: Փոխառություն կարող է կատարվել նաև հարկադրաբար, երբ մի ժողովուրդ գտնվում է մեկ ուրիշի պետական, քաղաքական-վարչական և տնտեսական երկարատև տիրապետության ներքո: Այդ եղանակով են կատարվել հայերեն բարբառների թուրքական բազմաթիվ փոխառությունները:

Մշակութային-պատմական փոխառություններից բացի (երբ փոխառվում է տվյալ լեզվում բառ-հասկացությունը)՝ գործում է նաև «գուտ լեզվական» փոխառությունը, որը կապ չունի հասկացություն-

ների (առարկաների, երևույթների) փոխառության հետ: Փոխառության այդ եղանակը վերաբերում է հատկապես հին հունական և լատինական բառարմատների (հաճախ՝ տերմինատարրերի) հիման վրա եվրոպական լեզուներում (անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն և այլն) նոր բառերի կազմությանը: **Ավտոմոբիլ** (հունարեն՝ autos «ինքն» + mobilis «շարժական», բառացի՝ **ինքնաշարժ**) բառը բաղադրիչների ծագմամբ հունական փոխառություն է, բայց և հիմք չկա պնդելու, թե ավտոմոբիլ հասկացությունը նույնքան հին է, որքան հին են այդ բառի բաղադրիչ-արմատները:

Փոխառության *ներքին* պատճառները մասամբ բխում են արտաքին պատճառներից: Արտաքին գործոնների շնորհիվ օտար լեզվից փոխառված բառը փոխառու լեզվում հանդես է գալիս որպես դեռևս անձանոթ հասկացության լեզվական համապատասխանություն: Փոխառության ներքին հիմնական պատճառն, իհարկե, տվյալ հասկացության, գաղափարի, իրույթի համապատասխանող բառի բացակայությունն է փոխառու լեզվում: Եթե լեզուն մինչ այդ բացակայող հասկացության համար բառակազմական իր սեփական հնարավորություններով կամ միջոցներով ի վիճակի է անմիջական նոր հաջող բառ կերտելու, այդ դեպքում փոխ է առնվում միայն տվյալ հասկացությունը: Մյուս բոլոր դեպքերում այդ հասկացության հետ լեզուն փոխ է առնում նաև օտարազգի բառը:

Այսպիսով, բառի փոխառություն հիմնականում կատարվում է նոր իրերի կամ առարկաների հետ կամ մշակութային, գիտական, տնտեսական, ռազմական և այլնի շփման միջոցով նոր երևույթների և ձևերի յուրացման ընթացքում: Ինչպես, օրինակ՝ **պրակտոր, պրոլեյրուս, կոմբայն, տանկ, գեներալ, դիվիզիա, դոցենտ, պրոֆեսոր, դեկան, դեկանատ, ռադիո, կիրենդեպիկա, վոլեյբոլ, քենիա, ֆուտբոլ** և այլն:

Բանավոր և գրավոր (կամ **գրքային**) **փոխառություններ**: Փոխառություններ կատարվում են երկու ճանապարհով՝ *բանավոր* և *գրավոր*: Բանավոր փոխառությունները կատարվում են այլալեզու հանրության ստվար զանգվածի կամ առանձին անհատների հետ անմիջական, առօրյա շփման՝ խոսակցական հարաբերության միջոցով:

Այդ իսկ պատճառով փոխատու լեզվից հիմնականում յուրացվում է խոսակցական բառապաշարը, որն ըստ ամենայնի համապատասխանեցվում է սեփական լեզվի հնչյունական, քերականական և իմաստաբանական համակարգին: Հաճախ ժողովրդական ստուգաբանության կամ այլ պատճառներով փոխառյալ բառերը աղավաղման են ենթարկվում: Բանավոր փոխառությունների դեպքում առաջին հերթին լրացվում է բարբառային-խոսակցական բառապաշարը:

Գրավոր կամ գրքային փոխառությունները կատարվում են գեղարվեստական, գիտական, տեխնիկական, հասարակական-քաղաքական, պատմական գրականության, պարբերական մամուլի, պաշտոնական և գործարարական փաստաթղթերի շնորհիվ, և այդ պատճառով այդ փոխառյալ բառերը իրենց արտաքին տեսքով՝ հնչյունական կազմով և իմաստով մոտ են մնում սկզբնաղբյուրին՝ փոխատու լեզվին: Փոխատու լեզվում նրանց յուրացումը նույնպես անմիջապես չի կատարվում, այլ՝ աստիճանաբար, որոշ ժամանակի ընթացքում: Գեղարվեստական, գիտական գրականության միջոցով կամ այլ ուղիներով կատարվող գրավոր կամ գրքային փոխառյալ բառերն ավելի «բարձր» են նշանակությամբ, հուզաարտահայտչական գուճավորմամբ և առնչվում են ավելի շատ լեզուների:

Ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր փոխառությունները ժամանակակից հայերենը կատարել է իր պատմական զարգացման բոլոր փուլերում, այն կատարվում է նաև արդի փուլում: Ժամանակակից հայերենին բանավոր փոխառություններն անցել են բարբառներից, իսկ գրավոր փոխառությունները՝ հիմնականում գրականության միջոցով:

Փոխառությունները կարող են կատարվել զանազան ժամանակներում, ըստ որում կան տարբեր ժամանակներում նույնիսկ նույն լեզվից կատարված փոխառություններ, որոնք փոխատու լեզվում ենթարկվում են հնչյունական տարբեր օրինաչափությունների, ստանում են հնչյունական տարբեր ձևավորում: Այսպես, **ճանկ** բառը հին պարսկերենից է, **չանգ**-ը՝ նոր պարսկերենից (վերջինս գործածվում է Երևանի բարբառում): **Պողովապ** և **պողպապ** բառերը նույնպես պարսկերենից տարբեր ժամանակների փոխառություններ են: Նույն

ձևով արաբերենից՝ *կեղև* և *կլեպ*, *կճեպ* բառերը, հունարեն՝ *սպեու-դին* «գազար» (հունարեն՝ staphylinos) և *սպասպղին*, *սպասպղին* ձևերը: Տարբեր ժամանակներում կատարված փոխառությունները հաճախ հայերենում դառնում են բառահնչյունական կրկնակներ, հոմանիշներ և նույնիսկ տարբեր բառեր: Ինչպես, օրինակ՝ *Արամազդ*, *Որմիզդ* և *Հյուրնուզ* հայերենում գիտակցվում են իբրև տարբեր անուններ, թեև փոխատու լեզվում նույնն են:

Փոխառությունները կարող են կատարվել մի լեզվի բարբառից կամ մի քանի բարբառներից: Առաջին դեպքում փոխառոյալ բառը սովորաբար մեկ ձև է ունենում, երկրորդ դեպքում՝ մի քանի (երկու և ավելի) ձևեր, որոնցից յուրաքանչյուրը տարածվում է փոխառու լեզվի տարբեր բարբառներում (կամ գրական լեզվում և բարբառներում): Օրինակ՝ իրանյան (պարսկական) *մարջեղ* և *մարզեղ*, *մածեղ* (իրանական բարբառային ձևեր), *վիշապ* և *հուշապ* (իրանական բարբառային ձև), կամ՝ թուրքերեն uzerlik (սպանոյի խոտ), Երևանի բարբառում՝ *ուզարլիկ*, Ղարաբաղի բարբառում՝ *զառնիկ* ձևերով⁸⁰:

Փոխառոյալ բառի հնչյունական, ձևաբանական և իմաստային յուրացումը: Փոխառոյալ բառերը, ենթարկվելով փոխառու լեզվի հնչյունական, քերականական և իմաստային՝ իմաստաբանական կանոններին ու օրինաչափություններին, դառնում են այդ լեզվի բառային կազմի միավոր: Ուրիշ լեզուների նման հայերենը նույնպես փոխառությունը նույնությամբ՝ հնչյունական, քերականական և իմաստային տեսակետից բացարձակապես անփոփոխ վիճակում չի ընդունում: Այն ենթարկվում է հնչյունային, ձևաբանական կամ իմաստային որոշակի փոփոխման կամ հարմարեցման:

Փոխառոյալ բառերի յուրացումը անմիջապես չի կատարվում: Բառը յուրացված է համարվում, եթե այդ լեզվում ձեռք է բերում քաղաքացիության իրավունք և մտնում է մշտական գործածության մեջ, իսկ օտար բառը այդ իրավունքը ձեռք է բերում միայն հնչյունական, ձևաբանական և իմաստային լիակատար հարմարեցման դեպքում:

⁸⁰ Տե՛ս *Աճառյան* Հ., նշվ. աշխ., Ա մաս, էջ 234, Բ մաս, էջ 423-424:

Հնչյունական յուրացումը օտարագգի բառի գրային կամ հնչյունական արտահայտումն է փոխառու լեզվի միջոցներով, տվյալ դեպքում հայերենի հնչյունական օրինաչափություններով: Այդ արտահայտվում է, նախ, նրանով, որ փոխառյալ բառի կազմության մեջ մտնող՝ հայերենում բացակայող հնչյունները փոխարինվում են ավելի մոտ հնչյուններով, և, որ կարևոր է, փոխառությունը համապատասխանեցվում է հայերենի հնչյունական համակարգից բխող օրինաչափություններին և նրանցով պայմանավորված հայերեն բառերի հնչյունական (հնչյութային) կաղապարներին: Փոխառյալ բառի հնչյունական յուրացման տեսակետից տարբերվում են հին և նոր փոխառությունները: Ակնհայտ է, որ հատկապես նորագույն փոխառությունները համեմատաբար ավելի քիչ են ենթարկվում հնչյունական փոփոխման, քան հին շրջանինը: Ժամանակակից հայերենում, միաժամանակ, փոխառությունը ենթարկվում է նաև ուղղախոսական-արտասանական օրինաչափություններին, հարմարեցվում արտասանության-շեշտադրության կանոններին:

Փոխառյալ բառերը ենթարկվում են նաև տվյալ լեզվի ձևաբանական (քերականական) յուրացմանը, այսինքն՝ փոփոխման են ենթարկվում նրանց ձևաբանական կառուցվածքը և քերականական ձևերը:

Նորագույն՝ եվրոպական լեզուներից և հիմնականում ռուսերենից կամ ռուսերենի միջոցով կատարվող փոխառությունների ձևաբանական կառուցվածքի յուրացումն⁸¹ արտահայտվում է նրանով, որ՝

ա) Հայերենում բառը փոխ է առնվում ամբողջական կառուցվածքով, առանց հիմքի և ածանցի տարանջատման և սկզբնական շրջանում առանց դրանց տարրորշման, ինչպես, օրինակ **դարվինիզմ, սոցիալիզմ, օլիմպիադա, պատլամենյարիզմ, մարկեդոնոզ** և այլն:

բ) Հատկապես չի գիտակցվում ռուսերենի միջոցով փոխառված գոյականների սեռը, նրանց սեռային վերջավորությունը: Այսպես՝

⁸¹ Տե՛ս *Սուբիասյան Զ.*, Ռուսերենից փոխառյալ բառերի յուրացումը ժամանակակից հայերենում // Հայոց լեզու և գրականություն, գիտական աշխատությունների միջբուհական ժողովածու, պրակ 1-2, Երևան, 1983, էջ 296-314:

մասսա, մատերիա, բլոկադա, պրոպագանդա և այլ բառերում չի գիտակցվում սեռային վերջավորությունը: Այդ կարգի մի շարք բառեր հայերենում գրվում են առանց այդ վերջավորության, ինչպես՝ **բրիգադ, բալլադ, պոեմ, սյուիզ** և այլն:

գ) Օտարազգի ամբողջական բառերը կամ հիմնական ձևայինները ենթարկվում են հայերենի ձևաբանական (քերականական) օրինաչափություններին, հորվվում, խոնարհվում և ընդունում են զանազան հոդեր, մասնակցում բառակազմությանը: Ասենք, ռուսերենի միջոցով փոխառված որոշ բառեր, որոնք փոխատու լեզվում չեն հորվվում և և չունեն հոգնակի թիվ (ինչպես՝ *մեկրոտ, կինո, կուպե* և այլն), հայերենում ենթարկվում են հորվական և թվակազմության ընդհանուր օրինաչափությանը (*մեկրոտյով, կինոյում, կուպեներ* և այլն):

Հայերենում կատարվում է փոխառյալ բառի իմաստային յուրացում: Սովորաբար փոխ են առնվում օտարազգի բազմիմաստ բառի ոչ բոլոր, այլ մեկ կամ մեկ-երկու հիմնական իմաստները, հիմնականում այն հասկացության համապատասխան իմաստը կամ իմաստները, որոնք բացակայում են հայերենում:

Փոխառյալ բառերը, մուտք գործելով լեզվական նոր միջավայր, նոր լեզվի համակարգում դառնում են նրա բառային կազմի միավոր և այլևս պասիվ չեն մնում, ընդհակառակը, անջատվելով մայրենի, հարազատ հողից, նրանք նոր միջավայրում սկսում են իրենց կենսագործունեությունը զարգացման նոր փուլով և հաճախ ձեռք են բերում նոր իմաստներ, իմաստային զանազան նրբերանգներ և երբեմն այնքան են հեռանում սկզբնաղբյուրից, իրենց նախնական իմաստներից, որ անգամ անճանաչելի են դառնում: Այդ դեպքում փոխառության միակ հիշողությունը կարող է լինել միայն նրա հնչյունական պատյանը՝ արտաքին տեսքը: **Գալանտերես** (галантерея բառը ծագում է галантный ածականից, սա էլ ֆրանս. galant «խիստ՝ չափազանց քաղաքավարի» ձևից): Այդ բառը վերաիմաստավորվելով ստացել է «արդուզարդեղեն, արդուզարդի մանրուքներ» իմաստը:

Բառի «ներքին ձևը» փոխառու լեզվում: Լեզվական նոր միջավայրում փոխառյալ բառի ստուգաբանական իմաստը ընդհանրապես չի գիտակցվում: Նոր միջավայրում փոխառյալ բառը գրկվում է նաև իր «ներքին ձևից», այլևս չի գիտակցվում բաղադրիչների շնոր-

հիվ մեկնվող նրա ընդհանուր իմաստը: Դրա հիմնական պատճառը այն է, որ այդ կարգի փոխառությունը նոր լեզվում որպես բաղադրություն չի ընկալվում: Այն դիտվում է իբրև պարզ, արմատական բառ: Ռուսերենի միջոցով փոխառյալ **պոմիդոր** բառը իտալերենում բաղադրություն է, կազմված՝ po-mi-d-oro բաղադրիչներից, և հայերեն բառացի թարգմանվում է «ոսկե խնձոր»: Նույն ձևով՝ գերմաներեն **կուրորտ**. kur-ort «բուժավայր», անգլերեն **սնայպեր** – snipe-բառացի՝ «բեկասի հմուտ որսորդ»: Անգլերենից փոխառյալ **պունչ** (<punch) խմիչքի տեսակի անունը գալիս է հնդկերեն panc «հինգ» բառից (այդ ըմպելիքի մեջ մտնում է հինգ բաղադրատարր): Ֆրանսերեն **կաշնե** (<cache-nez) բառացի՝ «քիթը պահիր, թաքցրու»:

Անհրաժեշտ և անհարկի փոխառություններ: Ժամանակակից հայոց լեզվի բառային կազմի լրացման աղբյուրները նրա ներքին հնարավորություններն ու արտաքին միջոցներն են: Բառապաշարի լրացման և հարստացման հիմնական աղբյուրը, ինչպես բոլոր լեզուներում, այնպես էլ հայերենում լեզվի ներքին հնարավորություններն են՝ բառակազմական գործող կադրայարներով նոր բառերի կերտումը և լեզվում առկա բառերի իմաստային հարստացման շնորհիվ նոր իմաստների ձեռքբերումը:

Փոխառությունը իր կարևորությամբ և անհրաժեշտությամբ հանդերձ մնում է իբրև բառապաշարի լրացման օժանդակ աղբյուր և կոչված է միայն նպաստելու լեզվի բնական զարգացմանը, բառային կազմի հարստացմանն ու ճոխացմանը: Այդ առումով էլ պետք է տարբերել **անհրաժեշտ** և **անհարկի փոխառությունները**:

Անհրաժեշտ են համարվում տնտեսական, քաղաքական, մշակութային, գիտական և այլ կարգի շփումների հետևանքով կատարված բառային այն փոխառությունները, որոնք, որպես նոր հասկացությունների կրողներ, կոչված են բավարարելու լեզվի բառային կազմի համալրման ու հարստացման իրական պահանջը:

Անհարկի են այն փոխառությունները, որոնց համանշանակները կան լեզվում և դրանց պահանջը չի զգացվում: Այդ կարգի բառերը նոր հասկացությունների կրողները չեն, լեզվում առկա բառերի հետ չեն կարող մտնել հոմանշային կապերի մեջ, ընդհանրապես որևէ

չավիով չեն նպաստում բառապաշարի հարստացմանը և լեզվի կենսագործունեությանը: Մրանք կոչվում են նաև *օլտրաբասնություններ* (հունարեն barbarismos, բառացի՝ *բարբարոսաբասնություն*):

Անմիջական (ուղղակի) և միջնորդավորված (անուղղակի) փոխառություններ: *Անմիջական* կամ *ուղղակի* են կոչվում այն փոխառությունները, որ հայերենը իր պատմական զարգացման ընթացքում փոխ է առել անմիջապես, առանց միջնորդավորման այս կամ այն լեզվից, որն էլ համարվում է տվյալ բառի սկզբնաղբյուրը: Օրինակ՝ **ահոռ, ախպ, ամբոխ, անգամ, ապակի, բժիշկ, գանձ, գերեզման, դանակ, դարման, ժամ, ժամանակ, ժանգ** գրաբարից ժառանգված բառերը անմիջական փոխառություններ են պարսկերենից. **բյուջե, կոնֆերանս** բառերը աշխարհաբարյան անմիջական փոխառություն են ֆրանսերենից:

Միջնորդավորված կամ *անուղղակի* են կոչվում այն փոխառությունները, որոնք փոխատու լեզվում նույնպես փոխառություն են մի այլ լեզվից: Այսպես՝ **արիա, ռեժիսոր, սերենադ, տնայպ, սոպրանո, ռեսպորան, ինսպիրտոր, մեդալիոն, փոմպպ, մակարոն, սիգար, կոպյեպ, լեդի, բոյկոպ, միպինգ, լիդեր, շրաբ, փրոպեյուս, էվոյուցիա, սպորպ, բասկեպքոլ** և այլն միջնորդավորված փոխառություններ են: Ժամանակակից հայերենը այդ բառերը փոխ է առել ռուսերենի միջոցով, թեև դրանք ծագումով պատկանում են անգլերենին, ֆրանսերենին, իտալերենին, հոլանդերենին, իսպաներենին, պորտուգալերենին:

Անուղղակի կամ միջնորդավորված փոխառությունները հայերենը կատարել է ինչպես գրաբարյան, այնպես էլ աշխարհաբարյան շրջաններում: Օրինակ՝ գրաբարից ավանդված **գամբյուղ** բառը ասորերենից (zabilla «մի բան տանելու աման») անցել է պարսկերենին (zanbil), որից էլ՝ հայերենին⁸²:

Աշխարհաբարյան փուլում հայերենը փոխառությունները հիմնականում կատարում է ռուսերենի, իսկ վերջին շրջանում նաև անգլերենի և եվրոպական այլ լեզուների միջոցով: Այդ տեսակետից

⁸² Տե՛ս *Անտոյան* Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, ներածություն, Երևան, 1955 թ., էջ 373:

հետաքրքրական է մի շարք փոխառյալ բառերի ճակատագիրը, նրանց փոխանցման ուղին մինչև հայերենին անցնելը: Այսպես՝ **իդեալ**, **իդեալիստ** բառերը հայերենը փոխառել է ռուսերենից, ռուսերենը՝ ֆրանսերենից, ֆրանսերենը՝ հունարենից. **պատլանենդ**-ը ֆրանսերեն սկզբնաղբյուրից փոխառել է անգլերենը, որից գերմաներենը, սրանից ռուսերենը և հետո՝ հայերենը. **կամպանիա** իտալերեն-ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն. **կապիտալիզմ**՝ լատիներեն-անգլերեն-ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն. **ֆեպիշ(իզմ)**՝ պորտուգալերեն-ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն:

Հնագույն ու հին և նոր ու նորագույն փոխառություններ: Ժամանակագրության տեսակետից հայերեն փոխառյալ բառերը ստորաբաժանվում են՝ *հնագույն ու հին և նոր ու նորագույն փոխառությունների*:

ա) *Հնագույն ու հին փոխառություններ* են համարվում այն բառերը, որոնք հայերենը փոխառել է իր պատմական զարգացման վաղ շրջանում: Դրանք հիմնականում կատարվել են գրաբարի, նրա ձևավորման և հետագա զարգացման շրջաններում, ինչպես նաև միջին հայերենի և բարբառների միջոցով:

բ) *Նոր ու նորագույն փոխառություններ* պետք է համարել այն բառերը, որոնք ժամանակակից հայերենը փոխառել է իր կազմավորման և հետագա զարգացման ու գոյատևման ընթացքում:

Ժամանակակից հայերենի բառապաշարի կազմում հնագույն և հին փոխառությունների առանձնացումը և տարբերակումը հարաբերական բնույթ ունի: Իրականում այդ կարգի փոխառությունները իբրև բառային պատրաստի միավորներ ժամանակակից հայերենը ժառանգել է գրաբարից, միջին հայերենից և բարբառներից: Հիշյալ լեզուների կատարած այդ կարգի փոխառություններից ժամանակակից հայերենի համար որոշակի հետաքրքրություն են ներկայացնում միայն այն բառերը, որոնք մուտք են գործել նրա բառային կազմը, կազմում են նրա բաղադրատարբը:

Այդ տեսակետից անհրաժեշտ է որոշել այդ կարգի բառերի արժեքը և կարևոր դերը ժամանակակից հայերենի բառային կազմի իմաստաբանական, բառակազմական, ոճակիրառական համակարգում:

Հնագույն ու հին փոխառությունները ժամանակակից հայերենում

Այդ կարգի փոխառությունները ժամանակակից հայերենին են անցել գրաբարի, միջին հայերենի և բարբառների միջոցով:

Հնագույն փոխառությունները վերաբերում են գրաբարի կազմավորման շրջանին. դրանց մի մասը գալիս է անգամ նախագրաբարյան շրջանից: Այդ փոխառությունները կատարվել են փոքրասիական, կովկասյան լեզուներից, ասուրա-բաբելոնյան, խեթերենից, խուրիերենից, պահլավերենից, հին հունարենից, հին լատիներենից և այլն: Չի բացառվում նաև այն իրողությունը, որ հայ ժողովրդի կազմավորման և հետագա շրջաններում հիշյալ լեզուները կրող որոշ ցեղախմբեր, ձուլվելով հայ ժողովրդի մեջ, այդ ճանապարհով հարստացրել են հայոց լեզուն մի շարք բառերով:

Խեթերենից, խուրիերենից, ուրարտերենից և հին փոքրասիական մեռյալ լեզուներից կատարված փոխառությունները որոշ իմաստով կարելի է ստացվածքային⁸³ համարել, քանի որ այդ լեզուները կրող ժողովուրդները հայ ժողովրդի և նրա գրական լեզվի՝ գրաբարի կազմավորումից հետո արդեն դուրս էին եկել պատմական ասպարեզից՝ իրենց լուծման մտցնելով հայ ժողովրդի էթնիկական կազմի և հայոց լեզվի մեջ:

Օգտագործելով Հ. Աճառյանի, Գ. Ղափանցյանի, Գ. Ջահուկյանի, Էդ. Աղայանի և ուրիշների տվյալները հայերենի հնագույն փոխառությունների վերաբերյալ՝ ստորև, ըստ լեզվի զարգացման շրջանների և առանձին լեզուների, տրվում են փոխառյալ բառեր, որոնք գրաբարի, միջին հայերենի և բարբառների միջոցով անցել են ժամանակակից հայերենին:

Այդ շրջանի փոխառությունների պատկերը ամբողջական դարձնելու նպատակով, նախ, տրվում են այն բոլոր բառերը, որոնք լայն գործածություն ունեն ժամանակակից հայերենում և կազմում են նրա բառային կազմի բաղադրատարրը:

⁸³ Տե՛ս *Մուսկ Գ.*, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 2009, էջ 103:

Հայերենի հնագույն և հին փոխառությունների ցանկը՝ ըստ առանձին լեզուների⁸⁴.

1. Միջերկրական փոխառությունների ընդհանուր թիվն է 4, որից ժամանակակից հայերենում գործածական է 4-ը:

2. Փոքրասիական, քրակո-փոյուզիական – 9, ժամ. հայ.՝ 9:

3. Խեթական – 42 և 41:

4. Ուրարտա-խուռիական – 19 և 18:

5. Ասորական – 27 և 21:

6. Կովկասյան – 60 և 39:

7. Իրանյան (պարսկական) – 1411 և 530:

8. Ասորերեն – 211 և 95:

9. Հին լատիներեն – 10 և 5:

10. Հունարեն – 918 և 130:

11. Եբրայերեն – 138 և 10:

12. Արաբերեն – 702 և 60:

13. Վրացերեն – 57-ից՝ 13:

14. Թուրքերեն – 30:

Մտացվածքային կամ ենթաշերտային բառեր: Հայոց լեզվի բառապաշարում ստացվածքային կամ ենթաշերտային պետք է համարել այն բառերը՝

ա) որոնք դեռևս չեն ստուգաբանված, այսինքն՝ դրանց ծագումը մեզ հայտնի լեզուներով չի բացահայտվում.

բ) որոնք անցել են հայ ժողովրդի կազմի մեջ մտած ժողովուրդների (կամ ցեղերի) լեզուներից, որոնց կրողները հեռացել են պատմության ասպարեզից:

Չստուգաբանված բառերի մեջ կան բառարմատներ, որոնք պատկանում են արդեն մահացած այն լեզուներին, որոնք կրող ժողովուրդները և էթնիկական միավորները մասնակցել են հայ ժողովրդի կազմավորմանը, ձուլվելով հայերի մեջ՝ կորցրել են իրենց լեզուն, իսկ լեզվի որոշ բեկորներ, այդ թվում նաև շատ բառեր ժառանգվել են հայերենի կողմից: Այդ լեզուներից հայերենին անցած իրողությունները

⁸⁴ Հմմտ. *Աճառյան Հ.*, Հայոց լեզվի պատմություն, Բ մաս, Երևան, 1951, էջ 602:

կազմում են հայերենի ենթաշերտային տարրերը: Ստացվածքային կամ ենթաշերտային պետք է համարել ուրարտական, խոտիական, խեթական, անգամ՝ քրակո-փոյուզիական, միջերկրական կամ Էգեյան փոխառությունները, մասամբ նաև այն հին պարսկական (պահլավական) այն բառերը, որոնք չեն հիշատակվում հին պարսկական հուշարձաններում:

1. Հայերենի բառապաշարի ուրարտա-խոտիական շերտը: Հայերենը իր բառապաշարի մեջ է ներառել ուրարտերենի բառապաշարի որոշ մասը: Այդ հանգամանքը միանգամայն բնական է համարում Հ. Աճառյանը և ենթադրում է⁸⁵, որ հայերեն չստուգաբանված արմատների գերակշիռ մասը խալդական (կամ, այսպես կոչված, ուրարտական) ծագում ունի:

Հայերենի ամբողջ՝ մոտ 11 հազար արմատներից դուրս հանելով բնիկ (հնդեվրոպական ծագում ունեցող) և ծանոթ լեզուներից բոլոր փոխառյալ բառերը՝ մնացածը (մոտ 5500), այսինքն՝ կեսը, ենթադրաբար փոքրասիական (ոչ հնդեվրոպական) և ուրարտական (խալդական) լեզուների բառեր պետք է համարվեն: Ըստ որում, այդ բառերի մեծագույն մասը, ըստ Հ. Աճառյանի, պետք է, որ ուրարտերեն լինի: Այդ կապակցությամբ նա, քննության առնելով մի քանի բառախմբեր, որոնք նրա կարծիքով պետք է, որ ուրարտական ծագում ունենան, տալիս է այդ կարգի բառերի ցանկը:

ա) Գույների ցույց տվող բառերից՝ **գորշ, երփն** (որից՝ երփնեբանգ), **թույր, թուխ, լուրթ, խած, խարպյաշ, ծավի, կանաչ, շառագույն, շեկ** ո՛չ հնդեվրոպական են և ո՛չ էլ հայտնի լեզուներից փոխառյալ, ուստի և դրանց մի մասը ուրարտական է ենթադրվում:

բ) Մետաղներ ցույց տվող բառերից՝ **երկաթ, կապար, ոսկի:**

գ) Բուսականներից՝ **ցորեն (ցորեան), վարսակ, եղին, կոպիմն (կոպեմ), մանդակ** և այլն:

դ) Ամանեղեն մշանակող բառերից՝ **անոթ, խեցի, խուփ, կայք, կարաս, կճուճ, պրուկ, սափոր:**

⁸⁵ Աճառյան Հ., նույն տեղում, էջ 180-185:

ե) Արհեստներին և հատկապես ուստայնանկությանը վերաբերող բառերից՝ **անէջ, գորգ, քեկ, իկ, ծոպ, կապերպ, կծիծ, կարեկ, հյուսեկ, մանեկ, ուրայն** և այլն:

զ) Ընտանիք և ընտանեկան ու ազգականական կապ՝ հարաբերություն ցույց տվող բառերից՝ **աղջիկ, կույս, աներ, հոր** (աղջկա ամուսինը, փեսա), **քեռի, զոքանչ, փեսա, զավակ, քոռ(ն), լաճ, խնամի,** որոնց մեծ մասը իգական գծին են պատկանում:

է) Գրական-կրթական բառերից՝ **թուղթ, քանաք, էջ, գիծ, գծեկ** և այլն:

Ս) **Ուրարտական բառերը հայերենում:** Հ. Աճառյանը⁸⁶ այսպես կոչված բուն ուրարտերենից հայերենին անցած 15 բառ է բերում՝ **ընկույզ, ծեփեկ, ծիրան, ծյուրեկ, կաղամախ, կարաս, կարասիք, կրթեկ, կռեկ (կուռ, կռան), կրավ, փառ** (զգեստ, շապիկ), այդ թվում՝ **հաճար, ճակ** (էգ), **նժար, փող** բառերը տալիս է հարցականով:

Գ. Ղափանցյանը⁸⁷ և Գ. Ջահուկյանը⁸⁸ վերոհիշյալներից ավելացնում են **բուրգ, ծես, ծով, հապեկ (հապանեկ), հոսեկ, հույր** (պարարտ), **շերպ, ուղի** բառերը:

Բ) **Խուռիական բառերը հայերենում:** Պատմահամեմատական, ծագումնաբանական ուսումնասիրությունների վերջին տվյալներով խուռիերենը ուրարտերենին մերձավոր ցեղակից լեզու է համարվում: Ապացուցված է համարվում նաև, որ հայ ժողովրդի կազմավորման մեջ մեծ դեր են խաղացել խուռիտական ցեղերը՝ կազմելով հայ ժողովրդի բաղադրամասը: Խուռիական շատ բառեր և ընդհանրապես նրա լեզվի տարրերը մտել են հայերենի մեջ որպես նրա ենթաշերտ:

Գ. Ղափանցյանի տվյալներով հայերենին խուռիերենից են անցել **խնչոր, խոռ** (ծակ, փոս), **ծառս, շանք** բառերը⁸⁹:

Անիրաժեշտ է ընդգծել, որ ուրարտա-խուռիական ծագում ունեցող բառերի գերակշիռ մասը լայն կիրառություն ունի նաև ժամանա-

⁸⁶ Տե՛ս *Աճառյան Հ.*, Հայոց լեզվի պատմություն, Ա մաս, էջ 186:

⁸⁷ Տե՛ս *Ղափանցյան Գ.*, Հայոց լեզվի պատմություն (հին շրջան), Երևան, 1961, էջ 130-139:

⁸⁸ Տե՛ս *Джаукян Г. Б.*, Урартский и индоевропейские языки, Ереван, 1963.

⁸⁹ Տե՛ս *Ղափանցյան Գ.*, նշվ. աշխատ., էջ 104-130:

կակից հայերենում՝ կազմելով նրա բառային հիմնական ֆոնդի անկապտելի մասը:

2. Խեթական բառերը հայերենում: Գլխառոտյանը հայտնի են խեթական երեք լեզուներ՝ պրոտոխեթերեն կամ նախախեթերեն, հիերոգլիֆային կամ մեհենագիր խեթերեն և հնդեվրոպական խեթերեն: Հիերոգլիֆային կամ մեհենագիր խեթերենը նույնպես հնդեվրոպական, ցեղակից լեզու է համարվում: Վերջին շրջանում առաջ է քաշվում նաև նախախեթերենի կամ պրոտոխեթերենի հնդեվրոպական լեզու լինելու վարկածը:

Այս լեզուներով խոսող ժողովուրդը Ք. ա. 3–2-րդ հազարամյակներում գոյություն է ունեցել Փոքր Ասիայի այն տարածքում, որ համընկնում է պատմական Հայաստանի հարավ-արևմտյան սահմանների հետ: Խեթական պետության փլատակների վրա կազմավորված հայ ժողովուրդը կլանել է նաև խեթական էթնիկական հոծ զանգվածներ, իսկ հայերենը իր մեջ առել է, անշուշտ, ցեղակից այդ լեզվի շատ տարրեր, այդ թվում նաև բառեր, որոնց զգալի մասը ուրարտերենի և խուրիերենի օրինակով պետք է նույնպես ենթաշերտային կամ ստացվածքային համարել:

Հ. Աճառյանը բերում է հայերենին անցած խեթական 10 բառ⁹⁰՝ **ապա, հապա, հապանե, խանգարե, ոյորե, վառե, փշրե, առավոպ, փեպուր, շարավանդ** (կապ):

Գ. Ղափանցյանը⁹¹ տարբերակում է հայ-խեթական բառային ընդհանրությունները խեթական փոխառություններից: Հայ-խեթական ընդհանուր բառեր են համարվում՝ **անթե, ապառ, արվեսպ, ապա, գորգ, թողնե, իրար, խառն, խելք, խիղճ, խնայե, խորթ, խառ, հյուռ, խումք, խմբե, ծուխ, կարիք, կարիճ, հապե, հեզնե, հիմա, հրպիպ** (ծաղրածու), **ճիվառ, սխե, սպրդեկ տազնապ, տոռ, փեպուր:**

Խեթերենից կատարված փոխառության շարքն են դասվում՝ **աղանդեր, բարգավաճ, մանավանդ, քրթմնջեկ** բառերը:

⁹⁰ Աճառյան Հ., նույն տեղում, էջ 149:

⁹¹ Տե՛ս Ղափանցյան Գ., նույն տեղում, էջ 148-204:

3. Միջերկրական կամ Էգեյան քաղաքակրթության բառերը հայերենում: Դրանք այն բառերն են, որոնք հայերենին են անցել պատմության ասպարեզից դուրս եկած կրետացիներից և Փոքր Ասիայի արևմտյան մասի ժողովուրդներ՝ լիդիացիներից, լիկիացիներից, կարիացիներից և այլն, որոնց լեզուները այժմ մեռած են: Հայերենում Միջերկրական կամ Էգեյան համարվում են՝ *գինի, բուգ, յուդ, սպունգ* բառերը, որ այժմ էլ գործածական են⁹²:

4. Թրակո-փոյուզիական բառերը հայերենում: Հայերենը որպես հնդեվրոպական լեզու՝ ցեղակցական մերձավոր կապերի մեջ է գտնվում բալկանյան հնագույն լեզուների՝ թրակերենի և փոյուզերենի հետ: Հայկական և թրակո-փոյուզիական բառային կապերը վերաբերում են նախագրաբարյան շրջանին: Հայերենում թրակո-փոյուզիական բառեր են համարվում՝ *սգարակ, աղյուս, սապված, արագի, կարիճ, սայ, սեխ, սրինգ, փանդիռ(ն)* բառերը⁹³:

5. Ասորական փոխառություններ: Մեմական լեզվարձատանիքին պատկանող ասորերենը Ասորեստանի հզոր պետության (Ք. ա. 15-րդ դար) լեզուն էր, որից հայերենին են անցել և ժամանակակից հայերենում գործածական են՝ *անագ, բերդ, գագաք, թոնիր, խուց, կիր, կղզի, կմախք, կնիք, կոզոն* (ուղտի ձագ), *հայալ* (զգեստ), *մաքառել, մզել, նահանգ, փարածել, ցեց, ուրագ, փոխել, քաղաք* բառերը⁹⁴:

6. Կովկասյան փոխառություններ: Կովկասյան լեզուներից կատարված փոխառությունների մեջ մտնում են հին շրջանում ինչպես Հյուսիսային և Հարավային Կովկասի լեզուներից, այնպես էլ քարթվելական լեզուներից հայերենին անցած բառերը: Դրանցից ժամանակակից հայերենում գործածական պետք է համարել հետևյալները՝ *աղբ, բակ, գավառ, գդակ, գութան, լակոյր, խամրել, խծուծ* (կանեփ), *խոճկոր, խմել, խոփ, խռովել, ծանր, ծիծ, ծուծ, ծիր, ծուխ, ճանճ, ճիպոյր, ճկույթ, մակ* (վրա), *մշակ, ոչխար, չանջ, վադ, փա-*

⁹² Աճառյան Հ., նույն տեղում, էջ 100-104:

⁹³ Աճառյան Հ., նույն տեղում, էջ 127-149:

⁹⁴ Աճառյան Հ., նույն տեղում, էջ 194-201:

րախ, փշուր, փռչի, փռիսր (Հարավային Կովկասի լեզուներից), **արջասպ, խոպ, ճաղապ, մոծակ** (Հյուսիսային Կովկասի լեզուներից)⁹⁵:

7. Իրանական փոխառնյալ բառեր: Իրանական փոխառությունները հայերենում կազմում են մոտ 1400 արմատ, որից հին պարսկերենին և պահլավերենին են վերաբերում 966-ը, նոր պարսկերենին՝ 445-ը⁹⁶: Իրանական փոխառությունների որոշ մասը միայն գրաբարյան գրավոր հուշարձաններում է հիշատակվում և որպես գրքային փոխառություններ՝ գրաբարյան շրջանում անգամ, ըստ երևույթին, լայն գործածություն չի ունեցել: Իրանական լեզուներից կատարված շուրջ 1400 փոխառություններից, գրաբարի և միջին հայերենի միջոցով ժամանակակից հայերենին են անցել մոտ 530 բառ: Դրանք բնույթով խիստ բազմազան են, վերաբերում են մարդկային կյանքի և գործունեության համարյա բոլոր բնագավառներին:

Ժամանակակից հայերենում գործածվում են իրանյան ընդհանուր փոխառությունների մոտ 37 %-ը: Այդ բառերի արժեքը չափազանց մեծ է, նախ՝ բնույթով, ապա՝ գործածականությամբ և վերջապես՝ բառակազմական ունակություններով:

Ստորև բերում ենք իրանական փոխառություններից օրինակներ, որոնք մուտք են գործել ժամանակակից հայերենի բառային կազմ:

Ժամանակակից հայերենում գործածական իրանական փոխառնյալ բառերը, ըստ բնության, կյանքի, մարդկային գործունեության այլևայլ բնագավառների պատկանելության, հետևյալ պատկերն են ներկայացնում:

ա) Բնության, բնական երևույթներին, կենդանական և բուսական աշխարհին, հանքային նյութերին և այլն վերաբերող բառեր:

1. Բնության երևույթներ. **արուսյակ, մահիկ, երաշյու, խավար, վրակ, պախրցի** (քամի):

2. Կենդանական աշխարհ. **բազե, կաշաղակ, կապիկ, կնգում, կուզ, ճուռակ, մարախ** (մորեխ), **մողես, մուշկ, հովազ, շահեն, սա-**

⁹⁵ Աճառյան Հ., նույն տեղում, էջ 202-218:

⁹⁶ Հմմտ. Աճառյան Հ., նույն տեղում, էջ 218-323:

մույր, սարյակ, սիրամարգ, վագր, վարսագ, վիշապ, փայրակ, փզրուկ, փիղ:

3. Բուսական աշխարհ. **անանուխ, արմավ, բրինձ, գազար, դժնիկ, բուբ, կաղամբ, կանեփ, հասմիկ, մանուշակ, նոճի, շահ-սասպրամ, շաղգամ, չաման, պիսպակ, պղպեղ, սոխ, վարդ, վարունգ:**

4. Հանքային նյութեր, մետաղներ. **անուշադր, սպակի, արճիճ, արույր, բորակ, գոհար, գառիկ, գմբուխաք, ժանգ, լեղակ, խունկ, կնդրուկ, նավթ, պղինձ, պողպատ, սնգույր, վեմ:**

բ) Մարդուն, նրա գործունեությանը, զբաղմունքին, ապրուստին, գիտությանը, կրոնին վերաբերող բառեր:

1. Մարմնի մասերի անուններ. **անդամ, բազուկ, գես, վարս, դասպակ, դեմք, երակ, երանք, կուլակ** (եկեղեցականի մագերի մեջ բացված պակ), **կուշար** (կող, լանջ), **ճակիպ:**

2. Հիվանդությունների անուններ, բժշկագիտական բառեր. **սիպ, բիժ** (ճպուռ), **բժիշկ, բույժ, բորոպ, դաշտան, դարման, ժահր, կույր, մահ:**

3. Ընտանիք և մարդկային հարաբերություններ արտահայտող բառեր. **ագգ, ամբոխ, ասպնջական, գրոհ, դայակ, երիտասարդ, հարագատ, հարեան, նժդեհ, պայագատ, պաս, պառավ, ռամիկ, փաճիկ, փոհ, օրար:**

4. Գիտության, արվեստի, կրթության բառեր. **աշակերտ, գուսան, դաստիարակ, դպիր, զանգակ, քմբուկ, խրատ, ճարտակ, հանճար, մատյան, նկար, նվագ, պատկեր, հրահանգ, վարդապետ, վարժեյ, փալիդ, քանդակեյ:**

5. Կրոն, հավատք նշանակող բառեր. **սպաշխարեյ, բախտ, բագին, գուշակ, դրախտ, դե, դժոխք, գոհ, կախարդ, հմայիկ, հրաշք, հրեշտակ, մարգարե, մեհյան, նգովք, նվեր, պաշտեյ, պարիկ, օրհնեյ, վանք, փաճար:**

6. Գյուղատնտեսությանը, երկրագործությանը, խաշնարածու-թյանը վերաբերող բառեր. **ման, պատվաստ, պարտեգ, վարեյ, ճարակեյ, մարգ, փեթակ, երասան, խարագան, զավագան, սասպակ-դակ, բադ, մատակ, գոմեշ, նոխագ, դմակ, սմբակ, ճանկ, բաշ:**

7. Արիեստիմ, շինարարությամբ, վաճառականությամբ վերաբերող բառեր. **դերձակ, ճախարակ, նավագ, պահապան, փաշեյ, դահլիճ, դասարակերպ, դարպաս, զնդան, պարզգամք, պարփար, պարիսպ, սրահ, ախոռ, ամբարտակ, սպարանք, ավագան, բանր, բարավոր, գմբեք, փերեզակ, արժեյ, զանձ, գրալ, երաշխ(իք), բանի, համարեյ, պարտք, վաճառեյ, վարձ, վճարեյ, վնաս, փույծ:**

8. Հագուստեղեն, զարդեղեն նշանակող բառեր. **սպարանջան, սսփառ, բազպան, բամբակ, գրպան, դիպակ, զանկապան, քագ, խույր, կամար (գոտի), կերպաս, կոշիկ, հանդերձ, մույկ, մունճակ, մուշկակ, շապիկ, պասպառ, պարմունճան, պարեզոպ, պսակ, սանդալ, վարտիք, վերմակ:**

9. Ուտելիք, ըմպելիք ցույց տվող բառեր. **սպուխար, խորտիկ, կարագ, հրուշակ, ճաշ, ճարպ, նշխար, շաքար, պանիր, պաշար, օշարակ:**

10. Առտնիմ տնտեսական զանազան բառեր. **բաժակ, բարձ, բղուն, գահ, դարան, դույն, զամբյուղ, կուժ, հավանգ, ճրագ, մոմ, շիշ պայուսակ, պարբույց, սկավառակ, սպաս(ք), սրվակ, վանդակ, փախարակ, փակառ, փաշպ, փապակ, քսակ, քուրձ, կարավան, ճանապարհ, մակույկ:**

11. Ժամանակ, թիվ, չափ, կշիռ, դրամ ցույց տվող բառեր. **ժամ, նախ, նահանջ, նավասարդ, բյուր, դահեկան, գրամ, հազար, փող:**

12. Երկիր, տեղ, վայր նշանակող, ինչպես նաև վարչական, իրավաբանական, ռազմական բառեր. **աշխարհ, անապատ, դաշպ, հրապարակ, ավան, մարգ, շեն, ոսրան, սահման, սսպեպ, բարապան, դահիճ, դարավոր, դեպան, իշխան, համհարգ, հպարակ, մարգպան, նախարար, ոսրիկան, պարվիրակ, պարեկ, պեպ, սեպուի, սպարապեպ, սպահարգան, դաշն, դար, դարասպան, իշխել, հրավարակ, մուրիակ, նամակ, պարճեն, ռոճիկ, վկա, վճիռ, սպսրամք, սսպարակ, սրշալ, ավար, գումարպակ, գունդ, դարան, դրոշ, քշնամի, հրամանարար, հաշպ, հեն, ճամբար, մարգեյ, նախճիր, նահանջ, պայքար, պարերագմ, նիզակ, սաղավարպ, վահան, փապար, փեգ:**

գ) Գույներ նշանակող բառեր. **գույն, երանգ, կապույտ, կարմիր, ճերմակ, սև, սպիտակ:**

դ) Սովորական կյանքին վերաբերող, ինչպես նաև վերացական հասկացություններ արտահայտող բառեր. **անգամ, կամք, ուժ, ուշ, ազդ, ամբարիշտ, ամբարտապան, աշխար(ել), սպասարան, առար, առույգ, արագ, հարգ (արգ), արժան, արչակ, ավարտ, ավեր, բաժանել, բովանդակ, բույր, գովել, դժխեմ, երամ, երկ, գոր(ություն), գուր, գգույշ, քնամ(անք), քվառ, թռչակ, կերպ, կույր, հակիրճ, հաճել, համ, հանդես, հանդիման, հավասար, հիշել, հրաման, հրավեր, հուզել, հույժ, ճահր, ճեմել, միշտ, նման, նշան, շար, շնորհ, շրտապ, պարիսի, պարտասար, պարարտ, պարգ, պես, սով, սպանել, սրսկել, սուգ, վանել, վանկ, վար, վիճակ, վիշտ, վարաս, վարտել, վրեպ, րակ, րոթ, ուխտ, ուժ, ուշ, փառք, փրկել, քանդել:**

8. Լատինական փոխառություններ: Լատիներենի ազդեցությունը հայերենի վրա Հ. Աճառյանը⁹⁷ երկու շրջանների է բաժանում՝ հին և նոր:

Հայերենի բառապաշարի վրա հռոմեական ազդեցության հին շրջանը ընկնում է Ք. ա. 2-րդ դարից մինչև Ք. հ. 2–3-րդ դարերը: Այդ շրջանում գրաբարը փոխ է առել 10 բառ, որից **արկղ, սկուրեղ, կառք, մարգարիտ** գործածական են ժամանակակից հայերենում:

Հին շրջանին են վերաբերում նաև գրաբարում հունարենի միջոցով կատարված լատինական միջնորդավորված փոխառությունները⁹⁸, որոնցից ժամանակակից հայերենում գործածական են կյանքի և կենցաղի առտնին հարաբերություններին, կրոնական-եկեղեցական, պետական-պաշտոնական, ռազմական և վարչական մարզերի մոտ երեք տասնյակ բառեր, օրինակ՝ **հունվար, փետրվար** և մնացած բոլոր ամսանունները, կամ՝ **թուղթ, լեզոն, կաղանդ, կանթեղ, կարդինալ, կիպրոն, կնգուղ, կրկես, մագիստրոս, մանկլավիկ, նոտար, պալլատ, վեղար, րիպրոս, փոս, փուռ** և այլն:

Հիշյալ բառերի փոխառության միջնորդ լեզուն հունարենն է համարվում, որովհետև հայերենը լատինական բառերը փոխ է առել հունարենի տառադարձությամբ: Օրինակ՝ **կիպրոն** - հունարեն kitron,

⁹⁷ Նույն տեղում, Ա մաս, էջ 329:

⁹⁸ Նույն տեղում, Բ մաս, էջ 41-44:

լատ. citrus, **մագիստրոս** - հուն. magistros, լատ. magister, **փիպղոս** - հուն. titlos, լատ. titulos և այլն:

Անհրաժեշտ է նշել նաև, որ հունարենի միջոցով հին շրջանում գրաբարի փոխառյալ լատինական որոշ բառեր հետագայում ժամանակակից հայերենը կրկին փոխառել է եվրոպական լեզուներից և առաջին հերթին՝ ռուսերենի միջոցով. ինչպես, օրինակ՝ **դիկտատոր, կուրատոր, ռեկտոր, սենատոր** և այլն:

Նոր շրջանում հայերենի լատինական բոլոր փոխառությունները միջնորդավորված են:

9. Ասորական փոխառություններ: Ասորական ազդեցությունը հայերենի վրա սկսվում է Ք. ա. 2-րդ դարից և շարունակվում է մինչև Ք. հ. 5–6-րդ և հետագա դարերը⁹⁹: Իրենց որակով և բնույթով ասորերենից կատարված փոխառությունները տարբեր են: Դրանք վերաբերում են ինչպես կենցաղին, առտնին հարաբերություններին, այնպես էլ՝ կրոնական-եկեղեցական, գիտական, մշակութային, կենդանական և բուսական աշխարհի, մարդկային գործունեության այլևայլ բնագավառներին:

Գրաբարի և միջին հայերենի կատարած 205 ասորական փոխառությունից ժամանակակից հայերենում ավելի գործածական պետք է համարել մոտ 45 %-ը՝ 95 բառ: Այդ բառերից են՝ **արևդաս, արևնեք, արսոր, բուրգ, գուլպա, դար, գույգ, գուրի, քարզման, լավաշ, լումա, խանչարուր, խանութ, խարտ(ել), խավիժ, խլուրդ, խմոր, ծնծդա, ծոմ, ծրար, կարսա, կարու, կացին, կաքավ, կեղև, կքդա, կողով, կոմս, կուղք, կուպր, չեթ, չյութ, դեկ, մագաղաթ, մախաթ, մանգաղ, մաշկ, մարս(ել), մաքս, մարակ, շաբաթ, շեղք, շեփոր, շղթա, շպար, շուկա, շուշան, պողոպա, ջայլամ, սաբանա, սափրեկ, սյուք, սպեղանի, տառապեկ, տերև, տղա, ցամաք, ուրբաթ, փարսպեկ, քահանա, քարոզ, քնար, քուրա, քուրմ:**

Կան նաև անուղղակի՝ միջնորդավորված փոխառություններ, որոնց սկզբնաղբյուրը ասորերենը չէ. ինչպես՝ **փիլիսոփա, պողոպա, կեղև, հեթանոս** և այլն:

⁹⁹ Տե՛ս Աճառյան Հ., նույն տեղում, Ա մաս, էջ 336-342, 354:

Ասորական փոխառությունների մեծ մասը կատարվել է մ. թ. 2–5-րդ դարերում: Մի չնչին մասն է, որ կատարվել է 5-րդ դարից հետո: Ուշ շրջանում կատարված փոխառությունների առանձնահատկությունն այն է, որ դրանք հին շրջանի հնչյունական օրենքներին չեն ենթարկվում: Ավելի ուշ շրջանի փոխառություններ են համարվում ժամանակակից հայերենում լայն գործածություն ունեցող՝ **մանհշակ, մահաթ, շուկա, գուլպա** բառերը:

10. Հունական փոխառություններ: Գրաբարը հունարենից փոխառություններ է կատարել մ. թ. 3–4-րդ դարերից սկսած մինչև 10–11-րդ դարերը: Հունական ազդեցությունը հայերենի վրա հիմնականում կատարվել է գրական-գրքային ճանապարհով, գիտության, գրականության և եկեղեցու միջոցով: Հունարենից գրաբարի փոխառած 918 բառերը գլխավորապես գիտական-գրական, մշակութային, տնտեսական, եկեղեցական-կրոնական բնույթի և բուսական ու կենդանական աշխարհին վերաբերող բառեր են, որոնցից ժամանակակից հայերենում գործածական պետք է համարել 130 բառ, այսինքն՝ մոտ 14 %-ը:

Ըստ գործածության տարբեր ոլորտների դրանք ստորաբաժանվում են.

ա) Մշակութային կյանքին (արվեստ, ճարտարապետություն, գրականություն), արտադրությանը, բնությանը, կենցաղին վերաբերող բառեր. **ակադեմիա, ամբիոն, ամֆիթատրոն, ամֆիս, բաղնիք, բարբարոս, բեմ, գաղափար, եթեր, երգեհոն, զեփյուռ, քապրոն, լաբիրինթոս, լապտեր, լիպր, կադասյար, կամար, կանոն, կարկին, կենպրոն, կիթառ, կլիմա, հյուպատոս, հռեպոր, մաթեմատիկոս, մեղեդի, մեքենա, մղոն, պանդոկ, պաքսիմաս, պոռնիկ, պոեզ, պրակ, ռեպին, սավան, սրամոքս, սրեպոլին, վրչին, փաղանդ, փերր(ակ), փոմար, փոմս, բուպե, բարպ, բարպեզ, բարպուղար, օազիս, օվկիանոս:**

բ) Կրոնական-եկեղեցական բնույթի բառեր. **աքքա, գայիսոն, եկեղեցի, եպիսկոպոս, բեմ, կաթոլիկ, կաթողիկոս, կերոն, կիրակի, կղեր, կոնդակ, հերեպիկոս, մարուռ, մարպիրոս, մեռոն, մեպրոպոլիս, պասպ** (հայրապետ), **պապրիարք, սաղմոս, սքեմ, փարպարոս, փիլոն, քղամիդ, քրիստոնյա** և այլն:

զ) Բուսանուններ. *անխոն, դափնի, երենոս, լիմոն, կեռաս, կիպրոն, մոլոշ, նարդոս, նարգիզ:*

դ) Կենդանիների անուններ. *դելփին, կեպ, կոկորդիլոս, հիդրա, փառեիս, փասիան, փյունիկ, փոկ:*

ե) Հանքերի անուններ. *ադամանդ, սկսպ, բյուրեղ, մեպադ, հակինթ, հասպիս, փպագիոն:*

Ելնելով հայերենի հնչյունական օրինաչափություններից՝ *արգասիք, պոռնիկ, լապտեր* հունարեն բառերի փոխառությունը միջնորդավորված է համարվում պահլավերենից¹⁰⁰:

11. Եբրայական փոխառություններ: Եբրայական ծագում ունեցող բառերը գրաբարին են անցել գրականության և առաջին հերթին՝ Հին կտակարանի միջոցով: Հնչյունական համապատասխանությունները ցույց են տալիս, որ գրաբարը եբրայական փոխառությունները կատարել է ոչ անմիջապես, այլ միջնորդավորված, հունարենի միջոցով:

Գրաբարում արձանագրված 138 եբրայական բառերից¹⁰¹ ժամանակակից հայերենում այս կամ այն չափով գործածություն ունեն հետևյալ բառերը. *ալեյուիս, ամեն, բեհեղզեբուդ, գեհեն, եղեմ, մեսիս, հոբեյյան, հոբեյյար, օվսաննա:*

12. Արաբական փոխառություններ: Արաբերենի ազդեցությունը հայերենի վրա երկու փուլով է կատարվել, նախ՝ Հայաստանում արաբների տիրապետության շրջանում, 7–9-րդ դարերում և այնուհետև 12–16-րդ դարերում՝ Կիլիկիայի հայկական թագավորության շրջանում: Արաբերենից անմիջական փոխառություններ են կատարել գրաբարը, միջին հայերենը և հայ բարբառները¹⁰²: Գրաբարում արձանագրված, միջին հայերենից ավանդված և բարբառներից անցած արաբերեն ավելի քան 700 բառերից ժամանակակից հայերենն օգտագործում է մի չնչին քանակը միայն, ընդամենը մոտ 60 բառ: Դրանք գլխավորապես մարդու գործունեությանը, կյանքի զանազան

¹⁰⁰ Տե՛ս *Աճառյան* Հ., նշվ. աշխատ., Բ մաս, էջ 52:

¹⁰¹ Տե՛ս *Աճառյան* Հ., նշվ. աշխատ., Բ մաս, էջ 54-62:

¹⁰² Տե՛ս *Աճառյան* Հ., նշվ. աշխատ., Բ մաս, էջ 169-217: Ակնարկներ միջին հայերենի պատմության, Երևան, 1972:

բնագավառներին, գիտությանը և արվեստին, առտնին հարաբերություններին, բժշկությանը, ռազմական գործին, պետական-վարչական կյանքին, երկրագործությանը, արհեստին և տարբեր զբաղմունքներին վերաբերող բառեր, զանազան մետաղների, բույսերի կենդանիների անուններ են:

Ստորև բերվում է ժամանակակից հայերենում գործածվող արաբական բառերից մի քանիսը՝ *ագապ, այքիմիա, աճպարար, ամիրա, ափիոն, բադրիջան, բալասան, բակլա, քաս, խանդակ, խաիր, խունար, կապա, կապար, կավար, կլայեկ, կոլոպ, կողպ(եյ), հաշիշ, հինա, մելիք, մզկիթ, մկրապ, մղլակ, մումիա, մունեպիկ, մադաշ, մարինջ, նոպա, նունուֆար, շաման, սնդուկ, սուլթան, փնագ*:

13. Վրացերենից փոխառյալ բառեր: Երկու հարևան ժողովուրդների՝ հայերի և վրացիների՝ հնագույն շրջանի տնտեսական, քաղաքական, մշակութային կապերի հետևանքով առաջացած լեզվական աղերսին 12–13-րդ դարերում և հետագա ժամանակաշրջանում հետևում է լեզվական և բառապաշարային փոխազդեցությունների նոր փուլը: Այդ շրջանից գրավոր և բանավոր ճանապարհով հայերենին անցած 57 բառից ժամանակակից հայերենում գործածվում է 13-ը. *սկուռ, թոկ, խսգ, խրիպ* (գիրկ), *ծես, ծիպ, կինճ* (մանր քար), *ճոն* (մուշտակակար), *մաշիկ, փոցխ, բղավեկ, բոխր* (թոխրել), *պոռշ*:

14. Թուրքական փոխառություններ: Թուրքական դարավոր լծի, թուրք իշխանավորների, ապա պետության բռնատիրական և ձուլողական քաղաքականության արդյունք պետք է համարել լեզվական (և հատկապես բառապաշարային) ազդեցությունը, որ սկսվում է 13–14-րդ դարերից: Թուրքերենը ազդել է միջին հայերենի և գերազանցապես հայ բարբառների վրա: Միայն հայ բարբառներում թուրքերենից փոխառյալ (միջնորդավորված և անմիջական) բառերի քանակը մի քանի հազարի է հասնում¹⁰³:

Այդ տեսակետից այլ պատկեր են ներկայացնում հայոց գրական լեզվի արևելահայ և արևմտահայ տարբերակները: Գրական լեզուն սկզբունքորեն մերժում է թուրքական փոխառությունները: Ժա-

¹⁰³ Տե՛ս *Աճառեան* Հ., Թուրքերեն փոխառեալ բառերը հայերենի մէջ, Էմինեան ազգագրական ժողովածու, հատոր Գ., Մոսկուա-Վարդաշապատ, 1902:

մանակակից հայոց լեզվում գործածվում են միայն մոտ երեք տասնյակ թուրքական փոխառություններ, որոնք անցել են հայ բարբառներից: Ըստ որում, այդ բառերի որոշ մասը միջնորդավորված փոխառություններ են և արաբական ու պարսկական (ուշ շրջանի) ծագում ունեն. **արաբեկ, ալոճ, բարսան, վառող, բեղ, բեկ, բիճ, բուխարի(կ), դրճանճ, էլակ, երշիկ, զմրուխար, քաղար, քոզ, խաթուն, խամանճիկ, խորուզ, յուա (յուա գևալ), չոբեկ, ջիգր** (վրեժ, ոխ), **փոպրակ, քուրեշ:** Այս բառերի մեծ մասը գրական լեզվի ժողովրդախոսակցական բառապաշարին է պատկանում:

Հատկանշական է, որ թուրքերենից փոխառյալ հիշյալ բառերի մի մասի համար ժամանակակից հայերենում առկա են հոմանիշները:

Նոր և նորագույն փոխառությունները ժամանակակից հայերենում

Նոր փոխառություններն այն բառերն են, որ ժամանակակից հայերենը կատարել է իր կազմավորման շրջանից մինչև քսաներորդ դարի սկիզբն ընկած ժամանակահատվածում: Նորագույն փոխառությունները ամբողջապես վերաբերում են հայերենի զարգացման վերջին հարյուրամյակին:

Նոր փոխառություններ: Ժամանակակից հայերենի այդ փոխառությունները վերաբերում են աշխարհաբարին, որն իր զարգացման նախնական փուլում անմիջապես կատարել է հիմնականում եվրոպական լեզուներից, նախ՝ իտալերենից, նոր հունարենից, ֆրանսերենից, հետագայում նաև անգլերենից, գերմաներենից և այլ լեզուներից: Այդ կարգի փոխառություններ ժամանակակից հայերենին են փոխանցվել նաև միջին հայերենից:

Նոր եվրոպական լեզուների ազդեցությունը: Եվրոպական լեզուներից փոխառությունները կատարվել են գրական ճանապարհով և վերաբերում են մշակութային, հասարակական-քաղաքական, վարչատնտեսական կյանքին, գիտատեխնիկական տերմինաբանությա-

նը, եվրոպական ժողովուրդների պատմությանը, կենցաղին վերաբերող զանազան հասկացություններին:

Եվրոպական լեզուներից կատարված անմիջական փոխառությունները շատ դեպքերում տարբերվում են արդեն նոր փուլում ռուսերենի միջոցով հայերենի փոխառած նույն բառի հնչյունական ձևից, ինչպես, օրինակ՝ **կոնֆերանս** անմիջական փոխառություն է ֆրանսերենից (conférence ձևից), իսկ **կոնֆերենցիա**՝ ռուսերենի միջոցով (конференция) կատարված փոխառություն (այս ձևն այսօր հնաբանություն է):

Նոր փոխառություններից կարելի է հիշատակել՝ **բեյ**՝ ֆրանս. thé (չինարենից), **հայդուկ** < բուլղարերեն hajduk, **հերոս** < հունարեն héros (ֆրանս. heros), **հորիզոն** < ֆրանս. horizon (հուն. horizon), **մուսա** < հուն. mousa < լատ. musa, **մատրիտ** < իտալ. matita, **փարոս** < հուն. pháros և այլն:

Միջին հայերենի գրավոր հուշարձաններում արձանագրված է 87 եվրոպական բառ: Այդ բառերից ժամանակակից հայերենում որոշ վերապահությամբ գործածական կարելի է համարել՝ **արտիճուկ** (կանկառ բույսը) < իտալերեն articiocco, **գունդաբարլ** (գորքերի հրամանատար, սպարապետ) < իտալ. contestabile, **սոլ** (կոշիկ) < լատ. solea, **պրինց** < ֆրանսերեն prince, **կարդինալ** < լատ. cardinalis, **մարաջախար** (մարշալ) < հին ֆր. marechal, **մարկիզ** < հին ֆր. marguis, **մարկ** (ղրամական միավոր) < գերմ. Mark, **պալլ** (իշխան) < ֆր. bail, **պարոն** (տիտղոս) < ֆր. baron, **դուկատ** (ղրամական միավոր) < իտ. ducato:

Նշված փոխառություններից՝ **մարաջախար** բառը ավելի շատ գործածվում է գրական լեզվի արևմտահայ տարբերակում: **Սոլ** բառը այժմ միայն բարբառներում է գործածվում, ժամանակակից հայերենի տեսակետից բարբառաբանություն է: Հիշատակված **դուկատ**, **կարդինալ**, **մարկ**, **մարկիզ**, **պրինց** բառերի փոխառությանը կատարվել է ուշ՝ 19-րդ դարում և նրանից հետո: Այդ մասին են վկայում փոխառյալ նույն բառի հնչյունական տարբերությունները միջին հայերենում և ժամանակակից հայերենում: Օրինակ՝ ժամանակակից

հայերեն **դուկատ** և միջին հայերեն **դուկատ** (ֆր. ducat), **պրինց** և միջ. հյ. **բրինչ** (ֆր. prince) և այլն:

Նորագույն փոխառություններ: Ռուսերենի ազդեցությունը: Հայ-ռուսական հարաբերությունները դարավոր պատմություն ունեն: Ռուսերենի անմիջական ազդեցությունը¹⁰⁴ հայերենի վրա սկսվում է 19-րդ դարի առաջին քառորդից սկսած՝ (1827 թ.) Արևելյան Հայաստանի մի մասը Ռուսաստանին միավորվելու շրջանից: Այդ ազդեցությունը, աստիճանաբար ընդարձակվելով, առավել մեծ չափերի է հասնում և նոր բնույթ է ձեռք բերում խորհրդային իշխանության տարիներին:

Իր զարգացման տարբեր փուլերում գրավոր և բանավոր ճանապարհով հայերենի՝ ռուսերենից կատարած փոխառությունների թիվը հազարների է հասնում: Հատկապես մեծ թիվ են կազմում այն բառերը, որոնք հայերենը փոխառել է ռուսերենի միջոցով: Այդ տեսակետից չափազանց մեծ է եղել ռուսերենի՝ որպես միջնորդ լեզվի դերը ժամանակակից հայերենի բառային կազմի լրացման և հարստացման գործում: Արդի փուլում ևս հայերենը աշխարհի շատ լեզուներից բազմաթիվ փոխառություններ կատարում է դեռևս ռուսերենի միջոցով:

Ռուսերենից կատարված փոխառությունները ստորաբաժանվում են հետևյալ խմբերի.

ա) Բուն ռուսական կամ ռուսերենում որպես այդպիսին ընդունված բառեր, որոնք ժամանակակից հայերենը փոխառել է տարբեր ժամանակներում: Դրանք հիմնականում վերաբերում են վարչատնտեսական, քաղաքական և ռազմական կյանքին, կենցաղին, առտնին հարաբերություններին և այլն. **կոլխոզ, սովխոզ, նէպ, բալալայկա, բայան, բորչ, շչի, պելմեն, պոնչիկ, պրյանիկ, ժարկո(ե), սասյոզ, փանկեպկա, դրուժինա, դրուժինիկ** և այլն: Սրանց մի մասն այսօր հնաբանություններ (պատմաբաներ) են և կամ խոսակցական բառաշերտի միավորներ:

¹⁰⁴ Տե՛ս *Ղազարյան Ս.*, Ժամանակակից հայոց լեզուն և ռուսերենի դերը նրա հարստացման և զարգացման մեջ, Երևան, 1955:

բ) Եվրոպական և աշխարհի այլևայլ լեզուներին պատկանող բառեր, որոնք ժամանակակից հայերենը փոխառել է ռուսերենի միջոցով, ռուսերենում ընդունված իմաստներով և հիմնականում ռուսերենին համապատասխանեցված հնչյունական տեսքով. **շլյապա, վիտամին, սապիրին, պենիցիլին, տրիկո, տրակտոր, փանկ, կարեր, էքսկավատոր, ռեկտոր, ռեֆորմ, սիմֆոնիա, սոնետ, սուպրանո, կոնպոզիտոր, կոմունիզմ, սոցիալիզմ, մանիֆեստ, միլիտարիզմ, կապիտալիզմ, պատլամենտ** և այլն:

Ռուսերենից և ռուսերենի միջոցով կատարված նորագույն փոխառությունների հիմնական առանձնահատկությունն այն է, որ նրանք ավելի շատ համապարփակ բնույթ ունեն, վերաբերում են բնության, մարդկային կյանքի և գործունեության բոլոր բնագավառներին, զիտության, տեխնիկայի, արտադրության տարբեր մարզերին և կազմում են ժամանակակից հայերենի բառային կազմի մի մասը:

Վերջին երկու-երեք տասնամյակներում ռուսերենի ազդեցությունը հայերենին վրա նկատելիորեն նվազել է, և այսօր հայերենը այլ լեզուներից փոխառությունները կատարում է անմիջականորեն: Այդպես՝ ուղղակի ճանապարհով են հայերենին անցել բազմաթիվ նոր բառեր, որոնց հայկական համարժեքները դեռ չկան կամ տարածված չեն, ինչպես՝ **կոսպիցիա, մենեջմենթ, ֆլեշմոբ, բլոգ, բլոգեր, էքսնոզազ, գրանց** և այլն:

Իմաստային և կառուցվածքային փոխառություններ

Պատճենումը¹⁰⁵ փոխառության հատուկ տեսակ է համարվում, երբ փոխառվում է ոչ թե օտարազգի բառը, այլ նրա իմաստը կամ կառուցվածքը, իսկ ավելի հաճախ՝ միաժամանակ երկուսն էլ:

Պատճենումները հայերեն այն բառերն են, որ կազմվում են օտարազգի բառերի իմաստների թարգմանությամբ կամ նրանց կառուցվածքի նմանողությամբ: Լեզվում այդ կարգի բառերն առաջանում ու մուտք են գործում գրքային ճանապարհով:

¹⁰⁵ Պատճենում < ռուս. калька < ֆրանս. calque, բառացի՝ «պատճենում թափանցիկ թղթի վրա, պատճեն»:

Պատճենումները լինում են՝ *իմաստային, կառուցվածքային*, կան նաև *կիսապարճենումներ*:

1) Իմաստային պարճենումներ: Իմաստային է համարվում այն պատճենումը, երբ լեզվի սեփական բառը փոխ է առնում միայն օտարազգի բառի իմաստը: Այս դեպքում բառը, փաստորեն, իր հնչյունական կազմով, բառաքերականական կառուցվածքով բնիկ, սեփական է, իսկ նրա մեկ կամ մեկից ավելի (երբեմն ժամանակակից բոլոր) իմաստները փոխառություն են որևէ օտար լեզվից:

Օրինակ՝ հայերեն **դափակ** բառի «անհամ, ոչ սուր» իմաստը (*դափակ մարդ, դափակ դատողություն, դափակ անեկդոտ* և այլն) փոխառություն է ֆրանսերեն *plat*, ինչպես և ռուսերեն *плоский* բառերի նույն իմաստներից:

Ռուսերենից կատարված իմաստային փոխառություններ են հայերեն **երկաթուղային** (< ռուս. *железнодорожник*) բառի գոյականական իմաստը («երկաթուղային տրանսպորտի աշխատող»), **զիծ** («*փխբ.* բնորոշ կողմ՝ հատկանիշ») < ֆրանսերեն *trait*, ռուսերեն *черта, черты, մեխ* («որևէ բանի ամենաէականը, հիմնականը») < ռուս. *звоздь*, < ֆրանս. *clou*:

Իմաստային պատճենման օրինակներ ռուսերենից, **անպայման** «*փխբ.* անշուշտ, անպատճառ») < *безусловно*. **հայտնի** «նշանավոր, ականավոր, երևելի» < *известный*. **ոչինչ** «ոչ վատ, լավին մոտ» < *ничего*. **կարճել** «*իրավ.* իրավաբանության մեջ՝ գործը դադարեցնել» < *прекратить (дело)*. **բոլորովին** «ամենևին» < *совсем*. **փոխադրություն** «ազատ թարգմանություն» < *перевод*. **սպրել** «բնակվել» < *жить*. **չնայած** «հակառակ» < *несмотря*. **որոշ** «անորոշ, որի թիվը, քանակը, անճանալիությունը հայտնի չէ» < *определённый* < ֆրանս. *certain*. **մի շարք** «մի խումբ, բազմաթիվ շատ» < *ряд (вопросов)*. **համար** «հյուրանոցի սենյակ» < *номер*. և այլն¹⁰⁶:

19-րդ դարում մի շարք եվրոպական լեզուներում, ինչպես և ռուսերենում, հետագայում նաև ժամանակակից հայերենում երևան եկած **աջ** «պահպանողական» և **չախ** «հեղափոխական» իմաստ-

¹⁰⁶ Անառյան Հ., նշվ. աշխատ., էջ 590-597:

ներն առաջացել են ֆրանսերեն *droite* «աջ» և *gauche* «ձախ» բառերի նոր իմաստների հիման վրա: Ֆրանսերենում այդ իմաստները ծագել են ֆրանսիական բուրժուական հեղափոխության շրջանում (1789–1793 թթ.) ըստ Կոնվենտի նիստերի ժամանակ պահպանողական (ժիրոնդիստների) և առաջադիմական (մոնտանյարների) կուսակցությունների՝ նախագահողի նկատմամբ զբաղեցրած տեղերի¹⁰⁷:

2) Կառուցվածքային (կամ բառակազմական) պատճենումներ:

Կառուցվածքային են կոչվում այն պատճենումները, որոնք կազմվում են օտար բառերի կամ արտահայտությունների (դարձվածքների) իմաստային մասերի՝ բաղադրիչների թարգմանությամբ: Պատճենման այս եղանակը փաստորեն օտարազգի բառերի և՛ իմաստի, և՛ բառակազմական կառուցվածքի յուրացման արդյունք է, թեև կազմվող բառի բաղադրիչները իրենց նյութական մասով սեփական (բնիկ) են: Հայերենում այդպիսի պատճենումներ առավել հաճախ կատարվել են ռուսերենից, ապա նաև եվրոպական այլ լեզուներից:

ա) *Ռուսերենի բառակազմական (կառուցվածքային) պատճենումներ. ինքնաքննադատություն* (<самокритика), *զերազանցիկ* (<отличник), *հակազազ* (<противогаз), *ինքնաեռ* (<самовар), *զնդացիք* (<пулемет), *շոգենավ* (<пароход), *շոգեքարշ* (<паровоз), *համադրելի* (<совмещать), *համընկնել* (<совпадать), *վերանայել* (<пересмотреть), *նպարակահարմար* (<целесообразный), *օրինաչափ* (<закономерный), *ընդհարակ* (<подполье), *տեսադաշտ* (<поле зрения), *սառցադաշտ* (<ледяное поле), *փորձադաշտ* (<опытное поле), *ուղարթիռ* (<вертолет), *ինքնաթիռ* (<самолет):

բ) Այլ լեզուներից հիմնականում ռուսերենի միջոցով կալարված պատճենումներ. *զերմարդ* (<сверхчеловек < գերմ. *Über + Mensch*), *սպորարածանում* (*подразделение* < ֆր. *subdivision*), *կենսագրություն* (*биография* < հին հուն. *βίος*, կյանք» + *γράφω* «գրում եմ») և այլն:

գ) Անմիջապես օտար լեզուներից կալարված պատճենումներ. օրինակ՝ *մայրաքաղաք* < հուն. *metropolis* (հայկական կազմությամբ՝

¹⁰⁷ Տե՛ս նույն տեղում:

քաղաքամայր), **իմաստասեր** < հին հուն. *φιλόσοφος* — «իմաստասերություն սիրող», **բանասեր** < հին հուն. *φιλόλογος* «բառ՝ բան սիրող», **ցայգայրուն** (արևմտահայերեն՝ «գիշերային սրճարան») < ֆր. *boite de nuit* կազմության բառացի թարգմանությունն է. **ուղղագրություն** < հին հուն. *ὀρθογραφία*, (*ὀρθός*-ից) «ուղիղ, ճիշտ» + *γράφω* «գրում եմ», **կենդանաբանություն** < ֆր. *zoologie* < հուն. *ζῷον* «կենդանի» + *λόγος* «ուսմունք» և այլն:

Դեռևս 5-րդ դարում հունարան դպրոցի ներկայացուցիչների կողմից կառուցվածքային պատճենման եղանակով հայերենում բազմաթիվ նոր բառեր են կերտվել: Հունարենի նմանողությամբ այդ շրջանում են կազմվել հարյուրավոր տերմիններ, որոնք վերաբերում են գիտության և կյանքի զանազան բնագավառների՝ փիլիսոփայությանը, լեզվին, գրականությանը, աստվածաբանությանը և այլն:

3. Պատճենումների առանձին տեսակ պետք է համարել հայերենի բառակազմական միջոցներով և կանոններով կազմված այն բառերը, որոնց համապատասխան հասկացությունները կամ իմաստները փոխառություն են այլ լեզուներից: Օրինակ՝ **հեռուստացույց** < ռուս. *телевизор*, **արբանյակ** < ռուս. *спутник*, **սափառնակ** < ռուս. *планёр*, **մանրէ** < ռուս. *микроб* < ֆր. *microbe* < հուն. *mikros* «փոքր, մանր» + *bios* «կյանք», և այլն:

Օտարազգի բառերի հիման վրա կազմված համազորներում հասկացությունը, առարկան, երևույթը ավելի պատկերավոր, տպավորիչ ներկայացնելու նպատակով հայերենը երբեմն շեղվում է բնագրից, օրինակ՝ **համազգեսք** (ֆր. *uniforme* (բառացի՝ «միաձև, միանման, միատեսակ», ռուս. *форма*), **համերգ** (ֆր. *concert*, բառացի՝ «իրար հետ համամիտ, համակամ, համախորհուրդ լինելը»), **հանդես** (ամսագիր) (ֆր. *journal* «օրական, օրագիր, լրագիր», անգլ. *journal* «շաբաթաթերթ, ամսաթերթ»), **շանթարգել** (ֆր. *paratonnerre* (parere լատիներենից՝ «կասեցնել» և *tonnerre* «որոտում»), անգլ. *lightning-rod* (*lightning* «փայլակ» և *rod* «ձող»), իտալ. *parafulmine* (*fulmine* «կայծակ»), ռուս. *громоотвод* (гром «որոտ» և *отвод* «հետ դարձնել»)¹⁰⁸:

¹⁰⁸ Տե՛ս *Աճառյալն* Հ., Հայոց լեզվի պատմություն, Բ մաս, էջ 486-88:

4) **Կիսապատճենումներ:** Կիսապատճենումները կառուցվածքով նույնպես համապատասխանում են սկզբնաղբյուրին, սակայն կազմված են բնիկ՝ լեզվի սեփական և փոխառյալ բաղադրիչներով՝ *ավրոկանգառ, կինոթատրոն, կինոասարդ, էլեկտրակայան, էլեկտրացանց, իմաքերոն, քարաքերոն ...*:

Բառիմաստը ավելի ճիշտ ներկայացնելու նպատակով հայերենը երբեմն մոտավոր պատճենում է կատարում: Այդ դեպքում բաղադրիչներից մեկի թարգմանությունը ստույգ (բառացի) է լինում, մյուսինը՝ մերձամիշով (իմաստով մոտ բառով). *նեկարբոյս* (< стрелоллист, բառացի՝ նետատերև), նույն ձևով՝ *փշամորթներ* (< иглокожие, բառացի՝ ասեղակաշի), բաղակտուց (< утконос, բառացի՝ բաղաքիթ), *կենդանբակափորներ* (< непарнокопытные, բառացի՝ «ոչ զույգամբակավորներ»), *եղնջահավ* (< крапивник), *սգաքիթեռ* (< траурница), *կաղամբաքիթեռ* (< капустаница, վերջին երեք օրինակներում ածանցը փոխարինված է արմատով) և այլն:

Հայերենում, ինչպես և մյուս լեզուներում, հաճախ փոխառությունն ու պատճենումը զուգահեռաբար են կատարվում: Որոշ դեպքերում պատճենումն ավելի նեղ, մասնակի իմաստ է ձեռք բերում, փոխառությունը՝ ավելի լայն, ինչպես, օրինակ՝ *մայրերիսպիզմ* և *նյութապաշարություն, կոմպոզիտոր* և *երգահան, օբյեկտ* և *առարկա* (որպես իմաստային պատճենում):

Փոխառությունը և պատճենումը երկար ժամանակ գործածվում են լեզվում որպես հոմանիշներ, մինչև որևէ մեկի լիակատար հաղթանակը (ինչպես, օրինակ՝ *սպորտամեն* և *մարզիկ*, այժմ՝ *ինտերնետ* և *համացանց, մարկետինգ* և *շուկայագիտություն*) կամ վերաիմաստավորումը:

Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարի զարգացումը արդի շրջանում

Տնտեսական, մշակութային կյանքի և հատկապես հասարակական-քաղաքական վերափոխումներն ու վերակառուցումները և, վերջապես, դարիս գիտատեխնիկական հեղաշրջումը, որպես արտալեզ-

վական գործոններ, նպաստում են լեզվում և հատկապես նրա ավելի զգայուն մասի՝ բառապաշարի ոլորտում կատարվող փոփոխություններին: Բառապաշարում տեղի ունեցող փոփոխությունները, ընդգրկելով բառային կազմը, իմաստաբանության և դարձվածաբանության բնագավառները, իհարկե, չեն կարող որևէ չափով ազդել ժամանակակից հայերենի բնույթի վրա: Այդ փոփոխությունները հիմնականում արտահայտվում են բառապաշարի հարստացման, բազմաթիվ նորանոր բառերի կերտման, նորագույն փոխառությունների, հայերեն գիտատեխնիկական մի շարք բնագավառների տերմինաբանության մշակման կամ ստեղծման, որոշ թվով բառերի գործուն բառապաշարից կամ ընդհանրապես գործածությունից դուրս գալու կամ սակավ գործածվելու, լեզվում առկա բառերի նոր իմաստներ ձեռք բերելու, մյուսների՝ հին իմաստներից զրկվելու, ինչպես նաև լեզվական մյուս տարրերի հետագա կատարելագործման միջոցով:

Ժամանակակից հայերենի բառային կազմի՝ բառապաշարի և դարձվածաբանության, ինչպես նաև իմաստաբանության բնագավառներում կատարված փոփոխություններն ու տեղաշարժերը ընթացում են հիմնականում հետևյալ ուղղություններով.

ա) բառային կազմում նոր բառերի, բառակապակցությունների ու դարձվածքների առաջացում,

բ) լեզվում եղած բառերի, նոր իմաստների ձեռքբերում,

գ) բառակազմական միջոցների ծավալմամբ որոշ կարգի բաղադրությունների աշխուժացում,

դ) լեզվի բառային կազմից ընդհանրապես, ինչպես նաև նրա գործուն բառապաշարից որոշ բառերի դուրսմղում:

1) Բառային կազմի հարստացումը նոր բառերով, բառակապակցություններով ու դարձվածքներով:

Իր զարգացման վերջին մեկ դարում հասարակական նոր հարաբերությունների, հասարակական-քաղաքական կյանքի սկզբունքային նոր ձևերի, գիտության, տեխնիկայի, արտադրության և մշակույթի մեջ կատարված արմատական փոփոխությունների հետևանքով ժամանակակից հայերենի բառային կազմը համալրվել է բազմաթիվ նորակազմ բառերով ու արտահայտություններով, ինչպես

մաս նոր փոփոխություններով, միաժամանակ շատ բառեր ձեռք են բերում նորանոր իմաստներ:

Նորակազմ բառերով բառապաշարի համալրումը և լեզվում առկա բառերի նոր իմաստների ձեռքբերումը արդյունք են ինչպես լեզվի ներքին զարգացման, այնպես էլ՝ ռուսերենի, իսկ վերջին երկու տասնամյակներում՝ մաս անգլերենի ազդեցության: Ռուսերենի ազդեցությունը հատկապես մեծ էր խորհրդային տարիներին: Այդ շրջանում այն արտահայտվում էր տարբեր ձևերով: Հայերենի նյութի հիման վրա, նրա բառակազմական միջոցներով կազմվում էին այնպիսի բառեր ու կայուն կապակցություններ, որոնք արտահայտում էին խորհրդային կյանքի տարբեր կողմերն ու երևույթները:

Հասարակական-քաղաքական հարաբերությունների, ժողովրդրական տնտեսության, արդյունաբերության, գիտության, տեխնիկայի և մշակույթի աննախընթաց վերելքի շնորհիվ խորհրդային շրջանում հայոց լեզուն դարձավ մաս գիտության և տեխնիկայի լեզու: Մշակվել են հայ տերմինաբանության հիմնական սկզբունքները, ստեղծվեցին կամ կյանքի կոչվեցին հասարակական-քաղաքական, գիտատեխնիկական տարբեր բնագավառներին պատկանող հազարավոր տերմիններ, կազմվեցին տասնյակ տերմինաբանական բառարաններ և տերմինարաններ: Այժմ հայերենն իր տերմինաբանության մակարդակով հաջողությամբ ծառայում է ժամանակակից գիտության բոլոր ճյուղերին ու բնագավառներին: Մյուս կողմից, գիտության ու տեխնիկայի, արտադրության և մշակույթի ժողովրդականացման, հասարակության լայն զանգվածների գիտատեխնիկական ընդհանուր մակարդակի անընդհատ բարձրացման շնորհիվ բազմազան բնագավառներին պատկանող բազմաթիվ տերմիններ նշանակալից չափով մուտք են գործել համաժողովրդական լեզվի ընդհանուր գործածական բառապաշարը, մատչելի են դարձել ժողովրդական լայն զանգվածներին և կիրառության սահմանների փոփոխման հետևանքով շատ տերմիններ վեր են ածվել լեզվի սովորական բառերի. ինչպես՝ *ավիացիա, համաներում, հրթիռ, փինգերանավ, փինգերագնաց, ազրեսիս, համույթ, կվարտեյր, փրիո, արչակ, արչակագիր, քայրերգություն, օպերա, կերպար, բնանկար, ծաղրա-*

նկար, հարթաքանդակ, սեղմագիր, արենախոս, քանասեր, գրականագետ, լեզվաբան, քիմիկոս, ֆիզիկոս, տնտեսագետ, արենախոսություն, կենսաբան, ճարտարագետ, ժողովրդավարություն, գյուղատնտես, պատրաստավոր, համագումար, սղան, արժույթ, փարադրամ, ճգնաժամ և այլն:

Սեփական և թարգմանական հարուստ գրականության ստեղծման շնորհիվ, հայերենի բառակազմության գործող կանոններով և կադապարներով անցած տարիներին կազմվել են տասնյակ հազարավոր նոր բառեր, որոնց զգալի մասն անցել է գրական լեզվի համագործածական բառապաշարը: Նորակազմությունների քանակը պատկերացնելու համար բավական է համեմատել տարբեր շրջաններում լույս տեսած բառարանների բառացանկերը: Այսպես, եթե Հ. Գաղբաշյանի՝ XIX դարասկզբին լույս տեսած «Հայ-ռուսերեն լիակատար բառարանի» պարունակած հայերեն բառերի քանակը 70 հազարից չէր անցնում, ապա վերջին տասնամյակներին հրատարակված հայերենի բառարաններում ընդգրկված բառերի քանակը կրկնապատկվել է՝ անցնելով 200 հազարի սահմանները:

Կյանքի բազմազան բնագավառներում առաջացած նոր հասկացությունների դիմաց հայերենի բառապաշարի համալրման մշտական աղբյուրն է փոխառությունը: Այդ շրջանում հատկապես մեծ ծավալ են ստացել նորագույն փոխառությունները, որ բացառապես կատարվել են ռուսերենի միջոցով, ռուսերենում ընդունված իմաստներով և հիմնականում ռուսական գրադարձությամբ:

Ժամանակակից հայերենի բառապաշարում որոշակի թիվ են կազմում փոխառյալ և սեփական բաղադրիչներով, ինչպես հիմնական ձևայիններով, այնպես էլ երկրորդական ձևայիններով (ածանցներով) կազմվող բաղադրյալ բառերը: Շատ բառեր են կազմվել *ավիա-, սպորտ-, էներգ-, կինո-, հիդրո-* բաղադրիչներով:

Միայն *ավիա-* բաղադրիչով հաշվվում է հայերեն ավելի քան 60 նոր բառ. *ավիաազդանշան, ավիաառաքում, ավիաարդյունաբերություն, ավիագիծ, ավիագործարան, ավիագունդ, ավիադպրոց, ավիագործամաս, ավիաընկերություն, ավիախումբ, ավիակապ, ավիակիր, ավիահավաքակալան, ավիահետախուզություն, ավիահրահան-*

*գիչ, ավիամաս, ավիամարզաչև, ավիամուրուսկուսք, ավիամուրուս-
շինություն, ավիանկարահանություն, ավիաշարժիչ, ավիաջոկայր, ավ-
իառումք, ավիափարոս, ավիափոխադրում, ավիափոշուրում* և այլն:
Ավրո- բաղադրիչով (որ մի շարք իմաստներ ունի) արձանագրված է
ավելի քան 200 բառ՝ *ավրոսդեյր, ավրոսմբարչիչ, ավրոբազմա-
մարյր, ավրոքեյրոնահասոնիչ, ավրոզնացք, ավրոզրասենյակ, ավ-
րոդասակ, ավրոդոդ, ավրոդոդագործ, ավրոերթեկություն, ավ-
րոզբոսաշրջիկ, ավրոկայան, ավրոկանգառ, ավրոհավաքակա-
յան, ավրոկրպակ, ավրոճանսպարհաշինություն, ավրունաս, ավ-
րոպահեարամաս* և այլն:

Վերջին տասնամյակներին հատուկ է նաև հայերենի բառակազ-
մական հնարավորությունների ընդարձակումը, հայերենի բառաբար-
դացման, ամանցման միջոցների ծավալումը, բազմաթիվ հայերեն
նորագույն հապավումների կազմումն ու տարածումը:

Բազմաբաղադրիչ բառեր: Անցյալ դարակերպին երկուսից ավելի
բաղադրիչ ունեցող բառերի քանակը հայերենում մեծ թիվ չէր կազ-
մում, և ընդհանրապես չէր խրախուսվում այդ կարգի բառերի կազ-
մությունը: Վերջին տասնամյակներում երկուսից ավելի բաղադրիչ-
ներով բարդ բառերի կազմությունը սովորական երևույթ է դարձել
բառակազմության գործընթացում, ինչպես՝ *զրանցաքարյր, զրա-
քննադարություն, զրավիմարյություն, զրասենյակաբանություն,
Էլեկտրայուսանկարիչ, Էլեկտրասրճադագ, Էլեկտրասարսագիր, զու-
նայուսանկարչություն, դեղնանարնջագույն, դեղնաշագանակագույն:*
Տարածված են նաև քառաբաղադրիչ և հնգաբաղադրիչ բարդու-
թյունները, ինչպես, օրինակ՝ *զրավիմարյագրություն, այգեպրդա-
բանջարաբույծ, այգեպրդաբանջարաբուծություն, Էլեկտրագազաե-
ռակցում, Էլեկտրագազաեռակցորդ, Էլեկտրաբազմասրյագրու-
թյուն, Էթիլ-ածխաջրածին, հեռուստակառավարակեյր:*

Այս շրջանում այդ կարգի բառերի ավելի լայն չափերով դրսևո-
րումն ու աշխուժացումը պայմանավորված է նոր հասկացություն-
ների, հատկապես հասարակական-քաղաքական և գիտատեխնիկա-
կան բազմազան բնագավառների համար հայերեն համապատաս-
խան բառեր կերտելու անհրաժեշտությամբ: Այդ կարգի բառերը,

կազմվելով գրավոր խոսքում, հիմնականում վերաբերում են գրքային բառապաշարին և տարածված են մասնագիտական գրականության մեջ, մամուլում և գրավոր այլ աղբյուրներում: Երկուսից ավելի բաղադրիչով կազմվող բարդությունների երևան գալու պատճառներից է, թերևս, նաև լեզվի կենսագործունեության ընթացքում բառակապակցություններից խուսափելու միտումը:

Այս շրջանում առանձնապես լայն չափերի են հասել դարձվածքների և արտահայտությունների իմաստային պատճենումները, կապակցությունների թարգմանությունները, ինչպես՝ *արջի ծառայություն, հինգերորդ գորասյուն, լեզուն արամների երևում պահել, ձեռքերը ծախած նսրել*, կամ՝ *ընդհանուր հայրարարի բերել, աչքակապությամբ գրադվել*: Լեզվի բառապաշարում որոշակի տեղաշարժեր են կատարվել նաև բառերի ոճական կիրառության ընդարձակման ուղղությամբ: Գրավոր լեզվի գրքային ոճի շատ բառեր և արտահայտություններ ավելի հաճախ են գործածվում բանավոր, խոսակցական լեզվում և ընդհակառակը՝ խոսակցական լեզվի բառերը թափանցում են գրքային, գրավոր լեզվի տարբեր ոճերը: Բանավոր խոսակցական լեզվում արդեն սովորական են՝ *հեռուստացույց, արբանյակ, պարզամտավոր, նսրաշրջան, քաղաքական ուսուցում, քիմիական պարարտանյութ, թռչնանոց, ագրոտեխնիկա, պերական կարգապահություն, սննի տեմպեր* և նման շատ բառեր ու կապակցություններ:

Խոսակցական լեզվից գրավոր խոսքն են թափանցել այնպիսի բառեր, ինչպես՝ *խորհարք, կորնզան, էրեկ, էրոց, այգեթաղ, այգեթաց* և այլն:

Մյուս կողմից, երկրի քաղաքական կարգերում և տնտեսական-վարչական կյանքում կատարված արմատական փոփոխությունների պատճառով, պետական-վարչական կառուցվածքին, նախկին կյանքին ու կենցաղին վերաբերող շատ բառեր, բառիմաստներ, արտահայտություններ՝ համապատասխան հասկացությունների, երևույթների վերացման, անհետացման, պատմության գիրկն անցնելու կապակցությամբ կան ընդհանրապես դուրս են եկել լեզվի բառապաշարից, կան էլ նրա գործուն կազմից անցել են ոչ գործուն կազմը:

Խորհրդային հասարակարգի փլուզման, զանազան խավերի, հասարակական այլևայլ հարաբերությունների փոփոխման կամ վերացման հետ վերացան կամ գործուն բառապաշարից դուրս մղվեցին:

ա) Պետական խորհրդային կարգին, վարչակարգին, հիմնարկներին, գյուղական և քաղաքային զանազան վարչական պաշտոններին վերաբերող բառեր ու արտահայտություններ, ինչպես՝ *կոմսունո, կոմերիւրմիություն, հոկրեմբերիկ, կուսբջիջ, գավառ, գավառապետ, քաղբյուրո, կենրկոմ, շրջկոմ, գյուղսովետ, շրջսովետ, միլի-գիս, միլպետ, պետական վերահսկողություն* և այլն:

բ) Խորհրդային տնտեսական կարգերի և հարաբերությունների հետ կապված բազմաթիվ բառեր, անվանումներ և իմաստներ, ինչպես՝ *սոցմրցություն, հանդիպակաց պլան, պլանների գերակատարում, արտապլանային արտադրանք, աշխօր, օղակավար, հնգամյակ, ֆինբաժին, առբաժին, արտադրության առաջավոր, սոցիալիստական աշխատանքի հերոս*, և այլն:

գ) Գեղարվեստական գրականության լեզվում, ինչպես նաև մասնագիտական տերմինաբանության մեջ նկատվում է գրաբարյան որոշ բառերի և բառաձևերի վերականգնում կամ գործածության աշխուժացում, ինչպես՝ *ի ցույց դնել, ի սպաս դնել, ի հեճուկս, ի դերև հանել, ի լրումն, քանզի, մամլո ստուլիս* և այլն:

Նորագույն հապավումներ: XX դարում առանձնապես աշխուժացան հապավումները: Այս շրջանում հապավումները կազմվում են ոչ միայն գուտ հայկական իրականությունից, ազգային կյանքի պայմաններից բխող հասկացություններից, այլև գերազանցապես հասարակական կյանքի, տնտեսական-քաղաքական հարաբերությունների, պետական-վարչական կարգի հետ պայմանավորված հասկացությունները առաջին հերթին ռուսերենում և այլ լեզուներում գրանցվելու շնորհիվ: Պատահական չէ, որ հայերենի հապավումների որոշ մասը կազմված է օտար լեզուների համաբանությամբ, թարգմանությամբ կամ կաղապարներով:

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

Բառակազմություն¹⁰⁹ տերմինը երկու իմաստ ունի: Առաջին իմաստով նշանակում է լեզվաբանության այն բաժինը, որն զբաղվում է բառերի կառուցվածքի, բառերի կազմության օրենքների ու կանոնների, լեզվի բառակազմական համակարգի քննությամբ: Մյուս իմաստով բառակազմությունը նոր բառերի կազմության գործընթացն է, լեզվի բառակազմական օրենքներով նոր բառերի կազմումը:

Բառակազմությունը ուսումնասիրվում է ինչպես համաժամանակյա, այնպես էլ տարժամանակյա մոտեցումներով:

Համաժամանակյա բառակազմության նպատակն է պարզել և մեկնաբանել բառերի կազմության օրինաչափությունները լեզվի զարգացման ժամանակակից փուլում: Այդ նշանակում է, որ բառի ըստ բաղադրիչների տարրալուծումը պետք է կատարել ժամանակակից լեզվաընթացողությամբ: Այդ տեսակետից, օրինակ, **ընկեր, մեկ, տեր** բառերը պարզ են. այսօրյա գործածության դեպքում հնարավոր չէ դրանց տարրալուծումը ըստ բաղադրիչների: Նույն ձևով **մասին, անձամբ, համարյա** բառերում արդի լեզվաընթացողությամբ չի գիտակցվում գրաբարյան ձևերի առկայությունը:

¹⁰⁹ Տե՛ս *Արեղյան Մ.*, Երկեր, հտ. 2, Երևան, 1974 էջ 135-239: *Զահուկյան Գ., Աղայան Էդ., Առաքելյան Վ., Քոսյան Վ.*, Հայոց լեզու, I մաս, Ա պարակ, Երևան, 1980, էջ 369-472: *Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էլոյան Ս.*, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1-ին, Երևան, 1979 էջ 244-481: *Մարգարյան Ա.*, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1990, էջ 4-298: *Գալստյան Ս.*, Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ, Երևան, 2003 [«Բառակազմության ներածություն (հիմնական հասկացություններ)» հատվածը, էջ 102-114]: *Հովսեփյան Լ.*, Գրաբարի բառակազմությունը, Երևան, 1987, էջ 5-34: *Սևակ Գ.*, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 2009, էջ 136-192: *Մուրվալյան Ա.*, Հայոց լեզվի բառային կազմը, Երևան, 1955: *Ալեքրիսյան Տ.*, Ժամանակակից հայերենի բառի կառուցվածքը // Հայոց լեզվի կառուցվածքը, Երևան, 1975, էջ 5-77:

Համաժամանակյա բառակազմությունը, այսպիսով, ուսումնասիրում է լեզվի ժամանակակից փուլում գոյակցող միավորները, որոնք կարող են բացատրվել միայն լեզվի այդ շրջանում գործող օրինաչափություններով:

Այլ է տարժամանակյա բառակազմության մոտեցումը: **Տարժամանակյա բառակազմության** նպատակն է բացատրել և մեկնաբանել լեզվի բառակազմական օրինաչափությունների պատմական կապերը: Այդ նշանակում է՝ բառակազմական իրողությունները պետք է ուսումնասիրել իրենց պատմական զարգացման մեջ: Այսպես, վերոհիշյալ **ընկեր, մեկ, տեր** բառերը տարժամանակյա կամ պատմական բառակազմության տեսակետից տարրալուծվող միավորներ են՝ **ընդկեր, մի-ակ** (ի+ա>ե), **տի-այր** (տի+այր>տեյր>տեր>տեր), որտեղ **տի** բաղադրիչի իմաստն է «մեծ» (հմմտ. *տիկիհն*): **Մասին** բառը գրաբարի **մասն** բառի տրականն է, **անձամբ** բառը՝ **անձն**-ի գործիականը և այլն: Այսպիսով, բառակազմության համաժամանակյա և տարժամանակյա մոտեցումների դեպքում միևնույն տերմինով անվանվող մի շարք հասկացություններ տարբեր բովանդակություն են ստանում:

Լեզվի բառակազմական համակարգի ուսումնասիրությունը, անշուշտ, կարելի է կատարել անկախաբար, համաժամանակյա և տարժամանակյա դիտակետերով առանձին-առանձին: Նպատակահարմար է, սակայն, այդ ուսումնասիրության ընթացքում օգտագործել ինչպես համաժամանակյա, այնպես էլ տարժամանակյա բառակազմության ընձեռած փաստերն ու տվյալները: Ավելին, հաճախ արդի փուլի բառակազմության շատ փաստեր ըմբռնելու համար անհրաժեշտ է լինում նրանց զարգացման օրինաչափությունների բացահայտումը, օրինակ՝ **ա** հոդակապի ծագումը, կամ՝ մի շարք անձանցների առաջացումը և այլն:

Որքան համաժամանակյա և տարժամանակյա (պատմական) բառակազմություններն ուսումնասիրության միևնույն, ընդհանուր առարկայի իրենց տարբեր մոտեցումներով հստակորեն սահմանազատում են բառակազմության ժամանակակից իրակությունները պատմական փաստերից, բայց և որոշ իմաստով լրացնելով իրար՝ բառա-

կազմական օրինաչափությունների քննությունը դարձնում են բազմակողմանի և ամբողջական:

Բառակազմության օրինաչափությունների, կանոնների ու կաղապարների ամբողջությունը ներկայացնում է տվյալ լեզվի բառակազմական համակարգը: Բառակազմական համակարգի մեջ են մտնում այն տարրերը, որոնցից կազմված է բառը, նրա կառուցվածքի (կառույցի) մեջ մտնող միավորները (հիմք, արմատ, ածանց, հոդակապ), բառերի կառուցվածքը, ինչպես նաև այն օրենքները, որոնցով բառերն ըստ իրենց բառակազմական իմաստների խմբավորվում են բառակազմական տիպերի՝ բառերի որոշակի տեսակների մեջ:

Բառակազմությունը սերտորեն կապված է բառապաշարի, ինչպես նաև քերականության՝ ձևաբանության ու շարահյուսության հետ:

Բառապաշարի հետ ունեցած նրա կապը պայմանավորված է նրանով, որ բառակազմության շնորհիվ լեզվի բառակազմական միջոցներով կերտվող նորանոր բառերը համալրում են բառային կազմը: Իսկ նոր բառերի կերտումը կատարվում է բառապաշարի զարգացման պահանջով:

Բառակազմության կապը քերականության հետ անմիջական է. բառերը կապակցվում են տվյալ լեզվի քերականության՝ ձևաբանական ու շարահյուսական կանոններով:

Ձևույթի հասկացությունը

Ձևույթները՝ որպես բառի իմաստային միավորներ (մասեր): Հայերենի *շևուք* տերմինը կազմված է օտար morpheme, μορφημα (<հունարեն morphē «ձև») բառի նմանողությամբ: Ձևույթը իմաստային տեսակետից բառի անբաժանելի, այլևս չտրոհվող մասն է, իմաստի և ձևի միասնության տեսակետից լեզվի նվազագույն միավորը:

Ձևույթի էությունը և յուրահատկությունները հասկանալու համար պետք է նախապես պատկերացնենք, թե ինչ է բառաձևը: Բառաձևը առանձնացվում է խոսքաշարից գծային մակարդակի վրա, այն շարակարգային երևույթ է: Այսինքն՝ բառն իրական խոսքում գո-

յություն ունի քերականական իր բոլոր ձևերի ամբողջության մեջ: Եվ եթե խիստ մոտենանք, ասենք, **ծով** բառը իրականում բառ էլ չէ, այլ այդ բառի թեև հիմնական, բայց ընդամենը դրսևորումներից մեկը (եզակի թվի ուղղական հոլովի անորոշ առումն է): Իսկ բուն **ծով** բառը (բառույթը, լեքսեման) հայերենում իրականում գոյություն ունի իր բոլոր ձևերի ամբողջության մեջ (դրանք հասնում են չորս տասնյակի՝ եզակի և հոգնակի թվերի բոլոր հոլովները՝ իրենց առումներով (հոդներով)): Հայերենի խոսքաշարում այդ բառը իրացվում է իր կոնկրետ ձևերից որևէ մեկով, որը բնորոշվում է նախադասության մեջ տեղաշարժվելու հարաբերական ազատությամբ և այսպես կոչված անթափանցիկությամբ (նրա մեջ հնարավոր չէ ներմուծել իմաստակիր կամ ոչ իմաստակիր որևէ նոր միավոր):

Սակայն լեզվում բառը այլ բառերի հետ կարող է մտնել ոչ միայն գծային (շարակարգային), այլև այլ կարգի հարաբերությունների մեջ: Այն կարող է հիմք ծառայել այլ բառերի ստեղծման համար: Այդ նույն **ծով** բառից (հիմքից) կարող ենք կազմել տասնյակ նոր բառեր՝ **ծովակ, ծովային, անդրծովյան**, նաև՝ **ծովածոց, ծովագայլ, ծովագնաց, ծովածուխ, ծովակալ, արցունքածով** և այլն: Այս դեպքում գործ ունենք բառերի միջև եղած հարացուցային հարաբերությունների հետ:

Ուրեմն պետք է խիստ տարբերակել ձևակազմության (բառաձևերի կազմության) և բառակազմության (նոր բառերի կազմության) գործընթացները և հասկացությունները: Առաջին դեպքում մենք գործ ունենք քերականական ձևերի կազմության հետ (**ծովը, ծովից, ծովերում, ծովս, ծովերիցդ** և այլն), որոնք չունեն միմյանցից տարբեր բառային իմաստներ և չեն կարող տարբեր բառեր համարվել: Այս ձևերն ուսումնասիրվում են ձևաբանության մեջ: Երկրորդ դեպքում (**ծովակ, ծովահեն** և այլն) արդեն գործ ունենք նոր ինքնուրույն բառերի հետ, որոնք միմյանցից զանազանվում են իրենց բառային իմաստներով: Սա բառակազմության ուսումնասիրությունների ոլորտն է:

Բառի և բառաձևի մեջ հնարավոր է առանձնացնել նվազագույն, իմաստային տեսակետից այլևս անբաժանելի, անտարրալուծելի միավորներ, որոնք, ինչպես նշեցինք, կոչվում են **չևույթներ**: Այսպես,

ջրանցքաշինարար բառում կան հետևյալ իմաստակիր միավորները՝ *ջ(ը)ր* (ջուր), *անց* (անցնել), *ք. շին* (<շեն, շինել), *արար* (ար+ար, արարել, ստեղծել), նաև *ա*: Նմանապես՝ *գրաքննադատություն* < *գր* (<գիր)–*ա*– *քնն* (<քնին)–*ա*–*դատ*–*ություն*, *հասնել* < *հաս*–*ն*–*ել*, *ջրմուղ* < *ջր* (<ջուր)–*մուղ*, *անհանդուրժող* < *ան*–*հանդուրժ*–*ող*, *այսօր* < *այս*–*օր*, *քաջարի* < *քաջ*–*արի*: Այս միավորները ձևային են:

Բառն ու ձևային լեզվական տարբեր իրակություններ են, ունեն և՛ նման, և՛ տարբեր հատկանիշներ: Նրանք նման են նրանով, որ լեզվի իմաստային միավորներ են, ունեն որոշակի հնչույթային կազմ:

Բառերն ու ձևայինները իրարից էապես տարբերվում են նրանով, որ՝

ա) բառերն արտահայտում են կոնկրետ իմաստ, մինչդեռ ձևայինների իմաստը կոնկրետ չէ, այլ ընդհանուր է (հմմտ. *փառք*, *փառավոր*, *փառավորվել*, *անփառունակ*, *փառասեր*, *փառասրենչ*, *փառագուրկ*, *փառահանդես* բառերը և *փառ* ձևայինը):

բ) բառերն օժտված են քերականական ձևավորվածությամբ, ձևայինները՝ ոչ:

գ) բառերը գործածության տեսակետից ինքնուրույն, անկախ միավորներ են, որոնցով նախադասություն են կազմում, հետևաբար և մտնում են նախադասության մեջ. ձևայինները զուրկ են ինքնուրույնությունից և անկախությունից, մտնում են բառի կազմի մեջ, կազմում են բառի մասը, նրա բաղադրատարրը:

Լեզվում ձևայինները լինում են երկու տեսակ՝ *հիմնական* կամ *արմատական* և *երկրորդական*:

1) *Հիմնական* կամ *արմատական ձևային* (արմատը, բառարմատը) ցանկացած բառի պարտադիր մասն է, որն արտահայտում է այդ բառի հիմնական առարկայական-տրամաբանական նշանակությունը: Այն իմաստակիր ավելի փոքր միավորների այլևս չի բաժանվում: Այս ձևայինները լեզվում կարող են գործածվել ինչպես ինքնուրույնաբար, իբրև արմատական բառեր (*ծով*, *մարդ*, *կարմիր*, *շուր*, *ուր*, *ես*, *ո՛ւիս*, *ավաղ* և այլն), այնպես էլ այլ ձևայինների (հիմնական կամ երկրորդական) համակցությամբ:

Արմատները լինում են *անկախ* կամ *ազատ* և *կախյալ* կամ *կապված*:

Անկախ արմատները լեզվում կարող են գործածվել իբրև ինքնուրույն բառեր (Ø (գրո վերջավորությամբ)): Անկախ արմատները ազատորեն կարող են միանալ այլ ձևայինների (հիմնական և երկրորդական) և կազմել նոր բառեր: Հայերենի արմատների մեծ մասը անկախ է:

Կախյալ արմատները գործածվում են միայն այլ՝ հիմնական կամ երկրորդական բառակազմական ձևայինների համակցությամբ: Վերցնենք բառերի մի քանի շարքեր. *նվաճեց, նվաճող, նվաճում, նվաճողական, նվաճողականություն, աննվաճ, փեղեղանվաճ*, կամ՝ *բխել, բխում, հորդաբուխ, ինքնաբուխ, հրաբուխ, սրտաբուխ. լսել, լսարան, լսափող, անլսելի, համալսարան, ասուլիս* և այլն: Սրանցում հեշտորեն առանձնացվում են *նվաճ, բուխ* (>*բ(ը)խ*), *լիս* (>*լ(ը)ս*) արմատները, որոնք ինքնուրույն (այս և նման բաղադրություններից դուրս, առանձին) գործածություն չունեն: Սրանք կախյալ կամ կապված արմատներ են: Այդպիսիք են նաև *սայր* (սայրել, սայրանք), *սս* (սսել, անասուն), *բար* (բարի, բարություն), *գեղ* (գեղեցիկ, հրաշագեղ), *գն* (արտագնա, գնացք), *երգիծ* (երգիծել), *կաշառ* (կաշառել, անկաշառ), *հազ* (հազնել, հազուստ), *հեղչ* (հեղձուցիչ, ջրահեղձ), *ճառագ* (ճառագայթ, լուսաճառագ) և այլն, և այլն: Կախյալ արմատների մեջ կան այնպիսիները, որոնք հնչյունականորեն «թույլ» են արտահայտված. կազմված են միայն մեկ հնչյունից և այդ պատճառով էլ դժվարությամբ են ընկալվում իբրև արմատներ: Այսպես, հայերենի *գալ, փալ, լալ* անկանոն բայերի բառարմատներն են համապատասխանաբար *գ-*, *փ-*, *լ-* (այս բայերում *-ա-*ն խոնարհիչն է, *-լ-*ն՝ բայակերտ ածանցը): Գրաբարում այսպիսի միահնչյուն արմատներ ունեին *բամ* (*բալ* «խոսել, ասել») և *գոմ* (*գոլ* «լինել, գոություն ունենալ») բայերը:

Ծանոթություն: Արմատի և արմատական բառի համընկնումը միայն ձևային է: Իրականում բառը ունի *գրո վերջավորություն*, որի շնորհիվ էլ արմատը դառնում է բառ և կազմում է բառակապակցություններ, լինում է նա-

խաղասության միավոր: Հաղորդակցման գործընթացի նվազագույն միավորը բառն է և ոչ թե արմատը կամ ձևային: Այսպես, *կառուցել ղեկապրուն* կապակցության մեջ *պրուն*-ը արմատ է՝ հիմնական ձևային, իսկ *կառուցել պրուն* կապակցության մեջ արդեն բառ է, ունի անկախ գործածություն և քերականական հատկանիշներ՝ եզակի թիվ, ուղղական հոլով, անորոշ առում. *պրուն* + \emptyset (*գրո*): *Գեղապրուն* կազմությունում քերականական այդ նույն հատկանիշներն ունի ամբողջ բառը և ոչ թե միայն *պրուն* ձևային:

Արմատական ձևայինները՝ որպես բառային իմաստի հիմնական կրողներ, նշանակալի չափով պահպանում են իրենց բուն իմաստը նույնարմատ կամ ազգակից բառերի շարքում: Ազգակից են այն բառերը, որոնք իրենց կառուցվածքում ունեն միևնույն արմատական ձևային և միավորվում են իմաստային ընդհանրությամբ: Տրված որևէ արմատական ձևային հիման վրա ազգակից բառերի ձևավորումը բառակազմական գործընթացի գլխավոր օրինաչափություններից մեկն է: Լեզվում գոյություն ունեցող ազգակից բառերը կազմում են այսպես կոչված իմաստային «ոլորտներ», որոնցում միավորված բառերն ունեն իմաստային ընդհանուր հիմք: Այսպես, *միտ* արմատական ձևային ծառայում է իբրև ընդհանուր իմաստային հիմք (բազա) մի մեծ խումբ ազգակից բառերի համար, որոնք փոխկապակցվում են ընդհանուր «միտք» նշանակությամբ՝ *միտք*, *մրտծել*, *մրտծնունք*, *մրտծական*, *անմիտ*, *մրտցածին*, *մրտրում*, *մրտմոլոր*, *մրտվորական*, *մրտզբաղ*, *մրտափոխվել*, *միամիտ*, *մանկամիտ*, *մրմրալ*, *մրիկ անել* և այլն, և այլն (Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» այդ արմատով միայն սկսվող 257 բառ կա): Նույնարմատ (ազգակից) բառերը միավորվում են առանձին խմբերում, որոնք կոչվում են բառակազմական բուն կամ փունջ (տե՛ս էջ 264-269):

2) *Երկրորդական ձևային* բառի ոչ պարտադիր մասն է (ոչ բոլոր բառերում կա՝ ի տարբերություն արմատի): Միշտ գործածվում է հիմնական ձևային (արմատի) հետ: Արտահայտում է լրացուցիչ բառակազմական կամ քերականական իմաստ: Երկրորդական ձևայինների իմաստը ավելի վերացական է, քան արմատականներինը:

Մրանց միջոցով կոնկրետանում են առանձին բառերի բառային և քերականական իմաստները:

Լեզվում ունեցած իրենց գործառնությունով երկրորդական ձևությունը բաժանվում են երկու խմբի՝ *բառակազմական երկրորդական ձևություններ* և *ձևակազմական (բառահարաբերական, քերականական) երկրորդական ձևություններ*:

Բառակազմական երկրորդական ձևությունները ծառայում են նոր բառերի կերտմանը: Դրանք են հայերենի *նախածանցները, վերջածանցները, ներածանցները* (բառի հիմքի մեջ մտնող ածանցները): Այս խմբում պետք է նշենք նաև հայերենի **ս** (հազվադեպ՝ **ե**) հոդակապը, որը ծառայում է երկու հիմքերի և կամ էլ հիմքի և ածանցի կցմանը: Հոդակապը մյուս երկրորդական ձևություններից տարբերվում է նրանով, որ չի կարող արտահայտել բառային որևէ իմաստ (բացառությամբ մոտ երկու տասնյակ դեպքերի, ինչպես՝ *արջորս* «արջի որսորդ» – *արջատրս* «արջ որսալը, արջի որս», *հրջիզ* «կրակ գցող, հրդեհող» – *հրաջիզ* «հետևակ զորքի հրագեցնող զինված զինվոր», *գայլխեղդ* «հովվական մեծ և ուժեղ շուն, որ կարող է գայլ խեղդել, գամվո» – *գայլխեղդ* «գայլի խեղդած, գայլից խեղդված») և այլն):

Ձևակազմական (բառահարաբերական կամ քերականական) երկրորդական ձևություններ կան միայն թեքվող բառերում: Մրանք ոչ թե կերտում են նոր բառեր, այլ կազմում են թեքվող բառերի այլևայլ բառաձևերը, բառերի քերականական իմաստների կողմներն են: Օրինակ՝ *քաղաք-ից, քաղաք-ում, քաղաք-ներ, քաղաք-ը*, **-ից**՝ անջատման քերականական իմաստ, **-ում**՝ պարունակության քերականական իմաստ, **-ներ**՝ հոգնակի թվի քերականական իմաստ, **-ը**՝ որոշյալության քերականական իմաստ (հմմտ. *քաղաք-ական, քաղաք-ային, քաղաք-ացի*). նոր բառեր են): Իհարկե, բառակազմական ձևությունները նույնպես կարող են արտահայտել քերականական իմաստներ, սակայն միայն ամենաընդհանուր ձևով: Ասենք, որոշում են բառի խոսքիմասային պատկանելությունը (*-ություն*-ը կերտում է միայն գոյական, *-(ե)լ, -(ա)լ*-ը՝ միայն բայեր, *-որեն, -ովին*-ը՝ միայն մակբայներ և այլն): Կամ՝ երբեմն որոշում են գոյականի թիվը՝ *Արևիկենք, Վարդան-անք, մեր-ոնք* և այլն:

Հայերենի քերականական ձևայիններն են *հոլովական* և *խոնարհման վերջավորությունները, հոդերը*:

Լեզվում կան մի քանի ձևայիններ, որոնք ունեն երկակի բնույթ: Նայած թե ի՛նչ հարացույցում են քննվում, կարող են ընկալվել և՛ իբրև բառակազմական ձևայիններ, և՛ իբրև քերականական ձևայիններ, կամ էլ՝ և՛ որպես երկրորդական ձևային (ածանց) և՛ որպես հիմնական ձևային (արմատ): Ասենք, *գիր, գր-ական, գր-ային, գր-ություն, գր-իչ, գր-ել* շարքում *-ել*-ը բառակազմական ձևային է (կերտում է նոր բառ՝ բայ, ինչպես *-ական*-ն ու *ային-ը*՝ ածական, *ություն*-ն ու *-իչ*-ը՝ գոյական): Իսկ *գր-ել, գր-ում, գր-ած, գր-ող, գր-ի* հարացույցում քերականական ձևային է. կազմում է անորոշ (նաև՝ վաղակատար) դերբայը՝ բայաձևը: Հմմտ. նաև՝ *նկար-ած, նար-ած, խոս-ած, խաղաց-ած* (քերականական ձևային) և *նշան-ած, սիր-ած, խորով-ած, հողվ-ած, հասարակ-ած* (բառակազմական ձևային), կամ՝ *պարտ-ող, չափ-ող, լռ-ող, զարգաց-ող* (քերականական ձևային) և *ծն-ող, ընտր-ող, գող-ող, գր-ող, ուսան-ող* (բառակազմական ձևային): Վերցնենք այլ շարքեր: *Նախկին, նախնի* բառերում *նախ*-ը արմատ է (հիմնական ձևային), իսկ *նախածաշ, նախընկրական, նախահաշիվ, նախամասնիկ, նախարան* և բազմաթիվ այլ բառերում նախածանց է (բառակազմական ձևային): Նմանապես՝ *սորոր, սորորին, սորորի, սորորանալ* բառերում *-սորոր*-ը հիմնական ձևային է, *սորորգեղնյա, սորորջրյա, սորորերկրյա, սորորադաս, սորորագրել* բառերում՝ բառակազմական երկրորդական ձևային: *Համորեն* («ամբողջ, բոլոր, ամբողջապես»), *համույթ, համայն* կազմություններում *համ*-ը արմատ է, *համընդհանուր, համահայկական, համագյուղացի, համագումար* և շատ այլ բառերում՝ նախածանց:

Ձևայինները լեզվում կարող են հանդես գալ տարբերակներով: Դրա հիմնական պատճառը հնչյունավորությունն է: Այսպես, *մուղ* արմատը բառակազմությանը մասնակցում է երկու ձևով՝ *ջրմուղ, գազամուղ, օդամուղ* և *մղել, մղում, մղան* [*մուղ* և *մ(ը)ղ*], նաև *չեռագիր, մաքրագիր, երկաթագիր, վիպագիր*, բայց *գրիչ, գրային, գրամուլ* [*գիր* և *գ(ը)ր*]: *Կապույր* արմատը կարող է ունենալ երեք տարբերակ՝ *երկնակապույր, կապույտակ, կապույել*: *Կին* հիմնական ձևային

քը նույնպես ունի երեք տարբերակ՝ *քեռեկին, կանացի, կ(ը)նամու*: **Տալ, փվյալ** (հին *փուեսալ*), *սրնփու* բառերում ևս ունենք միևնույն ձևույթի երեք տարբերակներ (*փ, փվ, փու*): Այս տարբերակները լեզվաբանական գրականության մեջ կոչվում են *շևակներ*:

Քառակազմական հիմք

Հիմքը¹¹⁰ բաղադրյալ բառի միջուկային, հիմնական մասն է, որի հետ կապված է տվյալ բառի առարկայական, բառային իմաստը: Հիմքը լեզվական բաղադրյալ միավորի (բարդ, ածանցավոր, բարդա-ծանցավոր բառեր) այն մասն է, որը մնում է նրանից բառակազմական վերջին քայլում [տե՛ս էջ 275-277] ավելացած միավորը (արմատ, ածանց, այլ հիմք) հանելուց հետո:

Հիմքը տարբերվում է արմատից նրանով, որ միշտ ունի խոսքիմասային (կարգաբանական) նշանակություն. արտահայտում է որևէ հիմնական խոսքի մասի իմաստ (գոյականի, բայի, ածականի, մակբայի, թվականի, դերանվան): Այսպես, դժվար կամ գրեթե անհնար է որոշել *գիր* արմատը բայական¹¹⁰ է, թե՞ գոյականական (*գրել* բայի¹¹⁰, թե՞ *գիր* գոյականի արմատն է), սակայն որպես բաղադրյալ բառի հիմք (կամ հիմքի մի մաս) այն ձեռք է բերում կարգաբանական հատկանիշ: *Գրային* «գրին հատուկ, գրին վերաբերող», *գրագյուր* «գիր՝ այբուբեն գտնելը, գրերի գյուտ», *գրադարան* «գրքերի դարան» բառերում այն ունի գոյականի խոսքիմասային (կարգաբանական) իմաստ, իսկ *գրագետ* «կարդալ և գրել իմացող», *գրամոլություն* «գրելու՝ ստեղծագործելու հիվանդագին մղում՝ մոլություն», *գրառում* «այն, ինչ որ գրի է առնվել, գրվել է» բառերում՝ բայական իմաստ: Հիմքը կարող է լինել բաղադրյալ կազմված մեկից ավելի ձևույթներից, որոնցից առնվազն մեկը պարտադիր արմատական է:

¹¹⁰ Տե՛ս Գ. Զսուրյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, էջ 158-161: Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառազիտություն, Երևան, 1984, էջ 245-262: Հովսեփյան Լ., Գրաբարի բառակազմությունը, Երևան, 1987, էջ 60-94:

Հիմքը տարբերվում է նաև բառից. այն չունի ինքնուրույն գործածություն, կոնկրետ բառային իմաստ ու ձևային ավարտվածություն և լեզվում գոյություն ունի միայն որպես բաղադրյալ բառի մաս:

Բերենք բառակազմական հիմքի որոշման օրինակներ: **Գրական** բառի հիմքը $q(p)r//qhr$ -ն է [**գր+ական**], **գրականագետ** բառի հիմքը **գրական**-ն է [**գրական(ա) +գետ**], **գրականագիտություն** կամ **գրականագիտական** բառերի հիմքն է **գրականագիտ**//**գրականագետ**-ը [**գրականագիտ+ական, գրականագիտ+ություն**]: **Քաղաքացի** բառի հիմքը **քաղաք**-ն է [**քաղաք+ացի**], **քաղաքացի** ձևը իր հերթին հիմք է դառնում **քաղաքացիական** ածականի համար [**քաղաքացի+ական**], սրանից էլ սերում են **քաղաքացիականություն** գոյականը [**քաղաքացիական+ություն**] և **քաղաքացիորեն** մակբայը [**քաղաքացի+որեն**] և այլն:

Բարդ բառերում երկու բաղադրիչներն էլ համարվում են հիմքեր, այսպես՝ **երկաթուղի** բառի հիմքերն են **երկաթ**-ը և **ուղի**-ն, **փշալար** բառինը՝ **փուշ** // **փշ(ա)** և **լար, գրքատեր** բառինը՝ **գիրք** // **գրք(ա)** (և ոչ թե **գիր**, որը այդ բառի արմատներից մեկն է) և **սեղ, սառցադաշտագիտություն** բառի հիմքերն են **սառցադաշտ(ա)** և **գիտություն** (չշփոթել **սառ, դաշտ, գետ** արմատների հետ):

Ըստ կազմության՝ բառակազմական հիմքերը բաժանվում են երկու խմբի՝ **պարզ** և **բաղադրյալ**: **Պարզ հիմքերը** համաժամանակյա տեսանկյունով բառակազմորեն այլևս անվերլուծելի են և համընկնում են արմատների հետ, ինչպես ընդգծվածները հետևյալ բառերում՝ **լավություն, վագել, զինվոր, բուսական, ամենագետ, ջրկիր (ջր+կիր), գրասենյակ** և այլն: **Բաղադրյալ հիմքերը** կազմված են մեկից ավելի ձևաբաններից, որոնցից առնվազն մեկը արմատական է: Դրանք բառակազմորեն վերլուծելի են: Բաղադրյալ հիմքերը կարող են լինել ածանցավոր կամ բարդ բառեր և բառակապակցություններից առաջացած ձևեր, ինչպես՝ ածանցավոր՝ **դպրոցական (դպիր+ոց), անհոտություն (ան+հոյս), երգչախումբ (երգ+իչ)**, բարդ՝ **այգեգործություն (այգի+ա+գործ), գրադարանավարուհի (գր+ա+դարան+ա+վար)**, բառակապակցություն՝ **արևմտամերձայն (Արևմտյան Եվրոպա), հատակմաքրիչ (հատակը մաքրել), երրորդմասցի (Երրորդ մաս)** և այլն:

Հիմքերը կարելի է բաժանել նաև այլ երկու խմբերի՝ *անփոփոխի* և *փոփոխվող*:

Անփոփոխի հիմքերը բառակազմության ընթացքում որևէ փոփոխության չեն ենթարկվում, միշտ նույն կազմն ու ձևն ունեն (հաշվի չի առնվում շեշտադրվումը, քանի որ հայերենում շեշտը իմաստատար-բերակիչ դեր չունի), ինչպես՝ *անգործ, գործունյա, համագործակցություն. լավություն, բարելավել. սպիտակել, կաթնասպիտակ. եպիսկոպոսական* և այլն:

Փոփոխվող հիմքերը բառակազմության ժամանակ կարող են ենթարկվել այլևայլ ձևափոխությունների: Թվարկենք փոփոխվող հիմքերի տեսակները:

1) *Հնչյունափոխական հիմքեր*. ենթարկվում են շեշտափոխական հնչյունափոխության՝ *կապույտակ* (*կապույտ, ույ>ու*), *կապրել* (*կապույտ, ույ↓*), *կարվ(ա)խոյ* (*կարու, ու>վ*), *զնել* (*զին, ի>ը*), *քաղքենի* (*քաղաք, ա↓*) և այլն:

2) *Բառակապակցական հիմքեր*: Առաջանում են բառակապակցություններից, ինչպես՝ *Ջրօրհներ* (*ջուրը օրհները*), *կիրակնօրյա* (*կիրակի օրը*), *հեռահար* (*հեռու հարվածող*), *չորսհատրանոց* (*չորս հատոր*), *մեկդարյա* (*մեկ դար*), *նորարեշցի* (*Նոր Արեշ*) և այլն:

3) *Բառաշևալին հիմքեր*: Կազմվում են նախահիմք բառի հարացուցային որևէ ձևից. *մարդկություն* (*մարդ – մարդիկ* հոգնակիի ձևից), *գարնանալին* (*գարուն – գարնան* սեռական-տրականի հոլովածևից), *քեռայր* «բրոջ ամուսինը» (*քույր (<քոյր)* բառի գրաբարյան սեռական-տրականի *քեռ* ձևից), *մորաքույր* (*մայր – մոր* սեռական-տրականից), *կայարան* (*կա (<կալ)* ներկայի եզակի երրորդ դեմքի ձևից (*կամ, կաս, կա*)), *ձերունք* (*դուք – ձեր* հոգնակի սեռականի ձևից), *մեղսագործ* (*մեղք – մեղս* գրաբարյան հոգնակի հայցականի ձևից) և այլն:

4) *Հավելաարարային հիմքեր*: Մրանք իրենց կազմում ունեն լրացուցիչ միավոր, որը չկա բառի արդի արմատում և որը ավելանում է բառակազմության գործընթացում: Հավելատարարային հիմքում կարող են լինել:

ա) Ա հոդակապը, որը բառակազմական վերլուծության ժամանակ կցվում է ձախակողմյան հիմքին, օրինակ՝ **սեղանա** /*փուն*, **հենա** / *զգացություն*, **սիրա** / *սուն*, **միամիրա** / *բար* և այլն:

բ) Յ ձայնակապը *ա*-ով և *ո*-ով վերջացող հիմքերում, երբ վերջիններին աջից ավելանում է ձայնավորով սկսվող միավոր: Սա նույնպես կցվում է ձախակողմյան հիմքին, օրինակ՝ **արքաա** / *ական*, **կրկիաա** / *ուրյուն*, **կրկեղա** / *անա*: Ավելի հաճախ ձայնակապը և հոդակապը ավելանում են միաժամանակ, միևնույն բառում, ինչպես՝ **բարոյա** / *զուրկ*, **ընծաա** / *փու*, **արքայա** / *փոհն*, **ծառայա** / *միտ* և այլն:

գ) Բառակազմության ժամանակ գրաբարյան **ն** վերջնահնչյունը կորցրած բառերում (և ոչ միայն միավանկ) այն հիմնականում վերականգնվում է, ինչպես՝ **դռն** / *ակ*, **գառն** / *ուկ*, **եզն** / *արած*, **մկն** / *դեղ*, **չեռն** / *ածու*, **ադամնա** / *չե*, **ուսումնա** / *սիրել*, **գազարնա** / *ժողով* (վերջին երեք դեպքերում կա **ն** վերջնահնչյունի և **ա** հոդակապի միաժամանակյա հավելում) և այլն:

դ) Մի քանի փոխառյալ բառերից (նաև օտար հատուկ անուններից) կազմված քաղաղություններում ավելանում են ինչ-ինչ տարրեր, որոնք բացատրվում են հենց փոխաստու լեզուների օրինաչափություններով և չեն կարող մեկնաբանվել հայերենով. հայախոսը դրանք պետք է իմանա իր նախորդ փորձից և կամ նայի բառարանում, օրինակ՝ **բյուջե** – **բյուջեք** / *ային*, **սյուժե** – **սյուժեք** / *ային*, **կաբարե** – **կաբարեք** / *ային*, **Էբեր** – **Էբերք** / *խար* (Ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակների քաղաքական մի շարժման կողմնակից. առաջնորդի՝ Ժակ-Ռենե Էբերի (ֆրանսերեն՝ Hébert) անունից), **Բիրնա** (Մյանմա պետության հնացած անվանումը) – **բիրնան** / *երեն*, **բիրնան** / *ացի* (կա նաև **բիրնացի** ձևը):

5) Բառակազմության ժամանակ նկատելի է նաև հակառակ երևույթը, երբ արմատի (բառի) որոշ միավորներ դրանից կազմված հիմքում ընկնում են: Այս դեպքում ունենում ենք **սղարարային հիմքեր**: Հնչյունի կամ հնչյունախմբի անկում նկատվում է հիմնականում հետևյալ դեպքերում.

ա) հայերենի **ի**-ով վերջացող բառերում երբեմն այդ **ի**-ն ընկնում է, ինչպես՝ *բշնամի* – *բշնամ* /*ուրյուն*, *բշնամ* /*անալ*, *կենդանի* – *կենդան* /*ական*, *փոշի* – *փոշ* /*ուր* և այլն (չշփոթել *ի + ա > և* հնչյունափոխության հետ. *գարի+ա+ջուր* > *գարեջուր*, *ոսկի+ա+գույն* > *ոսկեգույն* և նման բառերում հնչյունի անկում չկա)։

բ) օտար *-իս* և *-նս* (*-իս*, *-ես*) ածանցներով կազմված բառերում նկատվում է այդ ածանցների անկում բառակազմության ժամանակ, ինչպես՝ *Գերմանիա* – *գերման* /*ական*, *գերման* /*երեն*, *գերման* /*ացի*, *Իրալիա* – *իրալ* /*ացի*, *Ֆրանսիա* – *ֆրանս* /*երեն* (բայց՝ *Ֆրանսիա* /*ցի*, *Դանիա* – *դանիա* /*ցի*, *Անգլիա* – *անգլիա* /*ցի*), *Հոմերոս* – *հոմեր* /*ական*, *Կիպրոս* – *կիպր* /*ական*, *կիպր* /*ացի* (կան նաև *կիպրոսյան*, *կիպրոսցի* ձևերը), *Եգիպտոս* – *եգիպտ* /*ական*, *Պոնոս* – պոնոտացի, օվկիանոս – *անդրօվկիան* /*յան* (նաև *անդրօվկիանոսյան*) և այլն։

գ) Օտար ծագում ունեցող անեզական հատուկ անուններից կազմված ածականներում և գոյականներում սղվում է հոգնակիակերտ վերջավորությունը, ինչպես՝ *Ֆիլիպիններ* – *ֆիլիպինյան*, *ֆիլիպինցի*, *Անդրկարպատներ* – *անդրկարպատյան*, *Ալյեր* – *ալյյան*, *ալպիական* և այլն։

դ) Սղատարրային հիմքեր են առաջանում նաև այն դեպքում, երբ հիմքից ընկնում, կորչում է որևէ ածանց, բայց պահպանվում է դրա իմաստը, ինչպես՝ *դժոխ* /*ային* «դժոխքին բնորոշ, դժոխքի», *քմ* /*ային* «քիմքին բնորոշ, քիմքում կազմավորվող»։ Կամ՝ *քազուհի* նշանակում է ոչ թե «իգական սեռի թագ», այլ «*քազավորի* կին կամ կին *քազավոր*» (*-ավոր* վերջածանցի սղում)։ Առավել հաճախ կատարվում է *-ություն* ածանցի անկում, սղում, ինչպես՝ *կենդանաբանություն* – *կենդանաբան* /*ական* «կենդանաբանությանը հատուկ, կենդանաբանության (նաև կենդանաբանին հատուկ, կենդանաբանի)», *ծառայություն* – *ծառայ* /*ական* «1. ծառայության մեջ գտնվող, ծառայող, 2. ծառայության հետ կապված, ծառայությունից՝ պաշտոնից բխող (իհարկե, նաև «ծառային հատուկ, ծառայի)», *հոգեբանական*, *լեզվաբանական*, *ռազմագիտական* և այլն։

Իսկական բարդությունների երկու հիմքերը կոչվում են *սերող* (ձախակողմյան) և *քաղաղրող* (աջակողմյան)¹¹¹: Օրինակ՝ *արուրավայր* բառի սերող հիմքն է *արուր/ւ*, բաղադրողը՝ *վայր*, *զլիսարաց* բառի սերող հիմքն է *զլի/ւ*, բաղադրողը՝ *բաց*: Նմանապես՝ *հոսանքափոխարկիչ* բարդության սերող հիմքը կլինի *հոսանք/ւ*, իսկ բաղադրողը՝ *փոխարկիչ*: Իսկական բարդությունների հիմնական իմաստը արտահայտում է բաղադրող հիմքը, իսկ սերող հիմքը դառնում է նրա լրացումը, երբ այդ բառը փոխակերպում ենք բառակապակցության, ինչպես՝ *դասասենյակ* «դասի սենյակ, դաս պարապելու սենյակ», *արագավագ* «արագ վագոլ», *երկնասրաց* «(դեպի) երկինք սլացող», *դպրոցաներձ* «դպրոցին մերձ՝ մոտ (զտնվող)», *վերնահարկ* «(շինության) վերին՝ վերևի հարկը» և այլն:

Բառակազմական փունջ (բուն)

Բառակազմական փունջը կամ *բառակազմական բունը* ընդհանուր նախատիպ (բառ կամ կախյալ արմատ) ունեցող բաղադրյալ բառերի հավաքական ամբողջությունն է: Բառակազմական փնջում բառերի հարաբերությունը կարգավորվում է բառակազմական պատճառաբանվածությամբ: Բառակազմական փնջի մեջ մտնող բառերը ունեն ոչ միայն ձևային ընդհանրություն (միևնույն արմատը), այլև իմաստային առնչակցություններ՝ պայմանավորված այդ ընդհանուր արմատի նշանակությամբ¹¹²: Հմտ. *դաս – դասային, դասական, սպորտդաս, սպորտդասական, ենթասպորտդասական, դասարան, դասարանցի, համադասարանցի, դասընկեր, դասընկերուհի, դասավորել, դասավորություն, դասախոս, դասախոսական, դասախոսություն, դասացուցակ, դասագիրք, դասագրքային, դասդասել* և այլն:

¹¹¹ Տե՛ս *Աղայան Էդ.*, Ընդհանուր և հայկական բառագիտություն, էջ 247-248:

¹¹² Տե՛ս *Գալստյան Ս.*, Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ, Երևան, 2003 («Բառակազմության ներածություն (հիմնական հասկացություններ)» հատվածը, էջ 102-114): Русская грамматика, том I. Москва, 1980, § 194; *Тихонов А.Н.*, Современный русский язык. Морфемика. Словообразование. Морфология. Москва, 2002, ст. 114-120.

Բառակազմական փնջում յուրաքանչյուր բառ ունի իր որոշակի տեղը և դիրքը, որը պայմանավորված է լեզվի համակարգով և ամրագրված է լեզվական նորմով¹¹³: Փնջում բոլոր բառերը գտնվում են բառակազմական հարաբերությունների մեջ: Նրանում արտացոլվում է հայերենի բառակազմության աստիճանակարգությունը (հիերարխիան). յուրաքանչյուր նախորդ բառ դառնում է հաջորդի սերող հիմքը, ինչպես՝

առաջ
առաջին
առաջնորդ
առաջնորդական
առաջնորդականություն

կամ՝
գումար
համագումար
համագումարային
նախահամագումարային

կամ էլ՝
գիրկ
գրկել
ընդգրկել
ընդգրկելի
անընդգրկելի
անընդգրկելիություն և այլն:

Յուրաքանչյուր բառակազմական փունջ գլխավորում է *ելակերպային բառը* (կոչվում է նաև *բառակազմական փնջի գազաթ*): Այն պարզ կամ համաժամանակյա դիտանկյունով այսօր որպես այդպիսին գիտակցվող բառ է և կամ էլ կախյալ արմատ: Ծագումնաբան-

¹¹³ См. у Тихонов А. Н., Современный русский язык. Морфемика. Словообразование. Морфология, с. 114.

որեն բաղադրյալ բառը կարող է լինել բառակազմական փնջի գագաթ միայն այն դեպքում, եթե խզված է նրա արդի նշանակության և իր ստուգաբանական արմատի իմաստային կապը: Օրինակ, **սոսաջ** («երեսի դիմացը գտնվող կողմը, առջևի կողմը») բառը կարող է լինել փնջի գագաթ, քանի որ այսօր մթագնել է նրա կապը ստուգաբանական արմատի հետ (**սաջ** «ձախի հակառակ կողմը», հնում **սառ սաջ** «դեպի աջ, դեպի ձախի հակառակ կողմը»):

Բառակազմական փնջի նվազագույն միավորը *բառակազմական զույգն* է՝ նախատիպ բառը կամ արմատը և նրանից կազմված նոր բառը, օրինակ՝ **իշխան**→**իշխանավոր**, **իշխան**→**իշխանական**, **իշխան**→**իշխանամուկ**, **իշխան**→**իշխանագուրկ**, **իշխան**→**ինքնիշխան** և այլն:

Առավել մեծ միավոր է *բառակազմական շղթան* (կամ *շարքը*): Սա հաջորդական բաղադրականությամբ կապված բառերի շարքն է, ինչպես՝ **իշխան** → **իշխանավոր** → **իշխանավորական** → **իշխանավորականություն**, կամ՝ **զույն**→**զունանկար**→**զունանկարել**→**զունանկարիչ**→**զունանկարչություն**→**զունանկարչական** (վերջին բառը կարող է ընկալվել երկակի պատճառաբանվածությամբ, ունենալ երկակի սերում՝ «զունանկարչությանը հատուկ, զունանկարչության» և «զունանկարչին հատուկ, զունանկարչի»): Բառակազմական շղթայի յուրաքանչյուր գույգ կոչվում է *բառակազմական շղթայի օղակ*, այսպես՝ **սզգ**→**սզգային**→**սզգայնամուկ**→**սզգայնամուկական**→**սզգայնամուկականություն** շղթայի օղակներն են՝ **սզգ** և **սզգային**, **սզգային** և **սզգայնամուկ**, **սզգայնամուկ** և **սզգայնամուկական**, **սզգայնամուկական** և **սզգայնամուկականություն**:


Ինչպես օրինակներից երևում է, բառակազմական շարքում բառերը կարող են գտնվել ինչպես անմիջական, այնպես էլ միջնորդավորված՝ անուղակի հարաբերության մեջ: Այսպես՝ վերոհիշյալ շարքում **սզգ** և **սզգային**, ինչպես նաև **սզգային** և **սզգայնամուկ**, **սզգայնամուկ** և **սզգայնամուկական** գույգերը գտնվում են անմիջական ուղղակի բառակազմական կապի մեջ, իսկ **սզգ** և **սզգայնամուկ**, **սզգայնամուկ** և **սզգայնամուկականություն** բառերի կապը անմիջական չէ. առաջին գույգը միջնորդավորված է **սզգային**, իսկ երկրորդը՝ **սզգ**

գայնամոլական կազմությամբ: Յուրաքանչյուր օղակի բառագույգ գտնվում է որոշակի կառուցվածքային և իմաստային հարաբերության մեջ: Կառուցվածքորեն սրանց ընդհանրությունը երևում է միևնույն արմատի (և հիմքի) գոյությամբ: Երկրորդ եզրն ուղղակի իր կազմում ունի մի լրացուցիչ բառակազմական միավոր (արմատ կամ բառակազմական ձևույթ՝ ածանց): Ընդ որում, առաջին բաղադրիչը կարող է ամբողջությամբ և անփոփոխ մտնել երկրորդի մեջ, ինչպես՝ **ազգայնամոլ**→**ազգայնամոլական**, **կրեւ**→**ներկրեւ**, **դեղ**→**դեղագործ**, **դեղագործ**→**դեղագործություն** և այլն: Այն կարող է ենթարկվել նաև այլևայլ հնչյունափոխությունների՝ **ազգային**→**ազգայնամոլ**, **պուն**→**պնական**, **բեռնակիր**→**բեռնակրություն**, **սառույց**→**սառցալեռ** և այլն: Նման դեպքերում մենք համարում ենք, որ առաջին բաղադրիչը նույնությամբ է մտել նոր կազմության մեջ, քանի որ այդ հնչյունափոխությունները հիմքի իմաստային փոփոխության չեն հանգեցնում:

Այսպիսով, կարող ենք ասել նաև, որ բառակազմական փունջը միևնույն ելակետային բառից կազմված բառակազմական շղթաների ամբողջությունն է¹¹⁴:

Բերենք **դեւ** կախյալ արմատն իբրև գագաթ ունեցող բառակազմական փունջը (ոչ ամբողջությամբ).

¹¹⁴ Միայն պետք է հիշել, որ բարդ և բարդաձանցավոր բառերը մտնում են միանգամից երկու կամ ավելի (ըստ իրենց արմատների թվի) բառակազմական փնջերի մեջ:



Նույնարմատ բառերի կառուցվածքային և իմաստաբանական կապերը լեզվում սովորաբար ունեն կանոնավոր կրկնվող բնույթ: Սա բխում է լեզվի կառուցվածքի (այդ թվում և բառակազմության) համակարգայնությունից, որն էլ հնարավորություն է տալիս առանձնացնելու բառերի բառակազմական նշանակությունները: Այսպես, ինչպիսի հարաբերություն կա **գուն** և **գնային** («1. տանը վերաբերող՝ հատուկ, տան, 2. տանը կազմակերպվող՝ կատարվող, 3. տանը ապրող՝ պահվող, 4. տանը հազնելու՝ կրելու համար, 5. տանը պատրաստված» և այլն) բառերի միջև, նույնպիսի հարաբերություն գո-

յություն ունի նաև միևնույն կառուցվածքն ունեցող («*տեղ ցույց տվող գոյականական արմատ + -ային ածանց*») մյուս բառերում. **Անպառաջին** («1. անտառին հատուկ, 2. անտառում գտնվող, 3. անտառում ապրող՝ աճող, 4. անտառի համար նախատեսված՝ սահմանված՝ գործող» և այլն), **ջրային** («1. ջրին հատուկ՝ վերաբերող, ջրի, 2. ջրում աճող, ջրի մեջ բուսնող և աճող, 3. ջրում ապրող, ջրակյաց, 4. ջրում կատարվող՝ տեղի ունեցող՝ անց կացող» և այլն), **ծովային, օդային, դաշտային, քաղաքային, փողոցային, սենյակային** և այլն: Կամ՝ *վեր-* նախածանցով բայերի իմաստները. **վերաբացել, վերալիցքավորել, վերաբաշխել, վերաբացապրել, վերաբեմադրել, վերաբնակվել, վերազնահասպել** և այլն. «նախատիպի արտահայտած գործողությունը վերստին, նորից, երբեմն էլ նոր ձևով կատարել»¹¹⁵:

Այս համակարգայնությունը հնարավորություն է տալիս կազմելու բաղադրյալ բառերի *բառակազմական բանաչևերը* և վեր հանելու, բացահայտելու նրանց *բառակազմական նշանակությունները*: Այսպես, ելնելով հետևյալ բառերի բաղադրիչների կառուցվածքային կապերի տեսակներից և իմաստային ընդհանրություններից, կարող ենք բանաձևել դրանց բառակազմական կաղապարները և նշել բառակազմական իմաստները. **հայրաբար, եղբայրաբար, իշխանաբար, միջնորդաբար, ծերունաբար** [*«անձի հասարակ անուն գոյական + (ա)բար*» = «իբրև նախատիպի գոյականը, նախատիպի գոյականի վարվելու ձևով»], **հուդայաբար, վասակաբար** բառերը կազմված են ոչ թե անմիջապես հատուկ անուններից, այլ դրանց փոխաբերական նշանակություններից]: Կամ էլ՝ «*գոյ. + ավորել [ավոր + (ե)լ]*» կաղապարով կազմվում են բայեր՝ *օժտելու ընդհանուր բառակազմական նշանակությամբ՝ պարենավորել, ֆինանսավորել, երանգավորել, դասավորել, կահավորել, նորմավորել* և այլն:

¹¹⁵ Այս և այլ ածանցավոր կազմությունների բառակազմական իմաստները տես *Գալստյան Ս. Ա.*, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1978:

Քառակազմական պատճառաբանվածություն (մոտիվացիա)

Պատճառաբանվածությունը կամ *մոտիվացիան* բառի հնչման և իմաստի պատճառաբանված կապն է: Պատճառաբանվածությունը լավ է երևում բաղադրյալ կառույցներում (ածանցավոր, բարդ, բարդածանցավոր բառեր, ինչպես նաև բառակապակցություններ), քանի որ դրանց նշանակությունները գրեթե միշտ հնարավոր է բացատրել այդ բառերի (կամ բառակապակցությունների) բաղադրիչների իմաստներով: Լեզվական պարզ միավորների բառային բուն նշանակությունների պատճառաբանվածությունը հստակ չի գիտակցվում, այսօր մթագնած է:

Բառերի պատճառաբանվածությունը ունի տարբեր տեսակներ, ինչպես նաև աստիճաններ¹¹⁶: Լեզվի համակարգում բառերը կարող են ունենալ *բացարձակ (արտաքին)* և *հարաբերական (ներքին)* պատճառաբանվածություն: Երբ բառի իմաստը անմիջականորեն պայմանավորված է օբյեկտիվ իրականության երևույթների արտացոլմամբ, ունենք *բացարձակ* կամ *արտաքին պատճառաբանվածություն*: Սա կոչվում է նաև *հնչյունական պատճառաբանվածություն* և համեմատաբար քիչ է տարածված ժամանակակից լեզվում: Մրանք ձայնարկությունները և բնաձայնություններն են, մի մոտեցմամբ՝ նաև դրանց հիման վրա ստեղծված բառերը (*չրրիկ, դրրիկ, զրնգ, փրզզ* և *չրիկոց, դրիկալ, զնգալ, զնգոց, փրզոց*, նաև *վա՛յ – վայե, ա՛խ – ախ բա՛շե, օ՛ֆ – օֆ ա՛նել* և այլն): *Հարաբերական* կամ *ներքին պատճառաբանվածությունը* ունի երկու հիմունք՝ *ձևույթաբանական* *պատճառաբանվածություն* և *իմաստաբանական* *պատճառաբանվածություն*: Հարաբերական մոտիվացիայի ժամանակ բառերի իմաստները պատճառաբանվում են լեզվում արդեն գոյություն ունեցող այլ բառերի (արմատների) միջոցով: *Ձևույթաբանականի* դեպ-

¹¹⁶ Հմմտ. *Աղայան Էդ. Բ.*, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 28-35: *Ульманн С.*, Семантические универсалии // Новое в лингвистике, вып. V. Москва, 1970, с. 225, *Улханов И.С.*, Словообразовательная мотивация и ее виды // Известия АН СССР, Серия литературы и языка, 1971, вып. 1, том XXX, с. 37-46; նույնի Мотивация в словообразовательной системе русского языка, Москва, 2005, с. 6-18; *Гак В.Г.*, Сопоставительная лексикология, Москва, 1977, с. 34-35.

քում բառիմաստը մեծ մասամբ բխում է բաղադրյալ բառի առանձին ձևային իմաստներից, նրանց հանրագումարն է: Այսպես, ձևային պատճառաբանվածություն ունեն հետևյալ օրինակները՝ **կչկչան, փնթփնթան, զնզնզան, բզզան, խշշան**. «բնաչայնական բառ + -ան վերջածանց (աժականակերտ կիրառությամբ)» = «նախատիպի ցույց տված ձայնային հատկանիշը ունեցող», **քիվածքեղեն, գոհարեղեն, բրդեղեն, մեղաքսեղեն, բուսեղեն**. «գոյական + -եղեն վերջածանց (գոյականակերտ կիրառությամբ)» = «նախատիպի նշված առարկայի կամ նրա ցույց տված նյութից պատրաստված առարկաների տեսակային ամբողջություն», **հայտի, չինոտի, վանոտի, եվրոպոտի, պարոտի, կինոդերասանոտի, ինժեներոտի, աշխատակցոտի, կայսրոտի**. «գոյական (հասարակ կամ հարուկ) + -ոտի վերջածանց» = «անձի անուն՝ իգական բնական սեռի նշանակությամբ», նույն ածանցը աժականներից կազմում է «նախատիպի ցույց տված հատկանիշը ունեցող կին» նշանակությամբ գոյականներ («ածական» + -ոտի»), ինչպես՝ **ծանոթոտի, գեղեցկոտի, օգտորոտի, համեստոտի, քաղքենոտի, լրբոտի**: Իմաստաբանական պատճառաբանվածությունը լավ երևում է բառակազմական շրթայում: Յուրաքանչյուր օղակի նախորդ բառը իր իմաստներից մեկով կամ մի քանիսով (հազվադեպ՝ բոլոր իմաստներով) մտնում է հաջորդ՝ նոր կազմված բառի մեջ, ինչպես՝ **խանդ** «հոգեկան տանջալից ապրում՝ հուզում մեկի հավատարմության՝ նվիրվածության՝ սիրո նկատմամբ ունեցած կասկածից կամ վիաստից» → **խանդոտ** «խանդի զգացում ունեցող, հեշտությամբ խանդի ազդեցության ենթարկվող» → **խանդոտություն** «1. Խանդոտ լինելը: 2. Խանդոտի հատկանիշը», կամ՝ **հույզ** «հոգեկան ապրում, զգացմունք» → **հուզական** «1. Հուզվող, բուռն հուզմունք՝ հույզեր ապրող, ալելիծվող: 2. Բուռն հույզեր պարունակող՝ արտահայտող» → **հուզականորեն** «հուզական կերպով» և այլն:

Լեզվաբանական գրականության մեջ ընդունված է նաև պատճառաբանվածության բաժանումը *ուղղակի* և *անուղղակի* տեսակների: *Ուղղակի* պատճառաբանվածության դեպքում բառը կազմող բաղադրիչները լեզվում գոյություն ունեն, կիրառվում են ինքնուրույնա-

բար, ազատ են: Այդպես է բաղադրյալ բառերի մեծ մասում՝ *ծովակ* «փոքր ծով (ըստ *-ակ* ածանցի նվազական նշանակության)», *գրիչ* «գրելու գործիք (ըստ *-իչ* ածանցի նշանակություններից մեկի. *գիր* > *գ(ր)ր* հնչյունափոխությունը հաշվի չենք առնում), *հասպճեպորեն* «հասպճեպ կերպով (ըստ *-որեն* ածանցի նշանակության)», *դասական*, *քնորդուհի*, *ամառային*, նաև *ճաշասեղան*, *դասասենյակ*, *հովանոցաշէ*, *կապրակարմիր* և այլն: Մրանց բաղադրիչները լեզվում գոյություն ունեն իբրև ինքնուրույն միավորներ (արմատական բառեր են և ածանցներ):

Անուղղակի պատճառաբանվածության դեպքում բաղադրյալ բառի միավորներից մեկը (արմատը կամ արմատներից մեկը, եթե բարդ բառ է) լեզվում ինքնուրույն միավոր չէ, կապված կամ կախյալ ձև է: Նման արմատ ունեցող բառերի իմաստները մենք պատճառաբանում ենք ոչ թե ուղղակիորեն համեմատելով բաղադրյալ բառը և իր արմատը (ինչպես նախորդ դեպքում էր), այլ համեմատելով միևնույն արմատից կազմված բառերը միմյանց հետ: Բառահիմքի իմաստը մակաձում ենք նույնարմատ բառերի շարքի ընդհանուր իմաստից ելնելով: Օրինակ՝ *մարզել*, *մարզիչ*, *մարզիկ*, *մարզուհի*, *մարզական*, *մարզասեր*, *մարզագգեստ*, *մարզագույք*, *մարմնամարզիկ* և այլն (*մարզ* արմատական բառ (որպես սպորտի հետ կապված հասկացություն) հայերենում չկա): Նմանապես՝ *պարծենակ*, *պարծանք*, *պարծենկոտ*, *սնապարծ*. *հեզնական*, *հեզնանք*, *հեզնեկ*, *հեզնուր*, *հեզնականորեն*, *հեզնաշայն*, *հեզնաժպիտ*, *հեզնախառն*. *գովել*, *գովական*, *գովելի*, *գովասանք*, *գովաբանություն*, *ինքնագով*, *գլուխգովան*, *գովերգել* և այլն:

Պարճառաբանող հարկանիչը: Առարկան անվանելիս առանձնացվում է նրա բազում հատկանիշներից մեկը (հազվադեպ՝ երկուսը), ընդ որում մեծ մասամբ ամենաէականը, տվյալ առարկային ամենաբնորոշը: Օրինակ՝ *զանգակածաղիկ* բուսանվան մեջ ծաղկի մի քանի հատկանիշներից (գույնը, չափը, հոտավետությունը, ծաղկելու ժամանակը, օգտակարությունը կամ մոլախոտ լինելը և այլն) առանձնացված է ամենաբնորոշը՝ զանգակածև ծաղիկ ունենալը, որը և ընկած է անվանման հիմքում: Կամ *կոսմանի* զենքի, իսկ այսօր

առավելապես գյուղատնտեսական գործիքի, անվանման հիմք է ծառայել գործիքի ամենացայտուն արտաքին հատկանիշը՝ երեք ժանիք՝ սուր ծայր ունենալը (և ոչ թե, ասենք, չափը, նյութը, որից պատրաստված է, և այլն): Կամ էլ՝ գեղեցկախոսին, ճարտասանին, մեծարվեստ հռետորին բնորոշող **նսկեբերան** մակդիրի իմաստային հենքը **նսկի**, **նսկե** բառերի փոխաբերական նշանակությունն է՝ «իր արժանիքներով՝ հատկություններով հիանալի, լավագույն, գերազանց, հիասքանչ, շքեղ, պերճ»:

Սակայն անվանման հիմքում կարող է ընկնել առարկայի նաև ոչ ամենաէական, ամենաբնորոշ, յուրահատուկ հատկանիշը: Օրինակ՝ կենդանիների փոխաբերական անվանումներում լավ է երևում այդ հատկանիշի ընտրությունը՝ **ծուռքաթ** - «արջ», **շլղիկ**, **երկարականջ** - «նապաստակ» (երկար ականջներ ունենալ, երկարականջ լինել կարող են նաև այլ կենդանիներ, ասենք՝ ավանակը), **մոխրաթավալ** - «էշ», **ծաղկաթավալ**, **ծաղկակոխ** «գայլ», **ջրխոթան** (բրբ.) «ձկնկուլ» և այլն:

Անվանման հիմքում կարող են լինել տարբեր հատկանիշներ: Թվարկենք ամենատարածվածները¹¹⁷.

ա) Առարկայի, երևույթի գույնը՝ **կանաչի** «կանաչեղեն, սննդի համար գործածվող բանջարանոցային բույսեր», **բոցահալ** «արևադարձային և մերձարևադարձային ջրային թռչուն՝ բոցագույն փետուրներով՝ երկար վզով ու ոտքերով, կարմրաթևիկ (ֆլամինգո)», **դեղնուց**, **կարմրուկ**, **արջնագռավ** (**արջն** «սև») և այլն:

բ) Մյուս առավել աչքի ընկնող հատկանիշը առարկայի կամ նրա մի մասի ձևն է: Ինչպես՝ **բաղակցուց** «ձվածին կաթնասունների ենթակարգին պատկանող կենդանի, որի դունչը վերջանում է լայն ու տափակ կտուցով (բաղի կտուցի նման)», **քնարահալ** «ճնճղազգիների դասին պատկանող թռչուն՝ մուգ մոխրագույն փետուրներով ու քնարածկ պոչով, քնարատուտ», **աքլորակապար** «մի տեսակ բույս,

¹¹⁷ Հմմտ. *Маслова-Лаишанская С. С.*, Из заметок по шведской лексикологии // Ученые записки Ленинградского гос. университета, № 243, Серия филологических наук, вып. 42, Очерки по лексикологии, фразеологии и стилистике, II, Ленинград, 1958, с. 27-28.

որի ծաղիկը նման է աքլորի կատարի», արդեն վերևում նշված **զան-զակածաղիկ**-ը, **սողաչուկ**, **քրաշուշան** և այլն:

զ) Գտնվելու տեղը՝ **մակերիկամ** «իբ գոգավոր հիմքով երիկամի վերին բևեռի վրա նստած կիսալուսնաձև ներզատիչ գեղձ», **կողաշենք** «շենքի կողքից կառուցված՝ կից շինություն, կցաշենք», **քսա-դակ**, **կայարանամերջ**, **ջրամոյր** և այլն:

դ) Առարկայի նյութը (ինչից պատրաստված լինելը)՝ **գարեհաց** «գարու ալյուրի հաց», **շաքարաջուր** «մեջը շաքար լուծած ջուր», **դահարակամած**, **կավաման**, **երկարակուռ** և այլն:

ե) Առարկայի բնորոշում՝ ըստ նրա կատարած գործողության՝ **վայրկենասլաք** «ժամացույցի վայրկյանները ցույց տվող սլաքը», **ժամասլաք**, **հողմացույց** «կայմի՝ ձողի ծայրին ամրացված թիթեղյա շարժական լեզվակ, որի պտույտով որոշում են քամու ուղղությունը», **ժամացույց**, **ղեկանիվ** «ղեկավարման անիվ», **սրճադագ**, **մերսան** և այլն:

զ) Առարկան որպես որևէ գործողության արդյունք՝ **քանդակ** «որևէ պատկեր կամ զարդ, որ ստացվում է քարը, փայտը կամ այլ կարծր նյութ փորագրելով՝ քանդակելով», **գործվածք** «գործած կտոր, հյուսվածք», **մանվածք** և այլն:

է) Այն որակը, որով օժտվում է առարկան գործողության արդյունքում, կամ որը հատորդվում է առարկային գործողության արդյունքում՝ **փափկեկ**, **փափկանալ** «փափուկ՝ կակուղ դառնալ», **փափկեցնեկ** // **փափկացնեկ** «փափուկ դարձնել», **հարթեկ**, **հարթեցնեկ**, **հարթանալ**, **սրեկ** և այլն:

Որպես պատճառաբանման հիմք՝ որոշակի հատկանիշի ընտրությունը հայտնի չափով ազատ կամ կամայական է: Հենց սա էլ պայմանավորում է միևնույն առարկայի, հասկացության զանազան պատճառաբանումները տարբեր լեզուներում: Ավելին, երբեմն միևնույն առարկան նույն լեզվում ունենում է մի քանի հոմանիշ, որոնք պատճառաբանվում են այդ առարկայի տարբեր հատկանիշներով, օրինակ՝ լատիներենով *Carduelis cannabina* գիտական անվանում ունեցող թռչունը հայերենում կոչվում է երկու հոմանիշներով՝ **կանեփա-կեր** և **կարմրալանջ**: Սրանցից առաջինի համար պատճառաբան-

ման հիմունք է ծառայել թռչունի հիմնական սնունդը, իսկ երկրորդի համար՝ արտաքին տեսքը, մասնավորապես՝ գունավորումը:

Բառակազմական քայլ

Բառակազմական քայլը¹¹⁸ բառակազմության գործընթացում որևէ նոր բաղադրիչի հավելումն է բառակազմական հիմքին:

Բառակազմական քայլի ժամանակ հիմքին միանգամից կարող է ավելանալ միայն մեկ նոր բաղադրիչ՝ արմատ (ինքնուրույն գործածություն ունեցող կամ կախյալ), հիմք (պարզ կամ բաղադրյալ) կամ ածանց, այսինքն բաղադրյալ բառը միշտ կազմված է «բառակազմական հիմք + 1» կաղապարով¹¹⁹: Օրինակ՝ ամառանոց բառը կազմվել է ամառ հիմքին կցելով -անոց ածանցը (հիմք + 1), ամառանոցավայր բառը՝ ամառանոց հիմքին (սերող հիմք) ավելացնելով վայր արմատը (բաղադրող հիմքը) (կրկին՝ հիմք + 1): Բառակազմության գործընթացում նորակերտ բառում կարող են ավելանալ ոչ միայն իմաստակիր միավորներ (արմատներ, ածանցներ կամ ամբողջական բառեր), այլև ոչ իմաստակիր միավորներ՝ հողակապ (*-ս-*) և ձայնակապ (*-յ-*): Սակայն սրանք չեն ավելանում իբրև բառակազմական ինքնուրույն քայլ, այլ բառին (հիմքին) կցվում են իմաստակիր բաղադրիչի հետ միաժամանակ, որպես մեկ միասնական բառակազմական քայլ: Այսպես, արքայական բառում նախ չի ավելացել *յ* ձայնակապը, հետո՝ ածանցը. բառը կազմված է արքա հիմքին ձայնակապի և ածանցի միաժամանակյա հավելումով, կամ էլ՝ մարմաշափ բառի սերող հիմքի (*մար*) -*ն* գրաբարյան վերջնահնչյունը վերականգնվել է հողակապի (*-ս-*) և բաղադրող հիմքի (*-շափ*) հավելմանը զուգահեռ, դրանց հետ միաժամանակ:

¹¹⁸ Տե՛ս *Գալարյան Ս. Ա.*, Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ, Երևան, 2003, էջ 111-114 («Բառակազմության ներածություն (հիմնական հասկացություններ)» բաժնում):

¹¹⁹ Երկու նոր բաղադրիչի միաժամանակյա հավելումը (որպես մեկ բառակազմական քայլ) բնորոշ չէ մեր լեզվին, և հայերենում այդպիսի կազմությամբ բառերը խիստ սակավաթիվ են և հիմնականում բառապատճենումներ են (*ընդծույս, առճակարում, սրորգեղևրևյա, առափնյա* և այլն):

Բառակազմական քայլերը որոշելու համար լեզվաբանական գրականության մեջ առաջարկված է հետևյալ սկզբունքը¹²⁰. բառակազմական քայլերի թիվը միշտ հավասար է բառի իմաստակիր բաղադրիչների թվին՝ մինուս մեկ (այսինքն՝ հանած հիմքը): Այսպես, արքայահանդուքուն բառում կա յոթ բաղադրիչ՝ չորս իմաստակիր (*արքա, հան, ո, ուքուն*) և երեք ոչ իմաստակիր (*յ, ա, յ*), ուրեմն այդ բառը պետք է կազմված լինի բառակազմական երեք քայլով [(7-3)-1=3]:

Պարզ հիմքն է *արքա*.

I քայլ՝ *արքայահան*

II քայլ՝ *արքայահանո*

III քայլ՝ *արքայահանդուքուն*:

Կամ՝ *ածխահանքահոր* բառը կազմված է չորս իմաստակիր (*ածխ (<ածուխ), հան, հոր, ք*) և երկու ոչ իմաստակիր միավորներից (*ա, ա*): Այն կազմված է երեք քայլից [(6-2)-1=3].

Պարզ հիմքն է կախյալ *հան* արմատը.

I քայլ՝ *հանք*

II քայլ՝ *հանքահոր*

III քայլ՝ *ածխահանքահոր*:

Այլ մոտեցմամբ՝

I քայլ՝ *հանք*

II քայլ՝ *ածխահանք*

III քայլ՝ *ածխահանքահոր* (կրկին 3 քայլ):

Լրագրավաճառուհի. իմաստակիր են *լր (<լուր), գր (<գիր), վաճառ, ուհի* (ընդ.՝ 4), ոչ իմաստակիր են 2 հողակապերը [(6-2)-1=3].

Պարզ հիմքն է *գիր*-ը.

I քայլ՝ *լրագիր*

II քայլ՝ *լրագրավաճառ*

III քայլ՝ *լրագրավաճառուհի*

Բաղադրյալ բառերում հիմքը և վերջին քայլում ավելացող միավորը կոչվում են բառի *անմիջական բաղադրիչներ* (*անմիջական*

¹²⁰ Տե՛ս *Գալստյան Ս. Ա.*, նշվ. աշխ., էջ 113:

կազմիչներ), օրինակ՝ սեղանատուն բառի անմիջական կազմիչներն են՝ սեղան/ա և տուն, պարուհի բառինը՝ պար և -ուհի, երգչախմբային բառինը՝ երգչախմբ (ու>ը) և -ային և այլն:

Ձևաբանական և բառակազմական վերլուծություն

Արդի լեզվաբանության մեջ համաժամանակյա բառակազմության համակարգի նկարագրության հիմնական սկզբունքներից մեկը բառի ձևաբանական և բառակազմական կառուցվածքի տարբերությունների հաշվառումն է¹²¹: Բառի՝ ինչերից և ինչպես կերտվելը, տարբեր հասկացություններ են: Բառակազմությունը և բառերի ձևաբանական կազմը միևնույն բառը բնորոշում են տարբեր տեսանկյուններից, բառին տալիս են տարբեր բնութագրումներ: Սրանց քննության առարկաները, նպատակները և, որպես հետևանք, ստացված արդյունքները տարբեր են:

Բառի (բաղադրյալ բառի) ձևաբանական վերլուծությունը պարզում է, թե ինչպիսի՛ք և քանի՛ ձևաբանական կազմաբաղադրիչներ կան տվյալ բառում: Իսկ բառակազմական վերլուծությունը օգնում է հասկանալու, թե ինչպես է կազմվել տվյալ բառը¹²²:

Ըստ ձևաբանական վերլուծության բառը տարրալուծելիս նրանում կարող ենք առանձնացնել մեկից մինչև մոտ մեկ տասնյակ բաղադրիչներ (եթե ունենք բառաձև և հաշվում ենք նաև քերականական ձևաբանականները): Իսկ բառակազմությունը բոլոր բաղադրյալ բառերը փաստորեն երկանդամ

¹²¹ Հմմտ. *Арутюнова Н. Д.*, Проблемы морфологии и словообразования (На материале испанского языка), Москва, 2007, ст. 28. *Ֆելեքյան Մ.*, Բաղադրյալ բառերի ձևաբանական և բառակազմական վերլուծությունների տարանջատումը // Կրթությունը և գիտությունը Արցախում, 2015, № 3-4, էջ 80-84:

¹²² Տե՛ս *Աղայան Էդ. Բ.*, Ընդհանուր և հայկական բառազիտություն, Երևան, 1984, էջ 215-219: *Մարգարյան Ա. Ա.*, Ժամանակակից հայոց լեզու (բառակազմություն, դարձվածաբանություն, բառարանագրություն), Երևան, 1990, էջ 25-27: *Арутюнова Н. Д.*, Проблемы морфологии и словообразования (На материале испанского языка), Москва, 2007, ст. 13-22; *Лопатин В. В.*, Русская словообразовательная морфемика, Москва, 1977, ст. 25-31; *Муссеев А. И.*, Словообразование русского языка, Ленинград, 1985, ст. 57-61:

են, բաժանվում են երկու մասի՝ բառակազմական հիմք և ձևորդ [ֆորմանա]¹²³:

Բառակազմական վերլուծության էությունը նույնարմատ բառերի շարքում պատճառաբանվածության (բաղադրականության) հարաբերությունների որոշումն է:

Բաղադրյալ բառում իմաստակիր միավորների (ձևույթների) առանձնացումը ըստ էության ոչինչ չի ասում կամ շատ քիչ և մոտավոր պատկերացում է տալիս բառի բուն կազմության մասին: Չնույթային տարրալուծմամբ հնարավոր չէ պարզել բառի կազմության եղանակը, որոշել այն կադրապարները, ըստ որոնց կազմվել է տվյալ բառը: Այսպես, հետևյալ բառերը կազմված են միևնույն տեսակի և նույն քանակի ձևույթներից՝ նույնական հերթականությամբ՝ *համազգային* և *ընդհատակյա*, *նախազծային* («ոչ ժխտական նախածանց + գոյականական արմատ + ածականակերտ վերջածանց»), կամ *համերկրացի* և *արտասահմանցի* («ոչ ժխտական նախածանց + գոյականական արմատ + գոյականակերտ վերջածանց»): Չնույթաբանորեն տարրալուծելիս մենք կպարզենք միայն, թե քանի և ինչ տեսակի ձևույթներ կան այդ բառերում և չենք կարողանա ասել, թե դրանք բառակազմական ինչ եղանակով են կազմվել. նախածանցավոր՞ թե՞ վերջածանցավոր բառեր են: Բառակազմական վերլուծության ժամանակ պարզում ենք, թե բառակազմական վերջին քայլում ո՞ր ձևույթն է ավելացել: *Համազգային* բառում վերջին քայլում հավելվել է նախածանցը՝ *համ* + *ազգային* «ամբողջ՝ համայն ազգին վերաբերող», քանի որ լեզվում չկա *համազգ* ձևը, որին կարող էր կցվել վերջածանց: Իսկ *ընդհատակյա* (*ընդհատակ* + *յա* «ընդհատակին հատուկ, ընդհատակում գործող») և *նախազծային* (*նախազծ* (ի>ը հնչյունավորությամբ) + *ային* «նախազծին հատուկ՝ վերաբերող, նախազծի») բառերը վերջածանցավոր են, որովհետև ա-

¹²³ Չնորդը (ֆորմանորդ) բառակազմական վերջին քայլում ավելացված միավորն է, որը մեծ մասամբ որևէ ածանց է կամ հիմք (արմատ): *Գրավչություն* բառում վերջին քայլում ավելացել է վերջածանց [(գրավ+իչ)+**ություն**]. այստեղ ձևորդը -ություն՝ ածանցն է: Իսկ *գրավչադիմ* բառում ձևորդն է *դիմ* արմատը (բաղադրող հիմքը), որն ավելացել է *գրավիչ* սերող հիմքին [(գրավ+իչ)ա+**դիմ**]:

ուաջին դեպքում չունենք *հարակյա* նախահիմքը, իսկ երկրորդ դեպքում թեև լեզվում կա *զծային* ածականը, սակայն այն ունի այլ իմաստ, որից չի կարող կազմվել *նախազծային* բառը (այլապես այն կնշանակեր «զծայինին նախորդող»): Նմանապես՝ *համերկրացի* գոյականը նախածանցավոր է. *համ* + *երկրացի* «միևնույն երկրից, նույն երկրում ծնված կամ ապրող», չունենք *համերկիր* ձևը: Իսկ արտասահմանցի գոյականը վերջածանցավոր է. *արտասահման* + *ցի* «արտասահմանյան երկրի քաղաքացի», այս դեպքում էլ չկա *սահմանցի* ձևը:

Խնդիրը նույնն է նաև բարդ և, այսպես կոչված, բարդածանցավոր բառերի պարագայում: Այսպես, թեև *թռչնավաճառք* բառում ձևույթային վերլուծությամբ առանձնացնում ենք *-չ*, *-ուն* և *-ք* ածանցները *թռչ+չ+ուն+ա+վաճառ+ք*, սակայն չի կարելի ասել, թե այն ածանցմամբ է ստեղծվել, ածանցման բառակազմական եղանակով կազմված բառ է*։ Բառակազմական վերլուծությամբ պարզում ենք, որ այս բառը կազմված է երկու հիմքերի կցումով (*թռչն/ա* և *վաճառք*), իսկ այն հանգամանքը, որ այդ հիմքերը բաղադրյալ են, իրենց կազմում ունեն ածանց(ներ), բառակազմական վերլուծության համար էական չէ. բառակազմական վերջին քայլում ավելացել է հիմք և ոչ թե ածանց. նշանակում է՝ բառը կազմվել է բառաբարդման և ոչ թե ածանցման եղանակով: Այդ բառում գտնվող ածանցները գտնվում են չեզոքացված դիրքում և անմիջականորեն չեն մասնակցում այդ բառի կազմությանը: Այդ ածանցների բառակազմական իմաստները *թռչնավաճառք* բառում չեզոքացել են և բառի ընդհանուր իմաստում փաստորեն դեր չեն խաղում¹²⁴: Հետևաբար այս բառը ածանցման եղանակով չի կազմվել: Այն բարդ բառ է (իսկական կամ բուն բարդություն), կազմված է բառաբարդման եղանակով: Նմանա-

* Մենք, միայն ավանդույթին հետևելով, չենք ասում, որ սա ածանցավոր բառ չէ:

¹²⁴ - Չ սուկածանցը ժամանակակից հայերենում ունի միայն ձևակազմական նշանակություն. կազմում է ներկայի հիմքը: *-Ուն* ածանցի նշանակությունն է «նախատիպ բայի արտահայտած գործողությունը որպես հատկանիշ ունեցող» (*կարկաչուն, սահուն, երկրուն* ևն): *-Ք* ածանցը հիմնակնում բայարմատներից և բայաբներից կազմում է գոյականներ՝ «գործողության անուն» նշանակությամբ (*վազք, քերք, հունչք, եղք* ևն): Այս բոլոր իմաստներն էլ հիշյալ բառում չեզոքացել են, իրականում չկան:

պէս բառաբարդման եղանակով են կազմված իրենց սերող կամ բաղադրող հիմքերում ածանց ունեցող *վագքուդի* («վագելու՝ վագքի ուդի»), *մեքադաջարդոն* («մետադի ջարդոն»), *տառապակցութիւն* («տառերի կապակցութիւն»), *վերնահագուսր* («վերին՝ վերևից՝ վրայից հագնելու հագուստ») և նման բառերը: Ի տարբերութիւն սրանց՝ *թռչնավանառություն* («1. թռչնավանառ լինելը, 2. թռչնավանառի զբաղմունքը՝ մասնագիտությունը») բառը ածանցավոր է (բուն բարդածանցավոր): Այն կազմված է *թռչնավանառ* բաղադրյալ հիմքից՝ *-ություն* ածանցով: Այս բառի կազմության և բառային իմաստի մեջ *-ություն* ածանցն¹²⁵ ունի անմիջական դեր:

Չնույթային վերլուծությունը կատարվում է համաժամանակյա մոտեցմամբ: Պատմական՝ տարժամանակյա վերլուծությունը, ծագումնաբանական քննությունը ձևույթային վերլուծությանը քիչ բան են տալիս: Ընդհակառակը, երբեմն խանգարում են ճիշտ վերլուծությանը և հանգեցնում այլ արդյունքների ստացմանը, որոնք կարող են աղավաղել լեզվի արդի վիճակի մասին պատկերացումները: Այսպես, *ընկեր* (< *ընդ* + *կեր*), *ընդանի* (< *ընդ* + *տան* + *ի*), *ընդիր* (< *ընդ* + *դիր* (*դնե*)), *դունչ* (< *ընդ* + *ունչ*), *ընկճել* (< *ընդ* + *զճիլ* «չոքել»), *ընկրկել* (< *ընդ* + *կրուկն* «կրունկ») բառերում *ընդ* ձևույթի առանձնացումը (համապատասխան հնչյունափոխություններով) չի բխում լեզվի արդի վիճակից և աղճատում է այդ բառերի կառուցվածքը այսօրվա լեզվարմբոնմամբ. ժամանակակից հայերենում դրանք պարզ բառեր են կամ էլ պարզ հիմքով բայեր, որոնք այլևս ձևույթների չեն բաժանվում (յիարկե, բայերում կա *ել* բայակերտ ածանցը):

Չնույթային վերլուծության ժամանակ կարևոր չէ բառում ձևույթների կցման ժամանակային հաջորդականությունը:

Չնույթային վերլուծություն կատարելիս նախ և առաջ հարկավոր է պարզել, թե ինչ խոսքի մասի է պատկանում վերլուծվող բառը: Սա կարևոր է այնքանով, որ լեզվում կան համանուններ, որոնք տարբարվում են տաբեր ձևույթների: Օրինակ՝ *մքին գիշեր* կապակցու-

¹²⁵ Տվյալ դեպքում *-ություն* ածանցն ունի «մասնագիտություն, զբաղմունք» նշանակությունը, կազմում է գոյականներ որևէ մասնագիտության ներկայացուցչի անունից (*հովիտություն, ուսուցչություն, արամնաբուժություն* ևն):

թյան մեջ *մթին*-ը ածական է և պետք է տրոհվի *մուք* (>մ(ը)թ) հիմնական ձևային և *-ին* բառակազմական երկրորդական ձևային (վերջածանցի). *մուք* (>մ(ը)թ) + *ին*: Իսկ *գիշերվա մթին* արտահայտության մեջ *մթին* ձևը գոյական է, հոլովված է և ունի հոդ: Այս դեպքում այդ բառը տարրալուծվում է ձևայինների հետևյալ կերպ. *մուք* (>մ(ը)թ) հիմնական ձևային, *-ի* սեռական-տրական հոլովի վերջավորություն (բառահարաբերական կամ քերականական երկրորդական ձևային), *-ն* որոշյալ հոդ (բառահարաբերական կամ քերականական երկրորդական ձևային). *մուք* (>մ(ը)թ, հիմն. ձև.) + *ի* (բիրբ. ձև.) + *ն* (բիրբ. ձև.):

Ձևային վերլուծությունը առավել հարմար է սկսել բառի այդ կողմից, այսինքն՝ բառի կերտման, ստեղծման վերջից, քանի որ հայերենում բառակազմության ժամանակ նոր միավորները սովորաբար ավելանում են բառի (հիմքի) վերջից: Ընդ որում, տեքստից վերցված բառում նախ առանձնացվում են այն քերականական ձևայինները (վերջավորությունները և հոդերը), որոնք միշտ եզրավակում են բառաձևը, ապա տրոհվում են մյուս իմաստակիր մասերը՝ ածանցները և արմատները, նաև հոդակապը (եթե կա): Հնչյունափոխված ձևայինները (թե՛ հիմնական և թե՛ երկրորդական) առանձնացվում են այն տեսքով, ինչ տեսքով գործածված են բառում (չհնչյունափոխված, ելակետային ձևերը կարելի է նշել փակագծերում): Վերլուծենք «Միրում են աչքերիդ տխրությունը խորին» տերյանական հայտնի տողի *աչքերիդ* բառը: Սկզբում առանձնացնում ենք հոդը՝ *-դ* (բառահարաբերական երկրորդական ձևային), ապա հոլովական վերջավորությունը՝ *-ի* (բառահարաբերական երկրորդական ձևային), սրան նախորդում է թվային վերջավորությունը (կրկին բառահարաբերական երկրորդական ձևային), ապա ածանցը՝ *-ք* (բառակազմական երկրորդական ձևային), և վերջում մնում է արմատը՝ *-աչ* (հիմնական ձևային): Այս վերլուծությունը գրվում է հետևյալ տեսքով՝ *աչ* (հիմն. ձև.) + *ք* (բկզմ. երկ. ձև.) + *ն* (բիրբ. երկ. ձև.) + *ի* (բիրբ. երկ. ձև.) + *դ* (բիրբ. երկ. ձև.): Նույն տողից *սիրում են* բայաձևը ձևային վերլուծության կենթարկվի այսպես. նախ առանձնացնում ենք օժանդակ բայը, որի գործառույթը մոտավորապես նույնն է, ինչ վերջավորությանը՝ *են*

(բառահարաբերական երկրորդական ձևույթ), ապա կախյալ դերբայի մեջ (անկատար դերբայ) որոշում ենք վերջավորությունը՝ *-ում* (բառահարաբերական երկրորդական ձևույթ) և արմատը՝ *սիր-* (հիմնական ձևույթ), որը տվյալ դեպքում նույնացել է ներկայի պարզ հիմքի հետ. *սիր* (<*սեր*, հիմն. ձև.) + *ում* (բիրբ. երկ. ձև.) + *և* (բիրբ. երկ. ձև.):

Հողերը և վերջավորությունները առանձնացնում ենք հարաբերակից ձևերի համեմատությամբ: Նույն *աչքերիդ* ձևի մեջ պարզելու համար՝ *-դ-ն* հո^ոդ է, թե^ո ոչ, բառաձևը պետք է համեմատենք առնչակից *աչքերիս*, *աչքերի՛ն* ձևերի հետ. եթե բառային իմաստի պահպանումով փոխվում է քերականական իմաստը (տվյալ դեպքում պատկանելության հարաբերությունը), ուրեմն *-դ-ն* հոդ է (*աչքերիդ* = քո աչքերի, *աչքերիս* = իմ աչքերի, *աչքերի՛ն* = նրա աչքերի): Համեմատենք *ծղրիդ* բառի *-դ-ի* հետ: Եթե այն հոդ լիներ, պետք է ունենայինք *ծղրիս* և *ծղրի՛ն* ձևերը, որոնք լեզվում գոյություն չունեն: Բացի դրանից՝ այդ բառի վրա *-ս* կամ *-ը(ն)* հոդ ավելացնելիս *դ* վերջնահնչյունը չի փոխվում (*ծղրիդս*, *ծղրիդը*), ուրեմն այն (*դ-ն*) հոդ չէ և առանձին ձևույթ էլ չէ, քանի որ չունի իմաստ, այլ մեկ այլ ձևույթի հնչյուն է: Նմանապես, պարզելու համար, թե *աչքերի* ձևում *-ի-ն* հոլովական վերջավորություն^ոն է, թե^ո ոչ, բառը հոլովում ենք: Եթե այդ *-ի-ի* փոխարեն ավելանում է այլ մասնիկ, ուրեմն *-ի-ն* վերջավորություն է. *աչքերից*, *աչքերու՛մ*, *աչքերում* (կրկին հիշենք, որ բառային իմաստը պահպանվում է):

Նույն ձևով՝ նման կազմությունների հարաբերությամբ ենք առանձնացնում նաև ածանցներն ու արմատները: *Աչք* բառում *-ք-*ն ածանց է, որովհետև դրա փոխարինումը այլ բառակազմական ձևույթով հանգեցնում է բառիմաստի փոփոխության՝ նոր բառ կերտելու (հմմտ. *աչք* և *աչևդ*, *կապուրաչք* և *կապուրաչյա*): Եվ բացի այդ՝ *-ք-*ն նույն բառակազմական նշանակությամբ կազմում է մարմնի սովորաբար գույգ մասեր ցույց տվող այլ գոյականներ՝ *չեռք*, *ոտք*, *կուրծք*, *կողք*: Արմատը իր հիմնական նշանակությամբ նույնպես պետք է կրկնվի այլ բառերում (*սևաչյա*, *աչազեղ*, *աչևդ*, *աչք*, *աչքապակ*, *աչքացավ* և այլն):

Բառակազմական վերլուծություն ժամանակ պետք է նշվի յուրաքանչյուր բառակազմական քայլում ավելացած բաղադրիչը: Ինչպես նշեցինք, բաղադրյալ բառերը բառակազմական տեսակետից միշտ երկբաղադրիչ են (հիմք + ձևորդ /ֆորմանտ/): Բաղադրիչների կցման հերթականությունը ցույց տալու համար լեզվաբանական գրականության մեջ ընդունված է թվաբանական փակագծերով նշման համակարգ: Բառի արմատը դրվում է փոքր՝ սովորական փակագծերի մեջ, և կողքը նշվում ավելացած միավորը՝ *հրապարակային* → (*հրապարակ*)*ային*, *երզիչ* → (*երզ*)*իչ*, *համախումբ* → *համա*(*խումբ*): Եթե բառը բարդ է, փակագծերում նշվում են երկու արմատներն էլ՝ (*պար/ա*)(*հրապարակ*), (*երզ*)(*արվեստ*), (*խմբ/ա*)(*նկար*): Բաղադրյալ՝ երկու ձևային բաղկացած հիմքը դրվում է միջին՝ ուղղանկյուն փակագծերի մեջ, և կից նշվում է հաջորդ քայլում ավելացած միավորը (ածանց, արմատ կամ բաղադրյալ հիմք)՝ [(*հրապարակ*)*ային*]*ություն*, [(*երզ*)*իչ/ա*] (*խումբ*), [(*խմբ/ա*)(*նկար*)]*իչ*: Մեր այս կազմած բառերը իրենց հերթին կարող են բաղադրյալ սերող հիմք դառնալ հաջորդ բառակազմական քայլի համար: Այդպիսի հիմքը վերցնում ենք մեծ՝ ձևավոր փակագծերի մեջ՝ {[(*երզ*)*չ/ա*] (*խումբ*)}*ային*, {[(*խմբ/ա*) (*նկար*)]*չ*}*ական*: Եթե բարդ բառի երկու հիմքերն էլ բաղադրյալ են, առանձին-առանձին փակագծում ենք և՛ սերող, և՛ բաղադրող հիմքերը, ինչպես՝ [(*քար*)(*ածուխ*)/*ա*] [(*հան*)*ք*] (սերող հիմքն է *քարածուխ* > *քարածիս*, բաղադրողը՝ *հանք*), [(*չրջ*)*ան/ա*] {[(*բաժ*)*ան*]*ել*(↓)}*ում*, [(*հեն*)*ուստ/ա*]{[(*լր/ա*) (*լու*)/*ա*] (*միջ*)*ոց*} և այլն:

Երբ բառակազմական որևէ քայլում տեղի է ունենում ածանցի անկում՝ դրա իմաստի պահպանումով, այդ կարելի է նշել դեպի ներքև ուղղված սլաքով: Այսպես, *բուժում* գոյականը կազմվել է ոչ թե *բուժ* (< *բույժ*) արմատից՝ *-ում* ածանցով, այլ *բուժել* կամ *բուժվել* բայերից՝ բայական ածանց(ներ)ի անկումով, սակայն դրանց իմաստի պահպանումով (*բուժում* նշանակում է «բուժելը, բուժվելը»): Այդ բառի բառակազմական բանաձևը կգրվի այսպես՝ [(*բուժ*)*ել* ↓]*ում*:

Եթե բառը կազմվել է չորս կամ հինգ քայլերով (յսիստ հազվադեպ՝ ավելի), ապա չորրորդ քայլի համար կրկին դնում ենք սովորա-

կան կոր փակագիծ, իսկ հինգերորդի համար՝ անկյունավոր փակագիծ, սակայն երկուսն էլ ավելի մեծ չափի, ինչպես՝ [(*{(յուս)ս-վոր}ել↓}{իչ}ակասն*]*նություն*:

Բազմակի պատճառաբանվածություն ունեցող բառերը բանաձևվում են երկու (հազվադեպ՝ երեք կամ չորս) ձևով: Այսպես, *անհամբերություն* բառը կարող է մեկնաբանվել և՛ իբրև *անհամբեր* ածականից *-ություն* ածանցով բաղադրված ձև (*անհամբեր* + *ություն*), և՛ իբրև *համբերություն* գոյականից *ան-* նախածանցով կազմություն (*ան*+*համբերություն*): Առաջին դեպքում այն կունենա «անհամբեր լինելը» և «անհամբերի հատկանիշը» իմաստները և կբանաձևվի այսպես՝ [*ան(համբեր)նություն*], իսկ երկրորդ դեպքում կբացատրվի իբրև «համբերություն չունենալը» և կունենա *ան[(համբեր)ություն]* բառակազմական բանաձևը:

Այս եղանակով վերլուծված բաղադրյալ բառը կարող ենք մեկնաբանել նաև հակառակ ուղղությամբ՝ բաղադրությունից դեպի հիմք(եր): Այսպես՝ (*ինքն*)*ս*{[(*գործ*)*ուն*]*ե*}*ություն*) գրությունը նշանակում է, որ այդ բառը կազմված է բառաբարդման եղանակով (իսկական կամ բուն բարդություն է), սերող հիմքը պարզ կամ արմատական է՝ *ինքն*, իսկ բաղադրողը՝ կազմությամբ բաղադրյալ է՝ *գործունեություն*: Վերջինս իր հերթին կազմվել է բառակազմական հետևյալ քայլերով. վերջին քայլում *գործունե* (*ե* < *յս* հնչյունափախությամբ) հիմքին ավելացել է *-ություն* ածանցը: *Գործունե* // *գործունյս* հիմքը ևս բաղադրյալ է, որին վերջին քայլում ավելացել է *-ե* (*ե* < *յս*) վերջածանցը (*գործուն* + *ե* (< *յս*): Սակայն *գործուն* հիմքը նույնպես բաղադրյալ է. վերջին քայլում կցվել է *-ուն* վերջածանցը՝ *գործ* + *ուն*: *Գործուն* ձևի *գործ* հիմքը արդեն պարզ արմատական է: Վերլուծության այս եղանակը կիրառելով մենք կարող ենք վերականգնել բառի կերտման իրական ընթացքը, պատմությունը: Վերոհիշյալ բառը անցել է կազմավորման հետևյալ ուղին. *գործ* գոյականից կազմվել է *գործուն* ածականը, որից էլ *գործունյս* ածականը (հետագա ածական→գոյական խոսքիմասային փոխանցմամբ), սրանից *-ություն*

ածանցով բաղադրվել է *գործունեություն* գոյականը, և, վերջապես, սա էլ հիմք է դարձել *ինքնագործունեություն* բառի կազմման համար:

Բառի ստուգաբանական վերլուծություն

Բառի ձևությային և բառակազմական վերլուծություն հիմքում ընկած է ժամանակակից լեզվական ըմբռնողությունը, այսինքն՝ բառը տարրալուծվում է ժամանակակից փուլում գործող օրինաչափությունների համաձայն, և, ըստ այդմ, որոշվում է բառի բաղադրակազմը: Ժամանակակից լեզվի ըմբռնողությամբ իմաստի և ձևի (ինչյունական կազմի) տեսակետից այլևս անբաժան շատ բառեր կան բառերի բաղադրիչներ ստուգաբանական վերլուծությամբ արդեն կարող են տարրալուծվել իմաստային բաղադրիչների (ձևայինների): **Ամբարիշտ, ցանկ, մյուս, օրիորդ, մասին** բառերը ժամանակակից լեզվական ըմբռնողությամբ և օրինաչափություններով պարզ, արմատական բառեր են, մինչդեռ դրանց ստուգաբանական վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք բաղադրյալ են, կազմված՝ մեկից ավելի ձևայիններից: **Ամբարիշտ** < *ան-* (ժխտական նախածանց) + *բարիշտ* < *ան* + *պարիշտ*. **պարիշտ** այսօր անգործածական արմատից, որից ունենք *պաշտը, պաշտել*. **ամբարիշտ**՝ բուն իմաստով՝ անպաշտ «հավատք, օրենք չճանաչող»¹²⁶: **Ցանկ** («1. Գրքի գլուխների՝ մասերի ևն ցուցակ, բովանդակություն, որ սովորաբար կցվում է գրքի վերջից: 2. Որևէ բանի ցուցակ») բառը տարժամանակյա մոտեցմամբ նույնպես բաղադրյալ է. կազմված է **անկ** («անկանիլ») բայարմատից՝ **ց** նախդիրով: **Անկ** արմատը թեև առանձին ավանդված չէ, բայց ունեցել է «ծայր, վերջ» իմաստները (ասենք, *հանկ* (յանգ < յանկ < յ + անկ) բառում): Ի դեպ, ծագումով սրան է նույնանուն ժամանակակից հայերենի բառարաններում իբրև համանուն ներկայացվող **ցանկ** «ցանկապատ» բառը. *ց* + *անկ* «ճյուղերով ևն հյուսված պատ՝ պատնեշ (իբր վերջ կամ սահման)»¹²⁷: **Մյուս** բառը կազմված է **մի** +

¹²⁶ Տե՛ս *Աճառյան* Հ., Հայերեն արմատական բառարան, հտ. I, Երևան, 1971, էջ 149, հտ. IV, Երևան, 1979, էջ 23:

¹²⁷ Տե՛ս նույն տեղում, հտ. I, էջ 197-198:

և բաղադրիչներից: **Օրիորդ** բառը ստուգաբանորեն բաղադրված է **օրի + որդ** արմատական ձևայիններից, բառացի նշանակում է «իշխանի որդի» (*օրի* «իշխան» և *որդ* «որդի, զավակ»):

Այսպիսով, բառի ստուգաբանական վերլուծության նպատակը նրա անցյալ վիճակի, պատմական զարգացման, նախնական կառուցվածքի և բառակազմական կապերի բացահայտումն է, երբ որոշվում, բացահայտվում է ժամանակակից լեզվական ըմբռնությամբ անհասկանալի կամ չբացատրվող բառի կամ նրա բաղադրիչ տարրերի կազմությունն ու ծագումը:

Ժամանակակից հայերենում ստուգաբանական վերլուծության կարելի է ենթարկել բնիկ՝ հնդեվրոպական բառերը, ինչպես հին, այնպես էլ նոր և նորագույն փոխառությունները, գրաբարյան և բարբառային կազմությունները:

Բառակազմությունն իբրև լեզվի բառապաշարի լրացման հիմնական աղբյուր

Լեզվի զարգացման բոլոր փուլերում բառապաշարի լրացման հիմնական աղբյուրը նոր բառերի՝ բառակազմական օրենքներով ստեղծումն է: Ժամանակակից հայերենը նոր բառերի կերտման եղանակները հիմնականում ժառանգել է հայոց լեզվի զարգացման նախորդ փուլերից: Նախագրաբարյան շրջանին հատուկ է եղել արմատաստեղծումը և արմատի հնչյունափոխությամբ կամ ածականի՝ հնչյունի հավելումով նոր բառերի առաջացումը: Գրաբարյան շրջանից ժառանգած բառակազմական միջոցներն են բառաբարդացումն ու ածանցումը, որոնք այսօր էլ կենսունակ և գործուն են: Նոր բառերի ստեղծման նոր եղանակ է հապավումը:

Արմատաստեղծումն իբրև հայոց լեզվի զարգացման հնագույն շրջանի երևույթ: Արմատների ստեղծումը հատուկ է եղել մարդկության պատմության հնագույն շրջանին, և, բացառությամբ բնածայնական արմատների, դժվար է սպառնիչ բացատրություն գտնել նրանց օրինաչափությունների վերաբերյալ: Հեռավոր անցյալում մարդկանց հաղորդակցմանը ծառայել են սակավաթիվ արմատներ՝

իրենց համապատասխան իմաստներով: Այսպիսով, պարզ է դառնում, որ արմատները ստեղծվել են, իսկ թե ստուգապես ե՞րբ և ինչպե՞ս կամ ի՞նչ եղանակով, առայժմ ոչ ոք վճռական և վերջնական պատասխան տալ չի կարող:

Միաժամանակ հայտնի է, որ այժմ՝ քաղաքակրթության ներկա մակարդակում, բացառված է նոր արմատ (արմատական բառ) ստեղծելու հնարավորությունը, եթե, իհարկե, հաշվի չառնենք քսաներորդ հարյուրամյակում արհեստականորեն ստեղծված մի քանի արմատների երևան գալը, ինչպես՝ **գազ** բառը, որը, սակայն, հատուկ անվան հասարակի վերածման օրինակ է: 19-րդ դարում հայերենում պատահական արմատաստեղծման եզակի օրինակ է համարվում **սուրճ** բառը (ծագումը բնաձայնական է):

Նոր բառերի կազմությունը, ինչպես մյուս լեզուներում, այնպես էլ հայերենում կատարվում է արդեն առկա արմատների (արմատական ձևայինների կամ արմատական բառերի) հիման վրա:

Հայերենի հնագույն շրջանին, ավելի ճիշտ՝ նախագրաբարբայան հայերենին, հատուկ են եղել նույն արմատի ձայնավորի փոփոխմամբ (ձայնադարձով) կամ արմատի հնչյունական հավելումով (աճականով) նոր բառերի ստեղծումը: Բառաստեղծման այդ եղանակները, հայոց լեզվի զարգացման գրաբարբայան փուլից սկսած, այլևս գործուն չեն¹²⁸:

Բառերի տեսակներն ըստ կազմության

Ժամանակակից հայերենում բառերն ըստ կազմության լինում են պարզ և բաղադրյալ:

ա) **Պարզ բառեր:** Պարզ են կոչվում այն բառերը, որոնք ժամանակակից լեզվական ըմբռնողությամբ կազմված են միայն մեկ հիմնական ձևայինից և բառակազմորեն անտարբալուծելի են: Դրանք կոչվում են նաև *արմատական բառեր*, ինչպես, օրինակ, **հայր**, **մայր**,

¹²⁸ Չայնադարձի և աճականի մասին տե՛ս *Աճառչակ* Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հտ. III, Երևան, 1957, էջ 37-57: Նաև՝ սույն դասագրքի նախորդ հրատարակություններում (օրինակ, Երևան, 1999, էջ 228-231):

եղբայր, տուն, հաց, ցորեն, սեղան, գազան, բժիշկ, օպերա, տրամվայ, ավտոմոբիլ, լավ, վատ, մեծ, փոքր, դանդաղ, խաղաղ, նաև ամուսին, մասին, հագիվ, հլու, դունչ, առած և այլն:

Հիշյալ բառերը պարզ են համարվում, որովհետև կազմված են մեկ հիմնական ձևությից (կամ արմատից) կամ էլ ժամանակակից լեզվաըմբռնողությամբ գիտակցվում են այդպիսին: Պարզ համարվող բառերը ստուգաբանորեն փոխատու և նույնիսկ մայրենի լեզվում կարող են բաղադրյալ լինել, սակայն համաժամանակյա մոտեցմամբ դա նշանակություն չունի. այդ բառերը ժամանակակից հայերենում պարզ են: Օրինակ՝ վերոհիշյալ շարքից՝ **տրամվայ** (<անգլ. tramway, tram – ռեյս և way – ուղի, ճանապարհ), **օպերա** (<իտալ. opera < լատ. opus «աշխատանք, գործ, ստեղծագործություն»), **ավտոմոբիլ** (< հուն. autos «ինքը» և լատ. mobilis «շարժվող, շարժական, գնացող»): Հայկական բառերից՝ **հլու** (< **h** աճականով **լու** «լսել» արմատից), **ամուսին** (< **ամ** «համ, կից, միասին» + **ուս** (< հնիս. **uk'** «վարժել, սովորել» + **ին** մասնիկ), առած (< **առ**-ն-ուլ բայից՝ **ած** մասնիկով), **դունչ** (< ընդ + ունչ «քիթ, ռունգ, պինչ») և այլն:

Պարզ կամ արմատական բառերից ամանցմամբ կամ բառաբարդմամբ կազմվում են նոր բառեր:

բ) **Բաղադրյալ բառեր**: Սրանք իրենց հերթին ստորաբաժանվում են *բառաչևերի* (վերջավորություններով և հողերով կազմված ձևեր՝ *գրելիս, տներ, ուսանողներից* և այլն) և ամանցավոր բառերի, բարդ բառերի և հապավումների: Բառաձևերը ուսումնասիրվում են ձևաբանության մեջ: Բաղադրյալ բառերի մյուս տեսակները բառակազմության քննության առարկան են:

Բաղադրյալ բառերը կազմվում են վերջավորությունների, հողերի, քերականական մասնիկների և օժանդակ բառերի (*կ, պիտի // պետք է* եղանակիչներ, *չ* ժխտական, *մի* արգելական, օժանդակ բայ) հավելման, ամանցման, բառաբարդման և հապավման միջոցով:

ԲԱՐԳՈՒԹՅՈՒՆ

Երկու կամ ավելի հիմքերի (այլ մոտեցմամբ՝ հիմնական ձևույթների, արմատների կամ բառերի) կցումով կամ հարադրությամբ կազմված բաղադրությունները, որոնք ունեն մեկ ընդհանուր շեշտ, կոչվում են *բարդություններ* կամ *բարդ բառեր*:

Ծանոթություն: Առավել նպատակահարմար է և ճիշտ է բարդ բառերի բաղադրիչներն անվանել հիմքեր և ոչ թե հիմնական ձևույթներ (արմատներ) կամ բառեր: Այսպես, *հեռախոս* (*հեռ* + *ս* + *խոս*) բարդության երկու իմաստակիր բաղադրիչներն էլ (հոդակապը չենք հաշվում) թեև հիմնական ձևույթներ (արմատներ) են, սակայն ինքնուրույն բառեր չեն, իսկ, ասենք, *խոսքարվեստ* բարդության երկրորդ բաղադրիչը թեև հիմնական ձևույթ (արմատ) ու նաև ինքնուրույն բառ է, սակայն առաջին բաղադրիչը, ինքնուրույն բառ լինելով, արմատ չէ, այլ բաղադրյալ կազմություն է (կազմված է *խոս*- հիմնական ձևույթի և *-ք* վերջածանցի համադրությունից):

Ըստ ձևաբանական-շարահյուսական կառույցի՝ բարդությունները լինում են *վերլուծական* և *համադրական*:

Վերլուծական բարդություններ

Այս կարգի բարդությունները կազմվում են վերլուծական եղանակով, բաղադրիչները հանդես են գալիս անջատաբար, ունեն մեկ ընդհանուր հիմնական շեշտ, գիտակցվում են իբրև բառային մեկ միավոր: Վերլուծական բարդությունների մեջ են մտնում *հարադրությունները* և *կրկնավորները*:

1. Հարադրական բարդ բառեր կամ հարադրական բարդություններ

Վերլուծական եղանակով կազմվող այն բարդությունները, որոնց կազմի մեջ մտնող երկու կամ ավելի բառեր առանց միաձուլվելու, հանդես գալով հարադրաբար, արտահայտում են մեկ բառի իմաստ, կոչվում են **հարադրական բարդություններ**: Հարադրական բարդությունների բաղադրիչները հանդես են գալիս անջատաբար, իրարից բաժանվում են արտասանական զգալի դադարով, պահպանում են իրենց ձևական անկախությունը, որ գրավոր խոսքում արտահայտվում է բաղադրիչ-բառերի կա՛մ անջատ, կա՛մ էլ միացման գծիկով գրությամբ: **Օրինակ՝ ձեռք տալ, ներս առնել, բառ ու բան, մեծ-մեծ, նստել-վեր կենալ, ամառ-ձմեռ** և այլն:

Մովորական, ոչ դարձվածքային հարադրական բարդությունների բաղադրիչ-բառերը պահպանում են իրենց բառային իմաստները, ինչպես՝ **հազար ու մեկ, երկու-երեք, աղ ու հաց, կես անել, կուլ տալ, կար անել, հազիվ թե, հար և նման** և այլն:

Դարձվածքներ ներկայացնող հարադրական բարդությունների բաղադրիչները, ընդհակառակն, կորցնում են իրենց բառային իմաստները, վերաիմաստավորվում են, և դարձվածքի իմաստը չի բխում բաղադրիչների բառային իմաստներից, ինչպես՝ **աչքով տալ, գլուխ գալ, ձեռքը բաց, խելքի տոպրակ, ուղտի ականջում քնած, երեսի քողը պատռած, հոնքերը կիտել** և այլն:

Որպես հարադրություն հայերենում հանդես են գալիս ամեն տիպի բառերի կայուն կապակցությունները՝ կազմված ինչպես լրացում-լրացյալից (**աչքը մտնել, Աստծու գառ**), համադաս անդամներից (**օր ու գիշեր, մեռնել-պրծնել**), այնպես էլ միևնույն բառի կրկնությունից (**մեկ-մեկ, երես առ երես**):

Հարադրական բարդությունները ստորաբաժանվում են *անվանական հարադրությունների* և *բայական հարադրությունների*:

ա) Անվանական հարադրություններ: Անվանական հարադրական բարդությունները կազմվում են գոյական, ածական, մակբայ, թվական, շաղկապ, եղանակավորող բառ խոսքի մասերին պատկանող բառերի հարադրությամբ, շաղկապներով կամ առանց դրանց:

1) **Գոյականական հարադրություն:** Կազմվում են գոյականների հարադրությամբ, օրինակ՝ **օր ու գիշեր, ահ ու դող, տուն ու տեղ, վար ու ցանք, ձյուն-ձմեռ, վագոն-ռեստորան** և այլն:

2) **Ածականական հարադրություն:** Կազմվում են ածականների հարադրությամբ՝ **լուռ ու մունջ, լավ ու վատ, բարակ-մարակ, լռիկ-մնջիկ, կանաչ-կարմիր, անթիվ-անհամար, թաց ու չոր** և այլն: Այս կարգի հարադրությունների մի մասի բաղադրիչ-բառերը գտնվում են հոմանշային կամ հականշային իմաստային հարաբերությունների մեջ:

3) **Մակբայական հարադրություն:** Կազմվում են արմատական մակբայների հարադրությամբ, բաղադրիչ-բառերի իմաստների հականշային հարաբերությամբ՝ **հետ ու առաջ, վեր ու վար, ներս ու դուրս** և այլն:

4) **Թվականական հարադրություն:** Մովորաբար կազմվում են իրար հաջորդող թվականների հարադրությամբ՝ **երեսուն-քառասուն, երկու-երեք, չորս-հինգ**, նաև **հազար ու մեկ**: Հարադրությամբ են կազմված հարյուրից մեծ քանակական թվականները՝ **հազար ինը վաթսուն, երկու հազար տասնվեց, մեկ միլիոն ինը հարյուր իննսու-նինը** և այլն:

5) **Գերանվանական հարադրություն:** Կազմվում են հիմնականում ցուցական, մասամբ նաև այլ դերանուններից՝ **այսինչ-այնինչ, այս-այն, այսքան ու այսքան, դես ու դեն, այստեղ-այնտեղ**, նաև **քանի-քանի, իրեն-իրեն, ինչ-որ, ինչ-ինչ** և այլն:

6) **Շաղկապներով և եղանակավորող բառերով կազմված հարադրություններ՝ ապա թե ոչ, կամ թե, միայն թե, քանի որ, մանավանդ որ, թեկուզ և, իբրև թե, ասես թե** և այլն:

բ) **Քայական հարադրություններ:** Հարադրական բարդությունների զգալի մասը կազմում են հարադրավոր բայերը¹²⁹: Մրանք կազմվում են մեկ բայից և հարադիր բառից և կամ երկու բայերից,

¹²⁹ Տե՛ս *Արեղյան Մ.*, նշվ. աշխատ., էջ 137-138: *Մուսկ Գ.*, նշվ. աշխատ., էջ 161-165: *Աբրահամյան Ա.*, Քայլը ժամանակակից հայերենում, հտ. I, Երևան, 1962, էջ 190-208: *Մուրվախյան Ա.*, նշվ. աշխատ., էջ 194-215: *Մարգարյան Ա.*, Հայերենի հարադրավոր բայերը, Երևան, 1966:

ունեն բառային առանձին իմաստ և մեկ ընդհանուր շեշտ: Օրինակ՝ **գործ անել** «գործել, աշխատել», **լաց լինել** «լալ», **վագ տալ** «վազել», **միտքը գալ** «հիշել», **թաց անել** «թացացնել», **կրակ կտրել** «1. շիկամալ, 2. գայրանալ» և այլն:

Հարադրական բայերը հիմնականում մեկ բառի արժեք ունեն և մասամբ (առանց իմաստի աղավաղման) կարող են փոխարինվել համապատասխան նույնարմատ միաբառ բայական համարժեքով, ինչպես՝ **գրույց անել – գրուցել, պար գալ – պարել, գույնը տալ – գունատվել**: Որոշ դեպքերում հարադրական բայերի և նրանց միաբառ գուգահեռների իմաստները կարող են նաև չհամընկնել, ինչպես՝ **կանգ առնել – կանգնել, թափ տալ – թափել, ման տալ – մանել, քա(ր)չ տալ – քաշել** և այլն:

Գարծվածքային հարադրական բայերի բառային իմաստները չեն բխում բաղադրիչների իմաստներից: Հետևաբար դրանք չունեն նույնարմատ միաբառ համագործեր, ինչպես՝ **գլխի ընկնել – ըմբռնել, կռահել, գլուխ տալ – բարևել, աչք օգել – նայել, հավանել, ականջն ընկնել – լսել, ձեռք առնել – ծաղրել** և այլն:

Հարադրական բայերը կազմվում են երկու անկախ բայերից կամ բայից և հարադրից. առաջինները կոչվում են **գուգադրական բայեր** կամ **գուգաբայական հարադրություններ**, երկրորդները՝ **հարադրական կամ հարադրավոր բայեր**:

Ձուգադրական բայեր կամ **գուգաբայական հարադրություններ**:

ա) Ձուգադրական բայերը կազմվում են երկու անկախ բայերից, որոնցից յուրաքանչյուրը առանձին, անկախաբար խոնարհվում է: Այդ կարգի բայերի արտահայտած բառային իմաստները զգալիորեն տարբերվում են հարադրության մեջ մտնող բաղադրիչ բայերի առանձին, ինքնուրույն գործածվող իմաստներից: Օրինակ՝ **գնալ-գալ** «1. գրոսնել, 2. հաճախել, 3. օրորվել և այլն», **ասել-խոսել** «գրուցել», **մեռնել-պրծնել, թողնել-գնալ** «1. հեռանալ, 2. մեկին կամ մի տեղ լքել», **քշել-բերել, վազել-գալ, ծլել-ծաղկել** և այլն:

Ձուգադրական բայերի բաղադրիչները անկախաբար, միաժամանակ խոնարհվում են, ինչպես՝ **գնացի-եկա, գնացիր-եկար, պիտի**

գնամ-գամ, կամ քչեցի-բերեցի, քչեցինք-բերեցինք, կքչեն-կբերեն և այլն:

բ) Մեկ միաբառ բայից և մեկ հարադրավոր բայից, ինչպես՝ **ծակել-դուրս գալ, կտրել-դեն գցել, ծեծել-դուրս անել, գնալ-դեն ընկնել** և այլն: Այս դեպքում էլ բաղադրիչ-բայերը խոնարհվում են անկախաբար:

գ) Մեկ միաբառ (չեզոք կամ ներգործական) բայից և **տալ** բայից կազմվում է պատճառական բայ, ըստ որում խոնարհվում է միայն **տալ** բայը, ինչպես՝ **գրել տալ** (գրել տվեցի), **ծեծել տալ** (ծեծել տվեցին), **վազել տալ** (վազել կտաս), **խաղալ տալ** (խաղալ պետք է տան) և այլն:

Հարադրական կամ **հարադրավոր բայեր**: Այս կարգի բայերը կազմվում են որևէ հարադրով (ոչ բայական) և բայով:

ա) **Անել, լինել, դառնալ, գալ, բերել, կտրել, տալ** և այլ, այպես կոչված, վերացական իմաստ ստացած բայերով և գոյականների, ածականների, մակբայների, դերանունների, թվականների, ձայնարկությունների կամ բնածայնական բառերի շարահյուսական կապակցությամբ կազմվող հարադրավոր բայեր.

1) Գոյական, ածական հարադիրով կազմվող բայեր (գոյական + բայ, ածական + բայ կադապարներով)՝ **գիր անել, աղաչանք անել, լաց լինել, մարդ դառնալ՝ դարձնել, աշխարհ բերել, կրակ կտրել**, կամ՝ **արժանի լինել, անտես անել, գահընկեց անել** և այլն: Այս կադապարով հարադրավոր բայերի կազմության հնարավորությունները ժամանակակից հայերենում մեծ են. դրանց մի մասը վերածվում է դարձվածքների:

2) Մի քանի հարադրավոր բայեր կազմվում են ինքնուրույնաբար չգործածվող բայական հիմքերով և **անել, դառնալ, լինել, տալ** և վերացական իմաստ ստացած այլ բայերով, ինչպես՝ **իմաց անել, իմաց տալ, ցույց տալ, վազ տալ, թաց անել, թաք կենալ, երևան հանել՝ բերել՝ գալ** և այլն:

3) Հարադրավոր բայերի մեծ մասը կազմվում է տեղ ցույց տվող բառերով ու մակբայներով և մի շարք բայերով՝ **ածել, անել, առնել, բերել, գալ, գնալ, գցել//ձգել, դնել, ելնել, ընկնել, վազել, տալ, տանել**,

քաշել և այլն: Տեղ ցույց տվող բառերից գործածական են՝ **առաջ, դեմ, դեա, դուրս հետ//ետ, մեջ, մոտ, ներս, շուռ, վայր, վեր, վրա, տակ, տեղ** և այլն: Օրինակ՝ **առաջ տալ, դեմ առնել, դեմ քաշել, դուրս տալ, մեջ ընկնել, վրա վազել, վրա հասնել, տակը փորել, տեղը դնել, դուրս ածել** և այլն:

4) *Ի* նախդիրով հարադրավոր բայեր՝ **ի մի բերել, ի կատար ածել, ի դերև հանել՝ ելնել, ի սպաս դնել, ի հայտ գալ, ի ցույց դնել** և այլն:

5) Դերանունով և բայով կազմվող հարադրություններ՝ **իրար անցնել, իրար բերել, իրար գալ, իրենով անել, իրենից գնալ** և այլն:

6) Թվականներից հարադրավոր բայեր հազվադեպ են կազմվում (այն էլ միայն **անել** բայի հետ)՝ **երկու անել, չորս անել, հազար անել**:

7) Չայնարկություններով կամ բնածայնական բառերով կազմվող հարադրավոր բայեր՝ **ախ անել, ախ քաշել, ախուվախ անել, վայ տալ, հաֆ անել, փիշտ անել, հարայ կանչել, քսի տալ** և այլն:

Վերոհիշյալ բայերի մի ստվար մասը ձեռք է բերել նաև դարձվածքային իմաստ:

2. Բաղիյուսական հարադրություններ

Հարադրական բարդությունների մի տեսակն է *բաղիյուսական հարադրությունը*¹³⁰: Սովորական հարադրությունից այն տարբերվում է նրանով, որ հարադրվող տարրերը՝ բաղադրիչները իրար նկատմամբ համագոր են և հաճախ համադաս, կապվում են հնչերանգով (գրավոր խոսքում՝ միության գծիկով) կամ էլ **ու** (հազվադեպ՝ **և**) շաղկապով: Բարդության ընդհանուր իմաստը հիմնականում բխում է բաղադրիչների բառական իմաստներից: Որոշ դեպքերում բարդությունը ստանում է նաև սաստկական իմաստ: Օրինակ՝ **ահ ու դող, օր ու գիշեր, ծեծ ու կռիվ, ներս ու դուրս, ազգ ու բարեկամ, գո-**

¹³⁰ Տե՛ս *Մաքսիմիան Վ., Խաչատրյան Ա., Էլոյան Ս., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1979, էջ 265-268: Մարգարյան Ա., Հայերենի բաղիյուսական բարդությունները, Երևան, 1986:*

ռում-գոչյուն, կորած-մոլորած, հագած-կապած, գիշեր-ցերեկ, խաղը-խայտառակ և այլն:

Բաղիյուսական գոյական հարադրությունը հոլովվում և հող է առնում իբրև մեկ բառ: Հոլովվում է միայն նրա վերջին բաղադրիչը, ինչպես՝ **ազգ ու բարեկամ, ազգ ու բարեկամի(ն), ազգ ու բարեկամից, ազգ ու բարեկամով, գոռում-գոչյուն, գոռում-գոչյունից, գոռում-գոչյուններով** և այլն:

Բաղիյուսական բարդությունները կազմվում են հիմնականում համանիշ, նույնանիշ, ինչպես նաև իմաստով մոտ (միևնույն իմաստաբանական դաշտին պատկանող) բառերի հարադրությունից:

ա) Համանիշ և նույնանիշ բառերի հարադրությամբ կազմվող բաղիյուսական հարադրություններ՝ **ահ ու սարսափ, ձայն ու ծպտուն, ձայն-ծպտուն, լուռ ու մունջ, լռիկ-մնջիկ, ախ ու վախ, ճարճարակ, քար-ապառաժ, քանկ ու կրակ** և այլն:

Այս կարգի բաղիյուսական հարադրություններից կազմվում են նաև հարադրավոր բայեր, ինչպես՝ **ծանր ու թեթև անել, ձեռք ու ոտք ընկնել, արյուն-քրտինք թափել** և այլն:

բ) Իմաստային որոշ ընդհանրություն ունեցող (միևնույն իմաստաբանական դաշտին պատկանող) բառերի հարադրությամբ կազմվող բաղիյուսական հարադրություններ՝ **թև ու թիկունք, թև-թիկունք, գունդ ու կծիկ, գուգված-գարդարված, տեր-ապավեն, կյանք-կենդանություն, հավ ու ճիվ, մարդ ու կին, արդ ու զարդ, խաղ ու պար, արևաշխարհ** և այլն: Ինչպես օրինակներից է երևում, այս կարգի որոշ հարադրությունների բաղադրիչ-բառերը կորցնում են իրենց իմաստները, և ամբողջ հարադրությունը հաճախ ձեռք է բերում նոր, ընդհանրական իմաստ և կամ սաստկական իմաստ:

գ) Իրար հաջորդող թվականների հարադրությամբ նույնպես կազմվում են բաղիյուսական հարադրական բարդություններ, ինչպես՝ **երկու-երեք, տասը-տասներկու, հիսուն-վաթսուն** և այլն¹³¹:

¹³¹ Հմմտ. *Արհայան Մ.*, նշվ. աշխ., էջ 141-143: *Աճառյան Հ.*, նշվ. աշխ., էջ 84:

3. Կրկնավոր հարադրություններ կամ կրկնավոր հարադրական բարդություններ

Կրկնավոր հարադրական են կոչվում այն բարդությունները, որոնք կազմվում են վերլուծական եղանակով նույն հիմքի (բառի) կրկնությամբ: Սովորաբար կրկնվում են միավանկ կամ կարճ բառերը, գրվում են միասնության գծիկով, բաղադրիչ-բառերը պահպանում են իրենց շեշտը: Կրկնավորների բաղադրիչների միջև երբեմն ընկնում են **ու** կամ **և** շաղկապները, նաև գրաբարյան նախդիրներ (այս դեպքում գծիկ չի դրվում): Որոշ կրկնավորների բաղադրիչներից որևէ մեկում հնարավոր են հնչյունափոխություններ:

ա) Հայերենի տարբեր խոսքի մասերի պատկանող բառերի կրկնությամբ կազմվող կրկնավոր բարդություններ: Կրկնավոր բարդություն կարող է կազմվել հայերենի համարյա բոլոր խոսքի մասերին պատկանող բառերի կրկնությամբ: Գոյականների, ածականների, մակբայների, մյուս խոսքի մասերի կրկնությամբ կազմվող նման կրկնավոր հարադրությունները ժամանակակից հայերենում բառարանային արժեք չունեն (սովորաբար չեն բառարանագրվում): Չեռք բերելով զանազան իմաստներ կամ իմաստային նրբերանգներ՝ դրանք ստանում են ածականական կամ մակբայական կիրառություններ:

1) *Գոյականների կրկնությամբ* կազմվում են ածականներ և մակբայներ՝ **գույն-գույն, գունդ-գունդ, դասարան-դասարան, թել-թել, խումբ-խումբ, տեսակ-տեսակ, տուն-տուն, փունջ-փունջ** և այլն: Այս կարգի կրկնավորներն ունեն բազմակիության իմաստ կամ ցույց են տալիս համազգի առարկաների կամ երևույթների հաջորդականություն:

2) *Ածականների և մակբայների կրկնությամբ* կազմվում են ածականներ ու մակբայներ: Այս կարգի կրկնավորները սաստկացնում են ածականների իմաստը, ստանում են բազմակիության նշանակություն: Մակբայական գործածության դեպքում ցույց են տալիս գործողության կրկնություն, ինչպես նաև առարկայի վիճակ: Օրինակներ՝ **սև-սև** (հոնքեր), **մեծ-մեծ** (մարդիկ, նաև՝ խոտել), **լավ-լավ** (հույսեր), **սուր-սուր** (փշեր), **կլոր-կլոր** (երես), **քիչ-քիչ** (ուտել), **հի-**

վանդ-հիվանդ (աշխատել), **ուշ-ուշ** (գալ), **մանր-մանր** (բրդել, կտրտել) և այլն:

3) *Թվականներ կրկնությանը* կազմվում են կրկնավորներ, որոնք ստանում են բազմակիության, ինչպես նաև բաշխականության նշանակություն՝ **մեկ-մեկ, մի-մի** (մեկական, յուրաքանչյուրին՝ մեկ), **մեկ-մեկ** (երբեմն), **երկու-երկու, երեք-երեք, հարյուր-հարյուր** և այլն:

4) *Դերանուններ կրկնությանը* կազմվող կրկնավորները սովորաբար արտահայտում են բազմակիության, երբեմն նաև առանձնակիության իմաստներ կամ իմաստային նրբերանգներ: Օրինակ՝ **ինչ-ինչ** (պատճառով), **իրեն-իրեն** (խոսել), **այս-այս** (դեպքում, մարդիկ), **քանի-քանի** (անգամ) և այլն:

Ու (երբեմն՝ *և*) շաղկապով կապվող՝ այս կարգի կրկնավորները կապակցվում են որոշակի բայերի հետ, ինչպես՝ **ես ու ես, ինձ ու ինձ** (մտածում, խոսում էի), **ո՞վ ու ո՞վ** (զնային, եկան), **ի՞նչ ու ի՞նչ, ի՞նչ և ի՞նչ** (տամ քեզ) և այլն:

5) *Չայնարկությունների և բնաշայնականների կրկնությանը* կազմվող կրկնավորները արտահայտում են սաստկական իմաստներ, ինչպես՝ **հե՛յ-հե՛յ, վա՛հ-վա՛հ, հա՛յ-հա՛յ, հո՛-հո՛, ճի՛կ-ճի՛կ, կը՛ ո-կը՛ ո, վի՛շ-վի՛շ, ո՛ւ-ո՛ւ և ո՛ւ և ո՛ւ** և այլն:

բ) Բայական կրկնավորներ: Բայի կրկնությանը կազմված հարադրականներում երկրորդ բաղադրիչը սովորաբար հնչյունավորվում է՝ **նստել-մստել, ծլկել-մկկել, գրել-մրել** և այլն: Հարադրավոր բայերի հարադիրը նույնպես կարող է կազմվել կրկնությանը՝ **բզիկ-բզիկ անել՝ լինել, կտոր-կտոր գալ, վեր-վեր թռչել, մոտ-մոտ անել** և այլն:

Հնչյունավորխությունը կրկնավոր բարդություններում: Կրկնավորներում հնչյունավորխվում է բաղադրիչներից մեկը կամ էլ բաղադրիչների մեջ ավելանում է հավելյալ հնչյուն: Այսպիսի կրկնավորների առանձնահատկությունն այն է, որ հիմնականում ընդարձակվում է բառի բառային իմաստը, բառը ձեռք է բերում հավաքական, բազմակիության ավելի լայն նշանակություն: Բաղադրիչները միանում են գծիկով, երբեմն նրանց միջև ընկնում է *ու* շաղկապը:

1) Կրկնավոր բարդությունն՝ առաջին բաղադրիչի բառասկզբի բաղաձայնի կորուստով՝ **այլուն-փայլուն, առոր-փառոր, ակաս-պակաս, ալան-թալան, ալաս-փալաս** և այլն:

2) Կրկնավոր բարդությունն՝ երկրորդ բաղադրիչի բառասկզբի բաղաձայնի փոփոխմամբ (սովորաբար դառնում է *ձ*)՝ **թելիկ-մելիկ, քիչ-միչ, հաց-մաց, սուտ-մուտ, տուն-մուն, կլոր-մլոր, ոլոր-մոլոր** (վ>մ), նաև՝ **պարապ-սարապ, լոթի-փոթի, սուս-փուս, զիզի-բիզի, սիլի-բիլի** և այլն:

3) Կրկնավոր բարդությունն՝ երկրորդ բաղադրիչի (սկսվում է ձայնավորով) սկզբում որևէ բաղաձայնի (սովորաբար *ձ*-ի) հավելումով՝ **անուշ-մանուշ, ավել-մավել, աղ ու մաղ, նաև՝ աման-չաման, ամբաղ-գամբաղ, առակ-պառակ լինել** (խայտառակվել):

4) Կրկնավոր բարդությունն՝ երկրորդ բաղադրիչի ձայնավորի կամ ձայնավորների փոփոխմամբ՝ **մանր-մունր, մագ-մուգ, չեմ-չում, չեմ ու չում, ծակ-ծուկ, մարդ-մուրդ, հա՛յ-հո՛ւյ, քաղցր-մեղր** (նաև բառասկզբի բաղաձայնի փոփոխություն), **փալաս-փուլուս, լակոտ-լուկուտ, աղքատ-ուղբուտ** (երկու ձայնավորների փոփոխություն) և այլն:

5) Կրկնավորների՝ անականների առաջին բաղադրիչի առաջին վանկի փոփոխմամբ: Այս եղանակով կազմված մի քանի կրկնավոր հարադրական բարդություններում կատարվել է բաղադրության ընդհանուր իմաստի սաստկացում, ինչպես՝ **կաս-կարմիր** (*կարմիր-կարմիր* > **կար-կարմիր* (փոխազդ. հնչյունափ.՝ անփոփում) > *կաս-կարմիր* (փոխազդ. հնչյունափ.՝ տարնմանում), **կաս-կապույտ, կափկանաչ, սեփ-սև, ճեփ-ճերմակ, լեփ-լեցուն, միս-մեճակ, չիփ-չփլախ** և այլն (սրանց մեծ մասը գործածվում է ժողովրդախոսակցական լեզվում կամ բարբառներում):

Կրկնավոր հարադրական բարդությունների մի տեսակ է հնչյունական կազմով և իմաստով նույն կամ մոտ բառերի կրկնությունը, երբ երկրորդ բաղադրիչը որոշ չափով ձևափոխված է, ինչպես, օրինակ, ժողովրդախոսակցական լեզվում և բարբառներում տարածված բառերից՝ **փոր-փսոր, շուն-շնվոր, ճար-ճարակ, տեր-տիրական, կեր-**

կերակուր, հոտ-հոտոտանք և այլն¹³²: Սրանց մի մասը կարող է համարվել սովորական անվանական հարադրություն:

4. Հատվածական բաղադրություններ

Վերլուծական բաղադրությունների առանձին տեսակ է հատվածական բաղադրությունը, որի բաղադրիչները նույնական կամ նույնիմաստ ածականակերտ ածանցներով կազմված և իրար հետ ստորադասության, համադասության կամ փոխադարձության հարաբերությամբ կապակցված բառեր են¹³³:

Այս կարգի բաղադրությունները առաջանում են նույնանիշ կամ համանիշ ածանցներով կազմված ածականների համադասական կամ ստորադասական կապակցություններից՝ առաջին բաղադրիչ անդամի ածանցի կրճատման (հատման) և շաղկապի վերացման միջոցով, ինչպես՝ **կուլտուրական և լուսավորական – կուլտուր-լուսավորական** (աշխատանք), **ֆրանսիական և պրուսական – ֆրանս-պրուսական, հեռախոսային և հեռագրային – հեռախոս-հեռագրային** (կապ) և այլն: Երբեմն հոմանիշ ածանցը կարող է և չկրճատվել՝ **ազգային և ազատագրական – ազգային-ազատագրական**:

Հատվածական բաղադրությունների բաղադրիչ-անդամների քերականական հարաբերությունը **համադասական** է համարվում, երբ բաղադրության անդամները համագոր են, միմյանց լրացում չեն, և բաղադրությունն իբրև համադաս անդամների մի բառակապակցություն՝ նախադասության մեջ միասնաբար դառնում է գոյականական անդամի լրացում՝ **ազգային-ազատագրական** (ազգային-ազատագրական պատերազմ = ազգային և ազատագրական պատերազմ), **կուլտուր-լուսավորական**:

Ստորադասական է բաղադրիչ-բառերի հարաբերությունը, երբ բաղադրիչներից մեկը (առաջինը) մյուսի լրացումն է՝ **հյուսիս-արևմուտք** (հյուսիսային արևմուտք), **հարավ-արևելք**:

¹³² Տե՛ս *Աճառյան* Հ., նշվ. աշխ., էջ 84:

¹³³ Տե՛ս *Չախուկյան* Գ., *Աղայան* Էդ., *Առաքելյան* Վ., *Քոչյան* Վ., Հայոց լեզու, I մաս, Ա պրակ, Երևան, 1980, էջ 402-408 («Բառակազմություն» բաժնի հեղինակը Էդ. Աղայանն է):

Վերջապես, այդ կարգի բաղադրությունների բաղադրիչ-բառերը կարող են գտնվել երկկողմանի (եռակողմանի, անգամ՝ բազմակողմանի) հարաբերության մեջ (**փոխադարձություն, զուգադրություն** և այլն), ինչպես՝ **ռուս-հայերեն, հայերեն-ֆրանսերեն** (բառարաններ), **ռուս-թուրքական** (պատերազմներ), **հայերեն-լատիներեն-ռուսերեն-անգլերեն-ֆրանսերեն-գերմաներեն** (բուսանունների բառարան):

Դեռևս անցյալ դարի կեսերին բաղադրիչների ստորոդասական և համադասական հարաբերությամբ հատվածական համարվող բազմաթիվ բաղադրություններ այդ դարավերջին արդեն վերածվել էին համադրական հոդակապավոր (բուն կամ իսկական) բարդությունների, իսկ որպես իրական հատվածական բաղադրություններ այսօր մնում են միայն փոխադարձական հարաբերություն արտահայտողները¹³⁴: Օրինակներ՝ **գիտահետազոտական, ռազմաօդային, արևմտաեվրոպական, ռոմանագերմանական, ուսումնամանկավարժական, բարոյաբաղադրական, հյուսիսարևելյան** և այլն:

Համադրական բարդություններ

Այս կարգի բարդությունները կազմվում են համադրական եղանակով, բաղադրիչները հանդես են գալիս միասնաբար, ունեն մեկ ընդհանուր շեշտ, և ըստ բաղադրիչների ձուլվածության աստիճանի ու կցվածության, շարահյուսական կապի դրսևորման, իմաստային անկախության՝ ստորաբաժանվում են **կցական և իսկական** կամ **բուն բարդությունների**:

Կցական բարդություն

Համադրական եղանակով կազմվող այն բարդությունները, որոնց կազմի մեջ մտնող բաղադրիչները (հիմք կամ բառ և արմատ, նախդիր) հանդես են գալիս միասնաբար՝ կցումով (արտասանվում և

¹³⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 407-408:

գրվում են իբրև մեկ բառ), կոչվում են **կցական բարդություններ**, օրինակ՝ **այսօր, կեսօր, որևէ, ինչևիցե, հորեղբայր, ծվծվալ, քաշքշել**:

Կցական բարդությունները կազմվում են շարահյուսական կապակցություններից, տարբեր տիպի հարադրություններից, կրկնավորներից: Այդ կարգի շատ բարդություններում բաղադրիչները թեև հանդես են գալիս միասնաբար, բայց և զգալի է նրանց ձևաբանական-շարահյուսական և իմաստային անկախությունը, բաղադրիչները պահպանում են իրենց բառային ինքնուրույն նշանակությունները, ինչպես՝ **կեսգիշեր** (=գիշերվա կեսը), **այստեղ** (=այս տեղը՝ տեղում), **մորեղբայր** (=մոր եղբայրը), **նույնչափ** (= նույն չափը՝ չափով) և այլն:

1) Շարահյուսական տարբեր կապակցություններից կազմված կցական բարդություններ: Այդ կարգի կցական բարդությունները առաջացել են շարահյուսական տարբեր հարաբերություններ ցույց տվող բառակապակցություններից և հարադրություններից:

ա) *Հարկացուցիչ-հարկացյալից* կազմված կցականներ՝ **տանտիկին** < տան տիկինը, **հորեղբայր** < հոր եղբայրը, **քեռայր** < քրոջ (գրբ. *քոյր*, սեռ.՝ *քեռ*) այրը՝ ամուսինը (փեսա), **պատվոգիր** < պատվո (գրբ. *պատրոսյ* սեռ.) գիր, **գլուխգործոց** < գործերի (գրբ.՝ *գործոց*) գլուխ և այլն:

բ) *Որոշիչ-որոշյալով* կազմված կցականներ՝ **այսպես** < այս պես (ձևով), **տղամարդ** < տղա մարդ, **ոչինչ** < ոչ ինչ, **նույնչափ** < նույն չափ, **մեկտեղ** < մեկ տեղ՝ տեղում, **տաքդեղ** < տաք դեղ և այլն:

գ) *Ենթակա-սրորոգյալով* կազմված կցական բարդություններ՝ **երթևէ** < երբ և է (կա, լինում է), **ինչևիցե** < ինչ և լինի (*իցէ. հս* օժ. բայի գրբ. ապառնիմ), **տերողորմյա** < գրբ. Տէ՛ր, ողորմեա՛ (Տէ՛ր, ողորմի՛ր), **Էջմիածին** < գրբ. էջ Միածին (իջավ Միածինը) և այլն:

դ) Բայի՝ մեծ մասամբ գրաբարյան հրամայականի ձևերի կցումով կազմված բարդություններ՝ **երթևեկ, առևտուր, ելևէջ, տուրևառ**:

ե) Գրաբարյան զանազան շարահյուսական կառույցներից առաջացած կցականներ, որոնք ժառանգվել են մեր լեզվի հին շրջանից՝ **ձերբազատ, այսուհետև, այնուհետև, որովհետև, այսուամենայնիվ, այնուամենայնիվ, իմիջիայլոց** (տե՛ս նաև ա) և գ) կետերի գրաբարյան օրինակները) և այլն:

2) Գրաբարյան նախդիրներով կազմված կցական բարդություններ: Գրաբարի **առ, գ, ընդ, ըստ, ի** (>յ>հ), **ց** նախդիրները, որոնք ժամանակակից հայերենում քերականական այդ կարգի բացակայության պատճառով կորցրել են իրենց դերը, գրաբարյան շրջանից ժառանգած բառերում հանդես են գալիս իբրև բարդության բաղադրիչներ: Հայերենի զարգացման հետագա՝ մասնավորապես աշխարհաբարյան շրջանում հիշյալ նախդիրներով համաբանությամբ կազմվում են նոր բառեր:

Առ նախդիրով – **առաջժմ, առմիշտ, առդիր** (հավելված), **առհասարակ, առափնյա, առանցք, առերես, առընթեր, առկայծ, մաս** բայեր՝ **առարկել, առգրավել, առերեսել, առինքնել, առկայծել, առճակատել, առնմանվել, առնչվել, առոգանել, առանձնանալ** և այլն:

Զ նախդիրով – **գարդ, գարմ** (գ-արմ(արմատ)), **զգլխիչ, զով** (<զհով), **զառիվեր, զառիկող, զարթուն, զանցանք** (զ-անց(նել)-անք), **զանց** (առնել), **մաս** բայեր՝ **զարթնել, զարկել, զարմանալ, զգետնել, զիջել, զառանցել, զօծել, սթափվել, սրողել** և այլն:

Ընդ նախդիրով – **ընդհանուր, ընդդեմ, ընդարձակ, ընդառաջ, ընդամենը, ընդմիշտ, ընդգետնյա, ընդունակ, ընդամին, բայեր՝ ընդառաջել, ընդարձակել, ընդդիմանալ, ընդհարվել, ընդվզել** և այլն:

Ըստ նախդիրով – **ըստամսյա, ըստգործյա, ըստամենայնի, ըստմասնյա, (ինքն)ըստինքյան, անըստզյուտ, բայերից՝ ստանձնել** (ըստանձնել) և այլն:

Ի (>յ>հ) նախդիրով – **իզուր, իսպառ, իհարկե, իմիջիայլոց, հառաջ, հանձին, հօգուտ, հոտնկայս, հուղարկավորություն, հուրախություն, հայամավորք, բայեր՝ հանձնարարել, հաջողվել, հարձակվել, համբառնալ, հուղարկավորել** և այլն:

3) Հարադրավոր բայերից կազմված կցականներ: Հարադրական բայերից հին շրջանում կազմվել են մի քանի կցական բայեր՝ **ակնածել** (ակն ածել), **գործածել** (ի գործ ածել) և այլն: Ավելի տարածվածը, սակայն, հարադրական բայերի հիման վրա տարբեր՝ ոչ բայական խոսքի մասերի պատկանող կցական բարդությունների կազմումն է, ինչպես՝ **հանձն առնուլ**-ից կազմվել է **հանձնառու, հանձնառություն, վրեժ խնդրել**-ից (գրք. *խնդրել* «փնտրել») **վրեժխնդիր**,

վրեժխնդրություն, ակն կալել-ից ակնկալություն, ակնկալիք, (ան)ակնկալ և այլն:

Ժողովրդախոսասկզական լեզվում՝ իրար անցնել – իրարանցում, երես ծեծել – երեսծեծանք, աչք խփել – աչքխփոց(ի) և այլն:

Գրական, ինչպես նաև ժողովրդախոսասկզական լեզվում կցական բարդություններ են կազմվում ոչ միայն բուն հարադրական, այլև լրացում ունեցող բայերից, երբ բայական բառակապակցությունը կամ հարադրական բայը ծառայում է որպես ածանցավոր բաղադրության հիմք, ինչպես՝ **ճրագ վառել – ճրագավառոց, արևը մտնել – արևնտոց, նշան տալ – նշանտուք, սիրտը խառնել – սրտխառնուք, երես(ը) սրբել – երեսսրբիչ, մաս հանել – մասհանում, մեջ բերել – մեջբերում, առաջ խաղալ – առաջխաղացում, շուրջը կալել – շուրջկալ**¹³⁵:

4) Բաղիյուսական հարադրություններից առաջացած կցականներ: Հոմանիշ, իմաստային ընդհանրություն ունեցող, հականիշ, ինչպես նաև համագոր և համադաս այլ անդամներով կազմվող բաղիյուսական հարադրություններից բաղադրիչների կցումով կազմվում են կցական բարդություններ: Այս կարգի բարդությունների բառային իմաստն ավելի ընդհանուր ու լայն է, հաճախ՝ փոխաբերական, և բաղադրիչ-բառերը մեծ մասամբ կորցնում են իրենց իմաստային ինքնուրույնությունը, օրինակ՝ **աղուհաց** «բարեկամություն, հավատարմություն», **նիստուկաց** «բարք, սովորություն», ինչպես նաև՝ **անցուղարձ, այրուձի, երթևեկ, առևտուր, ելևմուտ, ելևէջ, այբուբեն, տանուտեր, հարցուփորձ, հալումաշ, հարևանան** և այլն:

Համադաս բաղադրիչներից տասնավորներով և միավորներով են կազմվում **տասնմեկ-ից** մինչև **իննասունինը** քանակական թվականները:

5) Արմատի (հիմքի) կրկնությամբ կազմված կցական բարդություններ: Ժամանակակից հայերենում մեծ թիվ են կազմում բառարմատի կրկնությամբ կազմված կցական բարդությունները: Այդ կարգի կրկնավոր-կցական բարդության առանձնահատկություն այն է, որ

¹³⁵ Արեղյան Մ., նշվ. աշխ., էջ 141-142:

կրկնվող արմատը հաճախ ժամանակակից հայերենում ինքնուրույն, անկախ գործածություն չունի: Կրկնավոր-կցական բարդության մի մասի արմատը կարող է հնչյունափոխվել, մյուս մասինը մնում է անփոփոխ¹³⁶:

ա) *Արմատի կրկնություն՝ առանց հնչյունափոխության*: Այս կարգի կրկնավոր-կցական բարդություններում բաղադրիչ բառարմատները հանդես են գալիս առանց հնչյունափոխության, այսպիսի հիմքերից կազմվում են հիմնականում բայեր՝ **Արարիչ, արծարծել, բեկբեկ(ե), դողդողալ, խողխողել, կափկափել, կերկերալ, հեղհեղուկ, սորսոր, փայփայել, փողփողալ, քայքայել** և այլն:

բ) *Արմատի չայնավորի հնչյունափոխությամբ կրկնավոր-կցական բարդություններ*: Այս կարգի բարդություններում արմատական ձայնավորը կարող է հնչյունափոխվել ինչպես երկու բաղադրիչներում, այնպես էլ դրանցից միայն մեկում:

1) Երկու բաղադրիչներում արմատական ձայնավորի հնչյունափոխություն՝ **թթռալ** (թիռ), **խլխլել** (խիլ), **ծփծփալ** (ծուփ), **ձգձգել** (ձիգ), **փրփրել** (փուր), **քրքրել** (քիր) և այլն:

2) Բառի բաղադրիչներից մեկում արմատական ձայնավորի հնչյունափոխություն. առաջին բաղադրիչում՝ **թթուր** (թուր), **բջիջ** (բիջ), **ծիծաղ** (ծաղ), **ճղճիմ** (ճիղ), **փրփուր** (փուր) և այլն:

Երկրորդ բաղադրիչում՝ **վազվզել, թափթփել, ծամծմել, մազմզուկ, քաշքշել** ($m > n$), **խարխուլ, աղջամուղջ** ($m > ni$), **հայհոյել** ($m > n$), **ծոծրակ** ($n > \downarrow$) և այլն: Այս երկու ենթախմբերի մեջ մտնող բառերում, ինչպես օրինակներից էլ երևում է, կարող են փոխազդեցական հնչյունափոխության ենթարկվել նաև բաղաձայնները:

3) Արմատական վերջին բաղաձայնի կորուստ բաղադրիչներից մեկում՝ **բաբախ(ե)** (բախ), **ծոծրակ** (ծոր), **կոկոն** (կոն), **ճաճանջ** (ճանջ), **պոպոկ** (պոկ), **տատանել** (տան), **փոփոխել** (փոխ) և այլն:

4) Արմատական առաջին բաղաձայնի կորուստ բաղադրիչներից մեկում (սովորաբար՝ երկրորդում)՝ **խաղաղ** (խաղ), **խոպոպ**

¹³⁶ Տե՛ս *Աճառյան* Հ., նշվ. աշխ., էջ 85-93:

(խոս), **հագագ** (հագ), **հայթայթել** (հայթ), **հեղեղ** (հեղ), **հոսոս** (հոս), **հոտոտել** (հոտ) և այլն:

5) Արմատական բաղաձայնների փոփոխություն (հերթագայություն, պարզեցում) բաղադրիչներից մեկում՝ **կարկամ** ($n > m$), **խարխափել**, **սարսափ** ($n > m$), **բորբոքել**, **մորմոք** ($n > p$), **բորբոս** ($n > u$), **խարխուլ** ($n > l$), **ճղճիմ** ($n > m$), **տաղտուկ** ($n > k$), **ծանծաղ** ($n > n$), **ցանցառ** ($n > z$), **կսկիծ** ($\delta > u$) և այլն:

Իսկական կամ բուն բարդություն

Իսկական կամ բուն են կոչվում այն բարդությունները, որոնք կազմվում են համադրական եղանակով սերող և բաղադրող հիմքերից, որոնց շարահյուսական կապը մթազնաժ է կամ ձևաբանորեն չի դրսևորված համապատասխան վերջավորություններով: Օրինակ՝ **ջրշուն**, **գնդասեղ**, **սրամիտ**, **մեծատուն**, **սրտաբուխ**, **սերմնացան**, **վալեչահասակ**, **վարքագիր**, **գործարանատեր** և այլն: Նաև հատուկ անուններ՝ **Տիրատուր**, **Չարմայր**, **Յուլակ**, **Սիրանուշ**, **Հրածին**, **Արևհատ** և այլն:

Իսկական կամ բուն բարդությունների առանձնահատկությունները:

ա) Իսկական բարդությունները ունեն մեկ բառային շեշտ, որն ընկնում է բաղադրության վերջին վակի վրա, օրինակ՝ **հեռագիր**, **սիրագորով**, **գրքասեր**, **գյուղաքաղաք**, **գուգահեռանիստ** և այլն:

բ) Բարդության բաղադրիչները հիմնականում կորցնում են իրենց իմաստային անկախությունը: Բաղադրության ընդհանուր իմաստն ավելի լայն է, քան նրա բաղադրիչների առանձին իմաստները: Օրինակ՝ **հացբուխ** չի նշանակում «հաց» և «թխել», այլ՝ «հաց թխող մարդ՝ մասնագետ, նա, որ հաց է թխում» (*մարդ, մասնագետ, նա (անհ)*) իմաստները բաղադրիչներից և ոչ մեկը չունի): **Կառամատույց** ոչ թե «կառ(ք)» և «մատույց (մատուցել)», այլ՝ «երկաթուղային կայարանում հրապարակ, որի մոտ կանգ են առնում մարդատար գնացքները» (*եկաթուղային կայարան, մարդատար գնացք, կանգ առնել*) իմաստները ոչ մի բաղադրիչով չեն արտահայտված): Այսպիսի

տով, բաղադրությունն ամբողջությամբ առած՝ մեծ մասամբ արտահայտում է մի այնպիսի նոր իմաստ, որը չի բխում բաղադրիչների առանձին, անկախ իմաստներից կամ այդ նոր իմաստը չի ստացվում նրա բաղադրիչների բառային ինքնուրույն իմաստների մեխանիկական գումարից, Օրինակ՝ **փայտփոր** կամ **փայտփորիկ** չի նշանակում ընդհանրապես «փայտը փորել կամ փայտը փորող», այլ «անտառային փոքրիկ թռչուն, որ սնվում է ծառերի կեղևներից կտուցով փորելով հանելով և ուտելով տարբեր որդեր և միջատներ» (*թռչուն* նշանակությունը բաղադրիչներով չի արտահայտված), նաև՝ **դիմախաղ, դասընկեր, ինքնաբուխ, ալլադամ** և այլն: Կցական որոշ բարդություններում նույնպես կարելի է հանդիպել այսպիսի երևույթի: Սկզբունքորեն սրանք տարբերվում են իսկական բարդություններից նրանով, որ բաղադրիչները պահում են իրենց բառային ձևական անկախությունը, նրանց կապը ամուր չէ, կարող են բաժանվել և մի դեպքում կդառնան հարադրական բարդություններ կամ ուղղակի սովորական բառակապակցություններ, մյուս դեպքում՝ դարձվածքներ: Հմնտ. *Խանութից գնեց կաթնշոռ, պանիր, սառուցիկ և Աղ ու հաց* [=երախտիք, բարեկամություն] *չորացող մարդ է:*

Ծանոթություն: Բաղադրյալ (բարդ և ածանցավոր) բառերի այսպիսի՝ բաղադրիչների առանձին նշանակություններից չբխող, ոչ մի նյութական արտահայտություն չունեցող (որևէ ձևությամբ չարտահայտված) նշանակությունը կոչվում է *դարձվածայնացած* կամ *իդիոմատիկ իմաստ*: Դրանք խոսողը կամ կարդացողը ուղղակի պետք է իմանա իր նախորդ փորձից կամ պարզի բառարաններով:

Կան նաև ոչ մեծ թվով իսկական կամ բուն բարդություններ, որոնք իրենց բաղադրիչներից ավելի իմաստներ չեն արտահայտում: Նրանց ընդհանուր իմաստը (ինչպես հարադրական և կցական բարդություններում) բխում է բաղադրիչների նշանակություններից, կազմվում է բաղադրիչների իմաստների հիման վրա, ավելի լայն չէ, քան վերջիններիս իմաստները: Դրանք մեծ մասամբ բաղադրիչների համադասական հարաբերությամբ կապված ածականներ և մակբայներ են, օրինակ՝ **մշտադալար, հեզանկուն, լայնարձակ, խառնաշփոթ, վայելչազեղ, հորաբույր** և այլն:

զ) Իսկական բարոյության բաղադրիչները միշտ միացած, միաձույլ են հանդես գալիս, և հնարավոր չէ նրանց անջատումը, ինչպես, օրինակ, **հաց** և **թուխ**, **ջր** և **կիր**, **սրտ** և **բուխ**: Նախ, որպես բաղադրիչ հանդես եկող հիմնական ձևույթներից մեկը (հազվադեպ՝ բոլորը)՝ իբրև արմատական բառ, ինքնուրույն, անկախ գործածություն չունի: Եթե անգամ հնարավոր լինի այնպիսի իսկական բարոյությունների, ինչպես **մայրաքաղաք**, **մեծատուն**, **դասասենյակ** բառերն են, ըստ իրենց բաղադրիչների բաժանումը՝ **մայր** և **քաղաք**, **մեծ** և **տուն**, **դաս** և **սենյակ**, ապա նման մեխանիկական անջատումը կհանգեցնի բաղադրության իմաստի խախտման: Անիմաստ է **բաժակաճառ**-ի բաղադրիչները բաժանել **բաժակ** և **ճառ** բառերի:

դ) Իսկական բարոյությունների բաղադրիչների շարահյուսական կապը նթագնած է և ձևաբանորեն չի դրսևորվում, ինչպես՝ **ուրվանկար**, **գոյատևել**, **գիտաժողով**, **ծաղրանկար**, **ծաղրածու**, **զվարթաձայն**:

ե) Իսկական բարոյության բնորոշ հատկանիշն է համարվում նաև բաղադրիչների (հիմնականում՝ առաջինի) հնչյունափոխությունը, որը կապվում է շեշտի տեղափոխության հետ, ինչպես՝ **գրագետ**, **ջրկոտեմ**, **մշտապես**, **ուրվագիծ**, **գարեջուր**, **սառցալեռ** և այլն:

զ) Որպես կանոն՝ իսկական բարոյության երկու բաղադրիչների միջև մտնում է **ա** (խիստ հազվադեպ՝ **ե**) հոդակապը, ինչպես՝ **զնդացիր**, **միապետ**, **տիեզերագնաց**, **գերեվարել**, **այցեքարտ**: Բաղադրիչների միջև հոդակապ չի մտնում մեծ մասամբ այն դեպքում, երբ երկրորդ բաղադրիչն սկսվում է ձայնավորով, օրինակ՝ **թանաքաման**, **գաղթօջախ**, **աշխատուժ**, **գործընկեր**, **բազմիմաստ** և այլն:

Ա հոդակապի ծագումը¹³⁷ կապվում է սերող բառահիմքի **ա** վերջնաձայնավորի հետ: Հայերեն մի շարք բառերում **ա** ձայնավորը, սկզբնապես լինելով արմատական վերջնահնչյուն, հանդես է եկել բաղադրություններում, ինչպես՝ **մեծատուն** բառի մեջ: Այս բարոյության առաջին բաղադրիչը նախապես ոչ թե **մեծ** ձևույթն է եղել, այլ՝ **մեծա**-ն: Հետագայում արմատական այդ **ա** ձայնավորի անկման

¹³⁷ Տե՛ս *Ափեղյան Մ.*, Երկեր, հտ. 2, էջ 190-191:

հետևանքով **մեծա** բառարմատի ուղիղ ձևը դառնում է **մեծ**, և **մեծա-****տուն** բարդության մեջ **ա-**ն, այլևս չգիտակցվելով իբրև արմատական հնչյուն, ընդունվում է որպես հոդակապ, որը համաբանությամբ տարածվում է հայերեն բաղադրյալ բառերի կազմության մեջ: Բառակազմության ժամանակ որոշ դիքքերում **ա** հոդակապը, միանալով նախորդ բաղադրիչի վերջնահնչյուն **ի-**ին, դառնում է **ե**, ինչպես՝ այգի-**ա-**գործ > **ագեգործ**, տարի-**ա-**վերջ > **տրեվերջ**, բարի-**ա-**կամ > **բարեկամ** և այլն: Հետագայում այդ կարգի **ե-**ն նույնպես գիտակցվում է որպես հոդակապ և համաբանությամբ մտնում է մի քանի այնպիսի բարդությունների կազմության մեջ, որոնց սերող (առաջին) հիմքը **ի-**ով չի վերջանում, ինչպես՝ **խաբեպատիր, ծաղկեփունջ, հաշվեհարդար, այցետոմս, այցեքարտ:**

Անհոդակապ իսկական կամ բուն բարդություններ: Իսկական բարդություններ են կազմվում նաև առանց հոդակապի, ինչպես՝ **գորբաց, հացթուխ, հավկուր, ծալպակաս, թթխմոր, քարտաշ** և այլն:

Անհոդակապ իսկական բարդությունները հիմնականում, ըստ երևույթին, ծագել և տարածվել են ժողովրդախոսակցական լեզվից և բարբառներից, սրանք ավելի նախնական են, քան հոդակապավորները, օրինակներ՝ **դրկից, թերմաշ, գելխեղդ, նեղսիրտ, ծամկալ, արևկող, փլավքամիկ** և այլն:

Կան նաև միևնույն բաղադրիչներով կազմվող բարդության հոդակապավոր և անհոդակապ ձևերը, ինչպես՝ **խրատտու-խրատատու, հացթուխ-հացաթուխ, տնկից-տնակից, չարկամ-չարական, թերխաշ-թերախաշ** և այլն: Այսպիսի մի շարք բարդություններ ունեն իմաստային որոշակի տարբերություններ և տարբեր բառեր են, ինչպես՝ **հրձիգ** «կրակ տվող, հրդեհող, հրդեհ գցող» և **հրաձիգ** «հետևակ գորքի հրագեճով զինված զինվոր», **քարտաշ** «քար տաշող՝ հղկող մասնագետ-բանվոր, քարագործ» և **քարատաշ** «*ած.* քար տաշելու, քար տաշող (գործիք, մեքենա)», **քարկոփ** «թանկագին քարեր տաշող՝ կոփող, ականագործ» և **քարակոփ** «քարից կոփած՝ շինած, քարակոռ», **գայլխեղդ** «գայլ խեղդող հովվական շուն, գամփո» և **գայլախեղդ** «*ած.* գայլի խեղդած, գայլից խեղդված» և այլն:

Իսկական կամ բուն բարդության բաղադրիչների իմաստաբանական և շարահյուսական հարաբերությունը

Իսկական բարդության բաղադրիչների շարահյուսական կապերի ոչ հստակ ձևավորումը բաղադրության բազմիմաստության պատճառ է դառնում, այսպես՝ **լավատես** «1. լավը տեսնող, լավ բանը տեսնող, օպտիմիստ, 2. լավ տեսնող, սրատես», **ջրածին** «1. ջուր ծնող, 2. ջրից՝ ջրում ծնված», **կովկիթ** «1. կով կթելը, կովի կիթը, 2. կովը կթելու աման, կաթի աման, 3. կով կթող, կթվոր»: Կամ **գիր** ձևությով բարդություններում այն հանդես է գալիս «տառ», «գրող», «գիրք» իմաստներով, ինչպես՝ **երկաթագիր, շղագիր, գլխագիր** («տառ»), **պատմագիր, ժամանակագիր, վիպագիր** («գրող»), **օրագիր, լրագիր, տեղեկագիր** («գրվածք, գրություն, գիրք»): **Տրտատաք** «ցուրտը տարած՝ տված, ցրտահար» և **մարդատաք** «մարդ տանող՝ փոխադրող» **գագատաք** «գագ տանող՝ փոխադրող» և այլն:

Իսկական կամ բուն բարդությունների բաղադրիչների հարաբերությունը սովորաբար ստորադասական է: Անսովոր չէ նաև համադասական հարաբերությունը՝ **դառնանուշ, տխրուրախ, հիասքանչ, վայելչագեղ, լայնարձակ, բարեկիրթ**:

Բաղադրիչների հարաբերությունը ստորադասական լինելով՝ առաջին բաղադրիչը՝ սերող հիմքը, երկրորդի՝ բաղադրող հիմքի լրացումն է: Հետևաբար, ինչպես նշել ենք, իսկական բարդ բառերի հիմնական նշանակությունը բաղադրող հիմքն է արտահայտում. սերողը որևէ կողմով լրացնում է երկրորդի իմաստը և բարդ բառը բառակապակցության փոխակերպելիս դառնում է որևէ լրացում, ինչպես՝ **հացատուն** (= հացի տուն), **սևահող** (= սև հող), **գլխաբաց** (= գլուխը բաց), **ժայռակերտ** (= 1. ժայռից կերտված, 2. ժայռ(եր)ում կերտված), **արևահայաց** (= արևին՝ դեպի արևը նայող) և այլն:

Բուն հայկական է համարվում այն իսկական բարդությունը, որի առաջին բաղադրիչը երկրորդի լրացումն է, հակառակ դեպքում այն կազմված է օտար լեզվի մանողությանը (պատճենում է), այսպես՝ **հայկական են՝ պատվարժան** (= պատվի արժանի), **սիրարժան, բանաստեղծ** (= բան՝ խոսք ստեղծող), **բանասեր, քաղաքամայր** (= քա-

դաքների մայր), *հունարբան* կազմություններ են՝ **արժանապատիվ** (= արժանի պատվի), **արժանահավատ**, **ստեղծաբան**, **մայրաքաղաք** (հուն. *μητροπόλις*):

Գոյականական նշանակությամբ սերող հիմքը ստանում է գաճազան հոլովների կամ կապերի արտահայտած իմաստներ, որոնք երևում են փոխակերպման ժամանակ:

ա) Ուղղականի (և հայցականի) նշանակությամբ՝ **սրտամեռ** (= սիրտը մեռած), **լեղապատառ**, **ճյուղակոտոր**, **ալեկոծ**, **հուսահատ**, **անդամալույծ**, **ինքնաբույս** (բուն ուղղական), **մարդասեր** (= մարդուն՝ մարդ սիրող), **երկնահաս** (= երկինք հասնող), **վիպագիր**, **բարեգործ**, **ձկնորս** (բուն հայցական) և այլն:

բ) Սեռական-տրականի նշանակությամբ՝ **արքայորդի** (= արքայի որդի), **գայլակեր** (= գայլի կերած), **առյուծասիրտ**, **անձրևաջուր**, **քաղաքապետ** (բուն սեռական), **գրավարժ** (= գրին՝ գրելուն վարժ), **խավարասովոր**, **երկնահույ**, **ինքնահաճ**, **չափահաս**, **ուշաբերել** (բուն տրական) և այլն:

գ) Բացառականի նշանակությամբ՝ **հողածին** (= հողից ծնված), **երկնահուս**, **երկրաբույս**, **երկրաբուխ**, **ուշագնաց**, **պաշտոնանկ**, **մտահան**, **խելքահան** (անել) և այլն:

դ) Գործիականի նշանակությամբ՝ **ձյունապատ** (= ձյունով պատված), **հուսալից**, **ալեգարդ**, **ձեռագործ**, **ջրաղաց**, **բուսաբույժ** և այլն:

ե) Ներգոյականի նշանակությամբ՝ **խավարաբնակ** (= խավարում բնակվող), **ալյուրաթաթախ**, **գետնափոր**, **լեռնածին** և այլն:

Բարդության առաջին գոյականական բաղադրիչը եզակի ուղղական հոլովի ձևով դրվելիս.

ա) Գրաբարյան **ք** ունեցող անեզական բառերի (**կառք**, **փառք**, **խելք**, **կյանք**, **քիմք**, **միտք**, **մեղք**, **աչք** ևն) այդ վերջավորությունը բարդությունների սերող հիմքերում սովորաբար դուրս է ընկնում, ինչպես՝ **մտամոլոր**, **կառավարել** (նախն. իմաստով՝ կառք վարել), **փառապանծ**, **խելառ**, **քմահաճույք**, **մեղապարտ**, **աչագեղ**, **կենակից** և այլն: Ժամանակակից հայերենում այդ **ք**-ն արդեն չի գիտակցվում որպես հոգնակի վերջավորություն, ուստի և կան նորակազմություններ,

որոնցում այն պահպանվում է, ինչպես՝ **խելքապակաս, աչքաբաց, պարտքատեր** (հին՝ պարտատեր), **գրքասեր, կրծքաբաց** և այլն:

բ) Ժամանակակից հայերենում մի շարք բառերում դուրս է ընկել գրաբարի բառավերջի **ն** հնչյունը (**ձեռն – ձեռ, մասն – մաս, ուսումն – ուսում** ևն): Այդ կարգի **ն-ն** բառակազմության ժամանակ մեծ մասամբ վերականգնվում է՝ **ձեռներեցություն, ոտնաչափ, մասնակից, կողմնացույց, մատնահարված, ուսումնատենչ, լեռնագնաց, ձկնորս** և այլն:

գ) **Ն, ր, դ** վերջնահնչյուններ ունեցող մի շարք միավանկ բառեր, որոնք գրաբարում ենթարկվում էին ներքին հոլովումների, բարդության սերող հիմք կարող են դառնալ մեր հին լեզվի սեռական-տրական հոլովի ձևով՝ **ականատես (ակն, սեռ.-տր.՝ ական), ականակուռ, անվանակոչ, կայսերապաշտ, աստեղագետ, աստեղագարդ** (այժմ ավելի հաճախ՝ *աստղագետ, աստղագարդ*) և մի քանի այլ բառեր:

Գրաբարի հոգմակի հայցականի ձևով կազմված և հին լեզվից են մեզ ավանդված մի շարք բառեր՝ **կենսուսույց (կեանք – կեանս > կենս), կենսածին, կենսաբույս, կենսասեր, մեղսագործ, մեղսագիտակ, օրենագետ, օրենսդիր** ևն: Գրաբարյան այս ձևը նոր լեզվում համաբանությամբ անցել է այնպիսի բառերի մեջ, որտեղ հայցական չպետք է լինի (բաղադրիչների միջև չկա գերադասի և ուղիղ խնդրի հարաբերություն), ինչպես՝ **կենսուրախ** (կյանքով՝ կյանքում ուրախ), **կենսապարար** (կյանքով պարուրված), **օրենսգիրք** (օրենքների գիրք, կա նաև ավելի ճիշտ կազմությունը՝ **օրինագիրք**), **մեղսապարտ** (նախընտրելի ձևն է՝ **մեղապարտ**) և այլն:

Իսկական բարդության բաղադրիչները կարող են գտնվել *ենթակայի և սրարագայի՝ ինքնագնաց, այգաբաց, արևածագ, ուղիղ* և *անուղղակի խնդիրների* ու գերդասի և այլ հարաբերության մեջ՝ **ինքնասեր, բեռնատար, համալսարանավարտ** (ուղ. խնդ.), **մարդաստույս, արժեքագուրկ** (անջ. անուղղ. խնդ.), **կավածեփ, հողմաղաց** (միջ. անուղղ. խնդ.), **հայրենակարոտ, ծովահայաց** (հանգ. անուղղ. խնդ.) և այլն: Հարաբերությունը կարող է լինել *պարագայական՝ երկնապաց, հայրենադարձ* (տեղի պ.), *խանդավառ* (պտճ. պ.), *հովեկ* (նպ. պ.), *գարնանցան* (ժամ. պ.), *շարքացան* (ձևի պ.) և այլն:

Իսկական կամ բուն բարդության ձևաբանական կաղապարները

1) *Գոյականական հիւք + գոյականական հիւք կաղապարով* կազմվում են.

ա) Գոյականներ. առաջին բաղադրիչն ունի հատկացուցչի, որոշչի և այլ քերականական նշանակություններ՝ **արքայորդի, գանձատուն, ջրհոր, ծովեզր, անձրևաջուր, բանաձև, գոտեմարտ, մայրաքաղաք, բանակրիվ** և այլն:

բ) Կազմվում են նաև ածականներ՝ **ձյունափայլ, գազանասիրտ, շրջանաձև** և այլն:

2) *Գոյականական հիւք + ածականական հիւք կաղապարով* կազմվում են ածականներ: Առաջին բաղադրիչը երկրորդի լրացումն է. շարահյուսական կապակցությամբ փոխակերպման դեպքում նրա իմաստն արտահայտվում է հոլովաձևերով և կապային կապակցություններով՝ **լուսապայծառ, մարդաշատ, ծալպակաս, ջրամոտ, հողախառն, մարդավայել, երկրամերձ, սանձարձակ, մտամոլոր, վարդակարմիր** և այլն:

3) *Գոյականական հիւք + բայական հիւք կաղապարով* կազմվում են.

ա) գոյականներ՝ **անասնապահ, գրաշար, քարտաշ, դասատու, հրացան, գործակատար, տոմսավաճառ, տեղակալ** և այլն:

բ) Ածականներ: Որոշ ածականներ կարող են գործածվել նաև իբրև գոյական: Օրինակներ՝ **գրագետ, հրացայտ, լեղապատառ, հուսահատ, կարկտահար, վշտաբեկ, կավածեփ, նաև՝ ջրատար, ուրբաքախոս, հայրասպան** և այլն:

Բայական բաղադրող հիւքով բարդությունները փոխակերպման դեպքում վերածվում դերբայական գերադաս անդամով կապակցությունների, ընդ որում՝ անորոշ դերբայի փոխակերպման դեպքում նախատիպը ունենում է գործողության անվան կամ վերացական անվան նշանակություն, ենթակայականի դեպքում՝ գործող անձի կամ առարկայի (գործիքի) անվան, հարակատարի դեպքում՝ դրության, վիճակի նշանակություն, օրինակ՝ **գլխապտույտ** (գլխի պտտվելը), **լուսաբաց** (լույսը բացվելը), **բանաստեղծ** (բան՝ խոսք ստեղծող),

նվագավար (նվագը՝ երաժշտությունը վարող), **գնդացի** (գունդերը՝ գնդակները ցրող), **շարքացան** (շարք(եր)ով ցանող), **սանձարձակ** (սանձը արձակած), **չափահաս** (չափին հասած) և այլն:

4) *Ածականական հիւք + գոյականական հիւք կաղապարով* կազմվում են.

ա) գոյականներ՝ **կիսանդրի, թերակղզի, նրբերանգ, փափկամարմին, մոլախոտ, թթխմոր, լուսասող** (=լուսավոր ասող), **երկայնաբազուկ** և այլն:

բ) Ածականներ՝ **մեծահոգի, բթամիտ, գանգրահեր, դեղնագույն, թուլական, ազատախոհ** և այլն:

5) *Ածականական հիւք + ածականական հիւք կաղապարով* կազմվում են ածականներ՝ **դեղնակարմիր, կապտականաչ, վիթխարամեծ, ամրապինդ, բարեխառն, քաջածանոթ, բազմահմուտ** և այլն:

6) *Ածականական (մակբայական) հիւք + բայական հիւք կաղապարով* կազմվում են ածականներ՝ **բարձրահայաց, բարեկամ, չարախոս, խորասույգ, կարճատև, բարեգուշակ, հավերժահոս, մշտագնա** և այլն:

7) *Բայական հիւք + գոյականական հիւք կաղապարով* կազմվում են.

ա) հիմնականում գոյականներ՝ **վառելափայտ, ապրելակերպ, քսանյութ, խոսափող, մնջասենյակ, դրդապատճառ, ցուցամատ** և այլն:

բ) Կազմվում են նաև սակավաթիվ ածականներ՝ **խեղդամահ, տանջամահ:**

8) *Թվականական հիւք + գոյականական հիւք կաղապարով* կազմվում են ածականներ՝ **եռանդամ, երկսայր, չորեքլուսի, հնգանդամ, հազարերանգ** և այլն:

9) *Դերանվանական հիւք + գոյականական հիւք կաղապարով* կազմվում են.

ա) ածականներ՝ **մերակերպ, ինքնագլուխ, յուրօրինակ, յուրատեսակ** և այլն:

բ) Սակավաթիվ գոյականներ՝ **ինքնաեռ, ինքնավերլուծություն:**

10) *Դերանվանական հիմք + բայական հիմք կադասայրով* կազմվում են.

ա) **ածականներ՝ ինքնահավան, ինքնասեր, ինքնամեծար, ինքնագով, եսամոլ, եսասեր** և այլն:

բ) Գոյականներ՝ **ինքնաթիռ, ինքնահոս, ինքնատ:**

11) *Դերանվանական հիմք + ածականական հիմք կադասայրով* կազմվում են **ածականներ՝ ինքնավստահ, ինքնագուսպ, ինքնամիտի, յուրակերպ, յուրանման:**

12) *Մակբայական հիմք + ածականական հիմք կադասայրով* կազմվում են **ածականներ՝ մշտադալար, մշտառատ, հարանման, վաղածանոթ, հարականաչ** և այլն¹³⁸:

Հարաբարդ կամ բազմաբարդ բառեր (երեք և ավելի բաղադրիչներով կազմվող բաղադրություններ)

Ժամանակակից հայերենում, այսպես կոչված, **հարաբարդ** կամ **բազմաբարդ** են կոչվում այն բարդությունները, որոնք կազմվում են երկուսից ավելի արմատներով¹³⁹: Այդ կարգի բարդությունները մեծ թիվ չեն կազմում: Երկարաշնչության պատճառով այսիսի կազմությունները մեծ տարածում չունեն, թեև հայերենի բառակազմական հնարավորությունները չեն արգելում նրանց կազմությունը: Գրաբարում նույնպես եղել են նման սկավաթիվ բարդություններ, որոնք հազվադեպ կիրառություն են ունեցել: Ժամանակակից հայերենի հարաբարդ կամ բազմաբարդ բառերը նորակազմություններ են, որոնց հիմնական մասը վերաբերում է մասնագիտական-տերմինաբանական բառապաշարին:

Իրականում հարաբարդ բառերը, անկախ նրանցում առկա հիմնական (նաև երկրորդական) ձևայինների քանակից, կերտվում են երկբաղադրիչ բարդությունների կազմության սկզբունքներով՝ սերող

¹³⁸ Հմմտ. *Գալստյան Ս.*, Ամանցումը և ամանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1978, էջ 18-25:

¹³⁹ Տե՛ս *Աղայան Էդ.*, Հայոց լեզվի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, էջ 110-112: *Գալստյան Ս.*, նշվ. աշխատ., էջ 32-33:

և բաղադրող հիմքերը: Ուղղակի սրանց հիմքերից մեկը բաղադրյալ է կամ բաղադրյալ են երկուսն էլ. իրենց կազմում ունեն մեկից ավելի հիմնական (նաև երկրորդական) ձևույթներ: Այսպես, **բարեկամասեր** բառը թեև իր կազմում ունի երեք արմատ (հոդակապերը հաշվի չենք առնում)՝ *բարի*, *կամ* (*կամենալ*), *սեր* (*սիրել*), սակայն կազմված է երկու հիմքերի համադրությամբ՝ *բարեկամա* (*բարի+ս+կամ/ա*) + *սեր*. դա հստակ երևում է նաև բարդությունը բառակապակցության փոխարկելիս՝ «բարեկամ՝ բարեկամներին սիրող»: Նմանապես՝ **երկաթուղագիծ** < (*երկաթուղ/ա*) + *գիծ*, **լուսամուտափեղկ** < (*լուսամուտ/ա*) + *փեղկ*: Հետևյալ բարդությունների բաղադրող հիմքն են բաղադրյալ՝ **էլեկտրասարքաշինություն** < *էլեկտր/ա* + (*սար+ք+ս+շին+ություն*), **կաթնասնդամթերք** < *կաթ/ն/ա* + (*սուն+ունդ+ս+մթեր+ք*): Բաղադրյալ կարող են լինել երկու հիմքերն էլ, ինչպես՝ **օդանավակայան** < (*օդ/ա+նավ/ա*) + (*կա/յ+ան*), **հանքարդյունաբերություն** < (*հան+ք*) + (*արդ+յուն/ա+բեր+ություն*):

ԱԾԱՆՑՈՒՄ: ԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՂԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայերենում նոր բառերի ստեղծման եղանակներից կամ միջոցներից մեկը ածանցումն է¹⁴⁰: Ածանցումը հիմքին ածանցի կցումով նոր բառերի կերտումն է: Օրինակ՝ **դժ+բախտ, դժբախտ/ա+բար, զին (<զեն<հին զեն)+վոր, զինվոր+ական, զինվորական+ուրջուն, ճանաչ+ելի, ան+ճանաչելի, անճանաչելի+ուրջուն** (հնարավոր է նաև՝ **ան+անճանաչելիություն**), **միտ+ք, գյուղ+ացի** և այլն:

Ժամանակակից հայերենում ածանց է համարվում բառակազմական այն ձևությոը, որը, կցվելով բառահիմքին, փոխում է նրա բառային իմաստը, կազմում է նոր բառ՝ նոր իմաստով:

Ածանցի իմաստն արտահայտվում է նույնաձանց բառերի մեջ այս կամ այն բառի ձեռք բերած ընդհանուր ածանցային իմաստով: Օրինակ՝ **տուն** և **անտուն**, **բախտ** և **բախտավոր**, **ան-** և **-(ա)վոր** ածանցներով կազմվում են բոլորովին այլ նշանակությամբ բառեր՝ **իրուն** և **բախար** հիմքերի համեմատությամբ: Նույն ձևով նաև՝ **ամառ** և **ամառանոց**, **քաղաքավար** և **քաղաքավարի**, **ժամ** և **ժամանակ**, **ժամանակ** և **ժամանակավոր** և այլն:

Բառերի նման ածանցները ևս լինում են *մենհիմաստ* և *բազմիմաստ*: Մենհիմաստ են այն ածանցները, որոնք, կցվելով հիմքին, բերում են միայն մեկ տեսակի ածանցային իմաստ: Օրինակ՝ **հակ(ա)**-նախաձանցն ունի միայն «դեմ, ընդդեմ, հակառակ» իմաստը, ինչ-

¹⁴⁰ Տե՛ս *Արեղյան Մ.*, Երկեր, հտ 2, Երևան, 1974, էջ 180-239: *Սևակ Գ.*, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 2009, էջ 172-182: *Էրոյան Ա.*, Ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1963: *Գալստյան Ա.*, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1978: *Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էրոյան Ա.*, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1979, էջ 377-475: *Զահուկյան Գ., Աղայան Էդ., Առաքելյան Վ., Քույան Վ.*, Հայոց լեզու, I մաս, Ա պրակ, Երևան, 1980, էջ 443-455: *Մարգարյան Ա.*, Ժամանակակից հայոց լեզու (բառակազմություն, դարձվածաբանություն, բառարանագրություն), Երևան, 1990:

պես՝ **հակադիր** «հակառակ դիրք գրավող, ընդդեմ գտնվող», **հակախաղ** «հակառակ գործողություններով՝ ընդդեմ խաղ», **հակասահմանադրական** «սահմանադրությանը դեմ՝ ընդդեմ», **հականիշ**, **հակագագ**, **հակակշռել**, **հակատանկալին**, **հակահեղափոխական** և այլն:

Բայց ածանցները հիմնականում բազմիմաստ են: Օրինակ - *ngl(w)lmg* ածանցն ունի հետևյալ իմաստները: Ցույց է տալիս՝ 1) տեղ՝ **դպրոց**, **ծաղկանոց**, **ամառանոց**, 2) հագուստի, կրելու առարկա՝ **գիշերանոց**, **գոգնոց**, **մատնոց**, **ակնոց**, 3) դրամանիշ կամ որևէ թվով խաղաթուղթ՝ **ութնոց**, **տասանոց**, **հարյուրանոց**, **քսանհազարանոց**, 4) կտրող գործիք՝ **սղոց**, **էոոց**, **խարտոց**, **կտրոց**, 5) ձայնի անվանում՝ **փափոց**, **խշխշոց**, **տզզոց**, **սուլոց**, 6) գործողության՝ որպես երևույթի անուն՝ **կաթոց**, **խայթոց**, **դողդողոց**, **խզմզոց**, 7) ժամանակի անվանում՝ **հավխոսոց**, **արևմտոց**, **ճրագվառոց** և այլն:

Ածանցների իմաստաբանական դասակարգումը

Ժամանակակից հայերենի ածանցներն ըստ իրենց իմաստի և ձևի հարաբերության դասակարգվում են *համանուն*, *հոմանիշ* և *հակահիշ* ածանցների: Որպես համաժամանակյա լեզվական կարգեր՝ ածանցներ համանունության, հոմանշության և հականշության համար հիմք են ծառայաում միայն լեզվի զարգացման արդի փուլում, այսինքն՝ ժամանակակից հայերենում արտահայտած, արդի լեզվական ընթրնողությամբ գիտակցվող բառակազմական իմաստները:

ա) Համանուն ածանցներ: *Համանուն* կոչվում այն ածանցները, որոնք թեև ունեն միևնույն հնչյունական կազմը, բայց նրանց արտահայտած ածանցային իմաստները դուրս են գտնվում իմաստային մեկ ընդհանուր դաշտից և արդի լեզվական ընթրնողությամբ դիտվում են իբրև տարբեր ածանց-միավորներ: Ինչպես և բառային համանունները, համանուն ածանցները կա՛մ ծագել են մույն բազմիմաստ ածանցից նրա իմաստի հետագա զարգացման և խիստ տարբերակաման շնորհիվ, կա՛մ էլ առաջացել են տարբեր ծագում ունեցող ածանցների հնչյունական պատահական նմանությունից: Օրինակ՝

Ապ¹- (Ժխտման իմաստով) – **ապաբախտ, ապաշնորհ, ապօրինի, ապարդյուն:**

Ապ²- (հեռացման, բաժանման, ավարտման, կատարման իմաստներ) – **ապացույց, ապաթարց** (ենթադրվում է *ապադաշ* ձևից):

Համ¹- (ընդհանուր) – **համազգեստ, համալսարան, համախոհ, համաճարակ:**

Համ²- (ամբողջովին) – **համբերել:**

Վեր¹- (վրա) – **վերագրել, վերակացու, վերահսկել, վերադիր:**

Վեր²- (կրկին, վերստին, նորից, երկրորդ անգամ) - **վերադարձ, վերազնահատել, վերակենդանացնել, վերաբնակվել:**

-Անի¹ (շատ բան ունեցող, հարուստ, որևէ բան ունեցող) – **գեղանի, նազանի, լեզվանի, հինգհարկանի, երկերեսանի, չորքուտանի:**

-Անի² (ցույց է տալիս հավաքական իմաստ, միանման առարկաների ամբողջություն) – **նամականի, առածանի, տեսականի, ընտրանի:**

բ) Հոմանիշ ածանցներ: *Հոմանիշ* են կոչվում տարբեր հնչյունական կազմ ունեցող այն ածանցները, որոնք ունեն մոտ կամ նույն ածանցային իմաստներ: Որպես ածանցների հոմանիշության չափանիշ հանդես է գալիս նրանց բառակազմական նշանակությունը, որը իր կոնկրետ դրսևորումն է ստանում յուրաքանչյուր ածանցավոր բաղադրության մեջ: Ածանցների հոմանշային շարքերը որոշելիս էականը ոչ թե տվյալ ածանցներով կազմված բաղադրությունների արտահայտած հասկացությունների նույնությունը կամ մոտիկությունն է, այլ տվյալ ձևային ածանցական իմաստի և նախատիպ հիմքի իմաստային հարաբերությունը, որ դրսևորվում է որպես բառակազմական նշանակություն¹⁴¹: Այսինքն՝ ածանցները հոմանիշ են ոչ թե որովհետև հոմանիշ են դրանցով կազմված բառերը (սրանց բառային իմաստները կարող են որևէ առնչակցություն չունենալ), այլ քանի որ հոմանիշ են դրանց բառակազմական իմաստները: Օրինակ՝ **-(ա)բար, -(ա)պես, -որեն** վերջաձանցները հոմանիշ են, որովհետև ունեն միևնույն բառակազմական նշանակությունը՝ «իբրև նախա-

¹⁴¹ Հմմտ. *Գալստյան Ա.*, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, էջ 252:

տիպ առարական՝ անձը կամ իբրև նախատիպ հատկանիշը», իսկ դրանցով կազմված բառերը բնականաբար գերակշռող մեծամասնությամբ հոմանիշներ չեն (հմմտ. **արդարաբար, արդարապես, արդարորեն** և, ասենք, **քաջաբար, ամբողջապես, նենգորեն**):

Հոմանշային հարաբերության մեջ կարող են լինել միայն միևնույն խոսքի մասեր կերտող ածանցները, օրինակ՝ **տետրակ, մատենիկ, գրքույկ** (-ակ, -իկ, -ույկ), **անասնական, անասնային** (-ական, -ային): Նույն հիմքից հոմանիշ ածանցներով կազմվող բաղադրությունները կազմում են բառային հոմանիշների շարքեր, օրինակ՝ **անձկագին – անձկալի, տխրագին – տխրավետ, հեշտագին – հեշտին, կամ՝ ոսկեգործ – ոսկերիչ, լեռանական – լեռնցի, հեծկլտանք – հեծկլտյուն – հեծկլտոց** և այլն:

զ) Հականիշ ածանցներ: Հականիշ են այն ածանցները, որոնք ունեն հակադիր բառակազմական իմաստներ: Ինչպես և հոմանիշ ածանցները, հականիշները նույնպես հակադրվում են միևնույն խոսքի մասերին պատկանող բաղադրություններում: Այս կարգի ածանցների մյուս առանձնահատկությունն այն է, որ հականշային հարաբերության մեջ կարող են մտնել միայն նախաածանցները: Հականշությունն ընդգրկում է ածանցների մի չնչին մասը միայն: Հականիշ են հետևյալ ածանցները՝ **արտ- – ներ-, գեր- – թեր-, գեր- – ենթ-, համ-, հոմ- – հակ-, վեր- – ստոր-.** **արտահանել – ներմուծել, գերակատարել – թերակատարել, գերադաս – ենթակա, համանիշ, հոմանիշ – հականիշ, վերերկրյա – ստորգետնյա:**

Ածանցների ծագումը

Ըստ ծագման՝ ածանցները լինում են բնիկ և փոխառյալ: Բնիկ են կոչվում այն ածանցները, որոնք առաջացել են հայերենի զարգացման ընթացքում լեզվի սեփական նյութի հիման վրա: Փոխառյալ են տարբեր ժամանակներում այլ լեզուներից հայերենին անցած ածանցները, որոնց թիվը խիստ սակավ է:

Ժամանակակից հայերենի ածանցները ծագումով կա՛մ առանձին բառեր, կա՛մ էլ քերականական այլևայլ մասնիկների՝ ձևույթների

են: Հայերենի բնիկ ածանցներն առաջացել են հետևյալ եղանակներով՝ բարդ բառերի բաղադրիչների իմաստների մթագնման, հոլովման, խոնարհման, հոգնակիի վերջավորությունների փոխարկման, ինչպես նաև պարզ բառերի արհեստական ձևափոխման միջոցով¹⁴²:

Նկատելի նաև հակառակ երևույթը, երբ լեզվի զարգացման ընթացքում որոշ բաղադրություններ զրկվում են իրենց իմաստների պատճառաբանվածությունից, նրանց մեկ կամ ավելի բաղադրիչներ հնչյունափոխվելով կորցնում են իրենց ինքնուրույնությունը, այլևս չեն գիտակցվում իբրև առանձին միավորներ, իսկ ամբողջ բաղադրությունն արդի լեզվական ըմբռնողությամբ ընկալվում է իբրև պարզ, բառակազմորեն այլևս անտարրալուծելի բառ: Լեզվի զարգացման ժամանակակից փուլում այլևս չեն գիտակցվում մի շարք ածանցներ, ինչպես, օրինակ, **-անդ** (*եռանդ, արգանդ, ենթադրաբար՝ մարմանդ*), **-ախ** (*շաղախ, ենթադրաբար՝ ուրախ*), **-աղ** (*կենցաղ, կախաղան, փախաղակ*), **-ափ** (*խուսափ(ել), սարսափ*) և այլն:

Ածանցների որոշ մասը առաջացել է ինքնուրույն բառերից, երբ վերջիններս, կորցնելով իրենց բառական կոնկրետ իմաստները, զրկվել են բառային անկախությունից: Դրանք ձեռք են բերել ածացային ընդհանուր բառակազմական իմաստներ և նման կազմություն ունեցող մի շարք բառերում կրկնվելով՝ վերածվել են ածանցների: Այդպես են ստեղծվել հայերենի փաստորեն բոլոր ոչ ժխտական նախածանցները, որոնք V-VI դարերում կերտել են հունաբան դպրոցի քերականները¹⁴³:

Արմատական բառերի՝ ածանցների փոխարկման գործընթացը կատարվում է նաև այժմ՝ լեզվի զարգացման արդի փուլում: Ժամանակակից հայերենում որոշ ձևույթներ ունեն երկակի կիրառություն՝ և՛ իբրև արմատներ, և՛ իբրև ածանցներ: Օրինակ՝ **գործ** ձևույթը **գործ, գործարան, գործաղույ, գործիչ, անգործ, ձեռագործ** բառերում արմատ է, իսկ **հողագործ, այգեգործ, լամպագործ, կահույքագործ, խեցեգործ** և նման կազմություններում արդեն գիտակցվում է իբրև ածանց «նախահիմքում նշված առարկայի, զբաղմունքի մասնա-

¹⁴² Տե՛ս *Արեղյան Մ.*, նշվ. աշխատ., էջ 180-193:

¹⁴³ Տե՛ս *Ածառյան Հ.*, Հայոց լեզվի պատմություն, մաս Բ, Երևան, 1951, էջ 162-163:

գետ» բառակազմական նշանակությամբ՝ հոմանիշ *-որդ, -իջ, -արար* ածանցների համապատասխան նշանակություններին: Նմանապես՝ **բան** ձևությոնը բազմաթիվ բաղադրություններում և իհարկե ինքնուրույն գործածվելիս արմատ է՝ հիմնական ձևությոն՝ **բանասեր, բանագնաց, բանաձև, բանկոյիվ, բանահավաք, բանվոր, բանել** և այլն: Իսկ հետևյալ և նման կազմություններում արդեն ձեռք է բերել ածանցային նշանակություն, երկրորդական բառակազմական ձևությոն է «նախատիպի ցույց տված առարկայի ուսումնասիրությամբ զբաղվող գիտության մասնագետ» բառակազմական նշանակությամբ՝ **արվեստաբան, բուսաբան, լեզվաբան, ոճաբան, եգիպտաբան, հելլենաբան** և այլն: Հմնտ. նաև **գետ**(**<գէտ**)/**գիտ** ձևությոնը հետևյալ բաղադրություններում՝ **գիտաժողով, գիտակայան, գիտակից, գիտական, գիտուն, անգետ, բազմագետ** և **բնագետ, իրավագետ, լեզվագետ, դեղագետ, ռազմագետ**: Այսպիսի ձևությոնները երբեմն կոչում են *ածանցակերպներ*:

Արմատական բառերից են առաջացել (հնչյունափոխությամբ կամ առանց հնչյունափոխության), օրինակ, հետևյալ ածանցները. - **(ա)վոր**. ծագել է **բեր/բոր** (*բերել* բայի արմատի տարբերակները)՝ **լուսաբեր** > ***լուսաբոր** > **լուսաոր** > **լուսավոր**: **Քեր(ել)** արմատը ունի նաև «ունենալ, կրել, վրան ունենալ» իմաստը: Այս նշանակությունն է անցել այսօր խիստ գործուն *-(ա)վոր* վերջածանցին, որով բազմաթիվ բառեր կան հայերենում՝ **գինվոր, փառավոր, մոտավոր, ողնաշարավոր, նպաստավոր, բողոքավոր**: **-Ոտ** վերջածանցը ծագել է **հոտ** բառից. հիվանդիտ > **հիվանդոտ**, ծխիտ > **ծխոտ**. սրանց համաբանությամբ հետագայում կազմվել են և այսօր էլ կազմվում են բազմաթիվ նոր բաղադրություններ՝ **աղտոտ, մրոտ, յուղոտ, ժանգոտ, ցեխոտ**: **-Ատ** վերջածանցն առաջացել է **հատ** (հատանել > հատել) արմատից. քնահատ > **քնատ**, պոչահատ > **պոչատ**, գլխահատ > **գլխատել, կոնատ, քթատ, գունատ, երկատել, մասնատել**: **-Արդ** ածանցը, որ **գիարդ** գրաբարյան բաղադրության մեջ նշանակում է «ձև, կերպ, հորինվածք, կազմություն», որպես ածանց հանդես է գալիս հետևյալ բառերում՝ **խորանարդ, գմբեթարդ, թամբարդ, կորնթարդ, սեղանարդ** և այլն: Կամ՝ **-վար / -վարի** (վար+ի) ածանցը առաջացել է **վար** ար-

մատական (վարել, վարվել, վարք, վարմունք) ձևությից՝ **քաղաքավարի, մարդավարի, տնավարի, հայավարի, մեծավարի**:

Նույն եղանակով, բառային իմաստի մթագնման շնորհիվ, առաջացել են **-բար, -պես, -գույն, -որեն** (< գրք. *օրէն* «օրենք») և մի քանի այլ ածանցներ:

Ածանցներ են առաջանում նաև երկու ածանցների միացումից, ձուլումից, երբ դրանք ստանում են նոր իմաստ և ըմբռնվում են իբրև մեկ ամբողջություն, ածանցային մեկ միավոր: **-ուկ** և **-ոտ** ածանցների միացումից առաջացել է **-կոտ** ածականակերտ ածանցը, ինչպես՝ **վախկոտ** (<**վախուկ* + *ոտ*), **պարծենկոտ, ցասկոտ, քնկոտ** և այլն: **-Կակ, -կեկ, -կիկ, -կուկ** առաջացել են՝ **կակ** <ուկ/իկ + ակ, **կեկ** <ուկ/իկ + յակ (< գրք. եակ), **կիկ** <իկ + իկ, **կուկ** <ակ/իկ + ուկ, ինչպես՝ **սևկակ, մանրկեկ** (*մանր* + *իկ* > *մանրիկ* + *յակ* (<*եակ*) > *մանրիկեկ*), **լայնկեկ** և այլն: **-Ալի** <ակ + ի՝ **թեթևալի, մասնալի, ուղղալի, -անք** <ան + ք՝ **բերկրանք, նախերգանք, վիրավորանք, -վածք** <վ + ած + ք՝ **թխվածք, պատմվածք, հյուսվածք, -անակ** <ան + ակ՝ **գսպանակ, շրջանակ, մրցանակ, ուժանակ** և այլն:

Հայերենի ածանցների ծագման մյուս աղբյուրը գրաբարյան քերականական ձևերն են՝ հոլովման, խոնարհման, դերբայական ձևերի, հոգնակիի վերջավորությունները, որոնք, արդի լեզվական ըմբռնողությամբ լինելով քարացած, մեռած ձևեր, ժամանակակից հայերենում վերածվել են ածանցների: Այսպես՝ գրաբարի հոգնակիակերտ **-ք** մասնիկը այսօր գոյականակերտ ածանց է՝ **գիրք, վագր, հավք, շարք, դժոխք** և այլն: Գրաբարի անցյալ դերբայի **-եալ** (> **յալ**) վերջավորությունը արդի լեզվում ածականակերտ և գոյականակերտ ածանց է՝ **կորուսյալ, սառուցյալ, անցյալ, հանգուցյալ** և այլն: Հին լեզվի **-ումն** վերջածանցով գոյականների հոգնակի ուղղականի **-մունք** վերջավորությունը նույնպես վերածվել է ածանվի՝ **մուսածմունք, բաժանմունք, սխալմունք** և այլն:

Փոխառյալ ածանցներ

Ածանցների փոխառությունը հազվադեպ երևույթ է: Հայերենում սակավ են այդ կարգի ածանցները: Նման ածանցները սովորաբար լեզվի մեջ են անցնում փոխառյալ բառերի կազմում, որոնցում նրանք նախապես ածանց չեն գիտակցվում, որովհետև բառը փոխառվում է իր կառուցվածքային ամբողջությամբ: Ժամանակի ընթացքում, երբ այդպիսի ածանցներով բառերի թիվը փոխառու լեզվում սովորաբար են, փոխառյալ բառերի մի հատվածն արդեն սկսում է ըմբռնվել ինքնուրույնաբար, իբրև բառի կառուցվածքային տարր (տվյալ դեպքում՝ ածանց): Եվ եթե փոխառու լեզվում այդ միավորը ցուցաբերում է բառակազմական ունակություններ, այսինքն՝ այդ ածանցով հայերենում սկսում են ինքնուրույնաբար կազմվել նոր բառեր, այն մատնում է մեր լեզվի բառակազմական ձևայինների շարքը և ժամանակի ընթացքում կարող է դառնալ նույնիսկ գործուն, արտադրողական ածանց:

Հայերենի վերջածանցների մեջ կան դեռևս նախագրաբարյան շրջանում փոխառվածները, և այսօր այդ ածանցների մի մասը այնքան գործուն է և այնպես է մերվել մեր լեզվին, որ դրանց օտար ծագումը արդեն չի գիտակցվում: Այսպես, գրաբարյան շրջանից հայերենում գործածական է պահլավերենից փոխառյալ **-ուհի** ածանցը, որով այժմ էլ կազմվում են անձի անուններ իգական բնական սեռի բառակազմական նշանակությամբ՝ **բժշկուհի, ընկերուհի, հայուհի, քազուհի**, նաև՝ **ատենակալուհի, լաբորանտուհի, օտարուհի, քաղքենուհի, Վանուհի** (որպես հատուկ անուն), **ԲՀԿականուհի** և այլն: Պահլավական ծագում ունեն նաև **-դժ** նախածանցը, որը ժամանակակից հայերենում արտադրողական չէ (**դժբախտ, դժգոհ, դժգույն, դժկամ, դժպատեհ** և մի քանի այլ բառ), և **-ստան** վերջածանցը, որը, ընդհակառակը, գործուն ածանց է (**Հայաստան, Չինաստան, բուրաստան, վարդաստան, հեռաստան** և այլն):

Հայերենի նորագույն փոխառությունների մեջ հաճախ հանդիպող **-իզմ, -իստ, -իա, -(ա)ցիա** ածանցները չի կարելի փոխառյալ համարել, որովհետև դրանք հայերենի բառակազմության մեջ որևէ

դեր չեն խաղում, չեն մասնակցում բառակազմությանը և հանդիպում են հենց միայն փոխառյալ բառերում: Մասամբ բացառություն է միայն **-խտ-ը**, որով ունենք հայկական հիմքերով կազմված մեկերկու բառ՝ **թառխտ**, **քամանչխտ**, **նարդիստ** (առաջին երկուսի համար առավել հանճարարելի են *թառսահար*, *քամանչսահար* կազմությունները):

Ածանցների դասակարգումը ըստ բառակազմական գործունության

Ժամանակակից հայերենում ածանցներն ըստ բառակազմական գործունության լինում են *կենսունակ (արտադրողական)* և *անկենսունակ (անարտադրողական)*:

Կենսունակ (արտադրողական) ածանցներ

Կենսունակ (արտադրողական) են կոչվում այն ածանցները, որոնք ժամանակակից հայերենում ակտիվորեն մասնակցում են ածանցմանը, նոր բառերի կերտմանը: Այդ առումով էլ այս կարգի ածանցները համարվում են նաև **արտադրողական**, այսինքն՝ դրանցով կազմվում են մեծ թվով նոր բառեր: **Կենսունակ** ածանցներն էլ, ըստ իրենց բառակազմական ակտիվության աստիճանի, լինում են *առափել կենսունակ* և *սակալ կենսունակ*:

Առափել կենսունակ ածանցներ են՝ *ա) նախածանցներից՝ ան-* (անազատ, անագնիվ, անգործ, անշտապ), *գեր-* (գերադաս, գերածախս(ել), գերբնական), *հակ-* (հակազրոհ, հակադիր), *համ-* (համագյուղացի, համատեղ, համամիշ), *ներ-* (ներդիր, ներգաղթ, ներգործել) և այլն, *բ) վերջածանցներից՝ -ական* (դպրոցական, տնական, հեղափոխական), *-յան* (ծննդյան, արևելյան, Պետրոսյան), *-ություն* (ագգություն, մարդկություն, ազնվություն), *-ուհի* (երգչուհի, ուսանողուհի, մաքրուհի), *-բար* (հերոսաբար, անգիտակցաբար, մայրաբար), *-ային*, *-արան*, *-որեն*, *-որդ*, *-ացի*, *-իչ* և այլն: Համեմատաբար *սակալ կենսունակ* ածանցներ են՝ *-ածո* (հանածո, կոփածո, դրածո), *-ոն* (կտրոն, թափոն, գեղոն), *-ստան* (Հնդկաստան, Գաղստան, ծառաստան, տափաստան) և այլն:

Անկենսունակ (անարտադրողական) ածանցներ

Անկենսունակ (անարտադրողական) են կոչվում այն ածանցները, որոնք լեզվի զարգացման ժամանակակից փուլում չեն մասնակցում կամ համարյա չեն մասնակցում ածանցմանը, նոր բառերի կերտմանը: Այս կարգի ածանցների առանձնահատկությունն այն է, որ նրանցով այժմ թեև նոր բառեր այլևս չեն կազմվում, բայց ժամանակակից լեզվարմբոնողությամբ գիտակցվում են իբրև ածանցներ:

Անկենսունակ (անարտադրողական) են՝ դժ- (դժգոհ, դժպատեհ), -աշ (մատղաշ, թթվաշ), -անակ (մրցանակ, գանձանակ), -եք (նշանդրեք, Ջրօրհներք), -գար (խելագար, լեզվագար), -կեկ (լայնկեկ, հաստկեկ), -կեն (ծակոտկեն, ցանցկեն), -կուն (դիմացկուն, խաղացկուն), -դի (մեծդի), -ոտի (հնոտի, օտարոտի), -չյա (ավետչյա, առիավատչյա), -չեք (կարողչեք, միջնորդչեք), -ույք (պիտույք, հաճույք), -ունի (ծերունի, Արշակունի), -ունչ (անտերունչ, անմունչ), -ունկ (խորունկ) և այլն:

Ածանցների ձևաբանական դասակարգումը

Ածանցների ձևաբանական դասակարգումը կատարվում է նրանցով կազմված բաղադրությունների խոսքիմասային պատկանելության համաձայն, այսինքն՝ տվյալ ածանցի՝ այս կամ այն խոսքի մասին պատկանող նոր բառեր կերտելու բառակազմական կարողության հիման վրա:

Ժամանակակից հայերենի ածանցների բառակազմական առանձնահատկությունն այն է, որ նրանք հիմնականում մասնակցում են որոշակի մեկ խոսքի մասի պատկանող բաղադրությունների կազմությանը: Ըստ այդմ էլ նրանք ստորաբաժանվում են **գոյականակերտ, ածականակերտ, թվականակերտ, մակբայակերտ և բայակազմական** ածանցների:

Սակայն նույն ածանցը երբեմն կարող է մասնակցել մեկից ավելի խոսքի մասերի պատկանող բաղադրությունների կազմությանը: Հատկանշական է, որ այդպիսի ածանցները սովորաբար ունենում են

մեկ հիմնական բառակազմական նշանակություն, մյուս դեպքերում նրանց բառակազմական կիրառություններն ավելի սահմանափակ են: Այս կարգի ածանցները կարող են վերածվել համանուն ածանցների: Անհրաժեշտ է նշել նաև, որ ածականակերտ որոշ ածանցներով կազմված բաղադրություններ խոսքիմասային փոխանցմամբ ձեռք են բերում գոյականական իմաստ, կիրառվում են նաև իբրև գոյականներ, ինչպես՝ **երկաթուղային, դպրոցական, սերմացու, խելագար** և այլն:

1) Միայն մեկ խոսքի մասի պատկանող բաղադրություն կազմելու մեջ կայունություն են հանդես բերում բայակազմիչ ածանցները, ինչպես նաև գոյականական և որոշ մակբայական ածանցներ:

ա) Գոյականակերտ ածանցներ: Գոյականակերտ են կոչվում այն ածանցները, որոնք, դրվելով տարբեր հիմքերի վրա, կազմում են գոյական անուններ: Դրանք հիմնականում վերջածանցներ են. -*ալիք/-ելիք՝ խաղալիք, ըմպելիք, վառելիք, -անակ՝ ժամանակ, շրջանակ, ցուցանակ, -անք՝ կշտամբանք, հարգանք, լուգանք, -նց(ա)նոց՝ դարբնոց, վարսավիրանոց, ձեռնոց, ոռնոց, -արան՝ լսարան, ննջարան, խորհրդարան, -արք՝ գործարք, լուծարք, -գործ՝ գորգագործ, երկաթագործ, -ենիք՝ հայրենիք, քաղցրավենիք, -երք՝ հրավերք, ընդերք, -եք՝ արժեք, տնօրհներք, -իչք՝ խմիչք, թռիչք, -իք՝ գործիք, կեղծիք, չարիք, -մունք՝ ասմունք, հուզմունք, -յակ՝ շաբաթօրյակ, բազմահատորյակ, -յուն՝ բաբախյուն, մոնչյուն, -ոտիք՝ հնոտիք, փորոտիք, -չեք՝ բանողչեք, ավետչեք, -պան՝ ձիապան, պահապան, -սպան՝ վարդաստան, Ռուսաստան, -ված/-վածք՝ առեղծված, գործվածք, -ույք՝ կահույք, պիտույք, -ունիք՝ արքունիք, Ռշտունիք, -ունք՝ սկզբունք, արքունք, -ություն՝ պայծառություն, կարծրություն, Հարություն, -ուհի՝ մարգուհի, երգչուհի, Հայկուհի, -ում՝ գործուղում, դրվագում, -ույք՝ հնչույք, ճաշկերույք, -ույկ՝ գրքույկ, խարույկ, պարույկ, -ույց՝ կառամատույց, կառույց, -(ա)ցի/-եցի՝ լեռնցի, գյուղացի, տնեցի, -ք՝ հոսք, լիցք, կառք:*

բ) Ածականակերտ ածանցներ: Ածականակերտ են կոչվում այն ածանցները, որոնք, դրվելով տարբեր հիմքերի վրա, կազմում են ածական անուններ: Նախածանցներից՝ *ան-*՝ **անարյուն, անմահ,**

սա(ս)-՝ ապերջանիկ, ապերասան, դժ՝ դժբախտ, դժգոհ, տր-՝ տոգետ, տհաս, չ՝ չտես, չխոսկան: Վերջածանցներից՝ -անի՝ լեզվանի, երկերեսանի, -արիմ/-երիմ՝ հավատարիմ, մտերիմ, -գար՝ մտագար, լեզվագար, -ել/-յալ՝ մարմարե, կառչուկե, բրդյա, -եղ՝ գորեղ, հանճարեղ, -զան՝ այլազան, գունազան, -ժեռ՝ կարմրածեռ, մթնածեռ, -լիկ՝ թխլիկ, կարճլիկ, -կեն՝ ցանցկեն, հյուսկեն, -կուր՝ վախկոտ, պարծենկոտ, -կուն՝ դիմացկուն, խաղացկուն, -ուր՝ ժանգոտ, խանդոտ, - (ս)վեպր՝ սիգավետ, շահավետ, -(ս)վրուն՝ հիմարավուն, կլորավուն, - ունակ՝ պարզունակ, գոհունակ:

զ) Թվականակերտ են -որդ և -երորդ ածանցները, որոնք կազմում են դասական թվականներ (երկրորդ, չորրորդ, հազարմեկերորդ): -Ական՝ ածանցը, որն իր հիմնական նշանակությամբ ածականակերտ է, կիրառություններից մեկով կարող է կազմել բաշխական և կոտորակային թվականներ (երկուական, հարյուրական, չորս հինգերորդական):

դ) Մակբայակերտ ածանցներ: Մակբայակերտ են կոչվում այն ածանցները, որոնք, դրվելով տարբեր հիմքերի վրա, կազմում են մակբայներ. -բար՝ ընկերաբար, ապօրինաբար, -պես՝ կանոնավորապես, մոտավորապես, -որեն՝ տրամագծորեն, հետևողականորեն, -զին՝ կարոտազին, սպառնազին, -իվ՝ խստիվ, մեղմիվ, -ովին՝ կամովին, գլխովին, -պարիկ՝ հնգապատիկ, բազմապատիկ:

ե) Բայական ածանցներ: Ժամանակակից հայերենի բայական ածանցներն են՝ ա) սոսկածանցներ՝ -ան՝ առաջանալ, մարմնանալ, -են՝ հագնալ, մերձենալ, -ն՝ մտնել, գտնել, -չ՝ փախչել, թռչել, բ) պատճառական ածանցներ՝ -ացն՝ խաղացնել, բարկացնել, -եցն՝ խաղաղեցնել, պարզեցնել, -ցն՝ մտցնել, դիպցնել, գ) կրավորական -վ/՝ ածանցը՝ պատկերվել, հագնվել, զբաղվել, մոտեցվել, դ) բազմապատկական ածանցները, որոնցից առավել գործուն են՝ -ար-՝ կտրատել, -ուր-՝ ցատկոտել, պատառոտել, -տր-՝ կտրտել, պատռտել (մյուս բազմապատկական ածանցները՝ -կուր-, -շուր-, -ուր-, -սար-, -վուր-, -վար- և մի քանի այլ, բառակազմական ակտիվություն չունեն): Ժամանակակից հայերենում գուծուն են պատճառական, կրավորական, բազմապատկական (նշվածները) և սոսկածանցներից -ան-ը:

2) Մի քանի խոսքի մաս կազմող ածանցներ: Որոշ ածանցներ հանդես են գալիս մեկից ավելի խոսքի մասերի կազմության մեջ, այսինքն՝ իրենց հիմնական խոսքիմասակերտ գործառույթից բացի՝ ունենում են մեկ կամ մի քանի այլ գործառույթներ: Այդ կարգի ածանցները հիմնականում լինում են միաժամանակ ածականակերտ ու գոյականակերտ, ածականակերտ ու մակբայակերտ և գոյականակերտ, ածականակերտ ու մակբայակերտ:

ա) Ածական ու գոյական կազմող ածանցներ. *-ածո՞ն՝ բրածո, պեղածո և չափածո, պահածո, -(ա)ծու՞ շինծու և ձեռնածու, թեկնածու, -սկ՞ միակ, ձախողակ և հենակ, ազդակ, -սկսան՝ հիմնական, գիտական և վկայական, վաճառական, -սյիհն՝ հյուսիսային, քաղաքային և երկաթուղային, բանակային, -սն՝ դուրեկան, կոկոս և խթան, փական, -սար՞ ծայրատ, թևատ և բացատ, խորխորատ, -ացի՞ տառացի (նաև մակբայ է), իրավացի և գյուղացի, երևանցի, -ի՞ բարի, հարգի և ծիրանի, կաղնի, -իջ՝ հմայիչ, մխիթարիչ և կտրիչ, սափրիչ, -յալ՞ հիշյալ, միացյալ և ննջեցյալ, հեծյալ, -որդ՞ նախորդ, ավելորդ և վարորդ, առաջնորդ, -(ա)վոր՞ գրավոր, շերտավոր և բանվոր, հայցվոր, -ու՞ վարձու, կծու և կատակերգու, վրիժառու, -ու՞ն գործուն, մնայուն և սողուն, կոթուն, -ու՞ սրտառու, վայելու և ընկալու, տեսու, -ուր՞ մկանուտ, ջրուտ և ավագուտ, մոշուտ և այլն:*

բ) Ածական և մակբայ կազմող ածանցներ. *-սկի՞ եզակի, որոշակի և թեթևակի, հաճախակի, -իմ՝ դժվարին, մթին և ամենևին, տակավին և այլն:*

գ) Գոյական, ածական և մակբայ կազմող ածանցներ. *-երե՞ն հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն (գոյական, ածական և մակբայ են միաժամանակ), -ու՞ կաթնով, թանով (գոյական), համով, գինով (աժական), սիրով, շուտով (մակբայ), -ու՞ աճուկ, հեղուկ (գոյական), նորելուկ, սրտմաշուկ (աժական), կտրուկ, դիպուկ (մակբայ) և այլն:*

դ) Կան նաև այլ խոսքիմասային գույգեր կազմող ածանցներ, ինչպես՝ *-ուսր՞ ապրուստ, հագուստ, փախուստ (գոյական) և արտաքուստ, ներքուստ (մակբայ), կամ՝ -իւ՞ ճշտիվ, մեղմիվ (աժական) և առթիվ, շնորհիվ (կապ) և այլն:*

Ածանցների դասակարգումն ըստ դիրքի

Բառակազմական հիմքի նկատմամբ գրաված տեղով, այսինքն՝ այն բանով, թե նրանք հիմքի ո՞ր մասին են կցվում, ածանցները բաժանվում են նախածանցների, վերջածանցների և ներածանցների¹⁴⁴:

Նախածանցներ

Նախածանցները բառակազմական այն ձևայիններն են, որոնք կցվում են հիմքի սկզբից, նախորդում են հիմքին:

Ժամանակակից հայերենի նախածանցները մոտավորապես հետևյալներն են՝ **ան-**, **ապ-**, **դժ-**, **տ-**, **չ-**, **անդր-**, **առ-**, **արտ-**, **բաղ-**, **բաց-**, **գեր-**, **դեր-**, **ենթ-**, **թեր-**, **հակ-**, **համ-**, **հոմ-**, **հար-**, **մակ-**, **նախ-**, **ներ-**, **շաղ-**, **շար-**, **պար-**, **ստոր-**, **վեր-**, **տար-**, **տրամ-**, **փոխ-**: Նախածանցները հիմքին կարող են միանալ հողակապով:

Հունարան դպրոցի ներկայացուցիչների կողմից V-VII դարերում հունարենի նմանողությամբ կազմվել են հայերենի **ապ-**, **առ-**, **արտ-**, **բաց-**, **գեր-**, **դեր-**, **ենթ-**, **հակ-**, **համ-**, **հոմ-**, **հար-** (< **յար**), **մակ-**, **նախ-**, **ներ-**, **շաղ-**, **պար-**, **ստոր-**, **վեր-**, **տար-**, **տրամ-**, **փոխ-** նախածանցները: Նախածանցները կազմվել են գրաբարի լեզվական նյութի հիման վրա: Օգտագործվել են գրաբարի նախդիրները (*առ, ըստ, ընդ*), մակբայները (*նախ, յար* (> *հար*), *սրոր*), մակբայական արմատները (*արտ, բաց, ներ, վեր*), գրաբարյան մյուս խոսքի մասերին պատկանող արմատները (*բաղ, գեր, հակ, մակ, շաղ, պար, քրամ*), ինչպես նաև որոշ հնչյունական և իմաստային փոփոխության կրած նախդիր-նախածանցները՝ *ենթ* > *ընդ*, *հոմ* > *համ*, *փաղ* > *բաղ*, *փար* > *պար* (հնչյունական), *շաղ* «կապ, գող, կցում» իմաստներից՝ «կից»:

¹⁴⁴ Ժամանակակից հայերենի ածանցների ամբողջական մանրամասն նկարագրությունը տե՛ս *Գալստյան Ս.*, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1978 [դասագրքի այս հատվածը շարադրելիս հիմնականում հետևել ենք այս մենագրության մեջ ընդունված սկզբունքներին և եղանակներին], ինչպես նաև՝ *Էլոյան Ս.*, Ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1963:

Նոր անանգներ են կազմվել նաև գրաբարյան բառերի կրճատման, հերձման միջոցով, ինչպես՝ *արյր* < *արյրաբա*, *բաց* < *բանամ*-ի անց. հիմքը:

Ան- ժխտական նախածանց է: Արդի հայերենի ամենագործուն անանգներից մեկն է: Կցվում է ածականական, գոյականական, բայական հիմքերին՝ կազմելով «ժխտման, բացասման, մի բանից՝ հատկությունից զուրկ, առանց մի բանի» ընդհանուր բառակազմական նշանակությամբ ածականներ, ինչպես՝ **անազատ, անագիլ, անախորժ, անաղմուկ, անգին, անեզր, անաշխատ, անխոս, անխնամ** և այլն: Այս անանցով բաղադրված մի բանի բառեր, որոնց հիմքի բառային իմաստը բացասական է, ստանում են դրական ընդհանուր իմաստ՝ **անաչառ, անանձուկ, անանջատ, անհողողող**:

Ժողովրդախոսակցական լեզվում, անորոշ դերբայի վրա դրվելով, կազմում է մակբայներ՝ **անխրատել** (երեխան անխրատել է մեծանում), **անծամել** (անծամել կուլ տվեց), **անծածկել, անկապել, անծալել, անկարել** և այլն:

Ան- նախածանցով գոյականական և բայական անանցավոր բաղադրյալ հիմքերից կազմված ածականներում հիմքի վերջածանցը դուրս է ընկնում, ինչպես՝ *զգայուն* > **անզգա, շարժուն** > **անշարժ, գորեղ** > **անգոր, մրավոր** > **անմիտ, հարգելի** > **անարգ, արժանի** > **անարժան, աչառու** > **անաչառ** և այլն:

Ապ- բաղաձայնից առաջ՝ **ապա-**, հունաբանները գործածել են իբրև համարժեք հունական **απο** ածանցին՝ «բաց, տար-, հեռու» նշանակությամբ: Առավելապես գոյականական հիմքերից կազմում է ածականներ՝ «նախատիպի ցույց տված առարկան չունեցող» բառակազմական նշանակությամբ՝ **ապաբախտ, ապարդյուն, ապերախտ**: Ածականական հիմքերից կազմում է ածականներ՝ «նախատիպի հատկությունը չունեցող» բառակազմական նշանակությամբ՝ **ապերջանիկ, ապուշ, ապաքաղաքական**: Բայական հիմքերով ածականներ են **ապիկար, ապաժաման** (հնց. «ուշ եկած՝ ժամանած») կազմությունները: Այս անանցը դրվում է նաև բայերի և բայանունների վրա՝ կազմելով բայեր և բայանուններ, որոնք մեծ մասամբ տերմիններ են՝ **ապաբևեռացնել/ապաբևեռացում, ապագգայնացնել/ապագգայնա-**

ցում, ապագողել/ապագողում, ապամոնտաժել/ապամոնտաժում: Օտար (հունաբան) կազմություններ են **ապացույց, ապաթարց** (<*ապադարչ) բառերը: Երբեմն այս վերջին կիրառությամբ **ապա-**ն դիտվում է իբրև համանուն ածանց:

Գժ- արտահայտում է «ժխտման, բացասման, մի բանից գորկ լինելու» բառակազմական իմաստներ: Գոյականական, ինչպես նաև ածականական և բայական հիմքերից կազմում է սակավաթիվ ածականներ, կենսունակ չէ. **դժբախտ, դժգոհ, դժկամ, դժգույն, դժմիտ, դժպատեհ** և մի քանի այլ բառեր:

Զ- արտահայտում է «ժխտման, բացասման, նախատիպի գործողությունը չկատարող կամ հատկանիշը չունեցող» բառակազմական իմաստներ: Արտադրողական ածանց չէ: Դրվելով բայական և մասամբ ածականական հիմքերի վրա՝ կազմում է մեկ տասնյակից քիչ ավելի ածականներ՝ **չկամ, չտես, չհաս, չբեր, չգետ, չունևոր, չտեսնաված** և այլն: Գոյականական հիմքերից կազմում է սակավաթիվ գոյականներ՝ **չևություն, չգոյ, չաստված** (հեքանոսական աստված):

Ծանոթություն: Այս ածանցը չի կարելի շփոթել համանուն բայական բառահարաբերական երկրորդական ձևային հետ, որով կազմվում են դիմավոր և անդեմ բայերի ժխտականի ձևերը՝ **չխաղալ, չխաղացող, չեմ խաղա, չի խաղալու, չխաղաս** և այլն: Այս ձևերում **չ-**ն ոչ թե ածանց է, այլ քերականական մասնիկ:

Անդր(ա)- Ունի «1. մի բանից՝ մի վայրից այն կողմը, այն կողմում գտնվող, դեպի այն կողմ, 2. նորից, կրկին, 3. ծայրագույն, ծայրահեղ» բառակազմական նշանակությունները: Գոյականական, ածականական և բայական նախահիմքերից կազմում է գոյականներ, ածականներ, նաև բայեր՝ **անդրբևեռաշրջան, անդրաշխարհ, անդրավարտիք, անդրադարձ, անդրպատմական, անդրգերեզմանայան, անդրադարձնել** և այլն: Առանց հողակապի կազմում է տեղանուններ և դրանցից կազմված ածականներ և գոյականներ՝ **Անդրկովկաս,**

անդրկովկասյան, անդրկովկասցի, Անդրկարպատներ, անդրկարպատյան, անդրկասպայան, անդրհռենոսյան և այլն:

Առ- գրաբարյան նախադիր, իբրև նախածանց՝ համապատասխանում է հունական **προς, προ, έρι** ածանցներին: Ունի «դեպի, մինչև, մոտ, կից» բառակազմական իմաստները, որոնք համընկնում են նրա նախադիրային կիրառություններին: Հիմնականում կազմում է բայեր, ապա նաև գոյականներ և ածականներ՝ **առադրել, առանձնաշնորհել, առաջադիմել, առաջարկել, առաջնորդել, առինքնել, առկայծել, նաև՝ առողրություն, առափնյակ, առձայնույթ, առերևույթ, առհավետ, առմիշտ, առողջ:**

Արտ(ա)- գրաբարյան **արտաքս** բառի արմատից է ստեղծվել, համապատասխանում է հունական **έξ** ածանցին: Բառակազմական նշանակությունն է «դուրս, դրսում, դեպի դուրս»: Կազմում է գոյականներ, ածականներ, մակբայներ՝ **արտաբխել, արտաբնակ, արտագաղթ, արտագալակտիկա, արտագալակտիկական, արտագաղթել, արտագրել, արտագրություն, արտադարոցական, արտահաստիքային, արտահերթ, արտահոսել, արտասահման, արտանետում, արտացոլք** և այլն:

Բաղ(ա)- արտահայտում է «կից, միասին, իրար հետ» բառակազմական նշանակությունները: Ցույց է տալիս գործողության համատեղություն, հավաքականություն, միաժամանակություն, ավարտվածություն: Համապատասխանում է հունարենի **δυν** ածանցին: Ոչ կենսունակ նախածանց է: Կազմում է ոչ մեծ թվով գոյականներ, ածականներ, բայեր, որոնք հիմնականում ավանդված են լեզվի հին շրջանից և ունեն տերմինային արժեք՝ **բաղադիր, բաղադրել, բաղաձայն, բաղիյուսել, բաղիյուսական, բաղդատել** և այլն:

Բաց(ա)- ծագել է **բանայ** բայի անցյալի հիմքից: Համապատասխանում է հունարենի **απο**, նաև **εξ** ածանցներին: Ունի «հեռու, մի կողմ, բացի, դուրս» բառակազմական նշանակությունները: Ոչ կենսունակ ածանց է: Կցվում է բայական հիմքերին՝ կազմելով բայեր, ածականներ, գոյականներ, մակբայներ՝ **բացականչել, բացասել, բացատրել, բացակա, բացահայտ, բացառիկ, բացորոշ, բացառաբար, բացարկ** և այլն:

Գեր(ա)- գործուն նախածանց է: Ունի «նախատիպի արտահայտածից ավելի, շատ, վեր» բառակազմական նշանակություն: Գոյականական, ածականական, բայական հիմքերով կազմում է գոյականներ, ածականներ, ոչ մեծ թվով բայեր՝ **գերհոգնածություն, գերմարդ, գերբեռնում, գերակատարում, գերնոսր, գերծանր, գերակշիռ, գերիշխել, գերադասել, գերազնահատել** և այլն:

Դեր - ոչ գործուն ածանց է՝ «փոխարեն, փոխանակ, ի տեղի» բառակազմական նշանակությամբ: Ստեղծվել է հունարենի **αυτι** ածանցի նմանողությամբ: Կցվելով գոյականական հիմքերին՝ կազմում է հիմնականում գոյականներ, որոնք իրենց հերթին կարող են հիմք հանդիսանալ այլ խոսքի մասերի կազմության համար՝ **դերանուն, դերբայ, դերկոմս, դերծովակալ, նաև՝ դերանվանաբար, դերբայական:**

Ենթ(ա) - ստեղծվել է **ընդ** նախդիրի հնչյունավոխությամբ: Բառակազմական նշանակություններն են՝ «տակը, տակի, ստորին, մի մասը»: Գոյականական և բայական հիմքերից կազմում է հիմնականում գոյականներ՝ մեծ մասամբ տերմինային նշանակությամբ, որոնք կարող են հիմք դառնալ այլ խոսքի մասերի կերտման համար՝ **ենթատեսակ, ենթախումբ, ենթազլուխ, ենթաբարբառ, ենթավերնագիր, ենթահանձնաժողով, նաև՝ ենթաստամոքսային, ենթաճյուղային, ենթադրել** և այլն: Այս ածանցի անհոդակապ ձևը կա մի քանի քառերում՝ **ենթարկել, ենթօքսիդ:**

Ընդ - գրաբարյան նախդիր է, որն արդի հայերենում ունի հիմնականում նախածանցային կիրառություն: Բաղադրություններում պահպանել է իր նախդրային իմաստները՝ «1. մեջ, ներս, միջից, 2. հետ, 3. տակը, տակից, 4. վրա»: Կազմում է հիմնականում բայեր, նաև ածականներ (որոնցում նախդրային իմաստը մթազնում է), մակբայներ, գոյականներ (միայն բաղադրյալ գոյականական հիմքերից)՝ **ընդառաջել, ընդգծել, ընդգրկել, ընդմիջել, ընդունել, նաև՝ ընդարձակ, ընդհանուր, ընդունայն, ընդգետնյա, ընդգրկողականություն, ընդդատություն, ընդհուպ, ընդմիշտ, ընդամենը** և այլն:

Թեր(ա)- բառակազմական նշանակությունն է՝ «թերի, կիսատ, ոչ լրիվ»: Հիմնականում բայական, ինչպես նաև ածականական և գոյա-

կանական հիմքերից կազմում է բայեր, ածականներ և մի քանի գոյական՝ **թերագնահատել, թերակշռել, թերաճել, թերակատարել, թերակառույց, թերահավատ, թերակիրթ, թերաճ, թերակղզի, թերօրսիդ** և այլն:

Հակ(ա)- առաջացել է գրաբարյան *հակի, հակառակ* բառերի արմատից: Ունի «հակառակ, դեմ, ընդդեմ» բառակազմական նշանակություն: Գործուն նախածանց է, հանդես է գալիս հիմնականում տերմինակազմության մեջ: Կցվելով բայական, ածականական և գոյականական հիմքերին՝ կազմում է ածականներ, գոյականներ, նաև բայեր՝ **հակասական, հակազագ, հակագրոհ, հակակշիռ, հակահարված, հակաբնական, հակադիր, հակապատմական, հակաթոռ, հակադարձել, հակադրել, հակասել** և այլն:

Համ(ա)-, **հոմ(ա)** - բառակազմական նշանակություններն են՝ «1. նույն, միևնույն, 2. ընդհանուր, ամբողջ, համայն, ամբողջովին, 3. միասին»: **Հոմ(ա)** - ձևը ծագել է հունական **ομο** ածանցի նմանորությանը և այսօր կա միայն **հոմանիշ** բառում: **Համ(ա)** – նախածանցը արդի հայերենի ամենագործուն ածանցներից է: Հիմնականում բայական և գոյականական հիմքերից կազմում է բայեր, գոյականներ, ածականներ՝ **համագործակցել, համալրել, համախմբել, համակարգել, համագումար, համաժողով, համալսարան, համաձուլվածք, համակրոն, համախառն, համազգային** և այլն:

Հար(ա)- բառակազմական իմաստներն են՝ «1. մոտ, կից, 2. միշտ, 3. նման, 4. միասին, կիպ»: Ծագում է գրաբարյան *յար* (>հար «կից, կողք կողքի միացած») բառից: Գործուն ածանց չէ: Կցվելով բայական, նաև անվանական հիմքերին՝ կազմում է բայեր, ածականներ, գոյականներ՝ **հարաբերել, հարասել, հարակցել, հարաճուն, հարաշեշտ, հարաբարդ, հարահոս, հարանուն, հարացույց, հարակրկնություն** և այլն:

Մակ(ա)- բառակազմական նշանակություններն են՝ «1. մի բանի վրա, վերև, 2. հավելում»: Ստեղծվել է հունարենի **επι** ածանցի իմաստի նմանություններ: Գործուն ածանց չէ, նոր կազմությունները հիմնականում տերմիններ են: Կցվելով գոյականական և բայական հիմքերին՝ կազմում է առավելաբար գոյականներ, նաև բայեր, ածա-

կաններ՝ **մակբայ, մակդիր, մակաշերտ, մակերևույթ, մակաբույծ, մակագրել, մակածել** և այլն:

Նախ(ա)- բառակազմական նշանակություններն են՝ «1. առաջ, առջևից, 2. առավելապես, գերադասելով, 3. մինչև, 4. նախապես, ի սկզբանե»: Գրաբարում եղել է մակբայ: Բայական և գոյականական հիմքերով կազմում է հիմնականում գոյականներ, ածականներ, ինչպես նաև բայեր, մակբայներ, մասնակցում է տերմինակազմությանը՝ **նախադաս, նախադեպ, նախաբազուկ, նախահայր, նախամեծար, նախդիր, նախազդել, նախընտրել, նախօրոք, նախապես** և այլն:

Ներ(ա)- ունի «ներսում, ներսը, դեպի ներս» բառակազմական նշանակությունը: Գործում է հատկապես տերմինակազմության մեջ: Կցվելով բայական, ածականական, գոյականական հիմքերին՝ կազմում է հիմնականում ածականներ, նաև բայեր և որոշ թվով գոյականներ՝ **ներդաշնակ, ներպետական, ներկուսակցական, ներածել, ներգործել, ներգրավել, ներդիր, ներգաղթ** և այլն:

Շաղ- կապվում է առանձին անգործածական **շաղ** արմատի հետ՝ «կապ, գոդ, կցում, միացում» բառակազմական նշանակությամբ: Կենսունակ ածանց չէ: Ժամանակակից հայերենում գործածվում է միայն **շաղկապ** բառը և սրանից բաղադրված մի քանի կազմություններ՝ **շաղկապել, շաղկապական, շաղկապում, շաղկապենի** (կազմախոսական տերմին է):

Շար(ա)- կապվում է **շար** արմատի հետ, ունի «կարգ, խումբ, շարվածք» բառակազմական նշանակությունները: Գործում ածանց չէ, կազմվում են հիմնականում տերմիններ՝ **շարակարգ, շարակարգել, շարադրանք, շարադասել, շարահյուսություն, շարահարություն, շարակցել** և այլն:

Պար(ա)- առաջացել է **պար** արմատից, ունի «շուրջը, շրջան, շուրջանակի, շրս կողմը» բառակազմական նշանակությունը: Կենսունակ չէ: Ժամանակակից հայերենում գործածական են այս ածանցով սակավաթիվ բառեր՝ **պարագա, պարագիծ, պարբերություն, պարբերաբար, պարագիծ, պարագլուխ, պարփակել, պարունակել, պարականոն:**

Ստոր(ա)- իբրև նախածանց՝ ունի «տակը, վերևից ներքև, ցած» բառակազմական նշանակությունները: Կազմում է ածականներ, բայեր, գոյականներ, որոնց մի մասը տերմին է՝ **ստորակետ, ստորադասական, ստորագրել, ստորակարգ, ստորջրյա** և այլն:

Վեր(ա)- կազմվել է համանուն բառից: Արդի հայերենի ամենագործուն նախածանցներից է: Բառակազմական նշանակություններն են՝ «1. մի բանի վերևը՝ վրա, 2. կազմում է բայեր՝ ցույց տալով՝ ա) գործողության ուղղվածությունը դեպի վեր, բ) գործողության կրկնություն՝ վերստին, երբեմն նոր ձևով նշանակությամբ, գ) գործողության կրկնություն և նախօրոք արվածի՝ եղածի՝ ստեղծածի՝ ստեղծվածի փոփոխություն՝ նորից նշանակությամբ»: Կազմում է հիմնականում բայեր, ինչպես նաև և գոյականներ, ածականներ՝ **վերաբնակվել, վերագնահատել, վերբաշխել, վերմղել, վերադասել, վերահսկել, վերածել, վերակարգ, վերաբնակիչ, վերարկու, վերաբնություն, վերածնունդ, վերապահում, վերստուգիչ, վերամբարձ, վերահաս** և այլն:

Տար(ա)- առաջացել է հայերենի *տար* «հեռու, հեռավոր, դուրս» արմատից (մեկ այլ մոտեցմամբ՝ *օտար* բառի հնչյունափոխությունից¹⁴⁵)՝ հունարենի **δία** և **παρά** մասնիկների իմաստն արտահայտելու համար: Ունի «1. հեռու, հեռավոր, 2. օտար, դուրս, զատ, բացի, արտաքո, 3. այլ, տարբեր, ուրիշ, 4. նախատիպի մատնանշած առարկան կամ հատկանիշը չունեցող» բառակազմական նշանակությունները: Բառակազմությամբ քիչ է մասնակցում: Կազմում է ածականներ, ինչպես նաև գոյականներ ու բայեր, որոշակի կենսունակություն է ցուցաբերում միայն տերմինակազմության մեջ՝ **տարագիր, տարաշրջիկ, տարածամ, տարակարծիք, տարականոն, տարաբախտ, տարօրինակ, տարամիտել, տարակուսել, տարորոշել, տարփողել** և այլն:

Տրամ(ա)- ստեղծվել է հունարենի **δία** մասնիկի իմաստն արտահայտելու համար: Արտահայտում է «այս ու այն կողմից, մի ծայրից մյուսը, միջով» բառակազմական նշանակությունները: Կենսունակ չէ. կան սրանով մի քանի գոյականներ ու բայեր և դրացից կազմված որոշ բաղադրություններ՝ **տրամագիծ, տրամագծել, տրամաչափ,**

¹⁴⁵ Մուսկ Գ., Շամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 2009, էջ 169:

տրամադրություն, տրամաբանել, տրամախաչել, տրամադրելի և այլն:

Փոխ(ա)- առաջացել է *փոխել* բայի արմատից: Համեմատաբար կենսունակ ածանց է: Բառակազմական իմաստներն են՝ «1. բայերում՝ ա) մի տեղից մի այլ տեղ կատարվող գործողություն, բ) գործողությունը այլ ձևով կատարելու նշանակություն, 2. գոյականներում՝ ա) մի բանի փոխարեն գործածվող, մի բանի տեղը դրվող, բ) ընդհանրապես փոխադարձ կերպով, փոխադարձաբար, գ) ըստ պաշտոնի մեկին փոխարինող, տեղակալ»՝ **փոխադրել, փոխանցել, փոխակերպել, փոխարկվել, փոխհատուցել, փոխանուն, փոխզիջում, փոխօգնություն, փոխըմբռնում, փոխարքա, փոխնախագահ, փոխծովակալ, փոխզնդապետ** և այլն:

Վերջածանցներ

Վերջածանց է կոչվում այն բառակազմական երկրորդական ձևույթը, որը, կցվելով հիմքի վերջից, կազմում է նոր բառ: Ժամանակակից հայերենի վերջածանցների հիմնական մասը գրաբարյան ժառանգություն է, որոշ ածանցներ ժողովրդական ծագում ունեն և գրական լեզվին են անցել բարբառներից կամ խոսակցական լեզվից: Ինչպես գրաբարյան, այնպես էլ բարբառներից անցած վերջածանցները ժամանակակից հայերենում ցուցաբերում են տարբեր կենսունակություն:

Վերջածանցների բառակազմական նշանակության մեջ կան նաև խոսքիմասակերտ իմաստներ: Նրանցով կազմված բառերում խոսքիմասային պատկանելությունը որոշվում է վերջին քայլում ավելացած ածանցով: Հատկանշական է նաև, որ միևնույն վերջածանցով երբեմն կարող են կազմվել մեկից ավելի խոսքի մասի պատկանող բառեր¹⁴⁶: Ժամանակակից հայերենի լեզվաըմբռնողությամբ գիտակցվող վերջածանցների թիվը 180-ի է հասնում: Դրանց զգալի մասը կենսունակ է նաև լեզվի զարգացման արդի փուլում:

¹⁴⁶ Այլ մոտեցմամբ՝ մեկից ավելի խոսքի մասեր կազմող ածանցները համարվում են համանուն, այսինքն՝ տարբեր ածանցներ:

Ժամանակակից հայերենի գործուն կամ համեմատաբար գործուն վերջածանցները հետևյալներն են.

-**(Ա)բան** – գոյականական հիմքի վրա դրվելով՝ կազմում է գոյականներ՝ «հիմքի ցույց տված առարկայի ուսումնասիրությամբ զբաղվող գիտության ճյուղի մասնագետ» բառակազմական նշանակությամբ: Օր.՝ **լեզվաբան, ախտաբան, երկրաբան, մանրէաբան** և այլն: Ածականական հիմքից կազմված ունենք **հնաբան** «խոսքում հնաբանություններ գործածող», բառը, բայական հիմքից՝ **կոնծաբան** «հարբեցող, հարբեցողության մասնագետ» բառը:

-**(Ա)բար, -(ա)պես, -որեն** – հոմանիշ ածանցներ են: Հիմնականում, ածականական, ինչպես նաև մակբայական հիմքերից կազմում են մակբայներ՝ «1. իբրև նախատիպի ցույց տված առարկան, 2. նախատիպի ցույց տված առարկայի հատկանիշի նման՝ կերպ, 3. նախատիպի ցույց տված հատկանիշի ձևով՝ նման՝ կերպ» բառակազմական նշանակությամբ: Օր.՝ **եղբայրաբար, եղբայրապես, բնագոյաբար, բնագոյորեն, արմատապես, ազնվաբար, ազնվապես, ազնվորեն, անկեղծաբար, անկեղծորեն, տոնականորեն, գլխավորապես** և այլն: Վերջին տասնամյակներում նկատվում է **-(ա)պես** վերջածանցի կիրառության աստիճանական նվազման միտում՝ ի հաշիվ **-(ա)բար, -որեն** ածանցների բառակազմական հնարավորությունների աշխուժացման:

-**(Ա)գար** – ակտիվ ածանց չէ: Գոյականական հիմքերից կազմում է գոյականներ: Բառակազմական նշանակությունն է «նախահիմքում նշված հիվանդությունը ունեցող՝ ախտով տառապող»՝ **խելագար, ջղագար, ցավագար, մոլագար, լեզվագար** «խոսելու՝ լեզվին տալու ցավ ունեցող, շատախոս», **մտագար** «մտքի՝ մտածելու հիվանդություն ունեցող, ցնորամիտ մարդ» և այլն:

-**(Ա)գին** – ածականական, գոյականական և բայական հիմքերին կցվելով՝ կազմում է ածականներ և մակբայներ՝ սաստկական նշանակությամբ՝ **թախծագին, քնքշագին, ողբագին, եռանդագին, զայրագին, ցնծագին, հիվանդագին** և այլն:

-**(Ա)գործ** – ածանցային կիրառությամբ ունի «նախատիպում նշված առարկան կամ որևէ նյութից իրեր պատրաստելու, որևէ

գբադմունքի մասնագետ» բառակազմական նշանակությունը: Գոյականական հիմքերից կազմում է գոյականներ՝ **քանդակագործ, մսագործ, ապակեգործ, խեցեգործ, կահույքագործ, հրուշակագործ, քիմիագործ, արծաթագործ, թունելագործ** և այլն:

-**(Ա)գույն** – կազմում է որակական ածականների գերադրական աստիճանը՝ «նախահիմք ածականի ցույց տված հատկանիշից ամենից շատ ունեցող» բառակազմական նշանակությամբ՝ **հնագույն, լավագույն, մեծագույն, նվազագույն, նրբագույն, առաջնագույն, ազնվագույն** և այլն:

-**Ած** – առաջացել է հարակատար դերբայի վերջավորությունից: Բայական հիմքերից կազմում է հիմնականում ածականներ՝ «նախատիպ բայով բնորոշվող առարկայի վիճակ» բառակազմական նշանակությամբ՝ **ողորմած, երկյուղած, քնեած, սոված, խմած, լացակումած** և այլն: Այս ածանցով կազմված մի շարք բառեր խոսքիմասային փոխանցման պատճառով այսօր գոյականներ են կամ ունեն առավելապես գոյականական կիրառություն, ինչպես՝ **արարած, սիրած, նշանած, արկած, խորոված, կոտորած** և այլն:

-**Ածո, -ածու,** – բաղադրյալ ածանցներ են (*ած + ո, ած + ու*): Բայական հիմքերից կազմում են ածականներ և գոյականներ: Ածականական կիրառությամբ ունեն «նախատիպ բայի գործողությանը ենթարկվելուց հետո ձեռք բերած հատկանիշն ունեցող» բառակազմական նշանակությունը՝ **ծալածո, տաշածո, կոփածո, թորածո, հոգածու, շինծու** (< *շինածու* ձևից՝ *ա*-ի սղումով) և այլն:

-**Ակ** – դրվում է գոյականական, ածականական, բայական հիմքերի վրա: **ա)** Գոյականական հիմքերից կազմում է գոյականներ՝ նախահիմքին տարով նվազական, փաղաքշական, երբեմն՝ նվաստական նշանակություններ՝ **առվակ, գյուղակ, թռչնակ, վիպակ, ծովակ, որդյակ, պատանյակ** և այլն: Մի շարք գոյականներում **-ակ**-ը նվազական նշանակություն չունի, և նրանով ու առանց նրա բառագույգերն արտահայտում են տարբեր հասկացություններ և ունեն տարբեր բառային իմաստներ, ինչպես՝ **գլան** (երկրաչափական մի մարմնի անվանումը) և **գլանակ** (ծխախոտի տեսակ, սիգարետ), **թաս** (հեղուկի մի տեսակ աման) և **թասակ** (գլխարկի մի տեսակ), **աղյուս** (շի-

նարարական արհեստական քարի տեսակ) և **աղյուսակ** (սյունակներով գծագրի մի տեսակ), **վահան** (պաշտպանական զենքի տեսակ) և **վահանակ** (չափողական և էլեկտրական սարքեր կրող կառավարման տախտակ) և այլն: Այս ածանցով կազմված գոյականահիմք մի քանի բառեր ունեն նվաստական նշանակություն՝ **գրչակ, իմաստակ, արվեստակ, լեզվակ** («ուրիշի խոսքերը թութակի նման կրկնող» իմաստով): **բ** Բայական հիմքերի վրա դրվելով կազմում է գոյականներ՝ «նախատիպի ցույց տված գործողությունը կատարող անձ կամ առարկա՝ գործիք» բառակազմական նշանակությամբ՝ **կատակերգակ, նվիրակ, խոսնակ, բուժակ, դիտակ, ամրակ, բռնակ, սեղմակ** և այլն: **գ** Ածականական հիմքերից կազմությունները նվազականի հետ հաճախ ունեն նաև փաղաքշական, նշանակություն՝ **անուշակ, կապուտակ:**

-(Ա)կան – կազմում է ածականներ, բաշխական թվականներ և սակավաթիվ գոյականներ: Դրվում է գոյականական (նաև հատուկ անուններից կազմված), ածականական, բայական և թվականական հիմքերի վրա: Բառակազմական նշանակություններն են՝ «1. Նախատիպ գոյականին վերաբերող՝ հատուկ, 2. նախատիպ ածականին առնչվող, 3. նախատիպի արտահայտած գործողությունը կատարելու ընդունակ կամ այդ գործողությունը որպես կայուն հատկանիշ ունեցող, 4. նախատիպի թվով հավասարաչափ բաշխում»: Օրինակներ՝ **հայրական, տոնական, նկարչական, դարվինական, դանթեական, արդիական, թվառական, լայնական, սովորական, հալածական, խրատական, հորդորական, շարժական, երեքական, ութսունական** և այլն:

-(Ա)կի – ա ածականական (նաև մակբայական), բայական, գոյականական հիմքերին միանալով՝ կազմում է ածականներ և մակբայներ՝ «նախատիպի ձևով» բառակազմական նշանակությամբ՝ **կողմնակի, շուրջանակի, առանձնակի, մասնակի, հանկարծակի, շեղակի, ուղղակի, երկայնակի** և այլն: **բ** Թվականական և քանակ ցույց տվող հիմքերից կազմություններում ունի բազմապատկության նշանակություն՝ **երկակի, կրկնակի, միակի, եզակի, քառակի, եռակի, բազմակի** և այլն:

-**Ային** – հոմանիշ է –**սկսան** ածանցին, սակայն, ի տարբերություն նրա, դրվում է միայն գոյականական հիմքի վրա (այն էլ բացառապես հասարակ անունների) և կազմում է ածականներ՝ «նախատիպին հատուկ՝ վերաբերող, նախատիպ գոյականով բնորոշվող հատկանիշ» բառակազմական իմաստով: Այս ընդհանուր նշանակաւորությունը ունի մի քանի մասնավոր դրսևորումներ՝

ա) նախատիպին վերաբերող, դրանով զբաղվող, դրան առնչվող՝ **քաղաքային, ֆուտբոլային, արկածային, տնային, հեքիաթային, հարկային, բանտային** և այլն:

բ) Նախատիպի ցույց տված վայրում եղող՝ հանդիպող՝ աճող՝ ապրող՝ օգտագործվող՝ **անտառային, լեռնային** (բույս), **ցամաքային, հրաբխային, քմային** (հնչյուն), **գարկերակային** և այլն:

գ) Որի նախատիպը որպես նյութ է ծառայում, մի բանից առաջացած, մի բանի մասնություն ունեցող՝ **արեգակնային, օդային, լուսային, դրախտային** (երաժշտություն), **աժխաջրածնային** և այլն:

դ) Նախատիպով նշվող առարկայից շատ եղող, նրա առատությամբ բնորոշվող՝ **լեռնային** (երկիր), **անտառային, տափաստանային, ճահճային** և այլն:

ե) Նախատիպ գոյականով՝ որպես գործիքով, կատարվող՝ **դահուկային, հեծանվային, դաշնամուրային, ավտոմոբիլային, գնդացրային** և այլն:

զ) Նախատիպով նշվող գոյականի արտադրությամբ, մշակմամբ, բուժմամբ և այլնով զբաղվող՝ **գործիքային, լամպային, թոքաթորքային, սրտային** և այլն:

Թեև -(**ս**)**կսան** և -**ային** հոմանիշ ածանցներով կազմվում են հոմանշային բազմաթիվ գույգեր (*մերադական – մերադային, մարմանական – մարմնային, րնական – րնային, հայդուկական – հայդուկային* և այլն, և այլն), այնուամենայնիվ որոշ նույնահիմք բաղադրություններ ունեն բառային տարբեր իմաստներ և հոմանիշներ չեն, ինչպես՝ **խորհրդական և խորհրդային, քաղաքական և քաղաքային, դասական և դասային, ազգական և ազգային, անապատական և անապատային** և այլն: -**Ային** ածանցը անցյալ դարի կեսերից առավել

կենսունակություն է դրսևորում հոմանիշ **-ական** վերջածանցի համեմատությամբ:

Այս ածանցով որոշ բաղադրություններ խոսքիմասային փոխանցմամբ դարձել են նաև գոյականներ, իսկ դրանց համաբանությամբ հետագայում կազմվել են արդեն ուղղակի գոյականներ, ինչպես՝ **երկաթուղային, բանակային, աշխարհագրային, հեծելագորային, գրոհային** և այլն:

-Այն – քարացած ձևով պահպանվել է ժամանակակից հայերենի մի քանի բաղադրություններում՝ **միայն, միմիայն, համայն, միանգամայն, վաղորդայն, լռելյայն**:

-Ան – դրվում է բացառապես բայական հիմքերի վրա և կազմում է գոյականներ և ածականներ: Ունի մի քանի բառակազմական նշանակություն: *Գոյականակերպ* կիրառությամբ՝ «1. գործող անձի անուն, նախատիպի ցույց տված գործողությունը կատարող՝ **իշխան, դերասան, վիպասան**, 2. նախատիպի արտահայտած գործողությունը կատարելու համար նախատեսված գործիքի անուն՝ **խթան, փական, ըմպան, ձգան, ծորան, խցան** և այլն, 3. նախատիպի արտահայտած գործողության տեղի անուն՝ **արգելան, ոլորան, կայան**, 4. նախատիպի արտահայտած գործողությունը իրենց վրա կրող, որպես այդ գործողության արդյունք հանդես եկող առարկաների անուններ՝ **խտան, պատվիրան, կարկատան, կախան** և այլն»: *Ածականակերպ* կիրառությամբ՝ «1. նախատիպի արտահայտած գործողությունը շատ կամ միշտ կատարող (նաև փոխաբ. իմաստով)՝ **կծան, հաչան, դուրեկան, վազան, փչան, պլպլան** և այլն, 2. նախատիպի ցույց տված ձայնային հատկանիշը ունեցող՝ **գոռգոռան, փնփնթան, ծղրտան, դրնգան, կչկչան, խշշան, ճոճոռան** և այլն»:

-Անակ (ան + ախ) – բայական հիմքերը կազմում է սակավաթիվ գոյականներ՝ «նախատիպի արտահայտած գործողության կատարման գործիք կամ այդ գործողության արդյունք» բառակազմական նշանակությամբ՝ **ըմպանակ, շրջանակ, ճոճանակ, զսպանակ, հաղթանակ, մրցանակ** և այլն:

-Անի¹ – հիմնականում գոյականական, մասամբ ածականական, թվականական (կամ թվի ընդհանուր գաղափար ցույց տվող) և բայական հիմքերից կազմում է ածականներ՝ «մի բան ունեցող, մի բանով

օժտված, մի բանի համար նախատեսված» բառակազմական նշանակությամբ՝ **անվանի, լեզվանի, գեղանի, նագանի, յոթլարանի, երկհարկանի, միտունի, ընտրանի, հովանի, ստոծանի:**

-**Անի**² – նախորդի համանունն է: Առաջացել է գրաբարի հավաքական հոգնակիի մասնիկից: Կազմում է գոյականներ՝ «նախատիպի ցույց տված առարկաների ամբողջություն» բառակազմական իմաստով: Բաղադրություններ մեծ մասը ժառանգված են գրաբարից՝ **ազատանի, ավագանի, նամականի, առականի, առածանի**, նոր կազմություններ են՝ **տեսականի, նմուշանի:**

-**(Ա)նոց, -ոց**¹ – գոյականական և բայական հիմքերից կազմում է գոյականներ՝ «նախատիպի ցույց տված տեղը» ընդհանուր բառակազմական նշանակությամբ: Մասնավոր իմաստներն են՝ ա) «որևէ բան պատրաստելու, մշակելու, արտադրելու, պահելու, որևէ մեկի բնակվելու, գտնվելու տեղ»՝ **հարդանոց, աղբանոց, ծիրանանոց, սոխանոց, բանջարանոց, զինանոց, գերեզմանոց, ծերանոց, գժանոց, անկելանոց, հիվանդանոց, ձիանոց, շնանոց, ավագականոց** և այլն, բ) «մարդկային այլևայլ գործունեությամբ զբաղվելու տեղ՝ շենք՝ շինություն»՝ **արվեստանոց, երաժշտանոց, կաշեգործանոց, վարսավիրանոց, պահականոց, գրավաճառանոց, զարեջրանոց, դարբնոց, դպրոց, կոշկարանոց** և այլն, գ) գոյականներ՝ «նախատիպի ցույց տված բույսը կամ կենդանին աճեցնելու, պահելու տեղ, կամ դրանցով հարուստ տեղ»՝ **նշանակությամբ՝ եղեգնոց, ծաղկոց, վարդոց, աղավնոց, գառնոց, ձկնոց** և այլն, դ) «չափի միավորների և չափման միջոցների անուններ» (կարող են ունենալ նաև ածականական իմաստներ)՝ **լիտրանոց, մետրանոց, դրամանոց, լումայանոց, հնգանոց, տասանոց, քսանհազարանոց** և այլն, ե) «անվանում են հագուստներ, զարդեր, որոնք կրվում են մարմնի որևէ մասի՝ տեղի վրա»՝ **զլխանոց, ձեռնոց, վզնոց, մատնոց, ճակատանոց** և այլն:

-**Անց** – գոյականական, ինչպես և ածականական ու մակբայական հիմքերով կազմում է մակբայներ, որոնք ժողովրդախոսակցական ձևեր են՝ **զլխանց, կողբանց, երեսանց, շապկանց** և այլն: Գրական բառապաշարին անցած միակ բառն է **սրտանց** մակբայը:

-**Անուտ** (*ան* + *ուտ*) – հանդես է գալիս սակավաթիվ բաղադրություններում: Բայական հիմքերից կազմում է ածականներ՝ **հոսանուտ, հրանուտ, հորձանուտ, կիզանուտ, վիժանուտ, շիջանուտ**:

-**Անք**¹ – գործուն է հատկապես տերմինակազմության մեջ: Բայական հիմքերից կազմում է բայանուն գոյականներ, որոնք ցույց են տալիս նախատիպ բայի գործողության առարկայացած անունը կամ այդ գործողության արդյունքը՝ **գրկանք, փրկանք, հեկեկանք, արիամարիանք, քծնանք, հայիռյանք, ներշնչանք, տեղեկանք** և այլն: Մի քանի բառեր այս ածանցով գոյականներ են կազմում նաև ոչ բայական հիմքերով՝ **խղճմտանք, պերճանք, ամոթանք** և այլն, որոնց մի մասն ունի *-ություն* ածանցով զուգաձևեր (թերևս նախընտրելի են այդ ձևերը):

-**Անք**² – նախորդի համանունն է: Գոյականական հիմքերից կազմում է սակավաթիվ գոյականներ՝ հավաքական իմաստով՝ **Վարդանանք, հանդերձանք, աներանք**, նաև խոսակցական ու բարբառային՝ **ջոջանք, աղբերանք**:

-**(Ա)պան** – գոյականական հիմքերից կազմում է գոյականներ հետևյալ բառակազմական նշանակություններով՝ «1. նախատիպ գոյականով նշվող առարկայով՝ որպես զբաղմունք, արհեստ, պաշտոն, զբաղվող, 2. հանդերձանքի ընդհանուր անվանում, որը ունի նախատիպի նշած մարմնի մասի պահողի նշանակություն»՝ **ձիապան, շնապան, սայլապան, դռնապան, հնոցապան, պարտիզպան**, նաև՝ **արմնրկապան, սրնքապան, թաթպան, ծնկապան, բազպան, դաստապան** և այլն:

-**(Ա)պանակ** (*պան* + *ակ*) – գոյականական հիմքերից կազմում է գոյականներ՝ «նախատիպ գոյականով նշվող առարկան պահողի՝ պահպանողի» բառակազմական նշանակությամբ՝ **լանջապանակ, թրթապանակ, գրչապանակ, դրամապանակ**:

-**(Ա)պատիկ** – թվականական կամ թվի, քանակի գաղափար արտահայտող ածականական հիմքերից կազմում է ածականներ և մակբայներ՝ «նախատիպի նշած անգամ» բառակազմական նշանակությամբ՝ **երկպատիկ, քառապատիկ, հարյուրապատիկ, բյուրապատիկ, բազմապատիկ**:

-**Ալես** – ածականական և գոյականական հիմքերից կազմում է մակբայներ՝ «նախատիպի ձևով, իբրև նախատիպը» բառակազմական նշանակությամբ՝ **մեծալես, մմանալես, ներքնալես, գերագանցալես, նյութալես, պաշտոնալես, հոգեալես, դյուցազնալես, ֆիզիկալես** և այլն:

-**(Ա)ստան** – գոյականական հիմքերից կազմում է գոյականներ՝ «1. երկրի, վայրի հատուկ անուն, 2. նախատիպի նշած գոյականով (տվորաբար՝ բուսանվամբ) հարուստ վայր» բառակազմական նշանակություններով՝ **Հայաստան, Հնդկաստան, Չինաստան, Քրդստան, Մարաստան, ծառաստան, ծաղկաստան, այգեստան, մրգաստան, նաև՝ լեռնաստան, ժայռաստան, տափաստան, անդաստան**:

-**Ավարի** – գոյականական հիմքերով կազմում է մակբայներ, որոնք, դրվելով բայանուն կամ բայահիմք գոյականների վրա, կարող են գործածվել նաև որպես ածականներ: Բառակազմական նշանակությունն է «նախատիպի ցույց տված գոյականի նման, իբրև այդ գոյականը»: Օր.՝ **քաղաքավարի, մարդավարի, գժավարի, տնավարի, աղայավարի, տղամարդավարի, խոզավարի**:

-**Ավետ** – գոյականական հիմքերից կազմում է ածականներ՝ «նախատիպի ցույց տված գոյականից շատ ունեցող, դրանով հարուստ՝ առատ» բառակազմական նշանակությամբ՝ **պտղավետ, սիգավետ, հոտավետ, շահավետ, արդյունավետ, թիկնավետ** և այլն: Կան ածականական հիմքերով մի քանի բաղադրություններ՝ «նախատիպի ցույց տված հատկանիշից քիչ՝ պակաս ունեցող» բառակազմական նշանակությամբ՝ **կարճավետ, փափկավետ, կարմրավետ, հարմարավետ** և այլն:

Ծանոթություն: **Երջանակավետ, խաղաղավետ, երանավետ, բերկրավետ** կազմությունները իսկական բարդություններ են՝ «երջանկություն ավետող, խաղաղություն ավետող» և այլն բառային նշանակություններով: Սակայն **ալեկր** հնչումով վերջացող այլ բառերի համաբանությամբ վերջին տասնամյակներում ընկալվում և գործածվում են ավելի հաճախ իբրև վերջածանցավոր կազմություններ՝ «երջանկությամբ հարուստ, բերկրությամբ հարուստ» և այլն բառային նշանակություններով¹⁴⁷:

¹⁴⁷ Տե՛ս *Գալստյան Ս.*, նշված աշխ., էջ 102:

-**(Ա)վոր** – գոյականական, ածականական և բայական հիմքերից կազմում է ածականներ: Ունի բառակազմական մի քանի նշանակություններ՝ **ա) գոյականական** հիմքերից՝ 1) «նախատիպ գոյականը ունեցող, գործածող, կրող»՝ **բժավոր, թևավոր, զունավոր, կնդակավոր, ժապավենավոր, սքեմավոր, սակրավոր, գրահավոր, ճիավոր, ածխածնավոր** և այլն, 2) «նախատիպով նշված հիվանդությունը ունեցող»՝ **թորախտավոր, խոցավոր, խպիպավոր, ուռուցավոր** և այլն, 3) «նախատիպի ցույց տված գաղափարախոսության, հոսանքի, ուղղության կողմնակից՝ հարող»՝ **աղանդավոր, գործադուլավոր, կրոնավոր** և այլն: **բ) Ածականական** հիմքերից՝ «նախատիպի ցույց տված հատկանիշը ունեցող, կրող»՝ **զգուշավոր, մերձավոր, հեռավոր, մենավոր, նենգավոր, արժանավոր** և այլն: **գ) Բայական** հիմքերից՝ «գործողի անվան ընդհանուր նշանակություն»՝ **սպասավոր, հուղարկավոր, հրետանավոր, դատավոր, թագավոր** և այլն: Այս հիմքով անհոդակապ բաղադրությունների մի մասն առավելապես ընկալվում է իբրև գոյական (խոսքիմասային փոխանցմամբ)՝ **բանվոր, կթվոր, հեծվոր, քոչվոր, կենվոր** և այլն:

-**Ավուն** – ածականական հիմքերից կազմում է ածականներ՝ նախատիպի ցույց տված հատկանիշին մոտ, նրանից քիչ պակաս» բառակազմական նշանակությամբ՝ **երկարավուն, դառնավուն, քաղցրավուն, ապուշավուն, դեղնավուն, շիկավուն, կարմրավուն, սևավուն** և այլն:

-**Ատ** – **ա)** հիմնականում գոյականական հիմքերից կազմում է ածականներ՝ «նախատիպի ցույց տվածը չունեցող» բառակազմական նշանակությամբ՝ **քնատ, կոնատ, պոչատ, զունատ, ծայրատ** և այլն: Ածականական հիմքերից են կազմված **կրճատ, թերատ** բաղադրությունները: Այս ածանցով կազմված մի շարք բառեր խոսքիմասային փոխանցմամբ դարձել են գոյականներ՝ **խորխորատ, ջոկատ, միջատ, ցարատ, ակնատ, թերթատ** և այլն: **բ)** Կազմում է մի շարք բայահիմքեր, որոնք ինքնուրույն՝ որպես առանձին բառ, գործածություն չունեն **երկատ(ել), մասնատ(ել), տողատ(ել), ծրատ(ել)** և այլն:

-**Ար(բ)** – հիմնականում գոյականական հիմքերից կազմում է գոյականներ՝ «մի բան անող՝ անելը» բառակազմական նշանակու-

թյամբ: Կազմում է սակավաթիվ բառեր՝ **կերպար, պայտար, կոցար, ծրար, փայլար** (հանքատեսակ է), **ստուգարք, լուծարք, գործարք** և այլն: Այս ածանցով ևս կազմվում են մի քանի ինքնուրույնաբար չգործածվող բայահիմքեր՝ **գարդար(ել), մեծար(ել), աստվածար(ել)**:

-Արան – բայական և գոյականական հիմքերից կազմում է գոյականներ՝ բառակազմական հետևյալ նշանակություններով՝ **ա) քսյական** հիմքերով՝ 1) «նախատիպ բայի գործողության կատարման տեղը (մեծ մասամբ շենք՝ շինություն)»՝ **ննջարան, բնակարան, կացարան, լսարան, գործարան, ընթերցարան, ընդունարան, թեյարան** (թեյելու տեղ), **սողցարան**, 2) «նախատիպի արտահայտած գործողությունը կատարելու գործիք՝ հարմարանք»՝ **լվացարան, մատուցարան, նստարան, ելարան, վառարան, պահարան, բ) գոյականական** հիմքերից՝ 1) «նախատիպ գոյականի պաշտոնատեղին, մնալու, ապրելու, պահելու, բուծելու վայրը՝ տեղը»՝ **քաղաքապետարան, հյուպատոսարան, պատրիարքարան, վեհարան** (վեհափառի՝ կաթողիկոսի աշխատանքի, նաև բնակվելու շենքը), 3) «նախատիպի ցույց տված գրական ժանրի ստեղծագործություն, լեզվական միավոր պարունակող գիրք՝ մատյան»՝ **այբբենարան, երգարան, տաղարան, բժշկարան, հիշատակարան, բառարան, տերմինարան** և այլն:

-Արար – գոյականական, ածականական և բայական հիմքերից կազմում է հիմնականում գոյականներ և ածականներ: Ունի բառակազմական մի քանի նշանակություններ՝ **ա) գոյականական** հիմքերից՝ գոյականներ՝ «իբրև մասնագիտություն՝ զբաղմունք նախատիպի ցույց տված առարկայով զբաղվող անձ»՝ **գյուտարար, ներկարար, կազմարար, շինարար, հավաքարար, ծախսարար** և այլն: Գոյականական հիմքերով կազմվում են նաև մի քանի ածականներ՝ **սննդարար, տնարար, գործարար, կենարար, բ) քսյական** հիմքերով՝ ածականներ՝ «նախատիպ բայի ցույց տված հատկանիշը ունեցող նրանով մշտապես զբաղվող»՝ **փրկարար, հաշտարար, կործանարար, խռովարար, գ) ածականական** հիմքերով կազմությունները քիչ են, նշանակում են «նախատիպի ցույց տված հատկանիշը կամ այդ հատկանիշը կրող, ունեցող առարկա՝ իրավիճակ և այլն ստեղծող»՝

կեղծարար, նորարար, խոտանարար, ուժեղարար և այլն: **Կիսարար** բառում կա այս անհոգակապավոր տարբերակը:

-Արդ – պահպանվել է մի քանի բաղադրություններում՝ «նախատիպի ձևն ունեցող, նախատիպի նման՝ կերպ» բառակազմական նշանակություններով՝ **գմբեթարդ, կորնթարդ, խորանարդ, սեղանարդ, ձվարդ, քամբարդ**:

-Արեն, -երեն – կենսունակ է միայն երկրորդը: Գոյականական հիմքերից կազմում է գոյականներ, որոնք հավասարապես ունեն մասնականական և մակբայական կիրառություններ՝ «1. նախատիպի մատնանշած ժողովրդի, երկրի, հանրության լեզուն, 2. այդ լեզվով»: Օր., **հայերեն, գերմաներեն, հունգարերեն, իսլանդերեն, բասկերեն, ռուսերեն, ճնճղկերեն** և այլն: **-Արեն** տարբերակով այժմ գործածական են միայն **հունարեն** և **չինարեն** բաղադրությունները:

-Ացի¹, -եցի, -ցի – գոյականական հիմքերից կազմում են գոյականներ՝ «նախատիպի ցույց տված երկրի, վայրի, տեղի բնակիչ» բառակազմական նշանակությամբ՝ **երևանցի, եվրոպացի, ֆրանսիացի, եգիպտացի, լոռեցի, գյումրեցի, թիֆլիսեցի, բեյրութցի, քաղաքացի, տեղացի** և այլն: Մի շարք կազմություններում ցույց է տալիս որևէ ուսմունքի կամ դավանության հետևորդ՝ **թոնդրակեցի, մանիքեացի, փարիսեցի** և մի քանի այլ բառեր:

-Ացի² – գոյականական և ածականական հիմքերից կազմում են ածականներ և մակբայներ՝ «նախատիպի ցույց տված ձևով՝ կերպով» բառակազմական նշանակությամբ՝ **նշանացի, տողացի, տառացի, փաստացի, արդարացի, խելացի, կանացի, առնացի, բերանացի** և այլն:

-(Ա)ցու – դրվում է գոյականական հիմքերի վրա՝ կազմելով գոյականներ և ածականներ՝ «նախատիպի համար սահմանված լինելը, նախատիպը դառնալու ենթակա» բառակազմական նշանակությամբ՝ **մասցու, սերմացու, աստառացու, շորացու, հարսնացու, փեսացու, մահկանացու**:

-Ե – գոյականական հիմքերից կազմում է ածականներ՝ «նախատիպի ցույց տված նյութից պատրաստված» բառակազմական նշանակությամբ:

նակությամբ՝ **ադամանդե, բամբակե, բրդե, բրոնզե, գարե, լազուրե, եղջյուրե, քիթեղե, քղթե, հրե, ձյունե, սառցե, փայտե** և այլն:

-**Եղ** – գոյականական հիմքերից կազմում է ածականներ՝ «նախատիպից շատ կամ ուղղակի ունենալու, նախատիպով հարուստ՝ առատ» բառակազմական նշանակությամբ՝ **հյութեղ, մարմնեղ, հնչեղ, ձայնեղ, շքեղ, քիկնեղ, կոնքեղ, հոնեղ, ուժեղ, գունեղ, համեղ** և այլն: Այսօր լեզվում գործածական է բայական հիմքով կազմված երկու բառ՝ **հնչեղ, տաշեղ**:

-**Եղեն** – գոյականական հիմքերից կազմում է ածականներ և գոյականներ: Բառակազմական նշանակություններն են՝ **ա) ածակասնական** կիրառությամբ՝ «նախատիպի ցույց տված նյութից պատրաստված»՝ **հողեղեն, հրեղեն, նյութեղեն, լուսեղեն, բոցեղեն, բրդեղեն, ժայռեղեն** և այլն: **բ) Գոյակասնական** կիրառությամբ կազմում է հավաքական գոյականներ՝ «նախատիպի ցույց տված առարկայից կամ դրա նյութից պատրաստված առարկաների տեսակային ամբողջություն»՝ **խմորեղեն, երշիկեղեն, բանջարեղեն, կաթնեղեն, գարդեղեն, համեմատաբար նոր կազմություններ են՝ գուլպեղեն, հացաբուլկեղեն**: **գ) Մի քանի բառեր կազմված են ածականական հիմքերից՝ «նախատիպի ցույց տված առարկաների ընդհանուր բնորոշ հատկանիշը ունեցող» նշանակությամբ՝ սպիտակեղեն, ճերմակեղեն, քաղցրեղեն, անուշեղեն**:

-**Ենի** – գոյականական հիմքերից կազմում է գոյականներ՝ բառակազմական հետևյալ նշանակություններով՝ **ա) «նախատիպի ցույց տված պտուղը՝ ծաղիկը տվող բույս՝ ծառ՝ թուփ և այլն»՝ ծիրանենի, խնձորենի, մասրենի, նռնենի, թթենի, ընկուզենի, մեխակենի, վարդենի** և այլն: **բ) «Նախատիպը նշող կենդանու միսը կամ կաշին՝ մորթին»՝ ոչխարենի, այծենի, գառնենի, եղջերենի, կղբենի, աղվեսենի, գայլենի** և այլն: **գ) Հնուց ավանդվել են գոյականական և ածականական հիմքերից այս ածանցով կազմված մի քանի ածականներ՝ «նախատիպ գոյականին առնչվող՝ հատուկ, նախատիպի հատկանիշը ունեցող» բառակազմական նշանակությամբ՝ հայրենի, մայրենի, արծվենի, քաղթենի, լրբենի, հնամենի**: Արդի լեզվում այս ածանցով ածականներ չեն կազմվում:

-Ենք, -անք, -ոնք – գործուն է առաջինը: Անձնանուններից և անձ
ցույց տվող գոյականներից կազմում են հավաքական հոգնակիի
անեզական ձևեր՝ **Տիգրանենք, Ղևոնդենք, Գրիգորենք, Արևիկենք,
Կիրակոսյանենք, Վարդանանք, Վարդանենք, հաշվապահենք, պա-
հեստապետենք, խնամոնք, քեռոնք, քեռանք** և այլն: **-Ոնք** տարբե-
րակը դրվում է նաև մի քանի դերանվանական հիմքերի վրա՝ **մերոնք,
ձերոնք, իմոնք, քոնոնք**:

-Եստ, -իստ, -ուստ¹ – արդի լեզվում կան այս ածանցներով բա-
յական հիմքերից կազմված մի քանի գոյականներ՝ **գովեստ, պա-
հեստ, զգեստ, ուտեստ, հանգիստ, հագուստ, ապուստ, թաքուստ, զա-
լուստ, ելուստ, պահուստ, կապուստ**: Հայերենում կա նաև համանուն
-ուստ² ածանցը, որով կազմված են **արտաքուստ, ներքուստ, վերուստ**
մակբայները:

-Երորդ, -րորդ – քանակական թվականների հիմքերից կազմում
է դասական թվականներ: **-Բորդ** ածանցը դրվում է **երկ-, եր-, չոր-**
հիմքերի վրա, մյուս բոլոր թվականների վրա դրվում է **-երորդ** ա-
ծանցը՝ **երկրորդ, չորրորդ, հինգերորդ, տասներորդ, քսանիններորդ,
միլիոներորդ** և այլն:

-Եք – բայական հիմքերից կազմում է գոյականներ՝ «ծեսի, արա-
րողության, հանդեսի գործողություն» բառակազմական նշանակու-
թյամբ՝ **Չրօրհնեք, դոնբացեք, երեսբացեք, գերեզմանօրհնեք, տնօրհ-
նեք, խաչօրհնեք, մեռոնօրհնեք, հիմնարկեք** և այլն: Այսպիսի բառա-
կազմական արժեք չունեն **արժեք, կողպեք** բաղադրությունները:

-Ի – գոյականական, բայական և ածականական հիմքերից
կազմում է գոյականներ՝ մի քանի բառակազմական նշանակություն-
ներով՝ **ա) գոյականական** հիմքերով՝ բուսանուններ՝ **կաղնի, թխկի,
սոսի, բարդի, կաղամախի, հաճարի, մայրի, նոճի** և այլն: **բ) ածակա-
նական** և **գոյականական** հիմքերով՝ ածականներ և մակբայներ՝
«նախատիպը պարունակող, նախատիպով օժտված, նախատիպից
կազմված, նախատիպը անելու՝ ստեղծելու համար նախատեսված»՝
**աղի, ջրի, անալի, արժանի, հարգի, մոլի, հավաստի, վայրի, բռնի,
արդի, կատաղի, փութանակի, այլազգի, երկսայրի** և այլն: **գ)** Հիմնա-
կանում *բայական* կամ *բայ պարունակող* հիմքերից՝ գոյականներ՝

«պարերի, մեղեդիների, խաղերի անվանում» իմաստով՝ **բաղադրի, շիրակի, գողթանի, լենինականի, պահմտոցի, ձյունագնդի, թոնոցի: դ)** Գործիքների անվանումներ՝ **փլավքամի, ճանճաքշի, գաթանախշի, լավաշթխի, խնոցի: ե)** *Անորոշ դերբայի* վրա դրվելով՝ կազմում է ածականներ՝ «նախատիպ բայի արտահայտած գործողությունը կատարելու կարող» իմաստով՝ **կասկածելի** (այն, որ կասկածվում է), **վերծանելի** (այն, որ կարող է վերծանվել, հնարավոր է վերծանել), **ցանկալի** (այն, որ ցանկանում են և ոչ թե ցանկությամբ լի), **հասկանալի, հիանալի, զոջալի, զգվելի, բուժելի, ներելի** և այլն: Այս կազմությամբ մի քանի բառեր այժմ դարձել են գոյականներ՝ **բանալի, հայելի, ածելի, գումարելի, ստորոգելի** և այլն: **զ)** *Գոյականակալ* հիմքերով կազմված՝ գործածական են մի քանի ածականներ՝ «նախատիպի ցույց տված նյութից պատրաստված, նախատիպի ցույց տված նյութը (շատ) պարունակող» իմաստով՝ **երկաթի, փայտի, աղի, վայրի, ջրի: է)** Կան *ածականակալ* հիմքով կազմված մի քանի գործածական ածականներ՝ **ծարավի, սուտի, տմարդի, կծծի, ներքինի** (նաև՝ գոյ.), նաև **այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի:**

-իկ – ա) *գոյականակալ* հիմքերից կազմում է գոյականներ՝ նվազական, փաղաքշական նշանակությամբ՝ **մայրիկ, պապիկ, մանկիկ, զինվորիկ, աչիկ, թաթիկ, ձկնիկ, կաքավիկ, խորանարդիկ, հարցաթերթիկ, նավախցիկ** և այլն: Այս կարգի հասարակ որոշ անուններ վերածվել են հատուկների՝ **Արևիկ, Աստղիկ, Գառնիկ, Քնարիկ:** Փաղաքշական իմաստով բաղադրություններ է կազմում նաև հատուկ անունների կրճատված մասերին դրվելով՝ **Բենիկ** (Բենիամին), **Անիկ** (Աննա, Անահիտ), **Օնիկ, Հովիկ, Վանիկ** (Հովհաննես), **Խաչիկ** (Խաչատուր), **Թաթիկ** (Թադևոս), **Եղսիկ** (Եղիսաբեթ), **Դեզիկ** (Դեզդեմոնա) և այլն: **բ)** Մի քանի կազմություններում նախատիպին տալիս է արհամարհական-նվաստական նշանակություն՝ **ինժեներիկ, ինտելիգենտիկ, դիրեկտորիկ, նախագահիկ, ընծայիկ** և այլն: Այսպիսի իմաստը սովորաբար պայմանավորված է խոսքային իրադրությամբ: **գ)** **Աշխարհիկ, տոհմիկ** բառերում, ինչպես և սրանցով բաղադրված ձևերում (**բնաշխարհիկ, տարաշխարհիկ, քաջատոհմիկ, մեծատոհմիկ**) գոյականական հիմքով կազմում է ածականներ: **դ)** *Բայական*

հիմքերից կազմում է գոյականներ՝ «գործիքի անվանում» իմաստով՝ **տաշտաքերիկ, քշփորիկ, ականջփորիկ, թեյաքամիկ** և այլն: **ե) Բայական** հիմքերով կազմում է ածականներ՝ գործողի անվան նախնական իմաստով: Մրանք հավասարապես, իսկ մի քանիսն էլ գրեթե բացառապես ընկալվում են նաև իբրև գոյականներ՝ **շրջիկ, ուռուցիկ, մածիկ, մարտիկ, պայթուցիկ** և այլն: **զ) Վերջին բայական բաղադրիչ ունեցող** բաղադրյալ հիմքերից կազմում է ածականներ՝ **վաղամեռիկ, սրտաճմլիկ, դարակազմիկ, բարեկեցիկ, զբոսաշրջիկ, նորակոչիկ** և այլն: **է) Ածականական** հիմքերից կազմում է ածականներ՝ նվագական-փաղաքչական, երբեմն էլ սաստկական իմաստներով՝ **մանրիկ, ցածրիկ, փոքրիկ, լավիկ, կոկիկ, հեզիկ, քաղցրիկ, լռիկ** և այլն: Ժողովրդախոսակցական ծագում ունեցող ձևերում այսպիսի կառույցներում **-իկ** ածանցից առաջ կարող է ավելանալ **-լ** ածականը՝ **հաստլիկ, սուտլիկ, կարճլիկ, չաղլիկ, նեղլիկ** և այլն:

-ին – ածականական հիմքերից կազմում է ածականներ՝ նախատիպին տալով սաստկական իմաստ՝ **հետին, ստորին, նրբին, անհնարին, բավականին, լռին**, նաև **առաջին, վերջին, ինքնին** և այլն:

-ինք – գոյականական և բայական հիմքերից կազմում է մի քանի գոյական՝ **քրտինք, նախատինք, բաժինք, դաշինք**:

-իչ – բայական հիմքերից կազմում է ածականներ և գոյականներ: ա) Ածականներն ունեն «նախատիպի արտահայտած գործողությունը կատարող» բառակազմական նշանակությունը՝ **խորտակիչ, ավերիչ, կիզիչ, թովիչ, տպավորիչ, մխիթարիչ, համոզիչ, վարակիչ** և այլն: բ) Գոյականներն ունեն «նախատիպի ցույց տված գործողությունը կատարող անձ կամ առարկա՝ գործիք» նշանակությունը՝ **թարգմանիչ, երգիչ, քարոզիչ, սափրիչ, տպագրիչ, սրբիչ, շարժիչ, մեկուսիչ** և այլն:

-իք – բայական հիմքերից կազմում է ածականներ և գոյականներ՝ «1. նախատիպ բայով արտահայտված գործողության ենթակա առարկան, 2. նախատիպի գործողության տեղը, 3. նախատիպի գործողությունը կատարելու գործիք» բառակազմական նշանակություններով՝ **ուտելիք, վառելիք, օժանելիք, խաղալիք, ճեմելիք, շոշափելիք, լսելիք**: Ածականական և գոյականական հիմքերով այժմ այս ածան-

ցով նոր բառեր չեն կազմվում: Հնից ավանդված կա մի քանի բառ՝ **գործիք, կարիք, տանիք, չարիք, կեղծիք:**

-Կան – բայական հիմքերից կազմում է ածականներ՝ «նախատիպի ցույց տված գործողության կատարման հակում ունեցող, այդ գործողությունը մշտապես կամ շատ կատարող» բառակազմական նշանակությամբ՝ **խռովկան, չխոսկան, լալկան, խաբկան, մրսկան, լծկան** և այլն: Այս ածանցով կազմությունների մի մասը խոսքիմասային փոխանցմամբ այժմ առավելաբար ընկալվում են իբրև գոյականներ՝ **մուրացկան, գուժկան, որսկան, լծկան:**

-Կոտ – բայական հիմքերից կազմում է ածականներ՝ «նախատիպի գործողության կատարման հակում ունեցող՝ տրամադրված» բառակազմական իմաստով՝ **վախկոտ, ամաչկոտ, պարծենկոտ, պահանջկոտ, ցասկոտ, երազկոտ, քնկոտ** և այլն:

-Մունք – առաջացել է գրաբարյան **-ունն** ածանցով կազմված բաղադրությունների հոգնակի ուղղականի ձևից: Բայական հիմքերից կազմում է գոյականներ՝ «նախատիպի ցույց տված գործողության՝ երևույթի կամ որպես հետևանք ստացված վիճակի անունը» բառակազմական նշանակությամբ՝ **ուսմունք, պաշտամունք, բաժանմունք, համոզմունք, ցուցմունք, բուրմունք, զբաղմունք, հիացմունք, հարցմունք** և այլն:

-Յա – գոյականական և ածականական հիմքերից կազմում է ածականներ՝ հետևյալ բառակազմական նշանակություններով՝ ա) «նախատիպի նշած նյութից պատրաստված, իր կազմում տվյալ նյութը ունեցող»՝ **արծաթյա, ոսկյա, փայտյա, ապակյա, եղեգնյա** և այլն: բ) «Որևէ ուսմունքի հետևորդ, մի բան անող»՝ **քրիստոնյա, գործունյա, պաշտոնյա:** գ) Հատկապես մարմնի մասեր անվանող կամ մարմնի մասերի անվանումներ պարունակող հիմքերից՝ «նախատիպը ունեցող» իմաստով՝ **հրաչյա, բյուրակնյա, երկուտնյա:** դ) Ժամանակ ցույց տվող կամ այդպիսի բառ պարունակող բառակապակցական հիմքերից՝ «նախատիպի ցույց տված ժամանակին հատուկ» նշանակությամբ՝ **եռամսյա, կիսամյա, քառամյա, առօրյա, բազմամյա** և այլն: ե) «Նախատիպի ցույց տված տեղին հատուկ,

այն ընդգրկող» նշանակությամբ՝ **ծովափնյա, գետեզրյա, այլերկրյա, ստորջրյա** և այլն:

-**Յալ** – ծագել է գրաբարի անցյալ դերբայի *-եսլ* վերջավորությունից: Բայական հիմքերից կազմում է ածականներ և գոյականներ: ա) Ածականներն ունեն «նախատիպի գործողության հետևանքով ստեղծված վիճակում եղող» բառակազմական նշանակությունը՝ **կարծեցյալ, սառուցյալ, տառապյալ, որակյալ, ծպտյալ, հիշյալ, անհիծյալ** և այլն: բ) Գոյականները խոսքիմասային փոխանցմամբ առաջացել են ածականներից՝ **աքսորյալ, ամբաստանյալ, մեղադրյալ, ննջեցյալ, հավատացյալ, հեծյալ, անցյալ** և այլն: Մակբայների և կապական բառերի են վերածվել հետևյալները՝ **դիտավորյալ, դարձյալ** (մկբ.), **ներառյալ, վերաբերյալ** (կպկ. բառ):

-**Յակ** – գոյականական, թվականական, մասամբ նաև ածականական և բայական հիմքերից կազմում է գոյականներ: Ունի մի քանի բառակազմական նշանակություն՝ ա) նախատիպ գոյականին տալիս է նվազական-փաղաքշական իմաստ՝ **ամուսնյակ, լուսնյակ, հարսնյակ, լողուղյակ, վագրուղյակ, խցյակ** և այլն: բ) Թվականներից և թիվ պարունակող բառակապակցական հիմքերից կազմում է գոյականներ՝ «նախատիպի ցույց ված թվով միատեսակ առարկաների խումբ» նշանակությամբ՝ **հնգյակ, եռյակ, տասնյակ, քառյակ, հինգհարյուրյակ, հնգամյակ, քսանամյակ, եռամսյակ** և այլն:

-**Յան** – գոյականական հիմքերով կազմում է ածականներ, նաև գոյականներ: ա) *Ածականական* կիրառությամբ ունի «նախատիպի անվանած գոյականին վերաբերող հատուկ» բառակազմական նշանակությունը՝ **նախնադարյան, դաշտամիջյան, կովկասյան, աֆրիկյան, ձախակողմյան, առավոտյան, սեպտեմբերյան, անդրջրհեղեղյան, եզոպոսյան, հոմերոսյան** և այլն: բ) *Գոյականական* կիրառությամբ կազմում է՝ 1) սովորաբար արական անձնանուններից (իհարկե, նաև այլ հիմքերից)՝ հայկական ազգանունները՝ **Սուրբասյան, Հարությունյան, Մարտիրոսյան, Գրիգորյան**, բայց նաև՝ **Շուշանյան, Մանուշակյան, Հասմիկյան** և այլն: 2) «Որևէ անձի կամ նրա կողմից ստեղծված ուսմունքի՝ գաղափարախոսության՝ ուղղության հետևորդ, որևէ անձի առնչվող»՝ **հեզելյան, կանտյան, բալզակյան, եզոպոսյան,**

հոմերոսյան, բարոսյան, դարվինյան, թորգոմյան, նաև՝ թոնդրակյան, մշակյան «Մշակ» թերթի աշխատակից՝ կողմնակից՝ հետևորդ»:

-Յուն – բնաձայնական բայական հիմքերից կազմում է գոյականներ՝ «նախատիպի ցույց տված գործողության անունը» բառակազմական նշանակությամբ՝ **հնչյուն, գոչյուն, շաչյուն, վրնջյուն, ճողփյուն, հառաչյուն, քրթմնջյուն** և այլն: Ոչ բնաձայնական հիմքերով նոր բառեր չեն կազմվում. ունենք հնից ավանդված **բախյուն, ոստյուն** բաղադրությունները:

-Ո – պահպանվել է մի քանի հին կազմություններում՝ **արգո, հարգո, հաճո, պիտո**: Այժմ գործածական է միայն որպես **-(ա)բարո** (**-(ա)բար + ո**), **-ածո** (**-ած + ո**), **-վածո** (**-ված + ո**) բաղադրյալ ածանցների մաս: Գոյականական և ածականական հիմքերից կազմում է ածականներ: **-(Ա)բարո** ածանցն ունի «նախատիպի վարվելակերպը կամ հատկանիշը ունեցող» բառակազմական նշանակությունը՝ **գազանաբարո, նենգաբարո, հեզաբարո, ավազակաբարո, կնաբարո, ազնվաբարո, թեթևաբարո, զվարճաբարո, ծանրաբարո, լրջաբարո, քաղցրաբարո** և այլն: **-Ածո** // **-վածո** ածանցի բառակազմական նշանակությունն է «նախատիպ բայի ցույց տված գործողությանը ենթարկված լինելու հատկանիշը ունեցող»՝ **հանածո, պահածո, եփածո, հյուսածո, մանվածո, կոփածո, չափածո** և այլն: Մրանց մեծ մասը այժմ ընկալվում են իբրև գոյականներ՝ «նախատիպի գործողության արդյունքը» նշանակությամբ (տեղի է ունեցել խոսքիմասային փոխանցում): **-Ո** ածանցով են կազմվում անձնանունների կոչական ձևերը, որոնք երբեմն ունեն նաև նվազական-փոդոքչական նշանակություն՝ **Հայրապետ – Հայրո, Աստվածատուր – Աստ, Արշակ – Արշո, Մարգարիտ – Մարգո, Վարսենիկ – Վարսո** և այլն:

-Ող – ենթակայական դերբայի վերջավորությունն է, որ որոշ բաղադրություններում վերածվել է ածանցի: Բայական հիմքերից կազմում է բառեր, որոնք կիրառությամբ և՛ ածականներ են, և՛ գոյականներ: Բառակազմական նշանակությունն է «նախատիպի ցույց տված գործողության կատարողը»՝ **անհանդուրժող, աշխատող, ուրացող, վաճառող, ծառայող, հեռուստադիտող, հարբեցող, ընթերցող, գրող, քերթող, ծնող, ընտրող** և այլն:

-**Ոն** – բայական հիմքերից կազմում է սակավաթիվ գոյականներ՝ «նախատիպի ցույց տված գործողության հետևանքը կամ այդ գործողությունը կատարող առարկա» բառակազմական նշանակությամբ՝ **կտրոն, գողոն, լցոն, գործոն, ծամոն, ջարդոն, գլղոն** և այլն:

-**Ով** – գործիականի վերջավորությունն է, որը ժողովրդախոսակցական ծագում ունեցող որոշ բաղադրություններում վերածվել է ածանցի: Գոյականական հիմքերից կազմում է հիմնականում մակբայներ, որոնց մի մասն ունի նաև ածականական կիրառություն՝ **գոռով, ուժով, երեսով, շնորհքով, ժամանակով, սրտով, գինով, ինչպես և՛ փութով**:

-**Ովի** – բայական հիմքերից կազմում է ածականներ՝ «նախատիպի գործողությանը ենթարկված կամ ենթարկվող» բառակազմական նշանակությամբ՝ **ընտրովի, ծալովի, բացովի, բերովի, վճարովի** և այլն: Մի քանի կազմություններում նույնացել է **-ովին** ածանցին՝ **յուրովի, տնովի, ազգովի, կիսովի, ընկերովի**:

-**Ովին** – ածականական և գոյականական հիմքերից կազմում է մակբայներ՝ գործողության հատկանիշի բառակազմական ընդհանուր նշանակությամբ՝ **ամբողջովին, հիմնովին, բոլորովին, կամովին, խմբովին, գլխովին, լիովին, ազգովին** և այլն:

-**Ոտ** – գոյականական, ածականական և բայական հիմքերից կազմում է ածականներ՝ «1. նախատիպի ցույց տված նյութով պատված, 2. նախատիպի ցույց տված հատկանիշը ունեցող, 3. Նախատիպի ցույց տվածից շատ ունեցող, դրանով հարուստ՝ առատ» բառակազմական նշանակություններով՝ **աղտոտ, մրոտ, արյունոտ, քինոտ, մաղձոտ, կրքոտ, խանդոտ, յուղոտ**:

-**Ոտի** – պահպանվել է մի քանի բառերում՝ «նախատիպի հատկանիշը ունեցող՝ պարունակող» բառակազմական նշանակությամբ՝ **հնոտի, սնոտի, ցնցոտի, օտարոտի**:

-**Որդ** – գոյականական, ածականական և բայական հիմքերից կազմում է գոյականներ՝ «նախատիպի ցույց տված առարկայով մասնագիտորեն զբաղվող անձ, ուրևէ քանի մասնագետ» բառակազմական նշանակությամբ՝ **աստղանավորդ, սավառնորդ, դահուկորդ, հեծանվորդ, բնորդ, ճանապարհորդ, գնորդ, գնդացրորդ, վարորդ,**

առաջնորդ, միջնորդ և այլն: Ածականական հիմքերից՝ կազմված՝ ունենք մի քանի ածականներ՝ **ավելորդ, նախորդ, ձախորդ, ուղղորդ**: Այս ածանցը, **կիս** (<**կես**), **քառ**- և **տասն**- հիմքերին կցվելով, ցույց է տալիս նրանց մասը՝ **կիսորդ, քառորդ, տասնորդ, տասանորդ**:

-Ոց² – *Բայական հիմքերով* կազմում է՝ ա) Բնաձայնական բայական հիմքերից՝ գոյականներ՝ «ձայնի անվանում» նշանակությամբ՝ **գոռգոռոց, վժժոց, ծվծվոց, շրխկոց, ծղրտոց** և այլն: ք) Ոչ բնաձայնական բայական հիմքերով գոյականներ՝ «նախատիպի արտահայտած գործողությունն իբրև անուն» նշանակությամբ՝ **խայթոց, կաթոց, մրափոց, վայրահաչոց, սրտխառնոց** և այլն: գ) Գործիքների անվանումներ՝ **էտոց, խարտոց, սղոց, թրջոց, խրոց, ցամբոց, ծածկոց** և այլն: դ) Կազմվում նաև «նախատիպի գործողության կատարման տեղը» բառակազմական նշանակությամբ գոյականներ՝ **գրապահոց, հալոց, մթերոց, ապաստանոց, ամրոց**: ե) Ժողովրդախոսակցական լեզվում բայական վերջին բաղադրիչ ունեցող բաղադրյալ հիմքերից կազմում է գոյականներ՝ «նախատիպի գործողության կատարման ժամանակը կամ տևողությունը» իմաստով՝ **հավխտոց, արևնտոց, ճրագվառոց, աչքաճպոց, արլորականչոց**: *Գոյականական հիմքերով* կազմում է՝ ա) գոյականներ՝ «նախատիպի ցույց տված առարկան պահելու տեղ» բառակազմական նշանակությամբ՝ **աքարոց, դարմանոց, հնոց, զինամթերոց**:

-Ոցի – բայական հիմքերից կազմում է խաղերի անուններ՝ **քոնոցի, վզոցի, պահնտոցի** և այլն:

-Չյա – պահպանվել է **առհավատչյա, ավետչյա** «ավետաբերին տրվող պարգև» գոյականներում:

-Չեք – բայական հիմքերից կազմում է գոյականներ՝ «նախատիպում նշված գործողության համար տրվող վարձ» բառակազմական նշանակությամբ՝ **կարողչեք, բանողչեք, բերողչեք, կտրողչեք**: Այս ածանցը առավելապես գործածական է արևմտահայերենում:

-Ված – բայական հիմքերից կազմում է ածականներ և գոյականներ՝ «1. նախատիպի ցույց տված գործողությանը ենթարկված, 2. նախատիպի գործողության արդյունք՝ հետևանք՝ ձևը» բառակազմական նշանակություններով՝ **ճանաչված, թափթփված, լկստված**,

նան՝ **հատված, զանգված, արարված, դիպված, հողված, հավելված, հարված** և այլն:

-Վածք – բայական հիմքերից կազմում է գոյականներ՝ «գործողության արդյունք» բառակազմական նշանակությամբ՝ **այրվածք, կառուցվածք, ասացվածք, հյուսվածք, քաղվածք:**

-Ու – բայական հիմքերից կազմում է ածականներ, որոնց մի մասը գոյականացել է կամ ունի նաև գոյականական կիրառություն՝ «նախատիպի ցույց տված գործողությունը կատարողի՝ գործողի անվան» բառակազմական նշանակությամբ՝ **ագդու, քսու, հատու, կծու, ծախու, վարձու** և այլն: Գոյականացված կազմությունները մեծ մասամբ ունեն բաղադրյալ հիմքեր՝ **վրիժառու, թռչակառու, վերակացու, խուզարկու, կատակերգու, տաղերգու**, բայց նաև՝ **խաշու, քաղցու, չորսու:**

-Ություն – մեծ մասամբ վերացական գոյականներ է կազմում ածականական, գոյականական և բայական հիմքերից: Ունի բառակազմական հետևյալ նշանակությունները՝ **ա) ածականական** հիմքերով՝ «նախատիպի ցույց տված հատկանիշի անունը»՝ **մեծություն, լավություն, գեղեցկություն, հարմարավետություն, դեղնություն, ազատություն, բթություն, այրելիություն, զիջողամտություն:** **բ) Բայական** հիմքերով՝ «գործողության արդյունք»՝ **ցնծություն, զովերգություն, բանակցություն, գժություն, բառակազմություն:** **գ) Գոյականական** հիմքերով կազմությունները արտահայտում են ամենատարբեր իմաստներ՝ 1. գիտության ճյուղ, զբաղմունք, մասնագիտություն՝ **լեզվաբանություն, փորձագիտություն, ապակեգործություն, հովվություն,** 2. որևէ պաշտոն վարելը՝ **դեկանություն, կաթողիկոսություն, տեղակալություն,** 3. կոչում, աստիճան՝ **դոկտորություն, ավագություն,** 4. մարդկային հասակ՝ **մանկություն, երիտասարդություն, ծերություն,** 5. հավաքականություն՝ **ուսանողություն, հայություն, դարձվածաբանություն,** 6. տարածք կամ վարչական բաժանում՝ **թագավորություն, մարզպանություն, աբբայություն,** 7. հիմնարկություն՝ **դեսպանություն, ավտոտեսչություն,** 8. միություն, խումբ՝ **ընկերություն, բարեկամություն,** 9. գաղափարական կամ կրոնական ուղղություն՝ **մառականություն, տոլստոյականություն, քրիստոնեություն, միա-**

բնակություն, 10. գործունեության արդյունք՝ ատենախոսություն, ասեղնագործություն, 11. որևէ լեզվի կամ ոճի հատուկ բառ՝ գրաբարաբանություն, լատինաբանություն, հասարակաբանություն և այլն, և այլն:

-Ուկ – բայական, գոյականական և ածականական հիմքերից կազմում է գոյականներ և ածականներ: **ա) գոյականակն** հիմքերով գոյականները ունեն 1) նվազական, փաղաքշական իմաստ՝ **հորթուկ, գեղջուկ, թզուկ, իշուկ, ձագուկ, որթուկ** և այլն: 2) Գիտական տերմիններ են՝ **պղպեղուկ, անմոռուկ, հազարոտնուկ, կարմրուկ, խոզուկ** և այլն: **բ) Ածականակն** հիմքերով կազմություններում ունի ոչ միայն փաղաքշական, այլև հաճախ սաստկական իմաստ՝ **տաքուկ, գիրուկ, երկարուկ, խղճուկ** և այլն: **գ) Բայական** հիմքերից կազմում է ածականներ՝ «նախատիպի ցույց տված գործողությունն իբրև հատկանիշ ունեցող, մի բան անող» բառակազմական նշանակությամբ՝ **կամացուկ, թևանցուկ, հեղինեղուկ, դիպուկ, խուսափուկ, թափթփուկ** և այլն: Խոսքիմասային փոխանցմամբ այս կազմության ածականների մասն այժմ առավելաբար ընկալվում է իբրև գոյական՝ **վերապրուկ, աճուկ, ջերմուկ, խաչմերուկ, մածուկ, կոշտուկ** և այլն:

-Ուհի – գոյականական և ածականական հիմքերից կազմում է գոյականներ՝ «իզական բնական սեռին պատկանող անձ՝ կին՝ աղջիկ» նշանակությամբ: Դրվում է՝ **ա)** հասարակ գոյականների վրա՝ **ուսանողուհի, բժշկուհի, քարտուղարուհի, դիցուհի, երգչուհի, թագուհի** և այլն: **բ)** Ազգություն ցույց տվող բառերի (էթնոնիմ) և տեղանունների վրա՝ «որևէ ազգի ներկայացուցչի կամ որևէ վայրի՝ բնակչուհի» նշանակությամբ՝ **հայուհի, լեռուհի, գերմանուհի, եվրոպուհի, փարգուհի, դարաբաղուհի** և այլն: **գ)** Հատուկ անուններից, ինչպես և մի շարք հասարակ անուններից կազմում է իզական անձնանուններ՝ **Տիգրանուհի, Պերճուհի, Վանուհի, Տիրուհի, Վարդուհի** և այլն: **դ)** Ածականական հիմքերից կազմում է «նախատիպի հատկանիշով օժտված կին՝ աղջիկ» բառակազմական իմաստով գոյականներ, որոնց մի մասը գործածվում են նաև որպես անձնանուններ՝ **ազնվուհի, գեղուհի, համեստուհի, օտարուհի, երանուհի, ազատուհի, սրբուհի** և այլն:

-**Ում** – բայական հիմքերից կազմում է բայանուն գոյականներ՝ «գործողության անուն» բառակազմական նշանակությամբ՝ **հուզում, ծագում, ձգտում, զգացում, լվացում, հեռացում, յուրացում, հողվում, խոնարհում, լարում** և այլն:

-**Ույթ** – բայական, ածականական և գոյականական հիմքերից կազմում է գոյականներ՝ «1. նախատիպի ցույց տված գործողության անուն՝ արդյունք, 2. նախատիպի ցույց տված միավորը, 3. «նախատիպի ցույց տված հատկանիշը իբրև երևույթ» բառակազմական նշանակություններով՝ **լուծույթ, հասույթ, դրույթ, հացկերույթ, հնչույթ, թերույթ, բաղաձայնույթ, կորույթ, նորույթ** և այլն:

-**Ույց** – բայական հիմքերից կազմում է գոյականներ և ածականներ: Գործուն է տերմինակազմության մեջ: Օր.՝ **կառույց, հանգույց, պարուսույց, մատույց, նորակառույց, անհատույց**:

-**Ույք** – կազմում է սակավաթիվ գոյականներ՝ հիմնականում գործիքի, առարկայի անուններ՝ **կահույք, գահույք, պիտույք, նաև՝ հաճույք, խնջույք, դրույք**:

-**Ուն** – բայական հիմքերից կազմում է ածականներ՝ «նախատիպի ցույց տված գործողությունը որպես հատկանիշ ունեցող՝ կրող, որևէ վիճակում գտնվող» բառակազմական նշանակությամբ՝ **գործուն, շարժուն, երերուն, ծաղկուն, դիմացկուն, հնչուն, մնայուն, փայլուն** և այլն: Որոշ կազմություններ գոյականացել են՝ **գիտուն, վայնասուն, ծպտուն, մայուն** և այլն:

-**Ունդ** – կազմում է միայն մի քանի բաղադրություն՝ «նախատիպով նշված գործողության արդյունքը» բառակազմական նշանակությամբ՝ **ծնունդ, սնունդ, սերունդ, ելունդ, նաև՝ բարեծնունդ, վաղածնունդ, վերածնունդ**:

-**Ունի** – բայական հիմքերից կազմում է ածականներ, իսկ գոյականական հիմքերից՝ գոյականներ: **ա)** Ածականներն ունեն «նախատիպի գործողությանը ենթարկված» բառակազմական նշանակությունը՝ **գողունի, ծերունի, արքունի, տխրունի, արեգունի** և այլն: **բ)** Գոյականական հիմքերից կազմում էր հայկական նախարարական տոհմերի և արքայական հարստությունների ազգանունները, այժմ էլ գործածական են այս ածանցով որոշ ազգանուններ՝ **Երվանդունի,**

Արշակունի, Բագրատունի, Ամատունի, Արծրունի, Պահլավունի, Ռշտունի և այլն:

-**Ունք** – բայական և գոյականական հիմքերից կազմում է գոյականներ՝ «նախատիպով նշված գործողության անունը՝ արդյունքը» բառակազմական նշանակությամբ՝ **արքունք, համեմունք, պաշտամունք, արարմունք, վարմունք, հիմունք, սկզբունք, ակունք, մկանունք, ծաղկունք** և այլն: Ունենք ածականական հիմքերով բաղադրված **բարձունք, մանրունք** («մանր-մունք իրեր», այժմ առավել գործածական է **մանրուք** կազմությունը) գոյականները:

-**Ուչ** – հանդես է գալիս մի քանի բաղադրություններում՝ «նախատիպի գործողության անվանումը՝ արդյունքը՝ կատարողը» և «նախատիպի գործողությունը իբրև հատկանիշ» բառակազմական նշանակություններով՝ **տեսուչ, ավտոտեսուչ, վերատեսուչ, ընկալուչ, վալյուչ, սրտառուչ:**

-**Ուստ** – հանդես է գալիս սակավաթիվ բաղադրություններում՝ **արտաբուստ, ներքուստ, վերուստ, կորուստ, ելուստ, թաքուստ, փախուստ, գալուստ:**

-**Ուտ** – գոյականական, բայական և ածականական հիմքերից կազմում է գոյականներ և ածականներ: **ա) Գոյականական** հիմքերով գոյականները ցույց են տալիս տեղ, որը հարուստ է նախատիպի ցույց տված նյութով՝ **թփուտ, աղուտ, ավազուտ, քարքարուտ, կաղնուտ** և այլն: **բ) Ածականական** հիմքերով գոյականներն ունեն «նախատիպի արտահայտած հատկանիշն ունեցող» բառակազմական նշանակությունը՝ **ծանծաղուտ, թավուտ, կանաչուտ, չորուտ:** **գ) Բայական** հիմքերով ածականների բառակազմական իմաստն է «նախատիպի նշած գործողությունը կատարող»՝ **լպրծուտ** «լպրծուն», **ծարավուտ** «անջրդի», **դ) Գոյականական** հիմքերով ածականները նշանակում են «նախատիպի ցույց տվածը առատորեն կամ ուղղակի ունեցող»՝ **մկանուտ, ոսկրուտ, մսուտ, ջլուտ:**

-**Ուրդ** – բայական հիմքերից կազմում է գոյականներ՝ «գործողի կամ գործողության անուն» բառակազմական նշանակությամբ, նաև հավաքական գոյականներ՝ **խորհուրդ, խառնուրդ, հագուրդ, պարապուրդ, լսուրդ, արձակուրդ, կցուրդ, ժողովուրդ** և այլն:

-Ուց – բայական և ածականական հիմքերից կազմում է մակբայներ, որոնց զգալի մասը գրական բառապաշար է թափանցել ժողովրդախոսակցական լեզվից՝ **վաղուց, մանկուց, հնուց, փոքրուց, էգուց** և այլն: Ունենք այս ածանցով մի քանի գոյականներ՝ **դեղնուց, նեղուց, ողնուց** և այլն:

-Ուք – բայական հիմքերից կազմում է գոյականներ՝ «գործողության արդյունք» բառակազմական նշանակությամբ՝ **քուռք, այրուք, մտմտուք, սրտմաշուք, գինարբուք, ծեծկոտուք:**

-Ք – բայական, գոյականական և ածականական հիմքերից կազմում է գոյականներ: **ա) Բայական** հիմքերով բաղադրություններն ունեն «գործողության անուն» բառակազմական ընդհանուր նշանակությունը, որի մասնավոր իրացումներից են «գործողության արդյունք, գործողության տեղ» իմաստները՝ **վագք, վաճառք, լվացք, հենք, տուրք, բերք, լիցք, մուտք, ծալք, պարտք** և այլն: **բ) Ածականական** հիմքերով գոյականներն բնորոշվում են նախատիպի ցույց տված հատկանիշով՝ **բարիք, եկայնք, արժանիք, ընտանիք, գաղտնիք, հումք, ծխելիք, ճաշակելիք** և այլն: **գ) Գոյականական** հիմքերով կազմությունների մի մասը ունի միայն **-ք** վերջածանցավոր տարբերակ՝ **կիրք, փառք, մեղք, օրենք, խելք** և այլն, մյուս մասում ածանցավոր և անածանց ձևերն ունեն ընդամենը ոճական տարբերություն (առաջինները խոսակցական են, երկրորդները՝ գրական-գրքային)՝ **աչ||աչք, ձեռ||ձեռք, ծալ||ծալք, խնդիր||խնդիրք** և այլն. այսպիսի գույգերում **-ք**-ն փաստորեն կորցրել է իր ածանցային արժեքը: Երրորդ խմբում անածանց և ածանցավոր ձևերը նույնը չեն բառային իմաստներով, տարբեր բառեր են՝ **տարի||տարիք, բաժին||բաժինք, կող||կողք, քաջ||քաջք** և այլն:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

Հապավում: **Հապավական բարդություններ:** Հապավումը բաղադրյալ բառերի կամ բաղադրյալ անվանումների կրճատված մասերի միացումով բաղադրություն կազմելու եղանակ է և այդ եղանակով կազմված բարդությունը¹⁴⁸, ինչպես՝ **ՀՀ** – Հայաստանի Հանրապետություն, **բուհ** – բարձրագույն ուսումնական հաստատություն, **ՌԱԿ** – Ռամկավար-ազատական կուսակցություն, **ՀՀԳ** – Հայ հեղափոխական դաշնակցություն (գործածական է նաև ավանդական ուղղագրությամբ ձևը՝ **ՀՅԳ**), **ՀՆԱ** – համախառն ներքին արդյունք, **ԵՊՀ** – Երևանի պետական համալսարան, **ՀՊՄՀ** – Հայաստանի պետական մանկավարժական համալսարան, **ՀՕՄ** – Հայ օգնության միություն, **բուժհիմնարկ** – բուժական հիմնարկ, **ՀՀ ԳԱԱ** – Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա, **գինկո** – գինվորական կոմիսար, **ժողկրթբաժվար** – ժողովրդական կրթության բաժնի վարիչ, **արտգործնախարար** – արտաքին գործերի նախարար և այլն:

Հապավումներն առաջացել են համառոտագրությունների հիման վրա և սկզբնապես ներկայացրել են դրանց մի տեսակը: Հետագայում հապավումը, հեռանալով և իր կապերը խզելով համառոտագրությունից, դարձավ բաղադրյալ բառերի կազմության եղանակներից մեկը: Համառոտագրություններն այժմ էլ շարունակում են իրենց գոյությունը, ինչպես՝ **պրոֆ.** (պրոֆեսոր), **պ.**, **պրն**, **պ-ն** (պարոն), **տ.**, **տիկ.** (տիկին), **թ.** (թվական, այժմ նաև՝ թիվ), **օր.** (օրիորդ), նաև՝ **օր.** (օրինակ), **քաղ.** (քաղաքացի), **հովհ.** (հովհաննես) և այլն: Համառո-

¹⁴⁸ Ձառուկյան Գ., Աղայան Էդ., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, I մաս, Ա պրակ, Երևան, 1980, էջ 455-472 [«Հապավական բաղադրություններ» հատվածի հեղինակը Էդ. Աղայանն է]: Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էրոյան Ս., Ժամանակակից հայոց լեզու, հատոր 1, Երևան, 1979, էջ 351-377 [«Հապավումներ» հատվածի հեղինակը Ս. Էրոյանն է]:

տագրությունները, ի տարբերություն հապավումների, նոր բառեր չեն կազմում:

Հապավումների՝ իբրև նոր բառերի ստեղծման եղանակի, աշխուժացումն ու տարածումը սկսվում է հատկապես XX դարի 10-ական թվականներից և շարունակվում է առայսօր: Նրանց աննախընթաց տարածումը պայմանավորված է ինչպես գործնական պահանջների (տեղի, ժամանակի խնայողություն), այնպես էլ կյանքում կատարված հասարակական-քաղաքական գործոններով, գիտատեխնիկական առաջընթացով: Ժամանակակից հայերենի հապավական բարդությունների կազմության գործում մեծ էր հիմնականում ռուսերենի, իսկ այսօր նկատելի է առավելաբար անգլերենի ազդեցությունը: Հայերենում հապավումներ կազմվում են այդ լեզուների համապատասխան կառույցների պատճենմամբ կամ համաբանությամբ:

Հապավական բաղադրության կազմում հապավված բաղադրիչը կոչվում է **հապավույթ**:

Հապավույթները լինում են *փառային*, *վանկային* և *բառամասային*: **Տառային հապավույթները** կրճատված բառերի սկզբնատառերն են, ինչպես՝ **ՔՈՂ – Ք** (արձրագույն) **ո** (րակավորման) **հ** (անձնաժողով): **Վանկային** կամ **բառամասային հապավույթները** հիմնականում կազմվում են բառերի առաջին մեկ կամ երկու վանկերից, ինչպես՝ **ուսմասվար – ուս**(ուսումնական) **մաս**(ի) **վար**(իչ), **մանկխորհ – մանկ**(ավարժական) **խորհ**(ուրդ), **գյուղնախարարություն – գյուղ**(ատնտեսության) նախարարություն:

Հապավական բաղադրությունների տեսակները

Հապավական բաղադրությունները լինում են չորս տեսակ՝ **տառային**, **վանկային** (կամ բառամասային), **վանկատառային** և **վանկաբառային**:

1) **Տառային հապավումները** կազմվում են միայն տառային հապավույթներով, ինչպես՝ **ՄԱԿ, հեկ, Ռ-ՕՈւ** (ռազմաօդային ուժեր), **ՀԱՕԿ** (Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտե), **ԳԱԹ** (Գրականության և արվեստի թանգարան) և այլն: Տառային հապավումներ

րի արտասանության ժամանակ ձայնավորները հենարան են ծառայում բաղաձայնների արտաբերման համար: Միայն բաղաձայն հապավույթներով կազմվածները արտասանվում են **ը** հենարանով՝ **ՀՀԳ՝** կարդացվում է [հրհըը], **ՓԶԿՀ** [փըզըկըհը] – փոխադրովի գեներիքահրթիռային կայանք, **ԳԳՀ** [գըղըհը], նաև՝ **ՄԻԵԳ** [միյեդ] – Մարդու իրավունքների եվրոպական դատարան, **ՍՊԱԾ** [սըպած] – Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն, **ԵԱՀԿ** [յեա-հըկը], – Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն և այլն:

2) **Վանկային** (կամ բառամասային) **հապավումները** կազմվում են միայն վանկային (կամ բառամասային) հապավույթներով, ինչպես՝ **քաղժողկրթբաժվար** (քաղաքային ժողովրդական կրթության բաժնի վարիչ), **կենտկոմ** (կենտրոնական կոմիտե), **ուսմասվար** (ուսումնական մասի վարիչ), **ֆիզֆակ** (ֆիզիկայի ֆակուլտետ), **պետհրատ** (պետական հրատարակչություն), **զինդեկ** (զինական զինվորական ղեկավար) և այլն:

3) **Վանկատառային հապավումները** կազմվում են վանկային և տառային հապավույթներով, ինչպես՝ **ՀՀ կենսովիճվարչություն** (Հայաստանի Հանրապետության կենտրոնական վիճակագրական վարչություն): Հապավման այս տեսակը հայերենում քիչ է տարածված:

4) **Վանկաբառային հապավումները** կազմվում են վանկային հապավույթով և բառով, ինչպես՝ **խնայողամարկդ** (խնայողական դրամարկդ), **շինհրապարակ** (շինարարական հրապարակ), **բանուժ** (բանվորական ուժ), **գիտաշխատող** (գիտական աշխատող), **քիմկոմբինատ** (քիմիական կոմբինատ), **բուժհիմնարկ** (բուժական հիմնարկ) և այլն:

Ժամանակակից հայերենը ռուսերենից և ռուսերենի միջոցով, իսկ վերջին տասնամյակներում առավելապես ուղղակի անգլերենից (հազվադեպ՝ ֆրանսերենից կամ եվրոպական այլ լեզուներից) կատարել և կատարում է հապավական բաղադրություններ փոխառություններ: Այսպիսի կազմությունները թեև հայերենով չեն բացվում, սակայն նույնպես քննվում են հապավումների հետ: Օր.՝ **զագս** (ռու. ЗАГС – запись актов гражданского состояния, այժմ գուգահեռաբար գործածվում է նաև սրա հայերեն տարբերակը՝

ՔԿԱԳ – քաղաքացիական կեցության ակտերի գրանցում, որը, թերևս անբարեհեռու շրջանում պատճառով, այնքան էլ տարածում չի գտնում), **նեպ** (*պարս.*, ռուս. **НЭП** – ховая экономическая политика), **լավսան** (ռուս. **лаван** – лаборатория высших органических соединений академии наук), **ՅՈՒՆԵՍԿՕ // ՅՈՒՆԵՍԿՈ** (անգլ. **UNESCO** – United Nations Educational, Scientific and Cultural Organization, Միավորված ազգերի կրթության, գիտության և կուլտուրայի կազմակերպություն), **ՆԱՏՕ** (անգլ. **NATO** – North Atlantic Treaty Organization, Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն), **լազեր** (անգլ. **laser** – light amplification stimulated emission of radiation, լույսի ուժեղացում ստիմուլավորված ճառագայթման միջոցով), **ՖԻԴԵ** (ֆրանս. **FIDE** – Federation internationale des échecs, Շախմատի միջազգային ֆեդերացիա), **ՈՒԵՖԱ** (ֆրանս. **UEFA** – Union Européenne de Football Associations, Ֆուտբոլի սաղիսացիաների եվրոպական միություն) և այլն:

Հապավական բաղադրությունների առանձնահատկությունները

ա) Որոշ հապավումների և հատկապես վանկային ու վանկաբառային հապավական բաղադրությունների մեջ առկա է բաղադրիչներից մեկի, երբեմն էլ մի քանիսի գեղչում, ինչպես օրինակ՝ **մեխմաթ** – մեխանիկամաթեմատիկական [ֆակուլտետ] («Ավարտել եմ մեխմաթը»), **Հրատպետկոմ** [*պարս.*, հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտե]:

բ) Բառակազմական որոշակի արժեք են ներկայացնում և հապավման առանձին տեսակ են համարվում, այսպես կոչված, **բառային հապավումները**: Մրա առանձնահատկությունն այն է, որ նրա հապավված բաղադրիչը իր բառային տեսքը չի կորցնում. կրճատվում են ամանցներն ու վերջավորությունները: Այսպիսի հապավական բաղադրությունը մոտենում է իսկական բարդությանը, ինչպես օրինակ՝ **գյուղնախարարություն, ծնողկոմիտե, անտառարդյունաբերություն, կենցաղսպասարկում, կազմխորհուրդ, մեթոդկարքինտ**:

գ) Հապավական բաղադրությունների որոշ մասը կարող է ածանցման շնորհիվ նոր բառերի կազմության հիմք դառնալ, ինչպես՝ **բուհ** – բուհական, միջբուհական, ներբուհական, հետբուհական, **ՀՀԿ** – ՀՀԿ-ական, **խնայողքամարկդ** – խնայողքամարկդային և այլն:

դ) Հապավական բաղադրությունները՝ որպես գերազանցապես տեղական, միջպետական և միջազգային նշանակության զանազան հիմնարկների, միավորումների, հիմնականում աշխարհագրական ու այլ հատուկ անուններ, անվանակարգային հասկացություններ են, հետևաբար և դուրս են մնում լեզվի բառային կազմից: Նրանց չնչին մասն է միայն, որ իբրև լիարժեք բառ մուտք է գործել լեզվի համագործածական բառապաշարը:

Վերոհիշյալ յուրահատկությունների հետևանքով հապավական բաղադրությունների քանակը լեզվում մշտական փոփոխման է ենթարկվում, անընդհատ կազմվում են նորերը, որոշ մասն էլ զանազան օբյեկտիվ պատճառներով դուրս է մղվում ամենօրյա գործածությունից:

ԴԱՐՁՎԱԾԱՔԱՆՈՒԹՅՈՒՆ

Դարձվածաբանությունը¹⁴⁹ բառագիտության այն բաժինն է, որն ուսումնասիրում է դարձվածքները, լեզվի դարձվածքների հարստությունը, դարձվածքային համակարգը ժամանակակից վիճակում և պատմական զարգացման մեջ: Դարձվածաբանությունը, մյուս կողմից, լեզվում առկա դարձվածքների ամբողջությունն է: Հայերենը դարձվածքներով ամենահարուստ լեզուներից մեկն է. ըստ բառարանագրական տվյալների՝ հայերենում դրանց թիվը հասնում է 25.000-ի:

Ժամանակակից հայերենում դարձվածքը հաճախ անվանվում է դարձվածաբանական միավոր, դարձվածաբանական արտահայտություն, հատուկ ոճ, որոշ դեպքերում նաև՝ **իդիոմ**¹⁵⁰ կամ **իդիոմային արտահայտություն**: Վերջինս արդի հայերենում գործածվում է ավելի նեղ իմաստով՝ որպես դարձվածքի մի տարատեսակը: Արևմտահայ գրական լեզվում իդիոմի փոխարեն շրջանառության մեջ է դրված **հասկարանություն** բառը:

Դարձվածքների՝ որպես լեզվի ինքնուրույն իմաստային միավորների ուսումնասիրությունը հայ լեզվաբանության մեջ ուշադրության է արժանացել 30-ական թվականներից սկսած՝ Մ. Աբեղյանի կողմից: Հետագայում դարձվածքների ուսումնասիրությունը կատարվել է, նախ՝ նրանց իմաստային և ոճական-կիրառական և ապա՝ կառուցվածքային, բաղադրիչների ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունների և դարձվածքների ծագման տեսակետից:

¹⁴⁹ **Դարձվածաբանություն** հայերեն տերմինն օտարազգի *фразеология, phraseology, phraséologie, Phraseologie* ձևերի պատճենումն է (կազմված է հունարեն *φράσις* «դարձվածք, բառացի՝ արտահայտություն» և *λόγος* «ուսմունք, բառացի՝ գիտություն, հասկացություն» բառերից):

¹⁵⁰ **Իդիոմ** տերմինը ծագում է հունարենից. *ιδίωμα* նշանակում է «յուրահատուկ արտահայտություն, լեզու, բարբառ»:

Լեզվաբանական գրականության մեջ միասնական կարծիք չկա դարձվածքի կամ դարձվածաբանական միավորների տարբերակման, դարձվածաբանական ընդգրկման սահմանների վերաբերյալ: Որոշ մասնագետներ դարձվածաբանության մեջ ընդգրկում են բոլոր կայուն կապակցությունները, ուրիշները սահմանափակվում են բառակապակցությունների որոշակի խմբով:

Գարձվածաբանության ավելի լայն ըմբռնման կողմնակիցները դարձվածքների մեջ ներգրավում են առածները, ասացվածքները, աֆորիզմները, թևավոր խոսքերը, ոմանք անգամ՝ բոլոր հարադրությունները, բարդ հարադրական շաղկապները, բառակապակցական տերմինները և այլն, մյուսները՝ դարձվածաբանության ավելի նեղ ըմբռնման կողմնակիցները, հրաժարվում են վերոհիշյալից և հաճախ դարձվածքներ են համարում միայն իդիոմային արտահայտությունները (իդիոմները):

Գարձվածքների տարբերակման հարցում մասնագիտական գրականության մեջ որոշակիորեն ձևավորվել է երկու ուղղություն:

Լեզվաբանների առաջին խումբը (Բ. Ա. Լարին, Ս. Ի. Օժեգով, Ա. Գ. Ռուդնև, Ս. Վ. Կոմին, Ա. Ի. Մոլոտկով և ուրիշներ) դարձվածք է համարում բառին համարժեք բառակապակցական (հարադրյալ) այնպիսի իմաստային միավորը, որին հատուկ են վերաիմաստավորումը և փոխաբերականությունը: Այդ ուղղության ներկայացուցիչները դարձվածաբանությունից դուրս են թողնում առածները, ասացվածքները, թևավոր խոսքերը, համարյա բոլոր բառակապակցական տերմինները, այսինքն՝ բոլոր այն բառային կապակցությունները, որոնք դեռ չեն վերածվել բառային անբաժան արտահայտությունների, լիովին դեռ չեն ստացել փոխաբերական-ընդհանրական իմաստ կամ բովանդակություն և դեռ ամբողջապես չեն դարձել վերաիմաստավորված կամ փոխաբերական իմաստ ունեցող կապակցություններ:

Գարձվածքային միավորների տարբերակման հարցում մի փոքր այլ սկզբունքներով է առաջնորդվում լեզվաբանների մյուս խումբը (Լ. Ա. Բուլախովսկի, Ա. Ա. Ռեֆորմատսկի, Ա. Ի. Եֆիմով, Ե. Մ. Գալկինա-Ֆեդորուկ, Ն. Մ. Շանսկի և ուրիշներ). նրանք վերոհիշյալ

դարձվածքների հետ դարձվածաբանության մեջ մտցնում են նաև առաձա-ասացվածքային արտահայտությունները, թևավոր խոսքերը, աֆորիզմները, պատկերավոր կամ փոխաբերական իմաստ ունեցող բառակապակցական տերմինները:

Դարձվածաբանության սահմանների որոշման, դարձվածքային միավորների ընդգրկման և ծավալի վերաբերյալ գոյություն ունեցող կարծիքների տարբերությամբ էլ պայմանավորված է, անշուշտ, դարձվածքների սահմանման բազմազանությունը:

Դարձվածքը կառուցվածքով երկու և ավելի բառերի կայուն, իմաստով ամբողջական, վերաիմաստավորված այնպիսի կապակցություն է, որ խոսքում վերարտադրվում է իբրև լեզվական պարաստի միավոր:

Դարձվածքի մեջ առաջին հերթին առկա են փոխաբերականությունն ու պատկերավորությունը: Դարձվածքային միավորների տարբերակման չափանիշներ են համարվում նաև նրանց կայունությունը, իմաստային ամբողջականությունը, կառուցվածքային տարբերակների հնարավորությունը: Որպես լեզվի իմաստային ինքնուրույն միավոր՝ դարձվածքը օժտված է բառային բոլոր հատկանիշներով՝ բառային իմաստով, քերականական ձևավորվածությամբ ու կարգերով: Դարձվածքը, որպես խոսքում վերարտադրվող պարաստի միավոր, բառերի վերաիմաստավորված կայուն կապակցություն է:

Դարձվածքի բնույթի վերաբերյալ հստակ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է այն համեմատության մեջ դնել բառակապակցության և բառային միավորի հետ:

Դարձվածք և բառակապակցություն: Դարձվածքի՝ որպես լեզվական համակարգի երևույթի և լեզվի իմաստային միավորի, առանձնահատկությունը որոշելու համար այն պետք է հստակորեն տարբերակել, նախ, բառերի ազատ և կայուն կապակցություններից, սովորական հարադրություններից:

Ինչպես հայտնի է, հայոց լեզվում, առանձին բառերից բացի, գոյություն ունեն ավելի բարդ կազմություններ, երկու և ավելի բառերից կազմված կապակցություններ, որոնք կարող են լինել կամ կա-

յուն բառակապակցություններ, կա՛ն էլ ոչ կայուն, պարզապես բառերի շարահյուսական կապակցություններ:

Բառերի շարահյուսական ոչ կայուն կապակցությունները (ինչպես, օրինակ՝ *գիրք կարդալ, րուն գնալ, ջրով լի դույլ, մանկության վայր, աչքերի տիրություն, հայրենիքի առափուր, առափկ գեղեցիկ, խոսել գործից* և այլն) բառային ամբողջական արժեք չունեն, նախադասության մեջ շարահյուսական պաշտոն կատարելով և շարահյուսական արժեք ստանալով՝ կազմում են շարահյուսության ուսումնասիրության նյութը:

Գարձվածքներ մեկից ավելի բառերի կապակցություն լինելով՝ տարբերվում են բառերի ազատ կապակցություններից: Հիմնական տարբերությունն այն է, որ բառերի ազատ կապակցությունները կազմվում են հաղորդակցման պրոցեսում (ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր), հետևաբար և կայուն ու մշտական չեն: Մինչդեռ դարձվածքները հաղորդակցման ընթացքում անմիջապես չեն կազմվում, այլ հանդես են գալիս իբրև լեզվի իմաստային պատրաստի միավորներ և շատ դեպքերում ունեն իրենց բառային համանշանակները կամ հոմանիշները:

Ի տարբերություն բառերի ազատ կապակցությունների՝ դարձվածքները (բառերի նման) կայուն և ամբողջական են իրենց բաղադրիչների կազմով, հանդես են գալիս սովորաբար բաղադրիչների անփոփոխ կազմով, քերականական-շարահյուսական որոշակի կադրավարներով: Օրինակ՝ *աչքով անել* – ակնարկել, *աչք գցել, աչք դնել* – մի բան հավանել, ցանկանալ ձեռք բերել, *կարմիրը կապել* – 1) ամուսնացնել, 2) սպանել, *կրկից կարմիր խնչոր ուղարկել* – մեկին հրավիրել, հրավերք ուղարկել, *կպուցը մեղր քսել* կամ *քաղցրացնել* – կաշառել, կաշառք տալ, *ուղտի* (կամ *էշի*) *սկանջում քնած* – 1) անտեղյակ, անիրազեկ, 2) միամիտ, *կյանքի ընկեր* – ամուսին և այլն:

Գարձվածք և բառերի կայուն կապակցություն: Բառերի կայուն կապակցությունը, ընդհակառակը, օժտված է բառային ամբողջական իմաստով, տրամաբանորեն հասկացություն է արտահայտում և, որպես բառային և իմաստային ավելի բարդ միավոր, կազմում է բա-

ռագիտության ուսումնասիրության նյութը:

Ձևականորեն կայուն բառակապակցություն է նաև հարադրական բարդությունը, որ կազմվում է երկու կամ ավելի բառերի հարադրությունից: Կազմվելով մեկից ավելի բառերի հարադրությունից՝ այն արտահայտում է մեկ հասկացություն և գիտակցվում է իբրև մեկ բառ, թեև հարադրության մեջ մտնող բաղադրիչ բառերը պահպանում են իրենց բառային իմաստները, ինչպես նաև շեշտը: Ամբողջ հարադրության բառային իմաստը գոյանում է բաղադրիչ բառերից յուրաքանչյուրի բառային իմաստներից: Օր.՝ **պար գալ** – պարել, **աղաչանք անել** – աղաչել, **պաղապանք անել** – պաղատել:

Դարձվածքային միավորը կամ դարձվածքը նույնպես ձևով կամ ձևականորեն հարադրություն է: Դարձվածքների զգալի մասը հարադրական բարդություններին նույնանում են նրանով, որ դարձվածքը հիմնականում նույնպես ունի մեկ բառի արժեք, կազմված է մեկից ավելի բաղադրիչ բառերից, որոնք պահպանում են իրենց բառային շեշտը: Տարբերությունն այն է, սակայն, որ դարձվածքը ամբողջությամբ փոխաբերական իմաստ ունի, պատկերավոր արտահայտություն է, նրա դարձվածքային իմաստը չի բխում դարձվածքը կազմող բառերի (բաղադրիչների) բառային առանձին իմաստներից: Օրինակ՝ **զլուխ փանել** – ձանձրացնել, **զլուխ քերել** – հաջողեցնել, **ջեռք քաշել** – հրաժարվել (մի բանից), **աչքի փակով** – թաքուն, ծածուկ, գաղտնի, **աչքի փուշ** – ատելի (մարդ), **կզակը թույլ** – անզաղտնապահ, բերանբաց:

Որպես լեզվի իմաստային միավոր, դարձվածքի, հատկապես իդիոմատիկ արտահայտության մեջ, բառ-բաղադրիչները կորցնում են իրենց անկախ իմաստային արժեքը, դարձվածքի կազմության մեջ նրանց առկայությունը իրենց բառային իմաստով, ուրեմն և բառային արժեքով, փաստորեն, ձևական է դառնում: Հետևաբար, դարձվածքը իր քերականական և հատկապես իմաստային կառուցվածքով չի նույնանում ո՛չ կայուն և ո՛չ էլ ազատ բառակապակցություններին:

Դարձվածք և բառ: Բառերի նման դարձվածքները նույնպես չեն կազմվում հաղորդակցման պրոցեսում, այլ լեզվում հանդես են գալիս

իբրև իմաստային պատրաստի միավորներ: Այս հատկանիշով դարձվածքը մոտենում է բառին (ինչպես նաև կայուն կապակցություններին և հարադրություններին), բայց որոշակիորեն սահմանագատվում է բառերի ազատ կապակցություններից:

Բառերի (և հարադրությունների) մասն դարձվածքները կայուն են իրենց կազմով և կառուցվածքով: Մյուս կողմից՝ բոլոր այն դեպքերում, երբ դարձվածքը մեկ բառի արժեք է արտահայտում, իմաստային տեսակետից համարվում է բառի հետ միևնույն մակարդակի միավոր: Դարձվածքի և բառի ընդհանուր հատկանիշներից է նաև նրանց բառային իմաստն ու քերականական կարգը:

Դարձվածքի բառային իմաստի առկայությունը հաստատվում է ոչ միայն նրանով, որ այն կարելի է բացատրել, այլև նրանով, որ դարձվածքը և բառը իրենց բառային իմաստներով կարող են հարաբերակցվել իբրև հոմանիշներ. ինչպես, օրինակ՝ **լեզուն կծել** – **լռել**, **երես առնել** – **լկրիսանալ**, **երես ծռել** – **խնդրել**, **գլուխ փալ** – **բարևել**, **գլուխը փալ** – **գոհվել**, **սապանի չափ**, **սապանի ճուր** – **խորամանկ**, **իժի ծնունդ** – **նենգ**, **ճնճղուկի սիրտ** – **վախկոտ**, **քթի ծակ** – **բանականություն**, **խելք**, **քթի մազ** – **բծախնդիր**, **երեսի ջուր** – **ամոք**, **պարկառանք**: Եթե դարձվածքը, ինչպես և բառը, լեզվում չունի իր բառային հոմանիշները, այդ դեպքում նրանց արտահայտած հասկացությունը բացատրվում է նկարագրությամբ, ինչպես, օրինակ՝ **աչքի առաջ** (**առջի**) – 1) մեկի ներկայությամբ. 2) հսկողությամբ, հսկողության ներքո. 3) պարզ, տեսանելի. 4) մեկի գիտակցությամբ, թողտվությամբ, **Գամոկլեսի** (կամ **դամոկլյան**) սուր – մշտապես սպառնացող վտանգ, **հալի կաթ**, **ծփի կաթ**, **օջի կաթ** – չճարվող, հազվագյուտ որևէ բան, **օջի ծակ** – շատ նեղ տեղ:

Դարձվածքների և բարդ բառերի ընդհանրությունն արտահայտվում է նաև նրանց իմաստային և ձևական անբաժանելիությամբ: Դարձվածքների մեծ մասը, ինչպես և բարդ բառերը, իմաստային և ձևական տեսակետից անբաժանելի են, կազմում են լեզվի ամբողջական իմաստային-ձևաբանական միավորներ, որոնց բաղադրիչներին, սովորաբար, այլ բառերի հավելումներ չեն արվում. ինչպես՝ **կոկորդիլոսի արքասուրբ**, **գեղեցիկ սեռ**, **Եվայի դուստր**, **կյանքի**

գարուն, խելքի փուսրակ, փան ճրագ, աչքի փուռ, դարմանի փակի ջուր, շան ու գայլի բաժին, Ասործու գառ, Ասործու կրակ, բարեկր- նյան աշտարակաշինություն, գլխի ընկնեյ, գլխում նարեյ, չեռք փայ, չեռք առնեյ, սկանջ դնեյ:

Գարձվածք և համադրական բարդություն: Գարձվածքները, ի տարբերություն իսկական բարդությունների, կազմված են ոչ թե հիմնական ձևույթներից (կամ արմատներից), այլ ամբողջական բա- ներից՝ բառակազմական և բառափոխական բազմազան ձևերի իրենց դրսևորումներով: Այդ տեսակետից դարձվածքները կազմու- թյամբ ձևականորեն նման են կցական բարդություններին:

Կցական բարդությունների նման՝ ոչ իդիոմային դարձվածքի բաղադրության մեջ մտնող բառերն ունեն իմաստային և հնչյունա- ձևաբանական որոշակի ինքնուրույնություն: Մյուս կողմից՝ ձևակա- նորեն դժվար է տարբերակել բառը և իդիոմային դարձվածքը, որի մեջ բառերը կորցնում են իրենց իմաստային ինքնուրույնությունը. ինչպես, օրինակ՝ *երես առած, երես առնեյ, երեսը բրդի ջրով լվա- ցած, երեսի ջուր, երեսից ընկած, բոկից փախած, մի կծած խնչոր, ծանր սկանջ, իր գլխի, կապր կպրած, կապարը փաք, ծուծը պա- կաս* և այլն:

Իդիոմային այս կարգի դարձվածքներին առանձնապես մոտ են այն կցական բարդությունները, որոնք կազմված են բառաշարահյու- սական եղանակով, ինչպես՝ *ծամկպրած, բացքերան, բերանբաց* և այլն, որոնց բաղադրիչների շարահյուսական կապը չի մթագնած և գիտակցվում է արդի լեզվամտածողությամբ:

Կցական բարդությունը դարձվածքից տարբերելու համար վճռո- րոշ դեր է խաղում ուղղագրությունը՝ բաղադրիչ-բառերը միասին կամ առանձին գրվելու հանգամանքը, հնչերանգը և շեշտը:

Գարձվածքի իմաստ: Ըստ իրենց արտահայտած իմաստների՝ դարձվածքները բաժանվում են երկու խմբի:

Առաջին խումբը կազմում են այն դարձվածքները, որոնք տրա- մաբանորեն հասկացություն են արտահայտում և իրենց իմաստնե- րով նույնանում կամ նմանվում են բառի բառային իմաստներին: Օրինակ՝ *կույխների երկում* – գաղտնի, *կարսայի երգ* – վերջին

ստեղծագործություն (մահից առաջ), **Եվայի զգեստով** – մերկ, տկլոր, **կրիայի քայլերով** – դանդաղ, **ձեռքը պակաս** – աղքատ, չքավոր, **գլուխ բերել** – 1) ավարտել, ավարտին հասցնել, 2) հաջողել, **խելքը փանել** – գայթակղել: Այդպիսի բառային իմաստը դարձվածքի մեջ կարող է միակը լինել: Այդ դեպքում դարձվածքը մենիմաստ է: Ինչպես, օրինակ՝ **ականջը զգել** – հայտնել, իմաց տալ, **ականջի փակ** – շատ մոտ (լսելի), **կյանքի թելը կտրել** – սպասել, մեռցնել, **սրբի խորքում** – ներքուստ, **բաց սրտով** – սրտաբաց, սիրալիր կերպով, անկեղծությամբ:

Ժամանակակից հայերենի դարձվածքների զգալի մասը մենիմաստ է:

Դարձվածքը կարող է մեկից ավելի իմաստներ ունենալ: Այդ դեպքում դարձվածքը բազմիմաստ է: Դարձվածքի բազմիմաստությունը նրանում մեկից ավելի իմաստների առկայությունն է: Օրինակ՝ **Աստու կրակ** – 1) փորձանք, աղետ, պատիժ, 2) շատ ճարպիկ, չար, աշխույժ: **Խելքը կտրել** – 1) հասկանալ, գիտակցել, 2) մտածել, կարծել, 3) հասկացողությանը՝ կարողությանը կամ ցանկությանը համապատասխան լինել: **Ձեռքերը լվանալ** – 1) չխառնվել որևէ գործի, 2) վատ բան կատարելով մի կողմ քաշվել, չբմեղ ձևանալ, 3) պատասխանատվություն իր վրայից զցել: **Քրի փակ** – 1) շատ մոտ (տեղով և ժամանակով), 2) անլսելի, հազիվ լսելի, 3) աննկատելի, հազիվ նկատելի, 4) մեկի գիտությամբ, թողտվությամբ, 5) ակնբախ կերպով, բացահայտորեն, 6) հեզմանքով, քամահրանքով: **Աչքը բանալ (բացել, բաց անել)** – 1) քնից արթնանալ, զարթնել, 2) հանկարծ իրեն տեսնել, ուշքի գալ, սթափվել, 3) ծնվել, ծնունդ առնել, 4) գիտակցության գալ, չարն ու բարին հասկանալ, 5) կյանք մտնել, կյանքը ճանաչել, 6) գլխի զցել, հասկացնել, խելամուտ դարձնել, 7) զգաստանալ, խելքը գլուխը հավաքել, ուշադիր՝ աշարուրջ լինել, 8) դուրս գալ, ծագել¹⁵¹:

Դարձվածքները նույնպես ունեն իմաստների այն բոլոր տիպերն ու տեսակները, որոնք հատուկ են ինքնուրույն բառային միավորներին: Բառերի նման՝ վերոհիշյալ կարգի դարձվածքները նույն-

¹⁵¹ Տե՛ս *Սուրբասյան Ա., Գալստյան Ա.*, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, 1975:

պես ունեն ուղղակի կամ անվանական, փոխաբերական, ընդունված կամ չընդունված, պատահական, բառարանային և այլ իմաստներ:

Առանձին խումբ են կազմում այն դարձվածքները, որոնք իրենց կազմությամբ և իմաստով համագոր են նախադասությանը: Տրամաբանորեն դատողություն, շարահյուսորեն նախադասություն ներկայացնող այդ կարգի դարձվածքների իմաստը փոխաբերական է, պայմանավորված չէ նախադասության կազմի մեջ մտնող բառերի բառային իմաստներով, այդ բառերի բառային իմաստների սոսկ գումարը չէ և չի բխում դրանց ընդունված, գործածական իմաստներից: Օրինակ՝ *այսօր կա՛ վաղը չկա* – 1) ծերացել է, մահը հեռու չէ, 2) մեռնելու ենթակա է, մահկանացու է, 3) անցողիկ, ժամանակավոր է: *Ինչ եմ ստել* – շատ լավն է (հիացական և զարմացական արտահայտություն): *Էլ մի սաի (ստեք)* – ասելու, պատմելու բան չէ: *Ասեղ զցես՝ զեպին չի ընկնի* – շատ մարդ կա, հոծ բազմություն է: *Ասրված գիպե* – հայտնի չէ, անհայտ է, ո՞վ գիտե: *Եթե Ասրված քա* – 1) եթե հաջողվի, եթե ստացվի, 2) եթե բախտը բերի: *Ականջից կախ է* – այսքան արժե, այսքան արժեք ունի: *Ակոն քա՞նն է* – հիմար է, ամեն ինչ տեղը չէ և այլն:

Կան նաև կազմությամբ նախադասություն ներկայացնող շատ դարձվածքներ, որոնց ընդհանուր իմաստը հաճախ համագոր է մեկ բառի իմաստին, այդ կարգի դարձվածքները մեկ բառի արժեք են ձեռք բերել, օրինակ՝ *աչքդ մինչև մի անգամ քաց ու խուփ անես* – իսկույն, վայրկենաբար, մեկ ակնթարթում, կամ՝ *աչքերդ սիրեմ, քայան կծեմ* և այլն:

Դարձվածքների դասակարգումը ըստ իմաստային միաձուլության աստիճանի

Ռուսերեն դարձվածքների իմաստային դասակարգումը կատարել է ակադ. Վ. Վ. Վինոգրադովը՝ հիմք ընդունելով Ֆ. Բալլիի ֆրանսերեն դարձվածքների սխեման: Վ. Վ. Վինոգրադովի դասակարգումը հետագայում լրացվել և ամբողջացվել է Ն. Մ. Շանսկու և ուրիշների կողմից:

Դարձվածքների իմաստային դասակարգման համար հիմնական չափանիշն է դարձվածքը կազմող բառ-բաղադրիչների միաձուլության աստիճանը: Բաղադրիչներից որևէ մեկի ինքնուրույնության աստիճանով էլ որոշվում է դարձվածքի տեղը իմաստային դասակարգման համակարգում:

Դարձվածքի ընդհանուր իմաստի և դարձվածքը կազմող բաղադրիչ բառերի մեջ գոյություն ունեցող հարաբերության տեսակետից հայերեն դարձվածքները բաժանվում են չորս խմբի՝ **դարձվածքային սերտանում, դարձվածքային միասնություն, դարձվածքային կապակցություն և դարձվածքային արտահայտություն**:

ա) Դարձվածքային սերտանում: Այս խմբի մեջ են դասվում այն դարձվածքները, որոնց ընդհանուր իմաստը չի բխում դարձվածքի կազմի մեջ մտնող բաղադրիչ բառերի բառային իմաստներից: Դրանք իմաստային տեսակետից բառային անբաժանելի, անքակտ այնպիսի կապակցություններ են, որոնց մեջ բառերը, ամբողջապես կորցնելով հանրորեն ընդունված իրենց բառային իմաստները և տվյալ կառուցվածքում վերաիմաստավորվելով, դառնում են դարձվածքի սոսկ ընդհանուր, ամբողջական իմաստի բաղադրատարր՝ չցուցաբերելով իրենց բառային և իմաստային ինքնուրույնությունը, ինչպես, օրինակ՝ **աչքից գցել** – ատել, այլևս չսիրել, **գլուխ գալ** – հաջողվել, **գլուխը յուղել** – համոզելով խաբել, **գլուխը փանել** – ձանձրացնել, անհանգստացնել (մեկին), **գլուխը աղալ կամ աղ դնել** – մեկին սպանել, մեջտեղից վերացնել, **գլուխ դնել** – 1) մեկով զբաղվել, մեկի հետ գործ ունենալ կամ ասել-խոսել, 2) մեկի հետ լեզու գտնել, հարմարվել, 3) մեկի հետ վեճի բռնվել, վիճել, կռվել, խոսքի բռնվել, **երեսի ջուր** – ամոթ, պատկառանք:

Դարձվածքային սերտանման հիմնական հատկանիշը նրա բառային անբաժանելիությունն է, բաղադրիչների իմաստային բացարձակ սերտանումը, միաժամանակ, մեծ մասամբ համարժեք է բառին և համանշանակ բառերի հետ գտնվում է հոմանշային հարաբերության մեջ: Այս կարգի որոշ դարձվածքներում բառերի քերականական ձևերը և քերականական կապերը չեն կարող բացատրվել ժամանակակից հայոց լեզվի գործող օրինաչափություններով: Դրանք

կան գրաբարյան քարացած ձևեր են, կան էլ՝ քերականական հնաբանություններ: Այս դարձվածքները որոշակի քերականական կարգերի (խոսքի մասերի) պատկանող բացարձակապես անբաժան, միաձույլ իմաստային միավորներ են: Նրանց բաղադրիչների մեջ կենդանի, գործող շարահյուսական կապի բացակայության պատճառով նախադասության մեջ հանդես են գալիս իբրև մեկ ամբողջական անբաժանելի անդամ:

Դարձվածքային սերտաճման մեջ չի ընդունվում ինքնուրույն իմաստ ունեցող բառերի գոյությունը: Այսինքն՝ դարձվածքի բաղադրիչ հանդիսացող յուրաքանչյուր բառ ոչ միայն չունի հանրորեն գիտակցված և ընդունված իր բառային իմաստը, այլ ընդհանրապես գուրկ է որևէ ինքնուրույն, առանձին բառային իմաստից: Այդ դեպքում բաղադրիչների հնչյունային կազմի նույնությունը համապատասխան բառերին դիտվում է իբրև համանունություն:

բ) Դարձվածքային միասնություն: Դարձվածքների այս խմբի մեջ մտնում են դարձվածաբանական այնպիսի միավորներ, որոնք դարձվածքային սերտաճումների նման իմաստաբանորեն նույնպես անբաժան են և ամբողջական, բայց ի տարբերություն նախորդների, սրանց դարձվածքային ընդհանուր իմաստը որոշ չափով պատճառաբանված է դարձվածքը կազմող բաղադրիչ բառերի առանձին, փոխաբերական իմաստով: Այս դեպքում դարձվածքի իմաստը բխում է առանձին բաղադրիչների բառային իմաստների միավորումից, նրանց իմաստների միությունից, բայց այն տարբերությամբ, որ բաղադրիչները հանդես են գալիս փոխաբերական իմաստներով, դարձվածքը ամբողջապես ստանում է վերաիմաստավորված՝ ընդհանրացած բովանդակություն: Դարձվածքների այս կարգին առաջին հերթին բնորոշ է պատկերավոր իմաստը: Դարձվածքային միասնությունները հիմնականում պատկերավոր արտահայտություններ են, որով և տարբերվում են նույն կազմությունն ունեցող բառերի ազատ կապակցություններից: Դրանց մեջ պատկերավորությունն առաջանում է դարձվածքը կազմող առանձին բառերը (բաղադրիչները) փոխաբերական իմաստով գործածվելու հետևանքով: Օրինակ՝ **սչք գցել** (մի բանի վրա) – մի բան հավանել՝ դուր գալ, ցանկանալ ձեռք

բերել կամ տիրանալ, **գլխին փայլ** – հետագայում գոջալ, **գլխին նսպել** – մեկի վրա իշխել, մեկին իրեն ենթարկել, **գլուխը սապնել** – խաբել, **բերանը բաց** – 1) ապշահար, ապուշ կտրած, զարմացած, որևէ բանով տարված, 2) գաղտնիք չպահող, անգաղտնապահ, շահակրատ, **բերանը բույլ** – 1) իր ասածը չպնդող, զիջող, 2) անգաղտնապահ, **ոտքը դուրս** – 1) ընտանեկան՝ ամուսնական ուխտին անհավատարիմ, 2) ընտանեկան հարկից միշտ բացակայող, **վիզ(ը) ծռել** – ստորանալ մեկի առաջ, ստորանալով մեկից մի բան խնդրել:

Այս կարգի շատ դարձվածքներ՝ որպես սովորական բառակապակցություններ, ունեն իրենց զուգահեռ ձևերը, որոնցում բառերը հանդես են գալիս իրենց ուղղակի, անվանական իմաստներով, և կապակցությունն էլ գուրկ է, բնականաբար, վերաիմաստավորումից կամ փոխաբերական իմաստից, ինչպես, օրինակ՝ **բերանը բաց** – բերանը բաց արած, բերանը բացված վիճակում, **գլխին նսպել** – գլխի վրա նստել՝ տեղ գրավել, **գլխին փայլ** – գլխին զարկել՝ հարվածել, **գլուխը սապնել** – գլուխը սապոն (օճառ) քսել, **ոտքը դուրս** – ոտքը մի տեղից դուրս լինելը, **վիզ(ը) ծռել** – վիզը շարժել աջ ու ձախ, վիզը թեքել և այլն:

Դարձվածքային միասնությունների շարահյուսական կառուցվածքը, ինչպես նաև բաղադրիչների քերականական ձևերը կանխորոշված են և բխում են ժամանակակից լեզվում գործող օրինաչափություններից:

Բաղադրիչների իմաստային անբաժանելիության աստիճանով դարձվածքային միասնություն պետք է համարել բառակապակցական որոշ տերմիններ, որոնց բաղադրիչ բառերը, ինչպես և ամբողջական դարձվածքները փոխաբերական իմաստ են ստացել, ինչպես, օրինակ՝ **լացող ուռի, կեսարյան հապում, սպիտակ ածուխ:**

Միաժամանակ բառակապակցական որոշ տերմիններ, իրենց ուղղակի, անվանական իմաստից բացի ձեռք բերելով փոխաբերական նոր իմաստներ, վեր են ածվել վերոհիշյալ կարգի դարձվածքների, ինչպես, օրինակ՝ **առաջին ջութակ, ծանրության կենտրոն, կուլիսների երև(ում), կույր աղիք:**

Դարձվածքային սերտաճումը և դարձվածքային միասնությունը՝ իբրև իմաստային տեսակետից անբաժանելի միավորներ և բա-

ների համարժեքներ, հաճախ միավորվում են մեկ խմբի մեջ և կոչվում են **իդիոմներ** կամ **իդիոմատիկ արտահայտություններ**:

զ) Դարձվածքային կապակցություն: Իդիոմներից տարբերվում են դարձվածքային կապակցությունները և դարձվածքային արտահայտությունները, որոնք իմաստային տեսակետից անբաժան բաների համանշանակներ չեն, այլ իմաստաբանորեն տարրալուծվող դարձվածքներ, որոնց դարձվածքային ընդհանուր իմաստը բխում է դարձվածքը կազմող բաղադրիչ բառերի բառային իմաստներից:

Դարձվածքային կապակցություններ են կոչվում դարձվածքային այն միավորները, որոնց ընդհանուր իմաստը ամբողջովին բխում է նրանց բաղադրիչ-բառերի իմաստներից: Դրանք այնպիսի դարձվածքներ են, որոնց կազմի մեջ մտնող բառերն ունեն ինչպես ազատ, այնպես էլ դարձվածաբանորեն կապված գործածություն: Այդ կարգի դարձվածքներում բաղադրիչները՝ դարձվածքը կազմող բառերը, հիմնականում պահպանում են իրենց իմաստային ինքնուրույնությունը, բայց իրենց կապերով, այնուամենայնիվ, մնում են կախյալ վիճակում, բաղադրիչներից մեկը հաճախ հանդես է գալիս փոխաբերական իմաստով: Օրինակ՝ **գլուխը կախ, գլուխը կախել, հոնքերը կիպել, ցեխն ընկնել, քիթը ջարդել, նուրբ վիճակ, նուրբ հարց, արամները սրել, խոսքերը քանոն փաթ, սիրտը կրծել, օդային ամրոց**: Սրանց առանձնահատկությունն այն է, որ ունեն իրենց զուգահեռ ազատ կապակցությունները, դարձվածքի կազմի մեջ մտնող բաղադրիչները հաճախ կարող են փոխարինվել հոմանիշ բառերով, ինչպես, օրինակ՝ **հոնքերը կիպել** և **նոթերը կիպել, սիրտը կրծել** և **սիրտը մաշել, քիթը ջարդել** և **քիթը փրորել, արամները սրել** և **սկռաները սրել**:

դ) Դարձվածքային արտահայտություն: Դարձվածքային արտահայտություն են համարվում այն կայուն դարձվածաբանական միավորները, որոնք իմաստային տեսակետից ոչ միայն բաժանելի են, այլև կազմված են ազատ իմաստ ունեցող բաղադրիչ բառերից, դարձվածքի ընդհանուր իմաստը ամբողջապես կախված է և բխում է դարձվածքը կազմող բաղադրիչ բառերի բառային իմաստից, դարձվածքի բառային կազմը և դարձվածքային իմաստը կայուն են:

Դարձվածքների նախորդ տիպերի օրինակով իբրև լեզվի իմաստա-
յին պատրաստի միավորներ, դարձվածքային արտահայտություննե-
րը տարբերվում են բառերի ազատ կապակցություններից: Օրինակ՝
***լինել թե չլինել, ծառերի երևում անգառը չտեսնել, կենդանի
դիակ, պատենավոր մարդ, ոսկե միջակություն*** և այլն:

Ի տարբերություն նախորդ՝ դարձվածքային կապակցություննե-
րի, սրանց կազմում չկան դարձվածաբանորեն կապված, գործածու-
թյամբ սահմանափակ իմաստով բառեր, հնարավոր չէ բաղադրիչնե-
րի որևէ փոխարինում, որով որոշ չափով մոտենում են դարձվածքա-
յին միասնություններին և անգամ՝ դարձվածքային սերտաճումներին:

Այս կարգի դարձվածքային շարքն են դասվում.

1) Գրական ծագում ունեցող թևավոր խոսքերը, ինչպես նաև
հեղինակային դիպուկ արտահայտությունները, զանազան ասույթնե-
րը, որոնք թևավոր խոսք են դարձել և խզել են իրենց կապը նախնա-
կան բնագրից, նրանց առաջացման առիթ հանդիսացող կոնկրետ
անձի կամ երևույթի հետ և ձեռք բերելով ընդհանրացնող իմաստ՝
լայն տարածում են գտել. ինչպես, օրինակ՝ ***ավզյան ախոռ, դամոկ-
լյան սուր, կարապի երգ, Քաջ Նազար, Չախորդ Փանոս, Դոն Բի-
շոպ, մի բաժակ ջրում փոքորիկ, հողմադացների դեմ կռվել, լինել
թե չլինել, չայն բարբառո հանապարհ, սկն ընդ սկան, արամն
ընդ արաման, սահման քաջանց՝ զենն յուրյանց***:

2) Ժողովրդական խոսակցական անեծքները, մաղթանքները,
օրհնանքները, որոնք պատկերավոր բնույթ ունեն և փոխաբերական
իմաստ ստանալով՝ վերածվել են դարձվածքների, ինչպես՝ ***մի բարձի
ծերանաք, զեպիներ մտնես, անունդ կտրվի, հողը դնեն, հողեն՝
զլուխդ***:

3) Առածա-ասացվածքային արտահայտությունները, որոնք
վեր են ածվել դարձվածքների, ինչպես՝ ***գայլի գլխին ավերարան
կարդայ, երկաթը փաք-փաք ծեծել, ճրերը աշնանը հաշվել*** և այլն:

Առածներն ու ասացվածքները՝ որպես ժողովրդական բանա-
հյուսության տեսակներ, խոսքի մեջ մույնպես հանդես են գալիս իբրև
լեզվի իմաստային պատրաստի միավորներ, այսինքն՝ ստեղծվում են
ոչ թե անմիջապես հաղորդակցման ընթացքում, այլ ինչպես և մյուս

դարձվածքները փոխանցվում են պատրաստի վիճակում: Դրանք իրենց բովանդակությամբ և ժանրային առանձնահատկություններով արտահայտելով ժողովրդի դարավոր իմաստությունը, իրենց կառուցվածքով, լեզվական տեսակետից, փաստորեն, նախադասություններ են և տրամաբանորեն համապատասխանում են դատողությանը և հաճախ իմաստային միաձուլության տեսակետից ներկայանում են իբրև դարձվածքներ, հատկապես՝ դարձվածքային արտահայտություններ: Ըստ ժանրային սահմանման՝ առաձները խրատական, իսկ ասացվածքները ոչ խրատական բնույթի պատկերավոր դիպուկ արտահայտություններ են, կյանքի այս կամ այն երևույթների ընդհանրացումը: Ժանրային ընդհանրության և նշված որոշ տարբերության գույզնթաց առաձներն ու ասացվածքները իրարից տարբերվում են նաև իրենց քերականական կառուցվածքով:

Առաձը սահմանվում է իբրև պատկերավոր ավարտուն ասույթ, որն ունի խրատական իմաստ և, սովորաբար, յուրահատուկ ռիթմահնչյունային ձևավորում: Ասացվածքը պատկերավոր, այլաբանական արտահայտություն է և առաձից տարբերվում է իր շարահյուսական անավարտվածությամբ: Առաձն իբրև ավարտուն ասություն՝ իր կառուցվածքով նախադասություն է, չի ստեղծվում անմիջապես հարորդակցման ընթացքում, այն հանդես է գալիս որպես լեզվի պատրաստի միավոր: Մյուս կողմից, առաձը իմաստով երկպալանային է. ունի բովանդակության ուղղակի պլան, որը ճիշտ կերպով համապատասխանում է իր կազմի մեջ մտնող բառերի անվանական բովանդակությանը, այսինքն՝ նրանց բառային ուղղակի, անվանական իմաստներին: Միաժամանակ այն ունի նաև անուղղակի, այլաբանական պլան, որը չի համապատասխանում տվյալ առաձ-նախադասությունը կազմող բառերի բառային իմաստների գումարին, այսինքն՝ առաձի ընդհանուր իմաստը չի բխում նրա բաղադրիչ բառերի իմաստներից: Իր այլաբանական կողմով առաձի բովանդակությունը մոտենում է դարձվածքային իմաստին:

Այլ է ասացվածքի կառուցվածքային բովանդակությունը, այն, որպես օրենք, միշտ մեկպալանային է, ունի միայն պատկերավոր երանգ և փոխաբերական իմաստ և դրանով էլ բոլոր հիմքերն ունի

դասվելու դարձվածքների շարքը:

Այսպիսով, առածներն ու ասացվածքները, որոնք փոխաբերական-ընդհանրական իմաստ են արտահայտում, իրենց կառուցվածքով նախադասություն կամ բառակապակցություն են, տրամաբանորեն համապատասխանում են կամ դատողությանը, կամ հասկացությանը և դասվում են դարձվածքային արտահայտությունների շարքը: Այս դեպքում հաշվի են առնվում նրանց լեզվական հատկանիշները՝ կառուցվածքն ու ընդհանուր-փոխաբերական իմաստը՝ անտեսելով նրանց գիտական-բանահյուսական ժանրային և այլ առանձնահատկություններ:

Դարձվածքային արտահայտությունները, սովորաբար, բաժանվում են երկու խմբի՝ *անվանական բնույթի դարձվածքային արտահայտություններ* և *հաղորդակցական բնույթի դարձվածքային արտահայտություններ*:

1) Անվանական բնույթի դարձվածքային արտահայտություններ: Անվանական (նոմինատիվ) բնույթի դարձվածքային արտահայտություններ են համարվում բառերի այն կապակցությունները, որոնք բառային արժեք ունեն, բառերի մնան լեզվում անվանական դեր են կատարում և տրամաբանորեն համապատասխանում են հասկացությանը: Անվանական բնույթի դարձվածքային արտահայտությունների հիմնական խումբը կազմում են այն դարձվածքները, որոնք բառերի պատկերավոր և արտահայտչական (էքսպրեսիվ) համարժեքներն են. ինչպես, օրինակ՝ *ոսկե միջակություն, կենդանի դիակ, ծառերի երևում անտառը չփեսներ, չայն բարբառո հանապարհի, լինել քե չլինել, գլխին չյուն նստել, շունչը փայ, շունչը փչել, պատերազմի հրձիգ, վերջին ժամ* և այլն:

2) Հաղորդակցական բնույթի դարձվածքային արտահայտություններ: Հաղորդակցական բնույթի դարձվածքային արտահայտություններ են համարվում նախադասությունների համարժեք այն կապակցությունները, դարձվածքային արտահայտությունները, որոնք տրամաբանորեն համագոր են դատողությանը: Մյուսնք անվանական բնույթի դարձվածքային արտահայտություններից հիմնականում տարբերվում են նրանով, որ ստորոգում արտահայտելով՝ նա-

խաղաստություններ են, տրամաբանորեն՝ դատողություններ, մինչդեռ անվանական բնույթի դարձվածքային արտահայտությունները բառերի կապակցություններ են, իմաստով համազոր են բառին, տրամաբանորեն հասկացություններ են:

Հաղորդակցական բնույթի դարձվածքային արտահայտություններ են, օրինակ՝ **դատը դատել՝ դատարկ նստել** – շատ աշխատել, բայց քիչ ստանալ, **երկաթը փաք-փաք կծեծեն** – հարմար առիթը չպետք է բաց թողնել, **ճիշտ խոսքը աչք կծակի** – մարդիկ չեն սիրում, երբ ճշմարտությունը երեսին են ասում, **մի ձեռքը ծափ չի փա** – մի մարդու ձայնը ազդու չի լինի, անհատի հնարավորությունները շատ փոքր են, առանց ընկերոջ որևէ գործ չի հաջողվի, **գյուղ կանգնի՝ գերան (կ)կոպրի** – 1) միասին աշխատանքը մեծ ուժ է, արդյունավետ է, 2) ժողովրդի միահամուռ կամքին ոչ մի ուժ չի կարող դիմանալ, **քրից բռնես՝ հոգին կփա** – բոլորովին թույլ՝ անզոր է, **մի քեղ քաշես՝ հազար կարկադան կքափվի** – հազար շորերը շատ հին են: Այս կարգի դարձվածքները լեզվում գործածվում են ինքնուրույնաբար, կամ էլ «շինանյութ» են ծառայում ավելի բարդ կազմությամբ նախադասությունների մեջ:

Հաղորդակցական բնույթի դարձվածքները ըստ իրենց բնույթի բաժանվում են երկու խմբի.

Ա) Առաջին խմբի մեջ մտնում են առածա-աֆորիզմային բնույթի հաղորդակցական դարձվածաբանական միավորները՝ թևավոր խոսքեր, դիպուկ արտահայտություններ, առածներ, անեծքներ, մաղթանքներ, օրհնանքներ և այլն:

1) Թևավոր խոսքեր և դիպուկ արտահայտություններ՝ **ավելի լավ է մեռնել կանգնած, քան թե ապրել ծնկաչոք, խոզի գլուխը խալիչային (գորգին) դրին գլորվեց, ցեխն ընկավ, ոտներդ վերմակիդ չափ մեկնիր, գայլի գլխին ավերարան կարդացին, սասց՝ թողեք ոչխարի հոտն (սուրուն) անցավ, խուփը գլորվեց (գլորավ) առավ պուպուկը:**

2) Անեծքներ, սպառնալիքներ՝ **գնաս չարով, չգաս քարով, ոտդ կոպր(վ)ի ջաղացի քարով** – գնալը լինի, գալը չլինի, **գլուխդ հողեմ, գլուխդ մեռնի, գեպինը մտնես** – մեռնես, թաղեմ (քեզ), **լեզուդ**

կարիր – լռի, **մեծ քիթն** (կտոր) **սկանջո կրողնեմ** – չարաչար կսպանեմ, խոշտանգամահ կանեմ:

3) Օրինանքներ, մաղբանքներ, փաղաքշական արտահայտություններ՝ **աչքի լույսով պառավես** – ծերության ժամանակ էլ դժվարություն չկրես, **Միմավոն ծերունի դառնաս** – շատ երկար ապրես, խոր ծերության հասնես, **մի քարջի ծերանաք** – երջանիկ ամուսնական կյանք վարեք, **գոգո լիքը** (լիկ) – շատ գավակներ ունենաս, **չոր քարին գնալիս՝ չոր քարն էլ կանաչի** – կյանքում ձախորդության չհանդիպես, **աչքիս վրա փեղ ունես** – իմ ամենապատվավոր հյուրն ես, պատրաստ եմ քեզ միշտ ընդունելու, **բերանից կաթի հոպ** կամ **կաթի համ է գալիս** – դեռ անփորձ է, դեռ երեխա է:

Բ) Երկրորդ խումբը կազմում են հաղորդակցական բնույթի այն դարձվածքային միավորները, որոնք իրենցից ներկայացնում են խոսակցական-կենցաղային կաղապարներ, ինչպես, օրինակ՝ **Աստված գիրե** – ոչ ոք չգիտես, հայտնի չէ. **գրպան(ներ)ունս մկներ են խաղում** – դրամ չունես, կամ՝ **սխորժակը ուրեխ է քացվում** – մի բան ճաշակելով կամ մի բանի տիրելով՝ հասնելով՝ ազատորեն ավելի շատի ձգտելը, **պարերն էլ սկանջ (սկանջներ) ունեն** – խոսակցությունն իմացվում է, լրատեսում են, **լեռը երկնեց՝ մուկ ծնեց** – մեկնաբանություններն ավելորդ են և այլն:

Դարձվածքային տարբերակներ

Նայերենում դարձվածքների մի զգալի մասը հանդես է գալիս իր մշտական, կայուն բառաբերականական միակ ձևով, ինչպես, օրինակ՝ **գլուխ փաթ, գլխի ընկնես, գլխի գցես, աչքի լույս, աչք դնես, աչք գցես, աչքով անես, սկանջ դնես, սկանջը լցնես, սիրտ անես, սիրտը կտորես:**

Դարձվածքների մյուս մասը, սակայն, հանդես է գալիս մեկից ավելի բառաբերականական տարատեսակներով, ինչպես, օրինակ՝ **Աստված չանի** և **Աստված ոչ անի**, **Աստված մի արասցես**, **գլուխը յուղել** և **գլուխը յուղ քսել**, **աչքին չհավապալ** և **աչքերին չհավապալ:**

Դարձվածքի տարբերակներ են համարվում նույն իմաստը և բաղադրիչների միևնույն, հաստատուն կազմն ունեցող այն դարձվածքները, որոնց բաղադրիչները նույն բառի քերականական տատեսակներն են և կան բարբառային, գրաբարյան և կան էլ փոխառյալ համագործերն ու համանշանակները:

Դարձվածքի կազմի մեջ մտնող բաղադրիչ բառերի հնչյունական տարբերակները դարձվածքի տարբերակի համար որևէ արժեք չեն ներկայացնում: Դարձվածքային տարբերակները, փաստորեն, դարձվածքը կազմող բառ-բաղադրիչների բառաքերականական փոփոխակներ են, որոնք որևէ ձևով չեն կարող ազդել դարձվածքի իմաստի, հուզաարտահայտչական գունավորման, ոճական կիրառության, նրա բաղադրիչների իմաստային ձուլվածության աստիճանի վրա: Հիշյալ առանձնահատկությունների առկայությամբ էլ դարձվածքային տարբերակները տարբերվում են դարձվածքային հոմանիշներից և դարձվածքների հոմանիշ գործածությունից:

Դարձվածքային տարբերակներ պետք է համարել միևնույն դարձվածքի հետևյալ տարատեսակները.

1) *Դարձվածքը կազմող բաղադրիչ բառի կամ բաղադրիչ բառերի քերականական տարբերակները.*

ա) Բաղադրիչ հոլովական տարբեր ձևերն ու կիրառությունները՝ **ապամների արանքից** և **ապամների արանքով, գլուխը քարը փայ, գլուխը քարին փայ** և **գլուխը քարովը փայ, արյունը գլուխը զարկել** և **արյունը գլխին զարկել** և այլն:

բ) Նույն բաղադրիչ բառի սեռական-տրական հոլովաձևով և անձականական ձևով գուգահեռ կիրառությունը՝ **Քարելոնի աշխարհակաշիություն կամ խառնակություն** և **քարելոնյան աշխարհակաշիություն կամ խառնակություն, կոկորդիլոսի արգաստրքներ** և **կոկորդիլոսյան արգաստրքներ:**

գ) Միևնույն դարձվածքի որևէ բաղադրիչ բառի հոդով և անհոդ գործածությունը, երբ չի փոխվում դարձվածքի իմաստը, ոճական կիրառությունը և այլն՝ **վիզ ծռել** և **վիզը ծռել, գլուխ դնել** և **գլուխը դնել**, բայց՝ **գլուխ փայ** «բարևել» և **գլուխը փայ** «գոհվել, սպանվել», որոնք տարբեր դարձվածքներ են:

դ) Դարձվածքը կազմող նույն բաղադրիչ բառի եզակի և հոգնակի գործածությունը, ինչպես՝ **արյունը աչքն առնել** և **արյունը աչքերն առել**, **աչքին չհավատալ** և **աչքերին չհավատալ**, **աչքիս վրա** և **աչքերիս վրա**, **աչքում յուղ լինել** և **աչքերում յուղ լինել**, **բերանի ջուրը գնալ** (կամ **վազել**) և **բերանի ջրերը գնալ** (կամ **վազել**):

ե) Երբ բայական բաղադրիչը արտահայտվում է պարզ և հարադիր ձևերով, ինչպես նաև տարբեր ժամանակներով, օրինակ՝ **գլուխը յուղել** և **գլուխը յուղ քսել**, **բութ դանակը շեռք կկտրի** և **բութ դանակը շեռք է կտրում**:

2) Նույն դարձվածքի արևելահայերեն և արևմտահայերեն ձևերը, որոնց բաղադրիչները տարբերվում են գրական լեզվի այդ երկու տարբերակներին յուրահատուկ բառաբերականական ձևերով ինչպես՝ արևելահայերեն՝ **գլխի գցել**, արևմտահայերեն՝ **գլխի չզել**, **խելքից-մտքից դուրս** և **խելքե-մտքե դուրս**, **խելքը գլխից հանել** և **խելքը գլխեն հանել**, **պատերն էլ սկանջ (ներ) ունեն** և **պատերն այ սկանջ (ներ) ունեն**, **մարով են հաշվվում** և **մարով կհամրվին**, **սպամները կտրել** և **սկռաները կտրել** և այլն: Այս կարգի դարձվածքների տարբերակները հիմնականում արտահայտվում են գրական լեզվի արևելահայ և արևմտահայ տարբերակներին բնորոշ միևնույն բառի քերականական, հնչյունական, բայական նույն ժամանակների կազմության, բառային հոմանիշների տարբերությունների առկայությամբ:

3) Նույն դարձվածքը ժամանակակից հայերենով և գրաբարի քարացած ձևերով, օրինակ՝ **Աստված ընդ քեզ** և **Աստված քեզ հեղ**:

4) Նույն դարձվածքը՝ կազմված գրական լեզվի կամ բարբառային բառապաշարին պարկանող բառերով կամ բառաշեղերով, ըստ որում այդ բաղադրիչ բառերը նույնանիշներ են և միմյանցով փոխարինելիս անփոփոխ է մնում դարձվածքի բառային ընդհանուր իմաստը, օրինակ՝ գրական՝ **արջ խաղացնող** և բարբառային՝ **արջ պար ածող** (սև, կեղտոտ՝ անշնորհք մարդ), (**մեկի**) **գլխին սառը ջուր լցնել** (կամ **մաղել**) և (**մեկի**) **գլխին սառը ջուր ածել** (մեկին հիասթափեցնել), **ավել(ի) պատառը** կամ **կտորը փոր(ը) չի ծակի** և **ավել(ի) քիթն փոր(ը) չի ծակի** (ակնկալվածից ավելի վաստակից չպետք է

հրաժարվել), **արևը վազը փեղ(ը) մայր մտալ** և **արևը փիս փեղ(ը) մեր մտալ** (աննպաստ պայմանների պատճառով անհաջողության հանդիպել), **աչքի սուրմա թոցնել** և **աչքի ծարիր թոցնել** (շատ ճարպիկ՝ վարպետորդի լինել, վարպետ գող լինել), **աչքին (աչքերին) փոշի փչել** և **աչքին (աչքերին) թոզ փչել** (խաբել), **գլխին ընկույզ կոտրել** և **գլխին կակալ** կամ **պոպոկ կոտրել** (մեկին փորձանքի բերել, գլխին նստել, իր քմահաճույքները պարտադրել):

5) **Երբ դարձվածքի բաղադրիչ բառերից մեկը (կամ մեկից ավելին) կարելի է փոխարինել գրական լեզվի նույն նշանակությունն ունեցող հոմանիչ բառով**, օրինակ՝ **աքիլլեսյան գարշապար** և **աքիլլեսյան կրունկ** (մեկի կամ մի բանի խոցելի տեղը), **ավզյան ախոռ** և **ավզյան գոմ** (խիստ կեղտոտված տեղ կամ անկարգ, թափփված գործեր), **Եվայի դուստր** և **Եվայի աղջիկ** (կին), **առած դառնալ** և **առակ դառնալ** (ասելիք՝ խոսելիք դառնալ, խոսակցության առարկա դառնալ, խայտառակվել):

6) **Երբ դարձվածքի բայական բաղադրիչը փոխարինվում է նրա հարադրավոր ձևով**, օրինակ՝ **Ասրված կյանքը երկարի – Ասրված կյանքը երկար անի** (երկար կյանքի, արևշատության բարենմադրություն), **մեկի ծափի տակ (ծափով) պարել – մեկի ծափի տակ (ծափով) պար գալ** (մեկի խորհրդով շարժվել, նրա կամքին ենթարկվել), **արյունը եռալ** կամ **եփվել – արյունը եռ գալ** կամ **եփ գալ** 1) շատ ժիր՝ գործունյա լինել, 2) ուժեղ ապրումներ ունենալ:

7) **Դարձվածքային տարբերակ պետք է համարել, ըստ երևույթին, նաև նույն դարձվածքի ամբողջական և կրճատ ձևերը**, որոնք ոմանց կողմից դիտվում են որպես դարձվածքային հոմանիչներ, օրինակ՝ **ամուսնական առագաստը պղծել** և **առագաստը պղծել**, **բարե-Ասրծու բարին կտրել – Ասրծու բարին կտրել**, **բախտի քմահաճույքին թողնել – բախտին թողնել**, (մեկի) **գլխին սև չյուն գալ – (մեկի) գլխին սև գալ**, (մեկի) **գլխին սառը ջուր լցնել** կամ **մաղել – (մեկի) գլխին ջուր լցնել** կամ **մաղել**, **գլխին գայլի ավերարան կարդալ – գլխին ավերարան կարդալ**:

Դարձվածքային տարբերակների իմաստային նույնությունը, այնուամենայնիվ, որոշ դեպքերում չի բացառում նաև նրանց ոճա-

կան-կիրառական տարբերությունների առկայությունը:

Դարձվածքային տարբերակները, այսպիսով, դարձվածքների բաղադրիչ բառերի քերականական կամ բառաոճային որոշ, ոչ մեծ տարբերությունների առկայությամբ դարձվածքներն են, որոնք, սակայն միևնույն իմաստն ունեն և փաստորեն նույն դարձվածքն են ներկայացնում: Դարձվածքային տարբերակներից էապես տարբերվում են դարձվածքային հոմանիշները, որոնց կազմում նույնպես առկա են ընդհանուր բաղադրիչ բառերը: Բաղադրիչ բառերի կազմում վերոհիշյալ հատկանիշների որոշակի տարբերություններն արդեն կարող են հասցնել տվյալ դարձվածքի հոմանշային գործածության կամ պարզապես դարձվածքային համանշության:

Դարձվածքային հոմանիշներ

Բառային հոմանիշների մման՝ հոմանիշներ պետք է համարել այն դարձվածքային միավորները, որոնք ունեն նույն կամ մոտ իմաստներ, բայց կարող են տարբերվել ոճական տարբեր կիրառություններով ու հուզաարտահայտչական գունավորումներով (երանգավորումներով) և որոշակի համատեքստերում կարող են փոխարինվել իրարով:

Իմաստների նույնության դեպքում այդ կարգի դարձվածքները, այնուամենայնիվ, իրարից կարող են տարբերվել կամ ոճական տարբեր կիրառություններով և գործառնություններով, կամ հուզաարտահայտչական զանազան գունավորումներով և երանգավորման աստիճաններով:

Իրականում հոմանիշ դարձվածքների փոխադարձ փոխարինելիությունը հնարավոր կարող է դառնալ միայն նրանց իմաստների նույնության դեպքում, ըստ որում՝ պետք է հաշվի առնվեն նաև նրանց ոճական կիրառությունները և շարահյուսական որոշակի կառույցներում նրանց գործառնությունները: Այստեղ հիմնական խոսքը պատկանում է համատեքստին՝ բառային այն միջավայրին, որի մեջ հանդես է գալիս դարձվածքային այս կամ այն միավորը: Դարձվածքային հոմանիշներ են՝ *ծալքը պակաս – ծուծը բարակ – ծուծը պակաս*

(պակասամիտ, թեթևալիկ), **կապից փախած – թոկից փախած – կապը կտրած** (լիրբ, անամոթ, անպատկառ), **երեսի ջուրը զնացած – երեսի քողը պատրած – պատրած բերան – հազար մաղով անց կացած – հազար մաղով հաց կերած** (լկտի, լպիրշ, անպարկեշտ, անհամեստ) և այլն: Բերված հոմանիշ դարձվածքները առանձին շարքերում թեև միևնույն իմաստն ունեն, բայց ցանկացած համատեքստում հնարավոր չէ նրանց փոխադարձ փոխարինելիությունը:

Հոմանիշ են այն դարձվածքները, որոնք՝ ա) իմաստով նույնն են կամ մոտ, բ) իրենց կազմով չեն նույնանում, գ) նույնն են իրենց բառաբերականական բնութագրմամբ:

Բառային արժեք ունեցող հոմանիշ դարձվածքային միավորներ: Դարձվածքային հոմանիշների մեջ իրենց ծավալով և կառուցվածքային առանձնահատկությամբ առանձին խումբ են կազմում բառային արժեք ունեցող կամ, ինչպես ընդունված է ստել, տրամաբանորեն հասկացություն արտահայտող դարձվածքային միավորները: Դրանք ծավալով ամենաբազմազանն են լեզվում: Ունենալով բառային արժեք՝ այդ դարձվածքները փաստորեն օժտված են բառիմաստային, քերականական և ոճական այն բոլոր առանձնահատկություններով, որոնք հատուկ են բառային միավորներին:

Այս կարգի դարձվածքային միավորների հոմանշային հարաբերությունների հիմնական առանձնահատկությունն այն է, որ դրանք հոմանիշների շարքեր կարող են կազմել ինչպես իրար, այնպես էլ իրենց համարժեք բառերի հետ:

Վերոհիշյալ կարգի դարձվածքային հոմանիշները հիմնականում կարելի է բաժանել **անվանական** (գոյականական, ածականական, մակբայական) և **բայական հոմանիշներին**:

Ա) Անվանական (գոյականական, ածականական մակբայական) դարձվածքային **հոմանիշներ:**

1) **Գոյականական և ածականական դարձվածքային հոմանիշներ՝ ձեռքը ծուռ – ձեռքից բաշ, աչքից ծարիր (սուրմա) բոցնող – աչքից մազ հանող** (գող), **ծալքը պակաս – տախտակը պակաս – կապարը դապարկ – վերնապուներ դապարկ – վերին հարկը դապարկ – խելքից բարակ – խելքից բոբիկ – խելքից պակաս – խել-**

քից ծարավ – խելքի բուն (հեզն.) – խելքի փոսպրակ (հեզն.) – կուտր պակաս (ժող.) (հիմար, ապուշ, անխելք), դարմանի փակի ջուր – մարմանդ գեպ – խուփ ու ծուփ, աչքով քար ճաքեցնող (պրաքեցնող) – փորի օշերի հեպ կոփոք, հոգին սաքանային ծախած – սաքանայի հեպ սոխ ու սիպոր ուտող – սաքանայից սիպորի հուր առնող – սաքանայից յոք օր շուր (կամ առաջ) ծնված – սաքանայի ծնունդ – սաքանային բնից հանող, ներսը սաքանա՝ դուրսը քահանա – ներսից (ներսեն) սաքանա՝ դրսից (դրսեն) սուրբ, սանամորը խաբող – ծուռ քամիով գնացող – գլխարկի փակ դներ պահող (նենգ, խարդախ, խաբեքա):

2) *Մակբայական դարչվածքային հոմանիշներ:* Սրանք, լեզվում փոքրաթիվ լինելով, իրար նկատմամբ հազվագյուտ դեպքերում են հոմանշային հարաբերության մեջ մտնում, օրինակ՝ *մի բերան – մի գլուխ* (շարունակ, անընդհատ): Այս կարգի դարձվածքները հիմնականում հոմանիշ են և հոմանշային հարաբերությունների մեջ են մտնում իրենց համարժեք, համանշանակ բառերի հետ, ինչպես՝ *աչքի վրա – սիրով, հոժարաբար, չեռքի փակից* կամ *չեռքի փակով – ծածուկ, գաղպնի, կրիայի քայլերով – դանդաղ, դանդաղաբար, դանդաղորեն, երկու փերողորմյա՝ մեկ ալելուխա – շքասպ, հասպնեպ, կիսապ-պոսպ* (կատարված գործ), *երկու քայլի վրա – մուր, էշի Չարկին – երբեք:*

3) *Բայական դարչվածքային հոմանիշներ:* Լեզվում այս կարգի դարձվածքային միավորների քանակային գերակշռության կապակցությամբ մեծ է նաև սրանց հոմանիշների բացարձակ քանակը, ինչպես նաև հարուստ ու բազմազան են դրանց հոմանշային կապերը ժամանակակից հայերենում: Բայական դարձվածքները նույնպես հոմանշային կապերի մեջ են մտնում ինչպես իրար, այնպես էլ իրենց համարժեք, համանշանակ բառի կամ բառերի հետ: Օրինակ՝ *բերան ծռել – գլուխ ծռել – վիզ ծռել – շլիկ ծռել* (բրբ.), *գոպկից կախ ընկնել – դեմ ընկնել, երես դնել – երես գցել, երես ծռել, երես մրել – երես սևացնել – երեսը քափել, երեսը բռշի երես շինել – երեսը գոմշի կաշի շինել – երեսը պնդել – երեսը դեմ անել – երեսը դեմ փայ, լեզու ածել – լեզու քափել – լեզու հանել, չեռք ու ոտք ընկնել*

– *նրներն ընկնել* (գռեհկ.) – *նորքը լիզել* – *նորքը պագնել* – *պորպոր գեպին քսել* – *պռունկը պատռել* – *փեշից կախ ընկնել* – *օջի լեզու քափել* (խնդրել, աղաչել, թախամձել աղերսել, պաղատել, աղաչել-պաղատել):

Այս կարգի հարուստ հոմանշային կապերից բացի՝ հայերենի բայական դարձվածքների մյուս մասն էլ հոմանշային հարաբերության մեջ է գտնվում համարժեք, համանշանակ բառերի հետ: Դրանք օժտված չեն այն հարուստ կապերով և ճյուղավորումներով, ինչ որ ունեն նախորդ կարգի բայական դարձվածքները: Օրինակ՝ *կանաչ-կարմիրը կապել* – *ամուսնացնել* (տղային), *կարիկիկն հույս փայլ չորել*՝ *ջուր դնել* – *սրիպել, հարկատրել, կրակի վրա յուղ ձեք քենզին կրակ ածել* կամ *լցնել* – *գրգռել, հրահրել* (մի բանի):

Իդիոմատիկ բայական դարձվածքների հիմնական առանձնահատկությունն այն է, որ նրանցում համեմատաբար փոքր թիվ են կազմում իմաստային նույնության հիման վրա կազմված հոմանշային կապերը: Ջգալի մասը, հետևաբար, իմաստների նրբերանգային տարբերություններով կառուցված հոմանիշներ են: Միայն ոճական և գործառական-կիրառական առանձնահատկություններով օժտված ոչ իդիոմատիկ դարձվածքների միջև հաստատված հոմանշային կապերը իմաստային նույնության և ոճական-կիրառական աննշան տարբերությունների վրա են հիմնված. ինչպես, օրինակ՝ *արյան քաղնիք* և *արյան ծով* (արյունահեղություն), *ողորմած հոգի* – *ննջեցյալ, երկնային քազավոր, երկնային դափավոր* (Աստված), *երկնային ջահ, երկնային լուսաբու* (արեգակ), *բահով փայտապով կարդալ խնացող (գիպցող)* – *գրի սեն ու սպիտակը ջոկող* (կիսագրագետ):

Մրանք մեծ մասամբ պատկերավոր արտահայտություններ, փոխաբերություններ և շրջասություններ են և գտնվում են իդիոմատիկ արտահայտություններ դառնալու ճանապարհին:

Որպես նախադասություն հանդես եկող հոմանիշ դարձվածքային միավորներ: Այս կարգի մեջ մտնում են ժամանակակից հայերենի դարձվածքային արժեք ունեցող առածները, ասացվածքները, թևավոր խոսքերը, դիպուկ արտահայտությունները, աֆորիզմները,

անծրքները, օրհնանքները, մաղթանքները՝ *գլորավ խուփը՝ գրավ (առավ) պուրուկը* և *կնունը գլորվել՝ խուփն է գրել* (ժող. խսկց.), *նման զնմանն սիրե, նման զնմանն գրանի* (գրք.) (վատ մարդիկ իրար լավ են հասկանում, իրար շուտ են գտնում), *մի ծաղկով գարուն չի գա, մի ծիծեռնակը գարուն չի բերի, մի ձեռքը ծափ չի փս* (մեկի՝ անհատի ջանքերով, մի եզակի օրինակով որևէ գործ կամ երևույթ չի իրականանա՝ հաջողությամբ չի պսակվի), *աջ ես, քե՞ չախ և փղա՞ ես, քե՞ աղջիկ* (կամ *աղջիկ ես, քե՞ փղա*) (գործի հաջող է, քե՞ անհաջող), *կրակը զնացել՝ մնացել է մոխիրը* և *հայհայը զնացել՝ վայվայն է մնացել* (խսկց.), (այլևս առաջվանը չէ, ծերացել է, առույգությունը, կենսախնդությունը կորցրել է), *բարե փաս՝ բարեկենդանին կգա և երես փաս՝ աստառ կուզի* (ամերեսի մեկն է):

Գարձվածքի հոմանշային գործածություն: Այն բոլոր դարձվածքները, որոնց բաղադրիչներից մեկը (կամ մի քանիսը) կարող են փոխարինվել որևէ հոմանիշով (կամ հոմանիշներով), պետք է դարձվածքի հոմանշային գործածություն համարել, ինչպես, օրինակ՝ *բերանում բան չի մնա* և *բերանում լոբի՝ ոսպ՝ սիսեռ չի թրջվի* (բացբերան է, զաղտնիք պահել չգիտե), *բոյիցդ էլ չես ամաչում* և *բոյիդ մտիկ* կամ *բոյիդ նայիր* (հանդիմանական արտահայտություն՝ մեծ ես, չափահաս ես, քեզ վայել չէ այդպիսի բան անել), *գեպը չփեսած բորիկանալ* կամ *գեպը չփեսած ոքները (ոքնամանները) հանել, գեպը չփեսած փկորանալ* (առանց հիմքի կամ նախապայմանի սկսել գործել, առանց լուրջ հիմքի՝ ժամանակից շուտ ոգևորվել), *գլխին լափ* կամ *շան լափ թափել* (լցնել, ածել), *գլխին լվացքաջուր թափել (լցնել, ածել)* (մեկին նախատել, պարսավել), *խոսքը մեկ անել* և *խոսքը մի աման դնել* (իրար հետ համաձայնության գալ, պայմանավորվել), *կյանքի չմեռ, կյանքի մայրամուտ, կյանքի վերջալույս* (ծերություն, կյանքի վերջին շրջանը):

Այս կարգի դարձվածքները միջին դիրք են գրավում դարձվածքային տարբերակների և դարձվածքային հոմանիշների միջև, դարձվածքային իմաստների նույնության պատճառով որոշակի համատեքստերում հնարավոր է դրանց ոչ ընդհանուր բաղադրիչների փոխադարձ փոխարինությունը:

Որոշակի տարբերություններ կան հոմանիշ դարձվածքների և դարձվածքների հոմանշային գործածության միջև: Վերջինս, դարձվածքների տարբերակների և հոմանիշների միջև մի երրորդ վիճակ ներկայացնելով, բնորոշվում է հետևյալ հատկանիշներով.

ա) դարձվածքի հոմանշային գործածության դեպքում հնարավոր է դարձվածքի փոփոխական բաղադրիչի փոխարինելիությունը, մինչդեռ հոմանիշ դարձվածքների բաղադրիչների փոխարինելիությունը բացառվում է,

բ) հոմանիշ դարձվածքների համար հիմնական հատկանիշ չէ կառուցվածքային նույնությունը, մինչդեռ դարձվածքների հոմանշային գործածության դեպքում պարտադիր է նրանց կառուցվածքային նույնատիպությունը՝ նրանց բաղադրիչների փոխարինելիությունը իրացնելու համար,

գ) հոմանիշ կիրառությամբ դարձվածքները հոմանիշ դարձվածքներին մոտ են իրենց ոճական-կիրառական նվազ կամ զգալի տարբերություններով, բայց հիմնականում տարբերվում են նրանով, որ արտահայտում են միևնույն իմաստը, գուրկ են իմաստային-նրբերանգային տարբերությունից:

Գարձվածքային համանուններ

Գարձվածքային համանունությունը բառային համանունության համեմատությամբ քանակապես խիստ սահմանափակ է և տարածվում է սահմանափակ թվով դարձվածքների վրա: Համանուն են կոչվում այն դարձվածքները, որոնք բացարձակապես նույնն են իրենց հնչյունաբառային կազմով, սակայն ունեն տարբեր իմաստներ, ժամանակակից լեզվաըմբռնողությամբ գիտակցվում են իբրև տարբեր դարձվածքային միավորներ: Ինչպես, օրինակ՝ **Գլխով անցնել**¹ – 1) մտածել, ծրագրել, 2) բաղձալ, տեղնչալ, ցանկանալ և **գլխով անցնել**² – պատահել, հանդիպել: **Աչքերը փակել**¹ – մեռնել, **աչքերը փակել**² – մեկին խաբել, մոլորեցնել, մոլորության մեջ գցել, **աչքերը փակել**³ – չնկատելու տալ, ուշադրություն չդարձնել:

Գարձվածքային համանունության առանձնահատկությունն այն է, որ այն հիմնականում ընդգրկում է բայական դարձվածքները:

Հայերենի ավելի քան 20 հազար դարձվածքային միավորների մեջ խիստ սակավ են այլ խոսքի մասերին պատկանող համանուն դարձվածքներ, ինչպես՝

Մի բերան¹ – 1) մի փոքր, մի քիչ, մի պատաս (ուտել), 2) մեկ անգամ (ասել):

Մի բերան² – անվերջ, անդադար, նույն բանը կրկնելով:

Մի բերան³ – խոսքը մեկ արած, միահամուռ, միաձայն:

Սաքանի բուրվառ¹ – ծխախոտ:

Սաքանի բուրվառ² – բանասարկու, բամբասասեր (անձ):

Սև սաքանա¹ – սևամորթ, խավիշիկ:

Սև սաքանա² – բանասարկու, խառնակիչ (մարդ):

Բառային համանունության նման, դարձվածքային համանունների առաջացման աղբյուրներն ու ուղիները տարբեր են:

Ժամանակակից հայերենում նրանց առաջացման հիմնական ուղին դարձվածքի բազմիմաստությունն է, երբ բազմիմաստ դարձվածքի իմաստներից մեկը (կամ մի քանիսը) այնքան է հեռանում մայր դարձվածքի հիմնական, առարկայական իմաստից (կամ իմաստներից), որ խախտվում է բազմիմաստ դարձվածքի իմաստային-տրամաբանական կապը, և ժամանակակից լեզվաըմբռնողությամբ նախկին իմաստը գիտակցվում և ընդունվում է իբրև ինքնուրույն դարձվածք իր անկախ իմաստով, օր.՝

Գլխով անցնել¹ – 1) մտածել, ծրագրել, 2) բաղձալ, տենչալ, ցանկանալ (մի բան):

Գլխով անցնել² – պատահել, հանդիպել (կյանքում):

ձեռք փալ¹ – 1) մեկին դիպչել, նեղացնել, վնասել, 2) խլել, յուրացնել:

ձեռք փալ² – 1) օգնել, սատարել, 2) ձեռքը սեղմել՝ ի նշան բարեկամության, 3) բարևել:

ձեռք փալ³ – 1) ձեռնտու՝ շահավետ լինել, 2) փոխադարձ համաձայնության գալ:

Դարձվածքային համանունության առաջացման համար էական նշանակություն կարող են ունենալ նաև դարձվածքի բաղադրիչների կամ բաղադրիչներից մեկի իմաստային, ինչպես նաև բաղադրիչների

շարահյուսական-գործառական տարբերությունները, որոնց շնորհիվ նույն բաղադրակազմն ունեցող դարձվածքային միավորները ձեռք են բերում տրամաբանորեն և ծագումնաբանորեն իրար հետ չառնչվող իմաստներ, հետևաբար և գիտակցվում են իբրև ձևով նույն, բայց բովանդակությամբ տարբեր դարձվածքներ: Օրինակ՝

Կործք գալ¹ – 1) կրծքով կերակրել (երեխային), 2) սնել, սնունդ տալ:

Կործք գալ² – դիմադրել, դիմագրավել, պաշտպան կանգնել:

Հացը կտրել¹ – մեկին սեղանակից լինել, հյուրասիրվել մեկի կողմից:

Հացը կտրել² – մեկին ապրուստից զրկել, մեկի ապրուստի միջոցը խլել:

Գրպանը դնել¹ (մեկին) – 1) մեկին գերազանցել, մեկի նկատմամբ բացարձակ առավելություն ունենալ, 2) խաբել:

Գրպանը դնել² (մի բան) – յուրացնել, սեփականել, գրպանել:

Չեռք քաշել¹ – 1) մի բանից հրաժարվել, 2) մեկին՝ մի բան հանգիստ թողնել:

Չեռք քաշել² – ստորագրել:

Դարձվածքների բուն համանուններից էապես տարբերվում է նույն բաղադրակազմն ունեցող դարձվածքի և բառակապակցության՝ իբրև բառաիմաստային տարբեր միավորների, համանունությունը, ինչպես, օրինակ՝

Երեսը բռնել¹ – 1) չամաչել, հանդգնել, 2) շփանալ, երես առնել:

Երեսը բռնել² – երեսը ծածկել՝ փակել:

Աչքը բացել¹ – գիտակցության գալ:

Աչքը բացել² – աչքը բաց անել:

Քար կտրել¹ – 1) ապշել, ապշահար լինել, 2) անշարժանալ, 3) կարծրանալ:

Քար կտրել² – քար(ը) հատել:

Չեռք քաշել¹ – 1) հրաժարվել, 2) մեկին՝ մի բան հանգիստ թողնել:

Չեռք քաշել² – մի բանի վրայից ձեռքը ետ տանել:

Դարձվածքային հականիշներ

Դարձվածքների հականշտությունը հոմանշության հակառակ երևույթն է:

Հականիշ են կոչվում այն դարձվածքները, որոնք ունեն հակառակ՝ հակադիր բառային իմաստներ:

Դարձվածքային հականշտության առանձնահատկությունն այն է, որ.

ա) հարաբերակցվում են միևնույն բառաբերականական կարգին պատկանող, նույն խոսքի մասին հարաբերակից դարձվածքները և հիմնականում բայական, մասամբ նաև՝ ածականական ու մակբայական դարձվածքային միավորները: Օր.՝ **աչք բացել** և **աչք փակել**, **չեռքը բաց** (առատաձեռն, շռայլ) և **չեռքը փակ** (ժլատ, կծծի).

բ) լեզվում իմաստային-տարբերակիչ հատկանշից բացի՝ ունեն ռճական-կիրառական արժեք:

Սովորաբար հականշային հարաբերության մեջ են մտնում այն դարձվածքները, որոնք ունեն բաղադրիչների նույնական կազմ՝ բացառությամբ մեկական բաղադրիչի՝ յուրաքանչյուր դարձվածքում: Այդ դեպքում դարձվածքային հականշտություն առաջանում է տարբեր բաղադրիչ բառերի հականիշ իմաստների շնորհիվ:

Օր.՝ **Աչքը դռանը** (ամուսնական ուխտին չդավաճանող, ամուսնական կյանքին հավատարիմ տղամարդ) և **աչքը դուրսը** (ամուսնական ուխտին դավաճանող, ամուսնական կյանքին անհավատարիմ): **Ուրքը քեքի** (զալուստը բարի, նպաստավոր) և **ուրքը ծանր** (զալուստը չարագուշակ՝ անբարեհաջող): **Չեռքը բաց** (առատաձեռն) և **չեռքը փակ** (ժլատ): **Աչքի լույս** (սիրելի, պաշտելի, թանկագին (անձ) և **աչքի գրող** – (ատելի, անտանելի): **Ասործու գառ** (խելոք, հեգ) և **Ասործու կրակ** (չար, անհանգիստ):

Ժամանակակից հայերենում դարձվածքային հականշտության առաջացման միջոց կարող է համարվել նաև հնչերանգը: Տարբեր հնչերանգի շնորհիվ (դրական և հարցական) նույն դարձվածքի իմաստը կարող է ընկալվել կա՛ն դրական, կա՛ն ժխտական նշանակություններով: Օրինակ՝ **գլխին խելք** (միտք) **մնալ** – և **գլխին խելք**

**(միտք) մնա՞լ: Գլխում խելք կա – գլխում խելք կա՞: Չեռքը քարի
փակին լինել – չեռքը քարի փակի՞ն լինել** և այլն:

Գրական լեզվի արևելահայ և արևմտահայ տարբերակների դարձվածքներ

Ժամանակակից հայոց լեզվի դարձվածքային կազմը բաղկացած է հիմնականում արդի գրական լեզվի արևելահայ և արևմտահայ տարբերակների, բարբառների և գրաբարի դարձվածքներից: Այնուամենայնիվ, դարձվածքների հիմնական զանգվածը վերաբերում է գրական լեզվի արևելահայ տարբերակին: Որոշակի թիվ են կազմում նաև արևմտահայ և բարբառային դարձվածքները:

Արևելահայ գրական լեզվի դարձվածքները իրենց մեջ ներառում են հայերենի ինչպես բնիկ, այնպես էլ պատճենված դարձվածքների ամբողջությունը և գրական լեզվում չունեն գործածության որևէ սահմանափակում:

Արևմտահայ գրական լեզվին են վերաբերում այն դարձվածքները, որոնք կազմված են արևմտահայերենի բառային կամ քերականական օրինաչափություններով:

Արևմտահայ գրական լեզվի դարձվածքներն ունեն տարբերակիչ հետևյալ հատկանիշները.

ա) Արևմտահայ գրական լեզվի քերականական տարբեր ձևերով կազմված դարձվածքներ: Սրա հիմքում ընկած է գրական լեզվի երկու տարբերակների թեքման ձևերի տարբերությունը: Օրինակ՝ արևմտահայերեն՝ **խելքե(ն)-մտքե(ն) դուրս**, արևելահայերեն՝ **խելքից-մտքից դուրս**, **խելքը պատկել** և **խելքում պատկել**, **սրտին խորը (խորքը, խորքին մեջ)** և **սրտի խորքում**, **աչքե ու երեսե ինկած** և **աչքից ու երեսից ընկած**, **Աստվածնիդ սիրեք (կսիրեք)** և **(քե) Աստված(դ) կսիրես**, **աչքե ծածկել** և **աչքից ծածկել**, **գլխե հանել – գլխից հանել**:

բ) Նույն դարձվածքի կազմում բաղադրիչ բառերի տարբերություններ, որոնք արևմտահայերենում և արևելահայերենում նույն կամ մոտ իմաստներ ունեն: Օրինակ՝ **աչքը գոց** և **աչքը փակ**, **աչք(ը)**

գոցել և աչք(ը) փակել. աչք նեփել – աչք գցել. ակռա սրել և արամ սրել. ակռային զարնել – արամին փայ, արամի փայ. աղեկ աչքով նայել – բարի աչքով նայել. ասդին-անդին ընկնել (խնայ) – այս կողմ այն կողմ ընկնել. գլուխը պաղ ջուր լցնել – գլուխը սառ ջուր լցնել. սևին ճերմակ ըսել և սևին սպիտակ սսել:

գ) Միայն արևմտահայերենում գործածվող դարձվածքներ, որոնց մի մասը իր հոմանիշներն ունի արևելահայերենում. ինչպես, օրինակ՝ *ամասական կապել – ռոճիկ նշանակել, սպուր ուրել – հանցանք, անթույլսպրելի բան կապարել. առալ-փախավին մեկը – սրահակ, սրիկա, արկածախնդիր. դաշնակ զարնել – դաշնամուր նվագել, դրամ կոխել – դրամ կտրել. դրամ պարարասպել, դրամ շինել – դրամ վաստակել, Թաթուլին զալածոչ(ը) – 1) չավագանցեցված հյուրասիրություն, 2) մի բան զոռով մեկի վզին փաթաթելը, պզպիկ ընկնել կամ մնալ – ամոթով մնալ, սրորանալ, պզպիկ թողուլ կամ չզել – ամոթով թողնել, սրորացնել, պզպիկ մարից հանել – մի բան անելը հեշտ լինել, լավ գիրենալ:*

ԲԱՌԱՐԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*Բառարանագրությունը*¹⁵² լեզվաբանության մի բաժինն է, որն զբաղվում է բառարաններ կազմելու գործնական և տեսական խնդիրներով: Բառարանագրությունը երկար ժամանակ միայն գործնական աշխատանք էր, որով զբաղվում էին ոչ միայն լեզվաբանները: Եվ միայն անցյալ դարի 40-ական թվականներին այն սկսեց ձևավորվել իբրև լեզվաբանական առանձին գիտակարգ: Այսօր հայ լեզվաբանության մեջ տարբերակում ենք գործնական բառարանագրությունը բառարանների կազմության տեսական հարցերով զբաղվող գիտությունից: Այս վերջինը կոչվում է *բառարանագիտություն*: Այսպիսով, *բառարանագրությունը*¹⁵³ կիրառական գիտաճյուղ է և անմիջականորեն զբաղվում է տարբեր տիպի բառարանների կազմությամբ, իսկ *բառարանագիտությունը* առաջադրում և լուծում է բառարանների կազմության ընդհանուր և մասնակի սկզբունքների վերաբերյալ այլևայլ հարցեր, ինչպես նաև զբաղվում է բառարանագրության պատմությամբ¹⁵⁴:

Բառարանագրությունը առանձնապես սերտ կապեր ունի լեզվի մասին գիտության հետևյալ բաժինների հետ՝ բառագիտություն, իմաստաբանություն, ստուգաբանություն, ոճաբանություն, որոնց

¹⁵² *Բառարանագրություն* բառը օտար *լեքսիկոգրաֆիա* տերմինի հայերեն պատճենումն է: Ծագում է հունարեն *λεξικόν*, *lexikon* — «բառին վերաբերող, բառային» և *γράφω*, *grapho* — «գրում եմ» ձևերից:

¹⁵³ *Բառարանագրություն* բառն ունի ևս մեկ իմաստ, այն է՝ «որևէ լեզվի բառարանների ամբողջությունը. *XIX դարի հայ բառարանագրություն, ռուս-հայերեն բառարանագրության պատմություն* և այլն» (ի դեպ, այս իմաստը չի գրանցված հայերենի բացատրական ոչ մի բառարանում):

¹⁵⁴ Բառարանագրության և բառարանագիտության տարբերակման մասին առավել մանրամասն տե՛ս *Աղայան էղ.*, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 357: *Նույնի* Լեզվաբանության հիմունքներ, Երևան, 1987, էջ 437-438: *Համբարչումյան Վ.*, Ավանդակներ հայ բառարանագրության պատմության, Երևան, 2006, էջ 12-15:

տեսական ուսումնասիրությունները և գործնական արդյունքները օգտագործվում են բառարանների կազմության ժամանակ, իսկ շատ հաճախ էլ այս գիտաճյուղերն իրենց քննությունները կատարում են՝ հենվելով բառարանների տվյալների վրա:

ա) *Բառարանագրությունը և բառագիտությունը*: Այս երկու գիտաճյուղերի՝ բառարանագրության և բառագիտության ուսումնասիրության ընդհանուր օբյեկտը բառն է՝ իր իմաստով և գործածությամբ: Ինչպես հայտնի է, բառագիտությունն ուսումնասիրում է լեզվի բառային կազմի՝ բառապաշարի և ընդհանրապես բառի ընդհանուր օրինաչափությունները, բառի և բառապաշարի տեսական հարցերը՝ ժամանակակից փուլում և պատմական զարգացման ընթացքում:

Բառարանագրությունը թեև նույնպես գործ ունի բառի և լեզվի բառապաշարի հետ, բայց որպես բառարաններ կազմելու արվեստ՝ կիրառական գիտություն է, հետապնդում է բառի նկարագրության, նրա գործնական-կիրառական և բառապաշարի համակարգման ու յուրացման կոնկրետ նպատակներ, հիմնականում օգտագործում է բառագիտության տեսական հարցերի ուսումնասիրության բնագավառում ձեռք բերված նվաճումները:

բ) *Բառարանագրությունը և իմաստաբանությունը*: Բառարանագրությունը սերտորեն առնչվում է իմաստաբանության հետ: Իմաստաբանությունն զբաղվում է լեզվի և մասնավորապես բառերի իմաստային ընդհանուր գործընթացների և նրանց դասակարգման հարցերով: Իմաստաբանության, որպես տեսական գիտության, ուսումնասիրության նյութը բառի իմաստն է, նրա տեսակներն ու տիպերը, դրանց զարգացման արդի և անցյալ վիճակները, նրանց փոփոխության պատճառները, բառի ձևի և իմաստի փոխհարաբերությունը՝ հոմանշության, համանունության, հականշության հարցերը, վերջապես իմաստաբանական վերոհիշյալ երևույթների օրինաչափությունները:

Բառարանագրության նպատակն է բառիմաստների բացահայտումն ու նկարագրությունը և որոշ դեպքերում մաս երկու և ավելի լեզուներում իմաստային համանշանակների որոնումն ու արձանագրումը:

Բառարանագրի աշխատանքը հնարավոր չէ պատկերացնել առանց իմաստաբանական օրինաչափությունների օգտագործման և իմաստաբանական ուսումնասիրությունների արդյունքների հաշվառման: Մյուս կողմից, իմաստաբանությունն իր հեռքին, իբրև տեսական գիտություն, իր ուսումնասիրության, տեսական ընդհանրացումների համար որպես հիմք է օգտագործում բառարանագրի հավաքած, խմբավորած և համակարգման ենթարկած փաստական հարուստ նյութը:

Բառարանագրի աշխատանքի դժվարությունն այն է, որ բազմաթիվ համատեքստերի հիման վրա տալիս է լեզվի տասնյակ հազարավոր բառերի ընդհանուր գործածական իմաստների և նրբիմաստների տարբերակումը (որոնց ընդհանուր քանակը կարող է միլիոնի հասնել), ինչպես նաև այդ իմաստների առանձին-առանձին մեկնությունն ու նկարագրությունը, կամ մեկ այլ լեզվի կամ մի քանի լեզուների համապատասխանությունները:

գ) *Բառարանագրությունը և ստուգաբանությունը*: Ստուգաբանությունը որպես բառերի ծագման, նրա ցեղակցական և փոխառական կապերի բացահայտման գիտություն, այն չափով է առնչվում բառարանագրությանը, որքանով նպաստում է բառարանագրին՝ յուրացնելու նրա հիմնական աշխատանքը: Բացառությամբ ստուգաբանական հատուկ բառարանների, տարբեր տիպերի և տասնյակ տեսակի բառարանների կազմության ընթացքում բառարանագիրը խիստ անհրաժեշտության դեպքում միայն կարող է օգտագործել ստուգաբանական ուսումնասիրությունների արդեն պատրաստի արդյունքները (հատկապես՝ որոշ կարգի բացատրական և օտարազգի բառերի բառարաններում): Բառարանագրի աշխատանքի ընթացքում հաճախ հնարավոր է լինում բաղադրյալ բառերի բաղադրիչների (արմատների կամ ձևույթների) իմաստային տարրերի տարրալուծմամբ բացատրել որևէ բաղադրյալ բառի իմաստը, ինչպես, օրինակ՝ *մյուս < մի ես, այժմ < այս ժամ, ովևե < ով ես է, ինչևէ < ինչ ես է, հեռուարացույց < հեռ-ուար-ս-ցույց, չորանոց < չոր-անոց, խորովածանոց < խորով-ած-անոց, գրապահպարակ < գր-ս-պահպարակ*:

Մյուս կողմից, իմաստային տարրերի կամ բաղադրիչների տար-

րալուծման շնորհիվ բաղադրյալ բառերի վերծանման մասն եղանակը հաճախ կարող է թյուրիմացությունների պատճառ ծառայել: Օրինակ՝ *մեծասրուն* չի նշանակում «մեծ տուն», այլ՝ «հարուստ»: Նույն մեթոդով չի կարելի բացատրել *մեղրամիս*, *սրբակեր* և այլ բառերը, ինչպես նաև դարձվածաբանական միավորները: Բառի միայն ստուգաբանության հաշվառումով նրա բառային իմաստի մեկնության, հնարավոր սխալների և թյուրիմացությունների առաջացման օրինակները կարելի է շարունակել. այսպես, օրինակ՝ *երկրաբանություն*, *երկրաբաշխություն*, *երկրաչափություն*, *աշխարհագրություն* բառերը պատմական զարգացման ընթացքում այնքան են հեռացել իրենց բաղադրիչների բառային իմաստներից, որ հնարավոր չէ դրանց յուրաքանչյուրի ընդհանուր իմաստը մակաբերել իրենց բաղադրիչների առանձին իմաստներից:

Մասնագետները գտնում են, որ ստուգաբանությունը բացատրական բառարաններում պետք է բավարարի հետևյալ երկու պահանջները. ա) պետք է հեռանալ բառիմաստի մեկնության անմիջական աղբյուրից, բ) բառարանում պետք է տրվեն միայն վերջնականապես հաստատված ստուգաբանությունները: Ընդհանրապես պետք է հրաժարվել բառի ստուգաբանության մասին եղած կարծիքների և վարկածների շարադրանքից, գ) անհրաժեշտ է ստուգաբանական աշխատանքը ընդհանրապես առանձնացնել բառարանագրական աշխատանքներից, դ) միաժամանակ չի կարելի ամբողջովին հրաժարվել ստուգաբանությունից, անհրաժեշտ է որոշակի սահմանագծել ստուգաբանության տեղը բացատրական բառարաններում:

դ) *Բառարանագրությունը և ոճաբանությունը*: Բառապաշարի բնագավառում ոճաբանության խնդիրը բառերի գործածության գնահատման ընդհանուր օրինաչափությունների բացահայտումն է, լեզվի արտահայտչական միջոցների վերլուծությունը:

Բառարանագրությունը, հիմնվելով ոճաբանության նշած և լեզվի կողմից ընդունված օրինաչափությունների վրա, գործնականորեն արձանագրում է դրանք լեզվի բառային կազմի մեջ մտնող յուրաքանչյուր բառի համար, նշում՝ բառին համարժեք իմաստային միավորների գործածության ձևերը, հանգամանքներն ու ոլորտները:

Բառարանագրին, փաստորեն, հետաքրքրում են ոչ թե անհատական ոճերը, այլ համաժողովրդական ազգային լեզվի ոճական օրինաչափությունները: Բառարաններում արձանագրվում են բառերի և դարձվածքային միավորների մեջ պարունակվող զգայական և պատկերավոր տարրերը, այսինքն՝ հուզաարտահայտչականությունը, որն արտահայտվում է բառի մեջ համակրական կամ հակակրական, փաղաքշական կամ արհամարհական, հեզմական կամ կատակային և այլ երանգների ձևով, ինչպես նաև կատարվում է բառերի և դարձվածքների՝ ըստ գործածության տարբեր ոլորտների, լեզվի զարգացման տարբեր փուլերի, բառապաշարների տարբեր խմբերի դասակարգումն ու նկարագրությունը:

Այդ կապակցությամբ բառարաններում լեզվի բառային ընդհանուր կազմից հատկորեն, հատուկ նշումներով առանձնացվում են մի կողմից՝ հուզաարտահայտչական որևէ երանգ ունեցող բառերն ու դարձվածքային միավորները, մյուս կողմից՝ բարբառային (զավառական), ժողովրդախոսակցական, գրքային, բանաստեղծական, կենցաղային, ժարգոնային, զբաղմունքային-տերմինաբանական, հնացած, հին և հազվադեպ գործածվող բառերը, որոնք հակադրվում են լեզվի չեզոք կամ միջոճային բառապաշարներին:

Այդ բոլորից հետևում է, որ բառարանագիրը պետք է օժտված լինի հանրագիտական ընդունակություններով, գիտական լայն մտահորիզոնով: Այնուհետև, գործ ունենալով տասնյակ, հարյուր հազարավոր լեզվական փաստերի հետ, պետք է հավասարապես հմուտ լինի լեզվի գիտության համարյա բոլոր բաժիններում, հատկապես՝ բանագիտության, իմաստաբանության, ստուգաբանության, ոճաբանության, դարձվածաբանության, ինչպես նաև քերականության, ընդհանուր, համեմատական և համադրական լեզվաբանության մեջ, ընդհանուր գաղափար պետք է ունենա նաև գիտության ու տեխնիկայի տարբեր ճյուղերի, անգամ՝ արտադրության գործընթացների մասին:

Բառարանների տիպերը

Այսօր հրապարակի վրա եղած բառարանները շատ բազմազան են: Դրանք տարբերվում են թե՛ իրենց նշանակությամբ, թե՛ իրենց ծավալով (գրպանի փոքրիկ բառգրքույկներից մինչև բազմահատոր աշխատություններ), թե՛ ընդգրկած լեզվական նյութի բազմազանությամբ և այն մատուցելու եղանակներով ու սկզբունքներով: Լեզվաբանական գրականության մեջ կատարված են բառարանների դասակարգման տարբեր փորձեր, ընդունված են տարբեր չափանիշներ: Ներկայացնենք դրանցից հիմնականները¹⁵⁵:

Ա) Բառարանները նախ և առաջ բաժանվում են երկու հիմնական տեսակի՝ *ոչ լեզվաբանական* կամ *հանրագիտական բառարաններ* և *լեզվաբանական* կամ *բանասիրական բառարաններ*: Այս բաժանումը կատարվում է ըստ նրանցում ներկայացվող ու նկարագրվող նյութի: Հանրագիտական բառարաններում (հանրագիտարաններում) բացատրվում են ոչ թե բառերը, այլ իրույթները (ոճալիաները), այսինքն՝ ինչ-որ հասկացություն, առարկա, երևույթ, պատմական փաստ և այլն: Հանրագիտարաններում տեղեկություններ են տրվում նաև մարդկային գործունեության այլևայլ բնագավառների հանրահայտ դեմքերի մասին: Այս ամենն արտահայտվում է, իհարկե, բառերով, բայց, կրկնենք, այս տիպի տեղեկատու ձեռնարկներում բացատրվում են ոչ թե բառերը, այլ դրանցով արտահայտվող հասկացությունները: Սրանք հասկացությունների բառարաններ են՝ ի տարբերություն լեզվաբանական բառա-

¹⁵⁵ Բառարանների դասակարգման առաջին գիտական փորձը կատարել է ռուս լեզվաբան Վ. Շչերբան 1940 թ. գրած «Բառարանագրության ընդհանուր տեսության փորձ» հոդվածում (տե՛ս *Шерба Л. В., Языковая система и речевая деятельность, Ленинград, 1974, с. 265-304*): Բառարանների դասակարգման մասին տե՛ս նաև *Միլյանսկի էր., Ընդհանուր և հայկական բառագիտություն, էջ 357: Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1990, էջ 357-360: Головин Б. Н., Введение в языкознание, Москва, 1973, с 117-122. Маслов Ю. С., Введение в языкознание, Москва, 1975, с 147-156. Козырев В. А., Черняк В. Д., Русская лексикография, Москва, 2004, с. 30-38. Ступин Л. П., Лексикография английского языка, Москва, 1985, с. 12-18. [Մենք հիմնականում առաջնորդվել ենք այս վերջին հրատարակության մեջ ընդունված սկզբունքներով ու չափանիշներով]:*

րանների, որոնք բառերի բառարաններ են: Ահա այս պատճառով է նաև, որ հանրագիտարանների բառացանկերում չկան դերանուններ, վերաբերականներ, կապեր և շաղկապներ, շատ քիչ են անկաններն ու մակբայները, նաև բայերը (սրանք հանդիպում են հիմնականում բառակապակցությունների մեջ): Հանրագիտարաններում բացահայտորեն գերակշռում են տերմինային արժեք ունեցող գոյականները, այդ թվում նաև հատուկ անունները:

Բ) Լեզվաբանական բառարաններում բացատրվում, մեկնաբանվում, քարգմանվում են բառերը: Այս բառարաններում կան տեղեկություններ նաև բառի քերականական հատկանիշների, ուղղագրության, արտասանության, ծագման մասին, նշվում նրա ոճական պատկանելությունը և այլն: Սրանցում ամփոփված բառերը չունեն խոսքիմասային որևէ սահմանափակում: Այս երկու տիպի բառարաններում նույնիսկ համընկնող բառերն ունեն տարբեր մեկնություններ: Եվ սա բնական է, քանի որ հանրագիտարաններում տրվում են տեղեկություններ առարկաների, երևույթների, հասկացությունների մասին, իսկ լեզվաբանական բառարաններում բացատրվում են դրանք անվանող բառերը:

Համեմատենք, թե ինչպես են ներկայացված **ծիսծան** և **մագաղաթ** բառերը հանրագիտարաններում և բացատրական բառարաններում:

<p>ԾԻԱԾԱՆ, օպտիկական երևույթ մթնոլորտում. ունի երկնականարով ձգվող բազմերանգ աղեղի տեսք: Դիտվում է այն դեպքում, երբ Արեգակի ճառագայթները լուսավորում են անձրևի կաթիլներով գոյացած ծածկույթը, որը գտնվում է երկնքի՝ Արեգակին հակադիր կողմում: [Հայերենում այս երևույթն ունեցել է</p>	<p>ԾԻԱԾԱՆ, <i>ի, գ. 1.</i> Երկնքում երվներանգ կամարածև շերտ, որ առաջանում է անձրևի կաթիլների մեջ արևի ճառագայթների բեկման շնորհիվ. աղեղնակ, կանաչ-կարմիր: <i>Երբեմն անչրևում էր, և այդ ժամանակ երկնով մեկ կամար էր կապում ծիսծանը (Բ): Ասես ծիսծանի պես կամորջ կապվեց, և չաաված</i></p>
--	---

<p>նաս ծիածանի գոտի, տիրական կամ տիրական գոտի (Տիր աստծու անունով), աստվածակամար (ըստ Անանիա Շիրակացու), Աստվածածնի գոտի անվանումները]: Ծ-ի կենտրոնն ընկած է Արեգակի սկավառակով և դիտորդի աչքով անցնող ուղղի վրա: Ծ-ի գույների հաջորդականությունն այնպիսին է, ինչպիսին արեգակնային սպեկտրինը, ընդ որում, արտաքին շերտը սովորաբար լինում է կարմիր, ներքինը՝ մանուշակագույն: Ներքին շերտի կողմից երբեմն երևում են գլխավոր Ծ-ին հարող երկրորդային գունավոր աղեղներ: Ծ-ին նման երևույթ կարելի է դիտել ջրվեժներից և շատրվաններից գոյացած շաղերում: Ծ կարող է առաջանալ նաև Լուսնի և լույսի արհեստական աղբյուրների շնորհիվ: Ծ-ի առաջացումը բացատրվում է անձրևի զնդածն կաթիլներում Արեգակի ճառագայթների բեկման, անդրադարձման երևույթներով, որոնք ուղեկցվում են ալիքների տարբեր երկարության ճառագայթների դիֆրակցիայով և ինտերֆե-</p>	<p><i>խոսքեր կամրջի վրայով սրբից սիրտ անցան (ԱԲ): 2. Այդպիսի փոքր շերտ, որ առաջանում է արևի ճառագայթների հայելու՝ ապակու՝ թանկագին քարերի մեջ բեկվելուց: Արամյանը մեջքով հենվեց պարիսն ու նայեց դիմացի պարուհանին, ուր արևը ծիածաններ էր նկարում (ԲԿ): 3. (կզմիս.) Աչքի անթաթաղանթի այն մասը, որ տեղադրված է եղջերաթաղանթի ու նսպնյակի միջև, և որի գույնից կախված է աչքի գույնը. ծիածանաթաղանթ: 4. փխբ. Երջանկություն, ուրախություն: Ու բացվեց հսկարծ միզամած հեռուն՝ քո ջինջ աչքերում պայծառ ծիածան (ԵԶ): Դու չիմացար, որ կյանքիս ծիածանները բոլոր հյուսված էին քո սիրուց, շողում էին քեզ համար (ՆԶ): Եվ տեսնում ենք ահա արդեն ծիածան Մենք ազար, լուսավոր մի նոր վիճակի (ՀՀ): 5. ա. Ծիածանանման, ծիածանագույն: Ձեր աղբյուրներն անմահական, ծաղիկները ծիածան (Սրմ.): «Մ ե կ ի վր ա՝ գ լ խ ի ն ծ ի ա ծ ա ն բ ա ց վ ե լ – երջանկանալ, գործերը</i></p>
---	--

րենցիայով: Որքան կաթիլները խոշոր են, այնքան մաքուր և հազեցած են Ծ-ի գույները:

(Հայկական սովետական հանրագիտարան, հտ. V, էջ 124)

ՄԱԳԱՂԱԹ, մ ա գ ա - ղ ա տ (ասոր. Մ. նշանակում է գալարված մատյան), կաշվից պատրաստված գրանյութ: Ըստ հուն. ավանդության ստեղծվել է փոքրասիական Պերգամոն քաղաքում, թագավոր Եվմենես II-ի (մ.թ.ա. 197-160/159) օրոք: Քաղաքի անունով կոչվել է պերգամենոս: Հայերը կիրառել են «Մ.» անվանումը: Մ-ի համար օգտագործվել է մանր և խոշոր եղջերավոր մատղաշ անասունների մորթին: Մշակվել է տարբեր եղանակներով, որոնց ղեղատոմսերը պահպանվել են հայ. բազմաթիվ ձեռագրերում: Հայերը մինչև VIII-IX դդ. օգտագործել են Մ., այնուհետև՝ նաև թուղթ, որը գնալով տիրապետող է դարձել: Հայ ամենամեծ մագաղաթե ձեռագիրը «Մշո նառընդիրն» է [55,3 x 70,5

հաջող գնալ, հաջողության մեջ ընկնել: *Կարծում ես, թե քու բացակայության մեր մռայլ երկնքում պայծառ ծիածան է բացվել իմ գլխին* (ՀԹ): Ծ ի ա ծ ա ն կ ա պ ե լ – 1) ծիածան առաջանալ: 2) երջանկություն, ուրախություն բերել: *Մեր քրտինքը զուլալ, սրբազան կկապե պայծառ ծիածան* (ԵՉ): Ծ ի ա ծ ա ն ի գ ու յ ն եր ո վ ն եր կ ա յ ա գ - ն ե լ` պ ա տ կ եր ե լ` պ ա տ - կ եր ա գ ն ե լ – որևէ բան խիստ դրական բնութագրությամբ ներկայացնել: *Սենսյորը փորձում էր ծիածանի գույներով պարկերել ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների գործերի վիճակը Վիետնամում* (Մամուլ):

(Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հտ. III, էջ 667)

ՄԱԳԱՂԱԹ, *ի, գ. 1.* Կենդանիների (առավել. հորթի, այծի և այլն) հատուկ եղանակով մշակվող մորթի, որ գործածվում է գրելու համար՝ որպես թուղթ: 2. *փխբ.* Մագաղաթագույն բան, դեղ-

<p>ամ` 660 (այժմ` 620) քերթ] պատրաստված արջառի և երինջի կաշվից. ամենավորը լուցկու տուփից փոքր է, պատրաստված` նորածին ուլի մորթուց:</p> <p>(Հայկական համառոտ հանրագիտարան, հտ. III, էջ 509)</p>	<p>նած` դալուկ բան: 3. <i>փիւք</i>. Գործածվում է որպես թռչնածության` թառամության խորհրդանիշ: 4. <i>փխնն</i>. Մագաղաթի վրա գրվածը, մագաղաթը որպես գրավոր փաստաթուղթ:</p> <p>(Էդ. Աղայան, «Արդի հայերենի բացատրական բառարան», էջ 949)</p>
---	--

Ինչպես օրինակներից է երևում, բացատրական բառարաններում տեղեկություններ են տրվում հենց բառերի մասին, այսինքն` նշվում են նրանց քերականական հատկանիշները (տվյալ դեպքում` խոսքիմասային պատկանելությունը, հոլովումը, այլ դեպքերում նաև հոգնակիի կազմությունը, բայերի համար անցյալի հիմքը, անկանոն կամ տարահիմք ձևերը և այլն), գործածության ոլորտները (տվյալ դեպքում` *կզմիս.* = կազմախոսական (ամատոմիայի) տերմին, *փիւք.* = փոխաբերական իմաստ, *փխնն.* = փոխանվանական գործածություն), երբեմն` ծագումը, ուղղագրությունը (բոլոր բառարաններն ունեն նաև ուղղագրական արժեք), բացատրվում են բառիմաստները, բերվում են բնագրային կամ այլ օրինակներ և այլն:

Սակայն նշենք, որ այս երկու տիպի բառարաններն ունեն նաև որոշակի ընդհանրություններ. երկուսում էլ բառերը գրեթե միշտ դասավորված են այբբենական կարգով, մասամբ համընկնում են բառացանկերը: Լեզվաբանական բառարաններում շատ ու շատ գոյականների հիմնական (առաջին) իմաստների բացատրությունը նման է հանրագիտարանային բացատրությանը:

Գ) Կան նաև բառարաններ, որոնք անցողիկ դիրք են գրավում լեզվաբանական և հանրագիտական բառարանների միջև: Դրանք երբեմն կոչվում են *ունիվերսալ բառարաններ*: Այդ տիպի բառարաններում, բացի բառերի բացատրություններից և ստուգաբանություններից,

կան նաև այդ բառերով արտահայտված հասկացությունների մասին հանրագիտական բնույթի տեղեկություններ, հատուկ անուններ, գիտական և մշակութային տերմիններ, օտարալեզու (ասենք՝ լատիներեն) թևավոր խոսքեր: Այդ բառարաններում շատ են նաև նկարները, բանաձևերը, գրաֆիկաները և այլն: Հայերենով այսպիսի բառարան դեռևս չունենք: Այլ լեզուներով ունիվերսալ ամենահայտնի բառարաններն են ֆրանսիական Լառուս շարքի բառարանները (այդպես են կոչվում հրատարակչի անունով) և անգլերենի Վեբստերի բառարանների շարքը (անվանված է առաջին կազմողի անունով):

Հասկացությունների բառարաններով կամ հանրագիտարաններով բառարանագիտությունն զբաղվում է միայն մասնակիորեն. նրա ուսումնասիրության բուն առարկան լեզվաբանական կամ բանասիրական բառարաններն են:

1) Բոլոր բառարաններն էլ տարբերվում են միմյանցից իրենց պարունակած նյութի ծավալով: Կան լրիվության ձգտող բառարաններ, կան և այնպիսիները, որոնցում կատարված է բառերի առավել խիստ ընտրություն: Ըստ ընդգրկած բառերի քանակի դասակարգելիս՝ կունենանք *մեծ* կամ *լիակատար բառարաններ*, *միջին* և *փոքր բառարաններ* (այս բաժանումը, իհարկե, որոշ չափով պայմանական է):

Մեծ բառարանների հեղինակները ձգտում են հնարավորինս լիակատար ներկայացնել իրենց նկարագրության առարկա բառանյութը: Այսօր հրատարակի վրա են հայերեն բացատրական երկու մեծ բառարաններ՝ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը»¹⁵⁶ և Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանը»¹⁵⁷, որոնցից յուրաքանչյուրն ընդգրկում է ավելի քան 130.000 բառ և դարձվածային միավոր: Մեծ բառարաններ են նաև ակադեմիական քառահատոր «Ռուս-հայերեն բառարանը» և Ա. Ղարիբյանի «Ռուս-հայերեն բառարանը», որոնք նույնպես ընդգրկում են 120 000 – 130 000 բառային միավոր: Ա. Սուքիասյանի

¹⁵⁶ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հտ. I-IV, Երևան, 1969-1980:

¹⁵⁷ Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, հտ. 1-2, Երևան, 1976:

«Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարանը»¹⁵⁸ պարունակում է մեր լեզվի բառային հոմանիշների փաստորեն ողջ հարստությունը (130 000 բառ և դարձվածային միավոր): Հայերենի համար մեծ (երբեմն անվանվում են նաև ընդարձակ կամ ծավալուն) պետք է համարել 100 000-ից ավելի բառամթերք պարունակող բառարանները:

Միջին բառարաններն ընդգրկում են 50 000 – 100 000 բառ և սովորաբար լինում են մեկհատորյա: Սրանցում բառանյութի ընտրությունը կատարվում է ավելի խիստ չափանիշներով՝ կախված բառարանի նպատակներից: Ասենք, ժամանակակից լեզվի նորմատիվ բացատրական բառարանում չեն լինի հնաբանությունների մեծ մասը, մասնագիտական տերմինները, հազվադեպ գործածվող բառերը, հեղինակային կազմությունները և այլն: Մենք հայերենի համար այսպիսի բառարան դեռևս չունենք: Միջին մեծության բառարանի օրինակներ կարող են ծառայել թարգմանական շատ բառարաններ՝ «Հայ-ռուսերեն բառարանը» (պարունակում է մոտ 75 000 բառ), Ն. Բարաթյանի «Հայերեն-անգլերեն բառարանը» (չորս 50 000 բառ և բառակապակցություն), Գ. Անդրեասյանի «Գերմաներեն-հայերեն բառարանը» (ավելի քան 40 000 բառ) և այլն:

Փոքր բառարաններում կատարվում է նյութի առավել նպատակաուղղված ընտրություն (պարունակում են մինչև 40 000 – 50 000 միավոր՝ գլխավորապես ամենապետքական, հաճախակի գործածություն ունեցող բառերը): Սրանք ավելի գործնական նշանակություն են ունենում, սովորաբար նախատեսված են լինում կոնկրետ մեկ նպատակի համար (ասենք՝ օտար լեզվի ուսումնասիրման սկզբնական շրջանի համար, մայրենի լեզվի ուղղագրության առավել դժվար դեպքերի ուսուցման համար և այլն):

Այս բաժանումը, ինչպես ասացինք, որոշակի վերապահումով

¹⁵⁸ *Մուքիասյան Ա.*, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երևան, 2003: [Այս բառարանը 2006 թ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակի]:

պետք է ընդունել: Այսպես, գրաբարի ամենախոշոր բառարանները¹⁵⁹ պարունակում են մոտավորապես 60000-65000 բառ, սակայն դրանք ոչ թե միջին, այլ լիակատար բառարաններ են, քանի որ դրանցում ամփոփված է հին հայերենի պահպանված, ավանդված փաստորեն ամբողջ բառապաշարը: Նույնը վերաբերում է նաև առանձին հեղինակների լեզվի բառարաններին, որոնք, ծավալով շատ մեծ չլինելով, լիակատար բառարաններ են:

2) Բառարանների դասակարգման մյուս գլխավոր հատկանիշը նրա լեզուն է: Եթե բառարանում գլխաբառերը մեկնվում են նույն գլխաբառի լեզվով, գործ ունենք *միալեզվյան բառարանի* հետ: Միալեզվյան են բոլոր բացատրական բառարանները, հոմանիշների, համանունների, դարձվածաբանական բացատրական բառարանները և շատ ուրիշները: Իսկ եթե գլխաբառը թարգմանվում կամ բացատրվում է այլ լեզվով կամ լեզուներով, ունենում ենք *երկլեզվյան* կամ *բազմալեզվյան բառարաններ*: Հայոց լեզվի համար հրատարակվել են մոտ հարյուր հայերեն-օտարալեզու և օտարալեզու-հայերեն բառարաններ: Բազմալեզվյան բառարաններից են Ռ. Ղազարյանի «Բուսանունների հայերեն-լատիներեն-ռուսերեն-անգլերեն-ֆրանսերեն բառարանը»¹⁶⁰, Վ. Տոնոյանի և Ա. Տոնոյանի «Մաթեմատիկական տերմինների բառարանը (անգլերեն-ռուսերեն-հայերեն-գերմաներեն-ֆրանսերեն)»¹⁶¹, Հ. Պետրոսյանի, Ս. Գալստյանի, Թ. Ղարագոյլյանի «Լեզվաբանական բառարանը»¹⁶² (գլխաբառերը բացատրված են, ապա թարգմանված են ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, երբեմն տրված են նաև լատիներեն և հունարեն համարժեքները), Ա. Նազարյանի «Լեզվաբանական տերմինների

¹⁵⁹ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հտ. I-II, Վենետիկ, 1836-1837, Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Վենետիկ, 1846, *Ղազարեան Ռ.*, Գրաբարի բառարան, հտ. 1-2, Երևան, 2000:

¹⁶⁰ *Ղազարյան Ռ.*, Բուսանունների կարգաբանական բառարան (հայերեն-լատիներեն-ռուսերեն-անգլերեն-ֆրանսերեն), Երևան, 2002:

¹⁶¹ *Տոնոյան Վ.*, *Տոնոյան Ա.*, Մաթեմատիկական տերմինների բառարան (անգլերեն-ռուսերեն-հայերեն-գերմաներեն-ֆրանսերեն), Երևան, 1965:

¹⁶² *Պետրոսյան Հ.*, *Գալստյան Ս.*, *Ղարագոյլյան Թ.*, Լեզվաբանական բառարան, Երևան, 1975:

ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն ուսումնական բառարանը»¹⁶³ և այլն:

Բառարաններում լեզվական միավորները քննվում, ներկայացվում, մեկնաբանվում են ամենատարբեր տեսանկյուններով: Սա նույնպես կարող է դասակարգման հիմք ծառայել: Ըստ այդմ՝ լինում են *ուղղագրական բառարաններ*, որոնցում բերվում են ոչ թե բոլոր, այլ միայն դժվար ուղղագրություն ունեցող բառերը (ինչպես և միաբառ ու բաղադրյալ հատուկ անունները), նաև ներկայացվում են երկակի գրություն ունեցող բառերի նախընտրելի, հանձնարարելի ձևերը: *Ուղղախոսական բառարաններում* տառադարձության միջոցով ներկայացվում են գրության և հնչման տարբերություն ունեցող բառերի գրական արտասանությունները: Հ. Բարսեղյանի «Հայերեն ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարանը»¹⁶⁴ իր մեջ ներառում է բառարանների այս երկու տեսակները միաժամանակ: Իսկ Ռ. Սաքապետոյանի «Արեմտահայերեն-արևելահայերեն ուղղախոսական բացատրական բառարանում» ներկայացված է միայն արևմտահայերենում կամ առավելապես արևմտահայերենում գործածվող բառերի ճիշտ արտասանությունը՝ արևելահայերեն տառադարձամբ: Սա առանձնապես կարևոր է արևելահայերիս համար, քանի որ արևմտահայերենում բառերը, ելնելով մեր լեզվի այդ տարբերակի հնչյունաբանության և ուղղագրության առանձնահատկություններից, ունեն գրության և արտասանության շատ ավելի մեծ տարբերություններ, քան արևելահայերենում:

3) Դասակարգման հիմք կարող են ծառայել նաև լեզվի *գործածական փարբերակները*: Ժամանակակից լեզվաբանությունն ընդունում է, որ լեզվի բառապաշարը նույնպես մի համակարգ է, որը կազմված է ենթահամակարգերից՝ գրական բառապաշար, գիտական բառապաշար, բարբառային, ժարգոնային բառեր և այլն: Սրանցից յուրաքանչյուրը կարող է դառնալ բառարանագրության նյութ: Բացի գրական լեզվի բացատրական բառարաններից՝ հայտնի

¹⁶³ Նազարյան Ա., Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն ուսումնական բառարան, Երևան, 1993:

¹⁶⁴ Բարսեղյան Հ., Հայերեն ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարան, Երևան, 1973:

են շատ *տերմինաբանական բառարաններ*, որոնցում ամփոփված, բացատրված, իսկ երկլեզվյան բառարաններում նաև թարգմանված են գիտության, տեխնիկայի, մշակույթի որևէ բնագավառի մասնագիտական բառերը: Հայերենի այսպիսի բառարաններից են Էդ. Ջրբաշյանի և Հ. Մախչանյանի «Գրականագիտական բառարանը»¹⁶⁵, արդեն հիշատակված «Լեզվաբանական բառարանը», Ա. Սարգսյանի «Արևմտահայերենի բառարանը»¹⁶⁶, *բարբառային բառերի բառարան* է Հ. Աճառյանի «Հայերեն գավառական բառարանը»¹⁶⁷ և այլն:

Բառարանները կարող են նվիրված լինել լեզվի որևէ գործառական տարբերակին ամբողջությամբ, բայց նաև նրա միայն մի մասին: Այսպես, հայերենի ընդհանուր գրական բառարանների կողքին ունենք միայն մեկ գրողի կամ մույնիսկ միայն մեկ ստեղծագործության լեզվին նվիրված բառարաններ, ինչպես Լ. Պետրոսյանի «Հ. Թումանյանի գեղարվեստական երկերի բառարանը»¹⁶⁸, Ա. Պապոյանի «Պարույր Սևակի չափածոյի բառարանը»¹⁶⁹ (երկհատոր) և «Պարույր Սևակի աշխատությունների և թարգմանությունների բառարանը», «Բառարան Սուրբ գրոց»¹⁷⁰-ը:

4) Գրական լեզվի բառարանը կարող է արտացոլել ոչ միայն լեզվի ժամանակակից վիճակը, այլև պատմական զարգացման մի որոշակի շրջան: Այսպիսի բառարանները կոչվում են *պատմական բառարաններ*: Հին հայերենի ամենահայտնի բառարանը Նոր հայկազյան բառարանն է («Նոր բառգիրք հայկազեան լեզուի»), որն ամփոփում է գրաբարի բառազանձը: Միջին հայերենի բառապաշարն արտացոլված է Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի «Միջին հայերենի

¹⁶⁵ *Ջրբաշյան Էդ., Մախչանյան Հ.*, Գրականագիտական բառարան, Երևան, 1972:

¹⁶⁶ *Սարգսյան Ա.*, Արևմտահայերենի բառարան, Երևան, 1991:

¹⁶⁷ *Աճառյան Հ.*, Հայերեն գաղառական բառարան, Մոսկովա, 1913:

¹⁶⁸ *Պետրոսյան Լ., Հ.* Թումանյանի գեղարվեստական երկերի բառարան, Երևան, 1976:

¹⁶⁹ *Պապոյան Ա.*, Պարույր Սևակի չափածոյի բառարան, հտ. I-II, Երևան, 1981-1982: *Պապոյան Ա.*, Պարույր Սևակի աշխատությունների և թարգմանությունների բառարան, Երևան, 1986:

¹⁷⁰ Բառարան Սուրբ գրոց հանդերձ պատկերօք, աշխարհացուցօք եւ տախտակօք, Կ. Պոլիս, 1881:

բառարանում» (երկու հատոր)¹⁷¹: Լեզվի զարգացման նորագույն շրջանի բառարանները կոչվում են նորաբանությունների բառարաններ, դրանցից են Ֆ. Խլղաթյանի «Բառարան-տեղեկատու. նոր բառեր և իմաստներ» գրքույկը (արտացոլում է XX դարի վերջին քառորդի նորաբանությունները, Երևան, 1982), Փ. Մեթիխանյանի «Նոր բառերի բացատրական բառարանը» (Երևան, 1996թ.), Ս. Էլոյանի «Արդի հայերենի նորաբանությունների բառարանը» (Երևան, 2002):

5) Բառարանների դասակարգման հիմք կարող են ծառայել նաև նրանցում պարունակած լեզվական միավորների տեսակները: Այսպես, բառարաններում կարող են բացատրվել լեզվի միայն օտար բառերը: Հայերենի համար ունենք Ա. Մարգարյանի և Ա. Հայրապետյանի «Օտար բառերի բացատրական բառարանը» (Երևան, 2004): Կան բառարաններ, որոնցում ամփոփված են լեզվի բառապաշարի իմաստային-քերականական որոշակի խմբեր: Այս դեպքում կունենանք հոմանիշների, համանունների, հականիշների բառարաններ: Ժամանակակից հայերենի համար ունենք հոմանիշների և համանունների ընդարձակ բառարաններ, այն է՝ Ա. Սուքիասյան, «Հայոց լեզվի հոմանիշների բառարան» (83 000 բառ և դարձվածային միավոր, Երևան, 1967), Ե. Գևորգյան, «Համանունների բառարան» (Երևան, 1978): Հականիշների այս ծավալի բառարան դեռ չունենք: Այս բառարանները կարող են ունենալ պատմական բնույթ: Հայերենի համար կազմված՝ հոմանիշների առաջին պատմական բառարանը Ռ. Ղազարյանի «Գրաբարի հոմանիշների բառարան»¹⁷² է:

6) Բառարաններում կորող են ներկայացվել նաև լեզվական ավելի ծավալուն միավորներ, քան բառերն են: *Դարչվածաբանական բառարաններում* բացատրված, օրինակներով լուսաբանված (թարգմանականներում նաև թարգմանված) են լեզվի դարձվածները: Ա. Սուքիասյանի և Ս. Գալստյանի համատեղ հեղինակած «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանում» (Երևան, 1975) ամփոփված է հայերենի դարձվածային գանձի մեծ մասը (գրեթե 20 000

¹⁷¹ Ղազարյան Ռ., Ավերիխյան Հ., Միջին հայերենի բառարան, հտ. 1-2, Երևան, 1987-1992:

¹⁷² Ղազարյան Ռ., Գրաբարի հոմանիշների բառարան, Երևան, 2006:

դարձվածային միավոր): Խ. Բաղիկյանի «Ուսումնական դարձվածաբանական բառարանում» (6000 միավոր, Երևան, 2002) բազմաթիվ են նախորդ բառարանի հրատարակումից հետո մեր լեզվի բառապաշար մտած դարձվածային նորաբանությունները: Հայերենի դարձվածքներին նվիրված վերջին ծավալուն աշխատությունը Պ. Բեդիրյանի «Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան»¹⁷³ է (պարունակում է 25 310 դարձվածք): Կան նաև *թևավոր խոսքերի, առածների, ասացվածքների բառարաններ*: Թեև հայերենի համար չունենք, բայց այլ լեզուների համար կան նաև ամբողջական նախադասությունների, արտահայտությունների բառարաններ: Դրանք աֆորիզմների, թևավոր խոսքերի և քաղվածքների (մեջբերումների, ցիտատների) բառարաններն են:

7) Եվ վերջապես, դասակարգման վերջին չափանիշը բառարաններում բառերի *դասավորության կարգն* է: Ժամանակակից բառարաններում առավել տարածված սկզբունքը բառերի խիստ այբբենական դասավորությունն է: Սա բխում է օգտվողի շահերից, այսպիսի բառարաններում բառը կարելի է գտնել բավականին արագ: Սակայն երբ բառարանին դիմում է ոչ թե հասարակ ընթերցողը, որին սովորաբար պետք է լինում անձանոթ բառի իմաստը կամ թարգմանությունը, այլ մասնագետ լեզվաբանը, ծագում են որոշակի դժվարություններ: Սովորական բառարաններում բառերը միմյանց հետևից դասավորված են միայն ըստ գրության: Այսպիսի բառարաններում չի երևում լեզվի բառապաշարի համակարգայնությունը: Նրանցում իմաստային ինչ-ինչ առնչություններ ունեցող բառերը կարող են գտնվել շատ հեռու (նույնիսկ տարբեր հատորներում), կամ էլ ծագումնային ընդհանրություն ունեցող բառերը կարող են անմիջականորեն չհետևել մեկը մյուսին (ասենք միևնույն արմատից կազմված նախածանցավոր և վերջածանցավոր բառերը): Այսպիսի բառարաններից շատ դժվար է դուրս գրել, կազմել բառերի թեմատիկ խմբեր (ինչպես, ասենք, ազգակցական-արյունակցական կապ ցույց տվող բառերը, ճաշատեսակների կամ հագուստների անվանումները,

¹⁷³ Բեդիրյան Պ., Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Երևան, 2011:

քոչնամունները և այլն, և այլն): Չէ՞ որ եթե տվյալ բառը հայտնի չէ ուսումնասիրողին (ասենք, հնաբանություն կամ բարբառային բառ է կամ էլ պարզապես անծանոթ է կարդացողին), նա այդ բառն ուղղակի չի կարող գտնել բառարանում, հակառակ դեպքում պետք է կարդա ամբողջ բառարանը:

Այս թերությունից խուսափելու համար ստեղծվում են *գաղափարագրական (քննարկի, իդեոգրաֆիական) բառարաններ*: Այսպիսի բառարանների կառուցվածքի սկզբունքն է հասկացությունից դեպի բառը: Սրանցում ընդունված է բառերով արտահայտված հասկացությունների համակարգման կամ դասակարգման եղանակը: Լեզվի բառապաշարը բաժանված է թեմատիկ մեծ խմբերի (տիեզերք, մարդ, հատկանիշ, բնություն, այլևայլ գործողություններ և այլն): Սրանք էլ, իրենց հերթին, կարող են բաժանվել ենթախմբերի և ավելի մանր խմբերի, որոնցում բառերն արդեն մեծ մասամբ դասավորված են լինում այբբենական կարգով: Օրինակ՝ Բնություն – *ոչ կենդանի բնություն* (ռելիեֆ, Երկրագնդի կեղևի ծածկույթի տեսակներ ևն), *կենդանի բնություն* (բուսական աշխարհ - ծառեր, թփեր, խոտեր, կամ մշակովի բույսեր, վայրի բույսեր ևն, կենդանական աշխարհ – կաթնասուններ, թռչուններ, սողուններ, ձկներ, միջատներ ևն):

Բառերի դասավորության մի եղանակ է նաև *փնջային* կամ *բնային* սկզբունքը: Այստեղ մեկ բառահոլվածում միավորված են ընդհանուր արմատ ունեցող բառերը. սրանք կազմում են ծագման, սերման ընդհանրություն ունեցող բառերի փունջ կամ բուն: Այս սկզբունքը առավել հարմար է ստուգաբանական և բառակազմական բառարանների համար: Հայերենի համար մասամբ այս եղանակով է կառուցված Հ. Աճառյանի «Արմատական բառարանը»: Ամբողջությամբ այս սկզբունքով են կառուցված Հ. Դաղբաշյանի ռուս-հայերեն և հայ-ռուսերեն նշանավոր բառարանները¹⁷⁴: Այս սկզբունքի մասին ավելի պարզ պատկերացում տալու համար բերենք մի քանի բնորոշ օրինակ «Հայ-ռուսերեն գործնական բառարանից»¹⁷⁵. **Եղբայր** 1

¹⁷⁴ *Դաղբաշյան Հ.*, Լիակատար բառարան ռուսերենից հայերեն, Թիֆլիս, 1908: *Դաղբաշյան Հ.*, Լիակատար բառարան հայերենից ռուսերեն, Թիֆլիս, 1911:

¹⁷⁵ *Բեդիրյան Պ., Ղարիբյան Ջ., Աննեդիկյան Դ.*, Հայ-ռուսերեն գործնական բառարան, Երևան, 2010:

брат; մեծ (խորթ) ~ старший (сводный) брат [.....], ||~**աբար** (եղբոր պես) по-братски, братски; ~աբար ողջագործվել обниматься по-братски ||~**ական** братский; ~ական ողջույնով с братским приветом ||~**անալ** (по)брататься; ~ացած քաղաքներ города-побратимы ||~**ուրյուն** братство [ալիքագիծը` ~, ցույց է տալիս կրկնվող հիմքը. ||~**ական** = եղբայրական]: Բայի օրինակ` **պայթել** [.....] взрываться (взорваться) [.....] ||~**եցում** взрывание ||~**յուն** взрыв; разрыв; տեղեկատվական ~յուն информационный бум ||~**ունակ** преим. полит. взрывоопасный ||~**ուցիկ**. ~ուցիկ взрывчатое вещество, взрывчатка *разг* [զլխաբառի (**պայթել**) ուղղահայաց գծիկից ձախ գտնվում է բաղադրություններում կրկնվող հիմքը. ||~**յուն** = պայթյուն]:

Քառարանի կառուցվածքային հիմնական բաղադրիչները

Թեև բառարանների տեսակները շատ բազմազան են, սակայն դրանցից առավել տարածվածները և օգտագործվողները բացատրական և թարգմանական բառարաններն են: Ներկայացնենք հենց այս երկուսի կազմության և կառուցվածքի հիմնական սկզբունքները:

Սովորաբար բառարանն ունենում է առաջաբան¹⁷⁶ (նախաբան, մուտք, երկու խոսք, հեղինակի կողմից, կազմողների կողմից և այլն), որտեղ նշված է, թե ինչ ընդգրկում ունի բառարանը, և ինչ ընթերցողի է այն հասցեագրված: Այստեղ են ներկայացվում բառարանի կազմության սկզբունքները, բառահոլվածի կառուցվածքը: Ապա տրված է լինում բառարանում կիրառված համառոտագրությունների բանալին: Հաճախ բերվում է նաև տվյալ լեզվի այբուբենը (թարգմանական բառարաններում` թարգմանվող լեզվինը): Առաջաբանից հետո, իսկ շատ հաճախ աշխատանքի վերջում, բերվում է օգտագործված սկզբնաղբյուրների ցանկը:

Այս հատվածին հետևում է բուն բառարանը:

Բացատրական (նաև այլ բառարանների) կարևորագույն մասը

¹⁷⁶ Բառարանների այս հատվածը սովորական ընթերցողը հաճախ բաց է թողնում: Մենք խորհուրդ ենք տալիս անպայման ծանոթանալ առաջաբանին, քանի որ միայն այդտեղից կարող ենք իմանալ, թե մեզ անհրաժեշտ տեղեկությունը կա արդյոք տվյալ բառարանում, և ինչպես ավելի հեշտ ու արագ գտնենք այն:

բառացանկն է: Բառացանկում ընդգրկված են այն բոլոր միավորները, որոնք ձևավորում են տվյալ բառարանի տեսակը և ընդգրկման ոլորտը: Բառացանկը, բնականաբար, մեծամասամբ բաղկացած է լինում բառերից (բացատրական և թարգմանական բառարաններ): Սակայն, ելնելով բառարանի տիպից, բառացանկ կարող են կազմել նաև ձևային (ձևայթալի և քերականական բառարաններ), բառաձևերը (քերականական բառարաններ), բառերի կապակցությունները (դարձվածաբանական, ասույթների և թևավոր խոսքերի բառարաններ, բառերի կապակցելիության բառարաններ): Բառացանկի միավորները մեծ մասամբ դասավորված են լինում խիստ այբբենական կարգով:

Յուրաքանչյուր բառարանի հիմնական կառուցվածքային միավորը բառահոդվածն է: Սա փաստորեն մի ամփոփ աշխատություն է տվյալ բառի հնչյունական, քերականական, իմաստային, կիրառական և այլ հատկանիշների մասին:

Բացատրական բառարանի բառահոդվածն սկսվում է գլխաբառով (վոկաբուլ, լեմմա): Սա այն բառն է, որը ենթակա է բացատրության: Այն հայկական բառարաններում տվորաբար տպագրվում է ամբողջապես մեծատառերով, երբեմն մզացվում է: Միայն մեծատառերով տպագրումը, բացի ավանդույթ լինելուց, ունի նաև մի տեխնիկական «գաղտնիք»: Հայերենի «*յէլ (էլ)*» հնչյունակապակցությունը մեծ մասամբ գրվում է մեկ տառով՝ «*h*», բայց ձևաբանական ուղղագրության սկզբունքներից ելնելով՝ երբեմն գրվում է նաև «*ել*» տառակապակցությամբ, ինչն էլ ստեղծում է այբբենական դասավորության անհարմարություններ (միայն գլխագրերով գրելիս միշտ ունենում ենք «*ԵՎ*» տառակապակցությունը):

Գլխաբառին հետևում է քերականական նշումների հատվածը: Գոյականների և մյուս հոլովվող բառերի համար պարտադիր տրվում է եզակի սեռականի վերջավորությունը՝ հնարավոր հնչյունավորություններ կամ տարբերակներով (անեզական բառերի համար՝ հոգնակի սեռականը): Եթե բառը պատկանում է անկանոն կամ դերանվանական հոլովման, սեռականի ձևը բերվում է ամբողջությամբ (բառաձևով): Գոյականների համար նշվում են նաև հոգնակի կազմության

ժամանակ ընդունված սկզբունքներից շեղումներ ունեցող ձևերը (միավանկ բառեր՝ *-հիր* վերջավորությամբ, բազմավանկներ՝ *-իր* վերջավորությամբ, *-իկ*, *-այր* ձևույթներով կազմվող բառեր): Բայերի համար պարտադիր տրված է սեռը: Երբեմն նշվում է անցյալ կատարյալի հիմքը (տարարմատ և տարահիմք ձևեր ունեցող բայերի համար բերվում են անցյալ կատարյալը կամ այլ անկանոն ձևեր ամբողջությամբ):

Քերականական նշումներից հետո արվում են ոճական նշումները: Ընդ որում ոճականորեն չեզոք, գրական բառապաշարը որևէ ձևով չի տարբերակվում: Հատուկ համառոտագրություններով առանձնացված են միայն բարբառային, խոսակցական, հնացած, հազվադեպ, անհանձնարարելի, տերմինային կիրառություն ունեցող, գրական լեզվի այլևայլ ոճերին պատկանող (գրքային, բանաստեղծական ձևեր, հասարակաբանություններ և այլն) բառերը, այսինքն՝ այն բառերը, որոնք ունեն գործածության ինչ-ինչ սահմանափակումներ:

Այս ամենին հետևում է բառի բուն բացատրությունը: Բառահողվածի այս մասն էլ կարող է բաժանվել հատվածների: Եթե բառը բազմիմաստ է, յուրաքանչյուր նշանակություն առանձնացվում է արաբական թվանշաններով: Ընդ որում՝ այդ թվանշաններին կարող են հաջորդել լրացուցիչ ոճական կամ քերականական նշումներ, որոնք վերաբերում են բառի միայն տվյալ նշանակությանը: Գոյություն ունեն բառերի բացատրության մի քանի եղանակներ (նկարագրական-տրամաբանական, հոմանիշներով, հականիշներով, ժխտական կամ բացասական և այլն): Բառիմաստը կարող է լուսաբանվել օրինակներով: Սրանք կան բառակապակցություններ են, կան հեղինակային կազմություններ և կան էլ բնագրային մախադասություններ (բնագրերի մոտ սովորաբար նշվում է միայն հեղինակը՝ առանց ստեղծագործության վերնագրի կամ էջի մասին տեղեկության):

Բացատրական և թարգմանական բառարաններում բառահողվածն ավարտվում է գլխաբառով կազմված դարձվածքների (եթե այդպիսիք կան) բացատրությամբ կամ թարգմանությամբ: Դարձ-

վածքները սկսվում են հատուկ նշանից հետո (սովորաբար շեղանկյուն՝ ◊, քառանկյուն՝ □, գծիկ՝ – և այլն):

Բացատրական բառարանների բառահողվածի ամենավերջում բառի մասին կարող են տրված լինել ստուգաբանական տեղեկություններ¹⁷⁷:

Բերենք բառահողվածների կազմության մի քանի բնորոշ օրինակներ հայերենի բացատրական բառարաններից: Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»։ ԹՄԲՈՒԿ, *ի* և *բկի*, գ. 1. Գլանի նման հարվածային երաժշտական գործիք, որի երկու կողմը պատված է նուրբ մորթով՝ փայտերով հարվածելու համար: 2. (*կզմիս.*): Նույնն է՝ Թմբկաթաղանթ: 3. (*ճրփրփ.*): Գմբեթի ցածի գլանաձև մասը, որի վրա բարձրանում է վեղարը: 4. (*լրեիս.*): Չանագան մեքենաների ու մեխամիզմների թմբկաձև մաս կամ մանրակ (սովորաբար սնամեջ): 5. (*լրպզր.*): Տպագրական մեքենայի գլանաձև մասնակ:

- *Թմբուկ ածել* – թմբուկ նվագել:
- *Թմբուկ զարկել*՝ *հնչեցնել* – թմբկահարել:
- *Թմբուկ դառնալ* – ուռչել, փքվել (փորի մասին):
- *Թմբուկ պարտել* – ուժգնորեն թմբկահարել (տազնապի կամ ուրախության համար):

ի և *բկի* նշումները հուշում են, որ բառը պատկանում է *ի* հոլովման և կարող է ունենալ սեռականի կազմության երկու ձև՝ անհնչյունավոխ՝ *թմբուկի*, և հնչյունավոխված՝ *թմբկի*: Բառը գոյական է (գ. նշանակում է գոյական անուն): 2-5-րդ բառիմաստների մոտ փակագծերում արված նշումները ցույց են տալիս, որ այդ նշանակություններով բառը գործածվում է համապատասխան գիտական գրականության մեջ (*կզմիս.* = կազմախոսական տերմին, *ճրփրփ.* = ճարտարապետական տերմին, *լրեիս.* = տեխնիկական տերմին, *լրպզր.* = տպագրական գործի տերմին): *Թմբուկ ածել, թմբուկ զարկել՝ հնչեց-*

¹⁷⁷ Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանում» այդ տեղեկությունները բերված են քերականական և ոճական նշումներից հետո՝ փակագծերի մեջ:

*նել*¹⁷⁸, *քմբունկ պարունել* արտահայտությունները դարձվածքներ են:

«ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան».
ՍՄԳՆԱՏ, ի, գ. 1. Հին Հռոմում խոշոր և քաղաքականապես ազդեցիկ հարուստ: 2. Լեհաստանում և Հունգարիայում խոշոր կալվածատեր: 3. *փխբ*. Խոշոր կապիտալիստ: [Լատ.magnatus]:

ՄԱՆԵԼ, եց, *նբ*. 1. Բրդի՝ բամբակի՝ մետաքսի մազերը թաշկինակով կամ ճախարակով ոլորել և թել դարձնել: *Կանայք ոչխարի բրդից մանում էին թելեր, որոնցից գործում էին կարպետներ, օթոցներ և գորգեր (Բ): Մանիր, մանիր, իմ ճախարակ, մանիր սպիրակ մալանչներ, Մանիր թելեր հասար ու բարակ, որ ես հոգամ իմ ցավիք (ԳԱ):* 2. Արհեստական զանգվածից թել պատրաստել: 3. չբ. Բարակ և տևականորեն տեղալ, թափվել: *Մանում է չյունը, մանում է բարակ (Վ. Կարենց):* 4. *փխբ*. Երկարորեն և միապաղաղ խոսել՝ երգել: □ Բ ա ր ա կ մ ա ն ե լ - 1) օրեցօր մաշվել՝ հյուծվել. 2) շատ մանրակրկիտ լինել, մանր բաների հետնից ընկնել:

Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան».
ԺԱՆՏ, *ի (ից կամ սց)*, (իրանեան *žant, հոտ, վատ հոտ), *սծ*. 1. Չար, չարաբարոյ, անզգամ: *Ժանյ մարդ, ժանյ կին*: 2. Դաժան, դժմեայ: *Ժանյ դէմք: Ժանյ հայեացք*: 3. Չագրելի, զագրասեր: *Ժանյ բարք*: 4. Գարշելի, պիղծ: *Ժանյ կերակուր*: 5. Դառն, անպիտան: *Ժանյ պրոտ*: *Ժանյ թուզ*: 6. Վատ տեսակի, վատորակ, մախաբեր: *Ժանյ ախար* (որից ժանտախտ): ☉ 7. Ժանտախտ: (Տ):

Թարգմանական-երկլեզվյան բառարանների բառահողվածի կառուցվածքը հիմնականում համընկնում է բացատրական բառարանի բառահողվածին: Գլխաբառի համար կա միայն մեկ նկատելի տարբերություն: Օտարալեզու-հայերեն բառարաններում թարգմանվող լեզվի բառը ունենում է նաև հնչյունական մշակում. ռուս-հայերեն բառարաններում պարտադիր նշվում է ռուսական բառի շեշտը, իսկ անգլերեն-հայերեն բառարաններում անգլերեն բառերի տառադարձությունը: Սա, իհարկե, այդ լեզուների բառարանագրության առանձնահատկությունն է:

¹⁷⁸ Հայերենի բացատրական բառարաններում բոթով անջապում են միևնույն գերադաս բառին առանձին-առանձին բնութագրող լրացումները: Տվյալ դեպքում «*քմբունկ գարկել՝ հեշեցնել*» գրվածքը պետք է կարդալ «*քմբունկ գարկել, քմբունկ հնչեցնել*»:

Քերականական և ոճական նշումները ելքի՝ թարգմանվող լեզվի համար են: Մրանց հետևում է բառի թարգմանությունը կամ թարգմանությունները, եթե բառը բազմիմաստ է: Իմաստներն անջատվում են արաբական թվանշաններով, երբեմն տարբերակվում են նաև նրբիմաստները: Վերջիններս առանձին համարանիշ չեն ունենում և բուն իմաստից բաժանվում են զուգահեռագծիկներով՝ ||: Թարգմանության սկզբունքներից ամենատարածվածը «բառի դիմաց բառ» սկզբունքն է, այսպես կոչված հոմանշային թարգմանությունը, երբ օտար լեզվի բառերի դիմաց տրվում են թարգմանող լեզվի համանշանակներն ու համարժեքները: Այս բառարաններում բառերի բացատրությունները քիչ են տարածված: Մովորաբար նկարագրական եղանակով բացատրվում են թարգմանվող լեզվի այն բառերը, որոնք արտահայտում են թարգմանող լեզվում բացակայող իրակություններ: Այս դեպքում բացատրությանը նախորդում կամ հաջորդում է օտար բառի գրադարձությունը¹⁷⁹: Թարգմանական բառարաններում որպես բառագործածության օրինակներ հիմնականում բերվում են բառերի առավել տարածված, հաճախակի կիրառություն ունեցող կապակցությունները՝ իրենց թարգմանություններով:

Բառահոդվածի վերջում բերվում են գլխաբառով կազմված դարձվածքները՝ հնարավոր թարգմանություններով, իսկ իդիոմների դեպքում՝ նկարագրական բացատրությամբ և մոտավոր համարժեքներով:

Բացատրությունների համար ոչ պակաս նշանակություն ունեն մաս արտալեզվական տեխնիկական շատ միջոցներ, հնարներ: Դրանցից են տարբեր տեսակի և չափսի գրանշանների գործածությունը, ոչ տառային նշանները¹⁸⁰:

¹⁷⁹ Բառերի թարգմանությանը զուգահեռ նաև հայերենով բացատրությունները շատ լայն չափով կիրառված են ռուս-հայերեն քառահատոր ակադեմիական բառարանում (Ռուս-հայերեն բառարան, հտ. 1-4, Երևան, 1954-1958): Սա թեև խիստ ընդարձակում է բառարանի ծավալը, սակայն ոչ հազվադեպ թարգմանչին օգնում է ճիշտ հասկանալ թարգմանվող բառը և երբեմն գտնել կամ մույնիսկ կազմել թարգմանական մի նոր համարժեք, որը չկա բառարանում:

¹⁸⁰ Դրանցով առանձնապես հարուստ է Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանը»: Գլխաբառից առաջ դրված տարբեր նշանները ընթերցողին լրա-

Համակարգչային տեխնիկայի զարգացումը նոր, անսպառ հնարավորություններ է ընձեռում բառարանագիրներին և ոչ միայն տեխնիկական առումով: Այսօր արդեն ամենատարածված, մեծ լսարան ունեցող լեզուների համար (անգլերեն, իսպաներեն, ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն) ստեղծվել են համակարգչային բազմաբնույթ բառարաններ:

ցուցիչ տեղեկություն են տալիս բառի մասին. □ խմբագիրների ավելացրածը, © հին բառ կամ նշանակություն, * հազվադեպ բառ կամ նշանակություն, + գավառական բառ կամ նշանակություն: Հր. Աճառյանի Արմատական բառարանում ևս ընդունված է մմանատիպ համակարգ:

ՀԱՅԵՐԵՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ¹⁸¹

Հանրագիտական բառարաններ

Հայերեն հանրագիտական բառարաններ կազմելու փորձեր են արվել դեռևս 18-րդ դարից սկսած, բայց, դժբախտաբար, այդ կարգի աշխատանքները կա՛մ արդեն հնացել են, կա՛մ կիսատ մնալով՝ այժմ կարող են որոշ չափով պատմական արժեք ունենալ միայն:

Այդ կարգի աշխատանքներից հիշատակության արժանի են՝ **Հ. Առաքելյանի** «Հանրագիտական բառարանը» (Թիֆլիս, 1915 թ.), որի առաջին հատորն է միայն լույս տեսել, **Մ. Պոպոդյանի** «Հայ հանրագիտարանը» (Բուխարեստ, 1938 թ.), անձնանունների և տեղանունների բառարաններից՝ **Մ. Մաղաթ-Թեոփիլյանցի** «Կենսագրություն երևելի արանց» (Վենետիկ, 1891), **Ն. Ճիվանյանի** «Առձեռն բառարան պատմական, աշխարհագրական և դիցաբանական հատուկ անվանց» (Կ. Պոլիս, 1879 թ.) և այլն:

Հանրագիտական բառարանները լինում են **համընդհանուր և որևէ մասնաճյուղին վերաբերող:**

Համընդհանուր հանրագիտական բառարանի օրինակ են ծանալում՝ 32 հատորանոց «Բրիտանիկա» անգլերեն հանրագիտարանը (հնագույնն է աշխարհում. առաջին հրատ. երեք հատորով 1768-71 թթ.), Ֆ. Բրոկհաուզի և Ա. Եֆրոնի ռուսական «Հանրագիտական բառարանը» (1890-1907, 82 հատորով), 50 հատորանոց «Սովետական մեծ հանրագիտարանը» և բազմահատորանոց «Հայկական սո-

¹⁸¹ Մինչև անցյալ դարի կեսերը լույս տեսած հայերեն բառարանների մանրամասն նկարագրությունը տե՛ս *Գասպարյան Գ.*, Հայ բառարանագրության պատմություն, Երևան, 1968:

վետական հանրագիտարանը»։ Առանձին *մասնաճյուղային* հանրագիտարաններից են՝ «Բժշկական հանրագիտարանը», «Փիլիսոփայական բառարանը», Հր. Աճառյանի «Հայոց անճանաչման բառարանը» և այլն։

Հանրագիտական ընդհանուր բառարան կազմելու համար անհրաժեշտ են գիտատեխնիկական, քաղաքական-սոցիալական, նյութական որոշակի պաշարներ։ Անցյալ դարի 60-ական թվականներին այդպիսիք լիովին առկա էին մեր երկրում, և Երևանում ստեղծվեց հատուկ հրատարակչություն (այժմ կոչվում է «Հայկական հանրագիտարան» հրատարակչություն), որը մասնագիտացված է հանրագիտարանների հրատարակության գործում։

«Հայկական սովետական հանրագիտարան»¹⁸²։ Հանրագիտարանը հրատարակվել է 13 հատորով (12 գումարած մեկ լրացուցիչ հատոր՝ առանց համարակալման) Երևանում 1974-87 թթ.։ Բառացանկն ընդգրկում է շուրջ 50.000 տերմինահոդված, յուրաքանչյուր հատոր պարունակում է մոտ 1.500 նկար, պատկեր, քարտեզ և դիագրամ։ Առանձին հրատարակված հատորը նվիրված է Խորհրդային Հայաստանին։

Իբրև ազգային հանրագիտարան՝ նրանում պատշաճ տեղ է տրված հայ ժողովրդի պատմական անցյալին, պատմությանը, նրա տնտեսության, գիտության, մշակույթի, արվեստի, գրականության նվաճումներին։ Նրանում հանգամանորեն լուսաբանվում են հայ ժողովրդի քաղաքական մտքի պատմությունը, հասարակական կյանքի իրադարձությունները, հիշարժան դեպքերն ու դեմքերը։

Բառարանում բազմազան տեղեկություններ են տրվում հատկապես Հայաստանի տնտեսության, հասարակական-քաղաքական կյանքի, բնության, բնական հարստությունների, բուսական և կենդանական աշխարհի վերաբերյալ։ Կենսագրական և այլ տվյալներ են բերվում գիտության, տեխնիկայի, մշակույթի, արվեստի, գրականության, սպորտի և այլ բնագավառների, պետական ակադեմիայի գործիչների, նշանավոր մարդկանց կյանքի և գործունեության մասին։

¹⁸² Հայկական սովետական հանրագիտարան, հտ. I-XIII, Երևան, 1974-1987։

Նրանում անհրաժեշտ տվյալներ և տեղեկություններ են պարունակվում Սփյուռքի հասարակական, մշակութային կազմակերպությունների, հայրենակցական միությունների և գիտության, մշակույթի և քաղաքական նշանավոր գործիչների մասին:

Բառարանում մեծ տեղ է հատկացված պատմական Հայաստանի տեղանուններին, ճարտարապետական հուշարձաններին, աշխարհագրական անուններին, բնակավայրերի նկարագրությանը: Հարուստ են բնակչության կազմի, թվի և զբաղմունքի մասին տվյալները:

Բառարանում պատշաճ տեղ են գրավում արտադրության և տեխնիկայի այլևայլ բնագավառներում համաշխարհային և հայրենական գիտության ձեռք բերած նվաճումներին վերաբերող հոդվածները: Նշված ընդհանուր կարգի հոդվածներում նույնպես հաճախ պարունակվում են անհրաժեշտ տեղեկություններ, որոնք վերաբերում են Հայաստանին կամ այդ կոնկրետ բնագավառի հայ ժողովրդի ներկայացուցիչներին:

Հոդվածները, ըստ ծավալի, բաժանվում են երեք հիմնական խմբի: Առաջին խմբի մեջ մտնում են այն հոդվածները, որոնք բառարանային բնույթ ունեն, որտեղ տրվում են տվյալ տերմինի սահմանումը և համառոտ տվյալներ նրա մասին: Երկրորդ խումբը կազմում են պատմական իրադարձություններին, արտադրության և գիտության ավելի մեղ ճյուղերին, մեծ քաղաքներին, շրջաններին, ինչպես նաև գիտության և մշակույթի ականավոր գործիչներին վերաբերող հոդվածները: Երրորդ խմբի մեջ են մտնում այն հոդվածները, որոնք վերաբերում են գիտության և տնտեսության ամբողջական ճյուղերին, աշխարհի գրեթե բոլոր երկրներին:

Իհարկե, բառարանը չէր կարող տուրք չտալ ժամանակի պաշտոնական գաղափարախոսությանը, նրանում շատ դեպքեր լուսաբանված են միակողմանիորեն, որոշ փաստեր ներկայացված են ոչ ամբողջականորեն կամ անտեսված են:

Սակայն Հայկական հանրագիտարանի կազմության և հրատարակության փաստը մշակութային, գիտական, քաղաքական խոշոր իրադարձություն է հայ ժողովրդի համար: Հրատարակությունն արժանացել է Հայաստանի պետական մրցանակի:

Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանը»: Հայ բառարանագրության մեջ նոր երևույթ է Հ. Աճառյանի հիմնադրած «Հայոց անձնանունների բառարանը»¹⁸³: Այն կազմված է բանասիրական-լեզվաբանական և պատմական-հանրագիտական տեսանկյունով և, փաստորեն, իրենից ներկայացնում է բանասիրական և հանրագիտական բառարանների կազմության սկզբունքների միավորմամբ ստեղծված բառարանի մի նոր տիպ, որտեղ բերվում են հայկական անձնանունների թե՛ լեզվաբանական-ստուգաբանական և թե՛ նրանց պատմական-մատենագիտական մանրամասն, անհրաժեշտ և կարևոր տվյալներ, տրվում բնութագրումներ:

Հեղինակի նպատակն է եղել հավաքել և բառարանագրական մշակման ենթարկել այն բոլոր անունները, որ պատմության ընթացքում որևէ հայ անհատ կրել է երբևիցե՝ անկախ նրա դիրքից և աստիճանից:

Բառարանն ընդգրկում է 5-15-րդ դարերը ներառյալ հայոց պատմության մեջ արձանագրված և ընդհանրապես այս կամ այն առիթով հիշատակված հայոց բոլոր այն անձնանունները, որոնք մեզ են հասել գրավոր հուշարձանների միջոցով, որ հայտնի կամ մատչելի են եղել Հ. Աճառյանին: 16-17-րդ դարերից առնված են միայն պատմական և գրական կարևոր կամ նշանավոր դեմքերը: Այն ընդհանրապես պարունակում է մինչև XX դարի 40-50-ական թվականները հայերի մեջ ընդհանուր գործածություն գտած անձնանունները:

Բառարանը բաժանվում է երկու հիմնական բաժինների. առաջին բաժինը լեզվաբանական-ստուգաբանական բնույթ ունի, երկրորդը՝ պատմական-հանրագիտական և աղբյուրագիտական-մատենագիտական:

Առաջին բաժնում տրվում է անձնանունը որպես գլխաբառ, նշվում սեռը, որին հետևում են այդ անվան ծագումը կամ ստուգաբանությունը և, եթե անունը օտար է, նրա համապատասխան ձևերը մի քանի հայտնի լեզուներով, ինչպես և այդ անունով մի քանի նշանավոր դեմքեր օտար ազգերից և ժողովուրդներից: Այնուհետև բերվում

¹⁸³ *Աճառյան Հ.*, Հայոց անձնանունների բառարան, հտ. I-V, Երևան, 1942-1962:

են այդ անվան փաղաքչական կամ կրճատ ձևերը մեր բարբառնե-
րում և ժողովրդախոսակցական լեզվում: Հատուկ նշումով գլխաբառ-
անճճանվան սկզբից տրվում է նրա բնիկ՝ հայկական կամ օտար
ծագումը:

Լեզվաբանական-ստուգաբանական այդ առաջին բաժնին հա-
ջորդում է պատմական-հանրագիտական, աղբյուրագիտական, տե-
ղեկատու-մատենագիտական բաժինը, որտեղ ժամանակագրական
կարգով բերվում են այդ անունով հիշատակված բոլոր անճճավորու-
թյունները մինչև 1500 թ. անխտիր, իսկ դրանից հետո՝ միայն նշանա-
վորները. ըստ որում տրվում է նրանց սեղմ և ամփոփ կենսագրությու-
նը և այն բոլոր աղբյուրների մատենագիտական ցանկը, որոնցում
տվյալ անճճավորությունը հիշատակվում է: Բերում ենք բառահող-
վածների նմուշներ այդ բառարանից որոշ կրճատումներով:

+ **Աստուածատուր**, ար. < հյ. **Աստուած+տուր** բառերից իբրև
«Աստուծու տվածը». հմմտ. Խաչատուր, Տիրատուր, Գրիգորատուր,
Վիրապտուր, Քրիստոստուր: Համապատասխան ձևերը գործածված
են եղել ուրիշ ազգերի մեջ էլ՝ սկսած շատ հին ժամանակներից,
ինչպես՝ ասորեստանյան **Իլի-Վահաբա** (Աստված է տվել), եբրայա-
կան **Նաբանայել**, պարթևական Bagadāta (որից առաջացել է հյ. **Բա-
գարատ**), միջին պարսկերեն **Գևդատ**, թրք. Tanriverdi, Xudāverdi կամ
Allahverdi [...], հուն. Θεόδωρος (որից ծագել է հյ. **Թեդորոս** և
կրճատմամբ՝ **Թորոս**), լտ. Deodatus, ֆրանս. Daudet կամ Dieudonné,
գերմ. Gottgieb, ռուս. Богдан ևն: Աստուածատուր անունը մեր մեջ
ձևափոխվելով ու կրճատվելով ստացել է զանազան ձևեր. այսպես՝
Աստատուր, Ասվատուր, Ասպատուր, Ասատուր, Աստուր, Աստիկ,
Ասո, Ծատուր, Ծատի, նաև Տատուր, և վերջապես Տատ (ըստ Թեո-
դիկի): Այս ձևերը ավանդված են ԺԳ դարից սկսած [...]: Մրանցից էլ
կազմված են Աստուածատուրեան, Ծատուրեան, Տատուրեան, Ասա-
տուրեան, Ասոյեան, Տատեան ազգանունները: Այնուհետև տրվում է
ժամանակագրական կարգով այդ անունով 192 անճճանց համառոտ
կենսագրությունը և գործունեությունը, նշվում՝ աղբյուրները, մատե-
նագիտությունը:

***Բարսեղ**, ար. < հուն. Βασίλειος, որ Βασίλειός «բազավոր» բառն է
և իբրև անճճանուն գործածվում էր նաև հունաց մեջ: Հայտնի է

օրինակ՝ Ս. Բարսեղ Կեսարացի (331-379) նշանավոր հայրը, որի գործերից շատերն էլ թարգմանված են հայերենի: Գրված է *Բարսիղ*՝ Խարվկ. 196: Այս բառը ձևափոխելով դարձավ ավելի ուշ ն. հուն *Vasili*, որից էլ ռուս. *Василий*: Հայերենում ունինք, բացի Բարսեղ ձևից, նաև Բասիլ, Բասիլիոս և Վասիլ ձևերով, որոնք տե՛ս առանձին: համապատասխան ձևերն են արաբ. *Melik*, պրս. *Xusrav* (Խոսրով) և հյ. Արքայ, Թագուր: — Հիրշ. 336: Գործածական է մեր մեջ Ե դարից մինչև այժմ. Սրանից ունինք Բարսեղեան ազգանունը: Այնուհետև տրվում է այդ անունով 99 անձանց կնսագրությունը:

***Արշակ**, ար. < հայրս. *Aršaka* ձևից, որ [...] նվազականն է *arša* «արջ» բառի. հմմտ. զնդ. *arəša*, սանս. *r̥śa*, հուն. *άρχτος*, լատ. *Ursus* և հյ. *արջ*: Ըստ այսմ *Արշակ* նշանակում է բուն «արջուկ» և այս իմաստով համապատասխանում է ճիշտ լատ. *Ursula* «փոքրիկ արջ» անձնանվան: Ավելի հավանական է սակայն դնել *arša* «արու» բառից [...]. այս դեպքում *Արշակ* համապատասխանում է *Արսեն* անվան: [...] Այս *Արշակ* անունից ծագեց *Արշակունի* տոհմանունը, պարթևական թագավորական հարստություն, որի մի ճյուղը իշխեց Հայաստանում: [...] Հնում գործածված է մինչև ԺԱ դար. այնուհետև լրում է. վերակենդանացավ նոր շրջանում և այժմ շատ սովորական է: Այնուհետև տրվում է այդ անունով 16 անձանց կնսագրությունը:

Հայկական անձնանունների ընդգրկման ծավալով, նրանց ստուգաբանական-լեզվաբանական բնութագրմամբ, ինպես նաև յուրաքանչյուր անձնանունին տրվող պատմական տեղեկություններով և մատենագիտական տվյալներով Հ. Աճառյանի բազմահատոր այս բառարանը դառնում է ոչ միայն լեզվաբանական-բանասիրական, այլև պատմական-աղբյուրագիտական, հանրագիտական բնույթի կարևոր տեղեկատու ձեռնարկ:

Կենսագրական բառարաններ

Այս կարգի բառարաններում, ելնելով կազմության սկզբունքներից, տրվում են կենսագրական տվյալներ տարբեր բնագավառների գործիչների մասին:

Գ. Ստեփանյանի «Կենսագրական բառարանը»¹⁸⁴: Բառարանն ունի տեղեկատու բնույթ և պարունակում է տվյալներ մոտ 10.000 հայ գործիչների կենսագրության մասին:

Աշխատանքում տեղ են գտել հայ հիմնականում մշակույթի գործիչները՝ գրողներ, արվեստագետներ, հրապարակախոսներ, գրականագետներ, լեզվաբաններ, թարգմանիչներ, կրթական գործիչներ և այլք: Վերոհիշյալ գործիչներից բացի՝ բառարանում տեղ են գտել նաև՝ ա) պետական, քաղաքական այն գործիչները, որոնք արժանացել են միջազգային կամ համախորհրդային ճանաչման, բ) այն գործիչները, որոնք ծագումով հայ են, բայց ընդհանուր ճանաչում են ստացել օտար ժողովուրդների գրականության և արվեստի մեջ: Երրորդ հատորի հավելվածում զետեղված են նաև օտարազգի հայագետների կենսագրությունները:

«Ով ով է. հայեր. կենսագրական հանրագիտարան»¹⁸⁵: Հրատարակել է «Հայկական հանրագիտարան» հրատարակչությունը Երևանում: Նրանում տեղ են գտել մինչև օրս հրատարակված հայերեն և օտարալեզու տեղեկատուներում ներկայացված հայերը, ինչպես նաև անկախության շրջանի հայտնի գործիչները: Հանրագիտարանում ներկայացված անձանց ընտրությունը կատարվել է ընդհանուր չափանիշներով՝ հասարակական-քաղաքական կյանքի առաջին դեմքեր, գիտության, գրականության, մշակույթի, սպորտի և մյուս բնագավառների ճանաչված ներկայացուցիչներ, որոնք հիմնադրել կամ զարգացրել են այլևայլ ոլորտների առանձին ուղղություններ, ունեն գիտությունների դոկտորի գիտական աստիճան, արժանացել են ԽՍՀՄ, ՀԽՍՀ և ՀՀ ժողովրդականի և վաստակավորի կոչումների, ինչպես նաև զինվորական բարձրագույն կոչումների (գեներալներ և մարշալներ), ՀՀ նախագահի, պետական և այլ մրցանակների, պարգևատրվել են պետական (և ոչ միայն Հայաստանի) և այլ շքանշաններով: Սա հայ անձնանունների առաջին համապարփակ հանրագիտարանն է, որում մեկտեղված են վաղնջական ժամանակներից (հայոց ավանդական նահապետներից) մինչև XXI դարի սկիզբը գործած

¹⁸⁴ Մրեհիսնյան Գ., Կենսագրական բառարան, հտ. I-III, Երևան, 1973-1990:

¹⁸⁵ Ով ով է. հայեր. կենսագրական հանրագիտարան, հտ. I-II, Երևան, 2005-2007:

մշակութային, գիտական, տեխնիկական, ռազմական, արտադրական, կրոնական և այլ ոլորտների փաստորեն բոլոր հայ երախտավորների կենսագրությունները:

Տեղանունների և աշխարհագրական անունների բառարաններ

Այս կարգի բառարաններում ներկայացվում, նկարագրվում, երբեմն նաև ստուգաբանվում են տեղանուններն ու աշխարհագրական անունները: Հայ իրականության մեջ այս ուղղությամբ կատարված համարյա բոլոր աշխատանքները մինչև XX դ. թերի են մնացել, չեն ավարտվել:

«**Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան**»¹⁸⁶: Հայաստանի տեղանունների և աշխարհագրական անունների լիակատար, բազմահատոր բառարան կազմելու գործին տասնամյակներ շարունակ ձեռնամուխ են եղել ԵՊՀ պրոֆեսորներ Թ. Հակոբյանը, Հ. Բարսեղյանը և Ս. Մելիք-Բախչյանը:

Տարածքային առումով բառարանն ընդգրկում է պատմական Հայաստանի և սահմանակից երկրների մի շարք գավառներ, որոնք այս կամ այն չափով առնչվել են հայ ժողովրդի պատմությանը և մշակույթին: Բառարանում տեղ են գտել հնագույն ժամանակներից մինչև XX դարի վերջը եղած և մեզ հասած տարբեր ծագման՝ բնիկ հայկական և օտար (խեթական, խուռիական, ուրարտական, հայասական, պարսկական, արաբական, վրացական, թուրքական, քրդական, ռուսական և այլն) պաշտոնական գրականության մեջ և քարտեզներում հիշատակվող բոլոր տեղանունները: Բնակավայրերի և վարչական միավորների անունները ներկայացվում և բնութագրվում են Խորհրդային Միության մեջ մտնող տարածքների տեղանունների վիճակով, իսկ մյուս պետությունների մեջ մտնող տարածքների նույնատիպ անունները՝ հիմնականում մինչև Առաջին համաշխարհային պատերազմը եղած դրությամբ:

Բառարանի անվանացանկում տեղ են գտել ավանների, դաս-

¹⁸⁶ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. I-V, Երևան, 1986-2007:

տակերտների, գյուղերի, գյուղաքաղաքների, քաղաքների, առողջարանների, պատմական վայրերի, ճանապարհային կայանների, հատուկ անուն ունեցող կամուրջների, քարավանատներ, քաղաքների թաղամասերի, վարչատարածքային և քաղաքական միավորների, ինչպես նաև ֆիզիկաաշխարհագրական տարբեր անվանումների՝ լեռնագագաթների, աշխարհագրական շրջանների (դաշտերի, հովիտների, սարահարթների, գետերի ու գետակների, լճերի ու լճակների), հանքավայրերի, հատուկ անուն ունեցող հանքային աղբյուրների հիմնական անուններն ու նրանց բոլոր տարբերակները:

Բառահողվածի քովանդակությունը: Բառահողվածներում՝ գլխաբառի տակ, տվյալ անվան մասին հաղորդվում են աշխարհագրական, պատմական, լեզվաբանական, ազգագրական և այլ կարգի տեղեկություններ:

Բնակավայրերին վերաբերող բառահողվածներում տեղեկություններ են տրվում դրանց հիմնադրման ժամանակի, պատմության, բնակչության թվի ու զբաղմունքի, ճարտարապետական հուշարձանների, աշխարհագրական պայմանների և այլնի մասին: Բոլոր խմբերի օբյեկտների տեղը տրվում է ըստ աշխարհագրական շրջանների և առավել հայտնի մոտակա վայրի նկատմամբ ունեցած դիրքի: Բնակավայրերի գոյության ժամանակները որոշակի դարձնելու նպատակով նշվում է այն վարչատարածքային կամ քաղաքական միավորը, որտեղ գտնվում է տվյալ բնակավայրը:

Հայաստանի աշխարհագրական օբյեկտների և բնակավայրերի՝ տարբեր ժամանակներում պատմական և ժամանակակից տարածքային միավորների մասին ավելի կոնկրետ գաղափար կազմելու համար բառարանում գետեղված են մանրամասն քարտեզներ, ինչպես նաև բնական տեսարանների, բնակավայրերի և առանձին հուշարձանների ու կոթողների լուսանկարներ:

Պատմական հանրագիտարաններ

«Հայկական հարց» հանրագիտարան: Կազմել է Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրությունը: Առաջին հրատարակությամբ գիրքը լույս է տեսել ռուսերեն Երևանում 1991 թ.: 1996-

ին որոշակի լրացումներով և ճշգրտումներով վերահրատարակվել է հայերեն: Այս գրքով հայ իրականության մեջ առաջին անգամ ստեղծվել է մի համահավաք տեղեկատու Հայկական հարցի ծագման, զարգացման ու արդի վիճակի, Թուրքիայում հայերի ցեղասպանության, Արևմտյան Հայաստանում ազգային-ազատագրական շարժման, Արցախյան ազատամարտի և ընդհանրապես Հայկական հարցին առնչվող պատմական իրադարձությունների և ժամանակակից այլևայլ խնդիրների, ինչպես նաև անձերի մասին:

Հանրագիտարանում¹⁸⁷ այբբենական կարգով զետեղված են հողվածներ Հայկական հարցին վերաբերող միջազգային պայմանագրերի, համաձայնագրերի և դիվանագիտական այլ փաստաթղթերի, այդ հարցին նվիրված միջազգային բանակցությունների ու վեհաժողովների մասին, հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման, Հայոց ցեղասպանության նկատմամբ մեծ տերությունների ու միջազգային հանրության դիրքորոշման մասին: Կան կենսագրական տեղեկություններ հայ ազգային-ազատագրական պայքարի նվիրյալների, հայ և այլերկրյա պետական, քաղաքական, հասարակական գործիչների, գիտնականների մասին, որոնք հետազոտել են հայկական հարցի և ցեղասպանության պատմությունը: Հանրագիտարանային հողվածներն ունեն հայերեն և օտար լեզուներով մանրամասն մատենագիտություն, որը կարևոր է հատկապես Հայկական հարցը ուսումնասիրողների համար: Հանրագիտարանը պարունակում է շուրջ 900 հողված, 25 քարտեզ, ավելի քան 400 լուսանկար, որոնց մի մասն ունի վավերագրական արժեք:

«Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994» հանրագիտարան: «Հայկական հանրագիտարան» հրատարակչությունը լույս է ընծայել Երևանում 2004 թ.: Բաղկացած է ավելի քան 860 մեծադիր էջից, ունի 2500 բառահողված, 1800 պատկերագրություն, 42 աշխարհագրական և վավերագրական-շտաբային քարտեզ:

¹⁸⁷ Տե՛ս Հայկական հարց. հանրագիտարան Երևան, 1996, էջ 5-6:

Հանրագիտարանում¹⁸⁸ գետեղված են հողվածներ ռազմական գործողությունների, ընդհատակում և թիկունքում գործած կազմակերպությունների, կամավորական ջոկատների, պաշտպանական շրջանների, զորքերի, զենքի տեսակների մասին: Առանձին բառահողվածներով ներկայացված են պատերազմի զորավարներն ու ղեկավարները, Հայաստանի Ազգային և Արցախի հերոսները, ՀՀ և ԼՂՀ «Մարտական խաչ» շքանշանով պարգևատրվածները, ազգային-ազատագրական պայքարի նվիրյալները, արցախյան հիմնահարցով զբաղվող հայաստանյան և օտար պետական, հասարակական-քաղաքական գործիչները և միջազգային կազմակերպությունները: Հիմնականում տեղի խնայողության նպատակով նյութի մի մասը ներկայացված է թեմատիկ հողվածների տեսքով՝ «Բժիշկները Ղարաբաղյան ազատագրական պատերազմում», «Ուսանողները Ղարաբաղյան ազատագրական պատերազմում», «Օղբաչուները Ղարաբաղյան ազատագրական պատերազմում» և այլն: Առանձի բառահողվածներով ներկայացված են նաև Սումգայիթում, Կիրովաբադում, Բաքվում, Գարդմանքում և այլուր հայերի հանդեպ Ադրբեջանի իրագործած ոճրագործությունները: Գրքի վերջում ներկայացված է Արցախյան պատերազմում և Հայաստանի սահմանամերձ շրջաններում հայրենիքի պաշտպանության համար զոհված ազատամարտիկների ցուցակ:

«**Հայ Սփյուռք**» հանրագիտարան: Կազմել և հրատարակել է «Հայկական հանրագիտարան» հրատարակչությունը: Լույս է տեսել 2003 թ. Երևանում: Սա հայ բառարանագրության մեջ առաջին և հաջողված փորձն է ստեղծելու համապարփակ բնույթի հանրագիտարան շուրջ 70 երկրների հայկական համայնքների մասին: Յուրաքանչյուր բառահողված սկսվում է տվյալ երկրի մասին պատմական ակնարկով՝ համայնքի ձևավորման ժամանակներից մինչև 2000-ական թթ. սկիզբը¹⁸⁹: Տրված են տեղեկություններ երկու

¹⁸⁸ Տե՛ս Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994, հանրագիտարան, Երևան, 2004, «Հրատարակչության կողմից» առաջաբանը, էջ 6-8:

¹⁸⁹ Տե՛ս Հայ Սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003, «Խմբագրության կողմից» նախաբանը, էջ 5-6:

ժողովուրդների կապերի, առաջին ներգաղթողների, համայնքի կազմակերպման և կայացման փուլերի, հայապահպան կառույցների, հայերի սոցիալական կազմի, տվյալ երկրի նշանավոր հայազգի գործիչների մասին: Առանձին ենթավերնագրերով ներկայացված են տվյալ երկրի՝

1) հայ **եկեղեցին** (հայ առաքելական և եթե կան, հայ ավետարանական, կաթոլիկ և այլ համայնքները), հայկական եկեղեցիները, եկեղեցական կառույցների գործունեությունը:

2) Հայկական **դպրոցը**՝ հայկական կրթական հաստատությունները՝ ըստ հիմնադրման թվականի, դասավանդվող առարկաները, աշակերտների մոտավոր թիվը, ինչպես և տվյալ երկրի հայ կրթական համակարգի առանձնահատկությունները:

3) **Հասարակական-քաղաքական կյանքը**՝ քաղաքական, բարեգործական, մշակութային, մարզական, հայրենակցական կազմակերպությունները՝ ըստ հիմնադրման թվականի, դրանց խնդիրներն ու նպատակները, իրականացրած ծրագրերը:

4) **Մշակույթը**՝ առանձին ենթաբաժիններով (գրականություն, թատրոն, կինո, կերպարվեստ, երաժշտություն, պարարվեստ): Ներկայացված է համայնքի ընդհանուր մշակութային կյանքը, տվյալ բնագավառի հայազգի գործիչների ծառայությունները:

5) **Մամուլը**՝ տվյալ երկրում լույս տեսած հայկական պարբերականները (հայերեն և օտարալեզու)՝ այբբենական կարգով, հիմնադրի և խմբագիրների անունները, լույսընծայման ժամանակահատվածը, արժարժված գլխավոր թեմաները:

6) Հատորի վերջում կա «**Կազմակերպություններ**» բաժինը, որտեղ այբբենական կարգով ներկայացված են համասփյուռքյան հասարակական-քաղաքական, մշակութային, բարեգործական, հայրենակցական, եկեղեցական կազմակերպությունները:

«Հայ Սփյուռք» հանրագիտարանի լույսընծայումը կարևոր նշանակություն ունի հայագիտության սակավ ուսումնասիրված ճյուղերից մեկի՝ սփյուռքագիտության զարգացման, ինչպես նաև հայրենիք – Սփյուռք կապերի ամրապնդման համար, քանի որ

Հայաստանի կողմից Սփյուռքի առավել համակողմանի ճանաչումը այդ կապերի խորացման կարևոր գործոններից է¹⁹⁰:

Հանրագիտարանը բաղկացած է 730 մեծդիր էջից, ունի շուրջ 70 քարտեզ և ավելի քան 750 նկարազարդում:

Իհարկե, հայկական հանրագիտարանները այսպանով չեն սահմանափակվում: Միայն վերջին 20-25 տարում հրատարակվել են ամենաբազմաբնույթ և բազմատեսակ հանրագիտարաններ, ինչպես՝ «Ընտանեկան հանրագիտարան» մատենաշարը՝ բաղկացած երեք գրքից՝ «Տնային տնտեսության հանրագիտարան» (Երևան, 1997), «Հանրամատչելի բժշկական հանրագիտարան» (Երևան, 2001), «Հայաստանի բնաշխարհ» (Երևան, 2006), «Հայաստան հանրագիտարան (Հայաստանի Հանրապետություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն)» (Երևան, 2012), «Գալոցական մեծ հանրագիտարան» (գիրք I, հտ. 1-2, գիրք II, հտ. 1-2, Երևան, 2008-2010) և այլն:

Բանասիրական կամ լեզվաբանական բառարաններ

Այս տիպի բառարաններում, ըստ բառարանի տեսակի, տրվում են բառերի կամ դարձվածքների բացատրությունը, իմաստային համապատասխանությունը, ստուգաբանությունը ուղղագրությունը, ուղղախոսությունը և կամ նրանց թարգմանությունը: Բանասիրական բառարանները բաժանվում են երկու մեծ խմբի՝ **միալեզվյան** և **բարգմանական**:

Միալեզվյան բառարանների շնորհիվ յուրացվում է մայրենի կամ որևէ մեկ այլ լեզվի բառերի, տերմինների, դարձվածքների իմաստային հարստությունը, բառերի ծագումը, կառուցվածքը, գրությունը, արտասանությունը և այլն: Թարգմանական բառարանների շնորհիվ յուրացվում է օտար լեզվի բառային և դարձվածաբանական հարստությունը:

¹⁹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 6:

Հայ բառարանագրության պատմությունը անցել է իր զարգացման ձեռագիր և տպագիր բառարանների փուլերը: Հայ տպագիր բառարանագրությունը կարելի է ստորաբաժանել հնատիպ և նոր բառարանագրության: Հայ տպագիր բառարանագրությունը ձեռագիր բառարանագրության շարունակությունն է, նրա զարգացման և կատարելագործման արդյունքը:

Հայերեն հնատիպ բառարաններ

Հայ տպագրությունը կազմակերպվում է 1512 թ. (Գյուտենբերգի տպագրության գյուտից 57 տարի հետո) Հայաստանից դուրս՝ հայկական գաղթօջախներում: Հայերեն տպագիր առաջին բառարաններն առնչվում են լատիներենին:

1621 թ. Միլանում լույս է տեսնում **Ֆրանչեսկո Ռիվոլայի «Հայերեն-լատիներեն բառարանը»**, որ պարունակում է շուրջ տասը հազար ութ հարյուր բառ և բառակապակցություն: Սույն բառարանը 1633 թ. վերահրատարակվում է Փարիզում:

1695 թ. Հռոմում լույս է տեսնում լեհահայ **Աստվածատուր Ներսեսովիչի «Լատիներեն-հայերեն բառարանը»**: Այն բաղկացած է 596 երկսյուն էջերից և պարունակում է շուրջ 17500 բառահոդված:

1714 թ. նույնպես Հռոմում հրատարակվում է **Հակոբ Վիլոդի** ընդարձակ **«Լատիներեն-հայերեն նոր բառարանը»**: Պարունակում է մոտ 25 հազար բառահոդված: Ուշագրավ է այն, որ բառարանում տեղեկություններ են տրվում հայերենի քերականության վերաբերյալ:

Լատիներենին առնչվող բառարանների հրատարակությունը նշանակալից երևույթ էր այդ դարերի հայ մշակութային կյանքում: Դրանք որոշակի արժեք են ներկայացնում նաև հայոց լեզվի պատմության, հատկապես ժամանակի կենդանի խոսակցական լեզվի ուսումնասիրության, աշխարհաբարի և բարբառների բառապաշարի մի շարք այլ հարցերի լուսաբանման համար:

Հայ նոր բառարանագրություն

Հայ բառարանագրության նոր շրջանն սկսվում է 18-րդ դարի երկրորդ կեսից և շարունակվում է մինչև մեր օրերը: Այդ շրջանն իր մեջ առնում է նախախորհրդային, խորհրդային և այսօր արդեն հետխորհրդային փուլերը: Այդ շրջանում գիտական հիմունքներով մշակվում և կատարելության է հասնում ժամանակակից բառարանագրությունը, գիտության մակարդակին համապատասխան զարգանում և կատարելագործվում են բառարանների հին տեսակները, ստեղծվում են նորերը:

18–19-րդ դարերի հայ բառարանագրության մեջ զգալի է Մխիթարյանների դերը: Նրանց ջանքերով են ստեղծվում բացատրական (Հին Հայկազյան, Նոր Հայկազյան), թարգմանական, մասնագիտական-տերմինաբանական, հանրագիտական (կենսագրությունների, տեղանունների և այլն) մի շարք բառարաններ:

Մինչև 1920-ական թթ. հայ բառարանագրությունը հիմնականում զարգանում է Հայաստանի սահմաններից դուրս, հայ գաղթօջախներում, Անդրկովկասի, Ռուսաստանի և Եվրոպայի հայաշատ ու հայաբնակ վայրերում:

Հայ բառարանագրությունը իր աննախընթաց զարգացումն է ապրում խորհրդային շրջանում: Այդ շրջանում են ստեղծվում միալեզվյան, թարգմանական, մասնագիտական և հանրագիտական աչքի ընկնող բառարանները, ազգային գրական լեզվի բացատրական մեծ բառարանները, հրապարակ են գալիս արմատական-ստուգաբանական, հոմանիշների, դարձվածաբանական, ուղղագրական, ուղղախոսական, երկլեզվյան-թարգմանական ընդհանուր և մասնագիտական-տերմինաբանական մի շարք բառարաններ:

Միալեզվյան բառարաններ

Բանասիրական բառարանները բաժանվում են երկու մեծ խմբի՝ միալեզվյան և թարգմանական: Միալեզվյան բառարանների մեջ առաջնակարգ տեղ են գրավում բացատրական բառարանները: Այս

կարգի բառարաններում բացատրվում են լեզվի մեկ շրջանի կամ բոլոր շրջանների բառապաշարի մեջ մտնող բառերը, բերվում են իմաստները հաստատող օրինակներ, տրվում են քերականական, ոճական կիրառական բնութագրումներ և հանձնարարականներ:

Հայտնի են անգլերենի 25 հատորանոց «Օքսֆորդյան բառարանը», որ պարունակում է մոտ 400 հազար բառ, ամերիկյան Վեբստերի բառարանը, որ ընդգրկում է 150 հազար բառ: Նկատելի է, որ հիշյալ բառարանների բառացանկը աճել է տերմինաբանական բառերի հաշվին: Ֆրանսերենի համար գործածության մեջ է Լառուսի բառարանը, որ ամեն տարի վերահրատարակվում է նույնությամբ և կամ որոշ հավելումներով: Գերմաներենի նույնատիպ բառարաններից հիշատակության արժանի է Գրիմ եղբայրների բառարանը: Ռուսերենի համար հիշատակելի են մի շարք բացատրական բառարաններ, այդ թվում՝ Ուշակովի բառահատոր, ԽՍՀՄ ԳԱ չորս և տասնյոթհատորանոց բառարանները (այս բառարանի հետխորհրդային երրորդ հրատարակությունը դեռ շարունակվում է. լույս են տեսել առաջին 23 հատորները):

Գրաբարի և միջին հայերենի բացատրական բառարաններ

Հայ հին գրական լեզվին վերաբերող բացատրական բառարանները իրականում պատմական բառարաններ են:

Մխիթար Սեբաստացու «Բառգիրք հայկազեան լեզվի»¹⁹¹ բառարանը: Այս բառարանը գրաբարի՝ գիտական սկզբունքներով կազմված առաջին բացատրական բառարանն է. բանասիրության մեջ այն կոչվում է նաև Հին Հայկազյան բառարան: Այն բաղկացած է երկու հատորից: Առաջին հատորը լույս է տեսել 1749 թ., երկրորդը՝ 1769 թ.:

Մյս. Սեբաստացին (կամ Աբբան) բառարանի կազմության աշխատանքներին ձեռնամուխ է եղել 1727 թ. և ավարտել՝ 1745 թ.: Նա հավաքել է հայերեն տպագիր և անտիպ մատենագրական երկե-

¹⁹¹ Մեքաստացի Մ., Բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, Ա հատոր, 1749, Բ հատոր, 1769:

րը, հայաբնակ տարբեր վայրերում ծանոթացել կամ այդ վայրերից բերել է տվել տարբեր բովանդակության հայերեն ձեռագրեր, զանազան բնագրեր և դրանց ընձեռած նյութի, այսինքն՝ հին հայկական ինքնուրույն և քարգմանական գրականության՝ տարբեր բովանդակություն ունեցող երկերի հիման վրա կազմել է իր բառարանի բառացանկը, տարբերակել բառերի իմաստները, գիտական սկզբունքներով կատարել է գրաբարյան բառերի իմաստաբանական դասակարգումը, պարզել՝ բառերի քերականական ձևերը (հոլովում, խոնարհում):

Առաջին հատորը ամբողջապես գրաբարի բացատրական բառարանն է, պարունակում է 35-40 հազար բառ և կապակցություն: Բառահոլովածը կազմված է գլխաբառից, բերվում են քերականական տվյալներ (գլխաբառի հոլովման կամ խոնարհման ձևերը, բայի սեռը, հաճախ բառի խոսքիմասային պատկանելությունը, եթե բառը փոխառված է, նշվում է փոխաստու լեզուն): Այնուհետև տրվում է իմաստի բացատրությունը, որին հաճախ հետևում են գլխաբառի՝ աշխարհաբարյան (ռամկորեն), սակավ դեպքերում նաև թուրքերեն (տաճկերեն) համագործերը: Վերջում նշվում է այն աղբյուրը, որտեղից վերցված է բառը:

Բառարանի երկրորդ հատորը բաղկացած է մի քանի մասերից, որոնցից յուրաքանչյուրը իրենից առանձին բառարան է ներկայացնում:

Առաջին մասը (1-263 երկայուն էջ) պարունակում է առաջին հատորից դուրս մնացած բառերը:

Երկրորդ մասը (1-232) Աստվածաշնչի հատուկ անունների բառարան է: Բերվում են հատուկ անունները, տրվում են նրանց ստուգաբանությունը, բացատրությունը կամ մեկնությունը, նշվում աղբյուրը:

Երրորդ մասը (233–371) հատուկ անունների ընդհանուր բառարան է, որտեղ ընդգրկված են հիմնականում հայոց պատմությանն առնչվող անձնանունները, պատմական Հայաստանի տեղանունները և աշխարհագրական անունները, այլև հին և նոր քաղաքակրթությունների, հին և նոր աշխարհին վերաբերող նույնատիպ անունները: Բառարանում տրվում են մեկնություններ և համապատասխան

հանրագիտական, կենսագրական, ստուգաբանական և այլ տվյալներ, հաճախ էլ նշվում են աղբյուրները:

Չորրորդ մասը (1–416) գրաբար-աշխարհաբար բառարան է: Բառարանում տրվում են մոտ 35 հազար գրաբար բառերի աշխարհաբարյան (հաճախ նաև թուրքական) համանշանակները:

Հինգերորդ մասը (417–700) աշխարհաբար-գրաբար բառարան է:

Վերջին երկու մասերը իրականում հոմանիշների բառարաններ են, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է ավելի քան 40 հազար աշխարհաբար և գրաբար բառ, դարձվածքային միավոր կամ կապակցություն: Հոմանիշների շարքում հաճախ տրվում են նաև թուրքական համագործերը:

«Նոր բառգիրք հայկազյան լեզվի»¹⁹² բառարանը: Լեզվաբանական գրականության մեջ ավելի հաճախ կոչվում է Նոր Հայկազյան բառարան: Այն բաղկացած է երկու հատորից, պարունակում է մոտ 51 հազար բառահոդված: Հեղինակներն են Գ. Ավետիքյանը, Խ. Սյուրմեյանը և Մ. Ավգերյանը: Լույս է տեսել Վենետիկում 1836–37 թթ.:

Բառարանի կազմության աշխատանքները տևել են մոտ 50 տարի: Տպագրության համար նյութական անհրաժեշտ միջոցների բացակայության պատճառով հեղինակները հարկադրված են եղել 12 հատորանոց ձեռագիր աշխատանքը համառոտել և վերածել երկու հատորի:

Բառարանը կազմված է գրաբարի համբարբառ-քարտարանի հիման վրա, որն ընդգրկում է 5–17-րդ դարերի գրաբարյան բազմաբնույթ ձեռագիր և տպագիր մատենագրական բոլոր հուշարձանները:

Բառարանը պատմական, ակադեմիական-նորմատիվ բնույթ ունի: Իբրև պատմական և նորմատիվ բառարան այն ընդգրկում է հին գրական հայերենի՝ գրաբարի բառային կազմը և իմաստային համակարգի ողջ հարստությունը բառագործածության և բառիմաստների և քերականական ձևերի նորմատիվությամբ: Բառապաշարի և

¹⁹² Նոր բառգիրք Հայկազյան լեզուի, երկասիրություն երից վարդապետաց յաշակերտութենէ մեծին Մխիթարայ արքայոր՝ Հ. Գաբրիելի Աւետիքեան, Հ. Խաչատրոյ Սյուրմէլեան, ձ. Մկրտիչ Աւգերեան, հտ. Ա, Բ, Վենետիկ, 1836-1837:

բառիմաստների ընդգրկման ծավալով և լիակատարությամբ իրենից ներկայացնում է գրաբարի հազվագյուտ բառարան-գանձարան (thesaurus): Գրաբարյան բառերի օտարազգի (հունարեն, լատիներեն, թուրքերեն) համանշանակների ընդգրկմամբ այն միաժամանակ թարգմանական-բազմալեզվյան բառարան է, իսկ որոշ բառերի համար տրվող ստուգաբանական տվյալներով դառնում է նաև ստուգաբանական:

Բառահոդվածի կազմությունը: Գլխաբառից հետո տրվում են տվյալ բառի գրչությունները՝ հնչյունական տարբերակները, ապա՝ քերականական նշումները (հոլովման և խոնարհման ձևերը, քերականական կարգը, խոսքիմասային պատկանելությունը), այնուհետև՝ հունական և լատինական թարգմանական համանշանակները: Եթե բառը փոխառված է, նշվում է օտար աղբյուրը, բերվում է բառի ստուգաբանությունը, ապա տրվում է բառիմաստի կամ իմաստների բացատրությունը, հայերեն հոմանիշը և թուրքական համանշանակը, և վերջում ժամանակագրական կարգով հայ մատենագրությունից բերվում են համապատասխան ընտիր վկայություններ բառի յուրաքանչյուր իմաստը կամ իմաստային նրբերանգը, ոճական կիրառությունները, գործածության սահմաններն ու ոլորտները հաստատելու համար:

Գրաբարյան բառերի և դարձվածքային միավորների ընդգրկման ծավալով և լիակատարությամբ, իմաստների տարբերակմամբ և բացատրությամբ, քերականական և այլ նմուշներով, բառիմաստներին տրվող բնագրային օրինակներով, Նոր Հայկազյան բառարանը գրաբարի արժանի հուշարձանն է և խոշոր երևույթ հայ բառարանագրության և ընդհանրապես հայ մշակույթի պատմության մեջ:

Համառոտելով Նոր Հայկազյան երկհատոր բառարանը՝ Մ. Ավգերյանը կազմում և 1846 թ. Վենետիկում հրատարակում է «**Առձեռն բառարան Հայկազեան լեզուի**» խորագրով մի նոր աշխատություն, որը բանասիրության մեջ ընդունված է կոչել Հայկազյան Առձեռն բառարան: Նույնի երկրորդ՝ ավելի կատարյալ հրատարակությունը, լույս է տեսնում 1865 թ. Վենետիկում: Նախորդի համեմատությամբ բառացանկը հարստացել է ավելի քան 5 հազար նոր բառերով և մեծ

քանակությամբ ոճերով ու բառակապակցություններով:

Հեղինակն առաջին հրատարակությունը նախապատրաստելիս համարյա նույնությամբ թողնում է Նոր Հայկազյան երկհատոր բառարանի բառացանկը, կրճատում է միայն նրա գլխաբառին տրվող քերականական, ստուգաբանական տվյալներն ու նշումները, համառոտում և հիմնովին վերափոխում է բառիմաստների բացատրությունը, համարակալում առանձին իմաստները, բառահողվածից դուրս է թողնում բնագրային բոլոր օրինակները, ինչպես նաև հունական ու լատինական թարգմանական համագործերը:

Բառարանի կառուցվածքի սկզբունքային նորությունը այն է, որ գրաբարյան բառերի և իմաստների բացատրությունը կամ մեկնությունը տրվում է արևմտահայ գրական լեզվով:

Ռ. Ղազարյան, «Գրաբարի բառարան»¹⁹³: Բառարանն ընդգրկում է V-XI դդ. ինքնուրույն և թարգմանական երկերում վկայված գրաբարյան բառերը, ոճերն ու դարձվածքները: Բառացանկն ընդգրկում է Նոր Հայկազյան բառարանի նյութն ամբողջությամբ, որին հավելված են այդ բառարանի լույսընծայումից հետո հայտնաբերված մի ամբողջ շարք նորագյուտ բառեր¹⁹⁴: Գլխաբառից հետո բերված են դրա տարբեր գրչությունները (եթե կան): Ապա հետևում են համապատասխան քերականական նշումներ (գոյականների հոլովումը և որոշ հոլովաձևեր, դերանունների հոլովումը և տարարմատ ու տարահիմք ձևերը, բայերի անցյալի և հաճախ բուն հրամայականի ձևերը, սեռը, անկանոն ձևերը և այլն):

Բառիմաստները բացատրվում են հիմնականում նկարագրական և եղանակներով: Բացատրությունները գրական արևելահայերենով են: Փոխառությունների մոտ նշված է փոխատու լեզուն: Բառարանում հեղինակային վկայություններ բերված են միայն Նոր հայկազյան բառարանում տեղ չգտած բառերի և իմաստների համար: Բառարանը մեկ գրքով վերահրատարակվել է Բեյրութում:

¹⁹³ Ղազարյան Ռ., Գրաբարի բառարան, հտ. Ա-Բ, Երևան, 2000:

¹⁹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 5-8:

Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, «Միջին հայերենի բառարան»¹⁹⁵: Բառարանն ընդգրկում է XII-XVI, մասամբ XVII դարերում հայերենի բառապաշար մուտք գործած այն բառերը, ոճերն ու դարձվածքները, որոնք ձևախմբատալիս առումով բնորոշ չեն գրաբարին և ընդհանրապես չեն հանդիպում V-XI դդ. մատենագրության մեջ¹⁹⁶: Բառի գրչական ձևերը, եթե առանձին վկայված չեն, տրվում են մեկ բառահոդվածում, իսկ անկախ գործածության դեպքում բերվում են որպես գլխաբառ՝ *տե՛ս* հղմամբ: Գլխաբառերի մոտ կան համապատասխան քերականական նշումներ (խոսքի մասը, գոյականների սեռականի և հոգնակի ուղղականի վերջավորությունները, բայերի սեռը, հաճախ անցյալ կատարյալի առաջին դեմքի վերջավորությունը և հրամայականի եզակին, բառաձևերի անկանոն կազմությունները և այլն): Բառահոդվածի վերջում բերված են դարձվածաբանական միավորները: Բառարանում բառերի բոլոր նշանակություններն ու կիրառությունները անպայման ունեն համապատասխան հեղինակային վկայություն: Բառարանը 2009 թ. վերահրատարակվել է մեկ գրքով:

Ստուգաբանական բառարաններ

Այդ կարգի բառարանները ընդգրկում են տվյալ լեզվի արմատական բառերը, նշվում է նրանց ծագումը կամ կապը ցեղակից և ոչ ցեղակից լեզուների հետ:

Ստուգաբանական բառարանները լինում են երկու տիպի: Առաջինը արմատական բառարանի տիպն է: Այն պարունակում է լեզվի բոլոր արմատական բառերը, անկախ այն բանից, թե դրանց ստուգաբանությունը հայտնի է, թե ոչ:

Մյուս տիպը ընդգրկում է միայն լեզվի այն բառարմատները, որոնց ստուգաբանությունը հայտնի է (օր.՝ Բուազակի «Հունարենի ստուգաբանական բառարանը», Վալդեի «Լատիներենի ստուգաբա-

¹⁹⁵ Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, հտ. Ա-Բ, Երևան, 1987-1992:

¹⁹⁶ Նույն տեղում, էջ 3:

նական բառարանը» և այլն):

Հ. Աճառյանի ստուգաբանական բառարանը այդ երկու տիպի բառարանների ամփոփումն է:

Հ. Աճառյանի «Հայերենի արմատական բառարանը» (1-ին հրատ. 7 հատոր, 6 հատորները ապակետիպ, Երևան, 1926 թ., 7-րդ հատորը տպագիր, 1935 թ., 2-րդ հրատ., 4 հատորով, Երևան, 1971–1980 թթ.): Բառարանն ընդգրկում է մոտ 11 հազար (10998) բառարմատ, որից 2221 արմատ անվավեր է համարվում. մնացած 8775 արմատից ստուգաբանվում է 5095-ը, որից 927-ը բնիկ (հնդեվրոպական), 4015-ը փոխառյալ, 155-ը բնաձայնական, 3680-ը՝ դեռևս չստուգաբանված:

Բառահողվածի կազմությունը: Բառահողվածը կազմված է հինգ բաժիններից: Առաջին բաժնում գլխաբառից հետո տրվում են նրա հոլովման կամ խոնարհման ձևերը, բառարմատը ենթարկվում է քերականական բնութագրման: Բառարմատի քերականական մշակմանը հետևում է բառիմաստի կամ իմաստների մեկնությունը, որի չափանիշը գրաբարյան իմաստներն են: Այդ հատվածում հաջորդականորեն նշվում են բառիմաստի զարգացման փուլերը՝ հնագույն շրջանից մինչև մեր ժամանակները, գրաբարից մինչև ժամանակակից հայոց լեզվի շրջանը ներառյալ:

Գլխաբառի և նրա իմաստների համար այնուհետև բերվում են վկայություններ հայ մատենագրությունից: Բնագրային այդ օրինակները երկու նպատակ են հետապնդում՝ որոշել բառարմատների գործածության ժամանակը և ճշտել նրանց իմաստներն ու իմաստային նրբերանգները: Արմատի վկայությունից հետո բերվում են տվյալ արմատից կազմված կարևոր բառերը, որի նպատակն է, նախ, ցույց տալ այդ բառարմատի կենսունակությունը հայոց լեզվի պատմական զարգացման ընթացքում և նշել բառակազմության մեջ արմատի կրած հնչյունական փոփոխությունները: Այնուհետև բերվում են բառարմատի տարբեր գրչությունները, ուղղագրական այն տարբերակները, որոնք որոշակի արժեք են ներկայացնում՝ հասկանալու արմատի հնչյունական փոփոխության պատճառները հատկապես հայերենի բարբառների ուսումնասիրման համար:

Բառահողվածի առաջին բաժինը իրենից ներկայացնում է բառարմատի բառագիտական, իմաստաբանական և բառակազմական բազմակողմանի ուսումնասիրություն, հնչյունափոխական օրինաչափություններով և հնչյունական տարբերակներով հանդերձ:

Երկրորդ բաժինը բառարանի բուն ստուգաբանական մասն է: Այս բաժնում բնիկ հայերեն բառերի դիմաց դրվում է բառի հնդեվրոպական մայր ձևը, այնուհետև՝ նրանից առաջացած համապատասխան ձևերը քույր լեզուներում: Հնդեվրոպական մայր լեզուների հետ հիշատակվում են նաև նրանցից ծագած մերձավոր ցեղակից լեզուները: Այս հատվածը փաստորեն ներկայացնում է հայերենի և հնդեվրոպական քույր լեզուների ընդհանուր ծագմամբ բառերի համեմատական բառացանկ: Հայերեն փոխառյալ արմատները ստուգաբանելիս նշվում է այն լեզուն, որից հայերենը փոխ է առել տվյալ բառը, բերվում է փոխատու լեզվով այդ բառի գրությունը, ինչպես նաև նրա իմաստը այդ լեզվում: Վերջում հիշատակվում է այդ բառի ստուգաբանությունն առաջին անգամ առաջարկած հեղինակի անունը և աղբյուրը: Բոլոր այն բառերը, որոնք բնիկ հայերեն չեն կամ չեն կապվում որևէ այլ լեզվի հետ և փոխառություն չեն համարվում, այսինքն՝ գիտականորեն չի հաստատվում նրանց ծագումը, համարվում են չստուգաբանված բառեր:

Երրորդ բաժինը վերաբերում է չստուգաբանված կամ կասկածելի ստուգաբանություն ունեցող բառարմատներին, այն բառերին, որոնք կան բոլորովին չեն ստուգաբանվում, կան էլ եղած ստուգաբանությունները չեն բավարարում գիտական արդի պահանջներին, հետևաբար և ընդունելի չեն: Այստեղ տրվում է այս կարգի արմատների մասին եղած ստուգաբանության պատմությունը, բերվում են առաջարկվող բոլոր ստուգաբանությունները, դրանց հեղինակները, ինչպես նաև աղբյուրները: Այս բաժինը տեղեկատու-մատենագիտական աղբյուր է մասնագետների համար տվյալ արմատի ստուգաբանության պատմությանը ծանոթանալու և հետազայում հնարավոր այդ կարգի և նման սխալներից խուսափելու համար:

Չորրորդ բաժնում, որ անվանվում է գալառական, տրվում են բառի կամ բառարմատի համապատասխանությունները հայերեն

բարբառներում: Հ. Աճառյանը բերում է գլխավորապես բարբառներում դրանց հնչյունական տարբերակները, ինչպես նաև իմաստային փոփոխություններն ու բառակազմական ձևափոխությունները: Բառարմատի վերոհիշյալ լեզվական իրողությունները դիտվում են հայերենի 30-ից ավելի բարբառներում, որոնք բառարանի կազմության ժամանակ հիմնականում իր իսկ հեղինակի շնորհիվ հայտնի էին հայագիտությանը: Վերջին՝ հինգերորդ բաժնով եզրափակվում է բառահոդվածը, որում քննվում է հայերենի ազդեցությունն ուրիշ լեզուների վրա: Ամփոփվում են այլ լեզուների՝ հայերենից կատարած փոխառությունները, որոնք առանձնապես արժեքավոր են այն առումով, որ այդ ուղղությամբ հայագիտության մեջ համեմատաբար քիչ աշխատանք է կատարված:

Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանը» բառարմատների ընդգրկման ծավալով, նրանց հնչյունական, քերականական, իմաստաբանական, բառակազմական, ստուգաբանական, ստուգաբանության պատմության, բարբառագիտական մշակմամբ և հանրագիտական-մասնագիտական այլևայլ տվյալների հարստությամբ նշանակալից երևույթ է ոչ միայն հայ, այլև համաշխարհային բառարանագրության պատմության մեջ¹⁹⁷:

Աշխարհաբար գրական լեզվի բացատրական բառարաններ

Ս. Գաբամաճյանի բառարանը: Արևմտահայերենի առձեռն բառարան է համարվում Ս. Գաբամաճյանի «Նոր բառգիրք հայերեն լեզվի»¹⁹⁸ աշխատությունը, որն առաջին հրատարակությամբ լույս է տեսել 1892 թ., երկրորդ ավելի կատարյալ և բարեփոխված հրատարակությամբ՝ 1910 թ. Կոստանդնուպոլսում:

¹⁹⁷ Հայերենին առնչվող այլ բառարանների համառոտ նկարագրությունը տես սույն դասագրքի նախորդ հրատարակություններում (օրինակ, Երևան, 1999, էջ 336-349), նաև՝ *Ջահուկյան Գ., Աղայան Էդ., Առաքելյան Վ., Քոսյան Վ.*, Հայոց լեզու, I մաս, Ա պրակ, էջ 514-524, *Մարգարյան Ա.*, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1990, էջ 361-399:

¹⁹⁸ *Գաբամաճյան Ս.*, Նոր բառգիրք հայերեն լեզուի, Կ. Պոլիս, 1892, երկրորդ հրատարակությունը՝ Կ. Պոլիս, 1910:

Բառարանը պարունակում է մոտ 70 հազար բառ: Բառացանկն ընդգրկում է գրաբարի և աշխարհաբարի՝ հատկապես արևմտահայ գրական լեզվի, ինչպես նաև բարբառային (զավառական) բառերը: Բառահոդվածը կազմված է առձեռն բառարանի սկզբունքով. տրվում են գլխաբառը և նրա հակիրճ բացատրությունը (կամ հոմանիշները), անհրաժեշտության դեպքում բերվում են նաև հականիշները, որոշ դեպքերում (եթե բառը նորաբանություն կամ տերմին է) տրվում են նաև ֆրանսերեն, լատիներեն համագործերը կամ թուրքական համանշանակը: Գիտատեխնիկական, կենդանաբանական և բուսաբանական շատ տերմինների դիմաց բերվում է նաև նրանց նկարը կամ գծագիրը, որը նույնպես բացատրության եղանակներից մեկն է: Բանասիրական բացատրություններից բացի՝ որոշ բառերի վերաբերյալ բերվում են նաև հանրագիտական բնույթի տվյալներ: Աստղանիշով տրված են բոլոր այն նորաբանությունները, որոնք տեղ չեն գտել նախորդ բացատրական բառարաններում: Հատուկ ուշադրություն է դարձվում գլխաբառերին տրվող քերականական բնութագրումներին: Հատկապես նշվում է բառի խոսքիմասային պատկանելությունը, բերվում են թեքման ձևերը՝ հոլովումն ու խոնարհումը: Չեն տրվում բառիմաստները հաստատող բնագրային օրինակներ:

Բառարանի առանձնահատկություններն ու աչքի ընկնող արժանիքները հետևյալն են.

ա) Այն արևմտահայ գրական լեզվի առաջին բառարանն է, որտեղ փորձ է արված գրաբարին զուգընթաց որոշ չափով ներկայացնելու նաև արևմտահայ գրական լեզվի բառապաշարը, ի տարբերություն մյուս բառարանների՝ բառերի բացատրությունները տրվում են արևմտահայերենով և ոչ թե գրաբարով:

բ) Բառացանկում որոշ տեղ է հատկացվել նաև կյանքի տարբեր բնագավառներին վերաբերող տերմիններին, որով և խթանվել է հայ տերմինաշինարարական գործունեությունը:

գ) Առանձնապես որոշակի արժեք են ներկայացնում աստղանիշով առանձնացվող նորաբանությունները, որոնց ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի արևմտահայ գրական լեզվի բառապաշարը, նրա զարգացման ընթացքն ուսումնասիրելու համար:

Սո. Մալխասյանցի քառահատոր «Հայերեն բացատրական բառարանը»¹⁹⁹ լույս է տեսել 1944–45 թթ. և պարունակում է հայոց լեզվի բոլոր դրսևորումների՝ գրաբարի, միջին հայերենի, բարբառների, գրական լեզվի արևելահայ և արևմտահայ տարբերակների մոտ 120 հազար բառ և դարձվածքային միավոր:

Բառերի և դարձվածքների ընդգրկմամբ, բառիմաստների տարբերակմամբ և բառերին տրվող ոճական ու քերականական նշումներով ու բնութագրումներով այն ոչ միայն ազգային գրական լեզվի առաջին ընդարձակ, այլև որոշ իմաստով պատմական բառարան է:

Նրանում համատեղված են ինչպես պատմական, այնպես էլ ժամանակակից գրական լեզվի բացատրական բառարանների սկզբունքները: Այն արդի գրական լեզվի բառարան է իր՝ ժամանակակից գրական հայոց լեզվի՝ արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարով, բառերի և դարձվածքների ժամանակակից իմաստների տարբերակմամբ, նրանց կիրառության ոլորտների, ոճական ու գործածության սահմանափակման վերաբերյալ բազմազան նմուշներով և հանճնարարականներով. պատմական է՝ գրաբարյան, միջին հայերեն և բարբառային բառապաշարի ընդգրկման ծավալով և շերտերով, ինչպես նաև բառիմաստի պատմական զարգացման տվյալներով, իմաստների դասակարգմամբ և տարբերակմամբ:

Բառարանի բառացանկը հեղինակը քաղել է հայերեն բոլոր կարևոր միալեզվյան՝ բացատրական, գավառական (բարբառային), ստուգաբանական, ինչպես նաև թարգմանական բառարաններից, մասամբ նաև գեղարվեստական ու գիտական գրականությունից, մամուլից, հրապարակախոսությունից և ժողովրդախոսակցական լեզվից: Անհրաժեշտ է նշել, որ բառացանկը լիակատար է հայոց լեզվի պատմության գրաբարյան շրջանի բառապաշարի ընդգրկման տեսակետից, այն մեծ չափերով ներկայացնում է գավառական բառամթերքը, որոշ չափով նաև միջին հայերենը, բայց ժամանակակից գրական լեզվի երկու տարբերակների՝ արևելահայերենի և արևմտահայերենի բառային կազմը իր ամբողջական արտացոլումը չի գտել բառարանում:

¹⁹⁹ *Մալխասյանցի Ս.*, Հայերեն բացատրական բառարան, հտ. 1-4, Երևան, 1944-1945:

Որոշակի արժեք է ներկայացնում բառերի ու դարձվածքների իմաստաբանական դասակարգումը, առանձին իմաստների և նրբիմաստների տարբերակումը և նրանց բնութագրումը: Այդ հարցում հեղինակը որդեգրել է պատմական սկզբունքը. բառահոդվածում արտահայտված է բառիմաստի և իմաստների զարգացման պատկերը լեզվի հնագույն շրջանից մինչև մեր ժամանակները: Բառիմաստների արձանագրման ու մատուցման այս եղանակով ակնհայտ են դառնում իմաստային փոփոխությունների պատմական բարդ գործընթացները, և, մյուս կողմից, կենդանի կապ է ստեղծվում հայոց լեզվի զարգացման տարբեր փուլերի միջև:

Բառարանում զգալի աշխատանք է կատարված նաև բառերի քերականական և ոճական բնութագրման ուղղությամբ: Արդի հայերենի քերականության, բառապաշարի ոճական կիրառության օրինաչափությունների համաձայն՝ քերականական և ոճական բնութագրման շնորհիվ նորմավորման է ենթարկվել բառարանում ներկայացված հայոց լեզվի ամբողջ բառամթերքը: Հատուկ նշաններով և նշումներով տարբերակվում են նորաբանությունները, արևմտահայերեն, գրաբար, միջին հայերեն, բարբառային, հնացած և հազվադեպ գործածվող բառերը, ինչպես նաև հին և նոր փոխառությունները: Տրվում են նաև լեզվի տարբեր ոլորտներում, հասարակական-քաղաքական կյանքի, գիտության ու տեխնիկայի տարբեր բնագավառներում բառերի կիրառության վերաբերյալ հատուկ նշումներ: Բառահոդվածում հաճախ բերվում են նաև ստուգաբանական և այլ տվյալներ:

Ինքնատիպ եղանակով է լուծված բառիմաստին կամ իմաստներին տրվող ցուցադրական նյութի կամ վկայությունների հարցը: Նշված բնութի վկայությունների, ցուցադրական նյութի աղբյուրը հիմնականում ինքը հեղինակն է:

Բառարանն արժանացել է ԽՍՀՄ պետական մրցանակի:

«Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»²⁰⁰:
Հայկական ԽՍՀ ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի աշ-

²⁰⁰ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հտ. 1-4, Երևան, 1969-1980:

խատակիցների ջանքերով կազմվել է քառահատոր «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը»: Այն պարունակում է արդի հայերեն գրական լեզվի մոտ 140 հազար բառ և դարձվածքային միավոր:

Հեղինակները նպատակ են դրել ներկայացնելու բացառապես ժամանակակից հայոց գրական լեզվի՝ Խ. Աբովյանից մինչև հրատարակման ժամանակի բառապաշարը, ինչպես նաև գործածական դարձվածքներն ու տիպական բառակապակցությունները: Բառացանկը կազմվել է հիմնականում հայերեն միալեզվյան և թարգմանական բառարանների՝ հատկապես Ստ. Մալխասյանցի քառահատոր բառարանի ընձեռած փաստական հարուստ նյութի, հիշյալ ինստիտուտի կազմած համաբարբառի և հայ գեղարվեստական գրականության և մամուլի ընտրովի քարտարանի հիման վրա: Բառարանը ձգտում է ընդգրկելու հայ գեղարվեստական ու գիտական գրականության, մամուլի և հրապարակախոսության մեջ լայնորեն տարածված այն հին և նոր բառերը, ինչպես նաև բառերի նոր իմաստները, որոնք տարբեր պատճառներով տեղ չեն գրավել Ստ. Մալխասյանցի բառարանում:

Բառարանը նորմատիվ բնույթ ունի: Բառապաշարի ընտրությունը, բառերի ուղղագրության, բառիմաստների տարբերակման ու բացատրության, նրանց ոճական կիրառության, գործածության սահմանների և ոլորտների որոշման հիմքում ընկած են ժամանակակից հայերենի գործող նորմաներն ու կանոնները: Բառերի քերականական նորմավորման համար հիմք են ընդունված ժամանակակից հայոց գրական լեզվի արևելահայ տարբերակի գործող օրինաչափությունները:

Բառերի և դարձվածքային միավորների տարբեր իմաստներն ու նրբերանգները, նրանց գործածության սահմաններն ու ոլորտները հաստատելու համար բերվում են համապատասխան բնագրային օրինակներ, որոնք քաղված են նախախորհրդային և խորհրդային շրջանների հայ գեղարվեստական և մասնագիտական գրականությունից, դասագրքերից, մամուլից:

Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանը»²⁰¹:

Լույս է տեսել 1976 թ. և պարունակում է մոտ 135 հազար բառ ու 11 հազար դարձվածաբանական միավոր: Այն հիմնականում ամփոփում է արդի հայ գրական լեզվի գործուն և ոչ գործուն բառապաշարը: Բառացանկն ընդգրկում է հայ գեղարվեստական, թարգմանական, հանրամատչելի գիտական գրականության, հրապարակախոսության, կարևոր դասագրքերի, գրավոր այլևայլ աղբյուրների, ինչպես նաև բանավոր՝ խոսակցական լեզվի բառային ու դարձվածքային միավորները: Ընդհանուր գործածական բառապաշարից բացի՝ բառացանկում տեղ են գրավել նաև ոչ գործուն բառապաշարի այն բառերը, որոնք վերաբերում են գրաբարյան, միջին գրական հայերեն, բարբառային շերտերին, հին և նոր փոխառություններին, նորաբանություններին, ինչպես նաև մասնագիտական տերմինաբանությանը: Բառերի և դարձվածքային միավորների քանակով բառարանի բառացանկը գերազանցում է նույնատիպ բոլոր բառարանները:

Գիտական բարձր մակարդակով են կատարված բառահողվածի կազմությունը, համանունների առանձնացումը, գլխաբառին տրվող քերականական և ոճական այլևայլ նշումները, բառիմաստների տարբերակումն ու դասակարգումը, տարբերակված իմաստների բացատրությունը, զանազան սահմանումները, իմաստները հաստատող բնագրային որոշ օրինակների տեղադրումը:

Բառարանի նորմատիվությունը արտահայտված է բառապաշարի ընտրությամբ, բառերի, դարձվածքների և նրանց իմաստների ոճական, տարբեր կիրառությունների նորմավորման, ժամանակակից բառագործածության օրինաչափությունների որոշման, բառերի ուղղագրական տարբերակների, քերականական սխալ ձևերի ճշտման, զանազան հղումների և համապատասխան հանձնարարականների միջոցով: Բառարանը մեկ գրքով վերահրատարակվել է 2014 թ.:

²⁰¹ *Աղայան Էդ.*, Արդի հայերենի բացատրական բառարան, երկու մասով, Երևան, 1976:

«Հայոց լեզվի նոր բառարան»²⁰², աշխատասիրությամբ **Գնել արքեպս. Ճերեճյանի, Փարամազ Կ. Տոնիկյանի, Արտաշես Տեր-Խաչատուրյանի**: Երկհատոր բառարան է, երկրորդ հրատարակությամբ լույս է տեսել Բեյրութում: Արևմտահայերենի ամենածավալուն բառարանն է: Գլխաբառերն ունեն քերականական նշումներ, երբեմն էլ որոշ քերականական ձևերի և ուղղագրական դժվարությունների համառոտ պարզաբանումներ: Բացատրության հիմնական եղանակը նկարագրական-տրամաբանականն է, սակայն մեծ տեղ է հատկացված նաև հոմանիշներով բացատրությանը: Այս բառարանը ունի մի առանձնահատկություն. հեղինակները ձգտել են յուրաքանչյուր բառի համար բերել ոչ մայն հնարավորինս շատ հոմանիշներ, այլև նշել դրա հականիշը՝ երբեմն հասնելով ծայրահեղության: Բառիմաստները լուսաբանված են օրինակներով (նախադասություններ կամ առավել տարածված բառակապակցություններ), որոնք կազմել են բառարանի հեղինակները: Շատ բառերի մոտ նշված են նաև դրանց արաբերեն և թուրքերեն համանշանակները՝ հաշվի առնելով, որ Սփյուռքում քիչ չեն ոչ հայախոս հայրենակիցները: Բառերի, մանավանդ տերմինների բացատրության ժամանակ հավասարապես կիրառված է նաև հանրագիտարանային բացատրությունը, ինչպես նաև դրանց անգլերեն և ֆրանսերեն համագործերը:

Ռ. Սաքապետոյան, «Արևմտահայերեն-արևելահայերեն նոր բառարան»²⁰³: Սա հեղինակի նախորդ՝ «Արևմտահայերեն-արևելահայերեն ուղղախոսական-բացատրական բառարանի» լրամշակված տարբերակն է: Ընդգրկում է շուրջ 20.000 բառ և դարձվածքային միավոր: Այստեղ ներկայացված են այն բառերը և դարձվածքները, որոնք արևելահայերենի բառապաշարի հետ համեմատելիս ի հայտ են բերում ձևային կամ իմաստային առնվազն մեկ տարբերություն: Հեղինակը հավաքել և շատ հաճախ հայ բառարանագրության մեջ

²⁰² Հայոց լեզուի նոր բառարան, աշխատասիրությամբ Գնել արքեպս. Ճերեճյանի, Փարամազ Կ. Տոնիկյանի, Արտաշես Տեր Խաչատուրյանի, հտ 1-2, Պէյրութ, 1992:

²⁰³ *Սաքապետոյան Ռ.*, Արևմտահայերեն-արևելահայերեն նոր բառարան, Երևան, 2011: Առաջին հրատարակությամբ՝ Արևմտահայերեն-արևելահայերեն ուղղախոսական-բացատրական բառարան, Երևան, 2000:

առաջին անգամ արդի բառարանագիտության պահանջների համաձայն բառարանագրել է մի քանի հազար նորակազմ բառ, նաև դարձվածքներ: Սրանց մեջ շատ են նորաբանությունները, որոնց մի մասը (բառակազմորեն և օտար բառի իմաստը ճշգրիտ արտահայտելու առումով առավել հաջողվածները) արդեն սկսել է կիրառվել նաև հայրենիքի մամուլում (*արժեևիշ* «կրեդիտ», *համագսևց* «ինտերնետ», *առցսևց* «օնլայն», *կայքէջ* «ինտերնետային էջ», *արհեստավարժ* «պրոֆեսիոնալ» և այլն): Հատուկ ուշադրություն է դարձված նաև իմաստային նորաբանությունների ընդգրկմանը, երբ միևնույն բառը արևմտահայերենում հանդես է գալիս նոր իմաստով կամ իմաստներով: Բառարանն ունի նոր ուղղագրություն, սակայն գլխաբառերը տրված են ավանդականով, որպեսզի չխաթարվի արևմտահայերենի բառապատկերը: Գլխաբառին անկյունավոր փակագծերի մեջ հաջորդում է բառի հնչյունական տառադարձու՛մը: Տառադարձությանը հետևում են քերականական նշումները՝ բառերի խոսքիմասային պատկանելությունը, բայերի սեռը, գոյականների հոլովումը և հոգնակիի ձևերը: Սա ավելի կարևոր է արևելահայ ընթերցողի համար, որովհետև շատ ու շատ գոյականների հոլովումը երկու տարբերակներում չի համընկնում, իսկ հոգնակիակազմության ժամանակ հաճախ տարբերվում են հնչյունափոխական դեպքերը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ.....	3
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	23
Արտասանվածքի վերլուծությունը.....	25
Վանկը ժամանակակից հայերենում	32
Վանկատման կանոնները	34
Հայերենի շեշտը	35
Հնչյուններ	38
Հնչյունների դասակարգումը.....	41
Ժամանակակից հայերենի ձայնավորների դասակարգումը.....	41
Ժամանակակից հայերենի բաղաձայնների դասակարգումը.....	42
Երկբարբառներ և երկհնչյուններ.....	45
Հայերենի բաղաձայնների լծորդական շարքերը.....	46
ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ	48
1. Շեշտափոխական կամ դիրքային հնչյունափոխություն	48
2. Պատմական հնչյունափոխություն	52
3. Փոխազդեցական հնչյունափոխություն	54
ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ	59
Ձայնավորների գրական արտասանությունը.....	62
Ձայնավորական զուգորդումներ	64
Բաղաձայնների գրական արտասանությունը	66
ԳՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	74
Ոչ տառային գրային նշաններ.....	80
Հայերենի գրատեսակները	80
Հայերենի տառերի ուղղագրական իրացման և այբբենական արժեքի համառոտ բնութագիրը.....	82
ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	92
Ժամանակակից հայերենի ուղղագրության կանոնները.....	95
Մեծատառերի գործածությունը	104
Բառերի գծիկով և անջատ գրություն	107
Տողադարձի կանոնները	110

Չակերտների գործածությունը.....	112
ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	115
Բառի ուսմունքը.....	117
Բառի գործառույթները.....	124
Բառի տարբերակները.....	124
Լիինաստ բառեր և սպասարկու բառեր.....	126
Բնաձայնական բառեր.....	126
Բառի ներքին ձև.....	127
ԻՍՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	129
Բառի բառային իմաստ. նրա տիպերն ու տեսակները.....	129
Բառի մենիմաստությունն ու բազմիմաստությունը.....	133
Բառիմաստի փոփոխություն.....	135
Հայերենի համանունները.....	140
Համանունների ծագումը.....	142
Հայերենի բառային հոմանիշները.....	145
Հոմանիշների շարքը ժամանակակից հայերենում.....	150
Հայերեն հոմանիշների դասակարգումը.....	153
Հակահիշները ժամանակակից հայերենում.....	156
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲԱՌԱՊԱՇՏԱՐԸ	160
Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը ըստ հայերենի	
զարգացման տարբեր փուլերի և լեզվական տարբեր շերտերի. 168	
Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը	
ըստ գործուն (ակտիվ) և ոչ գործուն (պասիվ) կազմի.....	185
Ժամանակակից հայոց լեզվի նորաբանությունները.....	187
Հնաբանությունները ժամանակակից հայերենում.....	191
Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը	
իմաստային տարբերակման, ոճական կիրառության	
և հուզաարտահայտչական գունավորման տեսակետից.....	193
Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը	
ըստ գործածության տարբեր ոլորտների.....	201
Զբաղմունքային և տերմինաբանական բառապաշար.....	201
Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարի	
ծագումնաբանական դասակարգումը.....	209

Հնագույն ու հին փոխառությունները	
ժամանակակից հայերենում.....	222
Նոր և նորագույն փոխառությունները	
ժամանակակից հայերենում.....	236
Իմաստային և կառուցվածքային փոխառություններ.....	239
Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարի զարգացումը	
արդի շրջանում	243
ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ	250
Ձևույթի հասկացությունը.....	252
Բառակազմական հիմք.....	259
Բառակազմական փունջ (բուն)	264
Բառակազմական պատճառաբանվածություն (մոտիվացիա)..	270
Բառակազմական քայլ	275
Ձևույթային և բառակազմական վերլուծություն	277
Բառի ստուգաբանական վերլուծություն.....	285
Բառակազմությունն իբրև լեզվի բառապաշարի լրացման	
հիմնական աղբյուր	286
Բառերի տեսակներն ըստ կազմության.....	287
ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆ	289
Վերլուծական բարդություններ	289
Համադրական բարդություններ	300
Կցական բարդություն	300
Իսկական կամ բուն բարդություն.....	305
Իսկական կամ բուն բարդության բաղադրիչների	
իմաստաբանական և շարահյուսական հարաբերությունը.....	309
Իսկական կամ բուն բարդության ձևաբանական	
կաղապարները	312
Հարաբարդ կամ բազմաբարդ բառեր	
(երեք և ավելի բաղադրիչներով կազմվող բաղադրություններ) .	314
ԱԾԱՆՑՈՒՄ: ԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	316
Ածանցների իմաստաբանական դասակարգումը.....	317
Ածանցների ծագումը	319
Փոխառյալ ածանցներ	323

Ածանցների դասակարգումը ըստ բառակազմական գործունության	324
Կենսունակ (արտադրողական) ածանցներ.....	324
Անկենսունակ (անարտադրողական) ածանցներ	325
Ածանցների ձևաբանական դասակարգումը	325
Ածանցների դասակարգումը ըստ դիրքի.....	329
Նախածանցներ.....	329
Վերջածանցներ.....	337
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	363
Հապավական բաղադրությունների տեսակները	364
Հապավական բաղադրությունների առանձնահատկությունները	366
ԴԱՐՉՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	368
Դարձվածքների դասակարգումը ըստ իմաստային միաձուլության աստիճանի	376
Դարձվածքային տարբերակներ	385
Դարձվածքային հոմանիշներ.....	389
Դարձվածքային համանուններ	394
Դարձվածքային հականիշներ.....	397
Գրական լեզվի արևելահայ և արևմտահայ տարբերակների դարձվածքներ	398
ԲԱՌԱՐԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ...	400
Բառարանների տիպերը	405
Բառարանի կառուցվածքային հիմնական բաղադրիչները	418
ՀԱՅԵՐԵՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ	425
Հանրագիտական բառարաններ.....	425
Կենսագրական բառարաններ	430
Տեղանունների և աշխարհագրական անունների բառարաններ	432
Պատմական հանրագիտարաններ	433
Բանասիրական կամ լեզվաբանական բառարաններ	437
Հայերեն հնատիպ բառարաններ.....	438

Հայ նոր բառարանագրություն	439
Միալեզվյան բառարաններ	439
Գրաբարի և միջին հայերենի բացատրական բառարաններ	440
Ստուգաբանական բառարաններ.....	445
Աշխարհաբար գրական լեզվի բացատրական բառարաններ...	448

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Աշոտ Մուրադի Սուքիասյան
Քնարիկ Աշոտի Սուքիասյան
Մանուկ Հարությունի Ֆելեքյան

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

(Հնչյունաբանություն, բառագիտություն)

Վեցերորդ վերամշակված և
լրացված հրատարակություն

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Գ. Գրիգորյանի

Տպագրված է «Գևորգ-Հրայր» ՍՊԸ-ում:
ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 6

Ստորագրված է տպագրության՝ 25.12.2017:
Չափաը՝ 60x84 ¹/₁₆: Տպ. մանուլը՝ 28.875:
Տպաքանակը՝ 300:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am

